Ռ.Օ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԻՆԻ «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

ՀՍՍՌ
ԱԿԱԴԵՄԻԱ

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
ИНСТИТУТ ИСТОРИИ

Р. П. ОГАНЕСЯН

# НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЕ ДВИЖЕНИЕ ЗАПАДНЫХ АРМЯН И КАРИНСКАЯ ОРГАНИЗАЦИЯ „ПАШТПАН АЙРЕНЯЦ“

(70—80 гг. XIX в.)

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1965

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ռ. Փ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԻՆԻ «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

(XIX դ. 70—80-ական թթ.)

A II/32632

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1965

*Աշխատության մեջ հրապարակված աղբյուրների ու գրականության, մամուլի և արխիվային նորահայտ վավերագրերի լույսի տակ վեր են հանված XIX դարի 70—80-ական թվականների արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները։ Հեղինակը հանգամանորեն անդրադարձել է այդ շարժումների սոցիալ-քաղաքական պատճառներին ու նշանակությանը, լուսաբանել նրանց ղեկավար կազմակերպությունների, հատկապես Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության գործունեությունն ու դերը, ազատագրական պայքարի գաղափարախոսությունն ու պատմական հետևանքները։*

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի
գիտական խորհրդի հանձնարարությամբ

Պատասխանատու խմբագիր՝
ՀՍՍՌ ԳԱ ակադեմիկոս
Ա. Գ. ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

## ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թուրքական բռնապետության դեմ XIX դարում ծավալված արևմտահայ ազգային-ազատագրական շարժումները դարեվերջ թևակոխեցին պայքարի աննախընթաց վերելքով:

Ազգային վերածննդի այդ արշալույսին թմբկահարվում էր արդեն զենքի միջոցով ազատություն ձեռք բերելու գաղափարը, որը ծնվել էր թուրք և քուրդ ֆեոդալների սանձարձակ կեղեքումներից արյունաքամ եղած արևմտահայ աշխատավորության մաքառումների բովում:

Եվրոպական հեղափոխությունները և բալկանյան ժողովուրդների ըմբոստացումը թուրքական լծի դեմ ռազմերթի հանեցին միայն մասնակի ընդվզումներով իր գոյությունն աշխարհին ավետող արևմտահայ ժողովրդին: Նրա մեծագույն բողոքը համազգային արձագանք ստացավ Զեյթունի հերոսական ապստամբությամբ և թևավորվեց Մ. Նալբանդյանի ու նրա համախոհների շեփորած մարտակոչով:

«Էն դիհ մի կռիվ կա. կլսեք... ահավոր ձայներ, ձայն Արևմուտքից, ձայն Հյուսիսից, ձայն ամեն կողմից, մի, մի սարսափիք, նորա մեջ քաջություն թող ուսնի»: Զեյթունի ապստամբության օրերին, ոգեշնչված Արևմուտքի և Ռուսաստանի ազատագրական շարժումներով, իր թևատարած թռիչքի բարձրությունից, բարբառում էր «Արծվի Վասպուրական»-ը[1]:

Հայ ազատագրական շարժման ուղիներում ծնվեցին նախ լուսավորությունն ու գիտությունը, իսկ ավելի ուշ՝ արդեն

[1] «Արծվի Վասպուրական», 1862—1863 թթ., եջ 10:

վառոդը կյանքի նշանաբան դարձրած ազատագրական-հեղափոխական խմբակներն ու կազմակերպությունները, որոնց գործունեությունը հզորանում ու բեղմնավորվում էր սուլթանական մոլեգնող ռեակցիային դիմադիր:

Թուրքական բռնապետության դեմ խմորվող հայ ազատագրական շարժումները XIX դարի 60—70-ական թվականներից սկսած դառնում են ոչ միայն արևմտահայ, այլև արևելահայ ժողովրդի սեփական գործը: «Սահմանից այն կողմ» գտնվող եղբայրներին, նրանց մահ ու կենաց պայքարում օգնելու կոչը անձնազոհ մարտերի էր մղում արևելահայությանը: Ազգային միավորման ձգտող հայ ժողովրդի համար պայքարի անհրաժեշտությունը հարստահարվող ժողովրդի խավերից դառնում էր նրա սրբազան պարտքը: Ըստ որում՝ ազատամարտի ելած հայ ժողովրդի նպատակը ոչ թե այս կամ այն պետությանը միանալու ցանկությունն էր, այլ ազատ ու անկախ հայրենիք վերստեղծելու իր դարավոր բաղձանքի իրագործումը:

Ինչպես սուլթանական Թուրքիան ու ցարական Ռուսաստանը, այնպես էլ գաղութների նվաճման համար մրցասպարեզ ելած կապիտալիստական մյուս երկրները, երբեք չեն կամեցել ազատություն կամ ինքնավարություն տալ օսմանյան լծի տակ հեծող քրիստոնյա ժողովուրդներին: Նրանց նպատակն իրենց աշխարհակալական անհագ ձգտումներին հագուրդ տալու տենչն էր, որն առավել ցայտուն դրսևորվեց Բեռլինի կոնգրեսից հետո, և մեծ տերությունների «աստվածային» կերպարը խամրեց հայ ժողովրդի հուսախաբ հայացքի առաջ:

XIX դարի 70-ական թվականներին արևմտահայ ազատագրական շարժումը փոքր ինչ բեկվեց՝ հայ ժողովրդի փրկության համադարման որոնելով օսմանյան սահմանադրական պայքարի մեջ:

Բայց սուլթանական գետնահարկերում պանիսլամիզմով թրծված թուրքական բուրժուազիան, համադեմոկրատական ազատությունների դրոշով սկսած իր սեթևեթանքով, չէր կա-

րող մշտապես շեղել հարստահարվող ժողովուրդների պայքարի ուղին։

Հարկավ, ռուսական հեղափոխական-դեմոկրատական շարժումների մեջ համամարդկային իդեալ փնտրող հայ գործիչներն իրավացիորեն հարել էին այդ շարժումներին և դրանց մեջ էին տեսնում ինչպես ցարական ինքնակալության մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական ազատագրման երաշխիքը։ Սակայն «Թուրքիան թուրքերին» կոչով հանդես եկած օսմանյան նորաթուխ ու ռազմատենչ բուրժուազիան միայն մռայլ հեռանկարներ էր գծում ազատության ձգտող արևմտահայ ժողովրդի համար։ Ուստի պայքարի նրա ճանապարհը անջրպետվեց թուրք ազատականների ընդհանուր երթից, և սպասված դաշինք չգտնելով հարստահարվող մյուս ժողովուրդների հետ, պարփակվեց սեփական իր պատյանում, մեկուսացավ և դարձավ լոկ ազգային շարժում, փրկություն որոնելով ինքնուրույն պետության վերականգնման գաղափարի մեջ։

Ժողովրդական այդ շարժումն, ըստ էության, գյուղացիական բուրժուա-դեմոկրատական հեղափոխություն էր։ Նրա գլխավոր շարժիչ ուժը արևմտահայ գյուղացիությունն էր ու քաղաքի արհեստավոր դասը։ Քանզի Արևմտյան Հայաստանի ազատագրմամբ, առաջին հերթին, շահագրգռված էր երկակի ճնշման տակ գտնվող հայ աշխատավորությունը, որն ազատագրված ու անկախ հայրենիքից էր ակնկալում իր քաղաքական և սոցիալական փրկությունը։ Շարժմանն համատարած փարել էր հայ ազգային բուրժուազիան, իր սահմանափակ ու անհետևողական նախաձեռնությամբ, և առաջադեմ մտավորականությունը։

Իշխող ազգերի բուրժուազիայի, տեղական մեծատունների, օտար կապիտալի ու նրա սպասարկու հայ կոմպրադորների ճնշումներից նեղված վիճակը ստիպում էր հատկապես գավառահայ բուրժուազիային ազգային պետության մեջ փնտրել իր տնտեսական ու քաղաքական ինքնուրույնության երաշխիքը։ Ազատագրական շարժման հիմնական ուժը լինելով հանդերձ, հայ ազգային բուրժուազիան փորձում էր իր

ձեռքում պահել շարժման մարտական ու գաղափարական դրոշը։

Այդ դրոշը նա տանում էր ոչ թե բռնված օտար շուկաների նվաճման մարմաջով, այլ ազգային միասնության ձգտող հայ ժողովրդի առաջնորդ լինելու իր հավակնությամբ։

Վ. Ի. Լենինն իրավացի նկատել է, որ կապիտալիզմի վերելքի ժամանակաշրջանում գլխավոր դասակարգը, որ «գնում էր վերընթաց գծով և որը միայն ինքը կարող էր ճընշող ուժով դուրս գալ ֆեոդալական-աբսոլյուտիստական հիմնարկությունների դեմ, բուրժուազիան էր։ Զանազան երկըրներում տարբեր՝ շերտերով ներկայացնելով ունևոր ապրանքարտադրողներին, այդ բուրժուազիան տարբեր աստիճանի պրոգրեսիվ էր, և երբեմն ...նույնիսկ ռեվոլյուցիոն, բայց դարաշրջանի ընդհանուր գիծը հենց բուրժուազիայի պրոգրեսիվությունն էր...»[2]։

Մինչդեռ ազգային կերպարանքը գրեթե կորցրած հայ խոշոր բուրժուական և բարձրաստիճան պաշտոնեությունը, չնչին բացառություններով, սուլթանական ու ցարական կարգերի մեջ էին տեսնում իրենց գոյության հենարանը։ Դեմ լինելով ամեն մի հեղափոխական-դեմոկրատական շարժման, նրանք հիմնականում ընդդիմադիր կանգնեցին նաև հայ ազգային-ազատագրական պայքարին։

Հայ ազատագրական շարժումը XIX դարի վերջին քառորդում ուներ համադեմոկրատական բովանդակություն։ Այն խարսխվում էր հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական ազատագրման գաղափարին։

Հայ ժողովրդի քաղաքական ազատությունն իրական չէր կարող լինել առանց տնտեսական խնդրի, առանց հողային հարցի լուծման, 80-ական թվականների սկզբներին գրում էր Արսեն Թոխմախյանը[3]։

Ազատագրական շարժման ջատագով գաղտնի կազմակերպությունների ծրագրերում ու գործիչներից շատերի մտո-

---

2 Վ. Ի. Լենին, Երկեր, չորրորդ հրատ., հատ. 21, էջ 175։

3 Տե՛ս Ա. Թոխմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտները, Թիֆլիս, 1882։

ռումներում որոշակի ուրվագծվում էր ապագա Հայաստանի քաղաքական կարգաձևի դեմոկրատական կառույցը։ Ժողովրդապետության գաղափարի նրա ակունքները գնում-հասնում էին «Որոգայթ փառաց»-ի ու «Նոր տետրակ»-ի մադրասյան եզնգնումները, և չնայած առանձին շեղումներին, հետևողականորեն պաշտպանվում ժամանակի հայ դեմոկրատական մտավորականության կողմից, մարմնավորելով այն «Խենթ»-ի հայտնի երազում, հեղինակին թիրախ դարձնելով պահպանողական բանակի արձակած նետերի դեմ՝ որպես «ռամկամիտ ամբոխի բռնակալության գաղափարախոս» (Ե. Գեղամյան)։

XIX դարի մայրամուտին իր ծաղկունքն ապրող հայ ազատագրական շարժումն արգասավորվեց նախ հայդուկային պայքարի հախուռն թափով, ապա հրապարակի վրա դրեց վերելքի իր երկունքից ծնված մանրբուրժուական ազգային կուսակցություններին։ Բայց իրենց ձեռքը վերցնելով շարժման երերվող ղեկը, նրանք այն պահել չկարողացան։ Պայքարի իրենց օրապակաս ծրագրերը խարսխելով եվրոպական դիվանագիտության խախուտ գետնի վրա, մոռացած տևական նախապատրաստման և ուժերի համախմբման մասին, երես շրջած հեղափոխական զոտեմարտերի փորձված գաղտնուղուց, արևի լույսի տակ անհավասար կռիվ չփորեցին․ թուրքական բռնապետության դեմ։ Որպես այրվող կերոն իրենց շռայլելով հայ ազատամարտի ճանապարհին, նրանք չկարողացան գտնել ժողովրդին ազատության տանող լուսավոր մի շավիղ, հայ ազատագրական շարժումը թևատեցին երերուն ու բեկված արահետներում, և իրենց անհեռատես ու սխալ գործունեությամբ, պարտության դատապարտեցին այն։

* * *

Սույն աշխատության մեջ արխիվային փաստաթղթերի, ժամանակի աղբյուրների ու մամուլի, ինչպես նաև գրականության մեջ եղած բազմաթիվ նյութերի միջոցով, փորձել ենք ըստ կարելույն վեր հանել արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների XIX դարի 70—80-ական թվականների

ընդգրկող կարևորագույն ժամանակահատվածի մի քանի հիմնական հարցերը միայն։

Աշխատության նպատակն է նոր փաստերով հաստատել, որ արևմտահայ ազատագրական շարժումը հարստահարվող ժողովրդի ինքնաբուխ բողոքի անմիջական արդյունքն էր, և խմորվել ու ծնունդ էր առել գավառահայ աշխատավորության տառապանքներից։ Հայ ազատագրական շարժումները լինելով ազգային միավորման ձգտող հայ ժողովրդի սոցիալական ու քաղաքական զարգացման արդյունք, միաժամանակ ոչ թե պատճառ, այլ հետևանք էին նաև այն դարավոր սանձարձակ կեղեքումների, որոնք զանգվածորեն ու արդեն այլ ձևերով՝ միաձուլման ու ջարդի մեթոդներով, դրսևորվեցին հատկապես թուրքական բուրժուազիայի աշխուժացման շրջանում՝ XIX դարի 70-ական թվականներին, և առավել սուր կերպարանք ստացան Բեռլինի կոնգրեսից հետո։

Հանգամանորեն անդրադառնում ենք հայկական հարցի արծարծմանը Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի համաժողովներում և մեծ տերությունների խարդավանքին։ Հին ու նոր նյութերի բաղդատմամբ հայկական հարցի այդ աճուրդը ներկայացնում ենք որպես նրբորեն նախապատրաստված անգլո-թուրքական սադրանք։

Հատուկ ուշադրություն ենք դարձրել Կարինի (Էրզրում) «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության գործունեությանը, որը 70—80-ական թվականների արևմտահայ ազատագրական շարժումների վերընթացի փառապսակը կազմեց։

XIX դարի 80—90-ական թվականներին ձևավորված ազգային կուսակցությունների գործունեությանը, որն ինքնին մի խոշոր պրոբլեմ է և առանձին ուսումնասիրության նյութ, մենք չենք անդրադարձել։

* * *

Թեմայի ուսումնասիրության համար առաջնահերթ աղբյուրներ են ծառայել Երևանի, Մոսկվայի, Լենինգրադի և Թբիլիսիի տարբեր արխիվներում մեր կողմից հայտաբերված այն փաստաթղթերը (զեկուցագրեր, նամակներ և այլն),

տրանք լույս են սփռում արևմտահայ ազատագրական շարժումների հետ առնչվող այս կամ այն հարցի վրա։

Արխիվային նյութերից պակաս կարևոր չեն վավերագրերի արժեք ունեցող մի շարք ժողովածուներ ու այլ տիպի սկզբնաղբյուրներ՝ հատկապես Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովի Ատենագրությունները, Գ. ք. Աղանյանի հրատարակած «Դիվան հայոց պատմության» ԺԳ հատորը և այլն։

Առանձին արժեք են ներկայացնում Մ. Խրիմյանի, Ա. Թոխմախյանի, Գ. Սրվանձտյանի, Մ. Չերազի, Րաֆֆու աշխատությունները և ժամանակի գեղարվեստական գրականությունը։ Սրանց լրացնելու են գալիս հայ և ռուս այնօրյա պարբերականները, հարկավ նաև Սովետական Միությունում և արտասահմանում ցայսօր լույս տեսնող մամուլը։

Սույն թեմայի հետ առնչվող ուսումնասիրություններից առավել արժեքավոր են Սարուխանի «Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում», Ա. Հովհաննիսյանի «Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության», «Նալբանդյանը և նրա ժամանակը», Մ. Ներսիսյանի «Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ» աշխատությունները, Հ. Երամյանի՝ «Հուշարձան», Մ. Սերոբյանի՝ «Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով», Հ. Ճանկուլյանի՝ «Հիշատակներ հայկական ճգնաժամեն», և Հ. Նշկյանի՝ «Առաջին կայծերը» հուշագրությունները, ինչպես նաև Մ. Օրմանյանի և Ա. Ալպոյաճյանի չափազանց ուշագրավ աշխատությունները։

Թեման մշակելիս մեծապես օգտվել ենք նաև Լեոյի՝ «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», Վ. Ռշտունու՝ «Հայ հասարակական հոսանքների պատմությունից», Վ. Պարսամյանի՝ «Հայ ազատագրական շարժումների պատմությունից», Բ. Բորյանի՝ «Հայաստանը, միջազգային դիվանագիտությունը և ՍՍՌՄ-ը» (ռուսերեն), Խ. Բադալյանի՝ «Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թ.», Ա. Ներսիսյանի՝ «Հայերի մասնակցությունը 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմին» աշ-

*խատություններից և բազմաթիվ այլ ուսումնասիրություններից:*

*Ռուս և եվրոպական հեղինակների աշխատություններից ու ժամանակի քաղաքական գործիչների նոթերից ուշադրության առավել արժանի են 1963 թ. Մոսկվայում Վ. Խվոստովի հեղինակությամբ լույս տեսած «Դիվանագիտության պատմություն» (ռուսերեն) 2-րդ հատորը, Դ. Միլյուտինի, Ն. Իգնատևի, Պ. Շուվալովի, Օ. Բիսմարկի հուշերը, Է. Դիլլոնի և այլոց կիսահրապարակախոսական ելույթները, և հատկապես Ի. Գոլոբորոդկոյի, Ս. Նովիչևի, Մ. Պոկրովսկու, Ն. Բելյաևի ուսումնասիրությունները:*

*Նշված փաստաթղթերը և ուսումնասիրությունների զգալի մասը արժեքավոր են ոչ միայն XIX դարի 70—80-ական թվականների հայ ազգային-ազատագրական շարժումները լայնորեն լուսաբանելու միտումով, այլև անհրաժեշտ՝ ճիշտ ուղենշվելու վերելքի ու վայրէջքի այն ոլորապտույտներում, որ ապրեց «Երիտասարդ Հայաստան»-ի առանցքը կազմող արևմտահայ հեղափոխությունն իր խանդաբորբ արևածագին, իր «առավոտյան պահուն»:*

* * *

*Հիշատակված և մյուս աշխատությունների մի մասը զերծ չէ ակնհայտ թերություններից ու սխալ կոնցեպցիաներից, որոնցից միայն մի քանիսի մասին ցանկանում ենք այստեղ խոսել:*

*Մինչմարքսիստական հայ պատմագրության ինչպես լիբերալ-բուրժուական, այնպես էլ պահպանողական թևերում նկատվում էր հայ ազգային-ազատագրական շարժումները ծայրահեղ դիրքերից գնահատելու միտումը, որը և դժվարացնում էր լուծել այդ շարժումների ճշմարտացի գնահատման հարցը:*

*Հայ ժողովրդի եվրոպական «բարեկամների» «մարդասիրությունից» արբեցած Սարուխանի խոհուն, բայց դալկացած հայացքը այդպես էլ չհոգնեց բիկոնսֆիլդների ու վադինգտոնների ընդունարաններում փնտրելու հայ ժողովրդի*

ազատության թալիսմանը։ Իսկ Եղիշե քահանա Դեղամյանի պահպանողական նկրտումները փարաջավոր մասնիկների կարգը դասեցին վերջինիս և նա առանց վարանելու, խաչը ձեռքին, փորձում էր իր հոտին առաջնորդել դեպի գայլերի փարախը։ Ժողովրդական ջարդերը, թալանն ու հափշտակությունները հայերի նկատմամբ սկսվեցին միայն այն ժամանակ, երբ թուրքերը կասկածեցին նրանց բարեհուսության վրա, գրում էր ավաղ քահանան և ավանդում ստրուկ ժողովրդին՝ չփշրել գերության շղթաները, «տակավ առ տակավ» մահանալ, քան կռվել ու սուրը ձեռքին ընկնել արյունաթավ[4]։

Ոչ ոք մեղավոր չէ, գրում է Լենինը, որ ինքն ստրուկ է ծնվել, բայց զայրույթի, արհամարհանքի ու զզվանքի է արժանի այն ստրուկը, որը ոչ միայն փախչում է ազատության ձգտումներից, այլև արդարացնում և գունազարդում է իր ստրկությունը[5]։

Հայ ազատագրական շարժումների գնահատման հարցում իր վերջին խոսքը խիստ արտառոց է ավարտում բազմավաստակ պատմաբան Լեոն։

Շփոթված ռուսական հեղափոխությունների և ազգային կյանքում կատարված բուռն ու անօրինակ իրադարձությունների շշմեցնող թափից, հայ ժողովրդի XIX դարի 60—70-ական թվականների զարթոնքը նա բնութագրում է որպես ամենաահռելի ողբերգություն, որն սկիզբ առնելով Զեյթունի լեռներից, ինքնասպանության մղեց արևմտահայ ժողովրդին[6]։ Եվ այդ ամենը նա համարում է դրսի, հատկապես, ռուսական նարոդնիկական հովերով արևմտահայությանն օրորել ցանկացող արևելահայ մտավորականության սխալանքի հետևանք, որպես առաջնեկի՝ պատմության դատաստանին հանձնելով Մ. Նալբանդյանի պայծառ հիշատակը[7]։ Ապա իրավացիորեն քննադատելով Եվրոպայի հետ հույսեր կապելու սին

4 Տե՛ս Ե. Ւ. Դեղամյան, *Հայ ազատագրական շարժումները ԺԹ դարում*, Բաքու, 1915, էջ 420—421 և այլուր։

5 Վ. Ի. Լենին, *Երկեր*, հատ. 21, էջ 120։

6 Տե՛ս, Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, Փարիզ, 1934, հատ. Ա, Առաջաբանը և հետո։

7 Նույն տեղում, էջ 21—27։

հրավանքը, ինչ անել հարցին, սակայն, որպես պատասխան, Լեոն մատնացույց էր անում Բ. Դռանը դիմելու անհրաժեշտությունը, զարմանալիորեն չնկատելով այդ դռանը դիմված լեռնակուտակ ու անպատասխան թագրիրները (խնդրագրերը)։

Լեոն միայնակ չէր։ Համարյա միաժամանակ նման կարծիք հայտնեց Ա. Կարինյանը, գտնելով, որ արևմտահայ ժողովուրդը, մինչև «դրսի», այն էլ դաշնակցության կողմից, բորբոքած հուզումներին, ինքը, դրանից առաջ, ազգային հեղափոխական շարժում չի ստեղծել[8]։ Ապա փորձելով պաշտպանել եղծված այն տեսակետը, թե արևմտահայ գյուղացին ավելի բարվոք վիճակում էր ապրում, քան արևելահայը[9] և ըմբոստանալու ոչ մի պատճառ չուներ ու չըմբոստացավ, տրամաբանորեն հանգում է Թուրքիայում իրերի գոյություն ունեցող վիճակի պահպանման ծայրահեղ հետադիմական այն կարծիքին, որը շրջանառության մեջ էին դրել Մկրտիչ բեյ Դադյանի (Տատյան) տիպի հայ պահպանողականները, Թուրքիան համարելով հայերի երկրորդ հայրենիք[10]։

Հայ ազատագրական պայքարը դրսից հրահրած լինելու մասին սխալ տեսակետով են առաջնորդվում սփյուռքահայ առանձին ուսումնասիրողներ, որոնցից Մ. Անանիկյանը արևմտահայ ազատագրական շարժման ակունքները փնտրում է միայն Եվրոպայի ու Կովկասի հրապարակների մոտ[11]։

Անշուշտ իրավացի էր Հ. Թումանյանը, երբ «Դիվան հայոց պատմության» ԺԳ հատորի առթիվ իր խոհերում վճռականորեն մերժում էր թյուր այդ կարծիքը. «...Դիվանի էս գիրքը, — գրում էր նա, — հուսահատական դիմումներով, բարձրագոչ բողոքներով ու ըմբոստ ծրագիրներով՝ ցույց է տալիս, թե սխալ են բոլոր էն մարդիկ, որոնք կարծում են թե էս ամենը կարող էին անցնել առանց ծայրահեղ դժգոհու-

8 Տե՛ս «Նորք», 1926, էջ 155 և հետ։

9 Նույն տեղում, էջ 163։

10 М. Дадян, Современное армянское общество, Тифлис, 1878, էջ 7։

11 Տե՛ս Մ. Անանիկյան, Քննական ուսումնասիրություններ, Նյու-Յորք, 1932, էջ 239։

*թյան բանկումի, առանց հեղափոխության: Այլևս սխալ են նրանք, որոնք կարծում են, թե հեղափոխությունը դրսևոր-ները՝ ռուսահայերն են սկսել Տաճկաստանում»*[12]:

*Խորթ ու տարօրինակ է հնչում նաև, երբ Հ. Ճանկուլյանը* հայ ազատագրական շարժման վերելքի շրջանին *նվիրված իր հուշագրությունը վերնագրել է «Հիշատակներ հայկական* ճգնաժամեն»:

*Առավել սխալ ու արդահատելի է երբեմնի արված այն հերյուրանքը, թե 70—90-ական թվականների հայ ազատագրական շարժման գաղափարախոսներն ու գործիչները թուրքական կառավարության կողմից խոշոր գումարներով կաշառված գործակալներ էին, և երբ Բ. Դուռը նրանց միջոցով հուզումներ էր կազմակերպում, որպեսզի այն առիթ դարձնի հայերի զանգվածային ջարդեր կազմակերպելու համար*[13]:

*Ուսումնասիրվող թեմային անմիջականորեն վերաբերող լավագույն աշխատություններից մեկը, իր ամբողջականությամբ թերևս եզակին, Մ. Ներսիսյանի վերը նշված «Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ» աշխատությունն է, որտեղ հեղինակը, սակայն, չի անդրադարձել Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի դաշնագրերում հայկական հարցի արծարծմանը, որին հաջորդում է հայ ազատագրական շարժումների վերելքի մի նոր շրջան: Այս խնդիրը հետազոտման առարկա է դարձրել Խ. Բադալյանն իր «Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի համաձայնագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թ.» գրքույկում: Բայց հեղինակը հայկական հարցի առաջքաշումն ու Հայաստանի ինքնավարության պահանջը դիտում է որպես հայ գործիչների կողմից ի հարկի շրջանառության նետած մի հարց, անշուշտ անտեղյակ հայ ժողովրդի ակնկալությունները տապալելու, ինչպես նաև ցարական կառավարության նվաճողական ձգտումները խափանելու անգլո-թուրքական խարդավանքին:*

---

12 *Տե՛ս Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 317—318, Երևան, 1958:*

13 *Տե՛ս* Магда Нейман, Армяне, с. Петербург, 1899, *էջ 268:*

Հայ ժողովրդի պատմության ինչպես այս, այնպես էլ մյուս շրջանները քննարկման նյութ են դարձել նաև իրենց պանթուրքիզմի հորձանուտը նետած թուրք ժամանակակից պատմաբանների կողմից և հետևողականորեն խեղաթյուրվել նրանց աշխատություններում։

Մարդկային քաղաքակրթության զարգացումն ու տարածումը կապելով նոր Քարե դարի մշակույթն իրենց նախորդների միջոցով Հին Աշխարհում ծայրեծայր տարածելու հետ, նրանք փորձում են գիտությունը ծածկել Կենտրոնական Ասիայից թրքախոս ժողովուրդների նեոլիթյան համասփյուռ գաղթի ճանապարհի փոշով։

Այս զարգացնելով պատմական փաստերի ու երևույթների կեղծ ու միտումնավոր այդ տեսակետը, նրանք իրենց համարում են փոքրասիական բնիկներ ու իրավական տերեր այն երկրի, որը նվաճել են միայն XIV—XV դարերում։

Անդրադառնալով արևմտահայ ազգային-ազատագրական շարժումներին, թուրք պատմաբանները կրկնում են սուլթան Համիդին ու նրա ջարդարար հետնորդներին և ճգնում ցույց տալ, որ հայ ազատագրական շարժումները կրել են դրսից հրահրված պատահական դավերի բնույթ։ Նույնիսկ 60—70-ական թվականների ազատագրական պայքարը նրանք ներկայացնում են որպես դաշնակցական ու հնչակյան կոմիտեների գործունեության արդյունք, երբ այդ կուսակցությունները ձևավորվել են 80-ական թվականների վերջերին, 90-ական թվականների սկզբներին միայն[14]։

Մինչդեռ 70—80-ական թվականներին բորբոքված ազատագրական շարժումները, ինչպես նշեցինք, հզորանում ու փոթորկվում էին սուլթանական կառավարության վարած այն քաղաքականությանը դիմաց, որն հստակորեն բնորոշված է Քյամիլ փաշայի՝ 1870-ական թվականների վերջերին Աբդուլ Համիդին հղած նամակում. «...Եթե Եվրոպայի մեջ մեր ծոցը օձ սնուցինք, պետք չէ, որ նույն հիմարությունն ընենք

14 Այս մասին մանրամասն տե՛ս Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963։

մեր Ասիական Տաճկաստանի մեջ. խելոքությունը ջնջել վերցնել է այն ամեն տարրերը, որ օր մը կրնան մեզ նույն վտանգը ծնանիլ...»[15]։

Եվ այն ինչ չավարտեց Աբդուլ Համիդը, նոր ու կատարյալ ուժերով կենսագործեցին «երիտասարդ թուրքերը», իրենց հեղափոխության նպատակը համարելով նաև օսմանյան պետությունը ոչ թուրք տարրերից վերջնականապես մաքրագործելը[16]։

Պատմության կեղծարարության գործում ժամանակակից թուրք պատմագրությանն իրենց ծառայությունն են մատուցում նաև կես դար անընդհատ Թուրքիան ու իսլամը պաշտպանող Ուրքարտի հետնորդները՝ արևմտա-եվրոպական ու ամերիկյան թրքամոլ պատմաբանները[17]։

Հայ ազգային-ազատագրական շարժումների փոթորկոտ ու կարևոր այս ժամանակահատվածի պատմությունը դեռևս ինչպես հարկն է չի հետազոտված։

Սույն ուսումնասիրությամբ փորձել ենք, ըստ կարելույն, նպաստել նրա հետագա ճշմարտացի լուսաբանմանը։

---

15 Տե՛ս «Փորձ», 1879, № 7—8, էջ 204։

16 Տե՛ս Ե. Սարգսյան, Ռ. Սահակյան, Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, էջ 30—31։

17 Տե՛ս նույնը, նաև ՀՍՍՌ ԳԱ «Տեղեկագիր», 1954, № 7, էջ 47—54 (Մ. Գ. Ներսիսյանի հոդվածը)։

A 37632

ԳՐԱԴԱՐԱՆ

ԱՌԱՋԻՆ ԳԼՈՒԽ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ ՔԱՂԱՔԱԿԱՆ ՎԻՃԱԿԸ XIX ԴԱՐԻ 70—80-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ

*Հեքիաթն ասում է, թե մի աշխարհում*
*Բխում էր առատ ջուրն անմահական*
*Բայց ագահ վիշապն առաջը փակում,*
*Ծարավ էր թողնում աշխարհն անման...*
*Ոչ հեքիաթ չի սա...*

(Հ. Թումանյան — «Հին կռիվը»)

*Հայ ազատագրական շարժումը թուրքական բռնապետության դեմ բարձրանում էր, առաջին հերթին, որպես պատասխան այն սանձարձակ կեղեքման ու ահավոր խոշտանգումների, որոնց դարեր ի վեր ենթարկվում էր արևմտահայ ժողովուրդը՝ թուրքական իշխանությունների ու քրդական ֆեոդալների կողմից։*

*1839 և 1856 թվականներին տրված բարեփոխումների սուլթանական հրովարտակները՝ Խաթը Շերիֆը («Նվիրական հրովարտակ») և Խաթը Հումայունը («Արքունի հրովարտակ»), որոնց մեծաբարբառ հոդվածներով ազդարարվում էր թուրքական կայսրության, այսպես կոչված, թանզիմաթի շրջանն ու հռչակում «լուսավորյալ» միապետություն, համարյա ոչընչով չէին փոխում օսմանյան կայսրության քրիստոնյա ժողովուրդների, այդ թվում հայ ժողովրդի իրավա-քաղաքական ու տնտեսական անաղորմ[illegible] վիճակը։ Այն հարատևում ու խորանում էր որպես ասիական հետամնաց ֆեոդալիզմի ա-*

մենապարզունակ ու բարբարոսական շրջանն ապրող քաղաքական կարգերի արդյունք, որպես մեծ տերությունների հակամարտ նկրտումների ջրապտույտում օրորվող բռնատիրության նմուշ։ Ոչինչ չփոխեց նաև «Թուրք»-ի փոխարեն «օսմանցի» օգտագործող միդհատյան օրապակաս սահմանադրությունը։

* * *

XIX դարի երկրորդ կեսին Թուրքիայի ժողովրդական տնտեսության հիմնական ճյուղը՝ գյուղատնտեսությունը, գտնվում էր ամենահետամնաց վիճակում։ Նույնիսկ 1910 թ. տվյալներով մշակվում էր երկրի պիտանի հողատարածության չնչին մասը միայն։ Ըստ որում, եթե Անկարայի կամ Տրապիզոնի կուսակալություններում մշակվում էր այդ հողերի 40—50 տոկոսը, ապա արևելյան նահանգներում այն չէր անցնում 10 տոկոսից[1]։

Թուրքիայում գոյություն ունեցող հողատիրության հիմնական ձևերը՝ պետական, եկեղեցական (վակֆային) և մասնավոր տնտեսություններն էին, որոնք, որպես եկամտատերերի, ընդգրկում էին ազգաբնակչության չնչին մասը միայն։ Գյուղացիական խոշոր զանգվածները, իսկ Թուրքիայում գյուղատնտեսության մեջ զբաղված էր ազգաբնակչության շուրջ 85 տոկոսը[2], հողազուրկ էին։ Նրանց մի մասը կոչվում էր մարաբա, որը զուրկ լինելով արտադրամիջոցներից, որպես կես-ճորտ, աշխատում էր խոշոր և մանր ֆեոդալական տնտեսություններում։ Մարաբան, ի տարբերություն ճորտացված գյուղացու, ուներ անձնական ազատություն, սակայն մեծ մասամբ չէր հեռանում շահագործողից, որովհետև ապրուստի այլ միջոցներ չուներ և ընտանիքը քաղցած չթողնելու համար ստիպված շարունակում էր վարձու աշխատանքը։

Երկրում աննշան էր արդյունաբերական ապրանքների արտադրությունը։ Չնայած արտասահմանյան կապիտալի

---

1 Տե՛ս А. Д. Новичев, Очерки экономики Турции, М.—Л., 1937, էջ 43—44։

2 Նույն տեղում։

ներթափանցմանը, նույնիսկ 70-ական թվականներին, Թուրքիայի արդյունաբերությունը տակավին ապրում էր տնայնագործական վիճակ։ Սպառվող արտադրանքի գերակշռող բաժինը, երբեմն նույնիսկ գյուղատնտեսական մթերքների որոշ մասը, ներմուծվում էր դրսից[3]։

Միջնադարյան ավատատիրությունն արգելակում էր արտադրողական ուժերի անկաշկանդ զարգացումը։

Երկրի տնտեսությունը գտնվում էր հետամնացության այնպիսի աստիճանում, որ նույնիսկ բնական հարստությունները՝ քարածուխը, երկաթը, արծաթը, պղինձը, ցինկը, մարգանեցի և մյուս հանքերը, մշակվում էին աննշան չափերով։ Քարածխի հսկայական պաշար ունենալով հանդերձ, այն ներմուծվում էր Անգլիայից[4], որը Թուրքիայի ներմուծման ու արտահանման մեջ բռնում էր առաջին տեղը և իր գործարանային էժան ապրանքներով հեղեղում էր թուրքական շուկան[5]։ Եվ այդ բնական էր, որչափ գյուղատնտեսական և մյուս գործիքները «նախաջրհեղեղյան» էին ու չէին տարբերվում ասորեստանցիների գործածած արորներից[6]։

Հաղորդակցության ճանապարհներն անմխիթար վիճակում էին։ Ասիական Թուրքիայում 1876 թ. կար միայն երկու փոքրիկ երկաթուղագիծ։ Խճուղիներն հազվադեպ էին, իսկ սովորական բնահողային ճանապարհները գտնվում էին ծայրահեղ բարձիթող վիճակում[7]։

Թուրքիայում իշխում էր ամեն կարգի պաշտոնյաների՝

---

3 Բ. Իշխանյան, *Թուրքիայի ապագան, Թիֆլիս, 1907, էջ 13, նաև* Ю. А. Петросян, «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, М., 1958, *էջ 15*։

4 *Տե՛ս* К. Мак Коан, Наш новый протекторат, М., 1884, *էջ 184*։

5 *Տե՛ս* К. Маркс и Ф. Энгельс, Сочинение, второе изд., *հատ. 9, էջ 12*։

6 *Տե՛ս* Ն. Գոլենց և Ա. Խաչ, *Պատմություն հին հայերի, Թիֆլիս, 1909, նաև* Արիմանի. *Մահմեդական աշխարհը..., նաև* Րաֆֆի, *Երկեր, հատ. 9, էջ 195, նաև* Ю. Петросян, «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, *էջ 11, նաև* К. Мак Коан, Наш новый протекторат, *էջ 282 և այլն*։

7 *Տե՛ս* Ю. Петросян, «Новые османы»..., *էջ 14*։

մանրազույնից մինչև առասպելական չափերի հասնող կողոպուտն ու կաշառակերությունը։ Մինիստրների մեծ մասի կողմից վերցրած խոշոր կաշառքների բացահայտման կապակցությամբ, երբեմն այս կամ այն կառավարությունն ստիպված էր լինում անգամ հրաժարական տալ[8]։ Նույնիսկ հեղափոխական գրքերի ամբողջ արկղեր մաքսատները բաց էին թողնում կես մեջիդիե (80 կոպ.) ստանալով[9]։

Կենտրոնական իշխանությունները չէին ցանկանում ինչպես հարկն է վերահսկել ու կանխել տեղական իշխանությունների ու քուրդ ցեղապետների կամայականությունները, որոնք ավերակ էին դարձնում առանց այն էլ քայքայված ու անկման եզրին կանգնած երկիրը[10]։

Թուրքական պառլամենտի նիստերից մեկում, 1878 թ. հունվարին, անգամ թուրք պատգամավոր Ենիշեհիրլիզադեն գող ու կաշառակեր էր անվանում պետական պաշտոնյաներին. «Իմ գավառում (Այդընի վիլայեթ) կառավարության պաշտոնյաները հարստահարում են ժողովրդին, դատարանների պաշտոնյաները գողանում իրենց ավանդ հանձնված գումարները, իսկ ոստիկանները կեղեքում են ժողովուրդը...»[11]։

Զարաշահումների միջոց դարձած անսիստեմ գանձվող պետական հարկերը, ապա նաև կառավարության կողմից երբեմն կատարվող դրամական արժեթղթերի արհեստական

8 Տե՛ս «Московские ведомости», 1883, № 81.

9 Տե՛ս Արիմանի, Մահմեդական աշխարհն ու նրա ապագան, Վաղարշապատ, 1906, էջ 96։

10 XIX դարում տարածված էր մի անեկդոտ. աստված ցանկանում է տեսնել իր ստեղծած աշխարհը և Գաբրիել հրեշտակապետին պատվիրում է իր հետ շրջել ամենուր։ Աստված զարմացած ու վրդովմունքով դիտում է ողջ Եվրոպան, տեսնում է մեծ քաղաքներ, երկաթուղիներ, շոգենավեր, հեռագիր, հեռախոս ու զայրացած ասում, թե այն իր ստեղծած աշխարհը չէ։ Գաբրիելը նրան տանում է Պարսկաստան ու Թուրքիա։ Աստված իսկույն ուրախանում է և բացականչում. «Այ իմ ստեղծած աշխարհը, ինչպես ստեղծել եմ, այնպես էլ անփոփոխ մնում է» (Տե՛ս «Ժողովածու», հօգուտ ռուս սովյալների —1892 թ., Մոսկվա, էջ 100—101)։

11 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն ու Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912, էջ 339։

*արժեքազրկումը, մանավանդ 50 տարի շրջանառության մեջ գտնվող «մեթալիկ»-ի արժեզրկումը 1880 թ., դահավեժ անկման էին հասցնում Թուրքիայի աշխատավոր ազգաբնակչության, հատկապես նվաճված ժողովուրդների, առանց այն էլ ցածր կենսամակարդակը։*

*XIX դարում սկսված տնտեսական ու քաղաքական ճգնաժամը նույն դարի երկրորդ կեսերին առավել սրվեց և օսմանյան կառավարությանը կանգնեցրեց այնպիսի աղետալի վիճակի առջև, որ նա արդեն չէր կարողանում վճարել իր արտաքին պարտքերը։*

*1856 թ. անգլո-ֆրանսիական կապիտալով հիմնադրված Օսմանյան բանկը Թուրքիայից ծծում և տանում էր վերջին սուն*[12]*։*

*Մինչև Ղրիմի պատերազմը Թուրքիայի պետական պարտքերը հիմնականում սահմանափակվում էին Ղալաթիայի հայ բանկիրներին ունեցածով։ Պատերազմից հետո ունենալով 80 միլիոն ֆրանկ դեֆիցիտ, արդեն 1875 թ. պետական պարտքերն հասան 5,3 միլիարդ ֆրանկի։*

*Դրությունն առավել վատթարացավ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, և 1879 թ. Թուրքիան վերջնականապես հայտարարվեց սնանկացված։ Իսկ երբ 1881 թ. մուհարրեմյան դեկրետով ստեղծվեց պարտապան երկրների ներկայացուցիչներից կազմված Օսմանյան պարտքի վարչությունը, Թուրքիան փաստորեն զրկվեց տնտեսական ինքնուրույնությունից։*

*Պետական ապարատի իրավասությամբ օժտված այդ վարչությունն սկսեց խառնվել երկրի ներքին գործերին, պարտքերը մարելու համար գանձել պետական հասույթները, իր վրա վերցնելով անգամ մաքսատների վերահսկողությունը։*

*Նույն շրջանում Թուրքիայի արդյունաբերության հիմնական ճյուղերից մեկը՝ ծխախոտի արդյունաբերությունը, որը գտնվում էր օտարերկրացիների, հատկապես ֆրանսիական ընկերությունների ճանկերում, 1883 թ. ամբողջությամբ ըն-*

---

12 Ю. Петросян, «Новые османы»..., էջ 21։

կամ «Ռեժի» միջազգային վարչության լիիրավ տնօրինության տակ։ Եվրոպայի համար առաջնակարգ շուկա համարվող Օսմանյան կայսրության դռներն ավելի լայնորեն բացվեցին արևմտյան կապիտալի ու արդյունաբերական ապրանքների առջև և Թուրքիան որոշակիորեն դարձավ կիսագաղութ[13]։

* * *

Տնտեսական ու քաղաքական անկում ապրող թուրքական կայսրության բարբարոսական իրավակարգում հեծող մյուս ժողովուրդների հետ միասին իր գոյությունն էր քարշ տալիս և արևմտահայ ժողովուրդը։

XIX դարի կեսերին Թուրքիայի նախկին վարչական խոշոր միավորները՝ էյալեթները, մասնատվեցին և դարձան ավելի փոքր նահանգներ՝ վիլայեթներ (կուսակալություններ), որոնք իրենց հերթին բաժանվում էին սանջակների, իսկ այս վերջինները՝ կազաների։ Ըստ որում Թուրքիայում մեջընդմեջ կատարվող վարչական փոփոխությունների նպատակը նաև ստրկացված ժողովուրդների գոյությունն հիշեցնող անունները վերացնելու ցանկությունն էր, քանի որ նվաճված երկրները հնուց ի վեր ընդունված էր կոչել այդ ժողովուրդների անվամբ՝ Բոսնիա, Բուլղարստան, Արաբիստան, Լազիստան, Քուրդիստան, Էրմենիստան և այլն։

XIX դարի 70-ական թվականների կեսերից թուրքական տիրապետության տակ գտնվող Արևմտյան Հայաստանի տերիտորիան ընդգրկում էր Կարինի (Էրզրում), Վանի, Բաղեշի (Բիթլիս), Սըվազի (Սեբաստիա), Դիարբեքիրի և Խարբերդի (Մամուրեթ-Ուլ-Ազիզ) կուսակալությունները։ Կիլիկիան մտնում էր մասամբ Ադանայի, մասամբ Հալեպի կուսակալությունների մեջ։ Վարչական այս բաժանումը, ինչպես դրանից առաջ, այնպես էլ հետագայում, այս կամ այն պատ-

---

13 *Տե՛ս* Անտրե Մանտելստամ, *Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, Կ. Պոլիս, 1919, Ա մաս, նաև* А. Д. Новичев, Очерки экономики Турции, М.—Л., 1937, *նաև* «Раздел Азиатской Турции», Москва, 1924.

ձևով հաճախ փոփոխման էր ենթարկվում, բայց այդ փոփոխությունները հիմնականում պտտվում էին հիշյալ նահանգների և դրանք ընդգրկող տերիտորիաների շուրջը[14]:

Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության, հատկապես գավառահայ աշխատավոր ժողովրդի, տնտեսական ու իրավական դառնաղետ վիճակը շարունակում էր վատթարանալ:

Թեպետ Թուրքիայի ծովափնյա քաղաքներում, հատկապես Կ. Պոլսում, դարեր ի վեր բարձրացել և իշխող դիրքեր էին գրավել հայ առանձին մեծատուններ՝ սարաֆ-ամիրաներ, որոնք կազմում էին հայ ամիրայական դասի հիմնական հատվածը[15], ինչպես նաև հույն առևտրականների հետ միասին երկրի ծովափնյա առևտուրն իրենց ձեռքը վերցրած հայ կոմպրադորական բուրժուազիան, բայց նրանց մի մասը կորցրել էր իրեն ծնած ժողովրդի հետ ունեցած կապը, ապրում էր տնտեսական ու քաղաքական այլ նպատակներով: Բացի այդ, խորը ճշմարտություն էր պարունակում Թուրքիայում տարածված ծաղրական այն ասացվածքը, թե իրենց իրավակարգում քրիստոնյա թագավորն անգամ չի կարող վկայություն տալ մահմեդական բեռնակրի դեմ[16]:

Գիբբոնը դեռ XVIII դարում հայ ժողովրդի մասին գրում էր, որ նրան թույլ չեն տալիս «վայելել նույնիսկ ստրկական դրության հանգստությունը»[17]: Իսկ ավելի վաղ, Լյուդովիկոս տասնչորսերորդին՝ հայ ժողովրդին թուրքական լծից ազատագրման հորդորող Մահտեսի Մուրադը բացատրում էր. «Հայերը, որոնք շատ ստվարաթիվ են Վանի, Բիթլիսի, Թոխաթի, Սեբաստիայի, Կարինի, Կարսի և մերձակա շրջանների մեջ, միանալով հույների և մյուս քրիստոնյա ազգաբնակությունների հետ, կկարողանան շփոթություններ առաջ բերել Անատոլիայի ներսում և դիմադրել մինչև քրիստոնեական զոր-

---

14 Տե՛ս Սարուխան, *Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում*, էջ 84: Մ. Ներսիսյան, *Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ*, Երևան, 1955, էջ 33 և այլուր:

15 Տե՛ս Լեո, *Խոջայական կապիտալ*, Երևան, 1934, էջ 252:

16 Տե՛ս И. Кофаль, Курс мусульманского права, СПБ, 1886.

17 Տե՛ս Լեո, *Հայոց հարցը*, Թիֆլիս, 1906, էջ 4:

քերի հանելը, որովհետև, Տեր, հարստահարությունները, ճնշումներն ու բռնություններն այդ երկրում ամեն սահման անցած լինելով՝ ժողովուրդներն այլևս չեն կարողանում տանել այդ ստրկությունը և որոշել են ազատվել նրանից»[18]։

XIX դարի կեսերին քրդական ֆեոդալների դեմ ձեռնարկած կառավարական միջոցառումները, որոնք ուղղված էին կենտրոնական իշխանության ամրապնդմանը, չնչին չափով պիտի մեղմացնեին արևմտահայ ժողովրդի հարստահարությունները։

Բայց նույն ժամանակաշրջանում և քիչ ուշ, թուրքական բուրժուազիայի ձևավորումն ու նրա համախմբումը համիսլամության դրոշի ներքո առավել վատթարացրին քրիստոնյա ժողովուրդների վիճակը։

Անգութ շահագործման էր ենթարկվում հայ աշխատավոր դասը, հատկապես Արևմտյան Հայաստանի գյուղացիությունը։

Երբեմն կատարվող կիսատ-պռատ բարեփոխումները սուլթանական կառավարության համար ոչ թե նպատակ, այլ միջոց էին արտաքին միջամտություններից ազատվելու համար։ Դրանք, ինչպիսին էլ լինեին, դրությունը նույնն էր մնում, քանի որ շարունակվում էր գոյություն ունենալ թուրքերի և նվաճված ժողովուրդների միջև եղած տիրոջ ու ստրուկի փոխհարաբերությունը։

Թուրք՝ քուրդ և չերքեզ բեյերը, հաստատվելով հայկական այս կամ այն գյուղում, բռնությամբ սեփականացնում էին այն, դառնում հողատերեր և անլուր շահագործման ենթարկում հայ ազգաբնակչությանը[19]։

Ի դեպ հայ գյուղացիներից հողերի զավթումը կատարվում էր ոչ թե տեղական իշխանությունների թուլության պատճառով, այլ այն թուրքական կառավարության ագրարային քաղաքականությունն էր։ Այդ հափշտակությունները կատար-

---

18 Տե՛ս Հ. Ս. Անասյան, XVII դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1962, էջ 160—161։

19 Տե՛ս, Պ. Նաթանյան, Արտասուք Հայաստանի, Կ. Պոլիս, 1879, էջ 107, նաև «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԴ, Թիֆլիս, 1915, էջ 63։

վում էին այնպիսի ահավոր չափերով, որ շատ տեղերում հայերից խլվում էին նրանց հողային տարածության 70—80 տոկոսը, իսկ Մալաթիայում այն հասնում էր 92 տոկոսի[20]։

Քրդական շեյխերի գավազանով ծեծված հայկական առանձին գավառներում նույնիսկ պահպանվում էին ճորտական հարաբերություններ։

Ճակատագրի դաժան բերումով հայ նախարարներին փոխարինել էին քուրդ և թուրք հողատերերը և հայ գյուղացին մնացել էր ճորտական կախման մեջ իր նոր տերերից։ Առանձին գավառներում, անարգել կերպով, իր մշակած հողի հետ միասին, «կանամբ և որդովք, շարժական և անշարժ կալվածքներով», գնվում և վաճառվում էր դարավոր հարստահարությունից կծկված հայ աշխատավորը[21]։

Թեպետ երկրի տնտեսական ճյուղերի զգալի մասում իշխող դիրքեր էին գրավում հայերը, բայց այդ ոչնչով չէր փոխում նրանց ստրկական իրավիճակը։

Հարկավ, ոչ միայն Արևմտյան Հայաստանում, այլև Թուրքիայի շատ այլ քաղաքներում ձեռնարկատերերի, առևտրականների, արհեստավորների ու ազատ մասնագիտության աշխատողների ճնշող մեծամասնությունը հայեր էին։

Սըվազի կուսակալությունում 166 խոշոր ներմուծող-առևտրականներից հայեր էին 125-ը, 37 բանկիրներից՝ 32-ը, 9800 մանր առևտրականներից՝ 6800-ը։ 153 արդյունաբերական ձեռնարկություններից՝ 130-ը պատկանում էին հայերին։ Վանի կուսակալությունում հայերի ձեռքին էր կենտրոնացված ամբողջ առևտրի 98 տոկոսը։ Ազատ մասնագիտության (բժիշկներ, դեղագործներ, իրավաբաններ և այլն) աշխատողները նույնպես հայերն էին[22]։ Մալաթիայում հայերը կազմում էին արհեստավորների 95 տոկոսը։ Իսկ ոսկերչությունը

---

20 Տե՛ս Е. К. Саркисян, Аграрная политика османского правительства в Западной Армении, 1957, էջ 57—59:

21 «Մասիս», 1872, № 1239:

22 Տե՛ս М. С. Лазарев, Курдистан и курдская проблема, М., 1964, էջ 36։

հայերի մենաշնորհն էր դարձել։ Ներկարարներն ու պղնձագործները դարձյալ բացառապես հայեր էին[23]։

«Էրզրումում, ինչպես և Կոստանդնուպոլսում, հայերը տարբերվում են թուրքերից ավելի բաց և ազատամիտ ոգով, — գրում էր Էլիզե Ռեկլյուն, — ուսման ավելի մեծ սեր ունեն, վաճառականության և արվեստների մեջ ավելի մեծ ձեռներեցություն։ Վանի վիլայեթում չկա տուն, որ նրանց ձեռքով շինված չլինի, չկա տեղական կտոր, որ նրանց գործածը չլինի, չկա պտուղ, որ նրանց պարտեզներից չլինի»[24]։

Իրենց ֆիզիկական գոյությունը հայերը կարողանում էին պահպանել միայն դրա շնորհիվ։ Դեռ XVII դարում Միշել Ֆեբուրը թուրքերի մասին գրում էր, որ նրանք իրենց երկրում քրիստոնյաներին ու հրեաներին հանդուրժում են լոկ այն պատճառով, որ նրանցից մեծ օգուտներ են քաղում, այնպես, ինչպես արվում է ոչխարների ու մեղուների նկատմամբ՝ նրանց տված բարիքների համար[25]։

Իհարկե, երկրի տնտեսական կյանքում ունեցած հայերի այս գերիշխող դիրքը թուրքական իշխանություններն օգտագործում էին՝ հակահայկական պրոպագանդա մղելով մահմեդական խավարամիտ զանգվածների մեջ։

XIX դարի կեսերին հայ մանր հողատերերի ունեզրկումը, ապա քիչ ուշ կազմակերպված ջարդերն ու հողերի բռնի հափշտակումը, խոշոր չափերով համալրում էին գյուղատնտեսական պրոլետարիատի բանակը[26]։

Մյուս կողմից, ինչպես իրավացի նկատել են, արդեն երևում էր և հայ արհեստավոր դասի տնտեսական կայունությունը՝ բախվում դանդաղ բարգավաճող թուրքական ար-

23 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն Մալաթիո հայոց, Բեյրութ, 1961, էջ 1004։

24 Էլիզե Ռեկլյու, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, Վաղարշապատ, 1893, էջ 29։

25 Տե՛ս Հ. Անասյան, 17-րդ դարի ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, էջ 34։

26 Տե՛ս И. Флеровский, Армения («Современник», 1914, ноябрь, էջ 145)։

հնատագործության ու եվրոպական ապրանքաշրջանառության ներհոսի հետ։

Ահավոր չափերի հասնող պետական հարկերը՝ տասանորդը, զինվորական, հողային, ապա քուրդ իշխանավորներին, տեղական աղաներին, եկեղեցուն ու վաշխառուներին տրվող տուրքերն ու տոկոսները հայ գյուղացու համար ստեղծում էին թշվառ ու անօգնական այն վիճակը, որը նրան մղում էր առավել ստրկական աշխատանքի կամ հեռավոր պանդխտության։

* * *

1863 թ. մարտի 17-ին Բ. Դռան կողմից թլպատվեց, ապա վավերացվեց արևմտահայերի Ազգային սահմանադրությունը, կամ ավելի ճիշտ Կ. Պոլսի հայ համայնքի կանոնադրությունը[27]։

Տակավին նրա լիակատար բնույթի մասին խոսելիս Մ. Նալբանդյանը գրում էր, որ դա մի անուն է, որ անիմաստ է, որպես այդպիսին, թե հայ ազգի և թե այդ կանոնադրության իսկ վերաբերյալ[28]։

Թեև որպես երևույթ այն նշանակալի էր ոչ միայն արևմտահայերի, այլև օսմանյան պետության համար ընդհանրապես, և առաջադիմական՝ իր սկզբունքներով, որչափ արևմտահայ կյանքում մտցնում էր այնպիսի արմատական փոփոխություն, որ ժողովրդի ղեկավարությունը խլելով կղերաամիրայական վերնախավի մենաշնորհից, հանձնում էր ընտրությամբ կազմվող Ազգային ժողովին։

---

27 Կառավարությունն այն կոչեց «Հայ ազգի կանոնադրություն» («Նիզամնամեի միլլեթի էրմենիյան»)։

Սահմանադրությունը հայոց ազգային ժողովի կողմից հաստատվում է 1860 թ. մայիսի 24-ին և գործում մինչև 1861 թ. հոկտեմբերը, երբ Երուսաղեմի աթոռի հետ կապված վեճի առիթով Բ. Դռան կողմից արգելվում է և նորից ուժի մեջ մտնում միայն 1863 թ. վավերացվելուց հետո։ Ի դեպ սահմանադրությամբ Ազգային ժողովի 140 պատգամավորից 100-ը ընտրվում էին Կ. Պոլսից, ուստի Գում-Գափու Թաղամասի մի քանի հարյուր ընտրողներ Ազգային ժողովում ներկայացված էին 17 տեղով, իսկ ամբողջ Վասպուրականը՝ մեկ։

28 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1945, 1949, հատ. 2, էջ 353։

Կառավարությունը ազգային վարչության գոյության պայմաններում էլ, իր և հայ ժողովրդի միջնորդ շարունակում էր ճանաչել պատրիարքին, որովհետև հպատակ ազգերին տրված առանձնաշնորհումները ընդհանրապես ցանկանում էր ճանաչել միայն որպես կրոնական համայնքների ինքնուրույնություն։ Սակայն պատրիարքարանը կար և մնաց որպես արևմտահայերի ոչ միայն կրոնական, այլև քաղաքական ղեկավար կենտրոն։

Ազգային սահմանադրությունն իրենով նշանավորում էր հայ ժողովրդի քաղաքական զարթոնքը, իր հերթին նպաստում արևմտահայության քաղաքական-մշակութային նոր առաջընթացին, բարեգործական և ուսումնական հաստատությունների հիմնադրմանն ու ծավալմանը։

Սակայն խմբագրված լինելով, ինչպես Խրիմյանն էր ցավով ասում, այնպիսի մարդկանց կողմից, որոնք Եվրոպան ավելի լավ գիտեին, քան Հայաստանը[29], այն վերածվեց մի «քառակուսի անվի» (Ալի փաշա), որը երբեք չկատարվեց և միայն դատարկ հույսեր ներշնչեց արևմտահայությանը։ Այդ սահմանադրությունը, ինչպես դեռ Րաֆֆին ու Գր. Արծրունին էին գրում, մի խաղալիք էր, որով Բ. Դուռը փորձեց խաբել արևմտահայ ժողովրդին, «...Որ նա հանգիստ մնա, որ նրանով զբաղվի, չարություն չգործե... և Կ Պոլսի աղայամիտ էֆենդիները շատ գոհ և ուրախ էին այս խաղալիքով, և ամեն տարի Բոսֆորի ափերի մոտ տոնում էին իրենց ողորմելի պատարանքը...»[30]։

Սահմանադրության կիսատ-պռատությունն ի նկատի ուներ Սերվիչենը, այդ կանոնադրության հեղինակներից մեկը, երբ հետագայում, փորձելով նորից բորբոքել Թուրքիայի հայ բարձրաստիճան պաշտոնեության դեմ ուղղված լիբերալ պայքարը, դիմում էր երիտասարդությանն ու ասում.

29 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 61։

30 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, Երևան, 1958, էջ 263։

մենք ժամանակին տապալեցինք ամիրայական դասը, ձեզ է մնում տապալել էֆենդիությունը[31]։

Արևմտահայերին տրված այդ սահմանադրությամբ Բ. Դուռը փորձեց ժողովրդին շեղել պայքարի ճշմարիտ ուղուց, իր սոցիալական ու քաղաքական ազատագրման համար ոտքի ելած արևմտահայ ժողովրդին մղելով սահմանադրության վերափոխման համար ծավալած ներազգային, նեղ ու սխալ պայքարի շավիղ։ Այդ սահմանադրությունը, իր դրական նշանակությամբ հանդերձ, նույնիսկ լիարժեք իմաստով կուլտուր-ազգային ավտոնոմիա էլ չէր տալիս հայերին[32]։

Սահմանադրությունը ոչնչով չէր փոխում ժողովրդի ծանր վիճակը, քանզի նրա մեջ ամեն ինչ կար. «...ամեն ինչ, բացի մի հոդվածից, որը ցույց տալով հայը թույլ չտա քրդերին խլել իր ոչխարները, բեյին՝ բռնաբարել իր աղջիկներին և քար ու քանդ անել իր հողը, հարկահանին՝ երկու կամ երեք անգամ պահանջել միևնույն հարկը»[33]։

Քրդական հարստահարությունների անասելի չափերը արցունքի փոխարեն արյուն էին քամում հայ աշխատավորի աչքերից, երբ նա լաց էր լինում[34]։

Տոհմա-ցեղային կյանքով ապրող քրդական ցեղախմբերը (աշիրեթները), որոնք ինքնըստինքյան ռազմական միություններ էին, որպես պատուհաս կախված էին հայ գյուղացու գլխին։ Մինչև ապրուստի վերջին միջոցը կողոպտում էին, ապա լլկում, խողխողում ու տանջամահ անում նրանց։ Ամենեքյան հուսախաբված հայ աշխատավորը երկնքին իսկ անհույս էր նայում և միայն քթի տակ փնթփնթում էր, թե աստված էլ մոռացել է հային։ Որին ի պատասխան քուրդ ավազակապետը ծաղրով նետում էր. Քրիստոսն էլ ինձ նման ավազակ էր՝ խաչեցին[35]։

31 Տե՛ս Ատոմ, Ազգային սահմանադրությունը, Կ. Պոլիս, 1914, էջ 86։

32 Տե՛ս Մ. Մյասնիկյան, Ընտիր երկեր, Երևան, 1957, էջ 96—97։

33 «Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», М., 1896, էջ 19։

34 Մ. Նալբանդյան, Անտիպ երկեր, Երևան — Մոսկվա, 1935, էջ 60։

35 Տե՛ս Վ. Փափազյան, Երկերի ժողովածու, հատ. 2, Երևան, 1958, էջ 223։

Այնպիսի տաժանելի վիճակ էր ստեղծվել հայ ժողովրդի համար, որ 1870 թ. Գաբրիել վ. Խաչատրյանը Գ. Սրվանձտյանին գրում էր. «... օհ, եղբայր այն բռնութիւններ որ քրդերը կընեն հայոց ազգին պատմելու չէ, իրանի թե փարավոնի գերութիւնը ըլլար...»[36]։

Նույն շրջանում Խրիմյանը խունկ էր վառում անգամ այն ժամանակների առջև, երբ Լենկթեմուրը հայոց աշխարհն արյունով ողողեց, Ալփ-Արսլանը Անիում հայ երիտասարդների արյան ավազանում լողացավ, իսկ Շահ Աբասը հազարավոր հայերի խեղդեց Արաքսի ալիքների մեջ[37]։

Թուրքական իշխանությունները քրիստոնյաների նկատմամբ շարունակում էին հարյուրամյակներ գոյատևող իրենց հոգեկան խոշտանգումները։ Ոստիկանության կողմից ննջեցյալի թաղումը թույլատրելու համար հայ քահանային ուղարկված պաշտոնական արտոնագիրն ազդում էր. «Սատանայական թագը կրող, կպրաթուրմ գլխատ հագնող՝ աստվածային ատենեն զրկվող... գյուղի քահանային իմաց կտրվի որ ձեր դարշելի և անօրեն ու անաստված ցեղեն Առաքել անուն անձը յուր մարմնական պիտոյին համեմատ սատկած լինելով, եթե հիշյալի զազիր գիակը հողն անգամ չընդունիր, սակայն զարշահոտությունը մարդու վնասակար ըլլալուն, գուբ մը բանաք և զզվելի գիակը հոն դնելով կոխոտեք ու գաք անօրեն ու անաստված»[38]։

1867 թ. Զարսանճակից Կ. Պոլսի հայոց պատրիարքին գրում էին, որ թուրք փաշաները իրենցից հարկ են պահանջում անգամ մեռյալներին թաղելու համար. «Մեր ննջեցյալները գերեզմանում չթողեցին ամփոփել՝ թե երկիրը մերն է»[39]։

Շարքային ոստիկանը հայ գյուղապետին ձիու թամք

---

36 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 198։

37 Մ. Խրիմյան, Ամբողջական երկեր, Նյու-Յորք, 1929, էջ 269։

38 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, Երկու խոսք, նաև Հ. Մորգենթաու, Ամերիկյան դեսպան Մորգենթաուի հիշատակները և հայկական եղեռնի գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919, էջ 242։

39 Մատենադարան, արխիվային բաժին, Կաթողիկոսական դիվան, 1867, թղթ. 202, վավերագիր 549։

հագցնելով նստում էր վրան, ստիպում տանել ցանկացած տունը, իսկ այնտեղ ծեծում և պարտադրում, որ նա խոստ տուրի: Վերջինս չէր էլ մտածում հետագայում բողոքել, որովհետև նրան ոչինչ չէր փրկի ոստիկանի քինախնդիր վրեժից[40]:

Հաճախ որպես հայերին հարցի պատասխան, թուրքերը ռումբի պես պայթեցնում էին, թե «մարդու լեզվով խոսիր» («ադամ դիլի սյոյլե»): Թուրքերի մոլեռանդությունն այնտեղ էր հասնում, որ կարող էին փողոցում ձիուց վար բերել հանդիպած քրիստոնյային, գանակոծել կամ տեղնուտեղը սպանել, առանց որևէ պատճառի: «Եթե թուրք մը բան գնած է հայե մը, — գրում էր Գ. Սրվանձտյանը, — իրավունք չունի հայն ստակ պահանջելու, եթե վճարե թուրքն՝ շնորհ մ'է, եթե ոչ, յուր իրավունքն է»[41]:

Իսկ Վանի ընդհանուր դատախազ Ռեուֆ բեյը հայ թեմական առաջնորդների անուններով էր կոչում իր շներին[42]:

Հայկական կուսակալություններում հաստատված էր «կառավարման գաղտնային սիստեմ, որի հետ համեմատած, հարավային նահանգների ստրկական սիստեմի դաժանությունները հանդիսանում են միայն որպես աննշան չարաշահություններ», — իրավացիորեն գրում էր Էմ. Դիլլոնը[43]:

Թուրքական իշխանությունները տարբեր միջոցներով փորձում էին կանխել հայ ժողովրդի ազատության ձգտումը: Դեռ 1869 թ. Կ. Պոլսի ռուսական դեսպան Իգնատևն իր կառավարությանը գրում էր, որ Բ. Դուռը գաղտնի հեռագրով տեղական իշխանություններին հրահանգել է անխնա ոչընչացնել հայկական պատմական հուշարձանները, որպեսզի նրանք հայ ժողովրդի մեջ չարթնացնեն ազգային անկախության գաղափար[44]:

Կառավարության նողկալի քաղաքականությունը ժողո-

---

40 «Положение армян...», էջ 143:

41 Գ. Սրվանձտյան, Թորոս աղբար, Կ. Պոլիս, 1879, մաս 1, էջ 162—163:

42 Տե՛ս «Մշակ», 1882, № 200:

43 «Положение армян...» էջ 329:

44 Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 79:

վերջին հասցրել էր այնպիսի վիճակի, որ Արևմտյան Հայաստանում շրջող եվրոպացին ապշած գրում էր, թե կարծես «...օդին մեջ ուրվականներ կան, զվարթությունը մեռած է, արևը սև է, բերանները ցամքած են, մտածումները պատառատուն ու ողորմելի են»[45]:

XIX դարի 60—70-ական թվականներին, թուրքական բուրժուազիայի ձևավորման հետ միասին, աշխուժացավ Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին համիսլամության դրոշի ներքո համախմբելու և ձուլելու «նոր օսմանների» քաղաքականությունը: Նրանց քաղաքական մանիֆեստը, դրանով իսկ հայ ժողովրդին ոչնչացնելու կոչը, տրվեց Ֆուատ փաշայի, 1869 թ., մահվանից մի քանի ժամ առաջ գրի առած հայտնի կտակի՝ Օսմանյան կայսրությունը վտանգի մեջ է, ահասարսուռ ազդով:

Թուրքական կառավարության ոչ իսլամ հպատակների նկատմամբ ունեցած գաղտնի նպատակներն էին, որ նրանց մղում էին մահմեդական տարրը հետևողականորեն գրգռել քրիստոնյաների դեմ: Այդ գաղտնի նպատակը «Թուրքիա կոչված երկիրը ամբողջապես թուրքացնելն է... որպեսզի Թուրքիա միատարր ու միապաղաղ երկիր մը ու ազգություն մը դառնա...»[46]:

Իսկ որպես այդ նպատակին հասնելու միջոցներ, նրանք մատնացույց էին անում քրդին, չերքեզին, կուսակալին, դատավորին, հարկահավաքին, թուրքական զինվորին ու ոստիկանին և զինված բաշիբոզուկներին, կանգնած զենք կրելու իրավունքից զրկված ու անօգնական հայ ժողովրդի դեմ[47]:

Քրիստոնյաների ջարդերը դառնում էին պետական քաղաքականություն և հետևողականորեն իրագործվում հատկապես այն ժողովուրդների նկատմամբ, որոնք իրենց մշակույթով բարձր էին թուրքերից, ուստի խաղաղ ձուլման տեսակետից անհուսալի: Այդ քաղաքականության հեղինակները

---

45 Վինչ. *Հայաստան*, Կ. Պոլիս, 1914 թ., հատ. 2, էջ 195:

46 Մ. Օրմանյան. *Խոհ և խոսք*, Երուսաղեմ, 1929, էջ 476:

47 Տե՛ս «Փորձ», 1879, № 7—8, էջ 204—205 (Քյամիլ փաշայի նամակը սուլթան Աբդուլ Համիդին):

բացեիբաց հայտարարում էին, որ Թուրքական առաջին սուլթանների կողմից քրիստոնյաների նկատմամբ թույլ տրված սխալի հետևանք է, որ նրանք դեռ այսօր գոյություն ունեն Օսմանյան կայսրության մեջ, և իրենք պետք է ուղղեն այդ սխալը[48]։

Մանավանդ բալկանյան երկրների անջատումը սարսափի մեջ գցեց թուրք ազգայնականներին ու նրանց ուշադրությունը սևեռեց Արևմտյան Հայաստանի վրա, արևմտահայ ժողովրդին կանգնեցնելով բռնի ձուլման կամ ջարդի ահավոր վտանգի առջև։

Թուրքական իշխանությունների կողմից ձեռնարկած առաջին միջոցառումներից մեկը Թուրքիայի հայ ազգաբնակչության թվի հետևողական խարդախումն էր՝ հայկական կուսակալություններում նրանց փոքրամասնություն ցույց տալու դիտավորությամբ[49]։

Այդ ուղղությամբ, հատկապես 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, ձեռնարկվում էին նաև արհեստական միջոցառումներ։ Հայերով խիստ բնակեցված գավառներին վարչական կարգով միացվում էին քրդաբնակ գավառներ և ցանկացած ձևով փոխում բնակչության ազգային փոխհարաբերակցությունը։ Հեքիյարին՝ Վանին, ապա Մուշը Վանից անջատելուն և Բաղեշին ու Սղերդին միացնելը և մյուս նման ձեռնարկումները այդ նպատակն էլ հետապնդում էին։

Թուրքական մամուլն ու վիճակագրությունը հայերի թիվը պակաս ցույց տալու նպատակով դիմում էր նույնիսկ բացահայտ կեղծիքների[50]։

Այդ շրջանում Մ. Խրիմյանը Վանից Հ. Նշկյանին գրում

---

48 Տե՛ս «История XIX века», под ред. Лависа и Рамбо, М., 1907, հատ. 8, էջ 1—2։

49 Թուրքիայի հայերի թիվը առանց այն էլ պակաս էր ցույց տրվում նախ հայ ազգաբնակչության կողմից, զինվորական հարկից ազատվելու, ինչպես նաև թեմական առաջնորդների նախաձեռնությամբ՝ տուրք քիչ տալու նպատակով (տե՛ս Հ. Առաքելյան, Թուրքահայ ժողովրդի վիճակագրությունը, էջ 6—8)։

50 Տե՛ս «Մասիս», 1879, № 2482, նաև Հ. Երամյան, Հուշարձան, Աղեքսանդրիա, 1929, հատ. 1, էջ 15։

էր. «Կուսակալը ներ ըստ Սալնատին փաշայի խորամանկ ծրագրին... ըստ իր քմաց, առանց թվերի և ճշտության, մարդահամար կշինե, նույնիսկ Վասպուրականին մեջ մահմեդական ժողովուրդ եռապատիկ թվով կբազմապատկե»[51]։

Չնայած օսմանյան կառավարության վարած հայերի մասանջատման քաղաքականության, նրանց թիվը Թուրքիայի հայկական կուսակալություններում, XIX դարի 80-ական թթ., գերակշռող էր, առանձին ենթաշրջաններում նույնիսկ հասնում էր մինչև 75 տոկոսի։ Վարչական առավել խոշոր շրջաններում հայերը կազմում էին ազգաբնակչության զգալի մասը։ Սըվազի կուսակալությունում նրանք կազմում էին բնակչության 35 տոկոսը, Վանի գավառում՝ 50, Մուշում՝ 45, Բիթլիսում՝ 33, Սղերդում՝ 30, Ադանայում՝ 29, Կարինում՝ 25, Կեսարիայում ու Դիարբեքիրում՝ յուրաքանչյուրում 23 տոկոսը և այլն[52]։

Ալ. Երիցյանի բավականին մանրակրկիտ ուսումնասիրությունից պարզվում է, որ դեռ XIX դարի 70-ական թվականների սկզբներին Կարինի կուսակալությունում, որի մեջ մտնում էին այն ժամանակ նաև Վանը և Մուշը, հայերը կազմում էին ազգաբնակչության 42 տոկոսը, քրդերը՝ 30 տոկոսը, թուրքերը՝ 17,5 տոկոսը և այլն[53]։

Օսմանյան կայսրության հայ ազգաբնակչության թիվը, չհաշված 1877—1878 թթ. պատերազմի հետևանքով Ռուսաստանին անցած Կարսի շրջանը, հայոց պատրիարքարանի տվյալներով հասնում էր շուրջ երեք միլիոնի, որից երկու միլիոնը Մեծ Հայքի թուրքական մասում և Փոքր Հայքում (Սըվազի վիլայեթ և Կեսարիայի սանջակ)։ Միայն հայկական կուսակալություններում հայերի թիվը անցնում էր մեկ միլիոն երեք հարյուր հազարից[54]։

---

51 Հ. Նշկյան, *Առաջին կայծերը*, 1930, էջ 99։

52 Տե՛ս И. И. Голобородко, Турция, Москва, 1912, էջ 220, նաև М. С. Лазарев, Курдистан и Курдская проблема, Москва, 1964, էջ 36։

53 «Փորձ», 1880, № 6—7, էջ 229։

54 Տե՛ս Ծրագիր կազմակերպական կանոնագրի Օսմանյան Հայաստանի, Կ. Պոլիս. 1878, էջ 30։ Այս թվերը համարյա նույնությամբ ընդունելի են ինչպես հայ, այնպես էլ օտար հեղինակների մեծ մասի կողմից։

Թեպետ Արևմտյան Հայաստանում ազգաբնակչության մեկ երրորդը, կամ մի քիչ ավելին էին հայերը[55], բայց նրանք հարաբերական մեծամասնություն էին այնտեղ։ Եթե ընդունենք, որ հայերը միջին հաշվով կազմում էին ազգաբնակչության թվում 35 տոկոսը, ապա քրդերը կազմում էին մոտ 26 տոկոսը, թուրքերը՝ 25 տոկոսը, իսկ մնացած 14 տոկոսը հույն, հրեա, ասորի, չերքեզ, պարսիկ և մյուս ժողովուրդների ներկայացուցիչները։ Ըստ որում այս վերջինների զգալի մասը, ինչպես նաև քրդական առանձին ցեղեր, քրիստոնյա էին և նույնիսկ երազում էին թուրքական լծի թոթափում[56]։ Իսկ Խարբերդի ասորիների խոսակցական լեզուն հայերենն էր[57]։

Կարինի, Բիթլիսի, Վանի կուսակալություններում, հույն զինվորական բժիշկ Իոաննիսի վկայությամբ, յուրաքանչյուր թիզ հողը կրում էր հայկական անջնջելի հետքեր, իսկ հայ ազգաբնակչությունը այնպիսի ստվար մաս էր կազմում, որ այլազգին երբեմն ստիպված էր լինում հայերեն սովորել[58]։ Ուստի թուրքական կառավարությունը XIX դարի կեսերից ձեռնարկեց նաև հայ տարրը նվազեցնելու գործնական միջոցառումներ։

Դեռ XIX դարի 60-ական թվականներին Կարինի կուսակալը մեծ վեզիրին տեղեկացնելով հայերի կրած տառապանքների մասին, հայտնում էր, որ ծանր վիճակը ստիպում է նրանց բռնել գաղթի ճանապարհը, որից երկիրն ու պետական գանձարանը հսկայական վնասներ կկրեն։ Պատասխանն ուշանում էր։ Եվ երբ կուսակալը շարունակում է նույն ոգով կազմված իր զեկուցագրերը, եպարքոսից ստանում է հետևյալ պատասխանը. «Ձեր գործը չէ բնավ խառնվել պետական քաղաքականության մեջ, և մի այդպիսի տեսակետից նայել

55 Վիճակագրական ճշգրտության տեսակետից գերապատվությունը պետք է տալ 1878 թ. պատրիարքարանի հանձնարարությամբ Արևմտյան Հայաստան մեկնած երեք վարդապետների ներկայացրած սույն տվյալներին (տե՛ս «Հայաստանի կոչնակ», 1923, № 20)։

56 Տե՛ս Պ. Նաթանյան, Արտոսր Հայաստանի, էջ 102։

57 Նույն տեղում, էջ 131։

58 Տե՛ս «Մուրճ», 1889, № 5, էջ 718։

գործերի վրա։ Բարի ճանապարհ այն հայերին, որոնք կկամենան գաղթել։ Ես կբնակեցնեմ երկիրը չերքեզներով և ուրիշ ցեղերով»[59]։

1863 թ. «Համբավաբեր Ռուսիո»-ն (№ 48) գրում էր, որ գրեթե 80 տարի հայերին (Տատյաններին) վստահված պետական վառոդաշինությունը առնվել է նրանցից, իսկ վառոդարանում աշխատող հայ բանվորների վրա հսկիչներ են կարգված։ Միաժամանակ ստիպում են նրանց իրենց արհեստը սովորեցնել թուրքերին, որպեսզի մոտ ապագայում հայերին լրիվ փոխարինեն մահմեդականներով[60]։

1865 թ. Կովկասից գաղթած չերքեզներին թուրքերը բնակեցրին Բալկաններում, ուր նրանք ստանձնեցին այն դերը, ինչ քրդերը կատարում էին Արևմտյան Հայաստանում։ 1877—1878 թթ. պատերազմի ժամանակ ստիպված լինելով գաղթել Բուլղարիայից և ռուսների գրաված մյուս տերիտորիաներից, նրանք ուղարկվեցին Փոքր Ասիա, իրենց բարբարոսությունները այնտեղ շարունակելու նպատակով։

Թուրքական իշխանությունները, կարծես 16-րդ և 61-րդ հոդվածները ծաղրելու համար, նույն չերքեզներին, որոնց դեմ պարտավորվում էին պաշտպանել հայերին, բնակության էին ուղարկում Արևմտյան Հայաստան։ Ըստ որում Թուրքիայի եվրոպական մասից Փոքր Ասիա անցնող չերքեզները, իրենց գաղթի ճանապարհին, Կ. Պոլսի հրապարակներում օրը ցերեկով վաճառում էին գերեվարած քրիստոնյա մանուկներին։

Բեռլինի կոնգրեսի շրջանում և հետո, պակասեցված ներկայացնելով հայերի թիվը, Բ. Դուռը, ինչպես նշեցինք, հետագայում ձեռնամուխ եղավ նրա իրական նվազեցմանը, և այդ գործում քրդերի հետ միասին, նրան մեծապես օգնեցին նաև հիշյալ չերքեզները։

Թուրքական կառավարությունը, Վասպուրականն Այրարատից կտրելու մտադրությամբ, ցանկանում էր Բագրևանդն

59 Տե՛ս «Մշակ», 1880, № 5, նաև Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո հայոց, Գահիրե, 1952, էջ 1115։

60 Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 79։

տւ Կոզովիտը և շրջակա տերիտորիաները բնակեցնել զուտ քրդական տարրերով։

Իշխանությունները և նրանց ներկայացուցիչները բացարձակ հայտարարում էին, որ իրենք սրտանց ուրախանում են, երբ հայերը գնում են «օսմանյան երկրից»[61]։

Արևմտյան Հայաստանի հայաթափ լինելուն, հարկավ, պակաս չնպաստեցին XIX դարում կատարված ռուսական արշավանքները, որոնք ավարտվում էին զանգվածային գաղթականությամբ։

XIX դարի 80-ական թվականներին հայ պաշտոնյաներին ամենուր և արդեն մասսայաբար փոխարինում էին մահմեդականները։ Գավառական խառը ժողովները «մաքրվում էին» հայերից։ Անգամ մինչ այդ հեղինակություն վայելող հայ գործիչները կասկածի տակ էին առնվում՝ «անհավատարմության ախտ քսելով» ողջ հայ ժողովրդի վրա[62]։

«Լևանտի կուրիեր»-ին Կ. Պոլսից գրում էին, որ «Բ. Դուռը հետևում է այժմ իր բոլոր քրիստոնյա հպատակներից նրանց ամեն արտոնությունները խլելու քաղաքականությանը, որ նրանք վայելում էին նույնիսկ Կ. Պոլսի առումի ժամանակից»[63]։

Թուրքական իշխանությունները, այլ միջոցների հետ միասին, դիմում էին նաև հայ ազգաբնակչությանը անտեսապես քայքայելու այնպիսի բարբարոսական ձեռնարկի, ինչպիսին հայկական շուկաների ու թաղամասերի հրդեհումն էր։ 1876 թ. վերջերին Վանում հայերի կողմից կազմակերպվեց դժգոհության մի հանդուգն ցույց, որից քիչ անց՝ նույն թվականի դեկտեմբերի 1/13-ին, հայերից, թուրքական բանակը վերազինավորելու նպատակով մեծ գումարներ կորզելուց հետո, իշխանությունների գաղտնի աջակցությամբ հրդեհվեց Վանի փառահեղ շուկան (500-ից ավելի խանութ),

61 Տե՛ս Խրիմյան Հայրիկ. Ժողովածու, էջ 115—116։

62 Տե՛ս ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Աղասյանի ֆ. XII—11599 և 11513 (Մ. Օրմանյանի նամակները)։

63 Տե՛ս «Մշակ», 1883, № 69։

կրակի անողոք բոցերում այրելով քաղաքի հայ առևտրական դասի տարիներ կուտակած հարստությունը, զրկելով նրանց ընտանիքներն ապրուստի միջոցներից, քանզի բոլորն էլ ոչ միայն իրենց վաճառքի հանած ապրանքները, այլև ունեցած գումարն ու թանկարժեք իրերն ընդհանրապես պահում էին շուկայի իրենց խանութներում։

Կանխապես հրահանգված թուրքական զինվորները և քրդական հրոսակները փութացին նախօրոք կողոպտել հրո ճարակ դարձող խանութները։

Թուրքիայի հայաշատ քաղաքներում նման հրդեհները պատահական չէին։ Նրանք կազմակերպվում էին պարբերաբար, և ինչպես նշեցինք, նպատակ ունեին առավել թուլացնել հայ տարրը, նրա տնտեսական վիճակը։

Նման հրդեհներ այդ ժամանակներում և ավելի ուշ բռնկվեցին նույն Վանում, ապա Զեյթունում, Մուշում, Մալաթիայում, Դիարբեքիրում, Եվդոկիայում (Թոխաթ), Սեբաստիայում (Սվազ), Կեսարիայում և այլուր։

1882 թ. սեպտեմբերի 29-ի գիշերը հրդեհվեց Բաղեշի շուկան, և մի քանի օր անընդհատ այրվող խանութները կողոպտվում էին թուրք զինվորների ու մահմեդական ամբոխի կողմից։

Այն քաղաքներում, ուր մահմեդականներն առավել մոլեռանդ էին, հայերի բնակարանները փողոցի վրա բացվող պատուհաններ չունեին անգամ[64]։

Թուրքական կառավարությունը մահմեդական հարստահարվող գյուղացիության ուշադրությունն իր տերերի դեմ պայքարելուց շեղելու համար հետևողականորեն ատելություն էր սերմանում նրա մեջ՝ դեպի դրացի հայ աշխատավորը։

Ռուս-թուրքական պատերազմից հետո թուրքական կառավարության տնտեսական ու ազգային քաղաքականությունն Արևմտյան Հայաստանի և հատկապես Վասպուրականի ազգաբնակչությանը նետեց համատարած սովի երախը։ Տեղա-

64 Ա. Ալպոյաճյան, Պատմություն Մալաթիո հայոց, էջ 1097։

*կան իշխանությունները առիթը բաց չթողին ասպատակային գնդերով ժողովրդին վաճառելու զինվորական պահեստներում տարիներ ի վեր կուտակված պաքսիմատները, որոնք, ինչպես նաև ամենուր պատահական օգտագործվող թունավոր խոտաբույսերը, շատերին գերեզման ուղարկեցին*[65]*։*

*Իշխանություններն արհեստականորեն նպաստում էին սովի երկարաձգմանը, արգելում Ռուսաստանից և Պարսկաստանից, նույնիսկ հարևան գավառներից, հացահատիկ ներմուծել։*

*Կառավարության գաղտնի ցուցումով կատարվող հալածահարությունները ստանում էին անասելի չափեր, և արևմտահայ ժողովուրդը կանգնում էր արդեն ֆիզիկական ոչնչացման սպառնալիքի առջև։*

*Ոճրագործությունների իսկական հեղինակները քուրդ բեյերն էին, տեղական աղաներն ու նրանց թիկունքին կանգնած թուրքական իշխանությունները, որոնք կառավարության հետ գործում էին միասնաբար և վաղօրոք համաձայնվել էին ոչնչացնել ողջ արևմտահայությանը։*

*Երբ եվրոպական հասարակական կարծիքին տեղի տալով, 1889 թ., Բ. Դուռը Կ. Պոլիս կանչեց Տարոնի պատուհաս դարձած Մուսա բեյին՝ նրա կատարած հրեշավոր հանցագործությունների մասին հաշիվ պահանջելու, փորձված ավազակը հայտարարեց, որ եթե իրեն պատժեն, ինքը կհրապարակի իշխանության ներկայացուցիչներից ստացած այն նամակները, որոնցով իրեն մղում էին եղեռնագործության*[66]*։ Իսկ իրեն մեղադրող մշեցիներին նա անարգել սպառնում էր, թե շուտով Մուշ կվերադառնա և որպես այդ քաղաքի պատասխան՝ հայության նմուշն իսկ չի թողնի այնտեղ*[67]*։*

*Կարինի բրիտանական հյուպատոսը զեկուցում էր, որ քրդերը բացարձակորեն հայտարարում են, թե իրենց հանձ-*

---

65 *Տե՛ս ՀԿՊՊԱ, ֆ. 53, գ. 998, թ. 51—52, նաև «Տեղեկագիր Սովելոց խնամատար կենտրոնական հանձնաժողովի», 1885, Կ. Պոլիս, էջ 14—16, նաև «Մշակ», 1880, № 106։*

66 *Տե՛ս «Արձագանք», 1889, № 36։*

67 *Տե՛ս Հ. Ճանկոլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամեն, մաս Ա և Բ, Կ. Պոլիս, 1913, էջ 170։*

նապարված է ոչնչացնել հայերին, իսկ պատասխանատվությունից ազատ լինելը՝ ապահովված[68]:

Պատահական չէ, որ պաշտոնական մարմիններին բողոքարկող հայերը ստանում էին սարսափեցուցիչ պատասխան — եթե մյուս անգամ համարձակվեք բողոքել բարի մահմեդականներից, ձեզ ոչխարի նման կմորթենք[69]: Իսկ Շատախի Մեհմետ աղան վաղուց էր հոխորտում հայ ժողովրդի արյունը Տիգրիսի ջրերին խառնելու մասին[70]:

Որպես պատրիարքարանի կողմից պաշտոնական բողոքների արդյունք, 1883 թ. Վանի կուսակալ Հասան փաշան կառավարության կողմից պարգևատրվեց Օսմանիեի առաջին կարգի շքանշանով:

Իրավացի է ասված, որ թուրքական իշխանությունների դաժանության ու հարստահարությունների դեմ բողոքել, նշանակում էր բողոքել թշնամական գնդակից:

Եվ երբ 1891 թ. Ռ. Դուան կողմից վերջնականապես ավարտվեց «համիդիե» քրդական հեծելազորի կազմակերպումը, հայ ժողովուրդն զգաց, որ ինքն ապրում է գործող հրաբուխի վրա[71]:

* * *

Քուրդ և թուրք կեղեքիչների հետ միասին հայ աշխատավոր ժողովրդին հարստահարում ու կողոպտում էին և հայ ֆեոդալն ու վաշխառուն: «Այսօր Տաճկաստանու քաղաքներու մեջ չիկա գրեթե պանդուխտ հայ մը, որու ազատությունը կյանքը և հոգին վաշխառուի ձեռք մը չըլլա», — Կ. Պոլսից գրում էին «Մշակ»-ին[72]:

Իսկ հայ վաշխառուն պանդուխտի բերանում դրել էր խորամանկ այն պատասխանը, թե «քուրդը մեզ ավրեց», փորձելով ստվերում թողնել իր կողմից կատարած կեղեքումը, որը տնտեսական հետևանքներով պակաս ահավոր չէր:

---

68 Տե՛ս «Положение армян...», էջ 169:
69 Նույն տեղում, էջ 365:
70 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԴ, էջ 254:
71 Г. П. Гуч. История современной Европы, М.—Л., 1925, էջ 141:
72 «Մշակ», 1882, № 98:

Թուրքական կառավարությունն իր հարկային քաղաքականությամբ նպաստում էր վաշխառության զարգացմանը՝ հատկապես բնահարկի որոշ մասը դրամականով փոխարինելուց հետո:

Քաղաքի կողմից գյուղի հարստահարումը, որը դրսևորվում էր որպես վաշխառուական կեղեքում, կատարվում էր երբեմն այնպիսի ահավոր չափերով, որ գյուղացին իր ողջ ունեցվածքը կորցնելուց հետո էլ սերնդից սերունդ պարտք էր մնում վաշխառուին:

Բ. Քեչյանը հիշում է մի դեպք, երբ երեք հազար ղուրուշ պարտքի դիմաց պարտատեր գյուղացին և նրա որդին վճարել էին մի քանի տասնյակ անգամ ավելին, բայց նրանց հողը տակավին գրավի տակ էր[73]:

Կարիքի անողոք ձեռքը հրում էր հայ գյուղացուն իր անգութ դահճի՝ վաշխառուի ցանցը, որի ճարտն էր պահում նա «հավիտյանս հավիտենից», յուր ամբողջ ընտանիքով, արտերով, եզներով և այլն, — կարդում ենք 1880 թ. Մուշից Կ. Պոլիս պատրիարքին ուղղված մի հանրագրում: — Խեղճ գյուղացին ամառն կիզիչ արևուն կիզիչ ճառագայթներուն առջև յուր ընտանիքով կաշխատի և յուր քրտամբը ղիրկերը կոռադի «կալոց կընե»: Բայց ահա վաշխառուն կամ իր սպասավորը մահվան հրեշտակի նման գլուխը կանգնի, կուտե. կխմե և նրա ամբողջ ընտանիքը չարաչար կերպով իրեն ծառայեցնելուց հետո, կբաժանի իբրև վարձ յուր տված ստակին՝ բերքին կեսը, տերությունը կառնե յուր տասանորդը առավել չափով, քուրդը կհափշտակե... Հայ երկրագործը շատ անգամ... յուր կալոցին հետևյալ օրը օրապահիկ սննդյան համար չունենար և ոչ մի հատ ցորեն»[74]:

Հայոց պատրիարքարանի կիսապաշտոնական օրգանը դարձած «Մասիս» լրագիրը դրա վերացման համար առաջարկում էր հայ բուրժուազիայի փոխառությամբ գավառնե-

---

73 Տե՛ս «Մասիս», 1880, № 2637:

74 Նույն տեղում, № 2644:

րում ստեղծել «Ազգային փոխատու դրամատուն մը, որ թե իրենք դրամատերեր շահին, և թե Հայաստանի իրենց թշվառ ազգայինները»[75]։ Բայց չգտնվեց ոչ մի հայ հարուստ, որ կամենար իր ոսկիները «վտանգել» Հայաստանի որևէ շրջանի գյուղացիությանը վաշխառության ճանկերից ազատելու համար։

1881 թ. Կ. Պոլսի «Միացյալ ընկերության» ղեկավարության աթոռները թափուր էին մնացել։ Երբ նախագահի պաշտոնում առաջարկվում է Մ. Նալբանդյանի համախոհներից մեկի՝ դոկտոր Փեշտիմալճյանի թեկնածությունը, վերջինս համաձայնվում է ընդունել այն՝ պայմանով, որ ընկերության ծրագրի մեջ մտցվի, որ նրա նպատակը Արևմտյան Հայաստանի և Կիլիկիայի հայերի նախ տնտեսական, ապա նոր միայն կրթական բարվոքմանը նպաստելն է։ Այդ առաջարկությունը, սակայն, մերժվում է անժամանակ լինելու պատրվակով։

Նույնիսկ 1880 թ. Վասպուրականի սովի առիթով Կ. Պոլսում ստեղծված Սովելոց կենտրոնական հանձնաժողովը, որը սովից հետո էլ դեռ տարիներ շարունակ պահպանում էր իր գոյությունը, չընդառաջեց Խրիմյանի ու Կամսարականի հորդորներին՝ Արևմտյան Հայաստանում ստեղծելու դրամական փոխատու ընկերություններ[76]։

Չէ որ հայ բուրժուազիան, հայ վաճառականն ու արդյունաբերողը, Րաֆֆու պարսաված այդ «մռայլ դասակարգը», հատկապես Թուրքիայի ծովափնյա քաղաքներում բնակված նրա պահպանողական ու վերասերված մասը, հին ամիրաների չնչին ժառանգն էր։ Այն ամիրաների, որոնք տրտնջացին անգամ ստրկացված ժողովուրդների օգտին փշրանքներ նետող Թանզիմաթի դեմ[77]։ Ուստի ինքն իսկ ամենամեծ վաշխառուն ու կեղեքիչն էր սեփական ժողովրդի։ Ամիրաների այդ վերջին շառավիղները, թեպետ դրսի աշխարհի հետ ունեցած

75 «Մասիս», 1880, № 2644։

76 Տե՛ս «Մշակ», 1882, № 113, (Ա. Թոխմախյանի հոդվածը)։

77 Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, էջ 352։

*առևտրական լայն կապերին, իրենց ապրուստի հիմնական մասը ստանում էին Բ. Դռնից և խոնարհաբար «կը նայեին Թուրք փաշաներուն ափը», մինչդեռ ժամանակին վերջիններս էին նայում «հայ ամիրաներուն ափը»[78]։*

*Թուրքական ծառայության մեջ գտնվող հայ էֆենդիների հոծ մեծամասնությունը միայն անունով էր հայ։ Նրանք իրենց անձնական շահերը պաշտպանելու համար «... կցանկանային միշտ կանգուն տեսնել Թուրքիան յուր կառավարության այժմյան անկարգ այլանդակության մեջ»[79]։*

*Հայ աշխատավոր ժողովրդի համար պակաս վտանգավոր դեր չէին խաղում գավառացի հայ մեծատունները, որոնց ազդեցությունն իշխանությունները հաճախ օգտագործում էին հայ աշխատավոր զանգվածներին շահագործելու համար։ Դա իրավացի ընդգծում էր Մ. Խրիմյանի պատրիարքության օրոք Ներսես Վարժապետյանի նախագահությամբ կազմված Քննիչ հանձնաժողովը[80]։*

*XIX դարի 60—70-ական թվականներին Թուրքիան ոտք էր դնում կապիտալիստական զարգացման ուղի և աշխատավորության ֆեոդալական շահագործմանը փոխարինելու էր գալիս կապիտալի անողոք և անլուր կողոպուտը։ Այստեղ իրեն բավականին ակտիվ դրսևորեց հայ խոշոր, առևտրավաշխառուական բուրժուազիան։ Նրա ու Հայաստանի հայ աշխատավորության միջև խրվել էր բարոյական կապն անգամ։ Նրանց տնտեսական ու քաղաքական շահերը չէին համապատասխանում միմյանց։*

*Այդ օտարացածներից մեկին դիպուկ բնորոշել է Հ. Պարոնյանը. «Մզկիթ մը կառուցել տված է»։*

*Հայ վերնախավի ներկայացուցիչներն առավել վատթարն էին գործում, երբ կառավարական պաշտոններ ստանալով, այն երկար պահելու համար, պաշտոնի ուժը գործադրում էին, առաջին հերթին իրենց ազգակիցների նկատմամբ։*

---

78 *Տե՛ս «Նոր կյանք», Լոնդոն, 1900, էջ 150։*

79 Րաֆֆի, *Երկերի ժողովածու, հատ. 9, էջ 150։*

80 *Տե՛ս* Մ. Վարանդյան. *Հայկական շարժման նախապատմությունը, հատ. 2, Ժնև, 1913, էջ 77—78։*

Այս գործիչներից շատերի մոտ ստրկամտությունն այն աստիճանի էր հասնում, որ նրանց, փոքր զանցանքների միջով, ուղիղ գծով տանում էր դեպի մատնություն։ 1883 թ. հուլիսի 22-ի նիստում Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի անդամները, մոլեգնող ռեակցիայից վախեցած, մի ուղերձ են հղում պատրիարքին և խնդրում հայտնել սուլթանին, «թե հայ ազգը կփափագի օսմանյան հովանավորության ներքև պահպանել իր ազգությունը...»։ Բայց ահա ելույթ է ունենում Հովհաննես Նուրյանը և Հ. Արշակունի էֆենդու հետ միասին, փորձում բացատրել, թե հպատակ ժողովուրդը իրավունք չունի «փափագելու»[81]։

Իսկ դրանից դեռ տարիներ առաջ, երբ Ազգային ժողովում քննարկվում էր Հայաստանում կատարվող հարստահարությունների հարցը, Նուրյան էֆենդին իբր կարդալու դիտավորությամբ, բայց իրականում խղճի խայթը քողարկելու, կամ ամոթը ծածկելու համար, «Մասիս»-ի համարը լայն բացում ու ծածկում էր դեմքը։ 1876 թ. նա իր պաշտոնակիցների պարսավանքի քվեով արտաքսվեց Ազգային ժողովից, «ավանդի ժողովին խորհրդակցությունները խեղաթյուրելով Դրան հաղորդած և պատրիարք ու Քաղաքական ժողով օսմանյան պետության դեմ իբր դավադիր ներկայացուցած էր»[82]։

Իրավացի էր Զոհրապը, երբ Նուրյանի մասին գրում էր. «Ազգը Արփիարին ձեռքով ապտակել էր դինքը»[83]։

1885 թ. Ազգային ժողովի ատենապետ է ընտրվում սուլթանական շքանշանների բեռի տակ ընկնող նույն Նուրյանը, որն անհրաժեշտ էր համարում Ազգային ժողովը կամաց-կամաց ցրել և ժողովրդին հանձնել սուլթանի բարեխնամությանը։ Իսկ 1887 թ. ատենապետ ընտրված նրա երկվորյակը՝ Սիմոն Մաքսուդ բեյը «կատր-կատր կը ջնջեր, հատիկ-հատիկ կանհետացներ իրավունք ու առանձնաշնորհում»[84]։

---

81 Տե՛ս «Ատենագրութիւնք Ազգային ժողովոյ», 1883, էջ 159։

82 «Նոր Կյանք», Լոնդոն, 1898, № 1, էջ 3 (Ա. Արփիարյանի հոդվածը)։

83 Գ. Զոհրապ, Ծանոթ դեմքեր ու պատմվածքներ, Փարիզ, 1932, էջ 29։

84 «Նոր կյանք», Լոնդոն, 1898, № 3, էջ 40։

Այս ամենն, հարկավ, չի կարելի ասել ազգային հարցերով քիչ թե շատ շահագրգռված այն գործիչների մասին, որոնց զգալի մասը, սակայն, կռնակ դարձրած հայ ազատագրական շարժումներին, հակված էր հայ ժողովրդի և թուրքական կառավարության շահերի հաշտեցմանը։

Ազգային կերպարանքը կորցրած պոլսահայ պաշտոնյաներին թերևս ի նկատի ուներ ժամանակի հայ մեծ ողբերգուն, երբ Թիֆլիս՝ Գ. Չմշկյանին գրած նամակում դժգոհում էր. «Մեր այստեղի ժողովուրդը քիչ մը էգոիստ է և ազգասեր չէ։ Ռուսիո հայ եղբայրք ավելի կփրկեն ազգն ու ուսումը... Հոս ազգությունը կղերին և կրոնքին խաղալիք է. հոս ուսման գիրքերը խաղի թղթերու հետ կփոխեն...»[85]։ Նրանց ավելի շատ հետաքրքրում էր Ազգային ժողովի նիստերում ու Կ. Պոլսի հայկական թաղերի նախախորշերում կազմակերպված ընտրական գավեշտը, «նույնիսկ դրամով քվե առնելն ու ծախելը»[86], քան Արևմտյան Հայաստանի աշխատավորության դժնդակ վիճակը։

Նրանք «...մայիսի 24-ին միայն բաժակը յուրյանց ձեռքը կը հիշեն Հայաստանը, — գրում էր Մ. Փորթուգալյանը, — բայց գինիի ուժով միայն արձակած կեցցե աղաղակները ինչ օգուտ կրնան տալ ամայի ու ավերակ դարձող Հայաստանին»[87]։ Հարկավ նույն գիրքերին էին հենվում նաև արևմտահայ ազգային բուրժուազիայի վերնաշերտերը։

Այդ դեռ քիչ էր։ Հայ մեծատունների գործոն մասնակցությամբ արևմտահայ ժողովուրդը կորցրել էր իր ուժերի նկատմամբ ունեցած վստահությունն իսկ, համոզված, որ առանց ուրիշի առաջնորդության, առանց բռնակալի խարազանի, ինքն անտարակույս անել վիհի մեջ գահավէժ գլորվելով կանհետանա։ «Ուստի այն գավազանը, որ շատ անգամ կործան-

85 Պետրոս Ադամյան, *Նամակներ*, Երևան, 1959, էջ 10։

86 *Տե՛ս* Տիկին Ազնիվ Հրաչյա, *Իմ հիշողությունները*, Փարիզ, 1909, էջ 108։

87 «Մանզումեի էֆքյար», 1876, № 3227։

ման գործիք էր, կը լվեր և գլխուն վրա իր համար տգիտությամբը կը դներ»[88]։

Բազմադարյան ստրկության լուծը շատերի համար օսմանյան բռնակալությունն այնքան սովորական էր դարձրել, որ արդեն ոչ միայն չէին մտածում նրանից ազատվելու մասին, այլև դանդաղորեն կորցնում էին անգամ ինքնապաշտպանության զգացումը, իսկ երբեմն էլ Բայրոնի հերոսի նման, իրենց դժոխային վիճակից դուրս գալ, կարծես չէին էլ ցանկանում։

Այս կործանարար վիճակը ստրկամտության այնպիսի ցածր աստիճանի էր հասցնում ժողովրդին, որ շատ-շատերի մոտ բնավորություն էր դառնում սարսափն ու անհարկի զըսպըվածությունը։

1810 թ. Արևելքում գտնվող անգլիական մի առաքելության կազմում գանձապահի պաշտոն կատարող Խոջա Հարությունի մասին պատվիրակության ղեկավար Մալկոլմը գրում էր. «Այս խելացի ու պարկեշտ մարդը, իր ցեղի վերապահության հատկանիշն ունի, ապրելով մի երկրում, ուր նրանք ենթակա են հարստահարության, փոքրությունից սովորում են զգույշ լինել իրենց խոսքերում և գործերում։ Այս բարի մարդը սիրում է կատակ անել, բայց այնքան կամաց է ասում, կարծես դա մի պետական գաղտնիք լինի»[89]։

«Գուցե դժվար լինի գտնել ոճիրներով սակավ արատավորված տարեգրություններ, քան հայոց, որոնց առաքինությունները խաղաղասիրության արգասիք են, իսկ թերությունները ճնշման հետևանք», — խորհում էր անգլիացի հուշակավոր լորդ-բանաստեղծը[90]։

Ժողովրդի հոգեկան այդօրինակ անկման համար թերևս պակաս մեղք չուներ քրիստոնեական կրոնը, և մասնավորապես հայ եկեղեցին, որը դարեր շարունակ քարոզել էր հայ հավատացյալներին՝ համբուրել տիրոջ գարշապարն անգամ։ «...Վանքերը մի կողմից պահպանեցին հայերի կրոնը, կա-

---

88 Հ. Սվաճյան, Հրապարակախոսություն, Երևան, 1960, էջ 209—210։

89 Տե՛ս Հ. Հակոբյան, Ուղեգրություններ, հատ. Զ, Երևան, 1934, էջ 73։

90 Տե՛ս «Լրաբեր», 1960, № 63։

ոլեցին նրան յուր հայրենիքի հետ, — գրում էր Րաֆֆին, — մյուս կողմից խլեցին նրանից քաջությունը, մտցրին նրա մեջ կույր հնազանդություն խոնարհվելու օտար լծի տակ...»[91]։

Աղոթելու համար երեսները խորանին դարձրած, գետինը համբուրելու «նվաստացուցիչ ծնրադրությունը տակավին տեսած չէինք քրիստոնեական որևէ եկեղեցիի մեջ, — գրում էր Լինչը, — արևելյան ձև մը էր ատ. սրտաշարժ եղանակ մըն էր աղոթքի. խեղճ ռայան կաղոթեր իր անգութ տիրոջ ոտքին տակ»[92]։ Կյանքից դասալիք եղած հայ կուսակրոն հոգևորականությունը, հարյուրամյակների ընթացքում, ժողովրդի կրած տառապանքներին սպեղանի առաջարկելու փոխարեն, քարոզում էր աշխարհը խունկ դարձնել կրոնի անշեջ կրակի վրա ծխելու, և համոզում թե աստծո բարկությունն է թափվում մարդկանց վրա, և արարիչը, մի օր, աշխարհի երեսից քրդի կամ թուրքի ձեռքով պետք է ջնջի հայ ժողովրդին։ Եվ եթե հայ երկրագործն հավատար դրան, միայն այդ հավատն արդեն բավական էր նրան ջնջելու համար[93]։

«Ազգ մը, — գրում էր Ա. Արփիարյանը, — նախ իր ճակատագրին վրա անպարտելի հավատք պետք է ունենա, որ ապրի»[94]։

Դեռ Հ. Էմինն էր դառնորեն դանգատվում, որ ինքը շատ անգամ նույնիսկ կյանքը վտանգի է ենթարկել հայրենիքի ազատության համար պայքարելով, բայց ավաղ այն ապարդյուն է անցել։ Մի կողմից հարուստներն ամուր գրկել էին իրենց դրամի քսակները, մոռացնելով այն որքան հնարավոր է իրենց թշվառական սրտերին, իսկ մյուս կողմից եկեղեցու կես-աստվածները մեռցրել էին ազատության հավատը[95]։

«Հայր սուրբ աստուծմէն չե՞ք վախենար. դուք եք պատճառ, որ հայոց ազգը այսպես ձեռք ոտք կապած՝ մշակ սարուկ

---

91 Տե՛ս «Մշակ», 1875, № 20։

92 Լինչ, Հայաստան, հատ. 1, Կ. Պոլիս, 1914, էջ 33։

93 Գ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 4, Երևան, 1963, էջ 338։

94 «Նոր կյանք», 1900, էջ 151։

95 Տե՛ս Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները, Պեյրութ, 1958։

յանը առաջնորդ կոչված հողեր ֆեոդալների մասին։ — ... Որտեղ մի գայթակղություն, որի պատճառը չէր եկեղեցական, որտեղ հարստահարություն, որի հերոսը չէր եկեղեցական, որտեղ խռովություն, որի խմորը չէր եկեղեցական... տերութենական լրտես-եկեղեցական, ազգը մատնող ու դավաճանող եկեղեցական...»[98]։

Թուրքերը, հայ եպիսկոպոսն ու քրդերը խոսքը մեկ են արել ու կողոպտում են գյուղը, — պատմել էր ֆրանսիացի ճանապարհորդ Ա. Այնոյին մի գյուղական քահանա[99]։

Հոգևորականներից շատերը ավետարանի մասին մոռացած, աստղահմայության գրքերը գրպաններում շրջում էին գյուղից գյուղ, տնից տուն և կախարդությամբ զբաղվում միայն[100]։

Իսկ Հ. Վեհապետյանն, իր պատրիարքության շրջանում (1885—1887) Երուսաղեմի հայկական պատրիարքարանի պարտքը մարելու համար խնդրեց սուլթանին մի քանի տարով ավելացնել հայերից գանձվող զինվորագրության հարկը, որը կատարվեց, սակայն այդ պարտքը մարելուց հետո չպակասեցվեց այլևս[101]։

Ուստի ակնհայտ էին արևմտահայ ազգային-ազատագրական պայքարում, այդ շարժման խնդիրների նկատմամբ տարբեր դասակարգերի ու հասարակական խմբերի ներհակ վերաբերմունքն ու ակնկալությունները։

Նրանցից յուրաքանչյուրը հասարակական աստիճանի իր կանգնած դիրքից էր նայում ինչպես անկախ հայրենիք ստեղծելու, այնպես էլ բարեփոխումների կենսագործման հետ կապված հեռանկարներին։ Այդ առնչությամբ անդրադառնալով Բեռլինի կոնգրեսի արդյունքներին, մասնավորապես հայերին վերաբերող 61-րդ հոդվածին, Արսեն Թոխմախյանը դիպուկ նկատում է. «Չը կա մի դասակարգ, 61-րդ հոդվածի

98 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 3, Երևան, 1940, էջ 18—24։

99 Տե՛ս «Փորձ», 1876, գ. 2, էջ 310։

100 Տե՛ս Գ. Սրվանձտյան, *Մանանա*, Կ. Պոլիս, 1876, էջ 114—116։

101 Տե՛ս Խաժակ, *Հարկերը Տաճկաստանում*, Բաքու, 1904, էջ 44։

իրականացումը չցանկանար, բայց ամեն մի դասակարգը յուր ցանկության բոլորովին տարբեր տեսակետովն է նայում դորա վերա։ Ինտելիգենցիան և Տաճկաստանի էֆենդիների երես առած խմբերը նայում էին նորա վերա, ինչպես մի միջոցի վերա, որ նրանց կմատակարարի իշխանական ազդեցություն, կամ վարչական բարձր պաշտոններ, դրա համար լինի թերևս, որ այդ խմբերից մի քանիսը արդեն ձգտում են հասնելու ազնվության... վաճառական, կալվածատեր, չարչի քաղաքացիները երազում են յուրանց լայնածավալ օպերացիայի վերա, մի այնպիսի գործ, որին միշտ կդաշնակցի ազնվական ազգակիցների տիրապետական ույժը և դրա համար Տաճկաստանում արդեն գնվել և գնվում են լայնատարած գյուղեր, հողեր... գյուղացու ակնկալությունը բոլորովին տարբեր է։ Նա սպասում է թշվառության արտասունքները սրբելու, կյանքի անդորրության, ազատ շունչ քաշել... ապահովություն յուր կյանքին, յուր ստացվածքին, յուր գործին»[102]։

Չնայած այն դաժան կեղեքումներին, որ ենթարկվում էր հայ ժողովուրդը, այնուամենայնիվ աշխատավոր դասերի փոխհարաբերությունները, հիմնականում, բարեկամական էին։ Մեր հարևան նստակյաց քրդերը չէին վնասում մեզ, մենք սիրով էինք ապրում միմյանց հետ, — պատմել էին հայ գաղթականները Րաֆֆուն[103]։

«Այն քրդերը, — կարդում ենք դիվանում, — որոնք գեղջի երկրագործ են, ոչ միայն անվնաս են և հայոց հետ խիստ սիրով, այլև քան զհայերն առավել հարստահարյալ...»[104]։ Եվ նրանց հետ հայ աշխատավոր ժողովուրդն ապրում էր «եղբոր պես»[105]։

---

102 Ս. Թոխմախյան, *Մասիս լեռների հարավային ստորոտները*, էջ 24—25։

103 Տե՛ս Րաֆֆի, *Երկերի ժողովածու*, հատ. 8, Երևան, 1957, էջ 509։

104 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 90. տե՛ս նաև ՌԱՔՍ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1887, գ. 1573, թ. 5։

105 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 255։

Հաճախ ոչ միայն քուրդ, այլև թուրք աշխատավորներն էին հովանավորության տակ առնում իրենց հայ դրացիներին, պաշտպանում նրանց ոստիկանական կամայականությունից[106]:

* * *

Հայ ժողովրդի անլուր շահագործմանն ակտիվորեն մասնակցում էին նաև եվրոպական ու ամերիկյան միսիոներները, որոնց թիվը Թուրքիայի ամեն մի կուսակալությունում հազարներով էր հաշվվում:

Բ. Դուռը լայն իրավունքներ տալով միսիոներներին, նրանց խստորեն արգելում էր մահմեդական ազգաբնակչության շրջանում քարոզչություն կատարել, բացահայտորեն խրախուսելով քրիստոնյաների մեջ կատարվող մարդորսությունը: Կայսրության դռները լայնորեն բացելով միսիոներների առջև, թուրքական կառավարությունն արդեն համոզվել էր, որ նրանք քրիստոնյա ժողովուրդներին բաժանելով տարբեր հատվածների, թուլացնում էին վերջիններիս հավաքական ուժը և նույնիսկ փորձում ոչնչացնել այդ ժողովուրդների մեջ ազգության ոգին ու գաղափարը:

Միսիոներների ոստայնն ընկած հայ զանգվածների դաստիարակությունը գնում էր դեպի ատելության սերմանումը հայ լուսավորչականների նկատմամբ, և անտարբեր, երբեմն էլ ժխտողական վերաբերմունքը պատմական հայրենիքի հանդեպ:

Միսիոներներից շատերը ժամանակի ընթացքում տիրապետում էին հայերեն լեզվին, մասսայաբար տարածում Աստվածաշնչի հայերեն թարգմանած օրինակները, որը հայ հոգևորականները չէին անում, և առավել դյուրությամբ իրենց ոստայնն էին գցում հայ աշխատավորներին:

Կրոնափոխության հրապույրի գաղտնիքը ժողովրդի սոցիալական վատթար կացությունն էր և կաթոլիկ կամ բողոքա-

---

106 Տե՛ս Սմբատ Բյուրատ, Արյունին ճամփուն վրա, Կ. Պոլիս, 1911, էջ 15 և այլուր:

*կան երկրների ներկայացուցիչների միջոցով քրդական բարբարոսություններից ազատվելու միտումը։*

*Ընտրելով հատկապես երկրի խուլ անկյունները և օգտվելով հայ ընտանիքների տնտեսական վատ կացությունից, միսիոներները վճարում էին նրանց զինվորական տուրքերը, նետում այլ փշրանքներ և լայնորեն բացում մարդասիրության իրենց ուռկանը կարիքից դեպի այն մղվող բնակչության առջև։*

*Խոչընդոտվում էր հայ ազատամարտի ճանապարհը, անխուսափելիորեն ստեղծելով պայքարի նոր, լրացուցիչ թատերաբեմ։ «Այդ կեղծ բարերարները, — գրում էր Գ. Սրվանձտյանը, — ոչ հայուն հորեղբայրն էին և ոչ հայուն քեռին, այլ ավելի ճարպիկ որսորդներ ու մսագործներ, որ զմեզ, երե վայրիի, պատրաստ ոչխարներու, և պարարակ կովերու տեղ դնելով, մեր փարախեն կուզեն խրտնեցնել և իրենց ձեռքը ձգելով ի սպանդ մատուցանել...»[107]։*

*«Գրավ կը դնեմ, — ասում էր «Մասիս»-ն իր մի ընթերցողի բերանով, — թե Հիսուս Քրիստոս 1800 տարի առջն աշխարհ գալիք այս միսիոներներն յուր մտաց առջև ունեցած էր, երբ «ոչխարի կերպարանոք գայլերու» առակը կը պատմեր»[108]։*

*XIX դարի 90-ական թվականներին, Սասունի դեպքերից հետո, Փարիզում, հայ սովյալների օգտին կատարված հանգանակության գումարը, երբ ուղարկվում է Արևմտյան Հայաստան, կաթոլիկ միսիոներներն ու նրանց գործակալները նրա փշրանքները տալիս էին միայն այն հայերին, որոնք համաձայնվում էին կաթոլիկ դառնալ[109]։*

*Մեծ տերությունների կողմից Թուրքիայի քրիստոնյա ժողովուրդներին իրենց կողմը քաշելու գործում այնքան մեծ էր միսիոներների դերը, որ հրապուրեց անգամ այդ ժողովուրդներին այլ ուժով իրեն ձգող ցարական Ռուսաստանին, և Սան-Ստեֆանոյի դաշնագրի 22-րդ հոդվածով նա փորձեց տիրանալ այդ միջոցին ևս՝ միսիոներության իրավունք ստանալով*

---

107 Գ. Սրվանձտյան, *Թորոս Աղբար*, Կ. Պոլիս, 1884, մաս 2, էջ ԺԲ։

108 «Մասիս», 1880, № 2651։

109 Տե՛ս Լեո, *Անցյալից*, Թիֆլիս, 1925, էջ 117։

նաև ռուս հոգևորականների համար։ Իսկ ֆրանսիական կառավարությունը հովանավորում էր սեփական երկրից արտաքսված ֆրանսիացի ճիզվիթներին։

Հայ կաթոլիկ եկեղեցիներում դրված Գրիգոր Լուսավորչի և Սեղբեստրոս պապի գրկախառնված նկարները, նպաստելով կաթոլիկ պրոպագանդային, հարկավ, չէին օգնում անջատված հայ համայնքների համերաշխմանը։

Կրոնական անջատումը բերում էր նաև օտարացում, ստեղծում ձուլման վտանգ, քանզի հայ կաթոլիկները «նախապատիվ կը սեպեն իրենց ազգային իրավունքներն ս. պապին հողաթափներուն մեջ տեսնել, քան թե իրենց ձեռներուն մեջ»[110]։

Առանձին դեպքերում նրանք կորցնում էին նույնիսկ իրենց ազգային դեմքը, դառնում անճանաչելի խառնուրդ։

1875 թ. Տեկանցն իր մի բանաստեղծության մեջ նրանց բնութագրում է այսպես.

Քիթ ու բերան հայու է
Կատրտվածք բնություն ֆրանսիացու

Խելք ու միտք Հռոմի պապուն,
Լեզուն ասես տաճիկին
Բայց ինքն իրոք ոչ մեկին...

Աղորդն ասեմ
Իր ազգությունն ուրացող է,
Անհայր անմայր զավակ է[111]։

Քիչ ուշ Ջոհրապը Զմյուռնիայում մատնացույց էր անում մի ամբողջ սերունդ, որն օտարացել էր հարազատ ժողովրդին, և չցանկանալով հայ մնալ, ֆրանսիացի էլ չէր կարողացել դառնալ[112]։

---

110 Հ. Պարոնյան, Երկեր, Երևան, 1958, էջ 131։

111 Ս. Տեր-Սարգսենց, Վառարանի կայծեր կամ մաս մ'իմ հին խաղերից, Կ. Պոլիս, 1875, էջ 34—35։

112 Գ. Զոհրապ, Երկեր, Երևան, 1962, հատ. 2, էջ 353։

Մասամբ կրոնափոխության հետ էր կապված այն հանգամանքը, որ Փոքր Հայքի մի շարք քաղաքներում և Կիլիկիայի նշանակալի մասում հայերը թուրքերեն էին խոսում։ Անգամ թուրքերի դեմ մղված Զեյթունի հերոսամարտերը թուրքերեն էին երգվում[113]։

Այն հարկավ կապված էր նաև թուրքական կառավարության ազգային քաղաքականության, ինչպես և ծովափնյա քաղաքների հայ վերնախավերի ապազգայնացման հետ, որի համար նրանց խայթում էր «Մեղու»-ն[114]։

Հայ լուսավորչական եկեղեցին, թեպետ ոչ միշտ հաջող, բայց անհաշտ պայքար էր մղում դավանափոխության դեմ, «ջախջախում Վատիկանի ծուղակը», անգամ հրապարակորեն այրում Լևոն 13-րդ պապի կաթոլիկության քարոզող կոնդակը[115]։ Երբեմն էլ որպես ժողովրդի կրոնական պառակտումը կանխելու միջոց, պապի ճիզվիթ միսիոներների՝ կաթոլիկ եկեղեցուց դուրս չկա փրկություն, աղաղակներին փորձում հակադրել «արտաքոյ Հայաստանեայց եկեղեցւոյ չիք հայութիւն» սկզբունքը։

Այս կոչը, սակայն, որն հայ պահպանողական հոսանքն արտաբերում էր Գևորգ 4-րդի, Կ. Եզյանի, Ս. Մանդինյանի, Գուրգեն Էֆենդու և այլոց շուրթերով, վտանգ էր ստեղծում՝ սեպ խրել իր ազատության ու անկախության համար առանց այն էլ անհավասար զոհեմարտի ելած հայ ժողովրդի կրոնով անջատված հատվածների միջև։

Ուստի երբեք չէր խունանում ու բարձր ծածանվում էր այն դրոշը, որի վրա Մ. Պեշիկթաշլյանը գրել էր.

Տուր ինձ քու ձեռքդ, եղբայր եմք մենք[116]։

113 Տե՛ս Ա. Չոպանյան, Մ. Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը, Փարիզ, 1907, էջ 21, նաև «Արձագանք», 1887, № 3։

114 Տե՛ս Հ. Սվաճյան, Հրապարակախոսություն, էջ 426—428։

115 ՀԿՊՊԱ, ֆ. 56, ց. կաթողիկոսական դիվան, գ. 22, թ. 7—11։

116 Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, Երևան, 1961, էջ 27։

Բայց Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովը միայն 1913 թ. հոկտեմբերի 11-ին որոշում ընդունեց առանց կրոնական ու դավանական խտրության, թույլատրել բոլոր հայերի մասնակցությունն ազգային մարմինների ընտրությանը։

* * *

Գավառահայ աշխատավորության սանձարձակ կեղեքումը մղում էր նրան բռնելու պանդխտության տնավեր ուղին։

«Ամբողջ գյուղեր,— գրում էր մի ճանապարհորդ,— բնակված են միայն կանանցով, որոնց այրերն ու եղբայրները պանդխտության մեջ են, իսկ իրենք մնացել են ընտանիքի տուն ու տեղին հսկելու»[117]։

Ժամանակավորապես հաստատվելով Թուրքիայի ծովափնյա քաղաքներում, հատկապես Կ. Պոլսում, հայ անապաստան պանդուխտներին բարեկեցիկ կյանք չէր սպասում։ Նրանք լրացնում էին քիսաչիների, բեռնակիրների, չոփչիների[118], ջրկիրների բանակը։ Ապրում էին կիսաքաղց և քնում՝ ամառը եկեղեցիների գավիթներում, իսկ ձմռանը՝ բաղնիքների հնոցարաններում։

Հայ պանդուխտների վրա Կ. Պոլսի նրանց հայրենակիցները նայում էին անբարյացակամ։ «Ծիկրի կտոր չկա ինոնց փոր,— գրում էր պանդուխտ մի վանեցի,— մեր վրեն այլնի ոնս կիրիշկին, արունին ցամքե ու սրտերնին մեռեր ի»[119]։

Անլուր շահագործումից փրկվելու միակ հույսը կապելով պանդխտության հետ, հայ գյուղացին մեկնում էր կամավոր աքսոր։

Հեռանալով հայրենի գյուղից նա ընկնում էր կեղեքման նոր ցանցի՝ մեծ քաղաքի առավել կատարելագործված հարըստահարիչների ուժանը, որին այլևս չէր կարողանում դիմադրել։ Եվ պանդխտությունից քչերն էին ետ գալիս իրենց հարազատների արցունքները սրբելու։

Կ. Պոլսի փողոցներում անկարեկից մեռած հայ պանդուխտի դիակն ամփոփելու համար զլացվում էր նույնիսկ մի ափ հող կամ «աղոթք մը» տալ քանզի նա «աղքատ մըն էր, ու աղքատներուն ալ գեշ տեսակներեն էր, ղարիբ մըն էր»[120]։

---

117 Էլիզե Ռեկլյու, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, էջ 29։

118 Քաղաքի աղբը կոզովներով ծովը թափողներ։

119 Արիստակես Վ. Տեր-Սարգսենց, Պանդուխտ վանեցին, Կ. Պոլիս, 1875, էջ 67։

120 «Հայրենիք» (Կ. Պոլիս), 1892, № 169։

Հայ պանդուխտի ու նրա հարազատների դառը հեծեծանքներից են հյուսվել «Անտունի» կոչված կարոտի լալահառաչ երգերը։

Հայրենի տնից հեռացողի մայրն ու կինը, որդիներն ու մյուս հարազատները արյուն-արցունքով էին ճանապարհում պանդխտության մեկնողին։ Նրանք գիտեին, որ գնացողը կամ այլևս չի վերադառնա, կամ կվերադառնա այն ժամանակ, երբ իրենցից շատերն արդեն չեն լինի։ Այդ գիտի և ինքը գնացողը.

Ելեր եմ, կերթամ կը, վով գիտե հալս,
Մեմ'ա Աստուած գիտե դառնալս ու գալս,

Եվ ապա երանի տալիս հայրենի սարերին.

Էնեկ կուտամ ձեզի, սարեր,
Ջուր չունիք՝ կանաչ գունաք,
Ոչ մահ ունիք ոչ մեռանիք,
Ոչ զարիպ երկիր կը գնաք։

Երկար էին սպասում պանդուխտի հարազատները, տասնյակ և ավելի տարիներ, ապա հուսախաբ աղաղակում.

Ավեր ըՍտամբոլ, քամրախ Իսքուտար,
Կարիրիս մոտեն չեկավ մեկ խաբար...[121]։

Արևմտյան Հայաստանի աշխատավորության զանգվածային պանդխտությունն, հարկավ, չսահմանափակվեց զուտ տնտեսական պատճառներով կատարվող տարագրությամբ, այլ մեկ ընդ մեջ զուգորդվեց ֆիզիկական ոչնչացումից փախչող խոշոր գաղթականությամբ ու հողագնդով մեկ ցրեց հայ հայրենազուրկ ու անհանդրվան աշխատավորին, բուլղար բանաստեղծին ոգեկոչելով գրելու.

Տարագիրներ են նրանք, նրանք բեկոր են չնչին՝
Ոսոխներից հալածված քաջակորով մի ազգի
Եվ զավակներն են զրկված՝ հայրենիքի իրենց հին,
Որ ողջակեզն է դարձել անօրինակ սխրանքի[122]։

121 Երգերի մեջբերումներն ըստ «Հայ ժողովրդի պանդխտության երգերը» ժողովածուի, Երևան, 1961։

122 Տե՛ս «Գրական թերթ», 1964, № 44 (1248)։

XIX դարի 80-ական թվականների կեսերից, արևմտահայերի տնտեսական ու քաղաքական դրության առավել վատթարացմանը զուգահեռ, որոշ շրջանում թուլացավ պայքարի նրա կորովը և ծայր տվեց զանգվածային գաղթականություն:

Կաթոլիկ և բողոքական միսիոներներն իրենց քարոզներով փորձում էին ժողովրդի մեջ արմատախիլ անել հայրենիքի գաղափարը ու բարեկեցիկ անկյուններ առաջարկել հեռավոր երկրներում: Այդ գործում նրանց մեծապես օգնում էին հայ գործիչները: 1880 թ. ԱՄՆ-ից Թուրքիա է գալիս ոմն դոկտոր Ալպայան ու երկարատև դեգերումներից հետո՝ 1882 թ. կազմակերպում մի խումբ հայերի գաղթը Ամերիկայի Միացյալ Նահանգներ: Երկու տարի անց այդ խմբին հետևում է երկրորդը[123]:

1886 թ. արդեն գաղթողների մի մասը սարսուռով ահազանգում էր, որ հայ երիտասարդությունը, ամերիկյան երկնակամարի վրա հուսո աստղ նշմարելով «զունդ առ զունդ կերթա», այնտեղ ու «կթաղվի ողջ ողջ... հայ ազգի գերեզմաններին մին ալ Ամերիկան կը լինի...»[124]:

Գաղթականության դեմ հանդես էին գալիս ժամանակի հայ մտավորականության առաջավոր ներկայացուցիչները՝ Րաֆֆին ու Արծրունին, Մամուրյանն ու Տեկանցը և ուրիշները: Մամուրյանը ցավով գրում էր. «Վաճառականը կգաղթե, երկրագործը կգաղթե, արհեստավորը կգաղթե, բանվորը կգաղթե, մեկ խոսքով ամենքը կգաղթեն, և Հայաստան կմնա շատ տեղ միայն ծերեր, կիներ, մանկունք: Աշխարհաշրջիկ մարդիկ՝ հրեից պես, որ Աստվածաշունչ կշալակեն, ինչպես հայք իրենց Մաշտոցն ու ավետարանն և աշխարհիս չորս կողմը կցրվին, հեռվեն պաշտելով Սիոնն ու Հայաստանը, որ պարզապես պատմական տեղեր մը կդառնա իրենց երևակայության մեջ»[125]:

Րաֆֆին խստորեն պախարակում էր հայ ժողովրդին

---

123 Տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1962, № 1, էջ 29:

124 Տե՛ս «Արձագանք», 1886, № 42:

125 Մ. Մամուրյան, Անգլիական նամականի, Զմյուռնիա, 1881, էջ 200:

օտար հորիզոններ մատնացույց անող Ծերենցին[126]։ Իսկ «Շահենն ի Սիպիր»-ի սլաքներն անմիջականորեն ուղղված էին գաղթականության դեմ, քանզի «Հայրենիքն անգին և անքակտելի, իսկ հայրենի երկրից հեռանալու վախճանը անձնասպանությունն է»[127]։

Գաղթելով հայրենի երկրից անդաստական հայը, Տեկանցի հերոսի բերանով, իր անեծքն էր ուղղում ժողովրդի տարագրման պատճառ հանդիսացող թշնամուն և պատգամում էր հարազատ հողին ու ջրին.

Դաշտեր դուք չորնաք
Աղբյուրներ ցամքեք
Թե մեր թշնամուն՝
Դուք հաց կամ ջուր տաք[128]։

Գաղթելու վտանգը սերտորեն առնչվում էր ձուլման վտանգի հետ։ Որքան էլ գաղթի ճանապարհին ծնողները թոնրի վրա ամուսնացնեին տղային, որ սերունդը շարունակվի, կամ ճանապարհին հանգստանալիս երեխային դպրություն ուսուցանեին, որ հայ գիրը չմոռանա, դժվար էր կանխել տարբեր երկրներում ցրվող ժողովրդի փոքրիկ հատվածների կամ անհատների օտարացումը։ Գեղարվեստական հորինվածք չէ, հարկավ, որ Լեհաստանում հանդիպած հայ կինը՝ հին գաղթականների սերնդից, որը «հազար ճորով հայ բառը միտք պահեր էր» զարմացած հարցնում է. «Մի՞թե աշխարհի վրա հայ մնացեր է»[129]։

Անգամ Հայաստանին բավական մոտ գտնվող Բուլղարիայի Ռազգրադ քաղաքում, 1878 թ., լոկ որպես տեղանուն էին մնացել, այն էլ թուրքական պաշտոնական աղբյուրներում միայն, «Հայկական փողոց», «Հայկական այգիներ», «Հայկական գերեզմանատուն», «Հայկական թաղ» անուննե-

126 Տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, էջ 193։
127 Ս. Տեր-Սարգսենց (Տեկանց), Շահենն ի Սիպիր, էջ 205։
128 Նույն տեղում, էջ 245։
129 Նույն տեղում, էջ 215։

րը, թեպետ հնարավոր է, որ հայերը Ռազգրադից գաղթած լինեին XIX դարի սկզբներին՝ ռուս-թուրքական պատերազմի ժամանակ[130]։

Հետագայում հայերի արտագաղթը դեպի Եգիպտոս, Բալկաններ, Ամերիկա և այլուր ստացավ զանգվածային բնույթ և ձգվեց տասնամյակներից տասնամյակ՝ ահեղ իր վախճանին հասնելով մեծ եղեռնի ու ահավոր բռնագաղթի օրերին։

* * *

Օսմանյան կայսրության ստրկացված ժողովուրդներից շատերը՝ հույները, հրեաները, հայերը, արաբները, եգիպտացիք, բուլղարները ունեին անհամեմատ շատ ավելի հին ու բարձր կուլտուրա, ապրել էին հասարակական զարգացման առավել բարձր աստիճաններ, քան թուրքերը։ Նրանք ունեին հոգևոր ստեղծագործության ու նյութական մշակույթի այնպիսի հուշարձաններ, որոնցով այսօր էլ պարծենում է մարդկությունը։

Մինչդեռ թուրքերը մշակութային զարգացման իրենց մակարդակով, ոչինչ չունեին տալու այդ ժողովուրդներին։ Մահմեդական ժողովուրդը հաղորդակից չէր և չէր հասկանում պալատական վերնախավում իշխող ամենախրթին թուրքերենով, արաբերենով կամ պարսկերենով գրված գրականությունը։ Մուսուլմանական սխոլաստիկ գաղափարները թմրեցնում էին ժողովրդին, խափանում կուլտուրական առաջընթացի նրա ճանապարհը[131]։ Միայն 1861 թ. ստեղծված «Օսմանյան գիտական ընկերությունն» էր, որ որոշակի դեր խաղաց թուրքական սաղմնավորող բուրժուազիայի կուլտուր-կրթական առաջընթացի գործում, միաժամանակ նպաստելով նոր սերնդի մեջ ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ ազգային ատելություն սերմանելուն։

---

130 Անանի Յոլուշի, Ռազգրադ, 1930, էջ 112—113 (տե՛ս Էջմիածին», 1962, № Բ, էջ 58—59)։

131 Տե՛ս «Հայ նոր գրականության պատմություն», Երևան, 1962, հատ. 2, էջ 13։

*Թուրքական իշխողները զայրույթով էին դիտում ենթակա ժողովուրդների մտավոր վերելքը և փորձում էին արհեստականորեն արգելակել այն։ Կ. Պոլսում 1868 թ. հիմնադրված Կալաթա Սերայի դպրոցի (լիցեյ) իրավաբանական բաժնում, որտեղ դասավանդումը կատարվում էր ֆրանսերեն լեզվով, 1875 թ. 52 ուսանողներից 45-ը հայ էին։ Այստեղ հայերի շարունակական մեծամասնություն կազմելը պատճառ դարձավ, որպեսզի 1881 թ. սուլթան Համիդի հրամանով այն փակվի։*

*Օսմանյան բուրժուազիան արդեն չէր հանդուրժում, որ Թուրքիայի քաղաքներում գիտության, տեխնիկայի, արվեստի և արհեստագործության բոլոր քիչ թե շատ լուրջ բնագավառներում ղեկավար դիրքերը պատկանեն հայերին։ «Լավագույն բժիշկները հայերն են, իրավագետները՝ հայերը, ուսուցիչները՝ հայերը, ինժեներները, դերասանները, ֆինանսիստները, բանկիրները, խանութպանները, ձեռնարկատերերը՝ դարձյալ հայերը», — գրում էր ռուս մի ուսումնասիրող*[132]։

*Համիսլամությունը տենդով գլուխ էր բարձրացնում և արդեն XIX դարի երկրորդ կեսին, հատկապես նրա վերջին քառորդում, արևմտահայության, ինչպես նաև Թուրքիայի տիրապետության տակ հարստահարվող մյուս ժողովուրդների սոցիալ-քաղաքական գոյավիճակը տանում էր դեպի միաձուլում թուրքերի հետ։ Դեմոկրատական հովերով պանթուրքիզմն արմատավորող նոր օսմանները պայքարի իրենց ճանապարհին ոչինչ արմատական չէին տալու Թուրքիայի հարստահարվող ժողովուրդներին։ Ուստի սկսվեց ուղիների հապճեպ որոնում, որն հայ ժողովրդին կանգնեցրեց միավորման ու զինված պայքարով սեփական հայրենիք ստեղծելու գաղափարի առջև։*

*Թուրքական բարբարոսական կարգերում հեծող արևմտահայ ժողովուրդը, հարյուրամյակների լուծը ուսերին, սրտում գորովանքով պահած պայքարի ազատաբաղձ իր կորովը, XIX դարավերջին էր թևակոխում ազատագրական շարժում-*

---

132 И. И. Голобородко, Турция, Москва, 1912 г., *էջ 221*։

ների նոր հերոս։ Հույսերով ու պատրանքներով լեցուն նրա կարոտավառ հայացքի առջև մի պահ փայլատակեց մի-կուկնա Հազարամյակի մշուշից հառնող հայ պատմության հինավուրց Տեսիլը և նրան թվաց, թե արդեն կանգնել է դարեր երազած Ավետյաց Երկրի շեմին։

Տակավին նույն դարի 50—60-ական թվականներին հայ իրականության մեջ տարածվեց «աստծուց հետո հայրենիք» կոչը և այդ հայրենիքը դիտվեց որպես ազգի գոյության հիմնաքարը, որն հնարավորություն էր տալիս պետականությունը կորցրած ազգերին՝ վերականգնել այն։

Հայ ժողովրդի ազգային կազմավորման պատմական պրոցեսի վերելքի այդ շրջանում սեփական տերիտորիայի, անկախ պետության և ազգային լեզվի պահպանման հարցը դիտվում էր որպես ժողովրդի գոյության ու հարատևման պայման։

Կապիտալիզմի վերընթաց զարգացման ժամանակաշրջանն իրենով նշանավորում էր ազգային շարժման վերելք։ «Տարակույս չկա, — գրում էր Մ. Նալբանդյանը, — որ մարդկության պատմության մեջ ոչ մի ժամանակ այնպես սաստիկ և որոշակի երևացած չէ ազգությունքը, ինչպես ներկայումս։ Ազգությունը ասես դարձել է մի ամենօրյա հաց, առանց որի չէր կարելի ապրել...»[133]։ «Այսօր, ճնշված մարդերի համար, — մի այլ տեղ շարունակում է նա, — ազգությունն է նոցա միակ դրոշը, որ կարող է բացվել բռնակալության ընդդեմ»[134]։

• Ազգը դիտելով որպես պատմական երևույթ, որն ինչպես կազմավորվել է, այնպես էլ պիտի քայքայվի, Նալբանդյանն ազգերի առժամանակյա գոյությունը համարում էր անհրաժեշտություն, որպես ազատության գրավական։ Նա ազգության գաղափարի մեջ էր տեսնում ժողովրդի սոցիալական վիճակի բարելավումը։ Ազգությունը, նրա լեզուն ու հայրենիքը պահպանելու համար «... մեր ամենքիս պարտքն է

133 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 463։
134 Նույն տեղում, հատ. 3, էջ 90։

մինչև այն ժամանակ մնալ ազգության դրոշի տակ, որքան ուրիշը կրում է յուր սեփական ազգության դրոշը»[135], որպեսզի ժողովուրդը «գերի ստրուկ չլինի ուրիշի»[136]։ Իսկ այդ դրոշը միայն այն ժամանակ է շրջափակվում փառապսակով,— գրում էր Գերցենը, երբ ստրկացված ժողովուրդը պայքարում է ազատության ու անկախության համար, երբ նա թոթափում է օտարերկրյա լուծը[137]։

Մանավանդ նախկինում անկախություն ունեցած ժողովուրդները լավ գիտեին, որ իրենց ներքին բոլոր ուժերը լիարժեք դրսևորել կարող են միայն ինքնուրույն պետականություն ունենալու դեպքում։

«Վճռականապես ոչ մի հակասություն չկա նրանում, — ասում էր Կ. Մարքսը 1875 թ., — որ Ինտերնացիոնալ բանվորական կուսակցությունը ձգտում է լեհ ազգի վերականգնմանը։ Ընդհակառակը, միայն այն ժամանակ երբ նա նորից կկարողանա տնօրինել իր ճակատագիրը, որպես ինքնուրույն ազգ, միայն այն դեպքում նրա համար նորից կսկսվի ներքին զարգացման պրոցեսը, և նա կարող է օժանդակել Եվրոպայի սոցիալական վերակառուցմանը, որպես ինքնուրույն ուժ։

Քանի դեռ կենսունակ ժողովուրդը կաշկանդված է օտարերկրյա զավթիչի կողմից, նա ըստ անհրաժեշտության, իր բոլոր ուժերը, իր բոլոր ձգտումները, իր ամբողջ եռանդը ուղղում է օտար թշնամու դեմ, և քանի դեռ այդպիսով նրա ներքին կյանքը մնում է կազմալուծված, նա ի վիճակի չէ պայքարելու սոցիալական ազատագրման համար։ Իռլանդիան, Ռուսաստանը մոնղոլական լծի տակ և այլն տալիս են այդ դրույթին վառ ապացույցներ»[138]։

Ինչպես հարստահարվող մյուս ժողովուրդների, այնպես էլ հայ ժողովրդի ազգային շարժումը առաջադիմական էր ոչ

---

135 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3, էջ 82։

136 Նույն տեղում, էջ 90։

137 Տե՛ս Ա. Գերցեն, Եղելություններ և խոհեր, հատ. 1, Երևան, 1952, էջ 524։

138 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, հատ. 18, էջ 555։

միայն նախաիմպերիալիստական, այլև իմպերիալիզմի ժամանակաշրջանում, երբ իր երկիրը զավթողների դեմ հայ ժողովուրդն հանդես էր գալիս հայրենիքի պաշտպանության լոզունգով ու զինավառ կիրառում այն[139]։

Դարեր առաջ անկախությունը կորցրած հայ ժողովուրդը, ընկած աշխարհակալ պետությունների ճամփամիջին, ձգտում էր ազգային միավորման և կանգնում արդեն ինքնուրույն պետականության վերականգնման անհրաժեշտության առջև։

XIX դարի վերջին քառորդում հայ ժողովրդի ազգային համահավաքի շունչը նոր ու առավել մարտական երանգ էր տալիս ազատագրական շարժմանն ու խոյանում թուրք ջարդարարների կողմից Աբդուլ Համիդի բերանով արված անեծքկոչի դեմ «...նզովք կը դնեմ ինծի հաջորդելիք սուլթաններուն վրա... և ուխտ կդնեմ անոնց վրա, որ մինչև աշխարհիս երեսին բովանդակ իսլամության ջնջումը, պատերազմին հայոց անկախության դեմ»[140]։

Իսկ այդ պատերազմը կատարվում էր անզեն ազգաբնակչության սիստեմատիկ ու զանգվածային ջարդերի ձևով, որպես թուրքական բարբարոսական կարգերի երկարաձգման պայման։

Ուստի զինված պայքարի անհրաժեշտությունը դառնում էր ստրկացված ժողովուրդների փրկության միակ միջոցը՝ հատկապես քիչ ուշ, պանթուրքիզմի գաղափարների ձևավորման ոլորտում, երբ պայմանավորված էր եվրոպական կապիտալի առջև ծնկի եկած Թուրքիայի տնտեսական ու քաղաքական անկախությունը պահպանելու անվան տակ Օսմանյան կայսրության բոլոր ժողովուրդներին համիսլամության դրոշի ներքո համախմբելու և ձուլելու «Նոր օսմանների» քաղաքական ջլաձգության աշխուժացմամբ։

---

139 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 22-րդ, էջ 447։

140 Տե՛ս Մ. Սեռոբյան, Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, Գահիրե, 1948, էջ 187 (այս մասին սուլթանն իր քարտուղարի միջոցով հայտնում է Աշըգյան պատրիարքին, իսկ վերջինս 1889 թ. դեկտեմբերի 24-ի նամակով տեղեկացնում է Մակար կաթողիկոսին)։

*Թուրքական կառավարության հալածական այդ քաղաքականությանը զուգընթաց ու նրան դիմադիր բարձրանում ու փոթորկվում էր հայ ժողովրդի տարերային բողոքը, նրան դուրս բերում ազգային-ազատագրական շարժման ճանապարհ։*

# ԵՐԿՐՈՐԴ ԳԼՈՒԽ

## ԱՐԵՎՄՏԱՀԱՅԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ XIX ԴԱՐԻ 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ։ 1875—1877 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ԱՐԵՎԵԼՅԱՆ ՃԳՆԱԺԱՄԸ, ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԵՎ ՀԱՅԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՄՈՒՆՔԸ

Հայ ժողովրդի ազգային զարթոնքն ու միավորման ճիգը XIX դարի 70-ական թվականներին իրենով նշանավորեց թուրքական բռնապետության դեմ արևմտահայ ժողովրդի մղած գոտեմարտի մի նոր փուլ, որը բնորոշվում է որպես հետսահմանադրական պայքարի շրջան և կտրուկ փոխում է այդ պայքարի բովանդակությունը։

Թուրքական իշխանության ու քրդական հարստահարիչների դեմ ուղղված ազատագրական շարժման նիզակը մյուս կողմից սրվեց հայրերի դեմ հաղթանակ տարած որդիների՝ լիբերալ-սահմանադրականների պահպանողական մտայնության դեմ։ Եվ որքան ծավալվում, այնքան ակնհայտ էր դառնում շարժման ազատագրական-սոցիալական բնույթը։

1862 թ. Զեյթունի ապստամբությունը, ապա նրան հաջորդած հուզումները Կ. Պոլսում ու զինված ելույթները Վանում (1862), Մուշում (1863) և այլն, խթանեցին Բ. Դռանը՝ վերաքննելու և հաստատելու արևմտահայերի Ազգային սահմանադրությունը։

Նրա վավերացման թվականը զուգադիպեց արևմտահայ ազատագրական շարժման կարևոր այն ժամանակաշրջանին,

երբ հայ գործիչները, Կիլիկիայի ազատագրման ծրագրից հետո, արդեն հանդես էին գալիս Արևմտյան Հայաստանի ազատագրման որոշակի մտահղացումներով։

1863 թ. հոկտեմբերի 21-ին, Հռոմից Մ. Խրիմյանին ուղղված նամակում, արևմտահայ լիբերալների երիտասարդ ներկայացուցիչներից մեկը՝ Պ. Նորատունկյանն առաջարկում էր կազմակերպել մի մասնաժողով, որի նպատակը պետք է լինի «Հայաստանի շղթաները խորտակել»։ Խոստանալով նման կոմիտե ստեղծելուց հետո անմիջապես ուղարկել պատրաստի ծրագիր, Նորատունկյանը շտապում էր ճշտել իր գիրքը, շեշտելով, որ ինքն այն կարծիքին չէ, թե հայ ժողովուրդը կարող է իսկույն ևեթ ոտքի կանգնել ու թոթափել օտարի լուծը, այն էլ այդ 3—5 հոգուց կազմված կոմիտեի ղեկավարությամբ, այլ որ մեկ օր այդ հնարավորությունն ունենալու համար, հարկավոր է այժմ դրանից սկսել։ Իսկ ապստամբելու ժամանակը կարող է հասունանալ տասը, քսան, դույն և վաթսուն տարի հետո։ Եվ այդ երկարատև դեգերումները հայ ժողովրդի համար պետք է դառնային համբերատար պատրաստվելու ժամանակներ։

Նույն շրջանում ծրագրվում էր ռուսական ցարիզմի դեմ բարձրացվող լեհական մի խոշոր ընդվզում, և ահա լեհ իշխան Վլ. Զարտորիժսկին հանդիպում է Մ. Պեշիկթաշլյանի հետ ու նրան առաջարկում միացյալ ապստամբություն բարձրացնել Ռուսաստանի դեմ։ Բայց հայ գործիչները չեն ընդունում հրավերը, որոշելով, «...ընավ երբեք դերասանական պաշտոն մը չընդունիլ ներկայացվելիք ողբերգության մեջ»[1]։ Մերժումը բնական էր, քանզի նրանք այդ ժամանակ խորհում էին ոչ թե ցարիզմի դեմ կովկասահայերի ապստամբության, այլ Արևմտյան Հայաստանի թուրքական լծից ազատագրման մասին։

Սակայն հայ գործիչները չկարողացան միասնական պայքարի եզրեր առաջարկել իրենց երկրի ազատագրմանն հետամուտ բուլղար հեղափոխականներին, որոնց պայքարի

---

1 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 55—58։

ծրագրերում, որպես կարևոր գործոն՝ մատնանշվում էր դաշինքի անհրաժեշտությունը Թուրքական լուծը թոթափել ձգտող մյուս ժողովուրդների հետ[2]։

Ի դեպ XIX դարի 60-ական թվականների վերջերին, 70-ական թվականներին, Փոքր Ասիա աքսորված բուլղար հեղափոխականները նշանակալի դեր խաղացին արևմտահայ ազատագրական շարժման առաջամարտիկների գաղափարական ձևավորման գործում[3]։

XIX դարում բորբոքված արևմտահայ ազատագրական շարժման գաղափարախոսությունն ի սկզբանե երկփեղկված էր ու ձգտում էր դեպի երկու հակառակ բևեռներ։

Հեղափոխական-դեմոկրատական ուղղության գործիչները, ինչպես նաև լիբերալներից շատերն ու ազգային-պահպանողականներից ոմանք, արևմտահայ ժողովրդի ազատագրումը տեսնում էին Թուրքական լծի դեմ բալկանյան ժողովուրդների նման ըմբոստանալու, զինված պայքարով, սեփական, ազատ ու անկախ հայրենիք ստեղծելու գաղափարի մեջ։ Մ. Նալբանդյանի ազատության կանչը պայքարի ուղեծիր էր դուրս բերել հեղափոխական դեմոկրատիայի մի ամբողջ շարասյուն։

Դատապարտելով Թուրքիայում «հավատարիմ հպատակի» քարոզը, նրա համախոհներն ու հետնորդները, ինչպես և այլ ուղղության պատկանող առանձին գործիչներ, հանդես էին գալիս խնկամանը վառոդամանով փոխարինելու (Ստ. Ոսկան), ազատությունը սրով ձեռք բերելու և պաշտպանելու (Րաֆֆի) կոչերով։

Մ. Մամուրյանն «Արևելյան մամուլ»-ում տպագրելով Սերենցի նամակը, ուր նա հակադրվելով Րաֆֆուն և Գր. Արծրունուն գրում էր. «Մենք կուզենք, որ ամեն հեղափոխություն վերեն գա և ոչ վարեն», առարկում էր նրա այդ տեսակետի դեմ ու գրում. «Ներվի ըսել, որ այս մասին մեծ նամակա-

---

2 Տե՛ս З. Стоянов, Записки о болгарских восстаниях, М, 1953, էջ 80։

3 Տե՛ս Տիգրան Սկունց, Ամիտայի արձագանքներ, Նյու-Յորք, 1950, էջ 192, 197։

դրին հետ տարակարծիք կգտնվեինք»[4]։ Մերկացնելով մեծ տերությունների զավթողական քաղաքականությունը, նա նույնպես հայ ժողովրդի ազատագրումը կապում էր զինված պայքարի անհրաժեշտության հետ։

Ապստամբած ժողովրդի ոտնաձայնն էր կարծես հնչում Ալիշանի մարտական քայլերգում.

Ի զէն, ի վրէժ, օն, անդր առաջ
Ի զէն, ի վրէժ, մի ձախ, մի աջ[5]։

Իսկ Գր. Չիլինկիրյանը՝ «Թյուրքիո հայ լրագրական անկերպարան ասպարեզին մեջ առաջին ազատախոս և ազատամիտ ռահվիրան և բանիբուն իրավագետն» (Մ. Մամուրյան), քարոզում էր հայրենիքի համար արյուն թափելու առաքինության մասին[6]։

Ժամանակի հրաշունչ ոգին մարմնավորեց Մ. Պեշիկթաշլյանը՝ Վ. Հյուգոյի «Հույն տղան» բանաստեղծության խիստ ազդեցությամբ գրած իր «Հայ քաջորդու», «Կուզեմ վառոդ ու գնդակներ» հատու պատասխանով[7]։

Պ. Դուրյանի թախծոտ ու քնարական ոգին մահից առաջ հայրենիքին օգնելու երգով էր բաբախում, իսկ Հ. Պարոնյանն արդեն այդ օգնության ուղիներն էր նշմարում, որոնք անցնել չէր կարելի ոչ եվրոպական դիվանագիտության սարդոստայնի վրայով, ոչ էլ լացով, քանզի «արտասուքը մանուկներու և կիներու (մեծ մանուկներու) բաժինն է»[8]։

Անգամ ազգային-պահպանողական Կարապետ Շահնազարյանը փափագում էր, որ յուր ազգը «ոչ միայն ազատ ըլլար, այլև իր հայրենիքին ինքնիշխան տիրեր... Իր բազմաժամանակյա ստրկության դառնությունը ճանաչելով՝ ինքն ալ ցանկար օր առաջ մարդկության նպատակին համեմատ ազա-

4 «Արևելյան մամուլ», 1876, № 10, էջ 349։

5 Ղ. Ալիշան, Նվագք, հատ. Դ, Վենետիկ, 1867, էջ 115։

6 «Ծաղիկ» (Զմյուռնիա), 1864, № 97, էջ, 375։

7 Մ. Պեշիկթաշլյան, Տաղեր, էջ 48—49։

8 Հ. Պարոնյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1934, հատ. 4, էջ 41։

տորն ապրիլ. վասնզի աստված զմարդ ազատ և ինքնիշխան ստեղծեր է»[9]։

Ժողովրդի գոյության հարատևման ու ազատության համար նրա մղած պայքարի կազմակերպման գործում մեծ դեր հատկացնելով մայրենի լեզվի պահպանմանը, Հ. Սվաճյանը, փոխաբերաբար, լեհ ծերունու բերանով ազդում էր. «Վերջին շունչիս աստված կանչեմ նաև՝ լեհերեն պիտի կանչեմ»[10]։

Նալբանդյանի ազատության իդեալներով իր քնարն էր հնչեցնում Սմբատ Շահազիզը, պատրաստ նրա նման և նրա օրինակով պայքարելու մինչև սուր ու կախաղան։ Իսկ 1873 թ. տակավին Եվդոկիայի ուսուցիչ, երիտասարդ Մ. Փորթուգալյանը նույն ոգով գրած իր բանաստեղծության մեջ ասում էր.

Նպատակիս համեմ միայն՝
Թող գիս հանեն կախաղան,
Կախաղանեն խեղդուկ ձայնս պիտի
Կանչե... Հայաստան[11]։

Բայց ահա զրնգում է հայ արիստոկրատիայի ազաղակը, Ժ. Լազարյանի բերանով ազդարարելով, թե հայերի ազատագրական բաղձանքը «անմիտ ցնորք» է միայն։ Իսկ Մ. Էմինի մտորումներում՝ այնպիսի կերպարանք ստանում, որ արտաբերվում է որպես ազգային ահավոր ինքնամոռացում, ինքնախարազանում, թե Հայկի անհնազանդությունը Բելին հայոց ազգի բնավորության ախտերից մեկն է[12]։

Արևմտահայ լիբերալ սահմանադրականների տեսակետն էր արտահայտում դեռ շատ երիտասարդ Մ. Չերազը, երբ 1870 թ. մայիսի 24-ին արտասանած ճառում, նշելով, որ արևմտահայերը տասը տարի առաջ սահմանադրություն ստացան, որն իբր մի իսկական հեղափոխություն էր, ավելաց-

---

9 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 2, Երևան, 1956, էջ 46—47։

10 Հ. Սվաճյան, Հրապարակախոսություն, էջ 479—480։

11 Տե՛ս «Նաիրի», 1962, N 36։

12 Տե՛ս Աշ. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 2, էջ 91։

նում է, թե բայց լավ էր, որ մենք այն արեցինք առանց «Ռոբեսպիեռի տապարին» դիմելու. «Օրհնյալ լինեք խաղաղության զինվորներ, իմաստասեր հեղափոխիչներ, դուք արյունը ատեցիք և ձեր աջը սուրբ պահեցիք»[13]։

1874 թ., Ազգային ժողովում արտասանած իր ծրագրելույթում արևմտահայ լիբերալիզմի նահապետներից մեկը՝ «Կիլիկիա» երգի հայտնի հեղինակ Նահապետ Ռուսինյանը խրատում էր պոլսահայ էֆենդիներին. «Մեր բեմական ազատության սահմանը մեր ներքին գործերն են, մեր ազգային հաստատությունքը, եկեղեցի, դպրոց, վանք, և կարոտելոց ձեռնտվություն։ Ասոնց մեջ պարփակյալ է մեր խոսելու ազատությունը. նաև ասոնց մեջ հաստատելու սոսկ ազգային օրենքներ, կայսերական ընդհանուր օրինաց պետք է որ չհակառակին։ Մինչ հոս է ահա մեր ձեռնահասության սահմանը։ Ուստի պարտ է մեզ խոհեմությամբ զգուշանալ, սահմաններս ու չափերնիս ճանաչել և բարեխնամ տերության վստահությունը միշտ վայելելու համար մեր գլխեն վեր խնդիրներու հանդգնությամբ չնախաձեռնել...»[14]։

1870—1871 թթ., երբ պատրիարքարանում ու Ազգային ժողովում զբաղվում էին հարստահարությունների մասին ընկուցագրեր կազմելով, Ռուսինյանը, Սերվիչենը և նրանց համախոհները կամ զգուշավոր լռություն էին պահպանում, «...կամ հաճախ կրացակայեին, ամլության դատապարտելով ամբողջ նիստը»[15]։

Իսկ հայ առավել հարուստ ու պահպանողական բուրժուազիան և նրա հետ սերտաճած կղերա-ազնվական հոսանքը, տիրապետող կարգերի մեջ տեսնելով իր ապագա գոյության գրավականը, ուղղակի կոնակ էր դարձրել հայ ազգային-ազատագրական պայքարին։

Տակավին 60-ական թվականներից սկսած ազգամիջյան այդ հոսքը, դեմոկրատական ընդվզումների աճման զուգըն-

---

13 Մ. Չերազ, Դրական փորձեր, Կ. Պոլիս, 1874, էջ 92։

14 «Ատենագրություն Ազգային ժողովոյ», 1874, էջ 51—52։

15 «Խրիմյան Հայրիկ», ժողովածու, էջ 48։

թաց, այնքան գորշացավ, որ նրա առանձին ներկայացուցիչներ սկսեցին դիմել բացահայտ մատնության, հայ առաջադիմականներին մեղադրելով «Հայաստանի թագավորություն մը հաստատելու գաղտնի դիտավորություն մը ունենալու մեջ»[16]։

Որտեղ որ լույս էր վառվում, գրում է Հ. Պարոնյանը, Ջամուռճյանը փչում էր, որ հանգցնի, իսկ Գ. Այվազովսկու «բորբոսնած ուղեղը» երկնեց «Մասյաց Աղավնու» էջերում ազատությունը բացատրել լրբություն[17], որին, հարկավ, չէին տարկում ոչ «Երևակ»-ը, ոչ էլ խավարյալ Ղ. Պալդազարյանի «Արշալույս Արարատյանը», կամ ինչպես ծաղրով կոչում էին. «Վերջալույս Արարատյանը»։

Համակերպվելու և գիտությամբ ու կրթությամբ առաջադիմելու քարոզը երբեմն իրենց հայրենասիրական ելույթների նյութ էին դարձնում նաև ժողովրդի երջանկության համար նահատակության պատրաստ գործիչները։

Դեռ Էնգելսն էր դատափետում Մաձինիի, իտալական ժողովրդին ուղղած «լուսավորական» արարողության պրոպագանդը, հակադրելով նրան առաջին ինտերնացիոնալի մարտական դիրքորոշումը[18]։

Թուրքական տիրապետության դեմ խմորվող ազատագրական պայքարի գաղափարախոսության երկփեղկվածությունը գոյություն ուներ նաև օսմանյան լուծը թոթափելու համար ոտքի ելած մյուս ժողովուրդների պայքարի դեպքերումներում։

Պախարակելով բուլղար «լուսավորականների» հեզ վարքագիծը, կարծես նրանց հայ համախոհներին էր ազդում Քրիստո Բոտևը, երբ 1875 թ. հունվարի 4-ին գրում էր. «Թուրքական վայրենի, բարբարոսական ու անմարդկային լուծը, որը համարյա 500 տարի ճնշել է և այժմ ավելի մեծ ծանրությամբ ճնշում է մեր խեղճ, հետամնաց, բայց դեռ կենդանի և կենսունակ ժողովրդին, հասցրել է այդ ժողովրդին... այն-

---

16 Տե՛ս «Ծաղիկ» (Զմյուռնիա), 1861, № 6։

17 «Մասյաց Աղավնի», 1861, թիվ Ժ, էջ 120։

18 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, հատ. 17, էջ 396։

ժլխսի ցածր մակարդակի, որ շատ շատերը դույն անգամ մեր անկեղծ հայրենասերները, հասան մինչև ատրկամիտ ու հնացած այն տեսակետին, իբր մեր ժողովրդին ամենից առաջ անհրաժեշտ է գիտություն և կրթություն... Եվ միայն այն բանից հետո, երբ նա կտիրապետի դրանց, հնարավոր կլինի մտածել նրա քաղաքական ազատագրման մասին... Թող խոսի ով ինչ ցանկանում է, իսկ մենք կասենք, որ եթե այդպիսի առաջադիմությունը շարունակվեր և հետագայում, մեր ժողովրդի գոյությունը կդառնար անիմաստ։ Թուրքիան արդեն տարածել է իր մահացու ձեռքը նրա կենսունակ բոլոր ուժերի վրա և ոչինչ չի կարող հեռացնել այդ ձեռքը, բացի կրակից և սրից»[19]։

«Գործի պիտի դրվի դանակը, թանաքը արդեն չի օգնում», — համերաշխվում էր նրա հետ բուլղարական ազատագրական շարժման առաջնորդներից մեկ ուրիշը՝ Վասիլի Լևսկին[20]։ Մի կարծիք, որ դրանից դեռ շատ վաղ առաջ էին քաշել ու պաշտպանել Մ. Նալբանդյանն ու նրա արևմտահայ բարեկամները, հայ «լուսավորականների» ժամանակի առաջընթացից սայթաքած ու ետ մնացած հայացքները ջախջախելիս։ Քիչ ուշ Կ. Պոլսի «Փունջ»-ի էջերում մի համարձակ հեղինակ ցասումով գրում էր. «Հայոց ազգի անմիտ երկչոտությունը մինչև այն աստիճան հասած է, որ յուր թշվառ վիճակին վրա խռովելու նշան անգամ չի հայտներ։ Երբեմն յուր հույսերը Սահմանադրության վրա դրած էր, այսօր ալ իր բոլոր ակնկալությանց կենտրոն ըրած է դպրոցները և կսպասե, որ դպրոցներեն գանե ազատություն։ Բայց մինչև դպրոցին մեջ կսորվի հայն արյունառուշտ քուրդին թուրը ջախջախել... Պաշտպանել պետք է ազգությունը, ինչ միջոցով ալ ըլլա, եթե բարոյական ազդեցությամբ, եթե հեղափոխությամբ, միայն թե հայրենիքը փրկվի»[21]։

Հայ ազատագրական շարժումները XIX դարի 70-ական թվականները թեակոխեցին գավառահայության ավելխարշ

19 Христо Ботев, Публицистика. Москва, 1952, էջ 159—161։

20 «История Болгарии», Москва, 1954, հատ. 1, էջ 270։

21 «Փունջ» (Կ. Պոլիս), 1878, 29 ապրիլի։

ճիշտ, որն առաջին անգամ քննարկման նյութ դարձավ Ազգային ժողովում և բողոքագրերի ձևով Բ. Դռանը ներկայացվեց 1869 թ. պատրիարք ընտրված Մկրտիչ Խրիմյանի ջանքերով։

Ժողովրդին ավելի լավ ծառայելու միտումով Հոգևորականի սև սքեմի տակ մտած այս խոշոր գործիչը դարձավ Արևմտյան Հայաստանի հայ աշխատավորության իղձերի ճանաչված ախոյանը։

Մոտիկից շփվելով գավառահայության հետ, ծանոթանալով նրա ծանր վիճակին, շուտով նա դարձավ մարտնչող հայրենասեր, որպիսին մնաց մինչև իր երկարատև կյանքի մարումը։ Արևմտյան Հայաստանում առաջին հայ հանդեսի՝ «Արծվի Վասպուրականի»-ի և առաջին տպարանի հիմնադիրն էր Խրիմյանը։ 1855 թ. նախ Կ. Պոլսում հրատարակելով «Արծվի Վասպուրականի»-ն, 1857 թ. Խրիմյանն այն տեղափոխեց Վանի մերձակայքում գտնվող Վարագի վանքը, որտեղ նույն թվականի օգոստոսի 1-ին բացվեց նաև նրա հիմնադրած նշանավոր ժառանգավորաց դպրոցը, իսկ ավելի ուշ՝ 1880 թ. Երկրագործական վարժարանը։

Թեպետ Խրիմյանը չի փայլել իր վարչական-կազմակերպական գործունեությամբ, բայց նրա անունը, որպես հազվագյուտ բացառություն, լուսապսակով է զարդարված եղել նրա քաղաքական-գրական գործունեության առաջին քայլերից սկսած մինչև Ամենայն Հայոց կաթողիկոս դառնալը և հետո։ Նրա նկատմամբ եղած ժողովրդական հարգանքը չեն նսեմացրել ոչ պատրիարքական ու կաթողիկոսական թագերի փայլը, ոչ էլ Երուսաղեմի աքսորականի դժնդակ խուցը, երբ «Արծվին ճնճղուկի վանդակի մեջ սեղմեր էին»։

Խրիմյանը ավելի քան կես դար հայ ժողովրդի պաշտամունքն էր դարձել, որովհետև հանդես եկավ իր ազգն ու հայրենիքը չսիրող անձը մարդկային կյանքի մեջ ապրելու իրավունք չպիտի ունենա կոչով։ Հանդես եկավ որպես համաժողովրդական իղձերի ու երազանքների բոցաշունչ արտահայտիչ։

Նա «ստեղծիչն եղած է ազգասիրական և հայրենասիրա-

կան զգացումներուն, որով ազգը տոգորվեցավ 50—60 տարիներե ի վեր, — գրում է նրա նկատմամբ համենայն դեպս ոչ բարեկամաբար տրամադրված Մ. Օրմանյանը, — և որ պատահական շեղծումներու բացառությամբ, նոր կյանք ներշնչեց, նոր գործունեության ազդեց, և նոր առավելություն բերավ հայ տարրին վրա»[22]։

Մ. Խրիմյանի ժողովրդասիրությունը դրվատել են Մ. Նալբանդյանն ու Հ. Սվաճյանը։ Նա միակ բարձրաստիճան հոգևորականն էր, որին չի ծաղրել «Ազգային ջոջերի» անմահ հեղինակը։

Դեռ այն ժամանակներում, երբ արևելահայ մտավորականությունը նոր էր փորձում խորհել իր ազգային ինքնաճանաչության մասին և կրոնական վեճերի տաղտուկ մթնոլորտը տակավին խեղդած էր պահում միայն երբեմն ճառագայթվող հայ-տիրացուական խավարը, Վարագա լեռներից իջավ Խրիմյանը՝ հայրենիքի ազատությունը սրով ու արյունով պահանջելու պատգամը շուրթերին[23]։

Լինելով բարձրաստիճան հոգևորական, Խրիմյանը, սակայն, ինչպես Հ. Թումանյանն է իրավացի նկատել, չէր սիրում հոգևորականությանը, նույնիսկ առանձին թշնամություն ուներ աստվածաբանների դեմ[24]։ Նա հանդես էր գալիս լայն դեմոկրատական հայացքներով, որպես ժողովրդական վշտերի ու զգացմունքների հարազատ արտահայտիչ։ Աստվածաշունչը լավագույն ձևը համարելով աշխատանքը, Խրիմյանը կյանքը չէր համարում մեղքերով լի մի աշխարհ, որից կամովին պետք է հրաժարվել։ Մարդը կոչված է ոչ թե մերժելու աստծո ստեղծած աշխարհը, որից աստված ինքն էլ դոհ չի լինի, այլ կատարելագործելու, դրախտ դարձնելու այն, և ինքն էլ կատարելագործվելու նրա հետ։ Կրոնի փիլիսոփայության նրա ըմբռնումը նույնացված էր մարդկային բարոյագիտության հետ, որը Խրիմյանի մոտ արտահայտվում էր,

---

22 Մ. Օրմանյան, Ազգապատում, Երուսաղեմ, 1929, հատ. Գ, էջ 5335։

23 Դ. Աղայան, Երկեր, հատ. 4, Երևան, 1963, էջ 283—284։

24 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, Երևան, 1959, էջ 190—191։

*առաջին հերթին, մարդասիրության ձևով։ Իսկ այդ հումանիզմը նրա մոտ ստանում էր սոցիալական երանգ և այնքան խորը գնում, որ քննության էր ենթարկում սեփականության գոյություն ունեցող ձևերի սոցիալ-քաղաքական արմատները։ Ասված չէ, ասում էր նա, որ մարդկանց ստեղծել է մեկին աղքատ, մյուսին հարուստ, կամ պատգամել, որ հզորները տկարին ճնշեն. «Մի հավատար ժողովուրդ. այդ վարդապետությունը տիրապետաց ոգին ստեղծել է...»*[25]*։ Խրիմյանի բարոյագիտությունն ասում էր. օգնիր բոլոր խեղճերին «քեզ ինչ փույթ նորա լեզուն և կրոնը»*[26]*։ Այս ավելի խորանալով նշում, որ «Թերևս ապագա աշխարհի մեջ մեր բնակավայր հողագունդն այնպես լինի, ինչպես մի քաղաք, զանազան ազգեր և լեզուներ միանան, մի ազգ և մի ժողովուրդ կազմեն, աշխարհը դեպի իր նախնական վիճակը դառնա և երթա հասնի մի ազգության նախադար, երբ մարդիկ մի երկիր մի լեզու ունեին»*[27]*։ Ինչ խոսք, «մի ազգ, մի ժողովուրդ, մի լեզու» դրությունը Խրիմյանը չի նույնացնում նախնադարյան հասարակության պարզունակ կյանքին, ինչպես կարծում է նրա շնորհալի մի կենսագրող, և ոչ էլ ազգերի միաձուլման պահանջ դնում*[28]*։*

*Հիրավի, առաջ քաշելով ազգերի պատմական կատեգորիա լինելու գաղափարը, Խրիմյանը, սակայն, գտնում էր, որ երբ նրանք դեռ առանձին-առանձին գոյություն ունեն, մի ազգը իրավունք չպետք է ունենա ճնշելու մյուսին։ Եվ քանի որ հայի հայրենիքը զավթել են օտարները, այն պետք է ազատագրել։ Խրիմյանը պատմական կատեգորիա՝ «այս աշխարհի գործն» է համարում նաև պետությունը, թեպետ նրա քրիստոնեական աշխարհհայացքի հակասությունն այստեղ էլ դրսևորվում է, թե ժողովրդի պարտքն է* «ճանչնալ և հաւատալ», *որ իշխանությունը երկնային ծագում ունի*[29]*։ Թերևս ցանկանում է*

---

25 Մ. Խրիմյան, *Ամբողջական երկեր, Նյու-Յորք, 1929, էջ 247։*

26 *Նույն տեղում, էջ 509։*

27 *Տե՛ս* Գ. Գյոզալյան, *Խրիմյան Հայրիկ, Բեյրութ, 1954, էջ 115։*

28 *Նույն տեղում։*

29 Մ. Խրիմյան, *Ամբողջական երկեր, էջ 437։*

տանել, որ եթե երկնային ծագում էլ չունի, թող ժողովուրդն այդպես իմանա։ Բայց նրա ըմբոստ ոգին երբեմն չի դիմանում ու նորից պոռթկում է. «Իշխանությունը մարդոց անհավասար կյանքին... ծնիր է»[30]։

Խրիմյանը գտնում էր, որ բնության ստեղծած անհավասարությունն օրինական է, իսկ մարդկայինը՝ անօրեն, ուստի խորհում. «Երանի թէ Լուկուրգոսի նման անգլիացի մայրերը նոր օրենսդիր մը ծնեին, որ ելներ լորտերուն աշխարհագրավ կալվածներ հավասար բաժաներ մշակ ժողովրդի վերա»[31]։

Պախարակելով աշխարհի տիրողներին, որոնք զրկել են մարդուն ազատությունից ու աշխատավոր խավերի թշնամիներն են, Խրիմյանը կողմնակից էր այնպիսի իշխանության, որ կառաջնորդվի ոչ թե իր, այլ ժողովրդի բարօրության շահերով։ Նա հիմնականում կանգնած մնաց «լուսավորյալ միապետության» պաշտպանության դիրքերում և իշխանության համաձայնությամբ ստեղծված լինելու իր գաղափարով տենչաց հաշտեցնել ժողովրդին իշխանության հետ։

Խրիմյանը դատապարտում էր նվաճողական, անարդարացի պատերազմները, որոնք ուղղված են նոր գաղութների ձեռք բերման, փոքր ժողովուրդների ստրկացման ու անողոք շահագործման նպատակներին։ Նա պախարակում էր իրենց աշխարհատիրական կրքերին հագուրդ տալու համար Արևելյան հարցը դրոշ դարձրած եվրոպական գաղութարարներին, որոնք «կռիվ ուզեին՝ Արևելյան խնդիրը կհուզեին՝ և երբ աշխարհակալել կամեին՝ դարձյալ Արևելյան խնդիրը կհանեին»[32]։ Սակայն նա ամբողջությամբ չի մերժում պատերազմը, գտնելով, որ արդարացի պատերազմը հարստահարվող, իր ազատության համար պայքարող ժողովրդի բարոյական պարտքն է։

Լիովին չհրաժարվելով ազատագրական շարժման իր դիրքորոշումից, 70-ական թվականների սկզբներին Խրիմյանը, կարճատև մի շրջանում, տարվեց օսմանյան հայրենա-

---

30 Մ. Խրիմյան, Ամբողջական երկեր, էջ 428։

31 Նույն տեղում, էջ 426։

32 Նույն տեղում, էջ 275։

սերի խախուտ հովերով և նույնիսկ հույսեր կապեց 1876 թ. Միդհատյան սահմանադրության հետ, թեպետ տարակուսելով նրա հարատևման մասին, ընտրվեց օսմանյան սենատի անդամ։ Բայց շուտով սթափվեց և «Վանգույժ»-ով (1877), որի պատճառով հեռացվեց սենատի կազմից, ու «Հայգույժ»-ով (1877) ավետեց իր վերջնական շրջադարձը դեպի հայ ազատամարտի գաղափարը, որը քիչ ուշ հնչեց որպես «երկաթյա շերեփի» քարոզ։

Դեռ 1854 թ. վերջերին Կ. Պոլսում տված մի բանախոսության ժամանակ, դիմելով Տատյան ամիրային, նա ասում էր. «Ով արքունի վառոդապետ, քո ամբարած վառոդեն քիչ մըն ալ Հայաստանի հայերուս տուր, որ գործածենք մեր թըշնամիներուն դեմ...»[33]։ Թեև այդ շրջանում, հավանաբար, ի նկատի ուներ հայ ժողովրդի ինքնապաշտպանության խնդիրը միայն։

Ավելի ուշ Խրիմյանն իր զայրույթն էր նետում օտար լուծը հեզությամբ տանող, չբողոքող ու չապստամբող հայ ժողովրդին. «Մինչև գանհկած կալ ես դու աշխարհիս երես, ես ալ կդատիմ զքեզ, թե այդ չափ ստրկանաս և աղարտես մարդկության ազատ պատիվ»[34]։

«Շերեփների քարոզիչը» ժողովրդին ոգևորելու և արիություն ներշնչելու համար էր, անշուշտ, աստծո մատը ազատագրական շարժումների մեջ խառը լինելու մասին շշնջում։ Ապա ժխտելով առանց զոհի և արյան ազատություն ձեռք բերելու հնարավորությունը, «Հայգույժ»-ում զենքի և ըմբոստության էր կոչում ժողովրդին. «... Դեռ պիտի կոտորվիք, դեռ պիտի մորթվիք... քանի որ անզեն, անեղջյուր, անասպար կապրիք»[35]։

Հետագայում, երբ արդեն կաթողիկոս Խրիմյանը զգուշացնում էր երիտասարդ դաշնակցականներին «տղայական ցույցեր» չանել, նրան հիշեցնում են, որ ինքն է եղել զենքի

33 Տե՛ս Գ. Գյոզալյան, Խրիմյան Հայրիկ, էջ 26—27։
34 Մ. Խրիմյան, Ամբողջական երկեր, էջ 256։
35 Նույն տեղում, էջ 275։

դիմելու առաջին քարոզիչը: Բայց նա պատասխանում է, որ ինքը ի նկատի չուներ, որ նրանք «մեկ երկու շեշխանե, չախմախլի կամ սյուրմելի թյուֆենքներով» ազգը ոտքի կանգնեցնելու, Թուրքիան ծնկի բերելու, կամ «աս Եվրոպայի փուշտ ու փեզեվենք տիպլոմասին մեր կողմը քաշելու» սին հանդըգնությունը կունենան[36]:

Լինելով հայ և քուրդ ժողովուրդների բարեկամության ջատագով, երբ այդ միություն ստեղծելը հնարավոր չեղավ, Խրիմյանը պրոպագանդում էր զինվել և պաշտպանել սեփական կյանքը, պատիվն ու գույքը զավթող քրդերից, բայց երբեք չպատերազմել քուրդ աշխատավոր ժողովրդի դեմ, որը նույնպես, թեպետև ավելի քիչ, կրում է իր ազգակից հարստահարողների ճնշումն ու բռնությունը:

1880 թ. սովի օրերին, երբ Վանի առաջնորդարանի իր ստորագրյալները մերժած են լինում ալյուր տալ նաև թուրք և քուրդ սովյալներին, Խրիմյանը զայրույթով դիմում է նրանց. «Եթե դուք այստեղ կտեսնաք հայ սովյալ մը ու գութի զգացում կունենաք անոր մասին և այնտեղ կտեսնաք թուրք սովյալ մը ու այդ գութի զգացումը կը պակսի ձեզի, ապա ուրեմն սուտ է և կեղծ ձեր հայու մասին ցույց տրված գութի զգացումը: Անկարելի է, որ նման սիրտ մը ընդունակ եղած ըլլա գութի և սիրո զգացումներուն»[37]:

Ժողովուրդների բարեկամության համոզված կողմնակից լինելու համար, նախ հարկավոր է լինել իսկական հայրենասեր: Մեծապես սիրելով իր ժողովրդին, Խրիմյանը նաև ժողովուրդների բարեկամության անխոնջ քարոզիչ էր: Ուստի «ոչ միայն հայերի, այլև բոլոր քրդերի, ասորիների, եզիդիների, տաճիկների հայրիկն է միանգամայն»[38]:

---

36 Ա. Դարբինյան, Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947, էջ 104—105:

37 «Ամենայն Հայոց Հայրիկ», Բոստոն, 1957, էջ 12:

38 Ա. Թոխմախյան, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881, էջ 82—83:

Նորերս հայ ժողովրդի պատմությանը ոչ լավատեղյակ մի հեղինակ գրում էր, թե դաշնակցականները Խրիմյանին տվեցին «Հայրիկ» հոր-

*Զնայած ունեցած եվրոպական, հատկապես անգլիական գիրքորոշմանը, մանավանդ մինչև Բեռլինի կոնգրեսը, նա հայ իրականության այն խելամիտ գործիչներից էր, որոնք ժողովրդի ազատությունը համարում էին նրա սեփական գործը։ Խրիմյանը գիտակցում էր, որ եվրոպական երկրները, առանց սեփական շահի, երբեք չեն զբաղվել ու չեն զբաղվի փոքր ազգերի պաշտպանությամբ, որպիսի լոզունգներով նրանք փորձում են հանդես գալ ամենուր, և որ «այժմյան աշխարհի վերա տիրող մեծ աշխարհակալ՝ շահն է»[39]։*

*Խրիմյանը մանր բուրժուազիայի և գյուղացիության գաղափարախոսն էր։ Նա ջերմ կողմնակից էր մանր հողատիրության այն ձևին, երբ գյուղացիներն անխտիր մի կտոր հող կունենան, և առանց ուրիշի աշխատանքը շահագործելու կմշակեն այն ու դրանով կհայթայթեն իրենց ապրուստը։*

*Լինելով ժողովրդական շահերի արտահայտիչը, Խրիմյանն իր պատրիարքության շրջանում գավառներն աշխատանքի էր ուղարկում, որքան հնարավոր էր, հայրենասեր հոգևորականներին։ Նա էր, որ առաջ քաշեց նաև Ազգային սահմանադրության վերանայման հարցը, որտեղ ոտնահարված էին գավառահայության շահերը։*

*Նա առաջին և վերջին պատրիարքն եղավ, որ բողոքեց սահմանադրության մեջ գավառի կարիքների անտեսման դեմ։ Նրա պայքարը սահմանադրության վերանայման համար գավառի ըմբոստացումն էր Կ. Պոլսի էֆենդիության դեմ։*

*Սակայն Խրիմյանը հակասահմանադրական չէր, ինչպես փորձում էին մեղադրել նրա հակառակորդները, հատկապես Ազգային ժողովի «Ղալաթիո օջախ» կոչված ձախակողմյան խումբը, իր վերարավոր առաջնորդի՝ Մատթեոս Իզմիրլյանի ղեկավարությամբ։ Իսկ «օջախ»-ի անդամ Ստ. Փափազյանը բարեխղճորեն գրպանելով Ղալաթիո վարժարանի տեսչի իր*

---

*ցորջումը (տե՛ս* Ս. Ոսկերչյան, *Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները, Երևան, 1962)։ Թող հայտնի լինի այս թյուր կարծիքի հեղինակին, որ Խրիմյանին «Հայրիկ» էին կոչում և այն ժամանակ, երբ դաշնակցության հիմնադիրները դեռ հայոց լեզուն չէին թոթովում։*

[39] Մ. Խրիմյան, *Ամբողջական երկեր, Նյու-Յորք, 1929, էջ 506։*

գիրուկ վարձը, բարձիթողի նետած վարժարանի գործերը, դեմոկրատական ազատությունների լղունգով, հևասպառ պըտտում էր Խրիմյանի դեմ լարվող բանսարկությունների անիվը։

1873 թ. հուլիսի 30-ին պանդուխտ հայերի մի մեծ խումբ խուժում է պատրիարքարան և հարձակվելով Քաղաքական ժողովի անդամների վրա սոսկալի ծեծում նրանց, սպառնալով ջարդ ու փշուր անել բոլորին, եթե նրանք կհամարձակվեն դավեր լարել իրենց սիրելի Հայրիկի դեմ։ Բայց 1873 թ. Խրիմյանն ստիպված ներկայացրեց իր կանխահաս հրաժարականը[40], և օգոստոսի 3-ին արտասանած նշանավոր «Խոսք հրաժարական»-ում, պատասխանելով ձևապաշտ սահմանադրականների պարսավանքին, հայտարարեց. «Ես սահմանադրությունը գրկել կուզեի, բայց չեմ ուզեր զանի այն չափ ճզմել ու սեղմել, մինչև գրկիս մեջ մեռնի։ Ես այնպես կհամարիմ թե նորա թերթերը վարդի թերթերեն ավելի փափուկ են։ Խստությամբ մի շոշափեք, պատառ-պատառ կլինի։ Մանավանդ որչափ սարսուռ կզգամ, երբ ոստիկանության ձեռք կը դպի, այսինքն անխորհուրդ, անհեռատես մարդիկ օրինաց դիմահարները զսպելու համար ոստիկանության զենք օգնություն կկանչեն, որու վախճանը թե մինչև ուր կերթի՝ ձեզ կթողում խելամտել»[41]։

Խրիմյանի ըմբոստ ոգին չէր երկնչում ի լուր բռնակալների հայտարարելու, թե «աշխարհիս պալատներուն հաստատության հիմն ու խարիսխ շինական ժողովրդոց խրճիթն է»[42], և որ «գյուղացու չքավոր խրճիթին ու կայսեր պալատին մեջ կա էլեկտրական թել մը։ Եթե հոս փլչի գյուղացու խրճիթ, հոն պալատին մեջ կդողա սյուն մը»[43]։

---

40 Խրիմյանի հրաժարականը Ազգային ժողովը չի ընդունում և Խրիմյանը հետ է վերցնում այն, բայց արդեն ուշ էր, Բ. Դուռը շտապել էր ընդունել հրաժարականը և հանձնարարել էր ընտրել տեղապահ։

41 Մ. Խրիմյան, Ամբողջական երկեր, հավելված Բ—14։

42 Նույն տեղում, էջ 857—858։

43 Տե՛ս Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 8, էջ 504, Երևան, 1961։

* * *

Խրիմյանի պատրիարքության շրջանում՝ 1870 թ. Կ. Պոլսի հայ երիտասարդության առաջադեմ ներկայացուցիչները ձեռնարկեցին «Երկրագունտ» հանդեսի հրատարակումը, որն իր նույն թվականի համարներից մեկում գրում էր. «Հայրենիքը յուրաքանչյուր ազգի նախահարց գերեզմաններու վայրն է և ծննդոց խանձարուրը... Հայրենյաց սիրույն արյուն թափել ու մեռնիլը նոր կյանք ու անմահություն է հայրենասերին»[44]։

Իսկ արևմտահայ լիբերալների տակավին մարտական ոգին չկորցրած «Մասիս» լրագիրը 1869 թ. դեկտեմբերի 1-ին անհրաժեշտ էր համարում հիշեցնել, որ հայերը պարտավոր են «...Իրենց կրոնի և ընտանեկան սրբության համար, իրենց մարդկային կոչման և արժանապատվության համար՝ պաշտպանողական սուրը նախապատիվ համարել ստրկական վատասրությունեն, արիական նախաձեռնությունը՝ տղայական լաց ու կոծեն և պատվավոր մահը անպատիվ կյանքեն»։

Արևմտահայության մեջ ազգային ինքնաճանաչության ու ազատագրական պայքարի գաղափարը անհամեմատ լավագույն պտուղներ տվեցին Կարինում և հատկապես Վանում՝ Խրիմյանի ծննդավայրում։

1872 թ. սկզբներին Վանում կազմակերպվում է «Միություն ի փրկություն» գաղտնի ընկերությունը, որի նպատակն էր հայ ժողովրդին ազատագրել թուրքական բռնակալության լծից։ Կազմակերպության մարտի 3-ի թվագրված հայտարարության մեջ, որն ստորագրել էին 46 մարդ, նկարագրվում է Վասպուրականի հայ ազգաբնակչության ծանր վիճակը և կոչ արվում. «Ալ ինչ կսպասենք. կյանք չունինք մահե կվախենանք... փրկության միջոց փնտրենք, ապա թե ոչ կորուստ մերձ է իսպառ...»։ Ըստ որում պահանջվում էր ազատագրման համար պայքարելու իրենց որոշումը Վարդանանց միաբանության ուխտի նման սրբությամբ ու հավատարմությամբ պահել՝ մինչև արյան վերջին կաթիլը[45]։

44 «Երկրագունտ», 1870, էջ 258։

45 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 269—270։

Ապրիլի 26-ին Անգղ գյուղի բնակիչները առանձին, իսկ Ջորաթենց, Խնկբեղ, Հնդստան, Նոր Գյուղ, Հառեղ գյուղերի բնակիչները միասյալ, դիմումներ են գրում «Միությանը»՝ նրան անդամագրվելու ցանկության մասին[46], պատրաստակամություն հայտնելով, փրկվելու համար, անհրաժեշտության դեպքում, նույնիսկ ռուսադավանություն ընդունել։ Ենթադրում ենք, որ «Դիվան հայոց պատմության» ԺԳ հատորում զետեղված Գ. Սրվանձտյանի նամակներում հիշատակվող «Մուտ և Տես» ընկերությունը նույն «Միություն ի փրկություն»-ն է, ցույց նրա մի թևը։

«Միություն ի փրկության» կոչը ստորագրված էր, ինչպես տեսանք, 1872 թ. մարտի 3-ին, իսկ մարտի 22-ին Գ. Սրվանձտյանը գրում էր Մ. Խրիմյանին, որ «Վանա մեջ քանի մը ամսե հետե պակասամիտ անձիներե գաղտնի ընկերություն կազմված է «Մուտ և Տես» անունով, նպատակն էր կրոնքը փոխել, ռուսականություն ընդունել, և ռուսի քահանա հրավիրել ի Վան նոր եկեղեցի հաստատելու։ Որքան հիմարություն և վտանգավոր ձեռնարկ։ Բայց զգաստ անձանց հետ մենք ալ թե ուղղակի և թե անուղղակի վրա հասնելով, բացատրություններ տալով, են, են։ Այժմ դադարածի պես կերևի, բայց չկարծեմ թե խապառ»[47]։ Իսկ մայիսի 2-ի նամակում արդեն գրում էր, որ հիշյալները նույն հարցով դիմել են այդ օրերին Վանում գտնվող Կարինի ռուսական հյուպատոսին[48]։

Գ. Աղանյանը «Դիվան»-ի ԺԳ գրքի «Երկու խոսք»-ում, անդրադառնալով սույն հարցին, նկատում է, որ «Միություն ի փրկություն» կազմակերպության «... նպատակն էր վերջ դնելու հայ ժողովրդի տառապանքներին և որի երևան գալը ապրիլյան մի շարժում առաջ բերեց ամբողջ Վասպուրականում, որ բոլոր գյուղերում հանրագիրներ սկսան կազմվիլ հանուն այդ գաղտնի ընկերության, աղերսելով կամ իրենց ազատել այդ դժոխքից, և կամ, եթե վճակված է իրենց կորչել... նախընտրել ռուսանալը։ Սակայն այդ հեղափոխական

46 «Դիվան հայոց պատմության», էջ 271—273։

47 Նույն տեղում, էջ 231։

48 Նույն տեղում, էջ 238։

կուսակցությունը հաջողություն չունեցավ հենց վերջին պատճառով»:

*Հավանաբար Գ. Սրվանձտյանի և հիշյալ «զգաստ անձանց» ջանքերի շնորհիվ էլ նրանք հրաժարվում են իրենց նախկին ցանկություններից և մտածում ոչ թե ռուսադավանության, այլ միայն ռուսահպատակություն ընդունելու մասին։ «Միություն ի փրկության» «Դիվան»-ում հրապարակված կոչի բնագրի վրա, Գ. Աղանյանի վկայությամբ, կա Գ. Սրվանձտյանի՝ իր կողմից այդ ուղղությամբ կատարած ջանքերի մասին արված մակագրությունը*[49]:

*Անշուշտ, հենց Սրվանձտյանի խորհրդով էր, որ Կարինի ռուսական հյուպատոսի ցուցումով ու հրաշխավորությամբ 1872 թ. մայիսին Թիֆլիս՝ Կովկասի փոխարքայի մոտ պատվիրակ գնացած «Միություն ի փրկության» ներկայացուցիչների՝ Նշան Շիրվանյանի և Հակոբ Կալոյանի կողմից փոխարքային ու Երևանի նահանգապետին, կազմակերպության անունից ներկայացրած խնդրագրերում ուղղափառություն ընդունելու ցանկության մասին ոչ մի խոսք չկար*[50]։

*«Միություն ի փրկություն» խմբի Վասպուրականում ծավալած գործունեության շրջանում էր, որ Խրիմյանը Կ. Պոլսից խորհուրդ էր տալիս ու հուսադրում Վանում գտնվող Գ. Սրվանձտյանին, իր «մարտադիր զինվորին», թե հայ ժողովրդի*

---

49 *Արտ. Կարինյանը «Նորք»-ի 1926 թ. № 1—2-ում հրապարակած իր մի հոդվածում անդրադառնալով այս հարցին, տարօրինակ անտեղյակությամբ եզրակացնում է, թե Սրվանձտյանը խափանել է ընկերության աշխատանքները, որովհետև այդ ընկերությունը ազգային-հեղափոխական նպատակներ ուներ, իսկ Սրվանձտյանը՝ ոչ։ Ըստ որում Ա. Կարինյանը միաժամանակ հակասության մեջ է ընկնում և, ժխտելով «Միություն ի փրկություն» կազմակերպության քաղաքական խումբ լինելը, իր նպատակին հասնելու համար կանգ չի առնում անգամ խեղաթյուրման առջև։ «Վան քաղաքի հայ բնակիչների ձեռներեցությամբ, — գրում է նա, — ստեղծված ընկերությունը ինքը* բնորոշել էր իրեն իր անունով («Միություն ի առաջադիմություն»)։ *Մինչդեռ նրա իսկ վկայակոչած «Դիվան»-ի ԺԳ հատորի 552—553 էջերում գրված է.* ոչ թե «Միություն ի առաջադիմություն», այլ «Միություն ի փրկություն»:

50 *Տե՛ս «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 276—278։*

ազատագրական պայքարն այնպիսի մի շրջան է ապրում, որ անհրաժեշտ է «... ձեռնաբաց լինելով թողուլ այժմ մինչև պատեհ ժամանակը օգնել»: Սրա առթիվ է, ըստ երևույթին, Սրվանձտյանը դժգոհում, թե «Տեղ մը կխրախուսեք զոտիս քաջաբար ընդդեմ, և զորք ու զորապետներ կազմ պահեմ, տեղ մը կվարանիք, իմ ապահովությունս կմտածեք...»[51]: Բայց Խրիմյանը ոչ թե վարանում, այլ իրադրությունն հաշվի առնելով, խորհում էր անժամանակ ընդվզումներից խուսափելու և բազմակողմանիորեն նախապատրաստվելու մասին, որի պայմաններից մեկը արևելահայության մեջ հայրենասիրական տրամադրությունների բորբոքումն էր և նրանց հետ սերտ համագործակցության ստեղծումը: 1872 թ. դեկտեմբերի 15-ի նամակում այդ առթիվ Խրիմյանն անհրաժեշտ էր համարում և Սրվանձտյանին առաջարկում տարածել Ճանիկ Արամյանի վերահրատարակած «Մայր Հայաստան» նկարի օրինակները, որոնք ուխտավորների միջոցով կհասնեին նաև Արևելյան Հայաստան, իսկ նրանց հայրենասիրական ներգործությունն ակնհայտ էր[52]: Պատահական չէ, որ այդ օրերին Վանի հայտնի Պողոս վարդապետը, որն անգամ օտարների վկայությամբ, իր չնչին նպատակներին հասնելու համար, պատրաստ էր ամեն մի ստորության, Խրիմյանի մասին բարձրաձայն աղաղակում էր. «Զեյթունը ապստամբեցուց թագավորի դեմ, այն-

---

51 «Դիվան հայոց պատմության», էջ 236:

52 Նույն տեղում, էջ 268: Ի դեպ նշենք, որ այդ շրջանում, արևելահայության մեջ, սեփական նախաձեռնությամբ նույնպես տարածվում էին նման հայրենասիրական նկարներ, հատկապես Մ. Նալբանդյանի լուսանկարները:

1874 թ. մայիսի 1-ին Կովկասի փոխարքայի դիվանատան ղեկավարպետ բարոն Նիկոլային գրում է Թիֆլիսի նահանգապետ Կ. Ի. Օռլովին, որ վերջին ժամանակները Երևանում, Էջմիածնում, Թիֆլիսում տարածվում են Մ. Նալբանդյանի լուսանկարները, նույնիսկ ձրի բաժանվում երիտասարդությանը: Այդ նկարների վրա գրված են գովասական խոսքեր Նալբանդյանի մասին, օրինակ «Հայրենիքի փրկիչ» և այլն: Բացի դրանից երիտասարդների ձեռքին երևան են եկել Զարմայրի, Տիգրանի, Երվանդի, Վահանի, Վահագնի, Հայկի և Արտաշեսի նկարներով թաշկինակներ, որոնք ըստ ղեկուցագրի՝ «տենդենցիոզ նպատակներ» ունեն և անհրաժեշտ է միջոցառումներ ձեռնարկել նրանց վերաբերմամբ եղած օրենքի համեմատ (տե՛ս Ն. Շահազիզ, Դիվան Մ. Նալբանդյանի, Երևան, 1932 թ., էջ 362):

քան արյուն թափել տվեց: Մուշը պիտի ապստամբեցներ, նույնպես ըրավ և Թիֆլիսը: Ստամբուլ որքան խռովություն կա ազգին մեջ, խիանություն[53] կա տերության դեմ, հեղինակ Խրիմյանն է»[54]: Դրանով նա փաստորեն իշխանություններին էր մատնում հայոց պատրիարքին, պետական դավաճանության մեջ մեղադրելով նրան:

1870-ական թվականների սկզբներին նորից խլրտում էր Տավրոսի արծվաբույնը: 1875 թ. զինավառ զեյթունցիները դուրս վռնդելով գավառապետ Դաուդ Նիազիին, իրենց անկախ հռչակեցին, պահելով այն շուրջ երեք տարի:

Թուրքական կառավարության և նրա քաղաքականությունն իրականացնող տեղական իշխանությունների արյունոտ ոճիրները զեյթունցիներին մղեցին 1876 թ. հունիսի 15-ին հրդեհելու կառավարական շենքը և թուրքական մզկիթը[55]:

Երբ սկսվեց 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և ռուսական զորքերը մտան Կարին, ըմբոստ լեռնականներն արդեն կազմել էին Զեյթունն ազատագրելու 9 կետից կազմված իրենց ծրագիրը, և այն կենսագործելու համար նրանց պատվիրակությունը մեկնեց Կարին ու օգնություն խնդրեց ռուսական բանակից, հատկապես իրենց զենք տալու հարցը դնելով գեներալ Լազարևի առջև[56]:

Բ. Դուռը Սալֆետ փաշայի միջոցով պահանջեց Ներսես պատրիարքից սաստել ապստամբներին, բայց նա պատասխանեց, որ ինքը զեյթունցիների վրա ոչ մի ազդեցություն չունի:

Գեներալ Լազարևն, իհարկե, օգնել չկարողացավ և պատերազմից հետո ապստամբությունը ճնշվեց, բայց 1879 թ. այն նորից թնդացրեց Տավրոսի լեռնաշղթան: Բ. Դռան ներկայացուցիչների և զեյթունցիների միջև սկսվեցին բանակցություններ: Թուրքական կառավարությունն իր պաշտոնյանե-

53 Ճիշտը՝ խիանաթություն՝ նենգություն, դավաճանություն:

54 «Դիվան Հայոց պատմության», հատ. ԺԴ, էջ 444:

55 Տե՛ս «Զեյթունի պատմագիրք», Բուենոս-Այրես, 1960, էջ 345:

56 Տե՛ս Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, ց. 21, վ. 1410, և «Մշակ», 1878, № 165:

րի միջոցով, անարգաբար խաբեց ապստամբներին, որոնք զենքերը վար դրին՝ 1884 թ. նորից վերցնելու համար։

Հայրենասիրական թռուցիկ խմբեր էին կազմակերպվում նաև Կ. Պոլսում, Կարինում և հայաշատ այլ կենտրոններում։ 1874 թ. Կարինում, երիտասարդ Խ. Կերեքցյանը, իր մի խումբ ընկերների հետ միասին կազմակերպում է «Ազատություն» հայրենասիրական միությունը, որի անդամների թիվն անընդհատ աճում էր։

Բայց քնած չէին և թուրքական իշխանությունները, որոնք ջանում էին բնում խեղդել ազատագրական շարժման ամենաաննշան փորձն անգամ։ Ձերբակալվում և բանտ էին նետվում հատկապես ուսումնական հաստատությունների ղեկավարները, ուսուցիչները, որոնք կասկածվում էին երիտասարդության շրջանում հակապետական գաղափարներ տարածելու և հայ մանուկ սերունդը հայրենասիրական ոգով դաստիարակելու մեջ։ Փակվում էին այս կամ այն չափի կասկածներ հարուցող ուսումնական հաստատությունները։ 1873 թ. հունվարի 11-ին կրկին ձերբակալված Մ. Փորթուգալյանը Նիկոմիդիայից հեռագրում էր. Կ. Պոլիս՝ «Մանզումեի էֆքիար»-ի խմբագիր Կ. Փանոսյանին. «Մեր մատակարարության տակ գտնվող Վարդուհյան վարժարանը Սուրիասյաններուն ազդեցությամբ պետությունը առանց դատարանի փակեց, ինծի բանտարկեց հիմա ալ Սեբաստիա զրկելու վրա է։ Աստծո սիրույն մեր դպրոցը ու զիս ազատեցեք բանակալներեն»[57]։

Նա շուտով ազատվեց ու ձեռնարկեց Կ. Պոլսում հրատարակելու «Ասիա» թերթը, որը, սակայն, մի քանի ամսվա կյանք ունեցավ միայն։ Պատրիարքարանի մատնությամբ այն փակվեց իշխանությունների կողմից և այլևս չվերականգնվեց, քանի որ հեղինակը չկամեցավ հրատարակել այն, իր գրիչը «շողոքորթության մեջ թաթախելով»։

1876 թ. ապրիլի 15-ին Մկրտիչ Փորթուգալյանը, Մինաս Չերազը և Արփիար Արփիարյանը, մի խումբ այլ անձանց օգնությամբ, Կ. Պոլսում «Հայաստան» ձրիաբար ուսում և

57 «Մանզումեի էֆքիար», 1873, № 2083։

արհեստ տարածելու» նպատակով, հիմնադրում են մի ընկերություն, որի նախաձեռնողները սկզբում ցանկանում էին այն կոչել Մ. Նալբանդյանի անվամբ, կամ հորջորջել «երկաթագործ եղբայրք», բայց հետո, կասկածների տեղիք չտալու համար, կոչեցին «Արարատյան»[58]։ Նույն տարվա հունիսին Մ. Փորթուգալյանը ընկերության ատենապետի պարտականությունները թողնելով Մ. Ջերազին, կրթական տեսչի պաշտոնով մեկնում է Վան, որտեղ նրա ջանքերով բացվում է «Հայրենասեր ընկերության» առաջին լսարանը։ Վանից նա անցնում է Թիֆլիս, «Արարատյան» ընկերության ծրագիրը բացում Գ. Արծրունու առջև։ Վերջինս նրան խոստանում է ապահովել «Մշակ»-ի և «Մշակ»-ի կողմնակիցների նյութական ու բարոյական աջակցությունը։ Դրանով երաշխավորվում էր արևմտահայերի և արևելահայերի համագործակցության ամրապնդումը։ Հավանաբար Գ. Արծրունու խորհըրդով և պատերազմի հետ կապված դժվարությունների պատճառով, Մ. Փորթուգալյանը մոտ մեկուկես տարի մնում է Թիֆլիսում, աշխատակցում «Մշակ»-ին և նրա օգնությամբ զբաղվում «Արարատյան» ընկերության օգտին հայտարարված հանգանակության կազմակերպմամբ։ Ի դեպ, պատերազմի ժամանակ օսմանյան գլխակորույս կառավարության ուշադրությունից վրիպել էր Թուրքիայում լեգալ գործող «Արարատյան» ընկերության անունով իր հետ պատերազմող երկրում կատարվող մասսայական հանգանակությունը։

1878 թ. Մ. Փորթուգալյանը վերադառնում է Վան ու այնտեղ նույն թվականի հոկտեմբերին հիմնադրում նշանավոր վարժապետանոցը, որը բացվում է 1879 թ. հունվարի 1-ին։ Նույն 1878 թ. Վանում հիմնադրվում է նաև կույր Համբարձում Երամյանի օրինակելի դպրոցը։

Այդ շրջանում էլ թուրքական ու քրդական հարստահարությունների դեմ պայքարելու, ժողովրդին ինքնապաշտպանության համար բարոյապես նախապատրաստելու և զինելու նպատակով Վանում կազմակերպվում է «Սև խաչ» գաղտնի

---

58 Տե՛ս «Նոր կյանք», 1899, էջ 211, (Ա. Արփիարյանի հուշերը)։

կազմակերպությունը, որի մասին հանգամանորեն կխոսվի ավելի ուշ։

Միաժամանակ հայ ազատագրական շարժումներին հետամուտ ընկերություններ էին ստեղծվում նաև Արևելյան Հայաստանում։ 1869 թ. Ալեքսանդրապոլում, իսկ 1874 թ. Ղարաքիլիսայում ձևավորվում են «Բարենպատակ ընկերություն» և «Կանտորա Հայրենյաց սիրո» կազմակերպությունները, որոնց գլուխ էին կանգնած Արսեն Կրիտյանը, Պետրոս Հայկազունին, Գևորգ Խոսրովյանը, Համբարձում Բալասանյանը և ուրիշներ։

Ցարական ժանդարմական վարչության կողմից 1875 թ. հայտնաբերված ու ջախջախված ազգային-դեմոկրատական գաղափարներով առաջնորդվող այս ընկերությունների գործունեությունն ուղղված էր հայ ժողովրդի վրա ծանրացած ցարական և սուլթանական բռնակալության դեմ։ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախապատրաստման պայմաններում, ելնելով հայ ժողովրդին Թուրքիայի դեմ տրամադրելու իրենց վաղնջական քաղաքականությունից, ցարական իշխանությունները համեմատաբար մեղմ վարվեցին «պետական հանցագործության» մեջ մեղադրվող այդ կազմակերպությունների անդամների հետ[59]։

Համարյա նույն շրջանում և քիչ ուշ հակապետական գործունեության մեջ էր մեղադրվում նաև նույն ալեքսանդրապոլցի մի երիտասարդ՝ Ալեքսանդր Հովակիմյանը, որն հայրենասիրական բանաստեղծություններ էր արտասանում ու տարածում ամենուր, «հանցավոր» զրույցներ կազմակերպում համաքաղաքացիների շրջանում[60]։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի նախօրեին՝ 1876 թ., արևելահայ ազատամտականների պարագլուխ Գ. Արծրունին կոչ էր անում արևմտահայերին, բալկանյան ժողովուրդների օրինակով, ապստամբել հանուն թուրքական լծի թոթափման։ Եվ երբ արևմտահայությունը չէր ար-

59 Այս կազմակերպությունների մասին մանրամասն տե՛ս Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958։

60 Տե՛ս ԼԿՊԴԱ, ֆ. 1105, ց. 521, գ. 396, թ. 82—86։

ձագանքում նրան, «Մշակ»-ի խմբագիրը վրդովված աղաղակում էր, թե արևմտահայերը ոչ միայն ազգություն չեն, այլև իրավունք չունեն կրելու մարդ անունն անգամ։ «...Լավ է այդ աստիճան բարոյապես ընկած ազգությունը մինչև վերջին մարդը պատերազմեր, արյուն թափեր և եթե չէր կարող հաղթել՝ ամբողջությամբ մեռներ, քան թե ապրեր, ինչպես ապրում է»[61]։

Այսպիսի խիստ մեղադրականից հետո նրան մնում էր կառչել Ռուսաստանի օգնությամբ ազատագրվելու գաղափարին՝ ընդհուպ մինչև ցարիզմի նվաճողական քաղաքականության աջակցի դերի ստանձնումը։

Գիտակցելով որ ցարիզմը Հայաստանը նվաճելով, երբեք էլ նրան անկախություն տալու քնքշության չի գնա, Արծրունին ենթադրում էր, որ դրանով անտարակույս հայ ժողովուրդը գեթ կփրկվի ֆիզիկական ոչնչացումից։

1876 թ. դեկտեմբերին Գր. Արծրունու նախաձեռնությամբ, 9 մարդուց կազմված մի պատվիրակություն, վրաց քաղաքական գործիչ, Թիֆլիսի այդ ժամանակվա քաղաքագլուխ Դ. Կիպիանու ղեկավարությամբ այցելում է փոխարքային և նրան հանձնում Թիֆլիսի հայ ազգաբնակչության ուղերձը, խնդրելով միջնորդել ցարի առջև՝ Թուրքիայի մյուս քրիստոնյաների հետ հավասար պաշտպանելու նաև արևմտահայ ժողովրդի դատը[62]։

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ իրենք արևմտահայերն էլ հանդես էին գալիս թուրքական տիրապետությունից ազատագրվելու ծրագրերով և կաթողիկոսին գրած խնդրագրերում հորդորում նրան զբաղվել իրենց վիճակի բարելավման հարցով։ Կ. Պոլսից չորս հազար անձանց ստորագրությամբ ուղարկված այդ նամակներից մեկում նրանք հայտնում էին, որ հակառակ դեպքում ստիպված կլինեն գերության անտանելի լուծը թոթափել «...հեղամբ արյամբ մերոյ»[63]։

---

61 «Մշակ», 1876, № 28։

62 Տե՛ս «Մշակ», 1876, № 48։

63 Մատենադարան, Կաթողիկոսական դիվան, թղթ. 228, վավ. 23։

Արևմտահայ ազատախոհ փիլիսոփան՝ Եղիա Տեմիրճիպաշյանը վհատված ժողովրդին հուսադրում ու մատնացույց էր անում «այն արշալույսը, որ կճառագայթեր Մասիսի գագաթին վրա...»[64]։

Իր հերթին հակառակ շարժում էր բորբոքվում Թուրքիայում, երկրի տնտեսական անկախությունը վերականգնելու, մասնատումը կանխելու և կայսրության փոքր ժողովուրդների ընդվզումները խեղդելու նշանաբանով, որի կարևորագույն հրաշխիքը համարվեց «Նոր օսմանների» ծրագիրն ու նրանից բխող, բայց անգլիական խոհանոցում թխված այն սահմանադրությունը, որ հրապարակվեց 1876 թ. և կոչվեց նրա ամենանշանավոր հեղինակներից մեկի՝ Միդհատ փաշայի անունով։

Անգլիայի արևելյան քաղաքականության տարեգրությունը շաղախված է բանսարկությունների ու պետական հեղաշրջումների կազմակերպման բազմահմուտ փորձերով։ Ժամանակին ֆրանսիական մի դիվանագետ ճշմարտացի նկատել է, որ Օսմանյան կայսրությունը փրկելու համար 1875—1876 թթ. ողջ ձմեռը անցկացվող խորհրդակցություններն ու որոնումներն անգլիական դիվանագիտությունը կանգնեցրին սահմանադրության անհրաժեշտության վրա, որի խմբագրումն էլ հանձնարարվեց ֆրանսիացի իրավագետ Բարդանին[65]։

Իրենց ազատության համար ոտքի ելած հերցոգովինցիներին «ավազակներ» անվանող «Նոր օսմանների» պարագլուխ, սահմանադրության հեղինակ նույն Միդհատ փաշայի և Հուսեյն Ավնիի առաջարկով 1876 թ. թուրքական նոր կառավարությունը որոշում ընդունեց ամենախիստ միջոցներով ճզմել բուլղարական շարժումները, քանդել բուլղարական քաղաքներն ու գյուղերը, ոչնչացնել մտավորականությանը, առաջին հերթին Ռուսաստանում ուսած բոլոր ուսուցիչներին[66]։

Դարձյալ Միդհատ փաշան էր, որ Դանուբյան վիլայեթի իր կուսակալության շրջանում, արյան մեջ խեղդելով բուլղար

64 «Փունջ», (Կ. Պոլիս), 1877, 10 մարտի

65 «Русская старина», 1896, май, էջ 275։

66 Ю. Петросян, «Новые османы...», էջ 97—98։

ժողովրդի հազարավոր զավակներին, հրի ու ավերման ենթարկեց նրանց բնակավայրերն ու արժանացավ «բուլղարասպան» անվան։

1876 թ. դեկտեմբերի 19-ին Միդհատը նշանակվեց մեծ վեզիր, իսկ դեկտեմբերի 11/23-ին 101 հրանոթների համազարկով ազդարարվեց 113 կետից կազմված օսմանյան խաբեությունը՝ սահմանադրության պիտակով։ Այդ ժամանակաշրջանն ուսումնասիրող խելամիտ մի պատմաբան ծաղրով նկատում է, որ Թուրքիայում ֆրանսիական մեծ հեղափոխության սկզբունքները հիշակող պառլամենտարիզմի կատակը ինչ-որ շատ հեռու էր գնում և անգամ այդ կատակի հեղինակ Բիկոնսֆիլդը հազիվ էր կարողանում լուրջ դեմք պահպանել[67]։

Միդհատյան սահմանադրության մեջ ոչինչ անկեղծ չկար։ Այն չէր արտահայտում նույնիսկ տիրող դասակարգերի շահերը։ Զարդարված լինելով փքուն ու ճոճուն ֆրազներով, Միդհատյան սահմանադրությունը չհասկացվեց Թուրքիայի ազգաբնակչության մեծ մասի, անգամ թուրքական խղճուկ բուրժուազիայի կողմից, որը հետագայում այն պահել իսկ չկարողացավ։

Սահմանադրության մեջ հոխորտացող պանիսլամիզմը, որպես օսմանյան միաձույլ ազգի ստեղծման ահազանգ, իրենից հեռու վանեց նաև Թուրքիայի օտարազգի բուրժուազիային, որը նրա մեջ սարսռալով նշմարեց ազգության կորստի մեծագույն վտանգը։

1876 թ. թուրքական սահմանադրությունը, վանեցի հայ դեմոկրատ մտավորական, «Պանդուխտ վասպուրականցին» երգի հեղինակ Տիգրան Ամիրճանյանը տեղն ու տեղը որակել էր խաբեություն, իսկ ավելի ուշ մարգարեաբար գուշակել, որ եթե երիտասարդ թուրքերը ամբողջությամբ և ամենուրեք իշխանությունն իրենց ձեռքը վերցնեն «...ծեր կամ հավատացյալ թուրքերու կրոնական խիղճը չունենալով՝ անխնա պիտի կոտորեն հայ ազգը, եթե երբեք իրենց օրով ընդ-

---

67 А. Дебидур, Дипломатическая история Европы, հատ. 2, Москва, 1947, էջ 466։

համար եվրոպական պատերազմ մը ծագի և իրենց պատե-հություն տրվի հայ տարրը բնաջնջելու, որպեսզի գեթ ասիա-կան գավառները խալիս թուրքացնելով իրենց մնա»[68]։

Հավանաբար սրտի խորքում հենց այդ ի նկատի ուներ նաև Միդհատ փաշան, երբ սուլթանին ուղղած իր հայտնի հրաժարականում գրում էր, թե ինքը և իր կողմնակիցներն աշխատում են «պետության հիմքը նորոգել»[69]։

Հուսանք, որ այդպես չէին մտածում ոչ Միդհատի գոր-ծակից Գր. Օտյանը, ոչ էլ «հին դարերու թրուպատուր»-ը՝ Թովմաս Թերզյանը, սահմանադրության առթիվ գրած իր ներ-բողում «Ազատարար» կոչելով Միդհատ փաշային։ Իսկ ավելի ուշ, մի այլ մոլորյալ արևմտահայության ոսկե գրիչը որո-նում էր «համաթուրանական ապագայի ծոցում»[70]։

* * *

1876 թ. թուրքական սահմանադրությունն ազդարարող հրանոթների համազարկի տակ ձախողվեց Կ. Պոլսում հրա-վիրված դեսպանախորհուրդը, որը Բ. Դռնից պահանջում էր ստորագրել Օսմանյան կայսրության եվրոպական մասի ապստամբ քրիստոնյա ազգաբնակչության վիճակը բարելա-վելու միջոցառումների ծրագիր։

Կոնֆերանսում Թուրքիան ներկայացնող և նիստում նա-խագահող Սաֆվետ փաշան շտապեց հայտարարել, թե քանի որ ընդունված սահմանադրությամբ Թուրքիան դադարում է բռնապետական երկիր լինելուց ու բարեկարգություններ են ձեռնարկվելու տերության բոլոր հպատակների համար, ուստի միայն քրիստոնյաների վիճակը բարելավել նախատեսող մի-ջոցառումները, ինքնըստինքյան, կորցնում են իրենց իմաստը։

Կ. Պոլսի դեսպանախորհուրդը ձախողվեց, հանգեցնելով ռուս-թուրքական պատերազմի բացարձակ նախապատրաստ-մանն ու սանձազերծմանը։

---

68 Տե՛ս Հ. Նրամյան, Հուշարձան, հատ. 1, էջ 332։

69 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրու-թյունը Թուրքիայում, էջ 171։

70 Բ. Իշխանյան, Թուրքիայի ապագան, էջ 60։

Արևելյան, ավելի ճիշտ Մերձավոր արևելյան հարցը, որ բորբոքվել էր հատկապես Ղրիմի պատերազմի շրջանում, առավել սրվեց այդ պատերազմից հետո և ճգնաժամի վերածվեց մանավանդ 1875—1876 թթ., երբ բալկանյան ժողովուրդները կիսալուսինը ոտքի տակ ջարդող առյուծի պատկերներով դրոշներ առած՝ ապստամբեցին թուրքական տիրապետության դեմ։ 1877 թ. այդ ճգնաժամը պայթեց որպես ռուս-թուրքական պատերազմ։

1875 թ. ամռանը ապստամբեցին Հերցոգովինան, ապա Բոսնիան, 1876 թ. գարնանը՝ Բուլղարիան։

— Եթե հրանոթ ու հրացան չկա, ժողովուրդը թող մահակներով ելնի պայքարի. — կոչ էր անում բուլղարական հեղափոխական կոմիտեն[71]։ Նրա որոշմամբ, դեռ պատերազմից առաջ, Գեորգի Բենկովսկու ղեկավարությամբ, գաղտնի Կ. Պոլիս ուղարկվեց «հրձիգների» մի ջոկատ, Օսմանյան կայսրության մայրաքաղաքը հրդեհելու համարձակ դիտավորությամբ, որն իրագործել, սակայն, չհաջողվեց՝ 1875 թ. աշնանը նախապատրաստվող ապստամբությունը ձախողվելու պատճառով[72]։

Անգլիայի թողտվությամբ, որն հրաժարվեց ստորագրել Ռուսաստանի, Ավստրո-Հունգարիայի և Գերմանիայի միջև 1876 թ. մայիսի 13-ին կնքված՝ Օսմանյան կայսրության քրիստոնյա ազգաբնակչության և իրենց քաղաքացիների անվտանգությունը պահպանելու մասին Բեռլինի հուշագիրը, բալկանյան ժողովուրդների զինավառ ընդվզումները ճնշվեցին արյան մեջ, կուսակցական պայքարի զենք տալով գլադըստոնին՝ բուլղարական սարսափների հեղինակ, անգլիական կառավարության հովանավորյալ ջարդարար թուրքերին որակելու «մարդկության հակամարդկային տեսակը»։

1876 թ. բալկանյան ժողովուրդների ազատագրական

---

71 Տե՛ս «История Болгарии», հատ. 1, էջ 280։

72 Տե՛ս З. Стоянов, Записки о болгарских восстаниях, էջ 157—158։ 90-ական թվականներին նման հանդուգն առաջարկով հանդես եկավ Բարկեն Սյունին, որը չընդունվեց նրա ընկերների կողմից։

շարժումները ղեկավարելու դժվարին գործը ստանձնել էր սլավոնական ազգային-հեղափոխական «Օմլադինա» կազմակերպությունը, որը, սակայն, չափազանց թույլ գտնվեց այդ ահեղաշունչ պայքարի կազմակերպման համար։ Իրեն առավել գործնական դրսևորեց ռուսական մեծապետական քաղաքականության մոլի կողմնակից, Կ. Պոլսի դիվանագիտական կորպուսի ավագ, ցարական դեսպան Իգնատևը, որն հանդիսանալով հատկապես այդ շրջանում տենդորեն ծավալված սլավոնական շարժման ակտիվ ու ղեկավար գործիչներից մեկը, գաղտնի նախապատրաստում ու պատերազմի էր հրահրում սերբերին Թուրքիայի դեմ, կանխատեսելով ու նպաստելով Ռուսաստանի ապագա զինված միջամտությունը։ Նա իշխան Միլանին ու նրա խորհրդականներին հավատացնում էր, որ սերբ-թուրքական պատերազմի դեպքում Ռուսաստանն անպայման կմասնակցի, որպես սերբերի դաշնակից։ Իսկ երբ սերբերը դիմում են Ալեքսանդր II-ին և ստանում այլ պատասխան, Իգնատևը հանգստացնում էր նրանց, թե ինչ էիք կարծում, ցարը, իհարկե, ձեզ չէր հայտնի իր գաղտնի ցանկությունները, դուք սկսեցեք պատերազմը և Ռուսաստանը կհետևի ձեզ[73]։ Այդ ուղղությամբ տարվող աշխատանքներին Իգնատևն ավելի ներգործուն բնույթ տվեց ռուսական կողմնորոշում ունեցող մեծ վեզիր Մահմուդ Նեդիմ փաշայի հրաժարականից հետո (1876 թ. մայիս), որը նշանակում էր անգլիական ազդեցության ուժեղացում և հիմքից խախտում էր Ռուսաստանի քաղաքական դիրքը Թուրքիայում։

1876 թ. հունիսի 30-ին Սերբիան պատերազմ հայտարարեց Թուրքիային։ Նրան միացավ Չեռնոգորիան։

Սերբական բանակի շարքերում կռվում էին ավելի քան չորս հազար ռուս կամավորներ, իսկ բանակի ընդհանուր հրամանատար էր նշանակված ռուսական ձախողակ մի զինվորական՝ գեներալ Չերնյաևը։

Հրաժարվելով Կ. Պոլիսը և նեղուցները խաղաղ ճանապարհով գրավելու իր նախկին մտադրությունից, Ռուսաստա-

---

73 Տե՛ս М. И. Покровский, Дипломатия и войны царской России в XIX в., М., 1924, էջ 259։

նը, որն իրեն համարում էր Օսմանյան «մեռնող կայսրության» միակ օրինական ժառանգը, այժմ ցանկանում էր զենքի ուժով գրավել այն, ինչպես նաև Թուրքիան մասնատել ազգային այնպիսի մանր «իշխանությունների», որոնց գոյությունը կախված կլիներ ռուսական ցարերի մատի շարժումից։ Դրանով նա նախապատրաստում էր իր գալիք առաջխաղացումն Արևելքում, միաժամանակ սպառնում Անգլիայի հնդկական տիրապետությանը։ Եվ երբ Բուլղարիան հետագայում լիովին չդարձավ այն, ինչ ցարական դիվանագիտությունը, այդ յուրօրինակ «ճիզվիթական օրդենն» (Էնգելս) էր ցանկանում ու նախապատրաստում, իրենց «բրատուշկաներին» ռուսական պալատներում սկսեցին կոչել «երախտամոռներ»։

Դիպուկ է ասված, որ միջազգային դիվանագիտության մեջ չկա մի հարց, որի լուծման գործում Եվրոպան այնպիսի անճարակություն հանդես բերած լինի, ինչպիսին հանդես բերեց Արևելյան հարցում։ Բայց դույզն այդ ոչ թե անճարակություն, այլ դիտավորյալ խառնաշփոթում էր, որը ստեղծում էին մեծ տերությունները Թուրքիայի «ստատուս քվոն» այդ «հնամաշ դիպլոմատիական լաթը... Թուրքիայի անբաժանելիության այդ հին ֆիլիստերական տխմարությունը» (Էնգելս) պահպանելու համար։ Այն «ստատուս քվոն», որն Օսմանյան կայսրության քրիստոնյա հպատակների համար նշանակում էր հավերժացնել Թուրքիայի կողմից նրանց նկատմամբ եղած դարավոր ճնշումը[74]։ Օգնել Թուրքիային, որպեսզի նա չկործանվի և նրա կողմից ստրկացված հայ, սլավոն ու հույն ժողովուրդները զրկվեն իրենց «քաղաքակիրթ հոգեբարձուից»[75]։

Դեռ XVII դարի ֆրանսիական նշանավոր քաղաքագետ Կոլբերը օսմանյան պետությունն անհրաժեշտ էր համարում Եվրոպայի հավասարակշռությունը պահպանելու համար[76]։ Իսկ Մոնտեսքյոն, իր «Մտորումներ հռոմեացիների մեծության ու անկման պատճառների մասին» աշխատության մեջ,

---

74 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения. հատ. 9, էջ 31։

75 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1950, հատ. 3, էջ 89։

76 Th. Lavallee, Histoire de l'Empire Ottoman, Paris, 1855, էջ 324։

այդ առնչությամբ գրում էր. «Թուրքական կայսրությունն այժմ գտնվում է համարյա այնպիսի թույլ վիճակում, որում մի ժամանակ գտնվում էր հունականը. բայց և այնպես նա երկար գոյություն կունենա: Որովհետև եթե որևէ իշխող, իր նվաճումների ժամանակ վտանգի այդ կայսրությունը, Եվրոպայի երեք առևտրական պետությունները շատ լավ գիտակցելով իրենց շահերը, անմիջապես հանդես կգան նրա պաշտպանությամբ: Այդ արդեն մի քանի ազգերի բախտից է, որ աստված թույլ է տվել նրանց անօգուտ տիրելու մեծ կայսրություններին»[77]:

Թուրքիայի ժառանգության հարցը չկարողացավ լուծել անգամ այնպիսի գործունյա նվաճող, ինչպիսին Նապոլեոնն էր: Կ. Պոլիսը խոչընդոտ դարձավ նրա և Ռուսաստանի միջև, և Օսմանյան կայսրությունը կարողացավ պահպանել իր գոյությունը:

Ռուսաստանի համար Կ. Պոլսի կենսական նշանակությունը գիտակցում էին նաև իրենք՝ թուրք գործիչները, ուստի զգում պատրաստակամության այն ահավոր չափերը, որով Ռուսաստանը շարունակում էր Կ. Պոլիսն ու նեղուցները նվաճելու համար ձեռնարկած իր ջանքերը: «Եթե ես ինքս ռուս մինիստր լինեի, — գրում էր Ֆուադ փաշան, — ես տակն ու վրա կանեի ամբողջ աշխարհը՝ Կ. Պոլիսը գրավելու համար»[78]:

Օսմանյան կայսրության ժառանգությունը վիճարկող երկրները վաղուց էին դրել Թուրքերին Եվրոպայից քշելու խնդիրը և ահա 1875 թ. սկսված ճգնաժամով այդ հարցը նորից մտնում էր օրակարգ: Բայց եվրոպական երկրները չէին ցանկանում Թուրքերին Ասիա քշել հօգուտ Ռուսաստանի, ուստի նրա կողմից Պոլսի գրավումն արգելելու, Թուրքիային նրա դեմ պաշտպանելու նպատակով միավորվեց ողջ Եվրոպան:

Այդ հարցադրումը չէր շոշափում նաև հայ ժողովրդի շահերը, և եթե շոշափվում էր, ապա միայն բացասական իմաստով:

77 Ш. Монтескье, Избранные произведения, Москва, 1955, էջ 132:
78 Տե՛ս «Մշակ», 1896, № 142:

1876 թ. ռուսերեն լեզվով գրած իր «Արևելյան հարցը» գրքույկում Գր. Արծրունին ըմբոստանում էր այդ հարցադրման դեմ, բացատրելով, որ այն Արևելյան հարցը չի լուծում բնավ, որ Թուրքիայի բռնապետության տակ ճնշվում են ոչ միայն եվրոպական, այլև ասիական ազգեր[79]։ Կարծես աշխարհի բաժանման ու վերաբաժանման համար միմյանց հոշոտող կապիտալիստական խոշոր երկրներն Արևելյան հարցի լուծումը փոքր ազգերի ազատագրման մեջ էին տեսնում։

Արևելյան ճգնաժամը վերացնելու, Բոսնիայում, Հերցոգովինայում ու Բուլղարիայում բարենորոգումներ կատարելու նպատակով Կ. Պոլսում 1876 թ. դեկտեմբերին հրավիրված դեսպանաժողովն, ինչպես տեսանք, ձախողվեց։ Անգլիայի առաջարկով գումարված այդ կոնֆերանսը, որի հրավիրմանը նա գնաց տեղի տալով Ալեքսանդր II-ի՝ Արևելյան ճգնաժամը լուծելու համար որևէ միջոցառում ձեռնարկելու վճռական պահանջին, տապալվեց նույն անգլիական դիվանագիտության ճարպիկ մի խաղով։

Մեծ տերությունների հակասությունների պողպատյա լարի վրա անմրցակից խաղացող մուսուլման-ֆանատիկ սուլթան Աբդուլ Համիդը, այդ խորամանկ, խաբեբա, քաղցր դիմակը (Ամֆիտեատրով), մերժեց կոնֆերանսի մասնակիցների առաջարկությունը, թեպետ համոզված, որ մերժումը կբերի անխուսափելի պատերազմ Ռուսաստանի հետ։ Այդ քայլին նա անշուշտ չէր դիմի, եթե հույս չուներ Անգլիայի աջակցության վրա։ Կոնֆերանսում Անգլիայի պատվիրակ, հնդկական գործերի մինիստր Սոլսբերիի հայտարարությունը, թե ինքը պատրաստ է մյուս պետությունների ներկայացուցիչների հետ հետևողականորեն պայքարել բարենորոգումների ծրագրի ընդունման համար, ամենևին չխանգարեց Անգլիայի պրեմիեր-մինիստրի պոստում 1874 թ. Գլադստոնին փոխարինած լորդ Բիկոնսֆիլդին, ուղիղ գծով թելադրել Կ. Պոլսի անգլիական դեսպան Էլիոտին, որը Կ. Պոլսում իրեն դրսևորեց որպես զավթիչ ու պետական հեղաշրջումների կրքոտ

79 Г. Арцруни, Восточный вопрос, Тифлис, 1876, էջ 6։

*խաղավար, թե ինչպես պետք է թուրքերին սովորեցնել, հարմար ձևով տապալելու կոնֆերանսը։ Միաժամանակ նա Լոնդոնում թյուրիմացության մեջ գցեց ռուսական դեսպան Շուվալովին, որն հեռագրում էր իր կառավարությանը, թե իբր բրիտանական պրեմիերը տեղյակ է պահել Միդհատ փաշային, որ կոնֆերանսը ձախողվելու դեպքում հույս չդնեն Անգլիայի վրա*[80]*։*

*Մինչդեռ ինքը Միդհատն հետագայում խոստովանում է, որ սուլթանը երբեք չէր կարող մերժել Կ. Պոլսի կոնֆերանսի մասնակիցների առաջարկները՝ Ռուսաստանի դեմ պատերազմ չսկսելու, եթե հույս չկապեր Անգլիայի պաշտպանության հետ*[81]*։*

*Այդ օրերին Կ. Պոլսի «Թատրոն» թերթում երևաց խիստ տիպական մի նկար. հեռվում երևացող հյուսիսային արջի առջև երախը բաց կանգնել էր բրիտանական առյուծը, իր մարմնի մեծությամբ ծածկելով և պաշտպանելով Թուրքիային։ Ինչ խոսք «բեխի տակ կխնդար» Արիստոմ աղայի հայտնագործողը, երբ նկարի տակ գրում էր. «Այս պատկերին իմաստը մենք ալ չկրցանք հասկնալ»*[82]*։*

*Անգլիան, Օսմանյան կայսրությունը դիտելով որպես Ռուսաստանի դեմ պայքարելու լավագույն միջոց, նպատակամղված էր օգնել Թուրքիային՝ ձախողելու դեսպանախորհուրդը և փոխարեն նրանցից կորզելու՝ Կ. Պոլիսը, իր շրջակայքով, Անգլիայի պաշտպանության տակ «չեզոք» նավահանգստի վերածելու համաձայնությունը*[83]*։ Քիչ ուշ Դերբին արդեն սարսափով էր խոսում «Կոստանդնուպոլսի դարպասների առջև» ինքնավար Բուլղարիա ստեղծելու հնարավորության մասին։*

*Հատկանշական է նաև Գերմանիայի դիրքը, որը Բիսմարկի բերանով, դեռ ֆրանս-պրուսական պատերազմի ա-*

---

80 *Տե՛ս* «Дневник Д. А. Милютина», Москва, 1947—1950, *հատ. 2, էջ 127։*

81 *Տե՛ս* Малькольм-Макколль, Султан и державы, СПБ, 1897, *էջ 75։*

82 *«Թատրոն», 1877, № 228։*

83 «История дипломатии», М., 1963, *հատ. 2, էջ 98։*

վարտից անմիջապես հետո, չքաշվելով հայտարարել, թե Եվրոպան հանձին Գերմանիայի տեսնում է խաղաղության ընդհանուր պատվար[84], միաժամանակ փորձելով ճարպիկ խաղով Ռուսաստանին հրել պատերազմի Թուրքիայի, իսկ եթե հնարավոր է անգամ Անգլիայի հետ։ Մանավանդ Էլզաս-Լոթարինգիայի պահպանման ռուսական երաշխիքի մերժումը Բիսմարկին մղում էր Ֆրանսիան չեզոքացնելու և առանձնակի խեղդելու իր պլանների ծավալմանը։ Ուստի Գերմանիան ոչ միայն շահագրգռված չէր Կ. Պոլսի կոնֆերանսի դրական արդյունքով, այլ նույնիսկ հետամուտ էր նրա ձախողմանը։

Իսկ Կ. Պոլսի ֆրանսիական դեսպան Բուրգոենը իր կառավարությունից ստացել էր ուղղակի ցուցում, որ բարենորոգումների հարցը իրենց համար ոչ մի նշանակություն չունի, իրենք շահախնդիր են միայն ռուս-թուրքական պատերազմի կանխումով, որովհետև այդ պատերազմի դեպքում Ֆրանսիան այս կամ այն կերպ ստիպված կլինի մասնակցել նրան, կամ իրեն միայնակ կտեսնի հենց այդ նպատակով ռուս-թուրքական պատերազմը հրահրող բիսմարկյան Գերմանիայի առջև։

1877 թ. հունվարի սկզբներին ռուսական կառավարությունը, Իգնատևի միջոցով, խնդրեց ֆրանսիական կառավարությանը՝ ֆրանսիական նավատորմը մասնակից դարձնել եվրոպական երկրների կողմից Թուրքիայի դեմ նախատեսվող ռազմական ցույցին։ Բայց ֆրանսիական կաբինետը, չնայած Ռուսաստանի հետ այդ շրջանում վարած սիրաշահ քաղաքականության, վճռականապես հրաժարվեց։ Այդ առթիվ Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Դեկազը Կ. Պոլսի իր դեսպանին գրում էր. «Ոչ մեր նավատորմը, ոչ մեր ցամաքային ուժերը չեն մասնակցի այդ ցույցերին... Գեներալ Իգնատևի մոտ այդ առնչությամբ ոչ մի պատրանք չթողնեք»[85]։

---

84 Տե՛ս «История XIX века», հատ. 7, էջ 254։

85 А. З. Манфред, Внешняя политика Франции 1871—1891 гг., М., 1952, էջ 200։

Ինքը՝ Իգնատևը, սահմանադրության հռչակումից մի քանի օր անց, հեռագրում էր իր կառավարությանը, թե «Դրությունը օրը օրին դառնում է ավելի լուրջ, թուրքերն աշխատում են ժամանակ շահել... Եվ եթե մենք իրոք պահանջենք զինադադար մինչև ապրիլի մեկը, կասկածելի է թե թուրքերը կհամաձայնվեն... Նրանք պատրաստ են ավազակաբար հարձակվել ու ջախջախել Չեռնոգորիան ու Սերբիան»[86]։

Դեռ կոնֆերանսի բացումից ավելի քան երկու ամիս առաջ Ռուսաստանի ռազմական մինիստր Դ. Միլյուտինը հավաստիացնում էր, որ ոչ ոք չի հավատում այդ կոնֆերանսի դրական արդյունքին։ Ապա արտահայտելով ռուսական պաշտոնական շրջանների կարծիքը, նա իր օրագրում որոշակիորեն նշում էր, որ եթե Անգլիան չհրաժարվի Ռուսաստանի կողմից Բուլղարիան գրավելու նկատմամբ ունեցած իր բացասական դիրքորոշումից, ապա ճգնաժամը կհանգի պատերազմի[87]։

Կոնֆերանսի ձախողումից (8/20 հունվարի 1877 թ.) հետո մեծ տերությունները ետ կանչեցին Կ. Պոլսի իրենց դեսպաններին, բայց դիվանագիտական հարաբերությունները Թուրքիայի հետ չխզվեցին։ Դեսպաններին փոխարինեցին ժամանակավոր հավատարմատարները։ Մինչև 1877 թ. ապրիլին Կ. Պոլիս ժամանեց անգլիական նոր դեսպան Օստին Հանրի Լեյարդը՝ Նինվեի 1845 թ. — 1850 թ. հայտնի հնագետը[88]։ Իսկ մի քանի օր անց հայտնի դարձավ գերմանական կառավարության՝ Ռուսաստանի համար բավական անհաճ որոշումը՝ Պետերբուրգի նախկին դեսպան Ռեյսին Կ. Պոլսում դեսպան նշանակելու մասին, որին անմիջապես հետևեց Ավստրիան, որպես դեսպան Թուրքիայի մայրաքաղաք ուղարկելով կոմս Զիչիին։

Բիսմարկն շտապեց իր քայլն արդարացնել նրանով, որ

86 «Дневник Д. А. Милютина», հատ. 2, էջ 226։

87 Նույն տեղում, էջ 95։

88 Նինվեում նա հայտնաբերեց Աշուրբանիպալի (668—631 թթ. մ. թ. ա.) նշանավոր գրադարանը։

այլապես Կ. Պոլսում Եվրոպան կներկայացներ միայն թուրքամոլ Լեյարդը:

Ալեքսանդր II-ի վրա հավանաբար խիստ էր ազդել 1876 թ. աշնանը Լիվադիայի խորհրդակցության ժամանակ ֆինանսների մինիստր Ռեյտերնի հայտարարությունը, թե պատերազմը Ռուսաստանին կկանգնեցնի ֆինանսական կրախի և պետական սնանկացման առջև, ուստի նա դեռ տատանվում էր պատերազմ հայտարարել: Պատերազմը չէր հրապուրում նաև ռազմական մինիստր Միլյուտինին, որի կարծիքով այն Ռուսաստանի համար մեծ դժվարություններ կստեղծեր:

Սակայն ռուս-թուրքական պատերազմն արդեն դարձել էր անխուսափելի: 1876 թ. ամռանը Ռեյխշտադտում տեղի ունեցավ Ավստրո-Հունգարիայի և Ռուսաստանի միապետների հանդիպում, ուր Ավստրո-Հունգարիան, որտեղ ապրում էին մի քանի միլիոն սլավոններ, համաձայնվեց չեզոք դիրք գրավել ռուս-թուրքական առաջիկա պատերազմում, և որպես փոխհատուցում, 1877 թ. մարտին, ստացավ Ռուսաստանի համաձայնությունը՝ արգելք չհանդիսանալ նրա կողմից Բոսնիայի և Հերցոգովինայի գրավմանը[89]: Իհարկե, ոչինչ չխանգարեց Ալեքսանդր II-ին այդ գործարքի ընթացքում, 1876 թ. աշնանը, Ռուսաստանում գերմանական զինվորական ներկայացուցիչ Վերդերի միջոցով հարցնելու Բիսմարկին, թե Ռուսաստանի և Ավստրո-Հունգարիայի միջև պատերազմ ծագելու դեպքում ինչ դիրք կգրավի Գերմանիան: Բիսմարկը շտապեց հասկացնել, թե ինքը թույլ չի տա, որ Ռուսաստանը ջախջախի Ավստրիային[90]:

Վեց տերությունների ներկայացուցիչների Լոնդոնի խորհրդակցության մարտի 31-ի որոշումը, որով հիշեցվում էր թուրքական կառավարությանը քրիստոնյա ազգաբնակչության համար բարենորոգումներ կատարելու անհրաժեշտության մասին, ապրիլի 12-ին, Անգլիայի օգնության հույսով, դուրս

89 Ю. В. Ключников и Андрей Сабинин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, М., 1925, հատ. 1, էջ 217—218:

90 «Дневник Д. А. Милютина», հատ. 2, էջ 115:

և զաղանի թելադրությամբ, մերժվեց Բ. Դռան կողմից, որպես Թուրքիայի ներքին գործերին միջամտելու փորձ: Պատերազմի վերջում, երբ Օսմանյան կայսրությունն արդեն ծնկի էր եկել ու հաշտություն էր հայցում, Թուրքիայի արտաքին գործերի մինիստր Սերվեր փաշան հրապարակայնորեն մեղադրեց անգլիական կառավարությանը պատերազմի պատասխանատվության մեջ[91]:

Բիսմարկը, որն իրեն պահում էր որպես անխմանալի սֆինքս, չարախնդությամբ դիտում և հաճույքից խնդում էր խաղաքարտերը: Նա չվարանեց 1877 թ. մարտին Բեռլինում գտնվող Իգնատևին համոզել, որ պատերազմը Ռուսաստանի համար կենսական անհրաժեշտություն է, և որ իր կառավարությունը թույլ չի տա Ռուսաստանի դեմ որևէ կոալիցիա, ամեն կերպ կթեթևացնի ռուսական զորքերի մատակարարումը և նույնիսկ կօգնի փոխառության հարցում[92]: Իսկ քիչ ուշ նա ստիպված էր հերքել ռուսների կողմից իրենց «գերմանական բարեկամի անհավատարմության» մասին նետած մեղադրանքը, ասելով, թե ինքը խոստացել էր ոչ այլ ինչ, քան բարյացկամ չեզոքություն միայն[93]:

Ռուսաստանն այդ պատերազմին նախապատրաստվել էր հանգամանորեն: «Համարձակ կարող եմ ասել, որ դեռ երբեք Ռուսաստանի ռազմական ուժերը չեն եղել այդպես նախապատրաստված պատերազմի, ինչպես այժմ» — գրում էր Ռուսաստանի ռազմական մինիստր Դ. Միլյուտինը դեռ 1876 թ. կեսերին: Միաժամանակ նշելով, որ նախապատրաստված լինելը չպետք է շփոթել պատրաստ լինելու հետ, որովհետև որքան էլ նախապատրաստված, բայց Ռուսաստանը պատրաստ չէր պատերազմի[94]:

Պատերազմին տենդով պատրաստվում էր, հատկապես

---

91 **Малькольм-Макколь**, Султан и державы, էջ 122:

92 **Н. П. Игнатьев**, Поездка графа Н. П. Игнатьева по европейским столицам перед войной 1877—1878 гг. («Русская старина», 1914, № 3, էջ 502):

93 **О. Бисмарк**, Мысли и воспоминания, М., 1940, հատ. 2, էջ 194:

94 «Дневник Д. А. Милютина», հատ. 2, էջ 65:

Կ. Պոլսի կոնֆերանսի ձախողումից հետո, նաև Թուրքիան։ Սակայն ռուսական բանակի մարտունակությունը, չնայած խոշոր թերություններին, շատ ավելի բարձր էր, քան թուրքական բանակինը, որի միակ առավելությունը, թերևս, Կրուպի հրանոթներով և ամերիկյան Պիբոդի-Մարտինի ու անգլիական Սնայդեր սիստեմի հրացաններով զինված լինելն էր. և այն հանգամանքը, որ թուրքական բանակում ծառայում էին մեծ թվով օտարերկրյա զինվորական մասնագետներ։

Բայց չպետք է մոռանալ, որ եթե պատերազմը սկսելիս թուրքերը ամենածայրահեղ դեպքում կարողացան զենքի տակ հավաքել միայն 494 հազար մարդ, որի 1/3-ը անպատրաստ էր, ապա Ռուսաստանը սկսելով պատերազմը, ձեռքի տակ ուներ լրիվ վարժեցված 1.474.000 զինվոր[95]։

Թուրքական զինվորների ռազմական կրթության պակասի և սպայական կազմի՝ ռուսների համեմատ խիստ անհրամուտ լինելու մասին էր հիշում նաև Ա. Աճեմյանը, դեռևս 1879 թ. հրատարակած, պատերազմին նվիրված իր գրքում[96]։

1877 թ. ապրիլին, Ռումինիայի հետ կնքած դաշնագրով ապահովելով նրա մասնակցությունը պատերազմին, Ալեքսանդր II-ը ապրիլի 12/24-ին, նույն օրը, երբ սկսվել էր 1828 թ. ռուս-թուրքական պատերազմը, ստորագրեց պատերազմական մանիֆեստը, իրեն ներկայացնելով որպես մի նոր փրկիչ, որի ուսերին ընկած էր հարստահարվող քրիստոնյաների ազատագրման ծանր բեռը։

Սակայն սրբազան պատերազմ հայտարարելով Թուրքիային ռուսական ցարիզմը «քրիստոնյա հարստահարյալ ժողովուրդներին փրկելու համար» չէր, որ թափում էր ռուս ժողովրդի արյունը, ինչպես դեռ այն ժամանակ, արձագանքելով, իսկ երբեմն էլ կանխելով ռուսական «հարձակողա-

95 М. Н. Покровский, Дипломатия и войны царской России в XIX в., М., 1924, էջ 259։

96 Ա. Աճեմյան, Պատմություն Արևելյան պատերազմի, հատ. Ա, Կ. Պոլիս, 1879, էջ 68։

կան» մամուլին, գրում էր Գր. Արծրունին, իսկ ավելի ուշ Ս. Ալպոյաճյանը և շատ ուրիշներ[97]։

Խիստ հետաքրքրական է այդ տեսակետից Մոսկվայի սլավոնական կոմիտեի նախագահ Իվան Աքսակովի, սլավոնաֆիլների ժողովներից մեկում արտասանած ճառը, որն ավարտվում է հետևյալ խոսքերով. «Թուրքիայի մեր եղբայրները պետք է ազատագրվեն, Թուրքիան պետք է դադարի գոյություն ունենալուց, Ռուսաստանը իրավունք ունի գրավելու Կ. Պոլիսը, **քանի որ նեղուցների ազատությունը նրա համար կենսականորեն անհրաժեշտ է**» (ընդգծումը մերն է — Ռ. Հ.)[98]։

Պատերազմ հայտարարելով, Ռուսաստանը ցանկանում էր նաև կանխել ինչպես բալկաններում իր վարկի անկումը, այնպես էլ ներքին հեղափոխական շարժումները։

Այդ պատերազմը սկսվեց հանուն ռուսական իշխող դասակարգերի շահերի։ Ուստի այն նվաճողական, անարդարացի պատերազմ էր։ Բայց պատերազմի օբյեկտիվ նշանակությունը առաջադիմական էր, որովհետև այն հասցրեց թուրքական բարբարոսական լծից բուլղար ժողովրդի ազատագրմանը։

«Մարքսիստական գրականության մեջ, — իրավացիորեն գրել է Վ. Կոսարովը, — Լենինն առաջինը ցույց տվեց, որ 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը, միանգամայն անկախ ցարական կառավարության հետապնդած նպատակներից, օբյեկտիվորեն խաղաց պատմական պրոգրեսիվ դեր։ Նա կազմեց պատմական երևույթների կոմպլեքսի այն անբաժանելի մասը, որի հիմնական օբյեկտիվ բովանդակությունը ֆեոդալիզմի կապանքներից բուրժուական հասարակության ազատագրումն էր։ Այն պրոգրեսիվ էր ոչ միայն մեր նեղ ազգային տեսակետից — նրանով, որ բուլղար ժողովրդին ազատություն բերեց, այլև համաշխարհային պատմական տեսակետից — նրանով, որ հեշտացրեց ու արագացրեց ամբող-

97 «Մշակ», 1878, № 38։ Ս. Ալպոյաճյան, Մինաս Չերազ, Կահիրե, 1927, էջ 149։ Նաև С. С. Татищев, Из прошлого русской дипломатии, СПБ, 1890, էջ 349 և այլն։

98 «Русская старина», 1896, июль, էջ 36։

ջապես փտած ասիական ֆեոդալիզմի և ամենաբարբարոսական ինքնակալության կործանումը Եվրոպայում»[99]։

Ռուս-թուրքական պատերազմը հայ ժողովրդի կողմից ընկալվեց որպես քրիստոնյաների ազատագրման համար սկսված սրբազան պայքար և նա ողջունեց ռուսական բանակների մուտքը Արևմտյան Հայաստան։ Այդ առթիվ ևս պատերազմը սկսվելուց անմիջապես հետո աշխուժացած բուրժուական հրապարակախոսությունների սարսափից թևավորված լինելու պատճառով, թեպետ Թուրքիայի հայաշատ քաղաքները գրավող ցարական զորքերը նույնպես այն հրեշտակները չէին, ինչպես պատկերացնում էին նրանց։

Պատերազմի ժամանակ ռուսական բանակի հետ Արևմտյան Հայաստան մտած Գրիգոր Նիկողոսյանը, «Մշակ»-ի ու... «Արշալույս Արարատյան»-ի, Բոսֆորի ափերը թնդացնող ապագա թղթակիցը, պատմում է, որ ռուսական զինվորները նույնպես նեղում էին ժողովրդին. «...Ձմռան պաշարը կխլեն ժողովրդի գրաստից, որը դեռ ձմեռը չհասած սովից պիտի կոտորվի»։ Իսկ բանակի մի շարք բարձրաստիճան անձինք, Կարինում ուղղակի կեղեքում էին ազգաբնակչությանը[100]։

Այսուհանդերձ, հայերը հիմնականում ունեին ռուսական կողմնորոշում և Քիշմիշևի ճիշտ բնորոշմամբ, Ռուսաստանի միակ դաշնակիցներն էին Փոքր Ասիայում։ Նրանք ռուսական զորքերին դիմավորում էին որպես ազատարարների, շրջապատում բարեկամական մթնոլորտով[101]։

Չնայած պատերազմի նախօրյակին փոխարքայի հանձնարարությամբ Էջմիածին ժամանած Լորիս-Մելիքովին չհաջողվեց համոզել այս հարցում խիստ խոհուն ու զգույշ Գևորգ կաթողիկոսին՝ կոնդակով դիմելու երկու կողմերի հայերին ռուսական բանակներին օգնելու մասին, այնուամենայնիվ հայերի աջակցությունն, այն էլ մեծ չափերով, ապահովվեց հայ ազգաբնակչության տարերային մղումով։ Հայ կղերա-

99 Տե՛ս «История Болгарии», հատ. 1, էջ 308։

100 «Արարատ», գիրք Բ., 1889, էջ 59։

101 Տե՛ս С. Кишмишев, Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПБ, 1884, էջ 12 և հետ.։

ցին, ինչպես գրում էր «Գոլոս»-ը, ռուս զինվորի հետ բաժանում էր իր բերանի վերջին պատառը[102]։

Ինչպես երկու գիշատիչ մրցակիցների՝ ցարական Ռուսաստանի ու սուլթանական Թուրքիայի, այնպես էլ եվրոպական նվաճող-գաղութարարների համար հայ ժողովուրդը քաղաքական ազդեցության գործիք էր միայն, որին նրանք փորձում էին օգտագործել հատկապես պատերազմի նախօրյակին և այն սկսվելուց հետո։ Ուստի չէր փչում այլևս ռուսական «սևհարյուրակայիններ» «Նովոյե վրեմյա»-ի և «Մոսկովսկիյե վեդոմոստի»-ի դառը շունչը, որոնք Կատկովի ղեկավարությամբ աշխատում էին սիստեմատիկ կերպով թունավորել Ռուսաստանի այլազգի ժողովուրդների գիտակցությունը և ժամանակին բնորոշվում էին որպես «հայակեր» թերթեր, իսկ «պատերազմների ժամանակ, — ինչպես իրավացիորեն նկատել է մի ուսումնասիրող, — միշտ հայասեր էին դառնում»[103]։ Թեպետ երբեմն էլ մրցում էին իրենց էջերը հայ ժողովրդի դեմ ուղղված զրպարտիչ հոդվածներով։ Անգամ «Գոլոս»-ն իր համարներում տեղ էր տալիս այն Մելիքաձեի հերյուրանք-նամակների նման պասկվիլների, ուր հայերը մեղադրվում էին ռուս զինվորներին գողելու, մատնության և նման հնարովի մեղքերի մեջ[104]։

Իսկ Ռուսաստանը ներկայացվում էր որպես մի Մեսիա, որը կոչված էր փրկելու մահմեդական լծի տակ տառապող քրիստոնյաներին, այդ թվում հայ ժողովրդին։ Առանձին գործիչներ հանդես էին գալիս նույնիսկ Հայաստանին անկախություն տալու կոչերով։ Թեոֆան եպիսկոպոսը պահանջում էր վերականգնել հայկական թագավորությունը[105]։

Ետ չէր մնում և թուրքական մամուլը, հայերին հիշեցնելով, որ նրանց թուրք «եղբայրներն» արդեն հինգ հարյուր տարի հարազատի նման «հյուրընկալում» և պահում են հայ ժողովրդին։

---

102 Տե՛ս «Մշակ», 1879, № 39։

103 Ն. Գեղամյան, Հայ ազատագրական շարժումները ԺԹ դարում, էջ 427

104 Տե՛ս «Մշակ», 1877, № 94։

105 «Православное обозрение», 1878, март.

Ցույց նրանց ներշնչմամբ էր, որ հայ լրագրերը, Ն. Թաղ-ալենճյանի ավագությամբ, 1876 թ. հրապարակեցին մի կեղծ թղթակցություն, թե իբր արևմտահայերն ապստամբել են Ռուսաստանի դեմ, Կովկասի փոխարքան Հայոց թագավոր է հռչակվել, ապա ապստամբությունը դաժանորեն ճնշվել է, Հայոց կաթողիկոսն աքսորվել է Սիբիր և այլն: Արևմտահայ կամավորների գլուխ անցած, արևելահայ եղբայրներին օգնելու էր շտապում Օ. Խոճասարյանը... «Նորագրի» էջերում:

Հետաքրքիր է, որ հայկական թագավորության վերականգնման մասին «Հազար ու մի գիշերվա հեքիաթները» (Մ. Փորթուգալյան) հերքող «Մանզումեի էֆքիար»-ի խմբագիր Կ. Փանոսյանի դեմ ամբոխը բողոքի ցույց կազմակերպեց[106]:

«Շահենն ի Սիպիր»-ի հեղինակը տակավին իր գրքում երկաթյա նիզակը ճոճելով առաջ արդեն մեղադրանք էր նետում ցարական Ռուսաստանի դեմքին, որը

Կուլեր համայն
Մարդկային ազգ
Ռուս ըլլա...[107]

Պատերազմն ավարտվելուց անմիջապես հետո, 1878 թ. հունվարի 23-ին, թուրքական պառլամենտում հայ պատգամավոր Խարաճյան Մանուկ էֆենդին, չգիտես ինչ խրախուսքով, Արևմտյան Հայաստանի ողջ հայության անունից հայտարարում էր. «Եթե ռուսաց տերության պատերազմական ծախք հարկ ըլլա վճարել, կխնդրենք վեհափառ սուլթանին, որ Հայաստանեն երկիր չտրվի, տեղը դրամ վճարվի, և եթե այս անհնար ըլլա, մեր բողոքն հանուն ազգին՝ բարեկամ տերության ուշադրությանն ներկայացվի: Իսկ եթե ռուսաց անպատճառ հող պիտի տրվի, կխնդրենք, որ չտրվի Հայաստանեն. տերության ամեն ժամանակ տագնապ բերող կողմերեն

106 «Մանզումեի էֆքիար», 1876, № 3208, նաև «Նոր կյանք», 1898, № 17, էջ 257:

107 Ս. Տէր-Սարգսեանց, Վասպուրականի կայծեր կամ մաս մ'իմ հին խաղերից, էջ 48:

տրվի»[108]։ Անշուշտ ի նկատի ունենալով Բալկանները, մասնավորապես Բուլղարիան։

Անգլո-թուրքական դիրքորոշում ունեցող հայ գործիչները իրենց ճառերի համար շուք էին դարձրել Ներսես Աշտարակեցու պատկառելի անունը, և նրա օրոք ռուսական ցարերի կողմից հայ ժողովրդին խաբելու հին եղերգն էին հիշում։

Սակայն գավառահայության, հետևաբար հայ աշխատավոր ժողովրդի հայացքը հառած էր Ռուսաստանին։

Կ. Պոլսի անգլիական դեսպանը 1876 թ. սեպտեմբերի 11-ին Լոնդոն ուղարկած իր հեռագրում նշելով, որ հարստահարությունների առթիվ հայերի մոտ եղած դժգոհությունները չափազանց լուրջ բնույթ են ստանում, գրում էր, որ բարձրաստիճան մի հայ իրեն ասել է, թե «ներկա հուզումները ռուսական գրգռումների արդյունքն են» և որ «հայոց ուսյալ դասակարգի մեծամասնությունը խիստ կերպով հակառակ է Ռուսաստանին, բայց ժողովուրդը, բազմությունը, որոնք իսկապես տանջվում են այդ հարստահարություններից... համոզված են, որ եթե փոփոխություն լինի (այսինքն ռուսական տիրապետություն գա) ավելի լավ կլինի»[109]։

Անշուշտ քննադատության չի դիմանում Ա. Ջուղանյանի այն կարծիքը, թե մինչև ռուսների Սան-Ստեֆանո հասնելը, բոլոր արևմտահայերը, առանց բացառության, ճակատու էին[110]։

Նշանակալի է, որ պատերազմի օրերին զեյթունցիները գեներալ Լազարևին, իսկ կարնեցիք Լորիս-Մելիքովին էին դիմել ապստամբվելու իրենց պատրաստակամության մասին։

Պատերազմի ժամանակ և անմիջապես հետո հավաքական բազմաթիվ դիմումներ ուղարկվեցին ցարական կառավարությանը՝ խնդրելով իրենց ազատել թուրքական լծից։ Կ.

---

108 Մ. Նուրիխան, *Ժամանակակից պատմություն, մաս Գ*, Վենետիկ, 1907, էջ 552։

109 Տե՛ս Սարուխան, *Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում*, էջ 145։

110 «Անահիտ» 1889, № 3, էջ 89։

Պոլսի Ազգային ժողովի մի խումբ պատգամավորների կողմից էջմիածին ժամանած Բարդուղիմեոս վարդապետը նրանց անունից նույնիսկ մի ծրագիր է կազմում ու ներկայացնում կաթողիկոսին։

Ճիշտ համարելով ռուս-թուրքական պատերազմի նկատմամբ կաթողիկոսի բռնած չեզոք, նույնիսկ որոշ չափով հակառուսական դիրքը, ծրագրի հեղինակները, այնուամենայնիվ, խնդրում են նրան ցարական կառավարության նկատմամբ գեթ առերես մտերմական դիրքորոշում ընդունել և խնդրել ցարին, որպես չարիքի փոքրագույն «...Մեծ Հայքն կրկին առանձկաց չվերադարձնել, այլ յուր կայսերական իշխանության մեկ մասն համարել, միացնելով Արարատյան նահանգի հետ»։ Հնարավորության սահմաններում տենչում էին ինքնավարություն՝ Ռուսաստանի հովանավորության տակ, իսկ ծայրահեղ դեպքում՝ երրորդ կետով, խնդրում բարենորոգումները կատարել ռուսական զորքերի ներկայության պայմաններում[111]։

Հակառակ «Մեղու Հայաստանի» լրագրի պահպանողական և «Փորձ»-ի միջին դիրքորոշմանը, «Մշակ»-ը հանդես էր գալիս արմատական պահանջներով. բալկանյան ազատասեր ժողովուրդներին օրինակելու, Ռուսաստանի օգնությամբ ինքնավարության ձեռք բերելու, կամ Արևմտյան Հայաստանը Արևելյանին միացնելու կոչերով, որոնց մեջ էր գտնում Արծրունին հայ ժողովրդի փրկությունը։

Այդ օրերին ամբողջ թափով մոլեգնում էին Ռ. Պատկանյանի և Րաֆֆու հայրենասիրական բնարները, որոնց մարտաշունչ ստեղծագործությունները զենքի էին կոչում հայ ժողովրդին՝ նրա դարեր կուտակված վրեժի ողջ ահագնությամբ։

Պատերազմի նախօրեին և այն սկսվելուց հետո արևմտահայ հասարակական առանձին խմբեր ու գործիչներ հանդես էին գալիս նաև արևմտահայերի քաղաքացիական պարտքը կատարելու քարոզով, որն հարկավ, ոչ հայ ժողովրդի սրտից էր բխում, ոչ էլ այդ քարոզների հեղինակներից շատերի։

---

111 ՀԿՊՊԱ, ֆ. 56, վարչա-կազմակերպական բաժին, ց. 4, գ. 24, թ. 10—18։

տրվի»[108]։ Անշուշտ ի նկատի ունենալով Բալկանները, մասնավորապես Բուլղարիան։

Անգլո-թուրքական դիրքորոշում ունեցող հայ գործիչներն իրենց ճառերի համար շուք էին դարձրել Ներսես Աշտարակեցու պատկառելի անունը, և նրա օրոք ռուսական ցարերի կողմից հայ ժողովրդին խաբելու հին եղերգն էին հիշում։

Սակայն գավառահայության, հետևաբար հայ աշխատավոր ժողովրդի հայացքը հառած էր Ռուսաստանին։

Կ. Պոլսի անգլիական դեսպանը 1876 թ. սեպտեմբերի 11-ին Լոնդոն ուղարկած իր հեռագրում նշելով, որ հարստահարությունների առթիվ հայերի մոտ եղած դժգոհությունները չափազանց լուրջ բնույթ են ստանում, գրում էր, որ բարձրաստիճան մի հայ իրեն ասել է, թե «ներկա հուզումները ռուսական գրգռումների արդյունքն են» և որ «հայոց ուսյալ դասակարգի մեծամասնությունը խիստ կերպով հակառակ է Ռուսաստանին, բայց ժողովուրդը, բազմությունը, որոնք իսկապես տանջվում են այդ հարստահարություններից... համոզված են, որ եթե փոփոխություն լինի (այսինքն ռուսական տիրապետություն գա) ավելի լավ կլինի»[109]։

Անշուշտ քննադատության չի դիմանում Ա. Չոպանյանի այն կարծիքը, թե մինչև ռուսների Սան-Ստեֆանո հասնելը, բոլոր արևմտահայերը, առանց բացառության, ճակատուս էին[110]։

Նշանակալի է, որ պատերազմի օրերին զեյթունցիները գեներալ Լազարևին, իսկ կարնեցիք Լոռիս-Մելիքովին էին դիմել ապստամբելու իրենց պատրաստակամության մասին։

Պատերազմի ժամանակ և անմիջապես հետո հավաքական բազմաթիվ դիմումներ ուղարկվեցին ցարական կառավարությանը՝ խնդրելով իրենց ազատել թուրքական լծից։ Կ.

---

108 Մ. Նուրիխան, *Ժամանակակից պատմություն*, մաս Գ, Վենետիկ, 1907, էջ 552։

109 Տե՛ս Սարուխան, *Հայկական խնդիրն և Ազգային Սահմանադրությունը Թուրքիայում*, էջ 145։

110 «Անահիտ» 1889, № 3, էջ 89։

սիական նահանգների քրիստոնյաները։ Նա հայտարարում է, որ հայ ժողովուրդը շատ գրգռված վիճակում է, «... և եթե եվրոպական պետությունների համակրությունը շահելու համար հարկավոր էր ապստամբելը, ամենևին դժվար չէր այդպիսի մի շարժում առաջ բերել։ Նա բողոքեց նույնպես, — գրում է Էլիոտը Դերբիին, — եվրոպաբնակ չերքեզներին Ասիա տեղափոխելու առաջարկության դեմ, որ հօգուտ սլավոնների է, բայց ի վնաս հայերի»[115]։

Էլիոտն, հարկավ, մտադիր չէր անգլիական դիվանագիտության խաղաքարտերը բացել հայոց պատրիարքի առջև ու վճռականորեն մերժեց նրա առաջարկը, հայտարարելով, թե դեսպանախորհրդի նպատակը ապստամբած նահանգները խաղաղեցնելն է և ոչ ամբողջ կայսրության բարեկարգության հարցը[116]։

Բացառված չէ, որ Ներսեսի՝ Էլիոտին ներկայացրած պահանջը, թե «ապստամբած նահանգներին չպիտի տրվեն այնպիսի առանձնաշնորհումներ, որոնցից զուրկ պիտի մնան մյուս նահանգները», թելադրված լիներ Բ. Դռան կողմից՝ դեսպանախորհուրդը ձախողելու մտադրությամբ։ Չէ՞ որ նույն օրերին Կ. Պոլսի դեսպանաժողովի առաջարկներին պատասխանելու համար Բ. Դռան հրավիրած խորհրդակցությունում պատրիարքական փոխանորդ Հ. ք. Միրյանը (իհարկե, պատրիարքի և Ազգային ժողովի անունից) դեմ դուրս եկավ տերությունների առաջարկն ընդունելուն[117]։

Բ. Դռան ու հայոց պատրիարքարանի միջև կնքված «դաշինքը» պսակվեց 1877 թ. հունվարի 9-ին Միդհատ փաշայի պատրիարքարան կատարած այցելությամբ ու այնտեղ արտասանած ճառով[118]։

---

115 «Մասիս», 1878, № 2084։

116 Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 131։

117 Նույն տեղում, էջ 155։

118 Նույն տեղում, էջ 136—137։

Պատերազմի հայտարարման օրը՝ ապրիլի 24-ին, Ներսեսը կոնդակով հավատարմության պահպանման «զգուշության ու շրջահայեցության» էր հրավիրում հայ ժողովրդին, իսկ սուլթանի կողմից հայկական կամավորական գնդեր կազմակերպելու մասին հրահանգից հետո, շրջաբերականով հորդորում՝ կամավորներ տալ «Իսլամ և քրիստոնյա միասին պաշտպանելու համար նույն հայրենիքը»:

Պատրիարքարանի տեսակետն էր արտահայտում «Մասիս» լրագիրը, երբ պատերազմի օրերին սուլթանական կառավարության առջև փռելով հավատարիմ հպատակության իր առատ ապացույցները, գրում էր, թե հայ ժողովրդի բողոքները ուղղված են ոչ թե թուրքական իշխանությունների, այլ քուրդ հարստահարիչների դեմ, և նույնիսկ կասկած հայտնում, թե այդ հարստահարությունների արդյոք Ռուսաստանը չի հրահրում, որպեսզի հայերը ըմբոստանան կառավարության դեմ ու նպաստեն ռուսական զենքի հաղթանակին: Ապա թուրքական գերքարոզման ամբողջ թույնով ավելացնում էր. «Եթե Ռուսիա Հայաստանեն մեծ մաս մը կորզե, հայերու ազգության, լեզվին, եկեղեցիին, բարքերուն և ազատ զարգացման վերջին օրն է»[119]: Ինչ վերաբերում է քրիստոնյաների վիճակը բարելավելուն, գրում էր «Մասիս»-ը քիչ ավելի ուշ, ապա «ռուսական ռումբերը այդ պաշտոնը լավ արժանվույն կատարեցին, Կարնո բնակիչներեն բազմաթիվ հայ ու թուրք սպանելով և հայոց եկեղեցին իսկ քանդելով»[120]:

Թուրքական պառլամենտում, որն ընդամենը տասնմեկ ամսվա կյանք էլ չունեցավ (1877 թ. ապրիլի 19-ից մինչև 1878 թ. փետրվարի 28-ը, նոր տոմարով), թուրք պատգամավորների բուռն ծափահարությունների տակ, նրանց հայ պաշտոնակիցները գոհունակությամբ հայտարարում էին, որ հայերը օսմանյան տիրապետության տակ կարողացել են պահպանել իրենց ազգությունը և որ իրենց ընտրողները պատրաստ են իրենց կյանքը նվիրաբերել օսմանյան հայրենիքին:

---

119 «Մասիս», 1877, № 1984:

120 Նույն տեղում, № 2049:

պաշտպանության գործին[121]։ Բայց երբ երկու ամիս անց արդեն լուրեր հասան Կ. Պոլիս, որ Կովկասյան ռազմաճակատի գծում «քրդերը կոտորում, մորթում էին տղամարդկանց, կանանց, երեխաններին... անգամ կենդանի կրակը գցում»[122], և որ քրդերի հետ միասին թուրքական կանոնավոր զորամասերը մասսայաբար ոչնչացնում են հայերին, մոխրակույտերի վերածում հայկական բնակավայրերը[123], որ Ալաշկերտի 122 գյուղերից 113-ը քրդերի ձեռքով կատարյալ ամայացել են, Բին-Գյոլի ջրերը արյան գետեր դարձել, միայն այդ ժամանակ հայ պատգամավորները սթափվեցին։ Պառլամենտի հունիսի 14-ի նիստում Պալլարյանը, մի փայլուն ճառով, ոչ միայն քրդական բարբարոսությունների պատկերը ներկայացրեց, այլև պատռեց դրանց պատճառները ծածկող քողը, կառավարությանն ուղղակիորեն մեղադրելով քրդերին մեղսակից լինելու մեջ[124]։

1877 թ. օգոստոսի 10/22-ին ընդունելով Ներսես պատրիարքին, Աբդուլ Համիդը փորձեց սիրաշահել նրան, և նրա միջոցով հայ ժողովրդին։ Խոսելով բուլղարների «ապերախտության» մասին, նա իր շնորհակալությունն հայտնեց օսմանյան տերության միշտ հավատարիմ հայերին և ընդունելով, որ նրանք շատ են տուժել քրդական հարստահարություններից, հավատացրեց, որ պատերազմից հետո կըստեղծվեն բոլոր անհրաժեշտ պայմանները հայ ժողովրդի ազատ բարգավաճման համար[125]։

Տարօրինակն այն էր, որ Թիֆլիսում լույս տեսնող «Փորձ»-ը սուլթանի այդ խոստումների առթիվ գրում էր. «Համիդ Բ-ի խոստովանությունը այնքան անկեղծ, նրա խոստումները այնքան բնորոշ է... երբեք օսմանյան սուլթանն այդքան անկեղծ ցավակցություն չէ ցույց տվել յուր որևէ հպատակ

---

121 «Մասիս», 1877, № 1964, 28 ապրիլի

122 ԿՊՌՊԱ (ЦГВИА), ֆ. 51, թ. 56։

123 Նույն տեղում, ֆ. ВУА, գ. 7889, թ. 43։

124 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 191—192։

125 «Ատենագրություն Ազգային ժողովո», Կ. Պոլիս, 1877, էջ 201։

ազգին...»[126]։ Մինչդեռ «Մշակ»-ը դրանից քիչ անց, Րաֆֆու բերանով աղաղակում էր, թե սուր չբարձրացրինք, հարկավոր է գոնե ձայն բարձրացնել, ապա դայրույթով նշավակում Ներսես Վարժապետյանին, որ «Սուլթանի մի ժպիտը պատրիարքին մոռանալ տվեց հայ ժողովրդի արտասուքը և արյունը»[127]։

Ստանալով Օսմանի առաջին կարգի շքանշանը, Ներսեսը բարեմաղթություններ է անում «Հրեշտականման թագավորին»[128] և հեռանում, Խրիմյանին թողնելով «Հայգույժ»-ում հավերժացնելու այն նախատինքը, թե «ոչխարներու ոսկորներեն մանյակ շինեցին և հովվին վզին կախեցին»։

Սակայն այդ պատվանշանն անգամ չօգնեց Ներսեսին Ազգային ժողովում հայերի զինվորագրության հարցը դրականորեն լուծելու։

1877 թ. նոյեմբերին հրապարակվեց սուլթանի հրամանը (իրադեն), որով զենքի էին կոչում 17—45 տարեկան բոլոր քրիստոնյաներին։ Բայց հայ գործիչները, ճնշող մեծամասնությամբ, մերժման քվե տվեցին դրան։

Ազգային ժողովի 1877 թ. նոյեմբերի 25-ի նիստում Մ. Իզմիրլյանն հանդես գալով հայերի զինվորագրության դեմ, հայտարարեց, որ զինվորագրությունը ենթադրում է հպատակների հավասարություն, իսկ Թուրքիայում ամենախայտառակ անհավասարություն է տիրում։ Մատնացույց արված սահմանադրությունն էլ նա որակեց որպես մեռած տառ միայն[129]։

Շարունակելով ու ընդգծելով նրա միտքը, Նար-Պեյը Իզմիրլյանի հետ միասին շեշտում էր, որ զինվորագրությունն ընդունելու դեպքում պետք է պայմաններ առաջարկել Բ. Դռանը[130]։

---

126 «Փորձ», 1877/78 թթ., № 2, էջ 380։
127 «Մշակ», 1878, № 22։
128 «Ատենագրությունք Ազգային ժողովո», Կ. Պոլիս, 1877, էջ 201։
129 Նույն տեղում, էջ 317—318։
130 Նույն տեղում, էջ 319—320։

Այս առաջարկությունը թերևս ճիշտ էր։ Բայց Մ. Խրիմյանը լրիվ հակադրվեց հայերի զինվորագրությանը՝ դիվանագիտորեն նշելով, որ պետական տեսակետից, թուրքական կառավարությունն այն այժմ օգտավետ էլ չէ, որովհետև ռուսների կողմից գրավված երկրամասերի հայերը, այդ նկատառումով ռուսների հետ կգաղթեն, եթե Ռուսաստանը գրավված վայրերը վերադարձնելու լինի[131]։ Զինվորագրությունը կտրուկ մերժելու անհեռատես առաջարկներով հանդես եկան նաև թուրքական պառլամենտի քրիստոնյա պատգամավորները, փաստարկելով մանավանդ ընթացիկ տարվա զինվորական հարկը արդեն գանձված լինելը։

Ինչպես 1876 թ. Ազգային ժողովի կողմից Բ. Դռանը ներկայացրած գավառական հարստահարությունների մասին տեղեկագրերի, այնպես էլ 1877 թ., զինվորագրությունը մերժելու առթիվ, թուրքական մամուլը ահեղագոչ մի վայնասուն բարձրացրեց, հայերին մեղադրելով «բարեխնամ» պետության նկատմամբ «ապստամբ», ապա և «ապերախտ ու դավաճան» լինելու մեջ։ Նրան օգնության շտապեցին անգլիական ու ֆրանսիական դեսպանները և Կ. Պոլսում լույս տեսնող օտարազգի մամուլը, հատկապես ոմն անգլիացու կողմից ֆրանսերեն լեզվով հրատարակվող «Ստամբուլ» թերթը, որն անարգորեն չարաբանում էր հայ ժողովրդին ու մեղադրում պետական դավաճանության մեջ։ Ի դեպ, քիչ ուշ, նման հայտարարությամբ հանդես եկավ Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյարդը, մի բարձրաստիճան հայ պաշտոնյայի ասելով, թե օսմանյան պետության ներկա անկման պատճառը քրիստոնյաներն են, որոնք թույլ չտվին, որ իրենցից զինվոր հավաքագրեն[132]։

Ճակատելով թուրքական մամուլի թունոտ շաղակրատանքի դեմ, հայ լրագրերը, ի հարկե, պատասխանեցին այդ նենգամիտ սուլոցներին, և այդ մարտում, իր 46-ամյա խմբագրի ժանտախտին զոհ գնալուց մի քանի ամիս առաջ, նահատակվեց Կ. Պոլսի «Նոր-Դար»-ը։

---

131 «Մշակ», 1878, № 4։

132 Նույն տեղում, № 37։

Պետք է ասել, որ թուրքական-պետական տեսակետից քրիստոնյաների զինվորագրությունը ձեռնտու չէր և չէր էլ խրախուսվում ընդհանրապես։ 1856 թ. «Խաթը Հումայուն»-ով Աբդուլ Մեջիդը, այլ իրավունքների հետ միասին, քրիստոնյաներին, զինվորագրության մեջ նույնպես մահմեդականներին հավասար ճանաչեց։ Բայց Հակոբոս պատրիարքի «Հայոց ազգը սիրով հանձն կառնի զինվորությունը» պատրաստակամության հայտը մնաց անպատասխան։ Թուրքերն, ընդհանրապես, շահագրգռված չէին քրիստոնյաների զինվորագրությամբ, որովհետև նրանց բանակը խարսխված էր կրոնական սկզբունքների վրա և քրիստոնյաների զանգվածային մուտքն այնտեղ կխախտեր այդ կրոնական միությունը, անվստահության, արհամարհանքի երևույթները կկազմալուծեին բանակը։ Բացի այդ, թուրք իշխողները համոզված էին, որ երկար ժամանակ ստրկացված վիճակում լինելով, քրիստոնյաները կորցրել են իրենց ռազմական կորովը, իսկ այն վերականգնելը իրենց ոչ միայն ձեռնտու չէր, այլև վնասակար։

Հայ ժողովրդի համար զինվորագրությունը հույժ կարևոր էր։ Ինքնապաշտպանության կազմակերպման և ապագա անակնկալներին պատրաստ լինելու հիմնական հարցը դրանով մասամբ լուծվում էր, ժողովրդի մարտունակության երաշխիքը որոշակիորեն ապահովվում։ Այդ հարցում լիբերալ-դեմոկրատական և ազգային-պահպանողական հոսանքների տեսակետներն իսկ զուգադիպեցին։ Եվ «Մեղու Հայաստանի»-ն անգամ «Մշակ»-ից ավելի հետևողական գտնվեց[133]։

Հիշենք, որ դրանից դեռ տարիներ առաջ արևմտահայ հեղափոխական-դեմոկրատական հոսանքը, հանձին Հ. Սվաճյանի, Ազգային ժողովում ուղղակի պահանջում էր հայերի զինվորագրության որոշման ընդունում[134]։ Զինվորական տուրքը մեր տկարության տուրքն է, շարունակում ու պաշտպանում էր նրան Գ. Օտյանը։

---

133 Տե՛ս «Մշակ», 1878, № 6, 10 և «Մեղու Հայաստանի», 1878, № 2։

134 1871 թ. № 174-ում «Մամուլ»-ն այդ առթիվ քննադատում է «Մեղվի» խմբագրին։

Իսկ Րաֆֆին գտնում էր, որ եթե Թուրքիայում ցանկանում են հայերի օգտին որևէ բարենորոգում, ապա առաջին հերթին այն պիտի արտահայտվի նրանց զենք կրելու իրավունք տալու և զինվորագրելու մեջ։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը վերջացավ սուլթանական Թուրքիայի խայտառակ պարտությամբ, և ռուսական բանակների հաղթական երթն ավարտվեց՝ Կովկասյան ռազմաճակատում Կարինի գրավմամբ[135], իսկ Եվրոպայում՝ Շիպկայի ու Պլևնայի ահեղ մարտերից հետո, ռուսական զորքերին կանգնեցրին Կ. Պոլսի հինավուրց դարպասների առջև, որտեղից արդեն երևում էին Այա Սոֆիայի խաչակրաց գմբեթները։

1878 թ. հունվարի 19/31-ին կնքվեց Ադրիանապոլսի զինադադարը, իսկ մեկ ամիս անց ռուսական դիվանագետները, Սան-Ստեֆանոյում, հաղթողի իրավունքներով իրենց կամքը փաթաթեցին Թուրքիայի վզին։

Սան-Ստեֆանոյի կոնֆերանսից մի քանի օր առաջ՝ փետրվարի 14/26-ին, արյունոտ սուլթանի ավինավոր ոստիկանները ցրեցին թուրքական պառլամենտը և միդհատյան սահմանադրության հետ կապված բոլոր հույսերն ի դերև ելան։

---

135 Կարինը հանձնվեց զինադադարից հետո՝ 9/21 փետրվարի 1878 թ.։

### Ե Ր Ր Ո Ր Դ  Գ Լ Ո Ւ Խ

## ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ ՍԱՆ-ՍՏԵՖԱՆՈՅԻՑ ՄԻՆՉԵՎ ԲԵՌԼԻՆ

*Կ. Պոլսից 12 կիլոմետր հեռավորության վրա գտնվող Սան-Ստեֆանո ծովափնյա ավանի[1] այն ամառանոցում, որը պատկանում էր Տատյան Առաքել բեյին և որտեղ իջևանել էր ռուսական բանակի գլխավոր հրամանատարը, 1878 թ. փետրվարի 19-ին (մարտի 3-ին), ստորագրվեց ռուս-թուրքական պատերազմի արդյունքներն ամփոփող Սան-Ստեֆանոյի դաշնագիրը։*

*Ադրիանապոլսի զինադադարից հետո, մեկ ամսվա ընթացքում, ռուսական դիվանագիտությունը, հանձին Իգնատևի, եռանդով նախապատրաստում էր կայանալիք կոնֆերանսը՝ ռուսական բանակների հաղթանակները վավերացնելու բնական միտումով։*

*Կոնֆերանսին պատրաստվում էր և սուլթանական Թուրքիան, որին օգնելու համար փրկության իր օղակները Դարդանելի ջրերն էր նետել Անգլիան՝ հաղթանակած Ռուսաստանի անխնա ու խորամանկ հակառակորդը։ 1877 թ. նոյեմբերի 20-ին, «Դեյլի տելեգրաֆ»-ն արդեն ահազանգում էր, թե Հայաստանը գրավելով, Ռուսաստանը փակում է Անգլիայի առևտրական ճանապարհները։ Նրա առջև բացվում են բոլոր*

---

*1 Քեմալական կառավարության որոշմամբ 1924 թ. Սան-Ստեֆանոն վերանվանվեց «Յեշիլ քեոյ»։*

ուղիները դեպի Հարավ, դեպի նեղուցները և Պիտտի Անգլիան անվրդով դիտում է այդ ողբերգությունը[2]։

Դեռ պատերազմի սկզբներին Բիկոնսֆիլդն ահաբեկում էր Շուվալովին, որ ինքը հնդկացիներով ու կանադացիներով համալրված անգլիական էքսպեդիցիոն բանակը կարող է հասցնել 300 հազար մարդու[3]։ Իսկ պատերազմից անմիջապես հետո սպառնում՝ ռուսական բանակների Կ. Պոլիս մտնելու դեպքում անգլիական զորքերը առափնել Թուրքիայի մայրաքաղաքում։ Եվ որպես նախաքայլ՝ 1878 թ. փետրվարի 15-ին բրիտանական նավատորմը խարիսխ ձգեց Իշխանաց կղզիների առջև։

1878 թ. հունվարի 2/14-ին անգլիական կաբինետը Պետերբուրգի իր դեսպանի՝ Ավգուստ Լոֆտուսի միջոցով հայտնում է Գորչակովին, որ Ռուսաստանի և Թուրքիայի միջև կնքվելիք համաձայնությունը, եթե հակասի Փարիզի ու Լոնդոնի 1856 և 1871 թվականների համաձայնագրերին, կվերանայվի հիշյալ պայմանագրերն ստորագրած երկրների կոնգրեսում։

Ռուսաստանի տարած հաղթանակների օգտագործումը խափանելուն էին ուղղված նաև եվրոպական մյուս տերությունների ջանքերը։ Եվ եթե զինադադարի համաձայնագիրը կնքելուց առաջ ռուսները ցանկանում էին ձգձգել այն, Ավստրո-Հունգարիայի հետ համերաշխվելու համար, ապա համաձայնագիրը կնքելուց հետո, ռուսական վարչապետ Գորչակովն Իգնատևին ուղարկած հեռագրերում մատնանշում էր քաղաքական իրադրության իրենց համար աննպաստ հեղաբեկումը[4]։

Իգնատևն ու գլխավոր հրամանատարը շտապեցին արագացնել դաշնագրի կնքումը։ Եվ այդ ոչ միայն «դրամատիկ էֆեկտի» համար, ինչպես կարծում էր Մ. Պոկրովսկին, այլև

2 Տե՛ս Խորեն Գաբրիկյան, *Հայկական հարցը*, Պեյրութ, 1962, էջ 170։

3 Տե՛ս **П. А. Шувалов**, О берлинском конгрессе 1878 года («Красный архив», 1933, № 4(59), էջ 87)։

4 **Н. П. Игнатьев**, Сан-Стефано («Исторический вестник», 1915, ноябрь, էջ 441)։

միջազգային իրադրության անբարենպաստ ընթացքի պատճառով, որը սպառնում էր սանձազերծել անգլո-ռուսական պատերազմ և որի հուսով էլ թուրքերը ձգձգում էին բանակցությունները: Թեպետ անշուշտ իրավացի էր Մ. Պոկրովսկին, երբ կրկնելով Դ. Միլյուտինին գրում էր, որ պայմանագիրը փետրվարի 19-ին (մարտի 3-ին, կիրակի), գյուղացիական ռեֆորմի 17-րդ տարեդարձի օրը (գուցե անգամ փետրվարի 18-ին (մարտի 2-ին), Ալեքսանդր II-ի գահակալության 23-րդ տարեդարձի օրը — Ռ. Հ.), ստորագրելու և ցարին սյուրպրիզ անելու էֆեկտը Իգնատևին մղեց հրաժարվելու ռուսների կողմից թուրքական կառավարությանը նախօրոք արված մի շարք պահանջներից[5]:

Սան-Ստեֆանոյի 29 կետից կազմված դաշնագիրը նշանավորվեց որպես բալկանյան քրիստոնյաների ազատագրման մանիֆեստ:

Անկախ էին հռչակվում Սերբիան, Չեռնոգորիան, Ռումինիան (վերջինիս հանձնվեց նաև Դոբրուջան՝ որպես փոխհատուցում Բեսարաբիայի համար): Ինքնավարություն էին ստանում Բուլղարիան՝ Դանուբից ու Սև ծովից մինչև Էգեյան ծով տարածությամբ, որտեղ ռուսական զորքերը պետք է մնային երկու տարի, ինչպես նաև Բոսնիան ու Հերցոգովինան: Բոսֆորն ու Դարդանելը դառնում էին բաց նեղուցներ՝ չեզոք պետությունների առևտրական նավերի երթևեկության համար: Ռուսաստանն ստանում էր 310 միլիոն ռուբլու ռազմատուգանք և ետ դառնում 1856 թ. կորցրած Բեսարաբիային (բացի Դանուբի գետաբերանում գտնվող կղզիներից), Արևմտյան Հայաստանի 35.650 քառակուսի կմ տարածությամբ մի խոշոր մասին՝ Կարսին, Արդահանին, Բայազետին և մինչև Սողանլու (Մեծրաց լեռներ) ընկած տերիտորիային, ինչպես նաև խիստ կարևոր նշանակություն ունեցող Բաթումին:

«Գյուղացիների ազատագրման օրը դուք ազատեցիք քրիստոնյաներին թուրքական լծից», — գրում էր ռուսական բանակի գլխավոր հրամանատարը, դաշնագիրը կնքելու առ-

5 М. Н. Покровский, Дипломатия и войны царской России в XIX веке, էջ 295:

թիվ իր ցար եղբորն ուղարկած շնորհավորական հեռագրում։ «Միայն թե եվրոպական կոնֆերանսը չփչացնի այն՝ ինչ մենք ձեռք բերինք մեր արյունով», — իր պատասխան հեռագրի եզրափակում էր Ալեքսանդր II-ը[6]։

* * *

Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածով միջազգային դիվանագիտության խաղացանկ էր մտնում Արևմտյան Հայաստանի բարենորոգումների, իսկ հետագայում ինքնավարության կամ անկախության խնդիրը՝ Հայկական հարց անունով։

Հանդես գալով որպես Արևելյան հարցի բաղկացուցիչ մաս, այն դառնում էր աշխարհի վերաբաժանմանը նախապատրաստվող գաղութատիրական երկրների գզվռտոցի առարկա, միաժամանակ այն միջոցներից մեկը, որոնք եվրոպական պետություններին հնարավորություն էին ընձեռում ցանկացած ձևով միջամտել Թուրքիայի ներքին գործերին։

Հայ ժողովրդի համար Հայկական հարցի արծարծումը խթան հանդիսացավ ազատագրական շարժման աննախընթաց վերելքի։ Այն բացահայտեց տարբեր դիրքորոշումների շերտված հակամարտը։ Եվ եթե Հայկական հարց հասկացողությունն ուներ և ներքին բովանդակություն, ապա այդ ոչ միայն արևմտահայ աշխատավորության կողմից օսմանյան բռնակալության և ֆեոդալիզմի դեմ մղվող սոցիալական ու ազգային-ազատագրական շարժումն էր, այլև հասարակական հոսանքների ու խմբերի կողմնորոշման (օրիենտացիայի) համար մղած պայքարը։

Ազատագրական շարժման դրոշ պարզած հայ ժողովուրդը, ինչպես նշեցինք, դրականորեն ընկալեց Հայկական հարցի զողանջը, որը և թևավորեց նրան թուրքական բռնակալության դեմ մղած իր անհավասար գոտեմարտում։

Սան-Ստեֆանոյին նախորդած շրջանն այնպիսի հուզում էր առաջացրել Կ. Պոլսի հայության մեջ, որ նրանք կարծես դեն էին նետել անգամ դավանական ու խմբակային պայքարի

---

[6] Տե՛ս М. Н. Покровский, Дипломатия и войны царской России в XIX в., էջ 295։

իրենց պախարակված ընթացքը, և ինչպես Մ. Իզմիրլյանն էր այդ օրերին Էջմիածին ուղարկած մի նամակում գրում, վեճ ու խմբակցություն մոռացած՝ գործում էին միևնույն նպատակի համար[7]։

Ադրիանապոլսի զինադադարի համաձայնագրում արևմտահայերին չանդրադառնալու փաստը ցնցեց պատերազմի հետ մեծ հույսեր կապած հայ գործիչներին ու հասարակական խմբավորումներին և նրանց գործունեությունը նշանավորեց հասնելու Թուրքիայի հայ ազգաբնակչության տնտեսական ու իրավական վիճակի բարելավմանը, կամ քաղաքական այլ խնամակալություն ընդունելուն։

Ա. Արփիարյանը (Հայկակ), որն ի տարբերություն ամեն ինչում անձնական շահեր փնտրող Խ. Նար-Պեյի, կամ Ռուսաստանն իդեալականացնող Գր. Արծրունու, կանգնած էր ռուսական դիրքորոշման ձախ, դեմոկրատական թևի ավանգարդում և ռուսական ցարին համեմատում էր սուլթան Համիդի հետ, Բոսֆորի ափերից «Մշակ»-ին տեղեկացնում էր, որ ռուսների Սան-Ստեֆանո մտնելուց հետո Կ. Պոլսի հայկական թերթերը «սկսած են շատ ազատ գրել, մինչև անգամ կհամարձակին Թուրքական Հայաստանի ինքնավարություն պահանջել»[8]։

Թատերական ներկայացումներից հետո Օրթագյուղի ու մյուս թատրոնների դահլիճները դղրդում էին Մ. Նալբանդյանի «Ազատություն» ու Ռ. Պատկանյանի «Էլ չլինելու» որոտով, որը շունչ, ոգի դարձած, Պետրոս Ադամյանի բերանով պայքարի էր կոչում հայ ժողովրդին՝ հանուն նրա ազատ գալիքի։

Այդ ոգևորությունը 1878 թ. փետրվարի 1/13-ին դրսևորվեց Ալեքսանդր II-ին և Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրին ուղղված նամակ-խնդրագրերում, որոնք Ներսես Վարժապետյանի ու 9 եպիսկոպոսների ստորագրությամբ, ուղարկվեցին ըստ պատկանելվույն։

---

7 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 272։

8 «Մշակ», 1878, № 64։

Նույն օրը Ներսես պատրիարքի կողմից մի նամակ ստորագրվեց, ուղղված Գևորգ կաթողիկոսին, ուր նշվում էր Պետերբուրգ ուղարկված հիշյալ դիմումների մասին և խնդրվում, որպեսզի նա նույնպես միջնորդի ցարի առջև՝ Հայաստանի դատը պաշտպանելու[9]:

Արևմտահայ ժողովրդի այդ ցանկությունը և Արևմտյան Հայաստանի զգալի մասը ռուսական զորքերի կողմից գրավված լինելու փաստը, որպես դրա գործնական երաշխիք, չէր կարող վրիպել Բ. Դռան և հատկապես Անգլիայի ուշադրությունից:

Եվ ահա սկսվեց Արևմտյան Հայաստանին ինքնավարություն շնորհելու, իսկ իրականում Ռուսաստանի կողմից գրավված տերիտորիաները ետ կորզելու անգլո-թուրքական ճարպիկ խաղը, երկկողմանի մոլորեցված հայ գործիչների ակտիվ, բայց հիմնականում անգիտակ մասնակցությամբ: Բ. Դուռը Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյարդի սադրանքով ու նրա միջոցով դրդեց Ազգային ժողովին հրաժարականներ նետելը մոռացած Ներսես Վարժապետյանին, ինքնավարություն պահանջել Արևմտյան Հայաստանի համար, և միայն ինքնավարություն, առանց որևէ երկրորդ պայմանի, նպատակ ունենալով կանխել Ռուսաստանի կողմից գրավված տերիտորիաների կորուստը:

Ներսեսին հայկական դատի համար ակտիվ գործունեության մղեց նաև Խրիմյանի գլխավորությամբ դեռ 1877 թ. նոյեմբերին հրաժարականի սպառնալիքով նրան այցելած բարձրաստիճան հոգևորականների պատվիրակությունը՝ պահանջելով ամենագործնական միջամտություն Հայկական հարցի լուծման գործում[10]:

Անշուշտ ավելի մտումներով «պատնեշ պետության»[11] ստեղծման գաղափարն էր առաջ քաշում նաև արևմտահայ լիբերալների պարագլուխ Գրիգոր Օտյանը՝ վաթսունականների

9 ՀԿՊԱ ֆ. 56, վարչա-կազմակերպական բաժին ց. 4, գ. 24, թ. 1:

10 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 265—266:

11 Ռուսաստանի և Թուրքիայի միջև միջանկյալ հայկական պետություն

«Հոյակապ Գրիգոր էֆենդին», ինչպես մի ժամանակ կոչել էր նրան Միքայել Նալբանդյանը, և որն իր 53-ամյա կյանքն ավարտեց Փարիզում՝ 1887 թ., որպես օսմանյան սահմանադրական շարժման վետերանների առաջնորդներից մեկը։

Հակառակ Ներսես Վարժապետյանի, Գ. Օտյանի, Սերվիչենի, գիտակցաբար միջնորդի և մատնչի դեր կատարեցին Հ. Նուրյանը, գուցե նաև մի շարք այլ անձինք[12]։ Հավանաբար նաև Բ. Դռան և անգլիական դեսպանության կողմից հայ գործիչների օգնությամբ կատարված այս դավն ի նկատի ուներ Իսկյուտարի ցասկոտ, բայց մտավախ պատգամավորը՝ Պեկյան էֆենդին, Բեռլինի կոնգրեսից հետո Ազգային ժողովում հանդես գալով մի ցնցող հայտարարությամբ, թե «Հայկական խնդրույն մեջ ճիզվիթական խարդավանք տեղի ունեցած էին, որոնցմե խաբված էին թե Ս. պատրիարք, թե եպիսկոպոսունք և թե վերջապես, բովանդակ ազգը...»[13]։ «Գաղտնի ձեռք մը որևէ հնարքով, — շարունակում էր նա իր հաջորդ ելույթներից մեկում, — ազգային շարժումին ազգին համար աննպաստ արդյունք արտադրել տվավ»[14]։

Ստանալով ինքնավարություն պահանջելու հորդորը, պատրիարքը որոշում է մենակ չգործել և Ազգային ժողովի քննարկմանն է ներկայացնում այդ առաջարկը, որն ուժեղ դիմադրության է հանդիպում[15], հատկապես ռուսական կողմնորոշման գործիչների կողմից, որոնք իրավացիորեն այն դիտում էին որպես բողոք Ռուսաստանի կողմից Արևմտյան Հայաստանի գրավման դեմ։

1878 թ. հունվարի 13-ին Կ. Պոլսից «Մշակ»-ին գրում էին, որ «...Ամեն հեռատես հայեր կխորհին, թե Լեյարդի թելա-

12 Տե՛ս «Անահիտ», 1899, № 3, էջ 89 (Զոհրաբյանի «Պատասխանատուները» հոդվածը)։

13 «Մասիս», 1878, № 2160 և «Ատենագրությունք Ազգային ժողովո», 1878, էջ 69—70։

14 «Ատենագրությունք Ազգային ժողովո», 1878, էջ 186։ Թեպետ այդ մեղադրանքն այն ժամանակ Ազգային ժողովը չընդունեց և Իզմիրլյանն էլ կոչեց «խանգարյալ երևակայության արդյունք», բայց փաստերը խոսում են մեղադրանքի ճշմարիտ լինելու օգտին։

15 Տե՛ս «Մշակ», 1878, № 15, 48, «Փորձ», 1877/78, № 3 և այլն։

դրություններին անսալով երբ խաբվինք և Ռուսիայի դեմ բողոքել լինենք, Անգլիայի ինտրիգան կառավարությունը հետո մեզ անպաշտպան կթողու միմիայն յուր սեփական շահերի վրա մտածելով և նոցա մասին համաձայնվելով Ռուսիայի հետ և մենք իզուր... Թուրքիայի ատելությունը հրավիրած կլինենք մեր խեղճ ազգի վրա»[16]։

Հարկ է նշել, որ Իգնատևն էլ իր հերթին, Ադրիանապոլսի առաջնորդական տեղապահ Գևորգ վարդապետ Ռուսճուկլյանի միջոցով, Ներսեսին հորդորում էր ձայն բարձրացնել[17] հանուն հայ ժողովրդի ազատագրման, իրականում հետապնդելով Արևմտյան Հայաստանի՝ ռուսների կողմից գրավված տերիտորիաները Ռուսաստանին միացնելու նպատակը։ Ազգային ժողովում Ներսեսը կարողանում է հասնել ինքնավարություն պահանջելու մասին որոշմանը և հայերի դիվանագիտական գործունեությունը նախօրոք սահմանված Ռուսճուկլյանին փոխարինելու են գալիս Բ. Դռան հրամանով, վիրավորներ տեղափոխելու անվան տակ, Ադրիանապոլսում գտնվող Ստեփան Ասլանյանը և Հովհաննես Նուրյանը։ Սրանք էլ Թուրքիայի գերիշխանության տակ ինքնավարություն խնդրելու ծրագիր, իբր գաղտնի, հանձնում են գեներալ Իգնատևին[18]։

Բ. Դռան գիտությամբ[19], փետրվարի 13/25-ին Սան-

---

16 «Մշակ», 1878, № 15։

17 Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1917, էջ 49։

18 Մոռացությամբ, թե դիտավորյալ, բայց առնվազն սխալվում է Իգնատևը, իր հիշողություններում գրելով, թե Թուրքիայի հայկական ծագում ունեցող պետական բարձրաստիճան անձինք, Թուրքիայի պետական խորհրդի անդամ Նուրյան էֆենդին և ռազմական մինիստրության գլխավոր բժիշկ Ստեփան փաշան, որոնք նախկինում Արևմուտքի ջերմ կողմնակիցներ էին, այցելելով իրեն, խնդրում են, հաշվի առնելով, որ Թուրքիան որպես մեծ պետություն այլևս գոյություն չպետք է ունենա, ինքնավարություն տալ հայերին Ռուսաստանի հովանավորության ներքո։ (Տե՛ս «Исторический вестник», 1915, апрель. էջ 52—53)։ Նույն սխալը կրկնվում է նաև Հնչակյան կուսակցության պատմության 1-ին հատորում, ուր նշվում է, որ Ներսես Վարժապետյանը Սան-Ստեֆանո էր գնացել Հայաստանի համար Ռուսաստանի հովանու տակ ինքնավարություն խնդրելու (Տե՛ս Պատմություն ՍԴ Հնչակյան կուսակցության, հատ. Ա, Բեյրութ, 1962, էջ 19)։

19 Տե՛ս Մ. Օրմանյան, Խոհ և խոսք, 1929, Երուսաղեմ, էջ 213։

Ստեֆանո է մեկնում նաև Ներսես պատրիարքը և տեսակցում ռուսական բանակի գլխավոր հրամանատարի հետ։

Ստ. Ասլանյանը, որն այդ շրջանում Ազգային ժողովի ատենապետն էր, 1887 թ. մարտի 30-ին Ստ. Փափազյանին գրած մի նամակում անդրադառնալով Սան-Ստեֆանոյում հայկական հարցի արծարծմանը, գրում է, որ այդ խնդիրը չէր կարող չծագեր, քանի որ «տերութիւնն ալ մասնակցեցաւ ազգայիններուս ջանքերուն»։ Մասնակցեց, որպեսզի տապալի այն — տողատակում դիպուկ նկատում է Ա. Չոպանյանը[20]։

Հայկական ինքնավարության պահանջը, որպես վճռական քայլ, արված էր և Ներսեսը հայացքն ապագային էր հառում տեսնելու, ճշմարիտ էր այդ քայլը արդյոք, որն հետագայում պիտի այնպես ձախողակ այլակերպվեր։

* * *

Սան-Ստեֆանոյի կոնֆերանսում ռուսական պատվիրակությունը գլխավորում էր Կ. Պոլսի ռուսական դեսպան գեներալ Իգնատևը (մյուս պատվիրակը Նելիդովն էր), իսկ Թուրքական պատվիրակության կազմում արտաքին գործերի մինիստր Սավֆետ փաշայի և Բեռլինի թուրքական դեսպան Սադուլլահ բեյի հետ միասին, որպես պատվիրակության քարտուղար և խորհրդական մասնակցում էր Սարգիս բեյ Համամչյանը, որը և որոշապես նպաստեց 16-րդ հոդվածի ընդունմանը։

Անգլիական նավատորմի Կ. Պոլսի առջև երևալը և թուրքերի ստացած հավաստիացումը, որ Ռուսաստանը ստիպված կլինի դատարկել ասիական Թուրքիայում գրաված տերիտորիաները, Բ. Դռանը համարձակություն տվեց հրահանգելու Սան-Ստեֆանոյի իր պատվիրակներին, հայկական հարցի լուծումը համաձայնվել ավելի նեղ սահմաններում և Արևմըտյան Հայաստանի ինքնավարության հարցը 16-րդ հոդվածի տակ, ձևակերպվեց որպես «բարվոքումների ու բարենորոգումների» անհրաժեշտության խոստում միայն։

---

20 Տե՛ս «Անահիտ», 1907, № 6—9, էջ 143։

«Նկատի ունենալով, որ ռուսական զորքերի կողմից Հայաստանում գրավված վայրերի մաքրումը, որոնք պետք է վերադարձվեն Թուրքիային, կարող է այնտեղ ընդհարումների և բարդությունների առիթ տալ, որոնք կարող են վնասակար անդրադառնալ երկու պետությունների բարեկամական հարաբերությունների վրա, Բարձրագույն Դուռը պարտավորվում է անհապաղ իրագործել բարվոքումներ և բարենորոգումներ, որոնք կծագեն հայաբնակ գավառների տեղական պահանջներից ու պաշտպանել վերջիններիս անվտանգությունը քըրդերից և չերքեզներից»[21]։

Ո՛չ սուլթանական Թուրքիան, ոչ եվրոպական գաղութատիրական երկրները և ոչ էլ ցարական Ռուսաստանը հայ ժողովրդին ինքնավարություն կամ անկախություն տալու որևէ ցանկություն չունեին, և երբեք չեն ունեցել։

Չենք բաժանում ժամանակի հայ պահպանողականների այն պնդումը, որ եթե ռուսների շահը պահանջում էր Հայաստանի միացումը Ռուսաստանին, ապա Անգլիայի շահը պահանջում էր, որ Հայաստանը ինքնավարություն ստանա և թումբ ստեղծի Ռուսաստանի դեմ[22]։

Եթե Ռուսաստանի մասին եղած կարծիքը ճշմարտացի է, ապա Անգլիայի մասին եղածը միանգամայն սխալ։ Ճիշտ է՝ նման տեսակետ պաշտպանել են անգլիական մի շարք քաղաքական գործիչներ, բայց այդ չի նշանակում, որ Անգլիայի շահերը իրոք համընկնում էին ինքնավար Հայաստանի գոյության հետ։ Չէ որ Անգլիայի քաղաքական գործիչների մի այլ խմբի առավել իշխող կարծիքը կար, ըստ որի ինքնավար Հայաստանը կդիմանար չափազանց կարճ, և վաղ թե ուշ կմիացվեր Ռուսաստանին, ձախողման դատապարտելով Անգլիայի բոլոր դիտավորությունները։

Հայերին ինքնավարություն պահանջել հորդորող Լեյարդը քիչ ուշ՝ 1878 թ. մայիսի 15-ին հեռագրում էր Սոլսբերիին,

---

21 Տե՛ս Ю. В. Ключников и Андрей Сабинин, Международная политика..., մաս 1, էջ 222։

22 Տե՛ս Ն. Գ. Դեղամյան, Հայ ազատագրական շարժումները ԺԹ դարում, էջ 363։

թե ինքնավարությունը Հայաստանի համար արտառոցություն է և ճանաչաբար ռուսական սադրանք: Հայաստանի հայերը անկարող են ինքնավարության։ Նրանք Պոլսի հայ բանկիրները չեն։ Ինքնավար Հայաստանը մեկ ամիս իսկ չի դիմանա և ձեռքը կմեկնի Ռուսաստանին[23]։ Իսկ մեկ տարի անց 1879 թ. հունիսի 12-ին նույն հասցեատիրոջն ուղղած հեռագրում Լեյարդը տեղյակ էր պահում այն «դավերի» մասին, որոնց նպատակն է վերականգնել «հայկական ազգությունը» (իմա՝ պետականությունը — Ռ. Հ.)[24]։

Միայն 1879 թ. Կ. Պոլսի «Հայրենիք»-ը երկար հոդվածաշարքով փորձեց ցույց տալ, որ Անգլիայի շահերը անհարիր են հայ ժողովրդի ձգտումների հետ[25]։

Մեծ տերությունների կողմից տարբեր առիթներով առաջքաշված կամ պաշտպանված Հայաստանի ինքնավարության պահանջը քաղաքական այս կամ այն նպատակը հետապնդող թատերախաղ է եղել միայն։ Նույնիսկ 16-րդ հոդվածը ցարական դիվանագիտությունը նվաճեց ոչ հայ ժողովրդի նկատմամբ ունեցած քրիստոնեական սիրո համար։ Այլ որ հնարավորություն էր ստանում առաձգական նշանակությամբ ձևակերպված այդ հոդվածով, ի հարկե, պաշտոնապես միջամտել Թուրքիայի ներքին գործերին։ Բացի այդ «Հանդիսավոր խոստովանությունը միջազգային ակտի մեջ, թե քրիստոնյա ազգաբնակչության ապահովությունն ստանում էին քրդերն ու չերքեզները, պարունակում էր հրապարակային դատապարտություն թուրքական վարչության՝ ճանաչված սուլթանի լիազորի համաձայնությամբ։ Զինված դիվանագիտական այս հոդվածով, ռուս դեսպանը Կ. Պոլսում ստանում էր կատարյալ հնարավորություն նշանավոր չափով ազդելու հայ ազգաբնակչության դրության բարելավման վրա և նկատի ունենալով, հարկավ, Ռուսաստանի շահերը, Թուրքիայում հայոց հարցին տալ հանրամարդկային համապատասխան զարգացում։ Սրա համար, ի հարկե, անհրաժեշտ կլինի գործել շրջա-

23 Տե՛ս Խ. Գարիկյան, Հայկական խնդիրը, էջ 323։

24 Տե՛ս «Положение армян...», էջ 57։

25 «Հայրենիք», 1879, № 533 և այլն։

հայաց, եռանդուն կերպով, տեղական պայմաններին կատարելապես ծանոթ լինելով և աչքից չգցելով մեր քաղաքականության վերջնական նպատակները»[26]։

Ինքնագովությամբ բուրող այս տողերը պատկանում են 16-րդ հոդվածի հեղինակ Իգնատևին, որին լսելիս, ժամանակակիցների վկայությամբ, ընդհանրապես հնարավոր չի եղել պարզել, թե նրա խոսքերում որն է ճշմարիտը և որը սնապարծությունը[27]։ Ռուսաստանի վարկը բարձր պահելուն էր հետամուտ Իգնատևը, 16-րդ հոդվածով ցույց տալով, որ «մարդասիրական նպատակներով առաջնորդվող» Ռուսաստանն իր մեծահոգի էր ոչ միայն Եվրոպայի հարստահարվող քրիստոնյաների, այլև Թուրքիայի ողջ քրիստոնյա ազգաբնակչության նկատմամբ։

Հոդվածի քննարկման ժամանակ թուրքական պատվիրակները դեմ եղան էջմիածնի կաթողիկոսի անունը, որպես Ամենայն Հայոց կրոնապետի, այնտեղ հիշատակելուն, և ռուս լիազորները նպատակահարմար գտան զգուշանալ ու չպնդել այդ առաջարկության վրա, մանավանդ, որ այն իրենց էլ ձեռնտու չէր։ «Միջազգային շատ մեծ նշանակություն տալով կաթողիկոսին, — գրում է Իգնատևը, — կարող էինք մեզ համար իսկ որոշ վարչական դժվարություններ ստեղծել Կովկասում և անգամ նպաստել հայերի մեջ մեր շահերին չհամապատասխանող (ընդգծումը մերն է — Ռ. Հ.) փափագների ու ձգտումների հրահրմանը»[28]։

Իսկ ինչ տվեց հայերին 16-րդ հոդվածը։ Ըստ Իգնատևի «Հայերի համար չափազանց շատ նշանակալից էր, որ այն օրվանից, երբ ստեղծվեց օսմանյան կայսրությունը, միջազգային դաշնագրի մեջ առաջին անգամ հիշատակվեց հայերի մասին, իսկ Բ. Դուռը հրապարակորեն ճանաչեց հայ ազգի գոյությունն Ասիական Թուրքիայում»[29]։

---

26 Н. П. Игнатьев, Сан-Стефано («Исторический вестник», 1915, июль, էջ 59—60)։

27 Տե՛ս «Дневник Д. А. Милютина», հատ. 2, էջ 60։

28 Н. П. Игнатьев, Сан-Стефано («Исторический вестник», 1915, октябрь, էջ 85)։

29 Նույն տեղում, июль, էջ 59—60։

Եվ միայն այդքան։ Նույնիսկ այն «տեղական պետքերը», որոնք հաշվի առնելով պիտի բարենորոգումներ կատարվեին, ինչպես Սան-Ստեֆանոյի, այնպես էլ Բեռլինի դաշնագրերով, թողնվում էին որոշելու Բ. Դռանը։ Իսկ եթե 16-րդ հոդվածում կար մի դրական եզր, ապա այն բարենորոգումները ռուսական զորքերի Արևմտյան Հայաստանում գտնվելու հետ կապելու մեջ էր, որը և այնքան սուկալի թվաց միջազգային կոնգրես նախապատրաստող եվրոպական կաբինետներին, հատկապես անգլիական կառավարությանը, և որի պատճառով էլ հետագայում խեղաթյուրվեց հայ ժողովրդի արևմտյան «բարեկամների» կողմից։

Բացի այդ հոդվածից, Թուրքիայի մյուս ժողովուրդների հետ միասին, հայերին էին վերաբերվում դաշնագրի 25-րդ հոդվածը. «Ռուսական զորքն Ասիական Թուրքիայից պետք է դուրս գա 6 ամսվա ընթացքում, վերջնական հաշտությունը կնքելու օրվանից սկսած», և 27-րդը, ըստ որի Բ. Դուռը պարտավորվում էր ոչ ինքը պատժել և ոչ էլ թողնել որ ուրիշները պատժեն Թուրքիայի այն բնակիչներին, որոնք կասկածվում էին պատերազմի ժամանակ ռուսական զենքի հաղթանակին այս կամ այն կերպ նպաստելու մեջ։ Թուրքական իշխանությունները նաև արգելք չպիտի հանդիսանային ռուսական զորքերի հետ Թուրքիայից հեռանալ ցանկացող օսմանյան հպատակներին[30]։

«Հայկական հարցի բզկտված մարմնից, — ինչպես բանաստեղծն է ասում, — մի կերպ ծվատված» 16-րդ հոդվածը, իր չափազանց համեստ բովանդակությամբ, և Սան-Ստեֆանոյի դաշնագիրն ընդհանրապես, այնպիսի ցնծություն առաջացրեց հայ հասարակական հոսանքների ու քաղաքական առանձին գործիչների մեջ, որ թանաք դառնալով՝ Դր. Արծրունու ձեռքով ոգևորված արձանագրեց. «Հայաստանի ինքնավարություն... քրիստոնյա նահանգապետ, սեփական քաղաքային և գյուղական վարչություններ, կայքերի և անձնական

30 Տե՛ս Н. И. Кравченко, Очерки из истории международных отношений конца XIX и начала XX вв., Саратов, 1925, էջ 80—81։

ապահովություն, կալվածքների ազատումը քուրդ և թուրք բեյերի ավատական իշխանությունից», սեփական կամ խառը դատարաններ, դատարանների առջև քրիստոնյաների և մահմեդականների հավասարություն, ուսումնարանների ազատություն։ Եվ որպեսզի հայերը կարողանան պաշտպանվել քրդերից ու չերքեզներից, հարկավոր է ունենալ հայերից կազմված տեղական բանակ, որի մասին եթե նրանք դիմեն՝ Բ. Դուռը չի մերժի — եզրակացնում էր Արծրունին և պահանջում, որ Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովն էլ տեղափոխվի Կարին կամ Վան[31]։ Իսկ պատրիարքը մնալով Կ. Պոլսում փոխանորդի միջոցով նախագահի նիստերին։

Մինչդեռ 16-րդ հոդվածը ոչ ինքնավարություն, ոչ էլ որևէ նման բան չէր խոստանում[32]։ Եվ Ներսեսն իրեն մխիթարում էր միայն այն ասվածքով, թե «երբ չես կրնար ընել ինչ որ կուզես, պետք է ընես ինչ որ կրնաս»[33]։

Ինչևիցե, հայ ժողովրդի՝ 16-րդ հոդվածի հետ կապված հույսերը՝ լավագույն ձևով օգտագործել գոնե այդ մինիմումը, ի դերև ելան։ Թուրքիայի ժառանգությունը վիճարկող երկրները չէին կարող հանդուրժել ժառանգ համարվողներից մեկի միակողմանի ստացած բաժինը, ուստի Սան-Ստեֆանոյի դաշնագիրը «ռումբի մը տպավորություն» գործեց Արևմուտքի վրա։ Մանավանդ, որ «մենակ Թուրքիո գոյություն չէր վտանգեր, այլ նաև հիմնովին կխանգարեր Արևելքի մեջ շահեր ունեցող բոլոր եվրոպական տերությանց հաշիվները։ Ասոնց մեջ բնական է, Անգլիան առաջին կարգի վրա կգտնվեր»[34]։

1878 թ. մարտի 6-ին Ավստրո-Հունգարիայի արտաքին գործերի մինիստր Անդրաշին պաշտոնապես հայտարարեց միջազգային կոնգրեսի հրավիրման մասին, և սկսվեց նրա

---

31 «Մշակ», 1878, № 37։

32 Այժմ էլ առանձին պատմաբաններ առանց լրջորեն կարդալու 16-րդ հոդվածը, «Մշակ»-ի հետ միասին կրկնում են այդ սխալը (տե՛ս Խ. Բադալյան, Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի համաձայնագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թ., Երևան, 1955, էջ 80)։

33 «Ատենագրություն Ազգային ժողովո», 1878, էջ 63։

34 Ա. Անտոնյան, Ընդարձակ պատմություն Պալկանյան պատերազմի, Կ. Պոլիս, 1912, էջ 25։

դիվանագիտական նախապատրաստումը։ Անգլիան շտապեց տեղեկացնել, որ ինքը կոնգրեսին կմասնակցի միայն այն դեպքում, եթե Ռուսաստանն այնտեղ քննարկման ներկայացնի ոչ միայն Սան-Ստեֆանոյի պայմանագրի համաեվրոպական նշանակություն ունեցող հոդվածները, այլ ամբողջ պայմանագիրը։

Անգլիական դիվանագիտությունը փորձում էր Ռուսաստանին վախեցնել պատերազմով, որը նրան, ի դեպ, հաջողվում էր։ 1878 թ. մայիսի 24-ին Ռուսաստանի ռազմական մինիստր Միլյուտինն ահով գրում էր, որ տվյալ իրավիճակում պատերազմը Ռուսաստանի համար կլինի մահացու[35]։

Իսկ մի քանի օր անց՝ Բեռլինի կոնգրես մեկնելու պատրաստվող Շուվալովին տալիս էր նախնական պատգամներ. «Դուք վիճակը գիտեք։ Մենք այլևս կռվել չենք կարող։ Մենք այն չենք կարող ոչ ֆինանսական, ոչ ռազմական տեսակետից։ Դուք հայրենասիրական պարտք եք վերցրել ձեզ վրա, ուստի պաշտպանեցեք մեզ որքան հնարավոր է լավագույն ձևով։ Պաշտպանեցեք այն կետերը, որոնք դուք հնարավոր կհամարեք պաշտպանել, և զիջեցեք, ավելի լավ է զիջեցեք բոլորը՝ միայն թե չխափանեք կոնգրեսը»[36]։

Ռուսաստանը խուսափում էր նոր պատերազմից ոչ միայն թուլացած լինելու և տնտեսական ծանր վիճակում գտնվելու պատճառով, այլև ներքին, քաղաքական անկայունության ու «նիհիլիստական» շարժման աշխուժացման ահից։ Ի դեպ, 1878 թ. մայիսին, հեռավոր Զմյուռնիայի «Արևելյան մամուլ»-ը զարմանալի խորաթափանցությամբ մատնացույց էր անում հենց այդ վերջին պատճառը. «Անգլո-ռուսական պատերազմ մը կրնար ներքին ընկերական հեղափոխություն մը բերել և ընդհանուր քաղաքական փոթորիկ մը հարուցանել հյուսիսային պետության մեջ, կայսերական գահը վտանգի մեջ դնելով»[37]։ Մինչդեռ Անգլիայի կողմից եղած պատերազմի

35 «Дневник Д. А. Милютина», հատ. 3, էջ 61։

36 П. А. Шувалов, О берлинском конгрессе 1878 г. («Красный архив», 1933, № 4(59), էջ 101)։

37 «Արևելյան մամուլ», 1878, էջ 33։

տպատանքները գործնական չէին, և մնում էին որպես դատարկ ահաբեկումներ միայն։

Դիպուկ է ասված, որ Անգլիան ուղղակի խաղում էր ռուսական պետական գործիչների նյարդերի վրա և ցարական կառավարությունն այդ խաղը տանուլ տվեց[38]։

Բ. Դուռը թեպետ հայտարարում էր, որ Թուրքիան պարտված է, թուլացած, և որ նրա միակ փրկությունը Ռուսաստանի հետ դաշինք կնքելու մեջ է, անգամ շեշտելով, որ Եվրոպան իրավունք չունի խառնվելու իրենց գործերին, բայց Սան-Ստեֆանոյի դաշնագիրը վավերացնելու առիթով Պետերբուրգ ժամանած Ռեուֆ բեյը չհասկանալու տվեց միացյալ ուժերով անգլիական նավատորմից Բոսֆորը պաշտպանելու միջոցառումների մշակման մասին Միլյուտինի կողմից իրեն արված առաջարկությունը[39]։

Մինչդեռ Անգլիան եռանդով «մշակում էր» թուրքերին, ձգտելով իր «կենսական շահերի» պաշտպանման նպատակով տիրանալ Միջերկրականի կարևորագույն հանգույցներին։

1877 թ. Բ. Դռան հետ տարվող բանակցությունները, որոշ տերիտորիաների դիմաց Թուրքիային փոխատվություն տալու մասին. դրական արդյունքի չհասցրին անգլիական դիվանագետներին։

Նույն տարվա դեկտեմբերի 12-ի նամակում Կ. Պոլսի անգլիական դեսպան Լեյարդը իր պրեմիերին այդ առթիվ գրում էր. «Մինչև այժմ Դուռը պատրաստ չէ մեզ վաճառելու Կրետեն, Կիպրոսը կամ որևէ այլ կղզի Միջերկրական ծովում»[40]։

«Տանքրեդ»-ի հեղինակը իր դիվանագիտական ստեղծագործության մեջ ավելի քան երեսուն տարի առաջ զարգացրած տեսակետին՝ Կիպրոս կղզու խիստ կարևոր նշանակության մասին, գործնական տեսք էր տալիս իր ղեկավարած կառավարության 1878 թ. մարտի 2-ի նիստում, առաջարկե-

38 Н. И. Беляев, Русско-турецкая война 1877—1878 гг., էջ 426։

39 Տե՛ս «Дневник Д. А. Милютина», հատ. 3, էջ 27։

40 Г. И. Реутов, Из истории захвата Кипра Англией («Вопросы истории», 1958, № 3, էջ 140)։

լով գրավել Միջերկրական ծովի մի շարք կղզիներ, այդ թվում Կիպրոսը, որպեսզի պաշտպանվի «Եվրոպայի առևտուրն ու կապը Արևելքի հետ, ռուսական մռայլ միջամտություններից»։

Դրանից ուղիղ վեց օր հետո՝ մարտի 8-ին, որոշում է ընդունվում ռուս-թուրքական դաշնագիրը կոնգրեսում քննարկելիս, կամ եթե կոնգրես էլ չհրավիրվի, հանուն բրիտանական շահերի, հասնել Միջերկրական ծովում նոր բազաների ձեռք բերման. «անհրաժեշտության դեպքում ուժ գործադրելու ճանապարհով»[41]։

1878 թ. ապրիլի 10-ին Լորդերի պալատում արտասանած ճառում, Բիկոնսֆիլդը վախ էր հայտնում, որ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը վերափոխման չենթարկելու դեպքում, Ռուսաստանը տեր դառնալով Բաթումին և Հայաստանի բոլոր ամրոցներին, կարող է սպառնալ Եգիպտոսին, Սուեզի ջրանցքին և դրանով փակի Անգլիայի Հնդկաստան տանող ճանապարհը։

Անգլիական բուրժուազիայի հայացքը առավել սևեռված էր Կիպրոսի վրա, որը նրանք դիտում էին որպես Արևելյան Ասիայի ու Եգիպտոսի նվաճման գրավական։ «Եթե Կիպրոսը Դռան կողմից տրվի ձերդ մեծությանը և Անգլիան միաժամանակ Թուրքիայի հետ մտնի պաշտպանողական համաձայնության մեջ, — գրում էր Մեծ Բրիտանիայի առաջին մինիստրն իր թագուհուն հասցեագրած 1878 թ. մայիսի 5-ի թվակիր զեկույցում, — ...Անգլիայի հզորությունը Միջերկրական ծովում, ինչպես նաև ձերդ Մեծության հնդկական կայսրությունը նշանակալիորեն ուժեղանում են։ Կիպրոսը՝ դա բանալի է դեպի Արևելյան Ասիա»[42]։

Բեռլինի կոնգրեսի նախօրեին անգլիական դիվանագետներին հաջողվեց նախ ահաբեկել Աբդուլ Համիդին, «նոր օսմանների» հայտնի գործիչներից մեկի՝ Ալի Սուավիի ղեկավարությամբ պետական հեղաշրջման փորձ կատարելով, որը ձախողվեց։

---

[41] Г. И. Реутов, Из истории захвата Кипра Англией («Вопросы истории», 1958, № 3, էջ 141)։

[42] Նույն տեղում, էջ 144։

*Այս Բեռլինի կոնգրեսի բացումից ինն օր առաջ՝ 1878 թ. մայիսի 23-ին (հունիսի 4-ին), նրանց հաջողվեց թուրքերին պարտադրել Կիպրոսի դաշնագիրը, որով ստրատեգիական նշանակություն ունեցող այդ կղզին հանձնվում էր Անգլիային։ Փոխարենը Թուրքիան ստանում էր կոնգրեսում, Ռուսաստանի կողմից գրավված Բայազետի, Ալաշկերտի հովտի և մի շարք այլ շրջանների պաշտպանության խոստումներ։*

*Կիպրոսի դաշնագրով Անգլիան իր վրա է վերցնում Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության պաշտպանությունը, դրանով իսկ խոստանալով թուրքերին՝ թույլ չտալ Ռուսաստանի կողմից հայերի նկատմամբ ձեռք բերած այն մենաշնորհը, որին հասել էր նա Սան-Ստեֆանոյի համաձայնագրի 16-րդ հոդվածով։*

*Այդ դաշնագրով «Անգլիան իրապես կսպաներ հայկական բարենորոգումների հարցը, և լորդ Պիկոնսֆիլտ Պեռլին կերթար անձամբ անոր թաղումը կատարելու»[43]։*

*Սուլթանն հետագայում հրաժարվեց կղզին զիջելու հրաման տալ, բայց անգլիացիներն առանց հրամանի սպասելու գրավեցին այն, սուլթանին ստիպելով հետին թվով ստորագրել կղզին հանձնելու ֆերմանը։*

*Անգլիան այդ դաշնագրով ահավոր կերպով խաբեց Թուրքիային, քանզի նրան տված խոստումները, արդեն մայիսի 18/30-ին՝ Լոնդոնում Ռուսաստանի հետ կնքած դաշնագրով, ելնելով իր շահերից, արձանագրել էր, փոխարենը համաձայնվելով, որ Ռուսաստանին մնան Բաթումը, Կարսը, Արդահանը իրենց շրջակայքով ու Բեսարաբիայի՝ Ղրիմի պատերազմի ժամանակ Ռուսաստանից անջատված մասը։*

*Բայց հունիսի 4-ին, Կ. Պոլսում Լեյարդն ու Սավֆետ փաշան, իրենց ստորագրած Կիպրոսի դաշնագրի առաջին հոդվածով իսկ ոչնչացնում էին դրանից ընդամենը չորս օր առաջ կնքված անգլո-ռուսական համաձայնությունը. «...Եթե Բաթումը, Արդահանը կամ Կարսը կամ այդ վայրերից որևէ մեկը պահվի Ռուսաստանի կողմից, կամ երբևիցե փորձ արվի*

---

43 Մ. Սեռոբյան, *Մեր պայքարը հայ ազատագրության ուղիով, էջ 263։*

զրավել Նորին Մեծություն Սուլթանի՝ խաղաղության վերջնական պայմանագրով որոշված տերիտորիաների որևէ մասը Ասիայում, ապա Անգլիան պարտավորվում է միանալ Նորին Մեծություն Սուլթանին, նշված տերիտորիաները զենքի ուժով պաշտպանելու համար»[44]։

Կիպրոսի դաշնագրով Հայաստանի՝ Լոնդոնում համաձայնեցված անգլո-ռուսական վերահսկողությունը փոխարինվում էր միայն անգլիական վերահսկողությամբ։ Իսկ Բ. Դուռը պարտավորվում էր Փոքր Ասիայում բարենորոգումներ կատարել, որն, իհարկե, մնաց անկատար։

Կիպրոսի դաշնագրից երկու օր անց Անգլիան կնքեց մի այլ գաղտնի համաձայնագիր Ավստրո-Հունգարիայի հետ, պայմանավորվելով օգնել կոնգրեսում միմյանց՝ մեկի համար Մերձավոր Արևելքի հաղորդակցության ստրատեգիական ուղիներն ապահովելու, մյուսի համար՝ յուրացնելու Ռուսաստանի եվրոպական նվաճումները։

Բեռլինի համաժողովին յուրովի պատրաստվում էր և հայ ժողովուրդը, որի անունից գործող Կ. Պոլսի պատրիարքարանի համաձայնությամբ կոնգրեսին ներկայացնելու համար Գր. Օտյանը կազմել էր 1864 թ. Թուրքիայի հովանավորության տակ ինքնավարություն ստացած Լիբանանի սահմանադրության սկզբունքներով մի ծրագիր՝ «Ծրագիր կազմակերպական կանոնագրի օսմանյան Հայաստանի»։

Ճակատագրի դառը հեգնանքով հայ գործիչներն իրենց ժողովրդին ազատագրելու հույսերը կապում էին հողագնդի ժողովուրդների կեսին ստրկացրած արևմտյան աշխարհակալ պետությունների ամբարիշտ խաբեության հետ։ Այն պետությունների, որոնց խարդավանքից, ավելի քան երկու տասնամյակ դրանից առաջ Հյուգոն զգուշացնում էր իտալացի հայրենասերներին.

«Իտալացիներ ձեզ հետ խոսում է մի անհայտ, բայց ձեզ նվիրված եղբայր։ Զգուշացեք այն բանից, ինչ այս բազկիս վեհաժողովները, կառավարություններն ու դիվանագիտությու-

44 Տե՛ս Ю. Ключников..., մաս 1, էջ 226, տե՛ս նաև Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 104։

նը ըստ երևույթին ձեզ համար պատրաստում են։ Իտալիան հուզվում է, նա կյանքի նշաններ է ցույց տալիս. նա վրդովվում ու անհանգստացնում է կառավարություններին. նրանք անհրաժեշտ են համարում քնեցնել Իտալիային։

Զգուշացեք, նրանք ձեր հանգստությունը չեն ուզում, հանգստություն կլինի միայն այն ժամանակ, երբ բավարարություն տրվի ձեր իրավունքներին, նրանք ձեր երկարատև քունն են ուզում, նրանք ձեր մահն են ցանկանում...»[45]։

Իհարկե, հայ գործիչների մեջ կային խոհուն գլուխներ, որոնք փորձում էին ընդդիմանալ, վտանգավոր էին համարում կոնգրեսին դիմելու ձեռնարկը, բայց նրանք չէին կարող դիմադրել այն համընդհանուր հոսանքին, որի աչքերին հայկական ինքնավարության միրաժն արդեն երևացել էր ու փութով տանում էր նրան իր ետևից։

Դոկտոր Հարություն Թիրաքյանը Ներսեսին գրած նամակում նախազգուշացնում էր, որ հայկական հարցը բարձրացնելը տվյալ պայմաններում նպատակահարմար չէ և որ մեծ տերությունները իրենց շահերից ելնելով՝ այն կտապալեն[46]։ «Ինչ եք անում, ուր եք տանում ազգը, սևագլուխ և ինքնակոչ դիվանագետներ,— Ազգային ժողովում մոլեգնած թըրատում էր «Մանզումեի էֆքիար»-ի խմբագիր Կարապետ Փանոսյանը, — ...ով կտա մեզ ինքնավարություն, որի վրա եք դնում ձեր հույսը։ Այն շահամոլ և նենգ Եվրոպայի վրա, որը ուզում է պահպանել Թուրքիայի գոյությունը իր շահադիտական նպատակների համար»[47]։

Անխուսափելի էր մի ամբողջ ժողովրդի պատրանքը խաթարող անհատի նշանակումը, «մատնիչ» ու «դավաճան» փաղաքշանքներով։ Եվ պոլսացի բնակիչների ու փողոցային ամբոխի մի հոծ բազմություն շարժվեց դեպի Ղալաթիա ու

---

45 Տե՛ս «Ժողովածու», (հօգուտ ռուս սովյալների), Մոսկվա, 1892, էջ 2—3։

46 Սարգիս Իզմիրլյան, Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին, Պեյրութ, 1962, էջ 24—25։

47 Տե՛ս «Մուրճ», 1907, № 2, էջ 61—62։

*բարեբախտաբար Փանոսյանին չգտնելով, իր ցասումը թափից տպարանի մեքենաների ու լրագրերի կապոցների վրա։*

*Առավել դիպուկ ու արմատական էր հանդես գալիս «Արևելյան մամուլ»-ը՝ ափսոսանք հայտնելով, որ հայ ժողովուրդը իր հույսը դրել է լոկ բողոքների վրա. «Սուրն ու թնդանոթը ավելի զորությամբ կխոսեին քան թե բողոք ու գրիչ»։ Մինչդեռ հայ ժողովուրդը «կկարծեր թե իր դարավոր հավատարմությունը բավական ազդու երաշխավորություն մ՚է ստանալու խաղաղությամբ ինչ որ այլք զենքով խլելու ելեր էին»*[48]*։*

*Հայկական հարցով զբաղվելու հավակնությամբ Կ. Պոլսի ֆրանսիական ու իտալական դեսպանատների պատուհաններից գլուխ էր անկում նաև հայ կաթոլիկների առաջնորդ Անտոն Հասունյանը, որն ի սեր պապականության, իր ամբողջ կյանքը նվիրել էր հայ ազգության դեմ մաքառելուն։ Նա կոչ էր անում Եվրոպային թույլ չտալ, որ Ռուսաստանն Արևմտյան Հայաստանը գրաված պահի, որովհետև ռուսները ցանկանում են ջնջել Արևելքի մյուս բոլոր կրոններն ու աղանդները։*

*Բ. Դռան գիտությամբ ու թույլտվությամբ Հայաստանի ինքնավարության ծրագիրը կոնգրես ներկայացնող հայ պատվիրակները, որոնց կոնգրես ուղարկելու հարցը Վարժապետյանը լուծեց առանց Ազգային ժողովի, պատրիարքարանի հետ կապ պահպանելու համար ստացան անգամ գաղտնագիր օգտագործելու իրավունք, և Խաչիկ Օտյանի պատրաստած ծածկագրությունը Ստ. Փափազյանն իր հետ տարավ Բեռլին։*

*«Մասիս»-ի վկայությամբ Բ. Դուռը «հաշտ աչքով նայեցավ մեր ազգային պահանջմանցն և խափան չեղավ Ս. Պատրիարքի աշխատությանց»*[49]*։*

*«Ներսեսի նախաձեռնությունը կատարելապես օրինավորության գետնին վրա էր, օսմանյան քաղաքականության դեմ ընավ կետ մը չուներ, մանավանդ, թե օսմանյան տերության ալ հավանավորված էր», — գրում է Մ. Օրմանյանը*[50]*։ «Համիդ*

---

48 *«Արևելյան մամուլ», 1878, մայիս, էջ 9—10։*

49 *«Մասիս», 1878, № 2145։*

50 Մ. Օրմանյան, *Խոհ և խոսք, էջ 422։*

ինքը դիվային խորամանկությամբ, — պատմում է մի այլ ժամանակակից, — քաջալերեց, ըստ ոմանց նույնիսկ ուղղակի թելադրեց հայ պատվիրակության մը առաքումն ի Պեռլին, իբր թե հայերն իրենք ևս կը փափաքին եղեր Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածին վերաքննությամբ՝ Ռուսիայի փոխարեն և ի հեճուկս անոր՝ մյուս տերությանց համախումբ պաշտպանությունն ապահովել»[51]:

Ըմբոստանալով Թուրքիայում հայերի հասցեին նետած այն մեղադրանքի դեմ, թե նրանք իբր գործիք են ծառայել օտար պետությունների ձեռքին, Ս. Նարկիզյանը Կ. Պոլսում լույս տեսնող «Մարմարա» թերթում փորձում է հերքել «հայերու հասցեին կատարված զրպարտությունները»։ 1945 թվին Պոտսդամում բացվելիք կոնֆերանսի առիթով գրած իր մի հոդվածում, իրավացիորեն նշելով, որ հայ անունը եվրոպական պետությունները շահագործել են «նոր ավար մը ձեռք բերելու համար միայն», նա նույնպես հաստատում է, որ հայկական պատվիրակությունը Բեռլին է մեկնել սուլթանի գիտությամբ։ Դեռ ավելին, Հայաստանի ինքնավարության՝ կոնգրեսին ներկայացրած ծրագրին նախօրոք ծանոթացել և իր հավանությունն է տվել Աբդուլ Համիդը։ Սակայն թուրքական ֆեսի տակ ծանրացած հայ պրոֆեսորի դատողությունը հեռու չի գնում պաշտոնական արդարացումների մակերեսային ընկալումից, և նա անվիճելիորեն Բ. Դռանը համախորհուրդ է համարում հայ գործիչների հետ միասին 16-րդ «առաձգական ու անորոշ» հոդվածը կոնգրեսում **«հայերի օգտին»** փոխելու դիտավորության մեջ։ Ապա ընկնելով մի նոր ճահիճ, մոտ յոթ տասնամյակի հեռավորությունից աղաղակում է, թե «... հայ պատվիրակները Պեռլինի մեջ ոչ միայն թրքական շահերուն դեմ չէին շարժած, այլև ընդհակառակը, օտար միջամտության առաջքը առնելու նպաստած էին՝ **անգամ մը ևս գործնականապես ցույց տալով թե անխախտ էր իրենց հավատարմությունը**»[52]:

---

51 Հ. Երամյան, Հուշարձան, 1929, Ալեքսանդրիա, հատ. 1, էջ 324։

52 «Մարմարա», 1945, № 712 և № 723 (ընդգծումը մերն է — Ռ. Հ.)։

Իրականում հայ գործիչները մոլորեցված էին և թուրքական կառավարությունը շարունակում էր իր չար դիմախաղը, կոնգրեսում հայերի ինքնավարության հարցի առաջ քաշումը հետապնդելով Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածի ձախողումը միայն, մանավանդ որ դեռ չէր կնքված Կիպրոսի դաշնագիրը։

Կոնգրես մեկնող հայկական պատվիրակությունը ղեկավարում էր արևմտահայ ազատագրական շարժման ռահվիրան՝ Մկրտիչ Խրիմյանը, Տարոնի արքեպիսկոպոս և նախկին պատրիարք տիտղոսով։ Պատվիրակության կազմում էին նրա քարտուղար և թարգմանիչ Մինաս Չերազը և Խորեն Նար-Բեյ արքեպիսկոպոսը, որը Պետերբուրգից մեկնեց Բեռլին և միացավ նրանց։ Պատրիարքի հատուկ հանձնարարությամբ Բեռլին ժամանեց նաև Ստեփան Փափազյանը։ Բայց կոնգրեսին ներկայացվող փաստաթղթերը ստորագրում էին Խրիմյանն ու Նար-Բեյը։

Հայկական պատվիրակության կազմը մի այդպիսի առաքելության համար, ինչպես իրավացիորեն նկատել է Լեոն, շատ անհաջող էր։ Մանավանդ Խրիմյանի ընտրությունը։ «Եթե կար մի պաշտոն, — գրում է Լեոն — որ ամենևին չէր գալիս Խրիմյանին, այդ հենց դիվանագիտական առաքելությունն էր, որովհետև բացի հոգևորականի հատկություններից, նա ուներ և ժողովրդական մարդու դյուրահավատությունը, բանաստեղծի երազուն հակումներ, մի խոսքով՝ մեծ չափերով ուներ այն ամենը, ինչ չպիտի ունենար մի դիպլոմատ։ Երբ նրան հարցրին, թե ինչպես պիտի կատարի այդ դիվանագիտական շրջագայությունը, քանի որ եվրոպական ոչ մի լեզու չգիտե, նա պատասխանեց. «Պիտի խոսիմ լեզու մը, որ համաշխարհային է և աստվածների լեզու է միևնույն ժամանակ, այսինքն պիտի լամ»։ «Միանգամայն ճիշտ խոսքեր, — շարունակում է Լեոն,— պատկերացնելու համար հայ դիվանագիտությունը, որ առաջին անգամ գնում է Եվրոպա Բիսմարկների դռները» ծեծելու[53]։

53 Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, հատ. 1, էջ 85։

Իսկ մյուս պատվիրակ Խ. Նար-Պեյը «ազգի մը մեջ չտեսնըված առաջին գերասան վարդապետը» (Հ. Սիլաճյան), մի վարկաբեկված հոգևորական էր, գավառում աշխատելուց խուսափող, շահամոլ, կեղծավոր ու անսկզբունքային։ «Բարոյական կյանքին մեջ անողորմ ընթացքը, — գրում է նրա մասին Օրմանյանը, — զարդարանքի և պերճանքի տարապայման սիրահարությունը, շպարի և հրապուրանքի անձնվեր միտումը, ավելի արդյունք երևցնելու քան գործելու ջանքը, արքայազարմ իշխան ըլլալու համար հետապնդած կեղծիքը... ասոնք ամենքը յուր կյանքը ստորնացուցին, և պատրիարքության հասնելու անհագ տենչն ալ հուսախաբ թողուցին և կաթվածահար անշուք մահ մը պատրաստեցին»[54]։ «Նար-Պեյի կյանքը, — գրում է նույն հեղինակը, — առեղծվածային ըլլալու չափ յուրօրինակ զուգորդություն մըն է մտքի ու գործի, լեզվի ու գրչի գերազանցապես ընտիր ձիրքերու հետ խառնված թեթևության և անտեղության և ստորնության»[55]։

«... Եթե կա հայոց մեջ մեծանուն բաղդախնդիր մը այս է Նար-Պեյ եպիսկոպոսը, — գրում էր «Արևելյան մամուլ»-ը, — Զարմանք, կան արարածներ, որ գերասան լինելու սահմանված են և իրենց բուն կոչման հակառակ ասպարեզ մ'ընկած ակամա»[56]։

Բեռլինի կոնգրեսի ժամանակ, մի կողմ թողած պատվիրակի իր պարտականությունները, նա օրական 8—10 նամակ էր առաքում տարբեր ուղղություններով՝ հատկապես Սոլսբերիին, մտքում տակավին շոյելով Կիպրոսի իր կեղծ ժառանգությունը ձեռք բերելու սին հույսերը։

1878 թ. մարտյան մի գիշեր (8/20), որը պատճառ դարձավ այն անհիմն ենթադրության, թե Եվրոպա մեկնող հայկական պատվիրակությունը Բ. Դռնից գաղտնի է դուրս եկել Կ. Պոլսից, Մ. Չերազի ուղեկցությամբ Իտալիայի ճանապարհը բռնեց իր ոդիսականն սկսող Մ. Խրիմյանը։

---

54 Մ. Օրմանյան, *Խոհ և խոսք*, էջ 425։

55 Մ. Օրմանյան, *Ազգապատում*, Երուսաղեմ, 1927, հատ. 3, էջ 4677։

56 «Արևելյան մամուլ», 1878, օգոստոս, էջ 159—160։

Հայաստանի ինքնավարության ծրագիրը Ալեքսանդր երկրորդին հանձնելու և ցարական բարյացակամությունն հայցելու հույսով Պետերբուրգ մեկնեց Խ. Նար-Բեյը։ Իսկ ամենայն հայոց կաթողիկոսին, նրա պարտականությունների մասին հիշեցնելու բարի դիտավորությամբ, Էջմիածին ուղևորվեց ապագայի «երկաթյա պատրիարքը»՝ Մատթեոս Իզմիրլյանը։

Սակայն Գևորգ կաթողիկոսը, հայ կյանքի ալեկոծ այդ օրերին, ժողովրդի սրտակեղեք հեծեծանքների ու իրեն ուղղված դիմումների նկատմամբ ցուցաբերեց հանցագործ անտարբերություն։

Գուցե այդ բացատրվեր ցարիզմի նկատմամբ ունեցած նրա բացասական վերաբերմունքով ու նրա վարած հակառուսական քաղաքականությամբ, եթե նա միայն այդ չափով ցույց տար իր անհոգությունը։ Քիչ ուշ՝ 1880 թվականին՝ Վասպուրականի սովի ահավոր օրերին, երբ սովյալներին օգնության ձեռք էին մեկնում անգամ ամենաքիչ հնարավորություններ ունեցող և նույնիսկ օտար գործիչներ, այս «իմաստուն» ծանծաղակը բարձիթողի էր նետել վանքի հղփացած եպիսկոպոսներին, խժռելու այդ նպատակով ստացած գումարների զգալի մասը[57]։

Րաֆֆին անարգանքի սյունին էր գամում Էջմիածնի բարձրաստիճան կղերականությանը և նրանց պարագլուխ Գևորգ 4-րդին ու Մանկունի եպիսկոպոսին, մեղադրելով հայ ժողովրդի, նրա դատի հանդեպ ունեցած նման անտարբեր վերաբերմունքի համար։

Մ. Օրմանյանը հետագայում գայրույթով պախարակում էր կաթողիկոսի անքավելի մեղքը, նշելով, որ ոչ թե պետք էր դիմադրել ինքնավարություն ստանալու համար ծավալված շարժմանը, կամ չեզոք դիրք գրավել, ինչպես հայոց կրոնապետն արեց, այլ հաշվի առնելով ստեղծված իրադրությունը, ավելի հասուն ու խելամիտ մարդիկ գործի գլուխ

---

57 Տե՛ս Արմենակ Սյունի, Հայաստանի սովը և Էջմիածինը, Տփխիս, 1881, էջ 6, 56—57։

կանոններին և ջանային հայ ժողովրդի համար «լավագույն ապագա մը պատրաստել օրինավորության շրջանակի մեջ»[58]:

Մինչդեռ Էջմիածնում անգամ խանգարում էին Իզմիրլյանին կաթողիկոսի հետ անձնական տեսակցություն ունենալ: Վեց օր սպասելուց հետո միայն նրան հաջողվեց ստանալ Գևորգ IV-ի ունկնդրությունը, որը տարավ ու բերեց, թե «գնա տուր այդ գեղջուկին (Ներսես պատրիարքին), որ այդպիսի հիմարությունները նա կընե. սուլթանը ավելի լավ է հայոց համար քան Զարը»[59]: Եվ Իզմիրլյանը ձեռնունայն վերադարձավ Կ. Պոլիս:

Ապարդյուն էին անցել նաև դեռ պատերազմի ժամանակ Հայկական տարբեր գավառներից ու Հայաստանից ուղարկված հավաքական մի շարք նամակները, որոնց տակ եղած ստորագրություններն է, հավանաբար, քահանա Գեղամյանը, իրեն հատուկ հոռետեսությամբ, կեղծ համարում[60]:

Այդ փաստաթղթերից հետաքրքիր են Բաքվի հայ հասարակության խնդրագիրը՝ թվագրված 1877 թ. հուլիսի 12-ին[61], Պյատիգորսկի հայերի 1877 թ. օգոստոսի 14-ի նամակը[62], և Դարալագյազի ազգաբնակչության 351 ստորագրությամբ ուղարկված 1877 թ. օգոստոսի 10-ի դիմումը, ուր կարդում ենք. «... Ձերդ սուրբ օծությունը, իբրև ամենայն հայոց ներկայացուցիչ, բարեհաճեցեք մատուցանել մեր բոլոր ռուսաբնակ հայերի ամենահպատակորեն խնդիրը մեր ամենաողորմած կայսերը, որպեսզի Նորին Մեծությունը յուր գութը տարածելով նաև Տաճկաստանի բազմաչարչար հայերի վերա, բարեհաճե արժանացնել սորանց ևս այն արտոնություններին, որպիսիք պետք է վայելեն Տաճկաստանի մյուս քրիստոնյայք։ Մենք վստահ ենք, որ Ձերդ վեհափառությունը այս ճգնաժա-

58 Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. 3, էջ 4448:

59 Տե՛ս «Անահիտ», 1906, N 3—5, էջ 42:

60 Ե. Ր. Գեղամյան. Հայերի ազատագրական շարժումները ԺԹ դարում, էջ 352:

61 ՀՍՍՌ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթապանակ 230, վավերագիր 328բ:

62 Նույն տեղում, թղթ. 230, վավերագիր 331:

մի՛ն անկեղծ կարեկից կհանդիսանա Հայաստանի տառապանքների»[63]։

Բայց կղերական լեռը չէր երերում։ Նա արհամարհանքով շուռ էր գալիս, ձեռք թափահարում բոլոր հորդորների վրա, անգամ հանդգնությամբ ընդունում իր հասցեին ուղղված պարսավանքի թուքը։

1878 թ. փետրվարի 15-ին Բաքվից «Հայազգի» ստորագրությամբ մի նամակում, ուղղակի ամոթանք էին տալիս կաթողիկոսին. «Ձեր օրով աշխարհի մեջ մեծ պատմական իրողություն է կատարվում... Արդյոք մի հոգացողություն, մի նախադիծ ունի՞ք պատրաստած, մի որևիցե գործնական քայլ արած կամ անելո՞ւ եք, այս մասին ռուսաց կայսեր և մյուս եվրոպական պետությունների առջև միջնորդելու և քաջությամբ պաշտպանելո՞ւ եք հայկական խնդիրը... Բայց առհասարակ ամենքը կարծում են, որ Դուք անհոգ նստած եք և միայն ձեր անձնական հանգստության վրա եք մտածում...»[64]։

Կ. Պոլսից անձնական նամակներ էին գրում կաթողիկոսի հին ծանոթները։ Առավել հետաքրքրական է սահմանադրական շարժման ականավոր դեմքերից մեկի՝ Սերվիչենի նշանավոր նամակը, գրված 1878 թ. ապրիլի 12-ին։

Վաստակավոր գործիչը կարծես մոռացել էր անցյալի պատրանքները և իր երկարատև գործունեության փորձն էր վկայակոչում՝ համոզելու կաթողիկոսին, որ թուրքերի հետ միանալ, նշանակում է ուրանալ ազգը։ Մինչդեռ հայ ժողովուրդը ոչ թուրքանալ, ոչ էլ ռուսանալ է ցանկանում։ Պետք է պայքարել հանուն հայ ժողովրդի հարատևման։ Հարկ է մարտնչել, սկիզբ դնել պայքարին, եթե նույնիսկ այժմ արդյունքի հասնելու երաշխիքներ իսկ չլինեն։ Ինչից եք վախենում, մենք բոլորս էլ մահկանացու ենք և յուրաքանչյուրս կոչված՝ մի պարտք կատարելու, իսկ այդ պարտքի կատարման ճանապարհին մեզ առաջնորդողը ազգի շահն է։ «Միան-

---

63 ՀՍՍՌ Մ. Մաշտոցի անվան Մատենադարանի արխիվ, Կաթողիկոսական դիվան, թղթ. 230, վավերագիր 336։

64 ՀՊՊԱ, ֆ. 56, վարչա-կազմակերպական բաժին, ց. 4, գ. 24, թ. 16—19։

դամայն ազգ կազմելու կամ անհետանալու խնդիր կա մեջտեղը, — շարունակում է Սերվիչենը, — Ասանկ պարագայում չգործելը քրեական հանցանք է... Դուք պարտազանց կըլլաք, եթե մեզ աջակից չըլլաք»[65]:

Կաթողիկոսն ամոթալի լռությամբ տարավ այս ապտակը ևս:

Ավելի լավ բախտ չէր վիճակված Պետերբուրգ մեկնած Խ. Նար-Պեյին, որը 1878 թ. մարտի 18-ին անձամբ ներկայանալով ցարին, նրան է հանձնում հայերի ինքնավարության՝ պատրիարքարանում մշակված մի ծրագիր, որի բովանդակությունը Նար-Պեյն այսպես է ներկայացնում:

Հայերը պետք է ունենան հայ լուսավորչական կառավարիչ, մաքսպանի և վալիի տիտղոսներով ու մյուշիրի աստիճանով, նշանակված սուլթանի կողմից և համաձայնեցված ռուսական ցարի հետ:

Անհրաժեշտ պայման է համարվում կուսակալների և գավառապետների հայ լուսավորչական լինելը և նրանց ընտրությունը Հայաստանի Ազգային ժողովի, իսկ հաստատումը Բ. Դռան կողմից: Ոստիկանությունն ու քաղաքապահ զինվորությունը պետք է լինեն հայերի իրավասության տակ, իսկ դատարանները գործեն քրիստոնեական օրենքներով ու հայ դատավորների նախագահությամբ, հնարավորություն չտալով մահմեդական կրոնավորներին խառնվելու այդ գործերի մեջ:

Պահանջվում է ոչնչացնել քրդերի, վաչկատունների ու կալվածատերերի արտոնությունները, կատարել հարկերի նոր և արդար բաշխում և կալվածական ու հողային քննություն, ինչպես նաև Հայաստանի բոլոր մահմեդականների զինաթափում:

Անհրաժեշտ է համարվում, ցարի համաձայնությամբ, երկրի կառավարման կազմակերպական կանոնադրության ընդունում, որը կվավերացվի սուլթանի կողմից:

---

65 ՀԿՊԴԱ. ֆ. 56, վարչա-կազմակերպական բաժին, ց. 4, գ. 24, թ. 25—26:

Վերջին՝ տասնհրորդ կետով խնդրվում է Զեյթունի ինքնավարության երաշխավորում՝ ըստ հնագույն վարչաձևի[66]:

Հայ ժողովրդի ինքնավարության բաղձանքը ներող քրմծիծաղով ընդունվեց Ալեքսանդր II-ի կողմից, և հայ եպիսկոպոսի դիվանագիտական առաքելությունն ավարտվեց փաստորեն անարդյունք, և միայն հայ ժողովրդին իր համակրությունը հավաստիացնող ռուսական միապետի մեծահոգաբար մեկնած ձեռքը համբուրելով:

Ինչ խոսք, ռուսական դիվանագիտությունը կասկածով էր նայում Նար-Պեյի առաքելությանը, նրա ներկայացրած ծրագրին, և ընդհանրապես հայերի բռնած դիրքին, որոնք սկսել էին տարբեր լեզուներով խոսել Բ. Դռան, եվրոպական դիվանագետների և ռուսական կառավարության ներկայացուցիչների հետ, ցանկանալով, ըստ երևույթին, պայմաններն այնպես դասավորել, որ Հայաստանն ինքնավարություն միայն ձևականորեն չստանա։ Եվ այս նորելուկ կղերական դիվանագիտությունը փորձում էր խաբել ռուսական պառամյալ քաղաքագետներին, որոնք իրենց մտքում պիտի ծաղրեին հայ եպիսկոպոսների միամտությունը և ըստ էության պատասխանեցին այնպես, ինչպես Նապոլեոնը պատասխանել էր Կոստյուշկոյին. «Ասացեք նրան, որ նա հիմար է»:

Պետերբուրգում Նար-Պեյի ունեցած հանդիպումները Լորիս-Մելիքովի, Տեր-Ղուկասովի ու Եզյանի հետ, հավանաբար նպաստեցին նրա ռուսական դիրքորոշման ամրապնդմանը, որն առավել ցայտուն դրսևորվեց Բեռլինի համաժողովի օրերին։ Բայց նա այնքան երկդիմի ու անկայուն մեկն էր, որ եթե Պետերբուրգից Էջմիածին գրած նամակներում անգլիացիներին «նենգ ու պատիր» էր կոչում, իսկ Բեռլինում,

---

66 ՀԿՊԴԱ, ֆ. 56, վարչա-կազմակերպական բաժին, ց. 4, գ. 24, թ. 23—24 (տե՛ս Նար-Պեյի 1878 թ. մարտի 21-ին Պետերբուրգից Էջմիածին՝ կաթողիկոսին գրած նամակը)։ Նաև Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 61—62։ Ըստ որում Նար-Պեյի ուղարկած նամակի վրա, հավանաբար կաթողիկոսի ձեռքով գրված է, որ այն լի է այնքան ստությամբ, որ ինքը չի պատասխանում։

առաջին շրջանում հանդես գալիս Ռուսաստանի հովանավորության տակ ինքնավարություն խնդրելու առաջարկով, ապա համաժողովի ավարտից մեկ շաբաթ առաջ Բեռլինից Կ. Պոլիս գրած մի նամակում անհրաժեշտ էր համարում ռուսական բարբարոսությունից ու համայնակուլ ազդեցությունից ազատվելու համար, Անգլիայի պաշտպանությանն հանձնվել և հասնել այն բանին, որ անգլիական կառավարիչ ուղարկվի Հայաստան[67]։

Նար-Պեյի Պետերբուրգ մեկնելը խիստ զայրացրել էր ոչ միայն մեծ եպարքոսին, որի ահից նա չէր համարձակվում Կ. Պոլիս վերադառնալ, այլև Լեյարդին, որն շտապեց իր դժգոհությունն հայտնել Ներսես Վարժապետյանին, իսկ վերջինս չտարակուսեց հրապարակայնորեն հայտարարել, թե ինքը չի թույլատրել կամ հանձնարարել Նար-Պեյին մեկնելու Պետերբուրգ։ Այդ ազդը տպվեց «Մասիս»-ում, իսկ նրանից արտատպեցին եվրոպական թերթերը[68]։

Համաձայն լինելով և նույնիսկ խրախուսելով պատրիարքին հայկական պատվիրակություն ուղարկել համաժողով՝ Բ. Դուռը, սակայն, չէր ցանկանում, որ այնտեղ հայկական դատի պաշտպանությամբ հանդես գան ռուսները, որոնք, անշուշտ, կփորձեին հասնել Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածի վավերացմանը։

Եվրոպա մեկնած պատվիրակությունը, որի կազմում էին, ինչպես տեսանք, Մ. Խրիմյանն ու Մ. Չերազը, Իտալիայում հանդիպումներ ունեցավ մի շարք քաղաքական գործիչների, այդ թվում Իտալիայի արտաքին գործերի մինիստր կոմս Կորտիի հետ, որն այնքան անտեղյակ էր Հայաստանի և հայ ժողովրդի մասին, որ հարկ եղավ նախ բացատրել, թե հայերը **Թուրքիայի ասիական, թե եվրոպական մասում են ինքնավարություն խնդրում**[69]։ Ապա հայտնելով իրենց դժգոհությունը

67 Տե՛ս «Ատենագրություն Ազգային ժողովո», 1878, էջ 184։

68 Ավելի ուշ Ազգային ժողովի 1878 թ. օգոստոսի 2-ի նիստում արտասանած ճառում Ներսեսն ընդունում է, որ Նար-Պեյը Պետերբուրգ էր մեկնել որպես ազգային պատվիրակ (տե՛ս «Ատենագրություն Ազգային ժողովո», 1878, էջ 65)։

69 Մ. Չերազ, Հայաստան և Իտալիա, Կ. Պոլիս, 1879, էջ 18—19։

16-րդ հոդվածից, հայ պատվիրակներն ստանում են կոնգրեսում Հայերի ինքնավարության պահանջը պաշտպանելու ջերմ հավաստիացումներ։

Իրենց վարդագույն երազների իրականության դառնալու մասին ստացած խոստումները ոգևորեցին հայ պատվիրակներին, և Չերազն շտապեց գաղտնի հեռագրով Կ. Պոլիս՝ Ստ. Փափազյանին հայտնել. «Ընտիր առողջություն։ Մանրամասնությունները նամակով։ Վաղը պետք է մեկնեմ Փարիզ։ Լուր տվեք ընտանիքիս»[70]։

Այստեղ «Ընտիր առողջություն»-ն հավանաբար Կորտիից ստացած խոստումներն էին, իսկ «ընտանիքը»՝ պատրիարքարանը։

Իտալիայից Խրիմյանն ու Չերազն անցան Ֆրանսիա, որի շենշող ու ցոփ մայրաքաղաքում, ուր նրանք հասան մարտի 19/31-ին, նորից հանկարծակի եկան, երբ Հայաստանի ինքնավարության մասին ջատագովելիս, հանդիպեցին «զարգացած ֆրանսիացիներու», որոնք կարծեցին, թե ամերիկացի ասելու փոխարեն «Ամենքի կըսեին «սևամորթ»[71]։

Հաջորդ օրը ևեթ Խրիմյանն այցելում է Նուբար փաշային։ Ապրիլի 2-ին Մ. Չերազը Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստրության խորհրդական Մ. Բայար Տյուպլեսիին է հանձնում Ներսես պատրիարքի հիշատակագիրը։ Հանդիպումներ են տեղի ունենում նաև «Թեմպ» թերթի խմբագիր Ադրիեն Էբրարի, Փարիզի գերմանական դեսպան իշխան Հոհենլոհեի, անգլիական դեսպան լորդ Լայոնսի և այլոց հետ։ Ապրիլի 8-ին հայ պատվիրակներին ընդունում է ֆրանսիական հանրապետության արտաքին գործերի մինիստր, նախկին միապետական Վիլյամ Հենրի Վադինգտոնը։

Ի դեպ, անգլիական ծագումով, ֆրանսիական դաստիարակությամբ, իսկ վախից «պրուսացի» այդ հնէաբան-դիվանագետը, ավելի հայտնի որպես Փոքր Ասիայի ու Հունաստանի հնագիտական պեղումների մասնակից, հարելով ֆրան-

---

70 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 368։

71 Տե՛ս Մ. Չերազ, Հայաստան և Իտալիա, էջ 14։

սիական պառլամենտի «ձախ կենտրոնի» գերմանոֆիլ խմբավորմանը, գործում էր ոչ հօգուտ Ֆրանսիայի ազգային շահերի, որն, ի դեպ, այնքան էլ լավ չէր հասկանում[72]։ Զգուշացնելով նախկայացված ծրագրի ընդունման դժվարության մասին, քանի որ Լիբանանի նման ինքնավարություն, Հայաստանում, հայերի և մահմեդականների խառը բնակության պատճառով անհնարին է, Վադդինգտոնը, սակայն, հանդիսավոր կերպով ավելացրեց, որ «Ֆրանսիան անտարբեր չէ Հայաստանի վիճակի նկատմամբ։ Ես անձամբ համակրում եմ ձեր դատին, — ավելացրեց նա, — որովհետև շրջել եմ Ասիայում, ուսումնասիրել եմ ձեր ժողովրդի պատմությունն ու գրականությունը... Եվ տրամադիր եմ ձեր դատը պաշտպանելու կոնգրեսում, ուր ոչ ոք ինձանից լավ չի ճանաչում ձեր ազգն ու երկիրը»[73]։

Ոսկե քաղաքի այս հեքիաթը քնեցրեց հայկական պատվիրակությանը և անեն երազներով Փարիզից տարավ Լոնդոն։

Ապրիլի 11-ին նրանք արդեն Անգլիայի մայրաքաղաքում էին, ուր ծավալված էր հայասիրական մի շարժում, դեռ 1878 թ. Ջեմս Բրայսի ջանքերով ստեղծված Անգլո-հայկական ընկերության կողմից։ Ընկերության գործնական ղեկավարությունն իր ձեռքն էր վերցրել հնդկահայ մի հարուստ՝ Սեթ Աբգարը, մեկը Հովսեփ Էմինի հեռավոր շառավիղներից, որի 1876 թ. Լոնդոնում ֆրանսերեն լեզվով հրատարակած հայկական դատին նվիրված գրքույկը, նրա համար արդեն որոշակի հեղինակություն էր ստեղծել, եթե հաշվի չառնենք, որ նա ճանաչված էր որպես հնդկահայ միլիոնատեր։ Այս նույն Սեթ Աբգարի տանն էլ իջևանեցին Խրիմյանն ու Չերազը։

Հայ պատվիրակների ժամանումից մոտ մեկ ամիս առաջ Լոնդոնում լույս տեսավ «Դեսպանախորհուրդը և հայերը» գրքույկը, որտեղ հայերը հանդես էին բերված որպես պարտատերեր և Անգլիայից պահանջվում էր փոխհատուցումն այն

72 А. З. Манфред, Внешняя политика Франции 1871—1891 гг., М., 1952, էջ 216։

73 Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 371։

րանի, որ հայերը Հնդկաստանում մեծապես նպաստել են անգլիական ազդեցության ամրապնդմանը։

Դեռ 1877 թ. անգլերեն լեզվով լույս ընծայվեց Ջ. Վ. Պրայսի հայերի համար ինքնավարություն պահանջող «Հայաստան և Լիբանան» գիրքը, իսկ 1878 թ. ֆրանսերեն լեզվով հրատարակվեց «Արևելյան հարցը և հայերը» գրքույկը։ Առանձին թերթեր նույնիսկ հայ թագավորների նկարներ հրապարակեցին։

Անգլիական «Բոյզ օուն» հանդեսի 1878 թ. մարտի համարում Ջորջ Սմիթը հրատարակեց «Հայերը, իրենց անցյալն ու ապագան» հոդվածը, ուր գովաբանում էր հայերի հինավուրց քաղաքակրթությունը, նրանց եկեղեցին, Բեթղեհեմից ու Երուսաղեմից հետո քրիստոնեական ամենակարևոր սրբավայր Էջմիածինը, և վրդովված բացականչում. «Միթե այս հնագույն քաղաքակրթությունը, այս մաքրագույն եկեղեցին, այս պատմական ժողովուրդը պիտի կորչի ռուսական փառամոլության տակավին ամուլ միակերպության մեջ. չեմ կարող ասել, որ տաճկական բռնության շարունակությունը լավագույն է, բայց ի Հայաստան, ինչպես ի Բուլղարիա, Բոսնիա և Հունաստան՝ լավագույն միջոցն է անկախության մի վերահաստատությունն, որու համար չկա քրիստոնյա ժողովուրդ մ'որ այնքան հարմարություն և իրավունքներ ունենա՝ որքան հայերը»[74]։ Իրենց էջերում հայկական դատին նվիրված հոդվածներ զետեղեցին նաև «Թայմս»-ը, ինչպես նաև լիբերալ ու պահպանողական այլ թերթեր ու հանդեսներ։

Ապրիլի կեսերին, ղակի տները հայկական գաղութում անցկացնելու նպատակով, Խրիմյանն ու Ջերազը մեկնում են Մանչեստր, որտեղ ապրիլի 30-ին այցելելով անգլ. եպիսկոպոս Ֆրեյզերին, խնդրում են նպաստել հայկական դատի պաշտպանությանը։ Պատասխանն ապշեցուցիչ էր. Եւ չպիտի դադարեմ հայ ազգի փրկության համար աղոթելուց[75]։

Վերադառնալով Լոնդոն, մայիսի 10-ին հայ պատվիրակներն ընդունվում են Անգլիայի արտաքին գործերի մի-

74 Տե՛ս «Արևելյան մամուլ», 1878, մայիս, էջ 16—17։

75 Ա. Ալպոյաճյան, Մինաս Ջերազ, էջ 170։

նիստի ընթացքում Դերբիին փոխարինած Սոլսբերիի կողմից, որն անմիջապես վստահեցնում է, որ հայերը հավասարապես ձեռք կբերեն այն ամենը, ինչ կարվի քրիստոնյա մյուս ժողովուրդներին, այսինքն՝ բարեկեցություն, ազատություն և խաղաղություն[76]։

«Ապահովեցի, թե մեր բոլոր ջանքերը ի գործ պիտի դնենք հայոց վիճակը բարվոքելու, — գրում է Սոլսբերին, — բայց հարկ չհամարեցինք վեհափառի կողմն գործադրելի մասնավոր միջոցներուն նկատմամբ խոստումներ տալու»[77]։

Որպես պատմական կարևոր մանրամասնություն հիշենք, որ այդ զրույցից հետո Սոլսբերին Չերազին հարցնում է, թե ինչ լեզվով էր խոսում Խրիմյանն իր հետ, ու զարմանում, որ հայերեն լեզու գոյություն ունի, մինչդեռ ինքը կարծում էր, որ հայերը խոսում են թուրքերեն[78]։

Հետաքրքրությունից զուրկ չէ հայկական պատվիրակության հանդիպումը Քենտերբերիի արքեպիսկոպոսի հետ, որը մի կողմ թողնելով զրուցակիցներին հետաքրքրող առարկան, խոսում էր հայկական նահանգներում ապրող նեստորականների մասին և հավատացնում, թե «հայերը շատ համակրանք կշահեին, եթե պաշտոնապես ճանաչեին Քաղկեդոնի տիեզերական ժողովը»[79]։ Եվ այդ կարծես պատասխանն էր Եվրոպա, որպես նվիրակ՝ եպիսկոպոս ուղարկած հայ ժողովրդին։

Լոնդոնում հայ պատվիրակներն այցելում են ֆրանսիական, գերմանական դեսպաններին, Անգլիայի մայրաքաղաքում որպես հյուր գտնվող գերմանական թագաժառանգ Ֆրիդրիխ Վիլհելմին, վերջում նաև թուրքական դեսպանին, որը խիստ վրդովվում է, որ նրանք թուրքահպատակ լինելով հանդերձ առաջինն իրեն չեն այցելել։

---

76 Տե՛ս. Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. 1, էջ 88, նաև Ա. Ալպոյաճյան, Մինաս Չերազ, էջ 172։

77 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Մինաս Չերազ, էջ 172։

78 «Հայաստանի կոչնակ», 1923, № 18։

79 Նույն տեղում, 1920, № 27։

Քաղաքագիտական մի այլ վրիպման՝ իշխանության գլուխ գտնվող Բիկոնսֆիլդից առաջ (որն ի դեպ չընդունեց հայ պատվիրակներին) Գլադստոնին այցելելու համար հայ «դիվանագետներին» քննադատեց Լոնդոնում բնակվող Գարեգին Փափազյանը, որի համար էլ հավանաբար Չերազն հետագայում նրան ներկայացնում էր որպես քաղաքական հասկացողությունից զուրկ վաճառական:

Արևմտահայ դատի մունետիկներին չհաջողվեց հանդիպել նաև Մեծ Բրիտանիայի թագուհուն[80], որն օտարերկրացիներին ընդունում էր միայն իրենց դեսպանների հետ միասին, իսկ թուրքական դեսպանին այդ հարցով դիմելն, իհարկե, անմտություն էր: Այնուամենայնիվ, հայ պատվիրակությունն իր ամբողջ հույսը դրել էր Անգլիայի վրա: Ինքը՝ պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանն անգլիական դիրքորոշում ուներ և հանդիսանալով Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի ներկայացուցիչը, դեռևս բաժանում էր Ներսես պատրիարքի այն կարծիքը, ըստ որի Ռուսաստանին երախտագետ լինելով, պետք է հույսը դնել Անգլիայի վրա և նրա միջոցով ապահովել հայ ժողովրդի բարոյական ու նյութական բարեկեցությունը[81]: Մոռացության էր տրվում անգամ անգլիական քաղաքական գործիչ Ֆորստերի այն հայտարարությունը, որ վերջինս արել էր հայկական պատվիրակությանն ընդունելու ժամանակ. «Մի վշտացնեք Ռուսաստանը, որ ձեր դրացին է. մի դառնաք այստեղ գործիք ոչ պահպանողական կուսակցության ոչ ալ մեր ազատականների ձեռքը... Անգլիայի օգնության վրա հույս կարելի չէ դնել»[82]:

Եվ իրոք, դեռ 1878 թ. սկզբներին, Անգլիայի արտաքին գործերի այն ժամանակվա մինիստր Դերբին պառլամենտի

---

80 Ի դեպ դեռ տարիներ առաջ արևմտահայ մի հեղինակ փորձում էր ապացուցել Վիկտորիա թագուհու հայ Արշակունիներից սերված լինելը (տե՛ս Ս. Միրզա Վանանդեցի, Վիկտորիա Անգլիո թագուհվույն հայ թագավորների սերիլը, Զմյուռնիա, 1866 թ.):

81 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 391:

82 Նույն տեղում, էջ 382:

ամբիոնից հայտարարում էր, թե ոչ մի անհրաժեշտություն չկա այժմ հայկական հարց առաջ քաշել։ Շեշտելով այն հանգամանքը, որ հայերի դրությունը Ռուսաստանում ավելի լավ է, ուստի նրանք միշտ էլ կձգտեն Ռուսաստանին միանալ[83]։

Կոնգրեսի նախօրյակին լորդերի պալատում եղած հարցապնդման ժամանակ Սոլսբերին չհիշեց հայ պատվիրակներին տված իր ժլատ խոստումներն անգամ և հայտարարեց, թե Փոքր Ասիայում հայերն ու մահմեդականներն այնպես են խառնված, որ հայկական ինքնավարություն ստեղծելն անհնարին է[84]։

Անգլիայի հասարակաց կարծիքը, որն իբր համակիր էր հայերին, լոկ արտաքին շուք էր և Պարոնյանի հովանոցի նման «հովը քիչ մը սաստիկ փչելուն պես, մյուս կողմը կդառնար կոր»։

Այս կարծիքների իրարամերժ բովում, անգլիական դիվանագիտական հաշիշով թունավորված հայկական պատվիրակությունը նետվեց Բեռլին, կոնգրեսի աշխատանքներին մասնակցելու։

1878 թ. հունիսի 1/13-ին բացվեց Բեռլինի կոնգրեսը, որին մասնակցում էին Ռուսաստանի, Գերմանիայի, Ավստրո-Հունգարիայի, Ֆրանսիայի, Մեծ Բրիտանիայի, Իտալիայի և Թուրքիայի պատվիրակությունները[85]։ Առանձին նիստերի թույլատրվեց ներկա լինել նաև Հունաստանի, Ռումինիայի, Սերբիայի, Չեռնոգորիայի և Իրանի ներկայացուցիչներին։ Բուլղարական և հայկական պատվիրակներին հնարավորություն չտրվեց որևէ կերպ մասնակցել կոնգրեսի աշխատանքներին։

---

83 «Մասիս», 1878, № 2145։

84 Տե՛ս Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. 1, էջ 89։

85 Ռուսական պատվիրակության կազմում էին Գորչակովը, Շուվալովը, Ուբրին, Գերմանիան ներկայացնում էին Բիսմարկը, Բյուլովը, Հոհենլոհեն, Ավստրո-Հունգարիան՝ Անդրաշին, Կարոլին, Հայմերլեն, Ֆրանսիան՝ Վադինգտոնը, Սեն-Վալյեն, Դեպրեն, Մեծ Բրիտանիան՝ Բիկոնսֆիլդը, Սոլսբերին, Ռասելը, Իտալիային՝ Կորտին, Լիննյան, Թուրքիային՝ Կարաթեոդոր ու Մահմեդ Ալի փաշաները և Սադուլլա Բեյը։

*Կոնգրեսի առաջին նիստում, Անդրաշիի առաջարկով նախագահ ընտրված Բիսմարկը, որը խոստացել էր միայն «ազնիվ միջնորդի» դեր կատարել, հայտարարեց, որ Սան-Ստեֆանոյի դաշնագիրը պետք է քննարկվի ոչ թե ըստ հոդվածների հերթականության, այլ ելնելով հարցերի կարևորությունից։*

*Այսպիսով, Անդրաշիի գաղտնի խնդրանքով, Բիսմարկը որպես կոնգրեսի օրակարգի առաջնահերթ հարց, Չերնոգորիային վերաբերող հոդվածի քննարկման փոխարեն, առաջ էր մղում բուլղարական խնդիրը։*

*Անգլիայի պրեմիեր-մինիստր Բիկոնսֆիլդը, այդ առթիվ առաջինը ելույթ ունենալով, փորձեց տեղն ու տեղը ճնշում գործադրել ռուսական պատվիրակության վրա, հայտարարելով, թե նախ անհրաժեշտ է քննել. հանդուրժելի է արդյո՞ք, որ ռուսական զորքերը ցայսօր մնում են Կ. Պոլսի մատույցներում։ Եվ որ այդ վիճակում կոնգրեսն իր աշխատանքը հանգիստ շարունակել չի կարող։*

*Բալկաններում Ռուսաստանի ազդեցությունը խախտելուն ուղղված այս ելույթի դեմ, պատասխան ճառով հանդես եկավ Գորչակովը, ռուսական զորքերի Կոստանդնուպոլսի շրջակայքում ու Բուլղարիայում մնալու անհրաժեշտությունը գնահատելով որպես Թուրքիայում ապրող քրիստոնյաների անվտանգության երաշխիք։*

*Բայց Անգլիայի առաջին մինիստրին պաշտպանում էր և Անդրաշին։ Շուվալովին մնում էր հեռագրել Պետերբուրգ, որ Բիկոնսֆիլդն իրեն ոչնչով կապված չի զգում այն պայմանների հետ, որի տակ Լոնդոնում ստորագրել է Սոլսբերին*[86]*։*

*Ռուսաստանը բոլոր հիմնական հարցերում իրեն միայնակ տեսավ ողջ Եվրոպայի դեմ։*

*Կոնգրեսի համար, որպես սկզբունք, անգլիական պատվիրակության կողմից պարտադրվեց Սոլսբերիի բերանով երկրորդ նիստում արված այն հայտարարությունը, որ կոնգրեսի խնդիրն է «լրիվ ոչնչացնել պատերազմի արդյունքները»։*

---

86 *Տե՛ս* «Дневник Д. А. Милютина», *հատ. 3, էջ 67։*

Ռուսական ներկայացուցիչները շտապեցին վրդովված բողոքել, թե Ռուսաստանի նպատակը կոնգրեսում Սան-Ստեֆանոյի դաշնագրի հաստատումն է, հանուն Եվրոպայի ընդհանուր շահերի[87]:

Սակայն այդ ազդը հնչեց որպես դատարկության մեջ արձակված կրակոց միայն:

* * *

Հայկական հարցը, որպես երկրորդական, բավականին ուշ պիտի քննարկվեր: Եվ ահա սկսվում է հայ պատվիրակների եռուն ու ապարդյուն աշխատանքը: Կատարելով Լոռիս-Մելիքովի պատվիրանը, նրանք բախում էին բոլոր փակ և բաց դռները, այցելում կոնգրեսի մասնակիցներին առանձին-առանձին:

Կոնգրեսում Իրանի պատվիրակ հայազգի Մելքոն խանին համոզել էին, և նա Արևի առաջին աստիճանի պարսկական շքանշան է հանձնում մի հրեա խմբագրի, որպեսզի նա իր թերթի էջերում գովեստի փշրանքներ նետի հայ ժողովրդի հասցեին:

Հայ պատվիրակները երբեմն փորձում էին նույնիսկ քաղաքագիտորեն գործել, առիթի դեպքում անգամ սպառնալով առանձին դիվանագետներին: Հայկական հարցի նկատմամբ առավել թշնամական դիրք բռնած Բիկոնսֆիլդի քարտուղարին Չերազն ահաբեկում էր, որ եթե անգլիական լրագրերը կոնգրեսում հայերի ծրագիրը չպաշտպանեն, դրանով իրենց ձեռքով, նրանց կնետեն Ռուսաստանի գիրկը[88]:

Բայց հաճախ էլ սայթաքում էին դիվանագիտական աստիճանների խաբուսիկ ու շպարված խորդուբորդության վրա:

Վաշինգտոնի այն հարցին, թե Արևմտյան Հայաստանին ինքնավարություն տալու դեպքում, ինչ դիրք կբռնեն

---

87 Տե՛ս С. С. Татищев, Из прошлого русской дипломатии, էջ 353 (տե՛ս երկրորդ նիստի՝ 5/17 հունիսի 1878 թ., արձանագրությունը),

88 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 460, նաև Ա. Ալպոյաճյան. Մինաս Չերազ, էջ 170:

արևելահայերը, Ջերաշը պատասխանում է, թե նրանք կցանկանան միանալ իրենց արևմտահայ եղբայրների հետ, կամ մի մասն անմիջապես կգաղթի Արևմտյան Հայաստան: Նույնը կրկնվում է նաև Սոլսբերիին հասցեագրված հունիսի 12/24-ի նամակում[89]: Մոռանալով, որ ինքնավարության շուրջ երաշխիքներ չլինելու այդ պայմաններում զուր փչացնում էին հարաբերությունները ռուսական դիվանագիտության հետ, որն առանց այն էլ կասկածով էր նայում Եվրոպայում և հենց Բեռլինում հայկական պատվիրակության ծավալած գործունեությանը:

Բազմաթիվ խնդրագրեր, Հայաստանի ինքնավարության ծրագրի հետ միասին, ուղարկվեցին կոնգրեսի պատվիրակներին:

Իտալիայի պատվիրակության ղեկավար Կորտին Բեռլին գնալուց առաջ ստացել էր նաև Հայաստանի՝ Ալիշանի կազմած աշխարհագրական տեղեկագիրը:

Պատրիարքարանի կազմած ծրագիրը պահանջում էր Արևմտյան Հայաստանի ինքնավարություն հայ նահանգապետով: Այդ ծրագրից զատ եվրոպական պետությունների կառավարություններին, ապա կոնգրեսի պատվիրակներին ներկայացվեցին. Հիշատակարան, թե ինչ պատճառով է ինքնավարությունը հայերի համար օրինավոր երևույթ, Արևմտյան Հայաստանի, պրոֆ. Կիպերտի կազմած քարտեզը և Հայաստանի վիճակագրությունը:

Ըստ այդ վիճակագրության Արևմտյան Հայաստանի այն մասը, որը Սան-Ստեֆանոյի դաշնագրով չէր անցել Ռուսաստանին, և որի համար պահանջվում էր ինքնավարություն, ուներ 2.062.300 բնակիչ, որից 1.330.000-ը հայ, մնացածը թուրք, քուրդ և այլն: Հայերի ընդհանուր թիվը Թուրքիայում, չհաշված Սան-Ստեֆանոյի դաշնագրով Ռուսաստանին անցած տերիտորիայի ազգաբնակչությունը, կազմում էր ավելի քան 3 միլիոն մարդ[90]:

89 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 494:

90 Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 82—87:

Ներկայացված ծրագիրը, չնայած իր բավականին արմատական լինելուն, խիստ կերպով քննադատվեց Գր. Արծրունու, այսինքն լիբերալ-բուրժուական մտավորականության արևելահայ ներկայացուցիչների կողմից։

Ըստ Արծրունու հարկավոր էր ծրագրում հիշատակել ապագա պետության պաշտոնական լեզվի մասին, որը չէր նըշվում։ Նրա կարծիքով սխալ էր ծրագրի այն հոդվածը, ըստ որի ինքնավար Հայաստանի նահանգապետը պետք է նշանակվեր Բ. Դռան կողմից. նրան ժողովուրդը պետք է ընտրի։ Ապա հողի մասին և այլն[91]։

Մի քանի տարի անց՝ 1881 թ. այդ, և պատրիարքարանի մյուս ծրագրերի սուր և յուրահատուկ քննադատությամբ հանդես եկավ «Արևելյան մամուլ»-ը։ «Երբ առաջին անգամ հայկական խնդիր կհուզվեր, — կարդում ենք այնտեղ, — ամեն մարդ ծրագիր և հիշատակագիր պատրաստելու հեղինակ դարձած էր՝ Հայաստանի և հայոց ազգի համար, առանց Հայաստան ու հայոց ազգի վիճակը ճանաչելու։ Զարմանալի չէ, որ ճիշտ այս սխալման մեջ էր Հայոց պատրիարքարանն, որ խնդրույն գլխավորն էր։

Պատրիարքարանն Հայաստանի ինքնավարություն կամ բարենորոգումն կխնդրեր և Հայաստանը կանդամահատեր պատմական, տեղագրական և վիճակագրական անգիտությամբ։ Մեր ըսածին ապացույց են հիշատակագիրներն, ազգահամարներն և այլ ամեն տեղեկությունք, որոնք պատրիարքարանի կողմե տրված են և միշտ վերաքննության ենթարկված։ Հիշատակագիրներու նկարագրած Հայաստանը բուն Հայաստանը չէր, այլ Հայաստանի քանի մը գավառներ։ Ազգահամարն չէր ազգահամար Հայաստանի ամբողջ հայության, այլ քանի մը բազմահայ գավառաց։ Այսպես թերի էին և այլ ամեն տեղեկությունները։

Ինչու արդյոք պատրիարքարանն ու պատվիրակները կանդամահատեին Հայաստանը։ Ինչու արդյոք ինչ-ինչ գավառներ և Կիլիկիան ու Ռուսահայաստանն անտեսության կտային։

---

91 Տե՛ս «Մշակ», 1878, № 13։

Միթե Կիլիկիան ու Ռուսահայաստանն կարոտ չէին բարենորոգման։ Եթե Թուրքիան պարտավոր էր իր բաժնի Հայաստանը վերանորոգել, միթե Ռուսաստանը պարտավոր չէր, որ հանուն քրիստոնեության Բուլղարական նոր ինքնավարություն կկազմեր և չէր նշմարեր Հայաստանի այն մասն՝ որու ինքնավարություն պարգևելու խոստմամբ իր հովանավորության տակն առած էր և իր խոստումը տակավին կատարած չէր»[92]։

Սակայն պատրիարքարանի համաձայնությամբ կազմված հիշյալ ծրագրի հետ միասին, Փարիզից հնչեց Նուբար փաշայի չափավոր բողոքը. ինքնավարությունն անհնարին է, պետք է խոսել միայն բարենորոգումների մասին, զսպել քըրդերին, «սանձել անոնց ջոկերը», ունենալ ընդհանուր կառավարիչ և ժողովրդական միլիցիա՝ կազմված հայերից և թուրքերից։ «Հսկողություն ընել և հանրային խանգարիչներուն դեմ երկիրը ապահովել»։ Նուբարի ծրագրում ինքնավարության մասին խոսք իսկ չկար։ Այն թուրքական կառավարության հովանավորությամբ և նրա միջոցով կատարվելիք բարենորոգումների հետ էր կապում արևմտահայ ժողովրդի ապագան։

Ունենալով անգլիական դիրքորոշում, նա, սակայն, պարզ տեսնում էր այն որոշակի տարբերությունը, որ գոյություն ուներ հայ ժողովրդի արևելյան և արևմտյան հատվածների միջև։ Եվ այդ ճշմարտացի տարբերազատումը նրան մղում էր ոչ թե պրոպագանդելու հայ ժողովրդի մյուս հատվածի անջատումը ցարական տիրապետության տակ, այլ այն դիվանագիտորեն մատնացույց անելու Բ. Դռանը՝ խորհուրդ տալով արևմտահայերի համար ստեղծել ապրելու բարվոք պայմաններ։ Իսկ ամենատարրական հնարավորությունների դեպքում անգամ «... Այդ աշխատասեր հայ ցեղը, շատ տարիներե ի վեր իր երկրային կերպարանքը փոխած կըլլար։ Երևանի ռուսահայկական նահանգին ժողովուրդը երեսուն տարվա մեջ կրկնապատկված է»[93]։

---

92 «Արևելյան մամուլ», 1881, սեպտեմբեր, էջ 352։

93 Հայկական պատվիրակության և Նուբար փաշայի ծրագրերը տե՛ս «Անահիտ», 1907, № № 6—9։

*Երկու տասնամյակ անց Նուբարն այն կարծիքն էր հայտնում, որ Բեռլինի կոնգրեսում իր ծրագիրը ընդունվելու և իրեն Արևմտյան Հայաստանի կառավարիչ նշանակելու դեպքում, այդ քանի տարում, ինքը երկիրը դրախտավայր դարձրած կլիներ*[94]։

*Բայց ինչպես նշեցինք, Նուբարը, որը թերևս ավելի շատ մտահոգված էր Եգիպտոսի վիճակի, քան հայ ժողովրդի ազատագրման հարցով, անգլիական դիվանագիտության գործիչ էր, և դեռ 1877 թ. ռուս-թուրքական պատերազմը սկսվելուց անմիջապես հետո, այդ առթիվ, անգլիական կառավարությանն ուղարկած իր մի զեկուցում հորդորում էր պաշտպանել Անգլիայի համար խիստ կարևոր նշանակություն ունեցող այն շրջանները, որոնց Ռուսաստանը կարող էր վտանգ սպառնալ։ Թուրքիայի «Արևելյան նահանգներում, — գրում էր նա, — քրիստոնյա ժողովուրդները (90 տոկոս հայեր) ծայրահեղորեն ռուսասեր են, և հավանաբար կամ պիտի ապստամբեն Թուրքիա դեմ և պիտի օժանդակեն ռուս բանակի առաջխաղացումին, կամ պիտի պարենավորեն ռուս բանակը, որ շատ հեշտիվ պիտի արշավե Ասորիք, և վտանգե Սուեզն ու Եգիպտոսը»*[95]։

*Դեռ շատ արյուն պիտի հոսեր, որպեսզի Նուբարն անգլիացիներին դառնությամբ կոչեր «Արևմուտքի թուրքեր»*[96]։ *Իսկ հայ ժողովրդի նկատմամբ Եվրոպայի ունեցած «համակրության» հետ նա երբեք ոչ մի հույս չէր կապել*[97]։

---

94 *Տե՛ս «Նոր կյանք», 1899, № 41։*

95 *Տե՛ս* Մ. Սերոբյան, *Մեր պայքարը հայ ազատագրության ուղին, էջ 118—119։*

96 *«Նոր կյանք», 1899, էջ 37 (№ 3)։*

97 *Անգլիական «Դեյլի տելեգրաֆ» թերթում Նուբարի մահվան կապակցությամբ Էդուարդ Բայսեն հիշում է Նուբարի հետ ունեցած հետևյալ զրույցը. «Ձեռքես եկածը կընեմ կոր, բայց եվրոպական համակրանքը շարժելու համար ի նպաստ Հայաստանի։ Իբր հայ իմ պարտքս է այսպես ընել, և հայրենակիցներուս աչքերնին ինծի հառած են՝ կըսպասեն ընելու ի նպաստ իրենց։ Բայց կաշխատիմ կոր՝ առանց հաջողության հույս ունենալու։ Իմ ազգիս պատմությունս ինծի կըսե, թե եվրոպական ոչ մեկ պետություն կրնա շահ ունենալ պատերազմ բանալու հայերուն համար. արդ եթե խնդր-*

Սակայն Նուբարի ծրագիրը, ինչպես Զիրաքն է հիշատակում գրել, այնպիսի մեծ չափավորության կնիք էր կրում, որ ծայրահեղ երևաց անգամ Ներսես Վարժապետյանի ու նրա խորհրդականների համար։

Իսկ Ստ. Փափազյանը չարությամբ մրում էր, թե Նուբարն հավանաբար «Փարիզի թուրք դեսպանին և թերևս այլոց հետ ալ խորհրդակցություն ունի հայոց խնդիրը թեթևցնելու և պատեհությունը կորսցնելու համար...»[98]։ Հայկական պատվիրակության ղեկավար Մ. Խրիմյանը, տեսնելով սահմանված իրավիճակը, հակված էր ընդունելու Նուբարի ծրագիրը, բայց Ստ. Փափազյանն այդ առնչությամբ Խրիմյանի վրա բողոք գրեց պատրիարքին, որի միջոցով էլ Բ. Դուռը, որն հարկավ չէր ցանկանում Նուբարի նման գործունյա մարդուն տեսնել հայ դատի գլուխ, ոչ միայն արգելեց այդ ծրագրի ընդունումը, այլև «մերժեց Նուբարի Բեռլին երթը»։

Սակայն ինչպես Նուբար փաշայի ծրագիրը, այնպես էլ ռուսական դիրքորոշման բողոքը, որն այդ օրերին արտահայտվեց Խ. Նար-Դեյի կողմից կազմված Ռուսաստանի հովանավորության տակ Հայաստանի ինքնավարության ծրագրով, որն անգամ չհրապարակվեց «զոր արգելեցինք արտասանել ուրիշ անգամ» (Ստ. Փափազյան), անհաջողության էին դատապարտված, քանզի Հայաստանի ինքնավարության առաջքաշումը նրբորեն քողարկված խաղ էր ինչպես տեսանք։

Հիշյալ ծրագրերը, որպես ոչ արմատական, չէին կարող ընդունվել նաև կոնգրեսն աստվածացնող հայ հասարակական հոսանքների ու խմբավորումների կողմից։

Այդ օրերին այնպիսի մի մուժ էր պատել հայ իրականության մթնոլորտը, որ մարդիկ օրը ցերեկով երազում, և Կ.

---

ժությանց դեմ եղած բողոքներուն համեն պատճառը չի գա, բողոքները ապարդյուն են, եթե ոչ վնասակար։ Ասիկա չեմ կրնար ըսել իմ հայրենակիցներուս, բայց իրողությունը սա է։ Իմ հասկացածս սա է, թե Նուպար կհավատար, թե Հայաստանի ճակատագիրն է Ռուսիային դրավվիլ, բայց կնկատեր, թե Թուրքիո տեղ Ռուսիո տիրապետությունը այնքան բազում չարիքներով լեցուն էր, որ դժվար թե որևէ հայ հայրենասեր բաղձար այդ փոփոխությունը» («Նոր կյանք», 1899, էջ 30)։

98 «Անահիտ», 1907, № 10—12, էջ 163։

Պոլսում արդեն միմյանց շնորհավորում էին Հայաստանի անկախության վերականգնման առթիվ։ Որպես Հայաստանի առաջին կառավարիչ մատնացույց էին արվում Ստ. Ասլանյանը, Սերվիչենը, Գր. Օտյանը. իսկ Բեռլինի պատվիրակների կողմից՝ Նուբար փաշան, Լոռիս-Մելիքովը, Մելքոն խանը։

Հուզված, եռում էր Անդրկովկասի հայությունը։ Ազգային երկունքի կախարդիչ ոգին համակել էր նրանց։ «Ես չպիտի մեռնեմ, մինչև այս մատովս հայոց թագավորի ճակատը չօծեմ», — Բեռլինի երթուղուց աղաղակում էր Մ. Խրիմյանը։ «Թագավոր», «պրեզիդենտ», արձագանքում էին նրան Թիֆլիսի ու Վանի բարբերանները։

Իսկ Չերազը, դեռ Հռոմում, Իտալիայի արտաքին գործերի մինիստրության գրասենյակի պետ կոմս Դոնիենիի ընդունարանում շատ սպասելուց վրդովվում, ապա իրեն մխիթարում էր թե շուտով Հայաստանն էլ կունենա իր արտաքին գործերի մինիստրությունը, որի ընդունարանում այդքան երկար սպասեցնել կտան իտալական պատվիրակին[99]։

Այս սին պատրանքների ելակետն այն միամիտ հավատն էր Արևմտյան Եվրոպայի «հայասերների» հանդեպ, որ ունեին միջազգային գիշատիչների կողմից երիցս խաբված ժամանակի հայ քաղաքական գործիչները։ Նրանք չէին կասկածում մանավանդ Անգլիայի մարդասիրությանը, որն այդ դեպքերից քիչ առաջ, հրանոթների փողերից «մարդասիրաբար» երկինք էր թռցնում ապստամբ սիփայիններին, «քաղաքակրթություն տարածելով» Հնդկաստանում։ «Դեռ երեկոն չեկած չպետք է գովաբանել օրը», — ասում է բանաստեղծը։ Եվ ահա կոնգրեսի հուլիսի 4-ի (հին տոմարով՝ հունիսի 22-ի) նիստում[100] (արձ. № 12) քննության դրվեց Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածը։ Հոդվածի առթիվ առաջինը ելույթ ունեցավ անգլիական պատվիրակ լորդ Սոլսբերին։ Հավաստիացնելով, թե ինքը համաձայն է հոդվածի այն մասին, որը

99 Տե՛ս Մ. Չերազ, Հայաստան և Իտալիա, էջ 30։

100 Դառը զուգադիպությամբ այդ օրը համընկնում էր Գր. Լուսավորչի տոնին և հայ ժողովուրդը ցնծում էր, նախախնամության համակրանքը տեսնելով այնտեղ (տե՛ս «Մշակ», 1878, № 141)։

վերաբերում է հայկական գավառներում բարեփոխություններ մտցնելուն, նա առաջարկում է ջնջել առաջին տողերը, որը կարդալիս թվում է, թե ռուսական զորքերի ներկայությունից է կախված բարենորոգումների իրագործումը, այլ հայտարարում, որ առաջիկա նիստերից մեկում ինքը կներկայացնի հայերի համար կազմած մի ծրագիր։

Անգլիական նվաճողական դիվանագիտության այս ծավալայլը և նրա հետևին կանգնած անգլիական բուրժուազիան, լավ էին հասկացել և չէին կարող թույլ տալ, որ Արևմտյան Հայաստանում կատարվելիք բարենորոգումները կապվեն ռուսական բանակի ներկայության հետ, որը կուժեղացներ Ռուսաստանի հեղինակությունը հայերի մեջ և թույլ կտար նրան իսկապես օգտվելու պատերազմի դաշտում տարած իր հաղթանակներից, հնարավորության դեպքում ուղղակի իրեն կցելով Արևմտյան Հայաստանը։

Սոլսբերիից հետո հանդես եկած ռուսական պատվիրակ կոմս Շուվալովը հայտարարեց, որ ինքը պատրաստ է միաբանելու, բայց միաժամանակ վախ հայտնելով, որ եթե ռուսական զորքերի հեռանալը տեղի ունենա նախքան խոստացած բարենորոգումների իրագործումը, կարող է լուրջ անկարգություններ առաջ բերել։ Ապա նա խնդրեց բոլոր դիտողություններն հետաձգել, մինչև այն պահը, երբ կոնգրեսն ամբողջությամբ կզբաղվի հայկական հարցով[101]։

Կոնգրեսը, ինչ խոսք, ոչ ընդունեց հայկական պատվիրակությանը, ոչ էլ հաշվի առավ նրա ներկայացրած ծրագիրը՝ «մրջյունների այդ բողոքագիրը», որի վրա կոնգրեսը որոշեց «երկու շաբաթ խնդալ» (Հ. Պարոնյան)։ Պատվիրակներին չթույլատրվեց անգամ մասնակցել կոնգրեսի 16-րդ հոդվածը քննարկող նիստերին, դրանով իսկ ոտնահարելով

101 Այսինքն՝ Սան-Ստեֆանոյի 16-րդ հոդվածով։ Քանի որ կոնգրեսի երկրորդ նիստում միաձայն որոշում էր ընդունվել ներկայացրած որևէ խնդրագիր կամ առաջարկություն չքննարկել, եթե այն չի ներկայացվում կոնգրեսին մասնակցող լիազոր ներկայացուցիչներից որևէ մեկի կողմից։ Իսկ հայկական ինքնավարության ծրագիրը ոչ մեկի կողմից պաշտոնապես չներկայացվեց (տե՛ս «Ատենագրություն Ազգային ժողովո», 1878, էջ 181)։

հայ ժողովրդի անկապտելի իրավունքը։ «Ես ու Զերազ,—գրում է Ստ. Փափազյանը,— երկու-երեք անգամներ մտախոհ և հուզված սկսանք պտտել Քոնկրեսին տանը առաջ. խնդրեցինք Աստուծմե որ ողորմի բյուրավոր անմեղ զոհերու արյունին, միլիոնավոր հայերու աղաղակին և ապա աչքերնիս արցունքով լի տուն դարձանք»[102]։

Քիչ ուշ հայ պատվիրակները, 61-րդ հոդվածի դեմ բողոքելու մասին պատրիարքարանից ստացած հեռագրից միայն իմացան, որ այդ հոդվածում Հայաստան անունն իսկ չկա։ Փորձեցին գոնե այն մտցնել տալ, բայց նրանց այդ էլ չհաջողվեց։

Հուլիսի 5-ին (արձ. № 14) նորից 16-րդ հոդվածը դարձավ օրակարգի հարց։ Լորդ Սոլսբերին առաջարկեց ջնջել հոդվածի առաջին տողերը և ավելացնել «Նա (Բ. Դուռը) բացի դրանից (բարենորոգումներից) համաձայնություն կկայացնի վեց ուրիշ ստորագրող պետությունների հետ այս պարտավորության նշանակության և նրա գործադրության համար անհրաժեշտ միջոցների մասին»[103]։ Այս արդեն ոչ թե ուղղում, այլ հակախմբագիծ էր, մի նոր հոդված, որով Արևմտյան Հայաստանի քրիստոնյա ազգաբնակչության բարեկեցության հոգացությունը առնվում էր Ռուսաստանից և դրվում մեծ տերությունների վրա։

Հետագայում, ջանալով հայկական հարցի մենաշնորհն իր ձեռքը վերցնել, Անգլիան կանխամտածված արգելակում էր նրա լուծումը, որպեսզի չկորցնի Թուրքիայի վրա մշտական ճնշում գործադրելու բարեպատեհ այդ գրավականը։

Թուրքական պատվիրակ Կարաթեոդոր փաշան, որն առիթը բաց չէր թողնում անգլիացիներին վախեցնել հայերին ինքնավարություն տալու դեպքում, նրանց «ռուսանալու» սարսափով, իր խառնափնթոր ճառում ընդունեց, որ պատերազմի ժամանակ «ըմբոստ ցեղերը» իսկապես լուրջ անկարգություններ կատարեցին, բայց միաժամանակ խեղկատակելով, թե հարկ չկա որոշումներ ընդունել, քանի որ նրանց

102 «Անահիտ», 1907, №№ 3—5, էջ 58։

103 Տե՛ս Լեո, Հայոց հարցի վավերագրերը, էջ 106—109։

նկատմամբ թուրքական կառավարությունը հենց նույն ժամանակ էլ միջոցառումներ ձեռնարկեց։ Այժմ, ըստ նրա, կոնգրեսին մնում է որոշել, որ Բ. Դուռը պետք է վեց տերություններին հաղորդի այն միջոցառումների արդյունքները, որոնք արդեն ձեռնարկվել են։ Իսկ երբ Շուվալովը, շրջանցելով թուրքական պատվիրակի ուղղումը, հայտարարեց, թե քանի որ օսմանյան կառավարության մշակած միջոցառումները մնացել են անգործադրելի, հետևաբար անօգուտ է նրանց հիշատակումը, կարծես բարենորոգումների հարցը միանգամից լուծելու համար, պահլիճով մեկ գրնգաց նախագահ Բիսմարկի Ֆալշը․ գուցե հնարավոր չլինի անկախ ցեղերի դեմ զսպող միջոցներ գործադրելը, ուստի դժվար է ընդունել, որ անգլիական առաջարկը գործնական նշանակություն կարող է ունենալ։

Կարաթեոդոր փաշան ավելի էր պնդում իր առաջարկը։ Նա այնպիսի մարտական դիրք էր գրավել կոնգրեսում, այնպես էր նույնիսկ ճռճռում, ռազմական թոհուբոհ բարձրացնում, անգամ զարմանալով Ռուսաստանի «անպատկառության» վրա, ասես թուրքերն էին մտել Պետերբուրգի մատույցներին և ոչ թե ռուսները Կ. Պոլսի։ Նա փորձում էր, ինչպես ասում են, տնավարի տեղավորվել կոնգրեսում ու ոտքերը դնել սեղանին։ Թուրքիային իր թևերի տակ առած հովանավորում էր Անգլիան։ Նա զենքը ձեռքին պաշտպանում էր սեղանի վրա դրված ոտքերը։

Իսկ փաշայի հոխորտանքի աղբյուրը թաքնված էր անգլիական դիվանագիտության ճարտար խաղում։ Թուրքական պատվիրակի բերանով խոսում էր կոնգրեսի բացումից ինն օր առաջ կնքված Կիպրոսի դաշնագիրը, որն ի զարմանս աշխարհի, կոնգրեսի նիստերից մեկում, որպես անակնկալ, նետվեց դիվանագիտական կանաչ սեղանին, ռուսական պատվիրակների առջև, ապշած թողնելով Գորչակովին ու Շուվալովին, կրկնապատկելով Կարաթեոդոր փաշայի հանդգնությունը և հեղինակային մի ժպտով ծամածռելով Բիսմարկի դեմքը։

Վադդինգտոնը մոլեգնած արտակարգ հեռագիր ուղարկեց Տուլոն, բայց արդեն ուշ էր։ Երբ հունիսի 28-ին ֆրան-

տիական երեք նավեր մոտեցան Ֆամագուստային, մեկ օր առաջ՝ հունիսի 27-ին, դաշնագրի հրապարակման օրը, այնտեղ արդեն խարիսխ էր ձգել անգլիական նավատորմի միջերկրական էսկադրայի հրամանատար Ջոն Խեյը[104]:

Գամբետան շտապեց հեռագրել Վադդինգտոնին, դաշնագիրն առանց ստորագրելու վերադառնալ Փարիզ: Բայց Սոլսբերին հանգստացրեց ֆրանսիական կրքերը, Վադդինգտոնին հայտնելով, որ Անգլիան չի առարկի Ֆրանսիայի կողմից Թունիսի գրավմանը: «Ազնիվ միջնորդը» բոլորովին չհակառակեց Անգլիայի այդ նվիրատվության դեմ, միաժամանակ շարունակելով իր անազնիվ խաղը, Իտալիային նույնպես խորհուրդ տալով գրավել Թունիսը, ծայր աստիճան սրելով ֆրանս-իտալական հակասությունը, միաժամանակ շեղելով Ֆրանսիայի ուշադրությունը Էլզաս-Լոթարինգիայից:

Կոնգրեսի նույն՝ 14-րդ նիստում, սուլթանի պատվիրակից հետո, նորից ելույթ ունենալով, Սոլսբերին առաջարկեց հայկական բարենորոգումների հարցը հետաձգել, որպեսզի ինքը հնարավորություն ունենա փոփոխություն մտցնել ծրագրի մեջ:

Այս խնդրից կոնգրեսին նախ զբաղվել Սան-Ստեֆանոյի դաշնագրի 19-րդ հոդվածի Բ կետով, որը վերաբերում էր Կարսին ու Արդահանին: Այս հարցի քննարկման ժամանակ անգլիական պատվիրակությունը, խախտելով Ռուսաստանի հետ կնքած գաղտնի համաձայնությունը, դեմ դուրս եկավ այդ քաղաքների Ռուսաստանին անցնելուն, պատճառաբանելով, թե նման հանգամանքը կթուլացնի թուրքական կառավարության հեղինակությունը: Իրականում Անգլիային թուրքական կառավարության անվանարկումը չէր որ հետաքրքրում էր: Նա չէր ցանկանում, որ ստրատեգիական նշանակություն ունեցող այդ կարևոր վայրերն անցնեն Ռուսաստանին:

Քիչ անց Սոլսբերին ակամայից պատռելով դիմակը, հայտարարեց, թե այս հարցի մանրամասնությունները պետք

---

104 Տե՛ս Г. И. Реутов, Из истории захвата Кипра Англией («Вопросы истории», 1958. № 3, էջ 149):

է քննարկվեն նրանով շահագրգռված հատուկ լիազորների կողմից, ինչպես, առաջին շահագրգռվածը համարելով իրեն։

Այս ընթացքում Անգլիայից հույսերը կտրած հայ գործիչներն այցելեցին ռուսական պատվիրակության փաստական ղեկավար Շուվալովին[105], հայկական հարցի մանրամասներն իմանալու։ Վերջինս հայտնեց, որ այն հայերի ցանկացած լուծումը չի ստանա և առաջարկեց ներկայացնել մի այլ, ավելի չափավոր ծրագիր։ Բայց հայ պատվիրակները մերժեցին այդ առաջարկությունը և ծածկագիր հեռագրով անմիջապես հայտնեցին Ներսեսին, որն շտապեց տեսակցել Կ. Պոլսի ռուսական դեսպանի հետ։

Սովում խեղդվողի անհույս բնազդը Խրիմյանին ու նրա գործակիցներին մղեց դիմելու նաև Կարաթեոդոր փաշային՝ իրենց ծրագիրը կոնգրեսում պաշտպանելու աղերսով։ Բայց վերջինս մերժեց հասկացնելով, որ նրանք կարող են ունենալ բարենորոգումների հույսեր միայն։ Եվ որովհետև ասիական սահմանների հարցի լուծումը ավարտվում էր և հայերի հետ սկսած ամարդի ու դաժան խաղը, նա նույնիսկ հեռագրեց Կ. Պոլիս՝ հայկական պատվիրակներին ետ կանչելու վճռական պահանջով։ Միաժամանակ իր կառավարությանը խորհուրդ տալով ձեռնարկել հայկական գավառներում մտցվելիք բարենորոգումները։

Երբ պատրիարքարանն ստացավ Բ. Դռան հրամանը՝ հայկական գավառներում հարստահարությունները քննելու նպատակով վերաքննիչ նշանակված Ալի Թևֆիկ բեյին հայ օգնական տալու մասին, Հայոց Ազգային ժողովն այնպիսի անբարտավան դիրք բռնեց, որ հրաժարվեց օգնական տալ, թե ինչ կամենում եք, կարող եք անել[106]։

Իսկ երբ Բ. Դուռը պահանջեց, որպեսզի Ներսեսը ետ կանչի Բեռլինում գտնվող պատվիրակներին, ընդհանուր ոգե-

---

105 80-ամյա Գորչակովը, որին Բեռլինի կոնգրեսի առնչությամբ, Անուչինը հեռագրում կոչում է Ռուսաստանը խայտառակող փլատակ, հիվանդության պատճառով մասնակցեց կոնգրեսի 20 նիստերից 3-ին միայն։

106 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 453։

վորությունից Թևեր առած հայոց պատրիարքը հանդգնություն ունեցավ ոչ միայն հրաժարվելու, այլև հայտարարելու ստի-պելու գեյքում պատրիարքարանի դռնից կախվելու իր վճռականության մասին, ինչպես մի ժամանակ բաց ճակատով կախվել էին նույն պատրիարքները[107]:

Կոնգրեսի 15-րդ նիստում՝ հուլիսի 8-ին, քննարկման դրվեց Կոթուրի (Կատոր) գավառի և Բայազեդի ու նրա հարևան շրջանների հարցը: Այստեղ ավելի, քան եվրոպական սահմանների խնդրում, անգլիական պատվիրակներն հանդես եկան Օսմանյան կայսրության շահերի մոլի պաշտպանի դերում: Սրա տակ, հարկավ, թաքնված էր սեփական շահերի անվտանգության ապահովումը: Ռուսաստանը պարտավորվեց Թուրքիային վերադարձնել Ալաշկերտի հովիտը, բայց հիշատակելով, որ այն վերադարձվում է փոխանակության կարգով, վերականգնելով Կոթուրի տերիտորիայի Պարսկաստանի նախկին իրավունքները:

Սա Անգլիայի դիվանագիտական խոշոր նվաճումն էր: Դրանով ապահովվում էր Սև ծովի վրայով Տրապիզոն — Կարին — Թավրիզ տանող նրա առևտրական ճանապարհը, որի առնչությամբ Մարքսն իրավացի գրում է. «Կոստանդնուպոլիսը և հատկապես Տրապիզոնը Ասիական Թուրքիայում հանդիսանում են Ներքին Ասիայի, Տիգրիսի և Եփրատի հովիտների, Թուրքեստանի ու Պարսկաստանի հետ քարավանային առևտրի գլխավոր կենտրոններ: Եվ այդ առևտուրն... արագորեն ընդարձակվում է: Հունական ու հայկական առևտրականները վերոհիշյալ երկու քաղաքներից ներմուծում են մեծ քանակությամբ անգլիական գործարանային ապրանքներ, որոնք շնորհիվ իրենց ցածր գների արագորեն դուրս են մղում ասիական հարևանների տնային արդյունաբերության արտադրանքները»[108]:

---

107 1651 թ., ռուսական ցարի հետ բանակցելու համար, կախվեց և ծովը նետվեց հունաց Պարթենիոս II պատրիարքը, իսկ 6 տարի անց՝ 1657 թ. կախվեց Պարթենիոս III, որն իր նամակներից մեկում գրել էր, թե հասել է իսլամի վախճանը. 1821 թ. Կ. Պոլսի հունական տաճարի դարպասներից կախվեց Գրիգորիոս պատրիարքը:

108 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, հատ. 9, էջ 12:

Առևտրական հիշյալ ուղին Անգլիայի համար առավել թանկ էր մանավանդ այդ ժամանակաշրջանում, երբ դեռ չէր նվաճված Եգիպտոսը, նրա տուն տանող առաջին ճանապարհը, և Սուեզի ջրանցքի մշտական օգտագործումը լրիվ ապահովված չէր:

Սուր պայքար ծավալվեց Բաթումի համար ու ավարտվեց այն Ռուսաստանին հանձնելու և ազատ նավահանգիստ հայտարարելու որոշմամբ:

Նույն նիստում, նախագահի հիշեցումից հետո, Սոլսբերին կարդում է Կարաթեոդոր փաշայի հետ, կուլիսների հետևում կազմած 16-րդ հոդվածի փոփոխման վերաբերյալ նախագիծը:

Ինքնավարության մասին ոչ մի խոսք չկար: Արևմտյան Հայաստանի Ռուսաստանին միանալու վտանգն անցել էր, և Անգլիան դեմ դուրս եկավ հայերի ինքնավարության պահանջին:

Տարօրինակն ու վրդովեցուցիչն այն էր, որ Ռուսաստանը կռվել, հաղթել էր, իսկ Անգլիան հաշտության պայմանագիր էր կնքում նրա փոխարեն և նրա դեմ:

Սոլսբերիի բանաձևը, մասնակի խմբագրությամբ, արժանացավ հավանության և ընդունվեց այսպիսի վերջնական տեսք. «Բ. Դուռը պարտավորվում է առանց հետագա դանդաղման իրագործել հայերով բնակեցված գավառների տեղական պահանջներից ելնող բարելավումներ և բարենորոգումներ և ապահովել նրանց (հայերի) անվտանգությունը չերքեզներից ու քրդերից: Նա պարբերաբար կհաղորդի այդ նպատակով ձեռնարկած միջոցառումների մասին տերություններին, որոնք կհետևեն նրանց իրագործմանը»[109]:

Այս երկու ոտքից կաղացող ձևակերպումը, ուր անգամ չէր նշվում, թե այն չկիրառելու դեպքում Եվրոպան ինչ միջոցների կդիմի Թուրքիայի նկատմամբ, ընդունվեց և դաշնագրի մեջ մտավ 61-րդ հոդվածի տակ, հայկական բարենորոգումների պիտակով:

---

109 Տե՛ս Ю. В. Ключников..., մաս 1, էջ 229:

*Սոլսբերիի առաջարկում եղած այն ձևակերպումը, թե Բ. Դուռը* «հետո պիտի համաձայնի դաշնագիրն ստորագրող մյուս պետությունների հետ իր այս պարտավորության չափի և նրա գործադրության համար հարկ եղած միջոցների մասին»[110], *թեպետ հոդվածում չմնաց, բայց ըստ էության այդպես էլ որոշվեց։*

*Դա Հայաստանի մահավճիռն էր, ասում է Լեոն, «...անորոշ, անպարտադիր, խաբեական խոստումները «հայկական բարենորոգումների»*[111]։

*Սան-Ստեֆանոյի համաձայնությամբ ապահոված՝ ռուսական զորքերի առկայությամբ բարենորոգումներ ստանալու երաշխիքը, տեղի էր տալիս այդ, բոլորովին էլ ոչ անփութորեն նետված, ինչպես Ամֆիտեատրովն է կարծում, անդեմ ու անպարտադիր խաբեությանը*[112]։

*Այսպես կազմվեց նախավերջին՝ 62-րդ հոդվածը, ըստ որի Թուրքիայում ապրող ժողովուրդների, այդ թվում հայերի համար, դավանանքի տարբերությունը արգելք չպիտի հանդի-*

---

110 Սարուխան, *Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 466 (ընդգծումը մերն է — Ռ. Հ.)։*

111 Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. 1, էջ 58։*

112 *Դիտենք, որ Խ. Բադալյանի և այլոց կողմից Սան-Ստեֆանոյի և Բեռլինի դաշնագրերի 16-րդ և 61-րդ հոդվածների արմատական տարբերություններից մեկը համարվող՝ առաջինում Հայաստան բառի, երկրորդում՝ հայաբնակ վայրերի փոխարինվելու պարագան (տե՛ս Խ. Բադալյան, Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի դաշնագրում և Բեռլինի կոնգրեսում 1878 թ., էջ 130, նույն հեղինակի՝ Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում 1877—1878 թթ., էջ 110 և այլն) միանգամայն սխալ է, որ դեռ իր ժամանակ թույլ էր տվել «Մանզումեյի էֆքիար»-ը և իրավացիորեն քննադատվել «Մասիս»-ի կողմից (տե՛ս «Մասիս», 1879, № 103)։*

*Այդպիսի* փոխարինում՝ «հանում և մտցնում» *(Խ. Բադալյան) չի կատարվել։ Սան-Ստեֆանոյի դաշնագրի 16-րդ հոդվածի առաջին երկու տողերը, որոնք հանվեցին, ինքնըստինքյան իրենց հետ տարան և հոդվածում եղած* Հայաստան *անունը, իսկ հոդվածի հաջորդ մասում ոչ թե փոխարինվել,* այլ նույնությամբ մնացել է հայաբնակ վայրեր արտահայտությունը *(տե՛ս 16-րդ և 61-րդ հոդվածները)։ Այլ բան է, շեշտել, որ առաջին տողերի դուրս գալով խաթարվում էր հոդվածի քաղաքական իմաստը՝ դուրս էր նետվում Հայաստան բառը։*

ստանար քաղաքական ու քաղաքացիական իրավունքներից օգտվելու։

Այս հոդվածներն հետագայում, իհարկե, իրականություն չդարձան։ Կյանքը դաժանորեն ծիծաղեց դրանց հետ հույսեր կապած հայ գործիչների վրա։

1879—1880 թթ. եղած մի քանի ծաղրանկարային հետաքրքրությունից հետո և Բ. Դուռը և եվրոպական կառավարությունները «մոռացան» Բեռլինի կոնգրեսում ընդունված որոշումները, մինչև Սասունի ապստամբությունը և 1894—1896 թթ. հայկական կոտորածները։ Որից հետո էլ, ինչպես Դիլլոնն է բնորոշում, իրենց համակրությունն հայտնեցին սոսկ հոշոտված դիակների վրա շարած խաչերով[113]։

Հայկական հարցը կոնգրեսում դրանով ավարտվում էր. արդյունքների մասին հայ պատվիրակներին անտեղյակ պահելով երկու օր հետո միայն։ Բեռլինի կոնգրեսը միաժամանակ ռուսական դիվանագիտության սոսկալի պարտությունն էր։ Կրճատվեց Բուլղարիայի՝ Սան-Ստեֆանոյի դաշնագրով որոշված տերիտորիան։ Նրա հարավային մասը (Արևելյան Ռումելիան) մնաց Օսմանյան կայսրության կազմում, ստանալով միայն վարչական ինքնավարություն։ Մակեդոնիան ու Թրակիան նույնպես մնացին թուրքական տիրապետության տակ։ Ռուսաստանն ստիպված վերադարձրեց հարավային Բեսարաբիան և Բայազետի հովիտը։ Ռուսական զորքերի Բուլղարիայում մնալու ժամկետը իջեցվեց ինն ամսվա։ Ավստրո-Հունգարիան, իր անփառունակ «չեզոքության» համար, ստացավ իրավունք գրավելու Բոսնիան և Հերցեգովինան։

«Բեռլինի կոնգրեսը իմ ծառայության կարիերայի ամենասև էջն է կազմում»,— գրում էր Գորչակովն Ալեքսանդրին։— «Նույնպես և իմ», — մակագրում է վերջինս[114]։

Սլավոնաֆիլների արշավը ղեկավարող Ի. Ակսակովը վրդովված պնդում էր, թե կոնգրեսը Բիսմարկի նախագահությամբ գումարված դավադրություն էր ռուս ժողովրդի

113 Տե՛ս «Положение армян...», էջ 42։

114 Տե՛ս К. Скальковский, Внешняя политика России и положение иностранных держав, СПБ, 1879, էջ 230։

դեմ և այդ դավադրությանը մասնակցեցին նաև Ռուսաստանի ներկայացուցիչները։ Իսկ Կատկովը, «Մոսկովսկիե վեդոմոստի»-ի սյուներին հենված, բռունցք էր թափահարում դեպի Արևմուտք, ու Գերմանիային մեղադրելով Ռուսաստանին դավաճանելու մեջ, սպառնում, որ այնուհետև ռուսների համար Կ. Պոլիս տանող ճանապարհը Բեռլինի վրայով է անցնելու[115]։

Հետագայում Շուվալովը զուր էր փորձում արդարացնել ռուսական դիվանագիտության բեռլինյան պարտությունը, այն բացատրելով Բիսմարկի՝ Գորչակովի նկատմամբ ունեցած անձնական թշնամությամբ, կամ մարդկային ուժերից առավել հզոր ուժերի ներգործությամբ[116]։

Այդ պարտությունը նախապատրաստել էր Անգլիայի կողմից Ռուսաստանի դեմ ստեղծած եվրոպական խմբավորման միասնական ճակատը։

Կոնգրեսի օրերին Միլյուտինը դժգոհությամբ գրում էր, որ այնտեղ Ռուսաստանի դեմ է փաստորեն ամբողջ Եվրոպան և այն էլ անգամ այնպիսի հարցերում, որոնցում ռուս դիվանագետները չէին կասկածում առանձին երկրների պատվիրակությունների օգնության վրա։ «Արդեն լրիվ ակնհայտ է, որ մենք մեր դեմ ունենք ոչ միայն Անգլիան, այլ ողջ Եվրոպան, և որ ոչ մեկից աջակցություն սպասել չենք կարող։ Նման իրավիճակում ընտրելու հարց չկա, մնում է ամեն ինչի համաձայնվել, ամեն ինչում զիջել»[117]։

Թուրքիայի «ստատուս քվոն» պաշտպանելու հարցով շահագրգռված էր նաև Գերմանիան, որը Բիսմարկի խոստովանությամբ, քվեարկեց մեծամասնության հետ և «Ռուսաստանը մնաց փոքրամասնության մեջ»[118]։ Ուստի և կոնգրեսից հետո գերմանո-ռուսական հարաբերությունները զգալիորեն սառեցին։

---

115 Տե՛ս Г. П. Гуч, История современной Европы, էջ 28։

116 П. А. Шувалов, О берлинском конгрессе 1878 г. («Красный архив», 1933, № 4/59, էջ 92—100)։

117 «Дневник Д. А. Милютина», հատ. 3, էջ 73։

118 О. Бисмарк, Мысли и воспоминания, հատ. 2, էջ 217։

Բիսմարկը կոնգրեսում բացահայտ հանդես չէր գալիս ռուսական առաջարկների դեմ, նույնիսկ, ինչպես արձանագրությունները են վկայում, այդ առաջարկներից շատերը պաշտպանում էր, բայց այդ ամենն արտաքին շղարշ էր միայն, ծածկելու այն բացասական դերը, որ նա խաղաց Ռուսաստանի համար, կոնգրեսի որոշումների վերջնական ընդունման գործում։ Պատահական չէր, որ 1888 թ. հունվարի 25-ին (փետրվարի 6-ին) Ռեյխստագում արտասանած ճառում, Բիսմարկի այն խոսքերը, թե Բեռլինի կոնգրեսում ինքն այնպես է պաշտպանել Ռուսաստանին, որ արժանի կլիներ ռուսական բարձրագույն շքանշանով պարգևատրման. եթե այն վաղուց արդեն չունենար. ունկնդիրները դիմավորեցին զրնգուն քրքիջով[119]։

Թուրքիայի ժառանգության հարցը լուծվեց Անգլիայի օգտին։ Իսկ Հայաստանը դարձավ նրա կնքած «պատվավոր հաշտության» սեղանի զոհը[120]։

Բեռլինից վերադարձող լորդ Բիկոնսֆիլդին Լոնդոնում, հուլիսի 4/16-ին դիմավորեցին այնպիսի որոտընդոստ ցույցերով, ինչպես Հին Հռոմն էր դիմավորում «բարբարոսների» դեմ տարած հաղթական պատերազմներից վերադարձող իր փառաբանված զորավարներին։

«Ես ձեզ բերել եմ պատվավոր խաղաղություն», — անմիջապես ազդարարեց առաջին մինիստրը։

Մինչդեռ կոնգրեսը դրական շատ քիչ բան տվեց կրկնակի հարստահարվող ժողովուրդներին։

Քննադատելով կոնգրեսի արդյունքները, «Արևելյան մամուլ»-ը գտնում էր, որ կոնգրեսը պետք է ազատագրեր ստրըկացված ազգերին, պետք հռչակեր խղճի, կրթության բացարձակ ազատություն բոլոր պետություններում, «Միջազգային շահուց մեջ կատարյալ համերաշխություն և խաղաղություն հաստատելու համար՝ ահագին բանակներ պահելու դրությունն ջնջել տալ և անոնց հատկացված գումարը ժողովրդային կըր-

---

119 С. С. Татищев, Из прошлого русской дипломатии, էջ 359։

120 Ллойд Джордж, Правда о мирных договорах, М., հտ. 1., էջ 390։

թության ծախսով նվիրել տալ»։ Միայն այդ դեպքում համայն մարդկությունը երախտապարտ կլիներ նրան[121]։ Մինչդեռ, «Պեռլինի դաշնագրության շնորհիվ Պոսնիա մեջ դեռ կռիվը կշարունակվի»[122]։

Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածը յուրովի ընկալվեց ու գնահատվեց այդ անցքին ժամանակակից հայ և օտար մտավորականության ու հասարակական հոսանքների տարբեր ներկայացուցիչների կողմից։

Կոնգրեսից հետո Ներսես պատրիարքը Լոնդոն՝ Գ. Փափազյանին գրում էր. «Գիտեք, անշուշտ, մինչև հիմա կոնգրեսին որոշումները հայոց խնդրի վրա։ Այս որոշումը մեծ դժգոհություն հարուց հոս, և իրավամբ։ Այս որոշման պատճառները զանազան են. նախ՝ Լեյարդի տեղեկագրերը, որ կույր թրքամոլ է և շատ սխալ տեղեկություններ տված է իր կառավարության. երկրորդ՝ Անգլիո կառավարությունը շատ դժգոհության պատճառներ ցույց տված ըլլալով կոնգրեսի մեջ. Թուրք կառավարության, երկրորդական խնդրոց մեջ թուլցավ և տաճկաց հաճո ըլլալու ձգտեցավ. երրորդ տաճիկ լիազորք, որոնց առաջինը հույն է, լավ կեցան ուրիշ խնդրաց մեջ, սաստիկ ընդդիմադրություն ըրին. Կարաթեոդորի փաշան ասկե առած հրահանգներուն դեմ զիջումներ ըրավ հունական և ավստրիական խնդրոց մեջ և մեր խնդրուն մեջ, ուր բնավ ընդդիմանալու հրահանգ չէր տրված (*) արիացավ, չորրորդ և մեծ պատճառ՝ Անգլիո և Թուրքիո մեջ կնքված գաղտնի համաձայնությունն եղավ»[123]։

Նա միաժամանակ զայրույթով շեշտում էր Լեյարդին, որ «... անգլիացիները և տաճիկները այժմ մեզ համար միևնույն են, իսկ տաճիկներից հայերը ոչինչ սպասելիք չունեն»[124]։

Սակայն 1878 թ. հուլիսի 21-ին (օգոստոսի 2-ին), Ազգային ժողովում արտասանած ճառում, 61-րդ հոդվածը չներ-

121 «Արևելյան մամուլ», 1878, հուլիս, էջ 104—105։

122 Նույն տեղում, սեպտեմբեր, էջ 203։

123 Լեո, Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. 1, էջ 92։

124 «Մեղու Հայաստանի», 1878, № 30։

կայացնելով հարկավ որպես լուսատու մի փարոս, որն այնուհետև պիտի լուսավորեր արևմտահայ ժողովրդի ներկան ու ապագան, Ներսեսն հուսադրում էր ժողովրդին, միաժամանակ փորձելով արդարացնել իր կողմից հայկական հարցի բարձրացումը և նրա անխուսափելիությունն ու ճշմարտացիությունը:

«...Եթե այս հոդվածը ցավալի բան մ'ունի, — ասում էր նա, — այն է, որ մեր խնդրույն լուծումը ըստ մասին կը հետաձգե. չկործաներ ազգին հույսերը, այլև չպսակեր նույն հետայն: Եվ ո՞ր ազգ կրցած է հանկարծակի կերպով իր բաղձանացն ի կատար հասնել. դժբախտությունն է միայն և մահ, որ հանկարծակի կրնան գալ անձի մը և ազգի մը վրա. կյանքըն ու բարեկեցությունը համր կձևանան: Եվ ասոր համար է, որ կանիրավին անոնք որ կըսեն թե՝ «ինչո՞ւ սկսանք, եթե պիտի չհաջողեինք». զի օր մը հաջողելու համար՝ այս օրեն սկսելու էր. և զի եթե ապահով կերպով գիտենայի ալ առաջուց թե պիտի չհաջողիմ բնավ, դարձյալ պիտի սկսեի, և այն թող գրեր ինծի ազգս ի դատապարտություն»: Ապա մերժելով օտարներից եկող այն մեղադրանքը, թե ինչ որ ձեր պատրիարքն ազգի խնդիրը կոչեց, այն իր հնարածն էր, և ազգը չուներ մասնակցություն, դիմելով Ազգային ժողովի պատգամավորներին, նա շարունակում է. «...Ըսեք, պիտի ներեի՞ք որ այնպիսի պարագայի մեջ ուր Թուրքիո քրիստոնյա ժողովրդոց բաղդը պիտի վճռվեր, ձեր պատրիարքը անհոգ կենար. ըսեք, պիտի ներեի՞ք եթե նույնիսկ անհույս և անապավեն չդիմեր ազգաց ժողովին. գեթ անոր համար, որ Եվրոպա գիտենա թե հայոց ազգ մ'ալ կա Արևելքի մեջ. ըսեք, պիտի ներեի՞ք դուք և պիտի ներեի՞ն ինձ մեր նախնյաց հոգիք՝ Հայկեն մինչև վերջինն մեր Լևոն, Լուսավորչեն մինչև ի վերջինն Ներսես՝ ի շարս մեր ազգաշեն և ազգասեր կաթողիկոսաց, ըսեք, ըսեք, պիտի ներեի՞ն և պիտի ներեի՞ք եթե խաչ և խութ առ ոտն հարկանելով մինչև Եվրոպա չհասցունեի ազգին աղաղակը. ըսեք... և ձեր քվեն թող պատասխանե այդ անհեթեթ ու ազգուրաց առարկության»[125]:

125 «Ատենագրություն Ազգային ժողովո», 1878, էջ 66—67:

«Բեռլինի ժողովին մի ոսկեհանք շահեցանք, մեզ անկե խիզախել հանել ոսկին», — կոնգրեսից վերադառնալով ազդարարեց Մինաս Չերազը[126]։ Չհասկանալով, որ այն ոչ թե ոսկեհանք էր, այլ ոսկե ժանտաքիսի մի խրտվիլակ, այն էլ քսոտ, որն հետագայում պայթեց իր սարսափելի դարշության մեջ խեղդելով հայ ժողովրդի մի ամբողջ հատված։ Չերազին, որն, ի դեպ, հետագայում հրաժարվեց իր այդ կարծիքից, արձագանքում էր հայ պահպանողական հոսանքը, «Մեղու Հայաստանի»-ի անատամ բերանով ձոներ շռայլելով 61-րդ հոդվածին, և հայ ժողովրդին բարբառելով խոնարհությամբ պահպանել «այդ մեծ ժառանգությունը»[127]։

Երկու տարի անց, նույն «Մեղու Հայաստանի»-ն համոզմունք էր հայտնում, թե «տաճկահայերի հարցը, որ Բեռլինի դաշնագրության որոշմանց վերա է հիմնված, չէ կարող անկատար մնալ»[128]։

Չափազանց հեռուն էր գնում Կ. Պոլսի «Լրագիր»-ը, առանց վարանելու գրելով, թե «... Պեռլինի դաշնագրի 61-րդ հոդվածն ազատեց հայերուն... և հուսալի ապագայի մեջ մը դրավ»[129]։

«Մասիս»-ն ավելի վերապահ էր, որոշակի գրելով, որ ժողովրդի ընծայվին ուրախությունը փոխարինվեց հուսահատ տխրության[130]։

Ապա տեղի տալով պատրիարքարանի «սովորական լավատեսական» դիրքին, մորմոքում էր. «Իրավունք ունինք հուսալու թե Հայաստանի ներկա դժնդակ վիճակը վերջ գտնելու անհրաժեշտ հարկին մեջ է, և թե անդորրության քաղցրագվարթ արշալույսը ծագելու մոտ է մեր բազմաչարչար հայրենյաց խավարամած հորիզոնին վրա»[131]։

---

126 Մ. Չերազ, Թե ինչ շահեցանք Պեռլինի կոնգրեսեն, Կ. Պոլիս, 1879, էջ 29—30։

127 «Մեղու Հայաստանի», 1878, № 45 և 50։

128 Նույն տեղում, 1880, № 61։

129 «Լրագիր», 1878, № 5։

130 «Մասիս», 1878, № 2145։

131 Նույն տեղում, № 2148։

Այլ բան էր ասում Խրիմյանը։ Նա արդեն հասկացել էր եվրոպական պետությունների «ինտրիգան կառավարությունների» խաղը, հասկացել էր, որ հայ ժողովրդի ազատության՝ կոնգրեսի հետ կապված հույսերը, եվրոպական անապատներում ասիացի անհույս ճանապարհորդին երևացող միրաժ է եղել միայն, և նորից զենքի էր կոչում ժողովրդին. «Պերլինի մեջ հաղեճաշ հարիսա կցրվեին բոլոր հպատակ ազգերին, ինծի ղրկեցիք, որ հայերին ընկած մասը առնիմ բերեմ, ես ալ պտատուկս առի ու վազեցի։ Տեսա, որ սերպեր, ղարատախցիներ, հույներ, բուլղարներ, ռումիններ իրենց քովեն կախ տված երկաթյա շերեփներով լեցուցին, առան տարան... Դուք ինծի շերեփին տեղ թուղթ տվիք, այդ թղթի կտորը որչափ որ խոթեցի տաք հարիսային մեջ, թուղթը թացացավ, լխկեցավ, մինչև ընկավ, ես ալ պարապ թողի եկա. մնացա առաջուց մի քանի հատ զեյթունցի տանեի հետս, անոնք շերեփ ունեին, կարելի է ամանին տակեն, քովեն բան մը փրցնեին»[132]։

Եթե 61-րդ հոդվածի մեջ Չերազը նշմարում էր մի դրական եզր՝ այն է հայկական հարցը միջազգային հարց դառնալը, ապա Խրիմյանը հենց դրանում էլ զգում էր նրա ողջ բացասական շունչը, որն Աբդուլ Համիդի համար դարձավ հայ ժողովրդին ծրագրված ոչնչացնելու առավել գործուն խթան։

Արևմտահայ ժողովրդին փրկելու անվան տակ հորինված այդ հոդվածը, իրականում դարձավ նրա գերեզմանը փորելու գործիք։

Սպառնացող աղետը բավականին շուտ տեսավ ու սթափվեց Գր. Օտյանը. «Հաջողեցանք 61-րդ հոդված մը դնել տալ Պերլինի դաշնագրին մեջ, իցիվ թե հաջողեինք ջնջել զայն»[133]։

Ստ. Փափազյանը, վրդովված, Ազգային ժողովում զինված պայքարի կոչ էր անում։ Նա մատնացույց էր անում բալկանյան ժողովուրդներին, որոնք զենքը ձեռքներին պայ-

132 Տե՛ս «Արմենիա», 1888—1889 թթ., № 47։

133 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն Մալաթիո հայոց, էջ 836։

քարեցին, ուստի և ստացան այն իրավունքները, որ մեծ տերությունները զլացան տալ հայերին։ «...Վասնզի եվրոպական Տաճկաստանի մեջ ապստամբ և զինյալ ժողովուրդներ կան, փոքրիկ կա, մինչդեռ ասդին, Հայաստանի մեջ անմեղ ու անզեն ժողովուրդ մը կա...»։ Եվ որովհետև մենք աղերսում էինք այն ամենը, ինչ նրանք զենքը ձեռքներին պահանջում էին, ուստի մեզ «կը զլացվի ամեն հավասարության իրավունք»[134]։

Կոնգրեսից հիասթափված Գ. Սրվանձտյանը, հայ ժողովրդի մտավոր վերածնության ու ազատագրական պայքարի մեջ տեսնելով նրա փրկությունը, գրում էր. «Հայաստանի մեջ է բուն հայկական խնդիրը. մենք Պերլինի մեջ կորսնենք զայն»[135]։

Իսկ մի քանի տարի անց Մ. Մամուրյանին գրած մի նամակում հետաքրքիր խորհրդածություններ էր անում կոնգրեսի արդյունքների և գոյություն ունեցող իրավիճակի մասին. «Թող համագումարները, լիգաները, 66-յանները (հավանաբար 16-յաններ — Ռ. Հ.), 61-յանները տան ու առնեն, և գրողներ ու խմբագիրները թմբուկ զարնեն, առանց զգաստանալու և ճանչնալու զիրենք կալեցնողները, խաղցնողները և մեր այս աղմուկին ու աղաղակին իրենց օգուտ հանողները։ Զարմանալի ենք մենք. ամեն օտարաց ճամբաները կը տեսնանք, անոնց ճամբայով կընթանանք՝ բայց նպատակ ունինք մեր հայրենիքը երթալու, օտար ճանապարհը օտարի քաղաքը կը տանի, սակայն հոն կհասնինք, կը կապվինք և դեռ ազգին կըսենք թե՝ Հայրենյաց ճամբան այս է։ Ավելի զարմանալին անոնք են, որ զօտարը լավապես կը ճանչնային, անոր որոգայթները ազգին մատնանիշ կընեին, փախեք կը պոռային ու այսօր իրենք անոնց դահլիճներուն մեջ ընտանի՝ և դուրսը գործակատարներն են։ Ի՞նչ հարկ անունները գրել, դուք մոտեն գիտեք, հեռու եղողն ալ ակնարկեր էիք «փառասեր» տիտղոսով. ուրիշ քանի անձնանվերների տեսանք, որք այսօր

[134] «Ատենագրություն Ազգային ժողովո», 1878—1879 թթ., էջ 351—352։

[135] Գ. Սրվանձտյան, *Թորոս աղբար*, 1879, Կ. Պոլիս, մաս 1, էջ 270։

շահու և փառաց նվիրյալ են։ Անձնվերներ և հայրենասերներ՝ որք հայկական խնդրույն մեջը անձնական շահու և փառաց գերբը խաղացին, որ սովելոց գումարներեն իրենց անձանց բաժիններն առացան և անունները գծած հուշակեցին։ Որ վարժարաններ բացին՝ և իրենց ազգականները շահեցուցին, ու հանդանակությամբ ազգը կողոպտեցին և ապա վարժարանաց դռները փակեցին՝ մեղքն ու վնասը ձգելով ազգին։ Միսը կաթողիկոս մը տնկեցին, և անոր դառն պտուղները կը կերցնեն ազգին։ Սուրբ Սիոնի փառքն պատրիարքին. պարտքը կը գնեն ազգի պարանոցին։ Հայաստանի մեծամեծ վիճակները այնպիսի անձինք առաջնորդ կացուցին, և այնպիսի նվիրակներ ու հրահանգներ ղրկեցին, որոնց շնորհիվ թեմերը անհովիվ և ժողովուրդը ծանրապես ճնշմանց ու զրկանաց մատնեցին, մաս մը դատերու և բանտերու մեջ կը մաշին, ամենամեծ մասն ելուզակաց ոտնակոխ կը լինին, թողունք պաշտպանությունը՝ բարեխոսությունն ու աղերսն անգամ անլսելի կմնա բարեխնամին։ Նյութեն ինկած, հոգին հատած, այսպես ժամանակ չկարծեմ թե ունեցել է հայն։ 61-ի անիվն դեռ կը թավալի ուրեք ուրեք, և կարգ մը մանուկները կը վազեն անոր ետևեն փոսե փոս իյնալով ելլելով։ Անիվն՝ ի Հյուսիս կը դառնա։ Վերջապես ազգին ընդհանուր կաթողիկոսն ալ պատրաստյալ է, իզուր կը քաշկռտվին։ Ռուսիո մարդասպան և ելուզակ ցեղերը այս կողմի հայկական գավառները լցան և կը լցվին, ու հայերը հողեն և հողի հույսեն կտրված՝ կը մղվին դուրս...»[136]։

Արևելահայ լիբերալ-դեմոկրատիան «Մշակ»-ի շուրթերով մարգարեանում էր. «Մեզ վրա պետք է հույս դնենք և ոչ թե Բեռլինի։ Այն ազգը, որն ինքն իր վրա հույս չունի, նա ապագա չունի»[137]։

Ճաշակելու դառը փորձը վերջապես համոզեց հայ գործիչներին, որ եվրոպական պետությունները ամենևին էլ քրիստոնյա ժողովուրդների այն լուսապսակով զարդարված

136 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 452—454։

137 «Մշակ», 1879, № 125։

*փրկիչները չեն, ինչպես մինչ այդ կարծում էին շատերը: Եվ որ նրանց համար իրենց շահերից դուրս, ոչինչ գոյություն չունի։*

*1844 թ. Ներսես Աշտարակեցու կոնդակով վավերացվում էր այն դրույթը, որ «զանազան եվրոպական ազգեր... ուրախանում են հայ ժողովրդի դժբախտ վիճակի համար»:*

*Ճիշտ է եվրոպական շատ առաջադեմ գործիչներ, ինչպես այդ շրջանում, և առավել հետագայում, հանդես էին գալիս հայկական դատի պաշտպանությամբ, բայց նրանց ազնիվ ու ոգեշունչ ելույթները լոկ բարոյական աջակցություն էին անօգնական մի ժողովրդի համար։*

*Մինչդեռ մեծ տերությունների կառավարություններն ու նրանց ետևին կանգնած իշխող դասակարգերը հարցին մոտենում էին սեփական շահերից ելնելով:*

*Ֆրանսիական բուրժուազիան, որի առաջնորդները երկինք էին թնդեցնում իրենց կրակոցներով, թե Ֆրանսիական փողփողացող դրոշին ամենուր հաջորդում է մեծ գործը, և որ Ֆրանսիան միակ երկիրն է, որ պայքարում է հանուն գաղափարի, իր երկրային նպատակներին հասնելու ճանապարհին աճուրդին էր հանել բոլոր այդ գաղափարները:*

*XIX դարի 90-ական թվականներին՝ Սասունի կոտորածների ժամանակ ֆրանսիական «Փեթիթ ժուռնալ» այլասերված թերթը լորձ էր թափում, ցավակցություն հայտնելով «մեծ մարդասպանին», հայերի կողմից «թուրքերին կոտորելու» առթիվ:*

*Ֆրանսիական պատմաբանները, հետագայում, ջանում էին արդարացնել հայկական հարցի նկատմամբ իրենց դիվանագետների բռնած անօրինակ վարքագիծը, որպես հիմնական փաստարկ նորից շրջանառության մեջ նետելով, Բեռլինի կոնգրեսի նախօրեին, Լեյարդի կողմից թուրքերի օգնությամբ հեղինակած՝ Արևմտյան Հայաստանի բոլոր շրջաններում հայերի խիստ փոքրամասնությամբ ցրված լինելու առասպելը*[138]:

---

138 *Տե՛ս* «История XIX века», *հատ.* 8, *էջ* 31:

Սակայն հարցի ակունքներն իրականում թաքնված էին ֆրանսիական բուրժուազիայի, հատկապես նրա առաջատար ֆինանսական բուրժուազիայի, Թուրքիայում ունեցած բազմատեսակ շահերում։

Անգլիական կապիտալի հետ միասին ներխուժելով և ընդգրկելով Թուրքիայի տնտեսության մի շարք կարևորագույն ոլորտները, այնտեղից հսկայական տոկոսներ կլանող ֆրանսիական բուրժուազիան անհունորեն շահագրգռված էր Թուրքիայի ամբողջականության պահպանմամբ։ Եվ ոչ միայն չէր ցանկանում օգնել ինքնուրույն կյանքի ձգտող ստրկացված ժողովուրդներին, այլև ջանում էր խոչընդոտել իրենց ազատության համար ոտքի կանգնած այդ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարը։ Սկսվում էր գաղութների նվաճման համար կապիտալիստական երկրների անօրինակ վազքը և ֆրանսիական բուրժուազիայի հայացքը հառած էր Աֆրիկայի ու Ասիայի մի շարք երկրների վրա, որոնց զավթումը «կենսական անհրաժեշտություն» էր համարվում, և որի առջև վաղուց խունացել էր «եղբայրության, ազատության ու հավասարության» եղծված դրոշը։

Ֆրանսիայի արտաքին գործերի մինիստր Վ. Ն. Վադդինգտոնը մինիստրական խոսք տվեց իր համար «շատ սիրելի» հայ ժողովրդի օրինական պահանջները պաշտպանելու։ Բայց ահա կոնգրեսի նախագահում Բիկոնսֆիլդը նրան է հանձնում Թունիսի զավթման իրավունքը, և նա ոչ մի խոսք չասաց, նույնիսկ որևէ կարծիք չհայտնեց 16-րդ հոդվածի՝ 61-ի գերաճելու ընթացքում։ Եվ զուր է Սարուխանը նրա փոխարեն մեղանչում, թե նա «անկեղծորեն աշխատում էր օգտակար լինել» հայերին[139]։

Իսկ անգլիական նվաճողական դիվանագիտության համար գրոշի արժեք չուներ հայերին տված խոստումը։ Անգլիայում, կապիտալի բռնապետության այդ երկրում, գիտեին միայն սառը կերպով հաշվել սեփական շահերը և չէին կարող չխափանել իրենց արևելյան մրցակցի՝ Ռուսաստանի

139 Սարուխան, Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 458։

պլաններն ու շպաշտպանել քաղաքական խաղալիք դարձած օսմանյան պետությանը, անբավ ժառանգություն ունեցող այդ «մերձիմահ հիվանդին»։

1878 թ. հուլիսի 18-ին լորդերի պալատում, ամփոփելով Բեռլինի կոնգրեսի արդյունքները և արդարացնելով անգլիական պատվիրակության դիրքը կոնգրեսում, առաջին մինիստրը բացատրում էր. «Մենք Թուրքիո ասիական մասին մեջ մասնավոր դիրք մը ունինք, զոր չունի ոչ մեկ պետություն։ Ամեն տագնապի ատեն Անգլիո մեջ մտահոգություն տիրած է մեր Հնդկաստանի կայսրության համար, ժամանակն էր վերջ դնելու այդ մտահոգության... Ամեն անգամ, որ Ռուսիա կը հառաջանա Ասիական մասին մեջ, իր հետ կտանի. ըլլա դիտավորությամբ թե ոչ, Բ. Դռան վարկին անկումը և Թուրքիո քայքայումը։ Պարտավոր էինք մեր շահերը պաշտպանելու համար արգիլել այդ կազմալուծումը, ուրպեսզի Ասիո այդ մասը Ռուսիո ճարակ կամ անիշխանության որս չըլլա»[140]։ Եվ ավելացնում, թե փոքր ազգերը թող իմանան, որ կոնգրեսը օսմանյան կայսրությունը մասնատելու համար չէր հրավիրվել։ Նույն 1878 թ. հուլիսի 30-ին համայնքների պալատում Գլադստոնն աղմուկով դատափետում էր Բիկոնսֆիլդին ու Սոլսբերուն, որոնք ամենուր «անգլիական շահերի» ոտնահարում տեսնելով, Բեռլինում ազատության կողմը բռնելու փոխարեն ստրկության կողմը բռնեցին[141]։

Բայց դրանք խոսքեր էին իշխանության գլուխ կանգնած կուսակցությանը մեղադրելու համար միայն։ Հետագայում, նորից իրենց ձեռքն առնելով կառավարության ղեկը, Գլադստոնն ու նրա հետնորդները, քամուն տալով ազատության մասին իրենց բոլոր ազգերը, հայ և մյուս ստրկացված ժողովուրդների արյան ծովերի վրայով նավարկեցին դեպի Եգիպտոս ու այլուր՝ միշտ հետամուտ մուսուլմանական աշխարհը Միջերկրականից մինչև Հնդկաստան վերահսկելու իրենց պլանների իրագործմանը։

140 Տե՛ս Խորեն Գաբիկյան, Հայկական խնդիրը, էջ 244։ Նաև Լեո, Գլադստոն, Թիֆլիս, 1899, էջ 200 (ընդգծումը մերն է — Ռ. Հ.)։

141 Տե՛ս Խորեն Գաբիկյան, Հայկական խնդիրը, էջ 245։

*1881 թ. Թույլ տալով, նույնիսկ հրահրելով, որպեսզի Ֆրանսիան անարգել զավթի Թունիսը, Անգլիան հետապնդում էր և հասավ նրան, որ 1882 թ. Ֆրանսիան սրտի կսկիծով, բայց լռությամբ էր դիտում Եգիպտոսի անկումը։*

*Դեռ 1852 թ. անգլիական իմպերիալիզմի հայրը Բ. Դիզրայելին (Բիկոնսֆիլդը) փորձում էր ապացուցել, որ գաղութները Անգլիայի վզից կախված ջրաղացքարեր են միայն։ Բայց ինքը դարձավ գաղութացման համար ամենամոլի պայքարողներից մեկը։*

*XIX դ. երկրորդ կեսից Անգլիան իր հսկայական ձեռքերով արդեն ընդգրկել և շահագործում էր աշխարհը (Մարքս)։*

*Չկար մի երկիր, որն ի վիճակի լիներ ապահովել սեփական արդյունաբերության ինքնուրույն զարգացումը, առանց բարձր մաքսերով պաշտպանելու այն անգլիական ապրանքների մրցությունից։ Իսկ իր տնտեսական օղակում շնչասպառվող փոքր, հետամնաց երկրներին նա թելադրում էր այնպիսի դաժան պայմաններ, որ նրանք դանդաղորեն զրկվում էին իրենց տնտեսական, ապա քաղաքական ինքնուրույնությունից։*

*Անգլիական դիվանագետները մի դեպքում կարող էին ինքնավարություն խոստանալ հայերին, նույնիսկ Կ. Պոլսում Լեյարդի բերանով ուղղակի առաջարկել, որ նրանք ինքնավարություն պահանջեն, միևնույն ժամանակ՝ մերժել հայկական պատվիրակության կոնգրեսին ներկայացրած ծրագիրը։ Տակավին 1878 թ. մայիսի 18/30-ին Պոլսի անգլիական դեսպան Լեյարդին ուղղված իր հրահանգ-նամակում, Սոլսբերին գրում էր, թե «Ասիական Թուրքիան բովանդակում է իր մեջ բազմաթիվ տարբեր ցեղերից և դավանություններից բաղկացած ժողովուրդներ, որոնք* ընդունակ չեն ինքնավարության և անկախության ձգտում չունեն...»[142]։

*Քրիստոնյա ժողովուրդների պաշտպանի դերում հանդես եկող անգլիական կառավարությունը ոչ միայն հովանավո-*

---

142 Սարուխան, *Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 407 (ընդգծումը մերն է — Ռ. Հ.)։*

րում, այլև հետևողականորեն հրահրում էր Բ. Դռան կողմից կազմակերպված արյունոտ ջարդերը։

Զուր չէր «Դեյլի նյուս»-ի թղթակից Մակգաանը հրապարակորեն մերկացնում Կ. Պոլսի անգլիական դեսպան Էլիոտի բանսարկությունները ու դավերը, ի լուր աշխարհի հայտարարելով, որ նա մեղսակից է թուրքերի հետ և պատասխանատու բուլղարական կոտորածների համար[143]։

Իսկ հայերը Էնյարդին որակեցին «Թուրքից էլ թուրք»։

«Մշակ»-ը պատերազմի շրջանում և նրա ավարտից հետո, հետևողականորեն հանդես էր գալիս Անգլիայի, փոքր ժողովուրդների նկատմամբ վարած քաղաքականության խիստ քննադատությամբ։

1877 թ. ռազմաճակատի գոտում գտնվող հայ ազգաբնակչության ջարդերի մասին խոսելով, նա նշավակում էր Անգլիային, որը գոհ կլիներ, եթե բոլոր հայերն էլ կոտորվեին և երկիրը անապատ մնար, «միայն որ Անգլիան ճանապարհ ունենա դեպի Հնդկաստան, միայն որ այդ անապատը ուրիշ տերության ձեռքը չընկնի»[144]։

Ավելի ուշ Արծրունին Անգլիային մեղադրում էր թուրքական շորերով Ռուսաստանի դեմ կռվելու, Թուրքիային զենք տրամադրելու, նրա զինվորներին անգլիական նավերով տեղափոխելու[145], և վերջապես մահմեդականությանը միանալու և Արևելքում քրիստոնեությունը ջնջելու մտադրության մեջ[146]։

Հայ ժողովրդի «բարեկար» այս Անգլիան էր, որ մի քանի տարի անց աշխարհի քարտեզի վրա Հայաստանի փոխարեն գրեց Քուրդիստան, որպիսի «աշխարհագրական կոպիտ սխալը» Ազգային ժողովում Գր. Օտյանը որակեց «որ Անգլիան թշնամական մի գաղանի նպատակ ունի հայոց ազգի գոյու-

143 Е. Д. Макгаан, Зверства в Болгарии, СПБ, 1877, էջ 98—105։
144 «Մշակ», 1877, № 50։
145 Նույն տեղում, 1878, № 45։
146 Նույն տեղում, № 126։

թյան դեմ»[147]։ Հետագայում անգլիացիները բացահայտ ազդարարում էին, թե «սուլթանի թշնամիները մեր թշնամիներն էին, նրա բարեկամները՝ մեր բարեկամները»[148]։

Անգլիան ոչ միայն չէր ցանկանում օգնել փոքր ժողովուրդներին անկախություն ստանալու, այլ դեռ ջանում էր պետականություն ունեցող երկրներին զրկել ինքնուրույնության պահպանման հնարավորություններից, «նացիոնալիզմը զրկել նրա խայթոցից», դուրս քաշել ժողովուրդների ազգային զգացմունքների արմատները, կամազուրկ դարձնել նրանց ու ստիպել հրաժարվելու ինքնուրույն գոյության իրենց վաղեմի իրավունքից։

1877 թ., երբ թուրքական բաշիբոզուկները դեռ մաքրում էին բուլղար մանուկների արյամբ ցողված իրենց սրերը, այդ արյան պատասխանատու բայց միաժամանակ փոքր ազգությունների պաշտպանի դիմակով հանդես եկող Անգլիայի պառլամենտում, Իռլանդիայի պատգամավոր Պառնելը, առանց ուշադրություն դարձնելու պահպանողականների գոռում-գոչումին, հայտարարում էր. «Ես այստեղ եմ եկել մի երկրից, որը խիստ տանջվում է անգլիացիների անգթությունից ու բռնակալությունից»[149]։

Ինչ վերաբերում է Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածին, գրում էր Մալկոլմ Մակկոլը «Անգլիայի պատասխանատվությունը Հայաստանի առջև» իր մենագրական հոդվածում, այն մնաց որպես մի մեռած տառ։ Թուրքիան երբեք եվրոպական պետություններին չհաղորդեց պայմանագրի իր պարտավորությունների ուղղությամբ կիրառելիք միջոցառումների մասին, որովհետև որևէ միջոցառում, իր կողմից, բնավ չէր ձեռնարկվել։ Իսկ պետությունները հաշտվեցին Թուրքիայի կողմից միջազգային պարտավորության նման անամոթ և ցինիկ խախտման հետ։ «Այդ բարձրագույն աստիճանի ամոթալի

---

147 Տե՛ս Լեո, Գրիգոր Արծրունի, Թիֆլիս, 1903, հատ. 3, էջ 135։

148 Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 313։

149 Լեո, Գլադստոն, էջ 207—208։

փաստի համար ղեկավորվելիս և բոլորից շատ պատասխանատու է Անգլիան»[150]:

XIX դարի 80-ական թվականների երկրորդ կեսից, Եգիպտոսի գրավումից հետո, Անգլիայի հետաքրքրությունը հայկական հարցի նկատմամբ ընկնում է, տեղը զիջելով Բ. Դռան բարյացակամությունը ստանալու ձգտմանը: Ուստի և Կապույտ գիրքը, որը մինչ այդ լի էր Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության հարստահարությունները նկարագրող պատկերներով, դադարում է Արևմտյան Հայաստանին վերաբերող փաստաթղթեր տպագրել[151]:

Էդուարդ Գրեյը իր հիշողություններում խոստովանում է, որ հակառակ երևութական ձևականություններին, անգլիական կառավարությունը որոշել էր հայերին ի նպաստ որևէ ձեռնարկ կամ ճշտում չկատարել թուրքական կառավարության առջև: Ապա, կարծես ափսոսելով, որ իրենք գերմանացիների չափ հեռատես չեղան, շարունակում է, որ 1895—1896 թթ. հայկական ջարդերի ժամանակ Անգլիան, Ֆրանսիան և Ռուսաստանը բողոքի զորավոր ցույց կատարեցին Բ. Դռան մոտ: Գերմանիան, որն այդ ձեռնարկին չմասնակցելու հեռատեսություն էր ունեցել, սուլթան Համիդից ստացավ Բաղդադի երկաթուղագծի կառուցման մենաշնորհը[152]:

Մեծ Բրիտանիայի քաղաքական բազմամյա գործիչներից մեկը՝ Արգայլսկին իրավացի նկատում է, որ Անգլիայի արևելյան քաղաքականությունը չի եղել այս կամ այն կաբինետի մենաշնորհը, այլ հանդիսացել է Անգլիայի ազգային քաղաքականությունը և պաշտպանվել բոլոր կուսակցությունների ու նրանց կազմած կառավարությունների կողմից[153]: Իսկ նրանց ետևում կանգնած անգլիական բուրժուազիային արդյունահանման շուկաներ, ափիոնի սպառողներ էին հարկա-

150 Տե՛ս «Положение армян...», էջ 195:

151 А. Диев, Армянский вопрос в Турции, М., 1893, էջ 72:

152 Տե՛ս «Մարմարա», 1945, № 723:

153 Герцог Аргайльский, Ответственность Англии в Восточном вопросе, СПБ, 1908, էջ 5:

վոր։ Նրան հարկավոր էին կապիտալի արտահանման օջախներ, միլիոնների ներդրում Արևելքի գաղութային և կիսագաղութային երկրների տնտեսության ոլորտում և միլիարդների եկամուտ։

Պատահական չէ, որ Ներսես պատրիարքը Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովում արտասանած ճառում ասում էր. «Անգլիո դրամատերք հոն (Արևմտյան Հայաստան) պիտի երթան իրենց դրամը գործածելու. թող երթան մեր դրամատերք ալ ընկերություններ կազմեն այս օրվանե»[154]։

Համաշխարհային կողոպուտի ուշացած մարմաջը՝ «արևի տակ տեղ» ստանալու կոչով, միջազգային ճանապարհների վրա կանգնեցրեց իր միավորումը պրուսական զորանոցներում ձեռք բերած նոր գիշատչին՝ Գերմանիային։ Վեց տարում հաղթարշավով ավարտելով երեք պատերազմներ, նա մի քանի տարի անց, Բիսմարկի բերանով պիտի հայտարարեր, որ «Գերմանիան միայն աստծուց է վախենում»։

Հայկական հարցի դրական լուծումը բնավ չէր հետաքըրքըրում Եվրոպայի հին երկրներից Թուրքիան կորզել ցանկացող Գերմանիային, որը պատրաստվում էր կապիտալիստական խորտիկների սեղանին մոտենալ այն ժամանակ, երբ տեղերն արդեն զբաղեցված էին, բայց իր հետ պիտի բերեր անհամեմատելի տեխնիկա ու կազմակերպվածություն (Լենին)։

Հայ ժողովրդի ծանր վիճակը ոչ միայն չէր հետաքրքրում գերմանական ժողովրդի մեջ մարդատյաց ռասիզմ աճեցնող բիսմարկներին ու վիլհելմներին, այլ նույնիսկ հնարավորություն էր ընձեռում օգտագործել այն՝ իրենց աշխարհակալական նպատակներին հասնելու համար։

Բեռլինի կոնգրեսից երկու տասնամյակ էլ չանցած, 90-ական թթ. հայկական ջարդերի օրերին Վիլհելմ II-ը, սուլթանին ուղարկած մի ինքնագիր նամակով ցույց տվեց արյունալի ոճրի խրախուսման մի ապշեցուցիչ օրինակ. «Թագա-

154 «Ատենագրություն Ազգային ժողովո», 1878, էջ 68։

վարիր, ինչպես կամքդ ուզում է. չէ՞ որ դու ալլահի ստվերն ես երկրի վրա»[155]։

Իրենց ազատության համար պայքարող ժողովուրդներին ճնշելու գործում Թուրքիային մեծապես օգնում էին և ամերիկյան միլիարդատերերը, ժամանակակից այդ ստրկատերերը, որոնք առանձնապես ողբերգական էջ պիտի բանային արյունարբու իմպերիալիզմի արյունալի պատմության մեջ (Լենին)։

Զինելով Թուրքիային և Գերմանիայի հետ պայքարելով աստիճանաբար գրավել Անգլիայի դիրքերը ոչ միայն Արևելքում, այլև համաշխարհային ողջ արենայում, մի քանի տասնամյակների զարգացման հանրագումարում, Նա պետք է իր թաթը դներ բոլոր այն երկրների վրա, որոնք մինչև այդ խճճված էին անգլիական գաղութակալության բյուրավոր թելերով, պիտի հանդես գար որպես կապիտալիստական երկրներից ամենաուժեղն ու ամենագիշատիչը։

Նվաճողական հսկա թևերը տարածած դեպի հարավ ու հարավ-արևելք էր ճախրում նաև երկգլխանի արծիվը՝ ցարական Ռուսաստանը։

Անհագ շահագործման ենթարկելով ոչ միայն գաղութացված ծայրամասերի ժողովուրդներին, այլև վելիկոռուս ժողովրդին, ցարիզմը փորձում էր ճզմել XIX դարի 60—80-ական թթ. փոթորկող հեղափոխական ու ազգային-ազատագրական շարժումները։ Ոչնչացվում, գլխատվում էր այն ամենը, ինչ կապված էր ազատության ու դեմոկրատիայի հետ։ Իսկ փոքր ազգությունների ամարդի շահագործումը վնասում էր հենց ռուս ժողովրդի առաջընթացին։ Ցարական ռեակցիան սնվում ու ամրանում էր Ռուսաստանի մի շարք ազգերի ստրկացմամբ[156]։

Չերնիշևսկու նման հայրենասերներն էին միայն տեսնում զազրելի այն գոյավիճակը, որում ապրում էր ռուս ժողովուրդը. «Խեղճ ազգ, ստրուկների ազգ, վերևից մինչև ներքև՝

155 Տե՛ս Ալ. Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, էջ 27։

156 Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 20, էջ 550—551։

ամենքը ստրուկ են»[157]։ Եվ ուղիներ էին որոնվում այդ իրավիճակից դուրս գալու համար։

Իրեն համարելով մեռնող Թուրքիայի ամենահուսալի, ավանդական, ու թերևս միակ օրինական ժառանգորդը, ցարիզմն աշխատում էր, ինչպես Բիսմարկն էր դեռ 1886 թ. նկատել, Օսմանյան կայսրության քայքայման բնական ընթացքն արհեստականորեն արագացնել՝ ժողովրդական հուզումներ ու ապստամբություններ դավելով այնտեղ[158]։

Ռուսական դիվանագետները կարողանում էին փոքր ժողովուրդներին լարել Թուրքիայի դեմ, օգտագործել պատերազմների ժամանակ, իսկ հետո Բեռլինի կոնգրեսում, հայկական պատվիրակությանը պատասխանել, թե ձեր հարցը մենք չենք կարող պաշտպանել, որովհետև «Արևելքի քրիստոնյաները չեն աջակցել Ռուսաստանի քաղաքականությանը»[159]։

Մինչդեռ գաղտնիքը թաքնված էր այլ տեղերում։ Կոնգրեսի օրերին Բեռլինով անցնող Լորիս-Մելիքովը հայ պատվիրակներին խորհուրդ էր տալիս ինքնավարություն պահանջել Կիլիկիայում, որովհետև Արևմտյան Հայաստանը Կովկասի ռազմական քարտեզներում գծագրված է որպես Ռուսաստանի ապագա սեփականություն՝ այն «մեր ճանապարհն է»[160]։

Գորչակովը Բեռլինում հայ պատվիրակներին որոշակի ասաց, որ նրանց ինքնավարության պահանջը ինքը չի կարող պաշտպանել, որովհետև այն դուրս է իր ստացած հրահանգից[161]։

Մեր պատմագիտական գրականության մեջ երբեմն սխալ կամ թերի է լուսաբանվել ռուսական ցարիզմի քաղաքականությունը թուրքական բռնապետության դեմ ազատագրական

---

157 Տե՛ս Վ. Ի. Լենին, Երկեր, հատ. 21, էջ 119։

158 Տե՛ս Բ. Իշխանյան, Թուրքիայի ապագան, էջ 38։

159 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 478։

160 Տե՛ս Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925, էջ 225, նաև Հ. Երամյան, Հուշարձան, հատ. 1, էջ 103։

161 Տե՛ս Սարուխան, Հայկական խնդիրը և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, էջ 462։

պայքարի դրոշ պարզած ժողովուրդների, այդ թվում, արևմտահայ ժողովրդի նկատմամբ։

Ցարիզմի քաղաքականությունը, մեծ մասամբ, կամ ներկայացվել է բացառապես հետադիմական և նվաճողական, ուստի թշնամական մեր ժողովրդի հանդեպ, կամ, ավելի հաճախ, անվերապահորեն դրական, քանի որ Ռուսաստանի հաջողության դեպքում Արևմտյան Հայաստանը կանցներ նրա տիրապետության տակ, իսկ այն, ինչ էլ որ լիներ, երիցս գերադասելի էր ու թեթև թուրքական անհեղ յաթաղանից։

Հանրահայտ է արևմտահայ աշխատավորության ռուսական գիրքորոշումը և նրա ճշմարտացիությունը։ Սակայն առավելն մանկական միամտություն է ցարիզմի գաղութային քաղաքականության մեջ տեսնել շահագործվող ժողովուրդների ազատագրության միտք։ Թեկուզ նույնիսկ այն առումով, որ ժողովուրդների բանտ համարվող ցարական Ռուսաստանը և նրա կառավարությունը, կատաղի թշնամի լինելով բոլոր տեսակի ազատագրական շարժումներին, առավել թշնամի էր հայ ազատագրական շարժմանը։ Նա երբեք էլ չէր ցանկանում իր հարավային սահմանների վրա, որը ստանալով մտադիր էր անցնել Եգիպտոս, Իրաք ու Հնդկաստան, ստեղծել «Նոր Բուլղարիա», «Նոր Լեհաստան», կամ նման մի այլ պատնեշ։

Արևմտյան Հայաստանը գրավելու դեպքում, Ռուսաստանը անկախություն կամ ինքնավարություն չէր, որ պիտի տար նրան։ Իր մղած բազմաթիվ պատերազմներում դրա համար չէր նա թափում ռուս զինվորի արյունը։

Արևմտյան Հայաստանը նույնպես պիտի գաղութացվեր, ինչպես մյուս ծայրամասային նվաճված երկրները, այդ թվում հենց Արևելյան Հայաստանը։ Մինչդեռ հայերի նպատակը կայանում էր ոչ թե հպատակության փոփոխման, այլ սեփական պետության ստեղծման մեջ։

XIX դարի երկրորդ կեսին եթե Արևմտյան Հայաստանի գավառահայության մեծագույն մասը հակված էլ էր ռուսահպատակություն ընդունելուն, ինչպես նկատում է Աստուրյանը, բայց «ամեն հայու սրտին մեջ խորը ծածկված կար

ինքնավարության մը հույսը և այդ բանը ոչ որ ռուսեն կըսպասեր»[162]։

Անշուշտ, վրիպում են, հակադրվելով այն տեսակետին, որ ցարական Ռուսաստանի աջակցության կամ բարի վերաբերմունքի մեջ հայը զուր էր որոնում իր քաղաքական ծրագրի իրագործումը[163]։

Հայաստանին անկախություն կամ ինքնավարություն տալու Ռուսաստանի դիրքորոշման ճշտման տեսակետից հատկանշական է ռուսական ցարիզմի պաշտոնական գործակալներից մեկի, Կարինի ռուսական գլխավոր հյուպատոս գեներալ Ա. Ռ. Դեննետի խորհրդածությունները հայ ժողովրդի, նրա ապագայի և նրան ինքնավարություն տալու աննպատակահարմարության մասին. «Հեշտությամբ կարելի է պատկերացնել, — գրում է նա, — հակասոցիալական (՞) ձգտումների ինչպիսի մշտական օջախ, նիհիլիստական բանսարկությունների բույն և ռուսական պետության նկատմամբ թշնամական դավերի վայր չէր դանդաղի դառնալ մեր Կովկասի հետ հարևան տերիտորիան, եթե այնտեղ այս կամ այն կերպ կազմակերպվեր ավտոնոմ Հայաստան»։ Ապա վախ հայտնելով, որ անգլիացիները կօգտվեն առիթից ինքնավար Հայաստանն օգտագործելու Ռուսաստանի դեմ, նա շարունակում է. «...Դժվար կլինի մեզ պաշտպանել Կովկասի մեր հայ ազգաբնակչությունը այնտեղի (Արևմտյան Հայաստանի — Ռ. Հ.) մեքենայությունների բացասական ազդեցությունից»։

Հետաքրքրականն այն է, որ այդ մեքենայությունները նա համարում է Արևմուտքում ուսած և իր կողմից աթեիզմի մեջ մեղադրվող հայ երիտասարդության միջոցով «ամեն կարգի սոցիալական թեորիաների», «սոցիալիստական գաղափարախոսության բոլոր կործանարար տարրերի» տարածումը «իրենց նորստեղծ հայրենիքում»։

Քիչ անց, մի շարք վիճելի դիտողությունների հետ միասին, հայ ժողովրդի հասցեին նետելով, հավանաբար Կովկա-

---

162 Հ. Ասատուրյան, Պատմություն հայոց, 1947, Բուենոս-Այրես, էջ 377։

163 Տե՛ս Վ. Պարսամյան, Հայկական հարցի զարգացման փուլերը մինչև Բեռլինի կոնգրես, Երևան, 1946, էջ 68։

սի փոխարքայի պալատից և Թուրքական շուկաներից հայ-ճնողորեն հավաքած ինչ որ հերյուրանքներ, վերահիշյալ զեկուցագրի հեղինակը կասկած է հայտնում, թե հայ ժողովուրդը, քաղաքական անկախություն ստանալու դեպքում, միջազգային հարաբերությունների բնագավառում, որևէ օգտավետ դեր կատարի Ռուսաստանի համար[164]։

1894—1896 թթ. հայկական կոտորածների առթիվ ամենայն հայոց կաթողիկոս Մ. Խրիմյանի Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովին գրած հայերի համար օգնություն հայցող նամակին, Պետերբուրգից պատասխանում է Լոբանովը. «...Հայոց եկեղեցական պետերը ամենից առաջ պարտավոր են միմիայն հորդորել իրենց ժողովրդին՝ հնազանդվել երկրի տիրապետողների կամքին...»[165]։

Նվս մի քանի տարի և Կովկասի կառավարչապետ Գոլիցինն առաջարկում էր ողջ հայ ժողովրդին Սիբիր աքսորել, իսկ գեներալ մայոր Դեբիլը զեկուցում էր, որ հայկական կամավորական խմբերը սահմանն անցնում և գնում են օգնելու իրենց «իբրև թե ճարստաճարված» եղբայրներին, «չնայած ռուս կառավարության ձեռք առած միջոցառումներին ու ճսկողության»[166]։

Ցարական մինիստր Մուրավյովը դեռ 1890—1891 թթ. «Երկիր» անցնող հայկական կամավորական ջոկատները կոչում էր ոչ այլ կերպ, քան «հայկական զինված հրոսակախմբեր»[167]։

1906 թ. Նիկոլայ II-ը, Վորոնցով-Դաշկովին հասցեագրած նամակում, շեշտելով, որ հայերն են գլխավորում Կովկասի բոլոր խռովությունները, անուղղակի կերպով, Աբդուլ Համիդի օրինակով կարծես նրանց ջարդելու հրահանգ էր տալիս փոխարքային, նշելով, որ «նույնիսկ Թուրքերն են մատնա-

---

164 ՌԱՔԱ (АВПР), ֆ. Քաղ. արխիվ, 1881, գ. 1625, թ. 123—128։

165 Տե՛ս «Ամենայն հայոց հայրիկ», էջ 45 (ընդգծումը մերն է — Ռ. Հ.)։

166 Տե՛ս «Նորք», 1925, № 5—6, էջ 433։

167 Տե՛ս ԼԿՊՊԱ, ֆ. 1405, 1894 թ., ց. 521, գ. 439, էջ 301։

*ցույց անում անկարգությունների վերջ դնելու մեր անկարողությունը»[168]։*

*Ահա այս էր ցարիզմի ու նրա դիվանագիտության պատասխանը ձեռքն իրեն մեկնած արևմտահայ ժողովրդին։ Պատասխան, որը Լոբանով-Ռոստովսկու բերանում դարձավ ահալի մի կոչ — ղարհուրանք՝ «Հայաստան առանց հայերի»։ Իսկ գեներալներ Յուդենիչն ու Պեշկովը ձեռնարկեցին դրա իրագործմանը։ Սակայն այն ինչ ցարիզմը վախեցավ սեփական ձեռքերով, առանց արցունքի կատարել, արյունով իրագործեցին թուրք դահիճները՝ «հօգնությամբ գերմանական ասպետների»։*

*Անառարկելիորեն բաժանելով Մակկոլի կարծիքը, որ «ինչևիցե, Ռուսաստանը միայնակ Թուրքիայի քրիստոնյա ազգաբնակչության համար արել է ավելին, քան եվրոպական բոլոր պետությունները միասին վերցրած»[169] և Գր. Արծրունու կարծիքը՝ հայոց ազգի քաղաքական ինքնուրույն կյանքի ձգտումը Անգլիայի շահերին չհամապատասխանելու մասին, չպետք է, սակայն, համաձայնվել վերջինիս այն միտումնավոր տեսակետի հետ, թե «Ռուսաստանի շահերը պահանջում էին քաղաքական կյանք տալ Հայաստանին»[170]։*

*Այս արդեն հեռու չէ ցարիզմի «ազատագրական միսիայի» մասին ռուսական ազնվականական և բուրժուական պատմագրության վաղեմի կոնցեպցիայից։*

*Ճշմարտությունը ծորում էր Բեռլինի կոնգրեսի արդյունքները քննող Մ. Մամուրյանի շուրթերից. «Հայն երկու սուրի մեջ է միշտ, թե ռուսի արծիվը, թե Անկլիո առյուծը գրկե, անոնց ճիրաններուն վերքն իր մարթին մեջ պիտի մնա»[171]։*

*Այսուհանդերձ ժամանակի հայ գործիչների զգալի մասը հակվել էին Ռուսաստանի կողմը և նրան գերադասում էին ոչ միայն Թուրքիայից, այլև եվրոպական մեծ տերություններից,*

---

168 *ՍՍՌՄ Հեղափոխության թանգարան, գույք. 3, գ. 1239, № 16692/48,7—18ա։*

169 «Положение армян...», *էջ 205:*

170 *«Մշակ», 1878, № 116։*

171 *«Արևելյան մամուլ», 1878, նոյեմբեր, էջ 282։*

իրավացիորեն գտնելով, որ անկախություն ձեռք չբերելու դեպքում, արևմտահայ ժողովուրդը նույնպես իր բախտը պետք է կապի Ռուսաստանի հետ։

Հետագայում Սիամանթոն ցասումով ժայթքում էր հայազգի վայ դիվանագետների դեմքին. «Ամեն ինչ կորցրինք, խնայենք գոնե մեր ազգային պատվասիրությունը ու թքենք այդ պառլամենտներուն ու մինիստրներուն վրա»[172]։

Պառլամենտներ ու մինիստրներ, որոնք հայ ժողովրդի արդարացի դատը հանդգնորեն գլորեցին մի այնպիսի անդունդ, որի առջև սարսեց անգամ Լոզանի կոնֆերանսում թուրքական պատվիրակության ղեկավար Իսմեթ փաշան, որը եվրոպական պետություններին խորհուրդ էր տալիս չշփոթվել, իրար չխառնվել և հայերի համար «Ազգային օջախ» ստեղծել ... Աֆրիկայում կամ մի այլ տեղ...։

Բեռլինի դաշնագիրը ստորագրելուց երկու ժամ առաջ, օգտվելով տկարի իրավունքներից, մի վերջին բողոքագիր ներկայացնելով կոնգրեսին, հայ պատվիրակներն իրենց առաքելությունն համարեցին ավարտված։

«Հայկական պատվիրակությունը, — ասվում էր այնտեղ, — շուտով կմեկնի Արևելք իր հետ տանելով այս դասը։ Այնուամենայնիվ նա հայտարարում է, որ հայ ժողովուրդը երբեք չի դադարի իր ձայնը բարձրացնել, մինչև որ Եվրոպան կատարի նրա պահանջների արդար դատաստանը»[173]։

Բայց գաղութատիրական երկրները չգիտեին թույլերին լսել, նրանք գիտեին «ժողովուրդներին լարել մեկը մյուսի դեմ, մեկ ժողովրդին օգտագործել մյուսին ճնշելու համար, որպեսզի այդ ձևով երկարաձգեն բացարձակ իշխանության գոյությունը՝ ահա թե ինչի էր հասցվում մինչև այժմ եղած կառավարողների ու նրանց դիվանագետների արվեստն ու գործունեությունը»[174]։

Իսկ հայկական հարցը՝ արևմտահայության ու Արևմտյան

---

172 Տե՛ս Շիրվանզադե, Երկերի ժողովածու, Երևան, 1961, հատ. 8, էջ 353։

173 Տե՛ս Խ. Բադալյան, Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում, 1877—1878, էջ 131։

174 К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, հատ. 5, էջ 160:

Հայաստանի ազատագրման հարցն էր, որն այնպես էլ իր լուծումը չստացավ...

* * *

Բեռլինի կոնգրեսի ավարտն ու 61-րդ հոդվածի ստեղծման ղողանջը Արևմտյան Հայաստանի գյուղացիությանն հասավ սպառնալիքի այն ահազանգի հետ, որ հարևան թուրքերն ու քրդերը հենց այդ հոդվածի պատճառով իրենց պետք է կոտորեին։

Ա. Երիցյանը վկայում է, որ դեռ այն ժամանակ, երբ ցարական բանակը թողնում էր Կարինը, մի ծեր կին, որը շատ էր վախենում թուրքերի հետագա վրեժխնդրությունից, ահաբեկված բղավում էր. «Ոչ գալներդ լիներ, ոչ գնալնիդ»[175]։

Այս սարսափը հանգեցրեց զանգվածային արտագաղթին, որն, հարկավ, չափազանց ողբերգական հետևանքների էր հասցնելու։ Թողնելով իրենց հինավուրց հայրենիքը, հայ գաղթականներն այրում էին հացահատիկն ու խոտի դեզերը և Արևելյան Հայաստան խուժում սրահալած ու մաղապուրծ՝ ուսերին ունենալով միայն մուրացկանի մախաղն ու գաղթի ճանապարհի փոշին։

Ողողելով Երևանի նահանգի փոքրիկ տերիտորիան, նրանք գերբնակչություն էին ստեղծում այնտեղ, կամ իրենց ճանապարհը շարունակում՝ դեպի ռուսական հեռավոր տափաստանները...

Ի դեպ, ցարական կառավարությունը գաղթած հայերից շատերին Երևանի նահանգում հող չլինելու պատրվակով, բնակեցնում էր Հյուսիսային Կովկասում և այլուր, մինչդեռ նույն շրջանում ռուս վերաբնակիչներ էր տեղափոխում Կարս, Այրարատ, Շիրակ։

Ռուսական թերթերը, հատկապես «Պորյադոկ»-ը, պրոպագանդում էին ռուսներին գաղթել Արևելյան Հայաստան, երբ մահմեդական տարրի դեմ քրիստոնյաների մեծամասնությունն ապահովելու[176]։ Բայց ցարիզմի նպատակը Ռուսաստանի հարավային շրջանները «հավատարիմ տարրով»

175 «Փորձ», 1879 № 1, էջ 183։

176 Տե՛ս «Արևելյան մամուլ», 1881, մայիս, էջ 354։

բնակեցնելու ցանկությունն էր, որն հետապնդում էր մի կողմից արտաքին թշնամու դեմ, սահմանի վրա, վստահելի բնակչություն ունենալու ձգտումը, մյուս կողմից նպաստում հայ ժողովրդի անջատական երազների խաթարմանը։

Պատրիարքարանը գործնական միջոցների դիմեց ահաբեկված ժողովրդին գաղթելու մտադրությունից ետ կանգնեցնելու համար։ Նրանց համոզելու նպատակով, ի կատարումն 1878 թ. ապրիլի 26-ի պատրիարքական կոնդակի, գավառներ մեկնեցին Գարեգին, Վահան և Սրբատակես վարդապետները։ Համապատասխան ցուցում տրվեց նաև գավառական առաջնորդներին, ինչպես նաև խնդրեցին Բ. Դռանն, արագացնելու բարենորոգումների կենսագործումը։

«Ձեր սրբազանությանն տարած օրհնություններն ու հույսերը սփռելով Հայաստանի անհույս ժողովրդյան մեջ, — գրում է հիշյալ վարդապետներից մեկը՝ Գարեգին Սրվանձտյանը՝ Ներսես պատրիարքին,— մխիթարեցինք զիրենք։ Ուրախ եմ ըսելու, Ս. Հայր, թե հայ ժողովուրդն իրեն համար այլ անտանելի եղած, դարերն ի վեր գոյից և կենաց զոհողությամբ հանձն առած զրկյալ և ճարահատյալ վիճակով՝ հաստատված կը մնա իր հայրենի շենից և ավերակաց վրա նստիլ, հուսալ և սպասել»[177]։

Բայց սա իրականությունը չէր, որովհետև եթե հայերը վերջապես հրաժարվեին գաղթելու մտադրությունից, ապա այդ պայմանավորված էր ոչ հոգևոր առաջնորդների քարոզով, այլ մեկ ուրիշ, առավել գործնական պատճառով։

Հայերի մասսայական արտագաղթը ձեռնտու չէր ռուսական կառավարությանը, որի պլաններից երբեք դուրս չի եկել Թուրքիայի ներքին գործերին խառնվելու մտադրությունը։ Ուստի արևմտահայերի գոյությունը Ռուսաստանի հարավային սահմանների մոտ կարևոր միջոց էր նրա նվաճողական պլանների հետագա իրագործման ճանապարհին։ Ցարական կառավարությունը լրիվ բաժանում էր Կարսի գեներալ-նահանգապետ Ֆրանկինի զեկուցագրերում պաշտպանված նման

177 Տե՛ս «Մշակ», 1879, № 2224։

կարծիքը։ Գաղթը չէր համապատասխանում «ոչ արդի իրերի դրությանը, և ոչ էլ պետության տեսակետին»[178]։

Հայերի զանգվածային արտագաղթը կանխելու նպատակով գեներալ Լազարևը դիմեց կտրուկ միջոցների։ Եվ այն ոչ թե իր հայրենասիրական պարտքի մղումով, որում, իհարկե, հիմք չունենք կասկածելու, այլ կառավարությունից ստացած հրահանգի համաձայն։ Հայերին ուղղած իր մի կոչում նա առաջարկում էր չհեռանալ հայրենի վայրերից, չգաղթել Ռուսաստան, որտեղ մութ ու անորոշ է նրանց ապագան, միաժամանակ խնդրում Իսմայիլ փաշային՝ արգելել հայերի մասսայական գաղթը։ 1878 թ. սեպտեմբերի 3-ին Լազարևը հեռագրում է սահմանամերձ շրջաններում կանգնած ռուսական ջոկատների հրամանատարներին, որ նրանք ոչ միայն արգելեն հայ գաղթականներին անցնելու ռուսական սահմանը, այլև անհրաժեշտության դեպքում ուժով դիմադրեն նրանց ու վերադարձնեն նախկին բնակավայրերը[179]։

Երբ ցարական կառավարությունը չէր կամենում, ռուսական սահմանն էլ փակ էր գաղթողների առջև, նրանք վերադարձան և սկսեցին սոված ու անօթևան թափառել։ Գնացին, որ «հուսան ու սպասեն», մինչև որ ի վերջո իրենց կյանքը կտային «մեծ եղեռնի հունձքին ընծա», ինչպես երգեց բանաստեղծը։

1878 թ. օգոստոսի 2-ին Ազգային ժողովում պատրիարքի արտասանած ծրագիր-ճառից անցել էր հազիվ մեկ շաբաթ, երբ սկսվեցին նախ մեղմ, ապա խստագույն ճնշումները, ընդհուպ մինչև առանձին անձանց ձերբակալությունն ու աքսորը։ Առաջին զոհերից մեկը դարձավ «Ազգային երգարան»-ի հրատարակիչ Եղիա Տնտեսյանը, որը չդիմանալով

178 ՎԿՊՊԱ., ֆ. 1219, գ. 18, էջ 14—15։ Նույն խոսքերը կրկնում էր Ռուսաստանի արտաքին գործերի մինիստրը, մինիստրների խորհրդին ուղղած զեկույցում՝ 1916. (տե՛ս Б. Борян, հատ. 2, էջ 418)։

179 Տե՛ս «Сборник материалов русско-турецкой войны...», выпуск 1, Петербург, 1903, էջ 163—164:

բանտային կյանքին, 1881 թ. ապրիլի 23-ին կնքեց իր մահկանացուն[180]։

Այդ օրերին սուլթանը մերժեց Ներսես պատրիարքին ընդունել, թունոտ պատասխանելով, թե ասացեք, որ ժամանակ չունեմ իրեն ունկնդրելու, որովհետև զբաղված եմ ռուսական դեսպանին ներկայացրած նրա բողոքագիրը կարդալով[181]։

Օսմանյան միապետության ամրապնդման ուղիներում Աբդուլ Համիդի որոնումները նույնպես հանգեցրին համաթուրանական դաշնակցության ստեղծման գաղափարին, և նա իր նախկին համհարզ, ծագումով չերքեզ գեներալ Մահմեդ փաշային հանձնարարեց ձեռնամուխ լինել նրա իրագործմանը[182]։ Այդ ձեռնարկի կենսագործման ճանապարհին պիտի անխնա ոչնչացվեին բոլոր խոչընդոտները, այդ թվում նաև արևմտահայ ժողովրդի ազատության ձգտումը։

Հույների և Բալկանյան մյուս ժողովուրդների ապստամբություններն ու նրանց դուրս գալը Օսմանյան կայսրությունից, արագացնում էին հայերի ոչնչացման՝ օսմանյան պետության քաղաքական ծրագրով ուղեգծված պլանի իրագործումը։

Հայ գործիչները մեծագույն վտանգ էին կանխագուշակում արևմտահայության համար, եթե նա, ազատության դրոշով մղած պայքարի ճանապարհին, չկազմակերպվեր ու պատրաստ չլիներ զենքով պաշտպանելու իր գոյությունը։

---

180 ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, գ. 289, նաև Ար. Հիսարյան. Պատմություն հայ ձայնագրության, 1914 թ., Կ. Պոլիս, էջ 115։

181 Այն իրոք, դրանից քիչ առաջ, ներկայացվել էր պատրիարքարանի կողմից։

182 Տե՛ս «Մշակ», 1878, № 156։

## ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՄԱՆ ՎԵՐԵԼՔԸ 1877—1878 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՌՈՒՍ-ԹՈՒՐՔԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՑ ՀԵՏՈ

*1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմը և հայկական հարցի արծարծումը Սան-Ստեֆանոյի ու Բեռլինի դաշնագրերում շրջադարձային նշանակություն ունեցան արևմտահայ ազգային-ազատագրական շարժման համար։*

*Հայ ժողովրդի արևմտյան հատվածի թուրքական բռնակալական լծից ազատագրման հույսը առավել ցայտուն կերպարանք ստացավ և ազատության հրայրքը մղեց նրան իր փրկության համար սեփական ուժերով պայքարելու ուղին։*

*Սովորության ուժը, ստրկամտության բեռը և ճակատագրական անխուսափելիության գաղափարը թեպետ խորն էին ակոսել ժողովրդական զանգվածների մտայնությունը և անխուսափելիորեն դժվարեցնում էին ազատագրական շարժման վերելքի ուղին, բայց համբերության բաժակն արդեն լցվել էր ու «հանդարտ, աղերսագույն և խեղճուկ աղաչավորը, գրեթե բռնադատյալ ժողովուրդը» արթնացումի շունչն զգաց և հախուռն նետվեց դեպի ազատություն տանող ճանապարհը։*

*Ազատագրական շարժման հայրենանվեր գործիչները պայքարի շեփոր էին հնչեցնում արդեն։*

*Գարեգին Սրվանձտյանն այդ օրերին ժողովրդին բացատրում էր, որ «օտարին պետք չէ բան հուսալ, ջանանք մենք զմեզ հոգալ, պատրաստվիլ ու ցույց տալ ազգաց թե մենք ալ*

ազգ մի ենք...» և ժողովուրդը հուզմունքով փարում էր նրան, անօրինակ եռանդով ու ոգևորությամբ արձագանքում ազատագրական պայքարի կոչին[1]։

Իսկ երբ Խրիմյանն ազդում էր, թե հայկական հարցը նոր է սկսվում ու Կ. Պոլսի պանդուխտներին հորդորում՝ դավառ վերադառնալ, պատրաստվել ու պայքարով պահանջել ապրելու իրավունքը, վերադարձողներն իրենց հետ, հարազատներին որպես նվեր զենք էին տանում միայն[2]։

Ազատագրական այս շրջանն էլ սկսվում էր հենց հայրիայի մասին Խրիմյանի արտասանած նշանավոր ճառով ու զեյթունցիների գովեստով, որոնց երկաթով «ամեն բան կշինվի, խափ, մանգաղ, սուր, հրացան»։ Եվ առաջին ըմբոստացողներն էլ եղան նրա դրվատած զեյթունցիները։

1878 թ. սկսված արտագաղթի հախուռն օրերին, Զեյթունն էր, որ եղակի քաջությամբ, չտարվեց գաղթի համատարածով և նրա որդիներն իրենց թաղապետ-իշխանների ղեկավարությամբ, Տավրոսի լեռնակածաններին վրա երկաթյին պանդուխտի ցուպի փոխարեն հրացան բռնած։

Դարձյալ որտաց Սարգիս եպիսկոպոս Կիլիկյանի կողմից հրապարակորեն օծած Թմբուկի զորահավաք ազդարարող ձայնը, որը զեյթունցիների համար հնչում էր որպես ազատագրական պայքարի սրբազան կոչ[3]։

Տակավին 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ժամանակ նորից ապստամբության դրոշ էր պարզել զեյթունցիների երիտասարդ ու անխոնջ առաջնորդ Պապիկ իշխանը։ 72 աշխարհազորայիններով, օգնություն խնդրելու համար ռուսական բանակ մեկնած պատվիրակներին սպասելով, նա ամրացել էր Պերեզենկայի քարանձավում, թուրքական իշխանություններին թողնելով իր գլխագինը հասցնելու հինգ հարյուր ոսկու։

Զեյթունից շատ հեռու գտնվող ռուսական բանակների վրա հույս դնելը գործնական չէր և ապարդյուն էլ վերջացավ։

1 «Մասիս», 1879, № 2224։

2 Տե՛ս Հ. Նշկյան, Առաջին կայծերը, էջ 83։

3 Գ. Տեովլեր, Զեյթուն, Փարիզ, 1946, հատ. Բ., էջ 64։

Հիրաս լեռնականներին մնում էր սեփական ուժերով դիմադրել Զեյթունի վրա շարժվող թուրքական բազմահազարանոց բանակներին։

1878 թ., երբ ծավալվեց Զեյթունի նոր ապստամբությունը, զեյթունցիներին դաշինք առաջարկող Ահմեդ բեկի առաջնորդությամբ սկսվեց նաև զեյթունցիների հին բարեկամ Խողանի (Գողան) լեռնաբնակ թուրքերի ըմբոստությունը կառավարության դեմ, որը, սակայն, պատահական բնույթ էր կրում և որոշակի դեր չխաղաց զեյթունցիների հաջողության գործում։ Նույն թվականի հոկտեմբերին Հարություն վարժապետ Չաքրյանի (Չոլաք) և Ֆռնուզի վանահայր Նիկողոս եպիսկոպոսի ղեկավարած վաշտերը, որոնք շտապում էին օգնելու Պապիկ իշխանին, մատնությամբ ծուղակ ընկան և անհավասար մարտում պարտություն կրելով նահանջեցին, իրենց ղեկավարներին գերի թողնելով թշնամու ձեռքում։

Բայց Զեյթունի քաջամարտիկները չէին ընկճվում։

1879 թ. հունվարի սկզբներին Պապիկ իշխանի զինվորների և կառավարական զորքերի միջև եղած նոր միջադեպի առթիվ, ինչպես Մարաշից գրում էին «Մասիս»-ին, տեղի «կառավարիչը մեծ զորությամբ Ուլնիո վրա երթալու կը պատրաստվի»[4]։

Սակայն Բ. Դուռը որոշեց դիմել ապստամբներին ընկճելու խարդախության իր փորձված միջոցին։ Բարենորոգումներ կատարելու անվան տակ Զեյթուն ժամանեց մի հանձնաժողով և, Զոհրապի բնորոշմամբ, իր պաշտած միակ աստվածը բռնապետությունը դարձրած Հովհաննես Նուրյանի մասնակցությամբ ու ջանքերով, զեյթունցիներից դավադրաբար հավաքեց հազարից ավելի հրացան։ Այս համոզեց նրանց չարգելել, հետագա ապստամբությունները բնում խեղդելու նպատակով Զեյթունում նախատեսված կառավարական զինանոցի շինությունը, ստիպելով Սսի Մկրտիչ կաթողիկոսին սրտի կսկիծով դնելու զորանոցի առաջին քարը։

---

[4] «Մասիս», 1879, № 2223։

1878 թ. Զեյթունի ապստամբությունը ազատագրական շարժման ջատագով հայ հասարակական հոսանքների ու նրանց առաջնորդների կողմից իրավացիորեն որակվեց անժամանակ ու նպատակավրեպ։

Հայերը ուշ հասկացան, որ ապստամբվել է պետք,— գրում էր «Մշակ»-ը[5]։ Ապստամբությունն անհրաժեշտ էր սկսել պատերազմի թեժ օրերին, նախօրոք համերաշխվում էր նրա հետ Մ. Մամուրյանը։

«Այս պահուս վառոդ վատնելն անպատեհ է,— գրում էր վերջինս,— ...եթե չեմ սխալիր Մանթեսքիոն է որ կըսե թե բախտը տանը մեկ պատուհանեն կմտնե ու մյուսեն կելնե, արթուն է այն, որ զայն կըռնե դուրս չելած։ Հիմակ որ բախտը թռավ գնաց՝ ոմանք սենյակին մեջ կփնտրեն նոր արթնանալով, բայց ընդունայն կփնտրեն»[6]։

1884 թ. Զեյթունի քաջերը դարձյալ նժույգների վրա էին։ 1878—1879 թթ. ապստամբությունից հետո Զեյթունի քաղաքագլուխ դարձած Պապիկ իշխանի երկու հարյուրակը ամրացել էր անմատչելի լեռներում ու նորից դարձել ապստամբության ոգին։

Կառավարությունն անխնա միջոցներով փորձում էր կանխել շարժման ծավալումը։ Զեյթունի տասը կենտրոններում, Բ. Դռան գաղտնի ցուցումով, հրդեհների հրաշեկ բոցերը մոխիր դարձրին հայ աշխատավոր ժողովրդի ողջ ունեցվածքը։

Կ. Պոլսի հայոց Ազգային ժողովը որոշում ընդունեց Սովելոց կենտրոնական հանձնաժողովի միջոցով օգնություն կազմակերպել զեյթունցիներին, թեպետ գտնվեցին մարդիկ, որոնք Ազգային ժողովում հանդես եկան այդ որոշման դեմ։ Սոցիալական աստիճաններով իր վերելքը մանրածախ ալրավաճառի հողաթափներով սկսած Աբիկ Ունճյանը նպատակահարմար չէր գտնում զեյթունցիներին դրամական օժանդակություն կազմակերպել, վախ հայտնելով, թե նրանք այն կօգտագործեն «բարեխնամ» կառավարության դեմ[7]։

---

5 Տե՛ս «Մշակ», 1878, № 165։

6 «Արևելյան մամուլ», 1878, էջ 159։

7 Տե՛ս «Նոր Դար», 1884, № 203։

*Զեյթունի 1878—1879 թթ. ապստամբության ուշացումով արձագանքեցին Վասպուրականում, Սասունում, Ալաշկերտում։ Արևմտյան Հայաստանի այս շրջաններում, հատկապես 1880 թ., զինված ելույթները հաջորդում էին մեկը մյուսին։*

*Վանում սովյալ հայ բնակչության կողմից փորձ եղավ գրավել կառավարական շտեմարանների ցորենը։ Եվ այդ վերագրելով հեղափոխական խմբակների ու Խրիմյանի նախաձեռնությանը, եպարքոս Սայիդ փաշան Ներսես պատրիարքից պահանջեց Խրիմյանին ետ կանչել Վանից։ Իսկ երբ իր պահանջը մերժած Ներսեսին փորձեց ստիպել հրաժարական ներկայացնելու, վերջինս ըմբոստացավ՝ թե ինքը հայ ժողովրդի կամքով է պատրիարքական աթոռ բարձրացել և չի հրաժարվի եպարքոսի հրամանով*[8]*։*

*Դեռ շարունակվում էր հայ գործիչների կոնգրեսից հետո սկսված հոխորտանքի շրջանը, երբ Հայաստանում կատարված հարստահարությունների ու բռնության մասին տեղեկագրերը այլևս Բ. Դռանը ներկայացնելու փոխարեն, ի լրումն պատրիարքարանի կողմից ֆրանսերեն լեզվով պարբերաբար լույս տեսնող* Կարմիր տետրակների, *միջամտություն հայցող շրջաբերականներով ուղարկվում էին Թուրքիայի օտարերկրյա դեսպաններին։*

*Պաշտոնական գրությունների վրա հայկական թագավորական զինադրոշմ օգտագործող Ներսես պատրիարքն այնքան ազատ էր զգում իրեն, որ Բ. Դռանը ներկայացրած պաշտոնագրերում դարեր ի վեր օրինականացված «Ձեր գերին» արտահայտությունը համարձակորեն փոխարինել էր «ես»-ով, «աղաչանք»-ը՝ «պահանջով»։ Թուրքական թերթերը ծաղրով գրում էին, թե հայոց պատրիարքն, ըստ երևույթին, իրեն շփոթում է եվրոպական դեսպաններից որևէ մեկի հետ*[9]*։*

*Սակայն Ներսես Վարժապետյանն արևմտահայ ժողովրդի ազատագրման ոչ մի կոնկրետ ծրագիր չուներ և հետագայում էլ չունեցավ։*

---

8 *Տե՛ս «Մշակ», 1880, № 68 (Հայկակի թղթակցությունը)։*

9 *Տե՛ս Գ. Ստեփանյան, Արփիար Արփիարյան, էջ 76։*

Արևմտահայ ժողովրդի ազատագրման համար քիչ թե շատ գործնական ծրագրերով հանդես եկան տեղերում ստեղծված հեղափոխական խմբակները։ Սրանց ծնունդն ու գործունեությունը հակադարձ համեմատական էին ռեակցիայի մռայլ ու սաղմաշունչ այն հարձակմանը, որ մոլեգնեց հատկապես 1879—1880 թվականներից՝ վեց տերությունների համիմաստ, ապա հավաքական հիշատակագրերի մերժման թոհուբոհի տակ։

1880 թ. օգոստոսի 30-ի հրամանով Բ.՝Դռան կողմից արգելվեց Հայաստան անվան օգտագործումը պաշտոնական գրություններում, պատճառաբանելով, որ այդպիսի վարչական միավորում Թուրքիայում չկա, թեպետ Քուրդիստան ու Ալբանիա նույնպես չկային, բայց չէր արգելվում օգտագործել։ Թուրքական «Օսմանլը» թերթը դիվանագիտորեն կեղծում էր, թե Հայաստան անունն իրենց երկրին տալը, բարեփոխումներ պահանջելը և այլն, մի քանի խառնակիչ հայերի գործն է, իսկ հայ ժողովրդի հոգը չէ այն բնավ[10]։ Պատրիարքարանից պահանջվեց նաև գավառներից եկած գանգատների համար այլևս միջնորդություններ չանել[11]։

1881 թ. մարտի 7-ին Կարինի ռուսական հյուպատոսը զեկուցում էր Վարդան Մամիկոնյանի և «Մայր Հայաստան» նկարների ոչնչացման, ամենուրեք ժողովների ու միտինգների բռնի, նույնիսկ զենքի ուժով խափանման, հայկական դպրոցներում հայոց պատմության դասավանդման արգելման վերաբերյալ հրահանգավորումների և Բ. Դռան հայահալած քաղաքականության այլ զազրելի մանրամասնությունների մասին[12]։ Կ. Պոլսում գրավաճառ Գավաֆյանը բանտ նետվեց միայն նրա համար, որ վաճառել էր Լևոն Զ-ի գերեզմանի նկարը։ Մասսայաբար բռնագրավվում և այրվում էին բոլոր այն գրքերը, որոնցում Հայաստան անունն էր հանդիպում։ «Մշակ»-ի հետ միասին արգելվեցին նաև «Փորձ»-ի, «Մեղու Հայաստանի»-ի և հաջորդ՝ 1881 թ. հայկական օրացույցի

10 Տե՛ս «Մասիս», 1880, № 2722։

11 Նույն տեղում, № 2718։

12 Տե՛ս ՌՍՔԱ, ֆ. Քաղարխիվ, 1881/1884 թթ., գ. 1625, թ. 2—3։

մուտքը Թուրքիա։ Դեռ 1879 թ. Կ. Պոլսում արգելվեցին հայերեն ներկայացումները և շուրջ երեսուն տարի օսմանյան մայրաքաղաքի հայ թատերական կյանքը հիմնականում ընթանում էր թուրքական թատրոնի բարձրացմանը խթանելու ճանապարհով։

Սահմանվեց մամուլի և գրականության խիստ քննություն։ Ճիշտ է, մամուլը մինչև 90-ական թվականները (հատկապես մինչև 1888 թվականը), համեմատաբար ազատ մնաց, բայց այդ շրջանի նրա համարները լի են գրաքննիչների կողմից սևացված էջերով։ Իսկ հաճախ էլ «օրինավոր, սահմանին դուրս լեզու մը գործածելու» կամ առավել ծանրակշիռ մեղադրանքներով այս կամ այն թերթը դատապարտվում էր ժամանակավոր կամ լրիվ արգելման։

Թուրք պաշտոնյաները Հ տառով սկսվող բառեր տեսնելիս, լինեն հացագործ, հագուստ թե հանդես, անմիջապես թարգմանել էին տալիս և ստուգում, արդյոք Հայաստան չի գրված[13]։

Սուլթանի հատուկ հրամանով մահմեդական պաշտոնյաներին ու սպաներին հանձնարարվում է չտալ սովորել Հայոց լեզուն՝ հայերեն նամակները և հրապարակվող մամուլն ու գրականությունը անմիջնորդ ստուգելու համար։ Ինչպես նաև պահանջվում էր Արևմտյան Հայաստանի կենտրոնները միացնող փոստ-հեռագրական կապի շուտափույթ բարելավում[14]։

Երզնկայում խափանվեց լուցկու նոր բացված գործարանը, երբ նրա արտադրած լուցկու տուփերը շրջանառության մեջ երևացին «Լուցկիք Հայաստանի» պիտակով[15]։

Ավելի ուշ՝ 1888 թ. Կ. Պոլսում ձերբակալված մի հայ վաճառական խիստ կասկածներ առաջացրեց լոկ այն պատճառով, որ նրա կնիքի վրա պատկերված էին երկու առյուծներ կանգնած Թուրքիայի խորհրդանշանն համարվող աստղի հանդիման[16]։

---

13 Տե՛ս Հ. Երամյան, Հուշարձան, հատ. 1, էջ 277։

14 ՌԱՔՍ., ֆ. Քաղաքական արխիվ, 1881/1884, գ. 1625, թ. 2—3։

15 Տե՛ս Վ. Փափազյան, Երկերի ժողովածու, հատ. 5, էջ 514։

16 Տե՛ս «Մշակ», 1888, № 14։

խստություններ սկսվեցին հայկական դպրոցների նկատմամբ։ Գավառական դատախազների քմահաճույքով փոխվում էին դպրոցական ծրագրերը, ամենաանմեղ գրքերը բռնագրավվում ու նետվում խարույկների բոցերի մեջ։

1881 թ. ապրիլի 5-ին Վանից «Մշակ»-ին գրում էին. «Այսօր լուր առինք որ նահանգապետ փաշան հրաման ղրկեր է առաջնորդարանի՝ թե դպրոցներու մեջ լսարաններն և հրապարակական դասախոսություններն արգելված են այսուհետև»[17]։

Հայկական նահանգները բնակեցվում էին եվրոպայից դաղթած չերքեզներով ու մահմեդական այլ տարրերով, պետական պաշտոնյաներին փոխարինում և համալրում՝ Մահմեդի մոլեռանդ հետևորդներով, հաճախ էլ մահմեդական եկեղեցու նախկին ծառայողներով։ Բ. Դռան կարգադրությամբ կուսակալներն, իրենց հերթին, ամենուր, հատկապես Կարինում և Վանում, տեղական հայ պաշտոնյաներին փոխարինում էին «հավատացյալներով»։

1881 թ. ապրիլին պաշտոնից եա կանչվեց Վանի փոխնահանգապետ Մկրտիչ Աղաթոնը։ Նրան փոխարինելու եկավ նախկին մի մոլլա՝ Շուքրի-էֆը։

Փոստային բաժանմունքներում ու մաքսատներում ստուգումներն այնքան էին խստացրել, որ փորձեցին հսկողություն սահմանել օտարերկրյա, հատկապես ռուսական հյուպատոսների ստացած գաղտնի գրությունների վրա, պատճառաբանելով, թե հյուպատոսությունների սուրհանդակները կարող են այդ գրությունների հետ միասին արգելված ապրանք բերել[18]։ Նրանց կասկածում էին հայերի համար գաղտնի զենք ստանալու մեջ, դաշնամուրն անգամ հրանոթի տեղ ընդունելով[19]։

Առիթներ էին որոնվում բռնությունների ու ձերբակալությունների ավելացնելու։ Թուրքական ֆեսերի փոխարեն,

---

17 «Մշակ», 1881, № 74։

18 ՌԱՔԱ, ֆ. Քաղ. արխիվ, 1881—1884., գ. 1625, թ. 31։

19 Տե՛ս «Մուրճ», 1889, № 4։

մշեցող արախչիների ցուցադրական հեռալը Կ. Պոլսում, որակվեց որպես ցույց կառավարության դեմ։

1880 թ. հունվարի 4-ին անհիմն մեղադրանքով բանտ նետվեցին «Թերջիմանը էֆքիար»-ի խմբագիր Ճիվելեկյանը և արտոնատեր Սարգսյանը, որոնք իշխանությունների կողմից կասկածվում էին հեղափոխական ինչ որ կոմիտեի պատկանելու և հայերին զենքի կոչելու մեջ[20]։

Ավելի ուշ՝ 1883 թ. օգոստոսին արգելվեց «Մեճմուայը հավադիս»-ը, որն սկսել էր հանդես գալ Թուրքիայի ընդհանուր արատների մերկացնող քննադատությամբ։ Իր հանդուգն հոդվածներից մեկում թերթը գրում էր, թե ժանտախտը ոչ թե Աստծո այլ մարդկանց գործն է, քանզի եթե Աստծո կողմից լիներ, նախ կայցելեր Կ. Պոլսին և վերևից ներքև կմաքրեր բոլոր նախարարությունները[21]։

Քրդական բարբարոսությունները քննելու և բարենորոգումների կենսագործումը նախապատրաստելու նպատակով 1879 թ. Արևմտյան Հայաստան մեկնած եվրոպական կոմիսարները շուտով ետ կանչվեցին մեկ քուրդ իսկ չպատժած։

Իսկ նրանցից առաջ Սամի փաշայի, նույն անվան տակ Վան ուղարկված առաքելության իրական նպատակն էր, նախ կոմիսարների ժամանումից առաջ պատրաստել, որ իբր ամեն ինչ բարեհաջող է, և առավել՝ լրտեսել, թե հայերն ապստամբության չեն պատրաստվում արդյոք, որպեսզի միջոցներ մշակվեին հայ ժողովրդի ազատության ակնկալությունները կանխելու, նրա բնաջնջման մեթոդները մշակելու համար։ Այդ մեթոդներից մեկն էլ, հենց նույն շրջանից սկսած, այսպես կոչված «Համիդիե» քրդական հեծելազորի ստեղծման նախապատրաստումն էր, որը նրանց վերջապես հաջողվեց 1891 թ.։

Բ. Դռան հանձնարարությամբ Կ. Պոլսի թուրքական թերթերը մի փոթորկոտ արշավ էին սկսել հայ ժողովրդի դեմ որպես ժողովրդական դժգոհության պատասխան հայերին մատնացույց անելով ջարդի սպառնալիքը։

---

20 Տե՛ս «Մշակ», 1880, № 2, (Հայկակի թղթակցությունը)։

21 Տե՛ս «Մշակ», 1883, № 124։

«Մենք գիտենք, — գրում էր այդ լրագրերից մեկը, — թե Հայաստանի ինքնավարության դավերը Բերայի որ խորշերը կը պատրաստվին, բայց մուսուլման ժողովուրդը, այդ երազները իրենց խանձարուրքին մեջ խեղդելու միջոցները գիտե»[22]։

Միաժամանակ սկսվեց քրդերին զովերգելու և նրանց հայերի դեմ լարելու մի չարագուշակ շարժում։

Առանձին քրդերի անունից կեղծ նամակներ էին տպագրվում, որ Հայաստան անունով երկիր քրդերը չեն ճանաչում և որ իրենք, մինչև վերջին մարդը՝ կմեռնեն, բայց հայերի օգտին բարենորոգումներ թույլ չեն տա[23]։

Թուրքական թերթերը քրդերի հասցեին հյուսած իրենց ներբողներն այնքան ուռեցրին, որ աշխարհի ժողովուրդները շվարած կանգնեցին մի հայտնագործության առջև, թե «Եվրոպան իր քաղաքակրթությունը քրդերին է պարտական»[24]։

Գրաքննության ուժեղացման, ձերբակալությունների և հայ ժողովրդի նկատմամբ տարվող վարկաբեկիչ հոսանքի ծավալման հետ միասին, Բ. Դռան գաղտնի ցուցումով շարքից դուրս էին բերվում, խորհրդավոր հանգամանքներում մեռնում կամ «պատահականության» զոհ դառնում հայ մտավորականության լավագույն ներկայացուցիչները։

1882 թ. հոկտեմբերի 21-ին Կ. Պոլսի ծովափնյա փողոցներից մեկում դավադրաբար սպանվեց Մ. Նալբանդյանի արևմտահայ համախոհներից մեկը՝ դոկտոր Հովհաննես Քյաթիպյանը։ Հետագայում խորհրդավոր հանգամանքներում իրենց մահկանացուն կնքեցին Զեյթունի հռչակավոր հերոսը՝ քառասնամյա Պապիկ իշխանը (1886 թ.), բժիշկ Տիգրան Փեշտիմալճյանը և շատ ուրիշներ։

1880 թ. «Գոլոս»-ի Կ. Պոլսից ստացած մի թղթակցության մեջ կարդում ենք, որ Աբբեդին փաշան ճաշի ժամանակ թունավորել է Ներսես պատրիարքին, բայց բարեբախտաբար թույլ կերպով և կյանքի համար վտանգավոր չէ[25]։

22 Տե՛ս «Մշակ», 1880, № 102։

23 Նույն տեղում, № 98։

24 Նույն տեղում, № 102։

25 Նույն տեղում, № 140։

Իսկ Վանի կուսակալների համար սովորություն էր դարձել քրդերի միջոցով Մ. Խրիմյանի դեմ մահափորձեր կազմակերպելը։

Տարիներ անց, իր ելույթներից մեկում, խոսելով համիդյան ջարդերի մասին, Գ. Զոհրապը բացատրում էր.

«Ջարդի քաղաքականությունը սխալ մըն է՝ հատուկ բոլոր ակար կառավարություններուն», սակայն «պետք է գիտնալ, որ հալածանքներուն ամենեն աղետավորները ջարդերը չեն, այլ անոնք, որոնք կուղղվին մտքի և սրտի դեմ։ Եվ այդ տեսակի էին 16-րդ հոդվածին հաստատումեն անմիջապես հետո հայոց դեմ սկսած հալածանքները»[26]։

Հայ ժողովրդի միավորման գաղափարը, որը 80-ական թվականների սկզբներին արդեն թևածում էր հայ իրականության վրա, խորթ էր նաև ցարական կառավարությանը և հակառակ նրա պլաններին։ Ուստի սուլթանին չէր զիջում ցարական ռեակցիան, և նրանք համաքայլ լրացնում էին մեկը մյուսին։ Ցարը «կարծես դաշն էր կապել սուլթանի հետ հայերի դեմ», — վրդովված գրում էր Ամֆիտեատրովը[27]։

1877—1878 թթ. պատերազմի ավարտից մեկ տարի անց արդեն հրապարակվեց Ռուսաստանին նոր անցած Կարսի նահանգապետ Ֆրանկինիի հրամանը հայկական ուսումնարանների փակման մասին[28]։

Անդրկովկասում ցարիզմի գաղութային քաղաքականությունն առավել ցայտուն դրսևորվեց 1881 թ. ապրիլյան մանիֆեստի հրապարակումից սկսած, երբ Մ. Տ. Լորիս-Մելիքովի, Մ. Ա. Աբազայի ու Դ. Ա. Միլյուտինի հրաժարականներից հետո հրապարակն ամբողջությամբ մնաց սրբազան սինոդի ավագ դատախազ, մոլեռանդ-ռեակցիոներ Կ. Պ. Պոբեդոնոսցևի և նրա համախոհների տրամադրության ներքո։

«Նովոյե վրեմյա», «Մոսկովսկիե վեդոմոստի» և ռեակցիոն այլ թերթերի նախապատրաստմամբ, Անդրկովկասում

26 Գր. Զոհրապ, Երկերի ժողովածու, Երևան, 1962, հատ. 1, էջ VI։

27 Ամֆիտեատրով, Եվրոպա և Հայաստան, էջ 26։

28 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1879, № 88։

անջատողական շարժումների ճնշման նշանաբանով, 1885 թ. փակվեցին Կովկասի հայկական դպրոցները:

Հայկական դպրոցները փակելուց հետո ցարիզմը ցանկանում էր հայոց կաթողիկոսին Էջմիածնից տեղափոխել Պետերբուրգ և լուսավորչական եկեղեցին կլանել ուղղափառության ագահ երախում, բայց հայերի կողմից իրենց կրոնական կենտրոնը Թուրքիա կամ Պարսկաստան փոխադրելու երկյուղը ցարին ստիպեց հրաժարվել այդ մտադրությունից:

Ցարական բյուրոկրատիայի շովինիզմն այնպիսի երանգ էր ստացել, որ փորձում էր արհեստականորեն խաչընդոտել Անդրկովկասի ժողովուրդների մտավոր առաջընթացը:

1884 թ. ուսուցիչ Ա. Ե. Համբարձումյանի դիմումին՝ արտոնել իրեն Թիֆլիսում հրատարակելու «Զրույց» անունով շաբաթաթերթ, պատասխանում են, որ Կովկասի քաղաքացիական վարչության ղեկավարությունը նպատակահարմար չի գտնում թույլատրել իրեն վստահված երկրամասում հայերեն լեզվով պարբերական մամուլի զարգացումը[29]:

Երևանի նահանգում ծնված երեխաներին գրանցելիս ազգանվան վերջին յան-ը պարտադիր կերպով փոխարինվում էր ով-ով: Իսկ այդ առնչությամբ եղած բողոքները տեղիք էին տալիս միայն հետապնդումների և կասկածների ազատագրական շարժմանը մասնակցելու մեջ:

Պետական դպրոցներում սովորող աշակերտներին պարտադրում էին յուրաքանչյուր դասի սկզբում և վերջում աղոթել ռուսերեն լեզվով[30]:

Ձգտելով հասնել «շնային բարբառների» (ազգային լեզուների) կատարելապես արգելմանը, ցարիզմն արգելում էր պետական դպրոցներում սովորող աշակերտներին անգամ հայերեն խոսել: Ամենաանողորմ կերպով ծաղրի էր ենթարկվում ազգանունների հայկական վերջավորությունը, ազգային արժանապատվությունը վիրավորող արտահայտությունները՝ ամենուր նետվում հայերի դեմքին: Երևանում ցա-

29 ՎԿՊՊԱ, ֆ. 776, ց. 12, գ. 49, 1883 թ., թ. 8:

30 ՀԿՊՊԱ, ֆ. 51 զ/115 գ, ց. 2, գործ 12, թ. 1—23:

րական պաշտոնյանները նույնիսկ փորձում էին արհեստականորեն թշնամանք սերմանել հայ և ադրբեջանցի ժողովուրդների միջև[31]։

Ի. Դևան գործունեության օրինակն հրապուրիչ էր, և ահա սկսվում է հայ պաշտոնյաներին ազատելու կամ հայաբնակ վայրերից տեղափոխելու մի շարժում նաև Ռուսաստանում, հատկապես Անդրկովկասում։

1883 թ. սեպտեմբերի 7-ին Կովկասի փոխարքան այդ մասին նամակով խորհուրդ էր տալիս ներքին գործերի մինիստրին[32], իսկ 1883 թ. նոյեմբերի 24-ին Ռուսաստանի հաղորդակցության մինիստրն արդեն կառավարությանը հայտանում էր իր ձեռնարկած այն միջոցառումների մասին, որոնք ուղղված էին հաղորդակցության բնագավառում աշխատող հայ պաշտոնյաներին հայաբնակ վայրերում ունեցած պաշտոններից ազատելուն և այլ շրջաններ տեղափոխելուն։ Այդ ուղղությամբ միջոցառումներ էին ձեռնարկվում նաև մյուս գերատեսչությունների գծով[33]։

Եթե մինչև 1885 թ. հայ կաթողիկոսների հաստատման ցարական հրովարտակները գեղազարդված էին լինում հայոց պատմությունից վերցրած նկարներով, ապա Մակար կաթողիկոսին հաստատող հրովարտակից սկսած դրանք զարդարվում էին ռուսական զինանշաններով ու պատվանշաններով։ Իսկ էջմիածնի սինոդի հրամանները սկսվում էին «Ռուսիո կայսեր հրամանով...»։

Ցարական կառավարությունը բացահայտ թշնամական դիրք գրավեց նաև արևմտահայերի ազատագրման նկատմամբ, որոնց շրջանում տարիներ շարունակ հակաթուրքական տրամադրություններ էր բորբոքում։

Արևելահայերի ակտիվ միջամտությունը Արևմտյան Հայաստանի գործերին և նրանց անկախության ձգտումը ցարական իշխանություններին տեսանելի դարձրին իրենց հա-

31 Տե՛ս ԼԿՊՊԱ, ֆ. 1405, 1883—1884 թթ., ց. 83—84, գ. 11224, թ. 1—279։

32 Նույն տեղում։

33 ԼԿՊՊԱ, 229, ֆ, ց. 2, գ. 1136, թ. 3—10։

մար անցանկալի այն հեռանկարը, որը տանում էր դեպի երկու Հայաստանների հայ ազգաբնակչության վերջնական միավորում ու անջատական ձգտումների աշխուժացում՝ ընդհուպ մինչև անկախ Հայաստանի ստեղծումը։

1883 թ. մայիսի 17-ին Մոսկվա՝ Մելքոն Փանյանին գրած նամակում Րաֆֆին գանգատվում էր, որ «կառավարության տրամադրությունը հայկական հարցի վերաբերմամբ այժմ ինչպես երևում է փոխվել է»[34]։

Ավելի ուշ, Լևոն Սարգսյանի հետ ունեցած մի զրույցում Արծրունին նույնպես դժգոհում էր, թե նախկինում գրաքննիչը ինքն էր գալիս հորդորում խիստ հոդվածներ տպագրել Արևմտյան Հայաստանի վիճակի մասին, իսկ այժմ արգելում են գրել[35]։

Ահա այս իրադրության մեջ, ռեակցիային զուգահեռ ու նրան դիմադիր, բարձրանում էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը, իր մեջ կլանելով նաև արևելահայության հեղեղի պես հորդացող կորովը։

* * *

Ազատագրական շարժման վերելքը նոր աշխուժություն մտցրեց Կ. Պոլսում և Թուրքիայի այլ քաղաքներում սնկի պես աճող հայկական բարեգործական ընկերությունների գործունեության մեջ։

1880 թ. հունիսի 1-ին Կ. Պոլսի հայկական բարեգործական ընկերությունները, ըստ Ա. Ալպոյաճյանի՝ Գ. Արծրունու խորհրդով, միավորվեցին «Միացյալ ընկերությունք հայոց Արարատյան, Դպրոցասիրաց Արևելյան և Կիլիկյան» անունով։

1880 թ. վերջերին, 1881 թ. սկզբներին միաժամանակ Կ. Պոլիս ժամանած նոր սերնդի լիբերալ ներկայացուցիչները՝ Չերազը Լոնդոնից, Մ. Փորթուգալյանը՝ Վանից և Գր. Նիկողոսյանը՝ Թիֆլիսից այլ գործիչների հետ միասին Կ.

34 Րաֆֆի, Երկերի ժողովածու, Երևան, 1959, հատ. 10, էջ 592։
35 Տե՛ս «Գործ», Բաքու, 1917, № 3, մաս Բ, էջ 98։

Պոլսում մշակում էին արևմտահայ ժողովրդի ազատագրման ծրագրեր[36]:

Սակայն ազատագրական շարժման խթանող ուժը և այդ շարժումների օջախը դառնում էր, հայ աշխատավոր մասսաների անլուր շահագործման այն արյունոտ հովիտը, որտեղ ծնունդ էր առնում և հուժկու թափով աճում նրա ըմբոստությունը:

Վանում, Կարինում և մի շարք այլ վայրերում կազմակերպված խմբակներն իրենց գործունեությունը նշանավորեցին դեպի հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը, ապա զինված ապստամբությամբ թուրքական լծից ազատագրման դժվարին ուղին:

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո Արևմտյան Հայաստանում ստեղծված գաղտնի կազմակերպություններից էր 1878—1879 թթ. Վանում ձևավորված «Սև խաչը»-ը, որի անունը նշանակում էր՝ ով դավաճանի, սև խաչ կքաշվի նրա վրա: Նրա գործունեությունն առավել մարտական բնույթ ստացավ 1881 թ., Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հետ կապվելուց հետո:

«Սև խաչ»-ը կազմավորվեց Վասպուրականում ծավալված կրթական շարժման զուգընթաց, որը նշանավորվեց Վանի համբավավոր վարժապետանոցի հիմնադրմամբ:

1880 թ. Ներսես Վարժապետյանի խորհրդով «Միացյալ ընկերության» ատենապետ Մ. Ջերազը կարգադրեց փակել վարժապետանոցը, հավանաբար խոհեմ գործելու միտումով, որը խիստ վրդովեցրեց ոչ միայն նրա նախաձեռնող ու տեսուչ Մ. Փորթուգալյանին ու վերջինիս տեղակալ Մարկոս Նաթանյանին, այլև Մ. Խրիմյանին: Ուստի նրանց ջանքերով էլ 1881 թ. դեկտեմբերին Վանի Այգեստան թաղամասում վարժապետանոցին փոխարինեց Կենտրոնական վարժարանը, որն իր գոյությունը պահպանեց մինչև 1885 թ.՝ մինչև Բ. Դռան կողմից Մ. Խրիմյանին ու Մ. Փորթուգալյանին Վանից վտարելը:

35 Տե՛ս Ա. Ալպոյաճյան, Պատմություն Եվդոկիո հայոց, Գահիրե, 1952, էջ 1093:

Մ. Փորթուգալյանի Վանում ծավալած գործունեության մասին խոսելով Ա. Արփիարյանը հմայված գրում է, որ նա «ազատության շունչ մը փչեց ամբողջ Վանի վրա։ Առանց հեղափոխության բառը արտասանելու...»[37]։ Իսկ իր առաջին հանդիպումը Փորթուգալյանի հետ 1876 թ., նա նկարագրում է այսպես. «Գամված տեղս մնացի. կրակոտ, հաղթանդամ, զսպացող ոչ ոք կար։ Նիհար, կարճահասակ, ուռած կոպիճներով, խարտյաշ, գառնուկի նման մեկը դեմս էր իր Փորթուգալյան։ Թուրք կառավարությունը, Ներսես պատրիարքը ահաբեկողը ո՞վ էր»[38]։

«Սև խաչ»-ն իր ժողովներից մեկում որոշում է ընդունում Վանից դուրս փնտրել այլ կազմակերպություններ, գտնել և միավորվել նրանց հետ[39]։

Եվ ահա 1881 թ. Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ղեկավարներից մեկի՝ Խ. Կերեքցյանի այցելությամբ Վան հնարավորություն է ստեղծում սերտ կապ հաստատել Արևմտյան Հայաստանի երկու կենտրոնների գաղտնի կազմակերպությունների միջև։ 1882 թ. մայիսին, Ազգային սահմանադրության 22-րդ տարեդարձի օրը, Վարագում, տոնակատարությանը մասնակցելու նպատակով գաղտնի կերպով զինվորական հագուստներ էին պատրաստվել հեծյալ ու հետևակ այն հայ աշխարհազորայինների համար, որոնք պիտի ուղեկցեին երեք հազարանոց թափորին և որոնք «ամենքն ալ զինվորական մարզանքներով վարժված էին իրը զինվորներ, ունենալով իրենց սպաները, ենթասպաները ու տասնապետները»[40]։

Կազմակերպական այս նույն կառուցվածքն ուներ նաև «Պաշտպան հայրենյաց»-ը, որից «Սև խաչ»-ն այդ շրջանում ստացավ ընկերության անդամագրման պատրաստի տոմսեր։

37 «Նոր կյանք», 1899, է. 275։

38 Նույն տեղում, էջ 197։

39 Տե՛ս Հ. Ճանիկյան, Հիշատակներ հայկական ճգնաժամեն, Կ. Պոլիս, 1913, հատ. Ա և Բ, էջ 93։

40 Նույն տեղում, էջ 89։

Վանում գործում էր «Զինակիր» անունով մի խումբ[41], ենթադրում ենք՝ «Սև խաչ» կազմակերպության այն մասնաճյուղը, որն զբաղվում էր կազմակերպության անդամներին տոն և կիրակի օրերը զինավարժություն ուսուցանելով։ Կազմակերպված էր նաև «Քաղաքական ակումբ», որտեղ, ինչպես և Հայկազյան կենտրոնական վարժարանում, հայրենաշունչ դասախոսություններով հանդես էին գալիս Մ. Փորթուգալյանը, Տաճատ Պեյլարյանը, Սողոմոնյանը և ուրիշներ։ Իսկ «Հայրենասերների միությունը», որի տեսուչն էր Մարկոս Նաթանյանը, թերևս «Սև խաչ»-ի կուլտուր-կրթական լեգալ ջոկատն էր։

«Սև խաչ»-ը խստորեն պատժում էր զենքի առևտրով զբաղվող այն հայերին, որոնք թուրքերին, քրդերին կամ պարսիկներին զենք էին վաճառում[42]։ Հ. Ճանկուլյանի այս վկայությունը հաստատում է 1882 թ. մարտի 23-ին Վանից՝ Հրանտի «Մշակ»-ին գրած նամակը։

«Ինչպես կերևի, մի ժամանակե հետե մի խումբ կազմըված է այստեղ Այգեստանի մեջ։ Այս խմբակը թեև չը գիտցըվիր թե ինչ տեսակ անձերե բաղկացյալ է, բայց իրենց գործերեն կերևի որ զգայուն հայեր պետք է լինեն նոքա, զի ազգին վնասակար անձերու վրա կհարձակին գիշերայն և նոցա կպատժեն ծեծելով»։ Այսպա նկարագրում է, թե ինչպես հայերից զենք գնող և պարսիկներին վաճառող մի պարոնի գիշերը մինչև արյունլվա լինելը ծեծել են[43]։

«Սև խաչ»-ն հանդիսացավ արևմտահայերի այն գաղտնի կազմակերպություններից մեկը, որի անդամների մեջ, հազվագյուտ բացառությամբ, մինչև վերջ էլ ուխտադրուժներ չեղան։

«Սև խաչ»-ի գործունեությունն իր վերելքներով ու վայրէջքներով հանդերձ երկարաձգվեց մինչև 80-ական թվական-

41 «Հայրենիք» ամսագիր, 1939, № 4, էջ 119, նաև «Հնչակյան պատմություն», հատ. 1, էջ 26—27։

42 Հ. Ճանկուլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամեն, հատ. Ա և Բ, էջ 84—89։

43 «Մշակ», 1882, № 63։

ների կեսերը և հանդիսանալով հետագայում Վանում բողբոջած Արմենական կազմակերպության միջուկը, վերջինիս ձևավորման հետ էլ, որպես այդպիսին, դադարեց գոյություն ունենալուց։

Վանում ազատագրական շարժման ոգին Մ. Խրիմյանից, Մ. Փորթուգալյանից և 1879 թ. Վանում ռուսական փոխհյուպատոս նշանակված Կ. Կամսարականից կազմված եռյակն էր, որոնց տների առջևից անցնելիս ցուցարարները նրանց անունով կեցցե էին կոչում։ Իսկ Կամսարականի միայն ներկայությունը Վանում արիություն էր ներշնչում ժողովրդին։

Ռուսական բանակների հետ Կարին մտած Կ. Կամսարականը, մոտ վեց ամիս ոստիկանապետի, ապա երկու ամիս հյուպատոսի փոխանորդի պաշտոնում այնտեղ ծառայելուց հետո, 1878 թ. հոկտեմբերին վերադարձավ Թիֆլիս, իսկ 1879 թ., արդեն որպես ռուսական ժամանակավոր փոխհյուպատոս, ժամանեց Վան։ Լինելով հայրենասեր ու գործունյա զինվորական, Կամսարականն ամենաակտիվ մասնակցություն ցուցաբերեց Վասպուրականում կատարվող բոլոր ազգօգուտ ձեռնարկներին, չխնայելով անգամ իր դրամական սուղ միջոցները[44]։

Նրա համաձայնությամբ ռուսերենից հայերեն թարգմանվեցին փոխատու ընկերության կանոնները, նախաձեռնվեց ստեղծելու այդ ընկերությունը, որի միջոցով նա համոզված էր, թե հայ գյուղացին կազատվի վաշխառուի ճանկերից և հնարավորություն ստանալով բեռնաթափել իր ահավոր պարտքերը, դրամագլխի տեր կդառնա[45]։

Նա միջամտում ու լուծում էր հայերի և թուրքական իշխանությունների միջև եղած վեճերը, իր պաշտպանության տակ առնում օգնության կարիք զգացող բոլոր հայ կարոտյալներին։ Ուստի «Վանի մեջ հայ մը չկա որ չօրհնե Կամսարականի անունը, նա ոչ թե կսիրվի, այլ կպաշտվի ժողո-

44 Տե՛ս ՊԿՌՊԱ ֆ. 401, ց. 4/928, 1882 թ., թ. 42։

45 Տե՛ս Ա. Թոխմախյան, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, էջ 83։

վրըդեն»,— գրում էր Հրանտը Վասպուրականի մայրաքաղաքից[46]։

Սակայն Կամսարականն ավելի զուսպ և հեռատես քաղաքագետ էր, ու չնախապատրաստված անժամանակ ապստամբությունը մահացու էր համարում այն բարձրացնողների համար[47]։

Ինչպես ռուսական ծառայության մեջ գտնվող հայազգի շատ այլ գործիչներ, այնպես էլ Կամսարականը, արևմտահայ ժողովրդի ազատագրումը Արևմտյան Հայաստանի Ռուսաստանին միանալու մեջ չէր տեսնում, ուր նրա կարծիքով, մութ էր հայության ապագան և վտանգավոր՝ ազգային շահերի տեսակետից[48]։

Ռուսական ցարիզմի պաշտոնական քաղաքականության հետ չէր համերաշխվում Կամսարականի չափից դուրս հայասիրական գործունեությունը, որի մասին թե սեփական նախաձեռնությամբ և թե անգլիական դիվանագետների հրահանգով բազմիցս բողոքարկել էին նաև Բ. Դռան ներկայացուցիչները[49], ուստի XIX դարի 80-ական թվականներին սուլթանի հետ ձեռք-ձեռքի գործող ցարական կառավարությունը Կամսարականին տեղափոխեց Արևմտյան Հայաստանից, իսկ Բ. Դուռը՝ Վանից հեռացրեց Մ. Խրիմյանին ու Մ. Փորթուգալյանին։

Քիչ ուշ՝ 80-ական թ. վերջերին 90-ականի սկզբներին շարժման մեջ կարևոր դեր սկսեց խաղալ Մկրտիչ Թերլեմեզյանը (Ավետիսյան), որն այդ օրերին դեռ բավարարվում էր հայրենասիրական ոտանավորների արտասանությամբ երիտասարդությանը ոգևորելով ու «արցունք քամելով ծերունիների աչքերից», իսկ հետագայում սկսեց պայթուցիկ նյութեր պատրաստել, ապա որպես Վասպուրականի հայ ազատա-

46 «Մշակ», 1880, № 100։

47 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1881, գ. 1567, թ. 42։

48 Տե՛ս Հ. Երամյան, Հուշարձան, հատ. 1, էջ 180։

49 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1883, գ. 1569, թ. 14։

գրական շարժումների ճանաչված ղեկավարներից մեկը՝ բա-ջաբար ընկավ Վանի 1896 թ. բարիկադային կռիվներում։

Հիշյալ ներքին հարած խմբավորումն ուներ հակառա-կորդների մի ամբողջ բանակ, Վանի նախկին առաջնորդ Պո-ղոս վարդապետ Մելիքյանի ղեկավարությամբ, որոնք իրենց հակառակորդների՝ ազգայնականների կողմից արգահատվում էին որպես հայրենիքի դավաճաններ։ Այս երկու խմբավորում-ների միջև եղած ներհակությունն այնքան էր բորբոքված, որ նույն ընտանիքում ապրող հարազատները հաճախ թշնամիներ էին դառնում միմյանց։ Նույնիսկ պատմում են, որ Պողոսի չարագործություններից վրդովված ազգայնական մի տիկին լողացնելիս եռացրած ջրով այրում-խաշում է պողոսյան իր ամուսնուն[50]։

1883 թ. Վանում իր առաջնորդական տեղապահությունն հաջողեցրած այս նույն Պողոսի առաջին ձեռնարկը հայերի կիրակնօրյա առևտրի արգելումն էր, որը ոչ պատահաբար զուգադիպեց իշխանությունների կողմից հայերին սրճարան-ներում ու այլուր դոմինո, թուղթ, նարդի խաղալը, խմբերով զբոսնելը և այլն մասսայաբար արգելելուն[51]։

Նշենք, որ Պողոսի՝ Վանի առաջնորդական տեղապահ ընտրվելուն որոշապես նպաստեց 1883 թ. ապրիլին առաջ-նորդությունից հրաժարված Մ. Խրիմյանը, հավանաբար են-թադրելով, որ թուրքական իշխանությունների հետ Պողոսի ունեցած մտերմությունը թերևս կնպաստեր հայ երիտասար-դության կրթական-կուլտուրական առաջադիմությանը։ Սրա-նում, իհարկե, նա սխալվեց։ Պողոսը նորից իրեն դրսևորեց որպես Բ. Դռան վարձու գործակալ՝ վայելելով Ներսես պատ-րիարքին հաջորդած Հարություն Վեհապետյանի ու Կ. Պոլսի Հայոց ազգային ժողովի ատենապետ Հովհաննես Նուրյանի պաշտպանությունը։

1886 թ. հունիսին, Վանում առաջնորդական ընտրու-թյունների ժամանակ, թուրքական իշխանությունները փոր-ձեցին սվինների ուժով Պողոսին առաջնորդի աթոռին բազ-

50 Վ. Փափազյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 83։

51 «Մշակ», 1883, № 207։

մեցնել, բայց ժողովրդական բողոքի ալիքը այնպիսի հուզումնալից կերպարանք ստացավ, որ շուտով վերածվեց զինված ընդհարման, որն անողոքաբար ճնշվեց՝ նյութ տալով անգլիական պառլամենտին, 1886 թ. օգոստոսին նորից աճուրդի հանելու հայկական հարցը։

Վանի ժողովրդական հուզումների այդօրինակ թափը նույն 1886 թ. Պողոսին հորձանքով քշեց դեպի Լիմ անապատի անուշև խուցերը, իսկ ավելի ուշ նրան շամփրեց ժողովրդական վրիժառուի արդար հատուցումը։

Իհարկե, հայրենասիրական ընկերությունների գաղտնի գործունեությանը իշխանությունների հետ միասին խանգարում էին առաջին հերթին հետադիմական-պահպանողական խմբավորումները։ Բայց հայրենասիրական այդ կազմակերպությունների առաջընթացի ուղեծիրը, իրենց անմիտ ու անհեռատես գործունեությամբ, հաճախ մթնեցնում էին նաև նրանց ղեկավարները։

«Հայերս անտակտ էինք մեր հայրենասիրական ցույցերու մեջ,— գրում է Փանոս Թերլեմեզյանն իր հուշերում,—... Ազգային սահմանադրության տոնակատարությունները շատ վրան-բաց էին, տասը հազար մարդով կերթայինք Վարագ, ազգային դրոշակներ պարզած, հայրենասիրական երգեր երգելով... Փորթուգալյանն ալ ջահելություններ կըներ։ Քննությունների ժամանակ կուսակալի ներկայությանը, աշակերտները Գամառ-Քաթիպայի թուրքատյաց ոտանավորները կարտասանեին»[52]։

Փորթուգալյանի ցույցամոլ մի արարքը վերջապես հանգեցրեց նրան, որ ոստիկանությունն արգելեց ինչպես «Քաղաքական ակումբի» գործունեությունն, այնպես էլ այնտեղ և այլուր կազմակերպվող դասախոսությունները։ Շուկայի պատին փակցված հայտարարությունը, ուր նշված էր Փորթուգալյանի բանախոսության թեման՝ «Ժամանակը հասել է, հայեր ի՞նչ ընենք», իր վրա հրավիրեց Վանի գլխավոր դա-

---

52 Տե՛ս Ս. Վարանդյան, Դաշնակցության պատմություն, հատ. 1, 1932, էջ 30։

տախաղ Րայիֆ բեյի ուշադրությունը, որն, իր թարգման Նշան Քանթարճյանի միջոցով, հասկանալով նրա բովանդակությունը, ակումբի գործունեությունը և դասախոսությունները դադարեցնելու հրաման տվեց։

«Սև խաչ»-ն անմիջապես ընդունեց Նշան Քանթարճյանին ահաբեկելու որոշում, բայց հետո, հաշվի առնելով վերջինիս թախանձագին զղջումը, ներումն շնորհեց նրան։

Իսկ Փորթուգալյանն. իշխանությունների կողմից հարցաքննության ենթարկվեց որպես «դրդիչ»-ի։

Կազմակերպության կողմից կովկասահայ Գալուստին և Պաղտասարին հանձնարարված էր նախապատրաստել Գավաշի և շրջակա գյուղացիության ինքնապաշտպանությունը։ Այս իմանալով Աղթամարի Խաչատուր կաթողիկոսը մի քանի քրդերի ուղարկում է սրանց ձերբակալելու, որը, սակայն, նրանց չի հաջողվում։ Դրանից հետո էր, որ որոշվեց Աղթամարի վանքը և կաթողիկոսի սեփական դրամները կողոպտել ու օգտագործել կազմակերպության կարիքների համար[53]։

1881 թ. ապրիլին Սըվազի բանտում հյուրընկալվում է ագուլիսցի Մարտիրոս Բալայանցը (ռուսահպատակ), որը մեղադրվում էր Վանի գաղտնի ընկերության առաջադրանքները կատարելու մեջ և որի մոտ հայտնաբերում են Խրիմյանի և գաղտնի ընկերության անունով ծրարներ ու ազգային արգելված երգերի արտատպված օրինակներ[54]։

Կ. Կամսարականը 1881 թ. փետրվարի 23-ին Կ. Պոլսի ռուսական դեսպան Նովիկովին գրած նամակում հայտնում էր, որ Վանի հայ երիտասարդությունը բոլոր հասարակական վայրերում հանդես է գալիս կառավարության դեմ ուղղված զինված ապստամբության բացահայտ կոչերով։ Եվ եթե հայկական հարցը դրականորեն չլուծվի, այդ դեպքում հայերի կողմից ապստամբական շարժումները թուրքական կառավարության դեմ անխուսափելի են[55]։

---

53 Տե՛ս Հ. Ճանկուլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամին, էջ 53։

54 Տե՛ս «Մամուլ», 1882, № 969։

55 ՌԱՔԱ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1881, գ. 1567, թ. 21—22։

Այդ օրերին Վանի թուրքական իշխանությունները համալրում էին բերդի կայազորը, անգամ օգնություն խնդրելով կառավարությունից և գաղտագողի զինում բոլոր մահմեդականներին, ինչ խոսք, հայ ազգաբնակչության հետ հաշվեհարդար տեսնելու նպատակադրումով: Փութով ու խստությամբ հավաքվում էր հայերի մոտ պահված զենքը:

Հայտարարված էր արտակարգ դրություն և ոստիկանները շրջում էին ամենուր «ապստամբության համար հսկողություն ընելու»: Եռանդով Վասպուրական էին տեղափոխվում նոր զորամասեր, որոնք տեղաբաշխվում էին հայկական գյուղերում ու ձրիաբար կերակրվում հայ բնակիչների հաշվին, նոր պատուհաս դառնալով այդ գերդաստանների համար:

Թեոդոս Կ. Կամսարականը 1882 թ. դեկտեմբերի 27-ի թվակիր նամակում գրում էր, որ Վանում եղած գաղտնի կոմիտեները այլևս չեն գործում՝ դրամ չլինելու և «խելացի ու փորձված հայերի խորհրդով», բայց իրականում նրանք կապվել էին «Պաշտպան հայրենյաց»-ի հետ ու անցել խոր ընդհատակ և, ինչպես տեսանք, ընկերության անդամատոմսեր էին ստացել Կարինից:

«Մշակ»-ի Վանի թղթակիցը 1883 թ. մարտի 8/20-ին հաղորդում էր, որ «Վանի մեջ ալ Երզրումեն ավելի ահագին խուզարկություն մը մտադրված կերևա»[56]:

Իսկ կուսակալ Հասան փաշան, որը ծագումով թուրքերի դեմ ապստամբած ալբանական մի հայտնի ցեղից էր, կասկածներ տածելով Ազգային քաղաքական ժողովի անդամ Սեդրակ Տեր-Սարգսենցի (Տեկանց) նկատմամբ, շտապեց բարձրաստիճան մի հայ պաշտոնյայի միջոցով հայտնել նրան, որ հանդարտ մնա իր տեղում, այլապես ինքն այնպիսի փորձանքներ կբերի նրա գլխին, «... որ բոլորովին շվարելով հետին խեղճության մեջ կընկնի»[57]:

Նույն թվականի վերջերին, ի լրումն քաղաքի պատերին փակցված մարտական թռուցիկների, գաղտնի տարածվում

56 «Մշակ», 1883, № 69:

57 Նույն տեղում, № 41:

էին գիտող ստորագրությամբ նամակներ, ուր խստորեն դատապարտվում էին նահանգապետի թուլությամբ ու ծածուկ ցուցումով կատարվող անօրինությունները[58]։

Վանում, քիչ ուշ, մեծ եռանդով գործում էին նաև ռուսական փոխհյուպատոսության հանձնակատար Միհրան Բաղդասարյանը, անշուշտ, Կ. Կամսարականի համաձայնությամբ, ինչպես նաև անգլիական հյուպատոսության թարգման Նշան Շիրվանյանը (հավանաբար «Միություն ի փրկություն» 1872 թ. Թիֆլիս ուղարկված պատվիրակը) և ուրիշներ։

Հայ ժողովրդի ինքնապաշտպանական փորձերն, հարկավ, անհանդուրժելի էին թուրքական իշխանություններին։ Վանի վիճակի մեջ մտնող Բաշկալեի առաջնորդ Հովհաննես վարդապետը 1880 թ. սովի օրերին, հայկական գյուղերում շրջելիս հանդիպում է մի խումբ քրդերի, որոնց առաջնորդում էր կրոնափոխ մի հայ, և նրանց հարձակմանը պատասխանում հրացանի կրակոցով, տեղն ու տեղը սպանելով հիշյալ ուրացողին։

Կ. Կամսարականի միջնորդությամբ վարդապետն ազատվում է բանտից, բայց մեկ-երկու տարի անց իշխանությունները դեռ ցանկանում էին անպայման պատժել նրան, քանի որ, ինչպես Հայկակն (Ս. Արփիարյան) էր գրում Կ. Պոլսից. «Բ. Դռան առաջ Հովհաննես վարդապետը այնպիսի մեղապարտ մէ, զոր պէտք է անպատճառ պատժել, վասնզի այս անձը գեշ օրինակ տված է ինքնապաշտպանության»[59]։

Ազատագրական հոսքն իր մեջ էր առել նաև Մուշը, Բաղեշը և Արևմտյան Հայաստանի ու Թուրքիայի տարբեր շրջանների բազմաթիվ հայաշատ այլ քաղաքներ։

Քղիի առաջնորդ Ներսես վարդապետ Խարախանյանի Տարոնում տված բանախոսությունները զենքի դիմելու և ինքնապաշտպանության բացահայտ քարոզներ էին։

Մշեցի Հակոբ սարկավագ Ղևոնդյանը, որը 1879 թ. Կ. Պոլսում հրապարակած բանաստեղծությունների իր ժողովածուում բուլղարների օրինակով զենքի դիմելու և անկախու-

58 Տե՛ս «Մշակ», 1884, № 35։

59 «Մշակ», 1881, № 227։

թյան նվաճման քայլերգն էր շեփորում, բանտարկվեց, ապա պատրիարքարանի միջամտությամբ ազատվելով, վերադարձավ Մուշ։ Նետվելով ազատագրական շարժման հորձանուտը, նա ակտիվորեն մասնակցում էր գաղտնի խմբակների աշխատանքներին և, որպես մասնագետ հեղափոխական՝ արհամարհելով բոլոր վտանգները, շրջում էր գավառից գավառ, մըխրճվում պայքարի ամենադժվարին դիրքերը։ 1883 թ. սկզբներին նա դիպվածով ձերբակալվում է։ Նրա ձիու թամբը ստուգելիս թուրքական ոստիկանները հայտնաբերում են «խըռովարար թղթեր» և Հակոբ սարկավագը նետվում է Մուշի բանտը[60]։ Սասունցիների հետ համախմբվելու և միացյալ ուժերով ազատամարտական շարժումներ սկսելու հրապույրով 1878—1880 թթ. Սասունի հրդեհվող լեռներում անվհատ ճախրում էր Մուշի «թեավոր» առաջնորդը, «Թռչնիկ պեգասյան»-ի նախկին խմբագիր Գրիգորիս Ալեաթճյանը։

Սակայն Մուշում նույնպես անհարկի ու կործանարար ազդեցությունն այնտեղ էր հասել, որ կենտրոնական վարժարանի սաները փողոցներում ու շուկայում շրջում էին բարձրաձայն երգելով.

Կործանի Տաճկաստան
Կեցցե Հայաստան...

Նման միջադեպերն ստիպեցին քաղաքի թուրք կառավարչին դպրոցի տեսուչ Մկրտիչ Սարըյանին զգուշացնել, թե «կործանի Տաճկաստան» բառերը «թուրք ժողովուրդը կրնա գրգռել, լավ չէ»[61]։ Իսկ ավելի ուշ՝ 1887 թ. վերջերին կառավարական հրամանով վարժարանը փակվեց։

«Պաշտպան հայրենյաց»-ի առնչությամբ Կարինում կատարված ձերբակալությունների օրերին Բաղեշի նահանգապետն իր դրասեղանի վրա հայերեն մի նամակ է տեսնում, ուր պայմանաժամ էր տրված չորս օրվա ընթացքում հեռա-

60 Տե՛ս «Մշակ», 1883, № 73 (Հայկակի թղթակցությունը)։

61 Տե՛ս Կ. Սասունի, Պատմություն Տարոնի աշխարհի, Բեյրութ, 1957, էջ 267—268։

նաև Բաղեշից, այլապես գաղտնի ընկերության գործադիր խորհուրդը որոշում է ընդունել սպանել իրեն։ Սարսափը համատարած էր, և նահանգապետը շտապեց ճողոպրել Սղերդ[62]։

Երզնկայում զինվորական խստագույն միջոցներ ձեռնարկվեցին շարժման ենթադրվող ճյուղերը վերացնելու և ապստամբությունը կանխելու համար[63]։

Կ. Պոլսի «Մամուլ»-ի էջերից հայ երիտասարդությունը հաճելի սարսուռով էր զգում մի հունգարուհու կողմից Ավստրիայի կայսրին ուղարկած թունավորված ծաղկեփնջերի արնաբույր հոտը[64]։ «Մամուլ»-ի մոլեգին խմբագիրը չէր քաշվում իր թերթի «Հատընտիր բարոյականք»-ում փիլիսոփայական ծանրակշռությամբ ազդելու, որ «Մահը ամենեն ավելի թագավորներու երկյուղ կը պատճառե»[65]։

1882 թ. իր № 972-ում տպագրած մի ոտանավորի առթիվ փակվեց «Մամուլ»-ը և բանտ նետվեց նրա խմբագիր Գ. Այվազյանը, որին մեղադրում էին նաև «Պաշտպան հայրենյաց»-ի հետ կապեր ունենալու մեջ[66]։

Հայ ժողովրդին «հինգհարյուրամյա քնից» արթնանալու կոչով այդ ոտանավորը ստորագրված էր կյուրինցի Մանուկ Ջզոնյանի անունով, ուստի մասսայական ձերբակալություններ սկսվեցին նաև Կյուրինում (Սեբաստիայի մոտ)։

XIX դարի 80-ական թվականների սկզբներին արևմտահայ ազատագրական շարժման պսակը կազմեց Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, որի գործունեության բնութագրմանն է նվիրված սույն ուսումնասիրության վերջին գլուխը։

* * *

Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման ուղիներում վաղուց էր բողբոջել հայ-քուրդ-ասորական դաշնակ-

62 Տե՛ս «Արձագանք», 1883, № 3։

63 Տե՛ս «Մշակ», 1883, № 33։

64 Տե՛ս «Մամուլ», 1881, № 797։

65 «Մամուլ», 1882, № 899։

66 Տե՛ս «Մշակ», 1883, № 6։



15—196

ցության գաղափարը և հուզել ու հրապուրել հայ գործիչներին։

Տակավին Լուդովիկոս XIV-ի առջև հայ ժողովրդի ազատագրման խնդիրը հուզող Մահտեսի Մուրադն արդեն երաշխիք էր տալիս Եվրոպայից եկող մարտակոչի դեպքում, Թուրքիայի բոլոր քրիստոնյաների միացյալ ըմբոստության մասին[67]։ Իսկ Հովսեփ Էմինին անկոտրում վրաց Հերակլ արքան սիրով, բայց զուսպ թերահավատորեն էր ընդունում Մուշի ս. Կարապետ վանքի վանահայր Հովնանի նամակ-հորդորը՝ Վրաստանի ու պատմական Հայաստանի տերիտորիալ միացմամբ հիմնել վիրա-հայոց պետություն, որի ստեղծման համար հայերից, եզիդի քրդերից և ասորիներից կազմված 40.000-անոց բանակն իր պատրաստ է և սպասում է նրա հրամանին[68]։

1854 թ. տված իր կաթողիկոսական երկու կոնդակներում հայ-ասորական բարեկամության ամրապնդման փորձեր արեց նաև Ներսես Աշտարակեցին, Վանի առաջնորդ Գաբրիել արքեպիսկոպոսին հորդորելով գործնական միջոցառումներ ձեռնարկել այդ ուղղությամբ[69]։

70—80-ական թվականներին, որպես Օսմանյան կայսրության հարստահարվող ժողովուրդների, հատկապես հայ, քուրդ, ասորի և հույն ժողովուրդների միասնական պայքարի ջատագովներ հանդես եկան Րաֆֆին, Մ. Խրիմյանը, Ս. Թոխմախյանը, Տեկանցը և շատ ուրիշներ։

Րաֆֆին, որն իր պատմական աշխատություններն իսկ երկնելիս, առաջին հերթին հոգում էր, որպեսզի նրանցում, որպես զարկերակ անցնեն ժամանակի հուզող հարցերը, զուր չէր հետևողականորեն շոշափում նաև հայ-ասորական դաշինքի խնդիրը։ Իսկ «Սամվել»-ում, հաղթահարելով չորրորդ դարի հեռավորության դժվարությունները, նա բարբառում էր. «Հույնն և ասորին այնքան վատ չեն, որքան դուք կարծում եք»։

---

67 Տե՛ս Հ. Անասյան, 17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, էջ 160—161։

68 Տե՛ս Լեո, Հայոց հարցը, 1906, էջ 64։

69 Տե՛ս «Մշակ», 1881, № 120։

Ասորիները «...օր մը չէ օր մը հայոց հետ կարող են միանալ զիրենք հարստահարող բռնավորաց դեմ»,— ասում էր Տեկանցի հերոսը և նույնիսկ մշակված պլան առաջարկում նրանց առաջնորդին. «Դուք մի կարծեք թե միայն հայոց օգնության պետք ունիք, հայերն ալ ձեր օգնության պետք ունին։ Դուք եթե Ալբակու, Վանա, Հայոց Ձորո, Նորտուզա Խիզանու, Մոկաց, Շատախու և այլ հայոց հետ միանաք զաշխարհ տակն ու վրա կընաք ընել. այն ժամանակ երբ Արարատա խոստացյալ Ազատության շեփորն կհնչվի, և դուք իբրև դրացի քրիստոնյա եղբայրք՝ նորեն ամենաողորմած Ցարին ակնարկին սպասեք։ Եվ երբ Հայաստանի ավերակներու վրա սլանա արծիվն հզոր և սրբե նորոգե այս երկիրն յուր ապականություններեն, և դուք այնժամ իրավամբ Մասյաց սարի գլուխ ծածանող ազատության դրոշակին նայելով ի միասին պիտի հրճվինք»։ Ապա նույնիսկ առաջարկում է հրաժարվել նեստորականությունից և մտնել լուսավորչական եկեղեցու փարախը[70]։

Վասպուրականում կենտրոնացված էր քրիստոնյա ասորիների 70—80 հազարանոց հսկա մի համայնք, որի անդամները, առաջնորդից սկսած մինչև ամենավերջին գյուղացին, պարտադիր կերպով զենք էին կրում։

Ասորիների առաջնորդը՝ Մարշիմոնը[71] հասկանում էր, որ Բ. Դռան քաղաքականությունն հետապնդում է քրդերի միջոցով քրիստոնյաներին հալածելու և ոչնչացնելու նպատակ, ուստի ինքն էլ, հատկապես նրան ենթակա մելիքները, հայ-ասորական, ինչպես նաև հայ-քուրդ-ասորական դաշնակցության ջատագով էին։ Մանավանդ, որ ասորիներն ընդունում էին Կ. Պոլսի հայոց պատրիարքի իրավասությունը՝ միջնորդի դեր կատարելու Բ. Դռան և իրենց միջև։

---

70 Ս. Տեր-Սարգսենց (Տեկանց) Շահենն ի Սիպիր, էջ 150—153։

71 Ասորիների առաջնորդ Մարշիմոնի աթոռանիստը Վանի նահանգի Հեքյարի (Ալբակ) գավառի, Ջուլամերիկի շրջանի Քոչանիս գյուղն էր։ Բ. Դռան առջև Մարշիմոնի առաջին պարտականությունը իրեն ենթակա մելիքների միջոցով հավաքած հարկի հանձնումն էր պետությանը, որից ինքը որպես վարձ ստանում էր տարեկան մոտ 2000 լիրա։

1881 թ. փետրվարի 13-ին Կ. Պոլսի ռուսական դեսպան Նովիկովին գրած զեկույցում Կ. Կամսարականը հայտնում էր, որ ասորիների առաջնորդները (մելիքները), որոնք հիմնականում ունեն ռուսական կողմնորոշում, համակարծիք չլինելով անգլիական դիվանագիտության ոստայնում թպրտացող իրենց Մարշիմոնի առաջարկին՝ թուրքական կառավարության դեմ ապստամբած Օբեյդուլլա[72] շեյխին օգնելու մասին, Մարշիմոնին գահընկեց անելու սպառնալիքով պահանջել են միանալ ոչ թե շեյխին, այլ հայերին և անմիջապես գործնական բանակցություններ սկսել վերջիններիս հետ, իրենց միացյալ ուժերի հետագա գործունեությունն ուղենշելու համար։

«... Նեստորականները,— գրում էր Կ. Կամսարականը,— առաջարկում են Վանի հայերին անհրաժեշտության դեպքում դուրս բերել մինչև 15 հազար կամավոր, հայերից պահանջելով միայն Հ. Մարտինի սիստեմի 1000 հրացան»[73]։

Դեռ հայ ազատամարտի արշալույսին տակավին շատ երիտասարդ Գաբրիել Նորատունկյանը Գ. Սրվանձտյանին ուղղած 1880 թ. սեպտեմբերի 1-ի թվակիր նամակում հայերի համար ամենակարևոր խնդիրը համարում էր քրդերի հետ մերձենալու և հարաբերություն հաստատելու միջոցներ գտնելը, որովհետև «... Քրդերը մարմին մը կկազմեն ցեղով և զենքով, հայքս ալ ազգավ ու լույսով. պետք է որ իրարու հետ բաղխելե առաջ իմաստասիրենք այն օգուտները որ կարելի է քաղել նոցա հաղորդակցությունեն ու միաբանությունե, եվրոպական իրավագիտությունը կպատվե նախ զենք ի ձեռին ունեցողը, ապա լուսավորյալը»[74]։

Քրդական հարցում ունեցած նեղմիտ-ազգայնական տատանումներով հանդերձ՝ ռուս-թուրքական պատերազմից հետո, «Մշակ»-ը նույնպես հակված էր հայ-քրդական դաշ-

---

72 Այլ տեղերում նաև Իբադուլլա, Աբեյդուլլա, Ուբեյդուլլա, Օբեյդ-Ուլլա։

73 ՌԱՔԱ, ֆ. Կոստանդնուպոլսի դեսպանություն, 1881, գ. 1567, թ. 21—22։

74 «Դիվան հայոց պատմության», հատ. ԺԳ, էջ 345—346։

նակցության ու նրանց համատեղ պայքարի մեջ տեսնելու Արևմտյան Հայաստանի ազատագրման երաշխիքը[75]։

Միասնական ճակատի ստեղծման ճանապարհին հայ գործիչները հմտորեն նկատեցին քրդերի հետ միություն կազմելու, թուրքական կառավարության կողմից վարձված նրանց ցեղապետների հետ համերաշխվելու և ընդհանուր ուժերով իշխանության դեմ մարտնչելու անհրաժեշտությունը։ Բայց միայն նկատեցին և չկարողացան հետևողականորեն ու անվրեպ շարունակել ու արգասավորել նրանց հետ համագործակցելու փորձը։

Թուրքական կառավարությունն զգում էր իր համար նման գործակցության վտանգը և եռանդով ձեռնամուխ եղավ քրդական շարժումները հայ ժողովրդի դեմ ուղղելու դիվային ապարողությանը։ Նա արդեն սովորել էր Անգլիայի օրինակով նվաճված ժողովուրդներին կռվեցնել՝ որպեսզի նրանք չհամախմբվեն ու միասնական ճակատ չկազմեն իր դեմ։

Մինչև Ղրիմի պատերազմը և Եզդանշիրի նշանավոր ապստամբությունը, որի դրոշի տակ կռվում էին շուրջ հարյուր հազար զինվոր, Բ. Դուռը քրդերի նկատմամբ, առանձին բացառություններով, վարում էր բռնության ու հալածանքի իր վաղնջական քաղաքականությունը։ Ապստամբությունը ճնշելուց հետո կտրուկ փոխվեց թուրքական կառավարության՝ քրդերի նկատմամբ ունեցած դիրքորոշումը, և իշխանությունները բռնեցին նրանց սիրաշահելու ուղին։

1877 թ. մարտի 18-ին Կարինի կուսակալ Իսմայիլ փաշան Կարսի կառավարչին ուղարկած հեռագրում նշելով, որ իրենց անհաշտ թշնամին (ռուսները) միշտ էլ աշխատում է տարբեր նվերներով իր կողմը գրավել քրդական առաջնորդներին, հորդորում է յուրացնել գործելու այդ եղանակը և նշանավոր քրդերին իրենց կողմը ձգել, նրանց առջև նետելով հրացան, ժամացույց և այլ հրապուրիչ խայծեր[76]։

---

75 Տե՛ս «Մշակ», 1880, № 162։

76 П. И. Аверьянов, Курды в войнах России с Персией и Турцией в течение XIX столетия, Тифлис, 1900, էջ 105։

Բեռլինի կոնգրեսից հետո Բ. Դուռը դավադրաբար հայկական բարենորոգումներին հակադրեց քրդական հարցը և այն ուղղեց հայ ժողովրդի դեմ։

Թուրքական կառավարությունը ոչ միայն խանգարեց քրդերին հասկանալու, որ հայկական նահանգներում բարենորոգումների կենսագործումը օգտավետ է և քրդերին, այլև կարողացավ քրդական առաջնորդներին համոզել հակառակը։

Քուրդ ցեղապետ Հուսեյն աղան Ա. Թոփմախյանի հետ ունեցած զրույցում ասում էր, որ հայկական բարենորոգումների հարցը երևան գալուց հետո թուրքերը քրդերի հետ խիստ բարեկամական տոն են ընդունել և իրենց ձեռքով ցանկանում են օսմանյան երկիրը սրբել հայերից։ Այդ նպատակով «շատ մեծ գաղտնի աշխատություններ են եղել և լինում են»[77]։

Ռուս-թուրքական պատերազմի ժամանակ կառավարության կողմից քրդերին բաժանված քանի հազար նոր սիստեմի հրացանը, պատերազմից հետո, ոչ թե մոռացմամբ, այլ գաղտնի դիտավորությամբ նրանցից չհավաքվեց, որը և ողբերգական նշանակություն ունեցավ հայ ժողովրդի համար։

Սակայն քրդական առանձին առաջնորդներ ընկալում էին թուրքական կառավարության քաղաքականության դեմ իրենց համար վտանգավոր կողմերը և երբեմն զգուշանում Բ. Դռան թելադրանքով կատարվող ջարդերի ու հարստահարության ահավոր չափերից։ Երբեմն էլ նույնիսկ դիմադիր կանգնում կառավարության հայաջինջ քաղաքականության։

Քրդերն, իհարկե, ռուսական դիրքորոշում չունեին, բայց նրանց մի մասը հաճախ սիրաշահվում և անցնում էր Ռուսաստանի կողմը։

1877—1878 թթ. պատերազմի շրջանում, օրինակ, Կարինի և ռուսահպատակ բոլոր քրդերը Ռուսաստանի կողմն էին։ Դերսիմի քրդերը թշնամաբար էին տրամադրված թուրքական կառավարության նկատմամբ, բայց չեզոք դիրք էին բռնել, իսկ մյուսները փարել էին թուրքերին[78]։

77 Ա. Թոփմախյան, Մասիս լեռների հարավային ստորոտներ, Թիֆլիս, 1882, էջ 51։

78 П. И. Аверьянов, Курды в войнах..., էջ 177։

1878 թ. հոկտեմբերին սկսվեց Բադըր խանի որդիների՝ Հուսեյին և Օսման բեյերի գլխավորած քրդական շարժումը, որին անմիջապես հաջորդեց Շեյխ Օբեյդուլլայի 1880 թ., ապա Քուրդիստանի լողունդով բարձրացրած ապստամբությունը։

Ցարական կառավարությունը մերժեց Օբեյդուլլայի խնդրած օգնությունը, բայց վերջինս արժանացավ անգլիական դիվանագիտության խրախուսանքին ու նրա հրահրմամբ էլ սկսվեց այդ շարժումը[79], որն Օբեյդուլլայի արտահայտությամբ՝ ուղղված էր Մուհամեդի գահն ապօրինի զավթած Օսմանի հաջորդների դեմ[80]։

Բ. Դուռը, սակայն, փորձեց թեքել և ուղղել այն Վասպուրականի քրիստոնյա ազգաբնակչության ու հարևան Պարսկաստանի դեմ։ Բայց հակառակ Սամի փաշայի ու Բեհրի բեյի եռանդուն գործունեության, ինչպես նաև Բ. Դռան կողմից վարձված իր մերձավոր զինակիցներից շատերի ընդդիման, Օբեյդուլլան դեմ էր քրիստոնյա ազգաբնակչության ոչնչացման մասին կառավարությունից ստացած հրահանգների կատարմանը։

1880 թ. հուլիսի վերջերին Շամդինանում հրավիրված շեյխերի ու խալիֆների համաժողովում, ուր քննարկվում էր թուրքական կառավարության դեմ ապստամբելու և անկախ Քուրդիստան ստեղծելու հարցը, պատասխանելով մի խումբ շեյխերի՝ քրիստոնյաներին բնաջնջելու մասին արնածարավ առաջարկներին, Օբեյդուլլան բացատրում էր, որ եթե մինչ այդ Դուռն օգնում է բոլոր քրդերին, ապա այդ արվում է նրանց քրիստոնեական տարրերին հակադրելու նպատակով. և եթե Անատոլիայում այլևս հայեր չլինեն, այն ժամանակ քրդերը թուրքական կառավարության աչքում կկորցնեն իրենց նշանակությունը։

---

79 Տե՛ս К. П. Камсаракан, Вторжение шейха Обейд-Уллы в Персию в 1880 г. («Сборник материалов по Азии», выпуск IX, СПБ, 1884, էջ 45), նաև И. А. Халфин, Борьба за Курдистан, М., 1963 էջ 117—123։

80 К. П. Камсаракан, էջ 38։

ժողովը հավանություն է տալիս աննշան մոլլայի հռչակված որդու փառաբանմանը և քրիստոնյաներին ջարդելու առաջարկը մերժվում է[81]։

1880 թ. հոկտեմբերին Օբեյդուլլայի Պարսկաստան արշավող բանակի շարքում սարդարի տիտղոսով ու ընդարձակ լիազորություններով ընդհանուր խորհրդական էր նշանակված հայազգի Սիմոն Զիլինկիրյանը, որն համարձակորեն արգելում էր քուրդ զինվորներին կողոպտել, կամ որևէ կերպ վնաս հասցնել իրենց արշավի ճանապարհին հանդիպած քրիստոնյա այն բնակիչներին, որոնք չէին դիմադրում և ի նշան հպատակության կապույտ դրոշներ էին պարզում իրենց տների վրա[82]։

Քրդական այս շարժումը նույնպես պարտվեց։ Նրա պարտության հիմնական պատճառներից մեկն այն էր, որ Օբեյդուլլան ցանկանում էր այդ ապստամբությամբ հասնել եվրոպական երկրների, հատկապես Ռուսաստանի և Անգլիայի գործուն միջամտությանը։ Անգլիան հարկավ, պատրաստ էր այդ անել, բայց ոչ հօգուտ Օբեյդուլլայի ցանկությունների կատարման։

Ապստամբ շեյխի՝ հայերի նկատմամբ ունեցած վերաբերմունքը շարունակվեց և հետագայում։

1881 թ. հունվարի 24-ին Ալաշկերտից «Մշակ»-ին գրում էին, որ Ալաշկերտում մի նոր շեյխ է հայտնվել, որն իր քանի աշակերտների հետ շրջում է ամենուր և սրբազան պատերազմ քարոզում հայերի դեմ։ Բայց միաժամանակ տեղեկացնում էին, որ Օբեյդուլլան նամակ է ուղարկել, ուր հրամայվում է «հայերին չվնասել և նրանց քրդերին բարեկամ համարել»[83]։

Օբեյդուլլայի նման դիրքորոշումը հարկավ չէր բացառում նրա ենթակա շեյխերի կողմից իրենց հրոսակներով ամենուր կողոպտելու հայ ազգաբնակչությանը։

---

81 Տե՛ս К. П. Камсаракан, էջ 35, հմմտ Карцов, Заметки о курдах. Тифлис, 1896, էջ 18։

82 Տե՛ս «Մուրճ», 1906, № 8, էջ 12—13։

83 «Մշակ», 1881, № 29։

Կ. Պոլիս գնացած բազմաթիվ դիմումները, օտարերկրյա դեսպանների միջամտությունը և պարսկական կառավարության պաշտոնական բողոքն ու պահանջը Օբեյդուլլային դատելու համար իրենց հանձնելու մասին ստիպեցին Բ. Դռանը շեյխին հրավիրել մայրաքաղաք։

Սկզբում նա երկմտում էր, վախենալով Բ. Դռան դավերից, որը սեփական երկրի ազգաբնակչության կողոպտման ու ջարդերի մեջ իր մասնակցությունը թաքցնելու նպատակով, հարկավ չէր տատանվի շեյխին մորթելու հրաման ուղարկել նրան ուղեկցող իր գործակալներին, ինչպես վարվել էր Ջալալեդդինի հետ[84]։

Սակայն Օբեյդուլլային շլացնող խաչկանքով Կ. Պոլիս տարան, ուր 1881 թ. հուլիսին արքայավայել ընդունելություն ցույց տալով, մոտ մեկ տարի պահեցին այնտեղ և հայերին ջարդելու մասին մանրամասն հրահանգավորելուց հետո խնամքով նախապատրաստեցին վաճառականի անվան տակ թաքնված նրա «գաղտնի փախուստը» դեպի Շամդինան[85]։

Վերադարձից անմիջապես հետո նա փութով բացատրում և պատվիրում էր «... իր մարդոց, որ հայոց հետ լավ վարվեն և թե քուրդերուն հայոց հետ թշնամաբար վարվիլը մինչև այժմ սխալ քաղաքականությամբ եղած է»[86]։

Օբեյդուլլան գուցե վերստին որոճում էր ազատ Քուրդիստանի համար պայքարի նոր, թերևս հայ-քրդական դաշնակցության և նման այլ մտահղացումներով շաղախված ծրագրեր, նորից անօգուտ դիմում Կ. Կամսարականին, խնդրելով Ռուսաստանի աջակցությունը[87], բայց Բ. Դռան ականջները սուր էին և ձեռքերն արյունոտ ու երկար։

1882 թ. վերջերին շեյխ Օբեյդուլլան ձերբակալվեց։ Թուրք զինվորները նրա հետ վարվեցին այնպիսի բարբարոսությամբ,

84 Տե՛ս «Մշակ», 1881, № 74։

85 Տե՛ս «Մուրճ», 1907, № 8, էջ 21։ Ըստ այլ տվյալների նա իրոք փախել էր (տե՛ս И. А. Халфин, էջ 140)։

86 «Մշակ», 1882, № 216։

87 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. 30, գ. 1568, թ. 34 (1882, սեպտեմբերի 5-ին Կամսարականի Նելիդովին գրած զեկուցագիրը)։

ինչպես ինքը բազմիցս վարվել էր իր ապստամբությունների ժամանակ։ Նրա կանանոցը մնաց թուրք զինվորների քմահաճույքին, իսկ ինքը մերկացվեց ու առանց չեչխական տաբացի, ներքնազգեստով, բռնեց աքսորի ճանապարհը։ 1883 թ. Բ. Դատան գաղտնի ցուցումով, այդ ճանապարհին էլ Օբեյդուլլան «մեռավ»[88]։

Հայ-քրդական դաշնակցության գաղափարը միշտ էլ սնուցված է եղել հայ գործիչների հայացքների առջև, բայց միայն մերթ ընդ մերթ առկայծել նրանց բեկբեկուն ուղիներում։

Այդ ասպարեզում նրանց ձեռնարկած ջանքերը կիսատ-պռատ էին և ապարդյուն էլ վերջացան։

Հայ-քրդական դաշնակցության ստեղծմանը չկարողացան նպաստել ոչ Խրիմյանի հեղինակավոր միջամտությունները և նրա հրահանգով գործող Հայկ Մելիք-Դադյանի, Փիլիկ Քեչյանի ու այլոց անձնվեր գործունեությունը, ոչ էլ նույն Խրիմյանի հանձնարարությամբ Տիգրանյան եպիսկոպոսի կողմից ստեղծված քրդական այբուբենն ու նրանով Նոր կտակարանի քրդերենի թարգմանված ընտիր հատվածները։

Ոչինչ չավելցին նաև հետագայում հայ ազգային կուսակցությունների, հատկապես դաշնակցության այդ ուղղությամբ ձեռնարկած քայլերը։

Հայ-քրդական դաշինքի ձախողմանը, իհարկե, մեծապես նպաստեց քրդական ցեղային կազմակերպությունների վիճակը, դասակարգային թույլ շերտավորման պարագան։

Քրդերն իրենք բավականին ուշ հասկացան դաշինքի անհրաժեշտությունը և միայն XIX դարի վերջերին, այն էլ սոսկ թղթի վրա, քրդական առաջին թերթի՝ Ժնևում հրատարակվող «Քուրդիստան»-ի էջերում փորձեցին ընդառաջ ելնել հայերին, նույնիսկ ջանալով հաստատել հայ և քուրդ ժողովուրդների ազգակցությունը[89]։

---

88 Տե՛ս «Մշակ», 1882, № 244։ Գուցե և Մեքքա հասնելուց հետո՝ ինչպես կարծում են ոմանք։

89 Տե՛ս «История XIX века», 1907, հատ. 8, էջ 2, տե՛ս նաև նույնը, M., 1939, հատ. 8, էջ 7։

Հայ-քրդական հարաբերությունները հարթ մի ճանապարհ ընկնելու դեպքում անշուշտ դրական արդյունքներ կըտային, փորձված ու ճշմարիտ հունով տանելով Թուրքիայի հարստահարվող ժողովուրդների պայքարի ընդվզումները: «Մարդ կը տարվի մտածելու,— խորհում էր Արշակ Ալպոյաճյանը,— թե հայ և քուրդ ժողովուրդների միջև եթե համակացություն մը ստեղծված ըլլար՝ թե մեր և թե անոնց ճակատագիրը տարբեր հանգամանք կստանար»[90]:

Միասնական պայքարի գործնական ծրագրեր չմշակվեցին նաև արաբ գործիչների հետ, որոնց կողմից հայ-արաբական դաշնակցության ծրագրային փաստաթղթերը երևացին շատ ավելի ուշ[91]:

Հայ գործիչներին մշուշոտ երևաց նաև հույն հայրենասերների հակաթուրքական գործունեությունը: Նրանք չսթափվեցին նույնիսկ Կոնստանդին Գարայանբուլոյի՝ մզկիթի առջև Աբդուլ Համիդի վրա բարձրացրած դաշույնի ցոլքից:

Պայքարի իրենց գնահատումներում ժամանակի հայ գործիչները թեպետ նշմարեցին, բայց չկարողացան հասնել հարստահարվող մյուս ժողովուրդների հետ համընդհանուր ճակատ կազմելուն: Ուստի արևմտահայ ազգային-ազատագրական շարժումը մեկուսացած մնաց դրացի քուրդ, ասորի, հույն, արաբ ժողովուրդների ազատագրական պայքարից և նրանց հետ միասին էլ չկարողացավ դուրս գալ ազատագրական շարժման մայրուղի:

* * *

Սակայն եթե Թուրքիայի մյուս հարստահարվող ժողովուրդների և արևմտահայության միջև չկնքվեց ցանկալի դաշինք, ապա արևելահայ ժողովուրդն իր սեփական գործն համարեց պայքարել հանուն հոշոտվող եղբայրների ազատագրման:

---

90 Տե՛ս Գ. Երևանյան, Պատմություն Չարսանճակի հայոց, Պեյրութ, 1956 (Առաջաբան):

91 Տե՛ս Е. К. Саркисян, Экспансионистская политика Османской империи в Закавказье, Ереван, 1962, էջ 89:

Թիֆլիսում, Բաքվում, Երևանում, Ալեքսանդրապոլում, Շուշում, Մոսկվայում, Պետերբուրգում, ինչպես նաև Եվրոպայի մի շարք քաղաքներում ստեղծված հայկական գաղտնի կազմակերպություններն ու խմբակները, չունենալով գործունեության միասնական ծրագիր, այս կամ այն կերպ նպաստում էին Արևմտյան Հայաստանում խմորվող ազատագրական շարժմանը։

1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի ավարտից հետո, հատկապես 80-ական թվականների սկզբներին, սկսվեց արևելահայ գործիչների մասսայական անցումը «Երկիր», ինչպես նաև կամավորական խմբերի ստեղծումը՝ արևմտահայերին զինված օգնություն ցույց տալու նպատակով[92]։

Ստ. Մալխասյանի վկայությամբ,— այդ շրջանում Պետերբուրգի հայ ուսանողներից շատերը թողնում էին ուսումը, մեկնում Տուլա և զինագործություն սովորելով, անցնում Պարսկաստան։ Տեղակայվելով Մակուում, նրանք զբաղվում էին արևմտահայերին զենք հայթայթելով։

Աշուղ Ջամալին (Մկրտիչ Տալյան) իր հուշերում պատմում է, որ ինքը՝ Ջիվանին և շատ ուրիշներ, 1879—1880 թթ., Ալեքսանդրապոլում ցուցակագրում էին այն կամավորներին, որոնք ցանկանում էին անցնել Արևմտյան Հայաստան։ Ալեքսանդրապոլի, Կարսի և Ախալցխայի 208 հոգուց կազմված կամավորական միացյալ խումբը նույնիսկ մեկնեց Ալաշկերտի ուղղությամբ, բայց շուտով ետ վերադարձավ[93]։

Սահմանին մոտեցած մյուս խմբերը, այդ թվում Րաֆֆու «Խենթ»-ի հերոս Սամսոն Տեր-Պողոսյանի ղեկավարած ջո-

---

92 Նշենք, որ «Երկիր» անցնելը, 80-ական թվականներին, երբեմն կատարվում էր այնքան անկազմակերպ, ինքնագլուխ ու խիստ հասարակ եղանակով, որ 1881 թ. ապրիլին Թիֆլիսի Մոնաստիրևի մասնավոր գիմնազիայից այդ նպատակով փախած Բայբուրդսկին, Օհանովը և Օթարիձեն ձերբակալվում են և ետ վերադարձվում հազիվ Երևան հասած, իսկ «Վան եկողներից մեկն էլ ինձ դառն արտասուքով պատմեց, որ ճանապարհին իր հետ եկող կովկասցի ընկերոջը գայլերը կերան» (Հորիզոն», 1916, № 138, Փիրումյանի հուշերը)։

93 Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, էջ 178--181։

կատը, նույնպես հետ վերադարձան, երբ Խրիմյանի հետ տեսակցած սուրհանդակներն հայտնեցին, որ Արևմտյան Հայաստանում այդ օրերին արտակարգ ոչինչ չի սպասվում, ուստի սահմանն անցնելու և ապստամբներին օգնելու անհրաժեշտություն չկա[94]։

Այդ առթիվ Մ. Խրիմյանը Հ. Նշկյանին գրում էր. «Լսած եք անշուշտ որ Մասիսի հրաբուխ բորբոքեր է ինքնին, կարծելով, որ Վարագա և Սիփան լեռներու հրաբուխներ ևս բորբոքած են»[95]։

Ոգևորությունն այնքան վառվռուն էր ու համատարած, որ Թիֆլիսում 16-ամյա գեղատի մի օրիորդ, սեփական նախաձեռնությամբ գողանում է հոր՝ նկարիչ Քյաթիպյանի ատրճանակը և նվիրում երկիր մեկնողներին[96]։

1881 թ. Մոսկվայում կազմակերպվեց հայ ուսանողների «Հայրենասերների միություն»-ը[97], որն իր օրգանի «Միություն» խորհրդանշանն համարվող դաշույնով ու ատրճանակով ճակատված հայերին առաջին հեղափոխական թերթի՝ «Ազատության ավետաբեր»-ի էջերում ու հրապարակած թռուցիկներում մի քանի տարի շարունակ սոցիալական ու ազգային-ազատագրական պայքարի էր կոչում արևմտահայ ժողովրդին։

«Միություն» ղեկավարները, հատկապես Ներսես Աբելյանը, կրում էին ռուս նարոդնիկների շեշտված ազդեցությունը և իրենց քաղաքական ուղեգիծն ակոսում օտար ու սեփական կեղեքիչներից ազատագրվելու դրոշով։

«Հայրենասերների միություն»-ը կապեր էր ստեղծել նույն նպատակին հետամուտ այլ խմբակների, այդ թվում՝

94 Տե՛ս «Արմենիա», 1906, № 23։

95 Հ. Նշկյան, Առաջին կայծերը, էջ 114։

96 Տե՛ս «Հորիզոն», 1916, № 93։

97 «Միություն» աչքի ընկնող անդամներն էին Դավիթ Ներսիսյանը, Թամար Ադամյանը, Ներսես Աբելյանը, Միքայել Ջալյանցը, Մարգար Արտեմյանը, Աբրահամ Դաստակյանը, Սիմոն և Սրապիոն Տեր-Գրիգորյան երկվորյակ եղբայրները և ուրիշներ։

Երևանում գործող «Հայասեր-ազգասեր» կազմակերպության հետ[98]։

1881 թ. վերջերին Երևանում հիմնադրվեց հրատարակչական գաղտնի մի ընկերություն, որն 1882 թ. նոյեմբերին համաձուլվեց Երևանում կազմակերպվող «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» բաժանմունքին, որի կորիզն էլ դարձավ «Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը։

«Հայրենասերների միության» անդամ, Մոսկվայի համալսարանի ուսանող Սրապիոն Տեր-Գրիգորյանը նամակագրական կապերի մեջ էր «Հայասեր-ազգասեր»-ի անդամների հետ և ինքն էլ փաստորեն այդ կազմակերպության գործուն անդամներից մեկն էր։ Կազմակերպության անդամներից մեկ ուրիշը՝ Երևանի գիմնազիայի աշակերտ 20-ամյա Ավետիս Օհանջանյանը ոստիկանական հետաքննության ժամանակ խոստովանում է, որ գիմնազիայում գոյություն ունի գաղտնի խմբակ, որի նպատակն է «օգտակար լինել իրենց հայրենիքին՝ Հայաստանին, ինչպես ռուսները՝ Ռուսաստանին»[99]։

«Հայասեր-ազգասեր» կազմակերպությունը հայ երիտասարդությանը և ողջ ժողովրդին կոչ էր անում սեփական ուժերով պայքարել հանուն ազատության։

Հայ ժողովրդին հայրենիքի ազատության համար անձնազոհ պայքարի կոչող մի թռուցիկում դատապարտվում էր մռայլ ու ավերիչ «Ձմռան»՝ ցարիզմի կողմից փոքրաթիվ ժողովուրդների նկատմամբ վարած գաղութային քաղաքականությունը, հորդորում աշխատավոր ժողովրդին՝ պաշտպանել իր դարավոր իրավունքները[100]։

Երևանում մասսայաբար տարածվում էին հայ թագավոր-

98 Հայաստանի պետական պատմական արխիվում պահպանվող Երևանի ժանդարմական վարչության զեկուցագրում «Հայասեր» և «Ազգասեր» անունների առանձին-առանձին գրված լինելն է ըստ երևույթին Ն. Պետրոսյանին շփոթության մեջ գցել, որը անջատում և ներկայացնում է նրանց որպես առանձին կազմակերպություններ։ Իսկ Թոմաս Մհերյանը չգիտես ինչու նույն հեղինակի մոտ դարձել է Մհերովիչ (Տե՛ս Ն. Պետրոսյան, «Րաֆֆի», Երևան, 1959, էջ 57—58)։

99 ՀԿՊՊԱ, ֆ. № 51 գ/115 գ, ց. № 2, գործ 12, թ. 1—25։

100 Նույն տեղում։

ների ու զորավարների, Անիի և Հին Հայաստանի այլ քաղաքների նկարները, ինչպես նաև «Մայր Հայաստան» («Հայաստանի ոգին») հանրատարած նկարը, որոնք յուրաքանչյուր հայ ընտանիքի ու հայկական դպրոցի սեփականությունն էին դառնում[101]։

Որպես շարժման ակտիվ ու ղեկավար գործիչներ՝ հանդես էին գալիս «Արաքս և Կուր գետերի դանդատար» հայրենասիրական բանաստեղծության հեղինակ Ռուբեն Ջալալյանը (Հասան-Ջալալյան), բժիշկ և հասարակական գործիչ, Երևանում հրատարակված առաջին հանդեսի՝ «Առողջապահական թերթ»-ի (1881) հիմնադիր ու հրատարակիչ, հետագայում Երևանի քաղաքագլուխ Լևոն Տիգրանյանը, Վասիլ Եղիազարյանը, Հովհաննես Տեր-Զաքարյանը, Երևանի իգական դպրոցների տեսուչ օրիորդ Գայանե Հովհաննիսյանը (հետագայում տիկին Մատակյան), որին դեռ 1879 թ. Ռ. Պատկանյանը նվիրել էր իր մի բանաստեղծությունը, Տրդատ Վարդանյանը, Ստեփան Զելինսկին, Սարգիս Բեկնազարյանցը, Միքայել Միքայելյանը, Տիգրան Նավասարդյանը, Տիգրան Աֆրիկյանը, Հայկ Մատակյանը, Արամ Մելյանցը, Թովմաս Մհերյանը, Սրապիոն և Սիմոն Տեր-Գրիգորյանները, Ավետիս Օհանջանյանը և ուրիշներ[102]։ Միջին դիրքերից հայրենասիրական տաղեր էր հեղում կազմակերպության ղեկավար անդամ Վասակ Պապաջանյանի, ազգային-պահպանողական շյուղերից հյուսված «Պսակ» լրագիրը։

Ընկերության անդամները նամակագրություն ունեին նաև Րաֆֆու հետ, որն իր նամակներից մեկում Ռուբեն Ջալալյանին հանձնարարում էր օգնել Կ. Պոլսի «Արարատյան» ընկերության հանձնարարությամբ արևմտահայերի ազատագրման ինչ-որ գաղտնի ծրագրերով Անդրկովկասում շրջող Շահնազարին[103]։

---

101 ՀԿՊՊԱ, ֆ. № 51գ/115գ, ց. № 2, գործ 12, թ. 1—23։

102 Մեղադրվողների լրիվ ցուցակը տե՛ս ԼԿՊՊԱ, ֆ. 1405, 1883—84, թթ., ց. 83—84, գ. 11224, թ. 60—65։

103 Տե՛ս ԼԿՊՊԱ, ֆ. 1405, 1883—84 թթ., ց. 83—84, գ. 11224, թ. 1—279։ (ՀԿՊՊԱ-ում պահպանված փաստաթղթում սխալմամբ Շահնա-

Կազմակերպությունն, «Հրատարակչական ընկերություն» անվան տակ, զբաղվում էր հանգանակությամբ և այլ միջոցներով, նոր տիպի զենքի ձեռք բերմամբ ու այն, ինչպես նաև գումարի որոշ մասը Արևմտյան Հայաստան առաքելու հարցով։

Գործնական միջոցառումներ էին ձեռնարկվել հատկապես Ռ. Ջալալյանի կողմից, որը գաղտնի նամակագրությամբ սերտ կապեր ստեղծելով Վանի ռուսական փոխհյուպատոս Կ. Կամսարականի հետ, զգալի աշխատանք էր կատարում ինչպես զենքը և հանգանակած գումարները Արևմտյան Հայաստան ուղարկելու, այնպես էլ ռուս-թուրք-պարսկական սահմանագլխին բնակվող քրդական ցեղերի հետ դաշինք կնքելու և համագործակցելու միասնական պլան մշակելու ուղղությամբ[104]։

Լևոն Տիգրանյանը Կ. Պոլսի, Վանի և Արևմտյան Հայաստանի այլ քաղաքների հայրենասերներին գրած նամակներում խորհրդակցում էր նրանց հետ համահայկական ապստամբություն բարձրացնելու շուրջը։ Վերջիններս իրենց հերթին քննարկում ու միաժամանակյա ապստամբության հորդորներ էին ուղղում իրենց արևելահայ համագործակիցներին[105]։

Իր գոյության առաջին շրջանում, միայն արևմտահայ եղբայրներին օգնելու հետամուտ շարժումը, մյուս ծայրով ուղղվելով ցարական կառավարության դեմ՝ հրապարակի վրա, որպես օրակարգի հարց, դնում էր արդեն միացյալ ու անկախ Հայաստանի գաղափարը։

Ռուսաի հայ ազատագրական շարժումները 19-րդ դարի 80-ական թվականներին իրենց վերելքն էին թևակոխում սուլթանական Թուրքիայի և ցարական Ռուսաստանի երկկողմանի լուծը տապալելու նշանաբանով։

«Հայասեր-ազգասեր»-ի անդամ Գ. Հովհաննիսյանն իր ենթակայության տակ գտնվող դպրոցներում մտցրել էր հայ-

---

զորյան)։ Կարծում ենք սա Կ. Պոլսի դպրոցասիրաց — Արևելյան ընկերության տնօրեն Կ. Շահնազարն էր։

104 ՀԿՊԴԱ, ֆ. 51դ/115գ, ց. 2, գործ 12, թ. 1—23։

105 Նույն տեղում։

*կական հայրենասիրական երգերի պարտադիր ուսուցում։ Այնպիսի երգերի, որոնցում գովերգվում էր հայ ժողովրդի անցյալը, դատապարտվում հալածական ներկան և կոչ արվում հայ ժողովրդին՝ պայքարելու հանուն Հայաստանի վերածնության*[106]*։*

*Հայկական դպրոցներում հայրենասիրական երգեր ուսուցանելու հետ միասին, քաղաքային գիմնազիայի հայոց լեզվի ուսուցիչ Բեկնազարյանը և ուրիշներ աշակերտներին բացատրում ու կրկնում էին. «Երգեցեք, ուրախացեք և ամբապնդվեցեք ձեր հույսերում, որ շուտով կլինի հայկական թագավորություն»*[107]*։*

*1883 թ. Երևանի ժանդարմական վարչությունը, հարկավ չափազանցնելով իրերի դրությունը, կառավարության ուշադրությունն էր հրավիրում հայկական դպրոցներում մատաղ սերնդի դաստիարակության ուղղությունը, հայ գործիչներին մեղադրում՝ Հայաստանի միավորման, նրա նախկին անկախությունը վերականգնելու նպատակով այդ դպրոցներում մոլեռանդ-հայրենասերներ դաստիարակելու հակապետական «հանցավոր» գործունեության մեջ»*[108]*։*

*1883 թ. մարտի 19-ին Երևանի քաղաքային այգում Թովմաս Մհերյանի հետ ունեցած վեճի ժամանակ քաղաքային գիմնազիայի դիրեկտոր Վ. Բրաժնիկովի արհամարհանքով նետած «արմյաշկա» խոսքի հետ, նրա դեմքին իջան Մհերյանի շառաչուն ապտակները, գետնատարած գլորելով նրան այգու ծառուղիներից մեկում։ Մհերյանի ձերբակալման ու հետաքննության ժամանակ բացվեց «Հայասեր-ազգասեր» կազմակերպության կծիկը և 38 մարդ կանգնեցին դատաստանի առջև*[109]*։*

---

106 *ՀԿՊՊԱ, ֆ. 51գ/115գ, ց. 2, գործ 12, թ. 1—23։*

107 *Նույն տեղում։*

108 *Նույն տեղում, նաև Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական դպրոցի, 1914, Թիֆլիս, էջ 279։*

109 *Շուտով Ներքին գործերի ու Արդարադատության մինիստրություններից ցուցում է ստացվում դատել միայն յոթին՝ Թ. Մհերյանին, Հ. Մատակյանին, Ռ. Ջալալյանին, Լ. Տիգրանյանին, Գ. Հովհաննիսյանին, Հ. Ջա-*

«Այդ առաջին քաղաքական գործն էր,— գրում է Լեոն,— որ ռուս բյուրոկրատիան հարուցանում էր հայերի դեմ»[110]։

Երևանի դատական ու ոստիկանական մարմինները փորձեցին նույնիսկ քաղաքի ստորադույն տարրերի, հատկապես քրեական հանցագործ Արշակ Բաբախանյանի և նրա քահանա հոր միջոցով մեղադրանքի զրպարտչական փաստաթղթեր թխել «Հայասեր-աղքասեր»-ի դեմ[111]։

Ապրիլի 24-ին Երևանում կատարված մասսայական խուզարկության ժամանակ Ռուբեն Ջալալյանի մոտ հայտնաբերվեցին Րաֆֆու՝ նրան հասցեագրված 1879 թ. օգոստոսի 16-ի նամակը և այլ գրություններ։ Սրանք պատճառ դարձան ապրիլի 30-ին Թիֆլիսում՝ «Մշակ»-ի խմբագրությունում ու Րաֆֆու բնակարանում կատարված խուզարկության[112], որի հետևանքով «Մշակ»-ը ժամանակավորապես դադարեցվեց, իսկ Րաֆֆին ենթարկվեց տնային կալանքի։

Ավելին, Օհանջանյանի ձերբակալության ժամանակ հայտնաբերված նամակների հիման վրա խուզարկության ենթարկվեց Բոգորոդսկում հանգստացող Սրապիոն Տեր-Գրիգորյանի բնակարանը և այնտեղ գտնված թռուցիկների ու նամակների հետքերով հետապնդումներ սկսվեցին նաև Պետերբուրգի, Մոսկվայի և Խարկովի հայ ուսանողության նկատմամբ[113]։

Արևմտահայ ժողովրդի ազատագրման հարցով առավել եռանդուն էր գործում Թիֆլիսում, 1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմի օրերին ձևավորված, այսպես կոչված, Արծրունու խմբակը, որն 80-ական թվականների սկզբներին ակտիվորեն համագործակցում էր ինչպես Մոսկվայի «Հայրենասերների միության», Երևանի «Հայասեր-աղքա-

---

քարյանին և Սրապիոն Տեր-Գրիգորյանին, ինչպես նաև մեծ աղմուկ չբարձրացնել, որը կարող է գրգռել ու նոր թափ հաղորդել սկսված շարժմանը (տե՛ս ԼԿՊՊԱ, ֆ. 1405, 1884 թ., ց. 521, գ. 417, թ. 222—255)։

110 Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական դպրոցի, էջ 279։

111 Տե՛ս ԼԿՊՊԱ, գ. 1405, 1883—1884 թթ., ց. 83—84, գ. 11224, թ. 1—279։

112 ՀԿՊՊԱ, ֆ. 51զ/115զ, ց. 2, գործ 12, թ. 1—23։

113 Նույն տեղում։

ներ»-ի, այնպես էլ Կ. Պոլսի և Արևմտյան Հայաստանի գավառնի խմբակների հետ, իր վրա վերցնելով ղեկավար կենտրոնի իրավասությունները։

Պատահական չէ, որ Գր. Արծրունու գրական-հասարակական գործունեության 25-ամյակի առթիվ, որպես նվեր Վանից ստացված խաչաձև սրերով ոսկյա վահանի վրա գրված էր. «Թուրքահայաստանի ազատագրման առաջնորդին»[114]։

1883 թ. մայիսի 17-ին իր բնակարանում կատարված խուզարկությունից քիչ անց Րաֆֆին Մոսկվա՝ Մելքոն Փանյանին գրում էր. «Վատ ժամանակների մեջ ենք ապրում... լուից ուղտ են շինում և մարդկանց չարչարում են։ Խնդրեմ ձեր նամակներում զգույշ լինեք, շատ հավանական է, որ իմ անունով եկած նամակները կբաց անեն։ Ձեր առաջվա նամակները, թեև բոլորովին անմեղ էին, այնուամենայնիվ ես ոչնչացրի»[115]։

Այդ օրերին Մոսկվայից Թիֆլիս է գալիս «Հայրենասերների միության» հիմնադիր անդամներից մեկը՝ Ներսես Աբելյանը և հանդիպում Րաֆֆու հետ։ Վերջինս այդ առթիվ, հուլիսի 12-ին Փանյանին հասցեագրած նամակում գրում էր. «Պարոն Աբելյանը ինձ ասաց, որ Դուք մի քանի մասին անհանգիստ եք. միամիտ կացեք, ինձ մոտ ձեր կողմից եկած ոչինչ չեն գտել»[116]։

Թիֆլիսի խմբակում Արծրունու և Րաֆֆու հետ միասին աշխատում էին «Խենթ»-ում անմահացված բժշկապետ, 1881 թ. Թիֆլիսում ստեղծված «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» նախաձեռնող ու հիմնադիր Բագրատ Նավասարդյանը, գեներալ Դիմիտրի Տեր-Ասատուրյանը, հայ մեծանուն դրամատուրգ Գաբրիել Սունդուկյանը, Արսեն Թոխմախյանը, Սև Սանդրոն (Ալեքսանդր Սիմոնյանը), Աբրահամ Դաստակյանը և ուրիշներ։ Խումբը, հատկապես «Կովկասի հայոց բարեգործական ընկերության» միջոցով արագ ճյուղավորվում էր, որպես սկզբունք պահպանելով միմյանց չճանա-

114 Տե՛ս Магда Нейман, Армяне, էջ 227։

115 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 10, էջ 592։

116 Նույն տեղում, էջ 599։

չելու և գրագրությունը ծածկագիր այբուբենով կատարելու պայմանը[117]։

1880 թ. «Մշակ»-ում հրապարակած իր «օրվա կենսական հարցը» առաջնորդողում, Բ. Նավասարդյանը կոչ էր անում համախմբվելու և «օգնելու թշվառ հայերին, ուր և լինեն նոքա»:

«Հայոց ազգային պատմությունը,— գրում էր նա,— այսօր ներկայացնում է մի ճգնաժամ։ Հիվանդ մարդի ճգնաժամի նման դա կարող է կամ մահացնել, կամ կենդանացնել ... Հայոց պատմությունը կարդալուց մարդ ամենից շատ վշտանում է նրա վրա, որ իրենք հայերը գործը իր ժամանակին չեն կատարել։ «Ախ ասում են, թե ես ապրեի այնինչ րոպեին, տես թե ինչ կանեի»։ Ի՞նչ եք կարծում պարոններ, այս օրվա օրը, հենց «տես թե ինչ կանեի» անելու ժամանակն է»[118]։

Նույն շրջանում Բ. Նավասարդյանի հանձնարարությամբ Թիֆլիսից Կ. Պոլիս էր մեկնել ու բարձր գիրքի հասել ռուս բժշկուհի Աննա Իվանովնա Սորոկինա-Շչերբանինան և հետամուտ էր հայկական դատի հաջողությանը[119]:

Նշանակալի է Բ. Նավասարդյանի՝ այդ ժամանակաշրջանի արևմտահայ ազգային-ազատագրական շարժման և հատկապես «Պաշտպան հայրենյաց»-ի հետ կապված գործունեությունը։ «Սրտիս մեջ ամենեն մեծ տեղը Ձեր բաժինն է»,— հետագայում երախտագիտությամբ գրում էր նրան «Պաշտպան հայրենյաց»-ի վտարանդի ղեկավարներից մեկը՝ Կ. Նշկյանը[120]:

Նշենք, որ Թիֆլիսի խմբակի հիմնական ուղղությունը օրինական ճանապարհով, ռուսական կառավարության հաճությամբ՝ արևմտահայության Թուրքիայի լծից ազատագրելու խնդիրն էր, որին պետք է ակտիվորեն մասնակցեին

117 Տե՛ս Ն. Ք. Գեղամյան, Հիշողություններ («Լումա», 1906, № 4)։

118 «Մշակ», 1880, № 87։

119 ՀԿՊՊԱ, ֆ. 335, գ. 11, թ. 46—48։

120 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Նավասարդյանի ֆ., 2-րդ — 271։

իրենք՝ արևմտահայերը։ Ըստ երևում կային տակտիկական տարաձայնություններ, հատկապես ապստամբության նախապատրաստման գործում արևմտահայերին օգնելիս նախապատվությունն Արևմտյան Հայաստանի այս կամ այն նահանգին տալու հարցում։ Գր. Արծրունին ու Րաֆֆին ավելի կապված էին Մուշի և Ալաշկերտի հետ, ինչպես վկայում է Րաֆֆու մտերիմներից մեկը՝ Գաբրիել Միրզոյանը (Գաբոն), հիշեցնելով այդ շրջանում գործող Արաբոյի և Թավաքալյանի մասին[121]։

Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ղեկավարներից մեկի՝ Կարապետ Նշկյանի, տարիներ անց, մի նամակում, Արծրունուց ունեցած դժգոհությունն էլ, գուցե գալիս էր դրանից[122]։

«Պաշտպան հայրենյաց»-ի հետ կապված էին հատկապես Բ. Նավասարդյանը, գեներալ Դ. Տեր-Ասատուրյանը և «Պեպոյի» հանրահռչակ հեղինակը, որը դեռ մի քանի տարի դրանից առաջ, Բ. Նավասարդյանի աջակցությամբ գործակցում էր արևմտահայ ժողովրդի ազատագրման ջատագով անձանց, իսկ ավելի ուշ դարձավ Թիֆլիսի գաղտնի խմբակի ակտիվ մասնակիցը։

Այս մտայնությունն էլ մղեց նրան դեռ Բեռլինի կոնգրեսի օրերին Եվրոպայից գրել Թիֆլիս՝ կնոջը. «Ինձ թե կու սիրես, իմ քաղցր Սոնա ջան, ուխտ դի աստծու մոտ, որ քու էրեխանց հիդ քու ասկի լիզուն խոսիս»[123]։ Իսկ կյանքի մայրամուտին, սրտում պահած հոշոտվող ժողովրդի անհուն վիշտը, իր կտակում նա գրում էր. «Մնաս բարով, իմ սիրելի և պաշտելի ասկ. Աստուծ վաթանիդ արժանի անե»[124]։

Պատահական չէ, որ իր «Երգումն» բանաստեղծությունը, նվիրված Կարինի «չորս հարյուր բանտարկելոց» և «Տաճկա-

---

121 «Մշակ», 1920, № 64։

122 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Նավասարդյանի ֆ., 2-րդ —271։

123 Գ. Սունդուկյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, Երևան, 1961, էջ 348։

124 Տե՛ս Ե. Շահազիզ, Գաբրիել Սունդուկյանց, 1927, Երևան, էջ 20։

*հայերի օրհասս»-ը, Ռ. Պատկանյանը 1883 թ. հունվարի 1-ին և 10-ին թվագրած երկտողների հետ, նախ ծանոթանալու, ապա տպագրության տալու համար, ուղարկում է Գ. Սունդուկյանին*[125]*։*

*Բ. Նավասարդյանը Տիգրան Կերեքցյանի անտիպ հուշերի տողամիջյան դիտողություններում վկայում է, որ իր հետ միասին «Պաշտպան հայրենյաց»-ին օգնում էին նաև Գ. Սունդուկյանն ու Դ. Տեր-Ասատուրյանը*[126]*։ Բ. Նավասարդյանի և Գ. Սունդուկյանի ջերմ բարեկամությունն ու «սուրբ» նպատակի համար պայքարի նրանց գաղափարական միասնությունը վկայող Սունդուկյանի մի նամակում, ուղղված Ժնևում գտնվող Նավասարդյանին, կարդում ենք. «Ընկերության*[127] *գործերով սաստիկ պարապում եմ, դա նշանակում է, որ բացի սուրբ գործին ծառայելուց, ես դարձյալ քեզ համար եմ պարապում, որովհետև քո պատվերն եմ կատարում ...Սիրտդ լավ պահիր Բագրատ ջան, և չմոռանաս մեկ բոպե, որ դու քեզ չես պատկանում, դու պատականում ես մարդկության գաղափարին, պատկանում ես հայությանը»*[128]*։*

*Իրեն ամբողջությամբ հայ ժողովրդի ազատագրական պայքարին էր նվիրել Թիֆլիսի խմբակի պայծառ ու անխոնջ մի գործիչ, ժամանակակիցների վկայությամբ՝ հայ ազգային շարժման ճանապարհը մատնացույց անող կենդանի լրագիրն ու միաժամանակ գործունյա ղեկավարներից մեկը՝ Արսեն Թոխմախյանը։ Հայրենաշունչ ղեկուցումներով նա մերթ երևում էր Թիֆլիսի հասարակական սրահներում, մերթ որպես կազմակերպիչ շրջում էր Անդրկովկասի հայաշատ քաղաքները, և մերթ էլ դեգերում Վանի, Կ. Պոլսի ու Կարինի ճանապարհներին։*

---

125 *Տե՛ս* Ռ. Պատկանյան, *Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1963, էջ 309։*

126 *ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Նավասարդյանի ֆ., 9—III։*

127 *Խոսքը վերաբերում է «Կովկասի հայոց բարեգործական ընկերության»։*

128 Գ. Սունդուկյան, *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, էջ 369։*

Ռուս-Թուրքական պատերազմից անմիջապես հետո նրան տեսնում ենք Ախալցխայում՝ քաղաքագլուխ Ն. Գեղամյանին շարժման մեջ ներգրավելիս[129], ավելի ուշ՝ Կ. Պոլսում, Կարինում, Վանում, ապա Մակուում, որը նա առաջարկում էր գնել և դարձնել հայ ազատագրական շարժման հավաքատեղի ու կենտրոն[130]։

Ազատագրական շարժման հաղթանակի գործում մեծ նշանակություն հատկացնելով հանդամանորեն ու երկարատև նախապատրաստվելուն, Թոխմախյանը զգուշացնում էր. այնպես պատրաստվել, որ երբ նորից որոտան չարագուշակ թնդանոթները, իրենք թմրած կամ քնած չլինեն[131]։

1883 թ. հունվարին «Հայասեր-ազգասեր»-ի գործունեության եռուն շրջանում Թոխմախյանին հանդիպում ենք Երևանում՝ երիտասարդների գլուխ անցած, «Մշակ»-ի թղթակից Դր. Նիկողոսյանի դեմ «Արձագանք»-ի ուղղած հոդվածը պարունակող համարները ոչնչացնելիս։

Նրանք հավաքվել էին «իրենց խմբապետ... Արսեն Թոխմախյանի մոտ»,— գրում է «Արձագանք»-ը, պատռում էին հիշյալ համարները, իսկ «ինկվիզիտոր Արսեն Թոխմախյանը» հայտարարում էր, թե այդպես պիտի վարվեն ընդհանրապես «Մշակ»-ի ու նրա աշխատակիցների բոլոր հակառակորդների հետ[132]։

Ժողովրդին առավել օգտակար լինելու սին միտումը Թոխմախյանին մղեց 1883 թ. նոյեմբերի վերջերին, Վարագում, Խրիմյանի կողմից ձեռնադրվելու վարդապետ։ 1884 թ. նա նշանակվեց Վարագի վարժարանի տեսուչ։

---

129 Ն. Ե. Գեղամյան, *Հիշողություններ* («Լումա», 1906, № 4)։

130 Ա. Թոխմախյանն ու Հարոն (Նիկողայոս Տեր-Հարությունյան) Կ. Պոլսում մասնակցելով Ազգային ժողովի 1882 թ. հունիսի 17-ի նիստին, Տրապիզոնի վրայով անցնում են Կարին, այնտեղից Բ. Նավասարդյանը, Ա. Թոխմախյանը և Տ. Նավասարդյանը (առաջինի եղբորորդին) մեկնում Վան, ապա Մակու։ 1882 թ. սեպտեմբերին Բ. Նավասարդյանն արդեն Թիֆլիսում էր։

131 Ա. Թոխմախյան, *Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին*։

132 «Արձագանք», 1882 թ., էջ 70 (№ 5), տե՛ս նաև «Մշակ», 1883 թ., № 2։

Փոթորիկներով լի նրա կյանքն ավարտվեց ահռելի մի մահով: Դաշնակցական նորաստեղծ կուսակցությունը, միևնույն տարում՝ 1891 թ., իրեն օծեց երկու հայրենասերների անմեղ արյունով: Կարինում, հետևից խփած գնդակով սպանվեց «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության հիմնադիր Խաչատուր Կերեքցյանը, իսկ Նախավկայի վանքում, խմբապետ Հունոն ողջ-ողջ թոնրի բոցերի մեջ նետեց թյուրիմացաբար դավաճանության մեջ մեղադրվող Սրբեն Թոխմախյանին:

1883 թ. օգոստոսին Ս. Թոխմախյանի հետ «Երկիր» էին անցել ու Խրիմյանի հանձնարարությամբ բեղուն գործունեություն ծավալել նաև Հայկ-Օննիկը (Հայկ Մելիք-Դադյան), Տիգրան Փիրումյանը, Սանդալը (Ալեքսանդր Պետրոսյան), որը, սակայն, դժվարություններին չդիմացավ ու շուտով վերադարձավ Թիֆլիս, և ուրիշներ:

1880-ական թվականների սկզբներին, Ս. Բարդուղիմեոսի վանքի բակի մի անկյունում, Աղբակի սովալլուկ որբերին հավաքած ուսուցանում էր Խրիմյանին սիրելի դարձած կովկասցի մի երիտասարդ՝ պարոն Զաքե անունով: Բայց ավելի հայտնի կարմրաշապիկ վարժապետ անվամբ, շնորհիվ իր գարիբալդիական կարմիր վերնաշապիկի, որ միշտ կրում էր[133]:

Դա «Երկիր» անցած «սերմնացաններ»-ից էր՝ նշանավոր Ալեքսանդր (Զաքար) Թավաքալյանը (հետագայում Բագրատ վարդապետ Թավաքալյան), Փիրումյանի վկայությամբ, այնպիսի մի անձնվեր գործիչ, «որի նմաններն հայոց աշխարհում գտնելու համար պետք է ճրագը ձեռքին ման գալ»[134]:

1883 թ. Լազարյան ճեմարանից փախչելով, Պարսկաստան է անցնում և Սալմաստում ուսուցչությամբ զբաղվում երիտասարդ Վարդան (Ալեքսանդր) Գոլոշյանը[135]:

---

133 «Մուրճ», 1906, № 4—5, էջ 28:

134 «Հորիզոն», 1916, № 121: Ա. Թավաքալյանի մասին տե՛ս նաև «Суд идет», 1924, № 8—10, էջ 602:

135 1885 թ. գրած իր մի բանաստեղծության մեջ պատանի Հ. Թումանյանը նկարագրում է Գոլոշյանի անցնելը.

«դեպի Հայաստան...
Նրա օգնության
ցավին կարեկից»,

Հայրենասիրական հոլերը «Երկիր» տարան նաև Կարապետ Փիլիպոսյանին (Հարություն Ստեփանյան), որը կարճ ժամանակ Վանի վարժարանոցում ուսուցչություն անելուց հետո, հատուկ նպատակներով ծառայության անցավ Կ. Կամսարականի մոտ, որպիսի հանգամանքը նրան հնարավորություն էր տալիս ազատ երթևեկելու Վան-Կարին-Կ. Պոլիս, ինչպես նաև Ալաշկերտ-Երևան-Թիֆլիս երթուղիներով[136]։

Արծրունու խմբակը դադարեց գոյություն ունենալուց 1883—1884 թթ., երբ նրա համար վերջնականապես պարզվեց, որ ցարական կառավարությունն այլևս չի ցանկանում, որ արևելահայերն զբաղվեն արևմտահայության հարցով։

Թիֆլիսում, հիշյալ խմբակից զատ, 1882—1883 թթ. ձևավորվեց ու մինչև 1886 թ. հարատևեց նարոդնիկական ինտերնացիոնալ կոմիտեից անջատված հայ նարոդնիկական առաջին խմբակը, որտեղ գործոն դեր ստանձնեցին Մոսկվայից Թիֆլիս եկած Ներսես Աբելյանը, Աբրահամ Դաստակյանը, Դավիթ Ներսիսյանը, Թամար Ադամյանը, Քրիստափոր Միքայելյանը, Սանդալը, Խաչատուր Մալումյանը, Գաբրիել Միրզոյանը, ապա նաև Սիմոն Զավարյանը, Գալուստ Տեր-Մկրտչյանը (Միաբան) և ուրիշներ։

«1882 թ., երբ ես գյուղումն էի,— գրում է Քր. Միքայելյանն իր հուշերում,— ընկեր Ա. Դաստակյանից մի նամակ ստացա (առաջին անգամ հայերեն լեզվով), որով նա հաղորդում էր, թե Թիֆլիսի կոմիտեն բաժանվել է առանձին ազգային խմբակների և հայկական խմբակի դերը այս նամակում բացատրվում էր հետևյալ խոսքերով՝ «Մեր այս կազմակերպությունը ամբողջովին կնվիրի իր գործունեությունը անբախտ հայ ժողովրդի անպաշտպան շահերին»[137]։

---

իսկ ավելի ուշ իր «Հին կռիվը», սրեմի հերոս Վահանի կերպարը կերտելիս, նա հավանաբար Դոլոշյանին է նկատի ունեցել (տե՛ս Հ. Թումանյան, Ե. Լ. Ժ., հատ. 6)։

136 Տե՛ս «Հայրենիք», ամսագիր, 1940, № 4։

137 Նույն տեղում, 1924, № 10, էջ 57։ Նշենք, որ նույն շրջանում Թիֆլիսի նարոդնիկական խմբից հայերի հետ միասին անջատվեցին նաև վրացիները, քիչ անց հանդես գալով Ռուսաստանից անջատվելու և անդրկովկաս-

Ցարական կառավարության կողմից հայկական դպրոցների փակման առթիվ, 1885 թ. փետրվարի 22-ի ամսաթվով խմբակի հրապարակած հայրենասիրական ցասկոտ թռուցիկում մարտահրավեր էր նետվում «իրեն հատուկ բռնակալությամբ» հայկական դպրոցներ փակող ռուսական միապետությանը, ապա բռնապետներ համարելով Ալեքսանդր III-ին, նրա մինիստրներին ու Կովկասի փոխարքային, ժողովրդին կոչ էր արվում պայքարի դրոշ պարզել նրանց դեմ[138]:

Այս խմբակն հրատարակում էր «Դրոշակ» խմորատիպ լրագիրը և տեղական հարցերի քննության հետ միասին, նյութական օգնություն կազմակերպում «Երկիր» մեկնողներին, փորձելով տեղական կապեր պահպանել նրանց հետ[139]:

* * *

XIX դարի 80-ական թվականների երկրորդ կեսերին դեռ շարունակվում էր Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի կենսագործման նշանաբանով և նրա հույսով տարվող պայքարը՝ մի կողմից եվրոպական դիվանագիտությանը դիմելու, մյուս կողմից «Երկիր» անցնելու և ապստամբական շարժումներ հրահրելու ճանապարհով:

Արտասահմանի հայկական գաղութներում շարունակվում էին բողբոջել նոր խմբակներ ու կազմակերպություններ՝ հետամուտ հայկական դատի հաջողությանը: 1885 Վանից արտաքսված Մ. Փորթուգալյանն անցնում է Եվրոպա, հաստատվում Մարսելում ու ձեռնարկում «Արմենիա» թերթի հրատարակմանը, որի էջերում, օգտվելով ազատ մամուլի հնարավորություններից, հրապարակվում էին թուրքական բռնապետական կարգերը մերկացնող ու հայ ժողովրդին զինված ինքնապաշտպանության կոչող մարտաշունչ հոդվածներ:

---

յան ժողովուրդների դաշնակցային պետություն ստեղծելու առաջարկով (տե՛ս նույնը, էջ 60):

138 ՀԿՊԴԱ., ֆ. 114, ց. 2, գ. 53, թ. 3, նաև Գ. Ղարաջյան, Հայ անդրանիկ հեղափոխական խմբակը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927, էջ 50—55:

139 Տե՛ս «Հորիզոն», 1916, № 93:

Քիչ ուշ, «Արմենիա»-ի մարտական ուղղությունից դժգոհ նրա մի խումբ գաղափարակիցներ Լոնդոնում, Կ. Հակոբյանի նախաձեռնությամբ, կազմակերպում են մի ընկերություն, որն իր առջև նպատակ էր դրել զուտ դիվանագիտական խաղաղ միջոցներով հասնել հայկական հարցի լուծմանը։

Այս ընկերությունն էր, որ 1887 թ. հոկտեմբերից սկսեց հայերեն և անգլերեն լեզուներով հրատարակել «Հայաստան» թերթը՝ Ժան Բրուսալի, Միհրան Սվազլյանի և Ջեմս Մալքոմի խմբագրությամբ։ Ավելի ուշ՝ 1889 թ., նոյեմբերից, Լոնդոնի մշուշապատ հորիզոնում, ամիսը մեկ անգամ երևաց նաև Մ. Զերազի ֆրանսերեն լեզվով հրատարակվող «Հայաստան»-ը (L' Arménie), որ երբեմն թարմացվում էր անգլիական բաժիններով։ Այն ձգվեց մինչև հաջորդ դարի վեց թվականը, հատկապես լեզվի պատճառով հայ ժողովրդին միշտ օտար մնացած իր համարներում միմյանց խառնելով պայքարի ու խաղաղ առաջադիմության բոլոր երանգները։

1888 թ. վերջին 1889 թ. սկզբներին Մ. Փորթուգալյանի ջանքերով «Արմենիա»-ին համակիր գործիչներն համախմբվում ու ստեղծում են «Հայոց հայրենասերների միություն»-ը։ Իսկ Վասպուրականում ամրապնդվում ու հզորանում էր Մ. Փորթուգալյանի և նրա թերթի հետ իր անունը կապած Արմենական կազմակերպությունը։

Հայրենասիրական միություններ են ստեղծվում նաև Բուլղարիայում։ 1882 թ. սեպտեմբերին Վառնայում ստեղծվում է «Հայրենասիրաց ընկերությունը», իսկ 1883 թ. հաստատվում է 93 կետից կազմված նրա կանոնադրությունը։ Այս ընկերությունը փորձում էր կապեր ստեղծել ինչպես Թուրքիայում, այնպես էլ եվրոպական երկրներում գործող հայ հայրենասիրական կազմակերպությունների հետ, ինչպես նաև ջանում ուժերի ներածին չափ նպաստել մեծ տերությունների կողմից 61-րդ հոդվածի կենսագործման համար ձեռնարկելիք միջոցառումների ապահովմանը։

1885 թ. հոկտեմբերի 15/27-ին Վառնայի հայ «Հայրենասերների գերագույն ժողովի» անունից նամակ է ուղարկվում Մակար կաթողիկոսին, խնդրելով միջնորդել ռուսական միա-

պետի առջև՝ Բեռլինի կոնգրեսի 61-րդ հոդվածի կենսագործման և հայ ժողովրդի համար քաղաքական մի բարվոք վարչություն ստեղծելու։ Նամակը վավերացնող կնիքի վրա գրված է. «Հայրենասիրաց ընկերության պաշտպան մասնաժողով»[140]։

Նույն Բուլղարիայից ստացվում էին նաև զինված պայքարի կոչող գրություններ, որոնց հեղինակներից մեկը՝ Մկրտիչ Թութունջիևը, Խրիմյանին ուղղած իր նամակներում, հետևողականորեն մատնացույց էր անում եվրոպական դիվանագիտության վրա հույս չդնելու, սեփական ուժերով համաժողովրդական ճեղափոխությամբ ազատագրման հասնելու ուղին և առաջարկում իր ծառայությունը[141]։

Անպատասխան թողնելով Թութունջիևի նամակները, Խրիմյանը, սակայն, գաղտնի աջակցում էր 1887 թ. Կ. Պոլսում, Հարություն Ջաքըրյանի, Մխիթար Սեբաստացու և Մարգար Մոմջյանի գլխավորությամբ ստեղծված այն կազմակերպությանը, որն իր առջև նպատակ էր դրել Հայաստանի անկախությունը ձեռք բերել զինված ապստամբությամբ և որոշել էր աշխատանքների լայն ծավալումից հետո իրեն կոչել «Հայոց հեղափոխական ընկերություն»[142]։

Կազմակերպական խանձարուրում գտնվող այդ ընկերությունը, սակայն, շուտով իր տեղը զիջեց արդեն ձևավորվող ազգային կուսակցություններին։

Չնայած Հարություն Վեհապետյանի պատրիարքության ու Հովհաննես Նուրյանի ատենապետության պահպանողական դիրքորոշմանը և այդ ուղղությամբ նրանց ու նրանց համախոհների ձեռնարկած ջանքերին, խմորումներն ու բացահայտ հուզումները շարունակվում էին, մանավանդ Թուրքիայի հայաշատ կենտրոններում։ «Գավառներու մեջ,— գրում է Ա. Ալպոյաճյանը,— անփորձ երիտասարդներ երազներով տարված կկազմեին հայրենասիրական գաղտնի մարմիններ,

140 Տե՛ս ՀԿՊՊԱ, ֆ. 56, ց. 1, թերթ 157—158։

141 Հ. Ճանկուլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամին, էջ 133—134։

142 Տե՛ս «Հայրենիք» ամսագիր, 1940, № 3, էջ 139։

որոնք նպատակ ունեին ժողովուրդը ապստամբության պատրաստել»[143]։

1886—1889 թթ. Վանում հայրենասեր երիտասարդության գլուխ էր կանգնած հետագայի հայ նշանավոր նկարիչ Փանոս Թերլեմեզյանը։ 1889 թ. ստիպված հեռանալով Վանից, նա անցնում է Մուշ և այնտեղ Ստեփան անունով մի երիտասարդի հետ ստեղծում հայրենասիրական գաղտնի խմբակ[144]։ Նման խմբակներ ստեղծվում էին ամենուր։

Ավետիս Պատիկյանը, որը լուսանկարչի անվան տակ, գաղտնի նպատակներով Թուրքիայում բավականին շրջելուց հետո անցել էր Եվրոպա, 1889 թ. սկզբներին Լոնդոնից Հաֆտվան (Թուրք-պարսկական սահմանագլխին, Սալմաստ) ուսուցչի անվան տակ անցի գաղտնի կազմակերպությունը ղեկավարող Կ. Գուլազըզյանին խորհուրդ էր տալիս. «Ընկերության կազմությունը մարդու մի իմացնեք. Հիլենք իրենց ընկերակցության կազմությունն ամբողջ յոթն տարի ծածուկ պահեցին. անկե ետքը գործի ըսկսան. եթե կուզեք բարիք ընել ձեր հայրենյաց, պետք է մարդիկ և դրամ պատրաստեք»[145]։

Մ. Փորթուգալյանը, նույն թվականը կրող իր նամակում, հորդորում է Գուլազըզյանին՝ Մարսելում իր կողմից հիմնադրած «Հայրենասիրաց» ընկերության համար մարդիկ հավաքագրել[146]։

1885 թ. հանդես եկան առաջին հայ ֆիդայինները, և զինավառ հայդուկը կանգնեց հայոց լեռների ծերպերին, որպես բռնակալական լծի տակ ճնշված ու հարստահարված, մարդկային բոլոր իրավունքները կորցրած ժողովրդի բողոք, որպես ատրուկի ըմբոստացում իշխողի բարբարոսության դեմ[147]։ Հորիզոնում արդեն վառվում էին Աղբյուր Սերոբի, Գևորգ Չաուշի և Անդրանիկի շանթող կերպարները։

Թուրքական իշխանությունները շարունակում էին իրենց

143 Ա. Ալպոյաճյան, *Մինաս Չերազ*, էջ 245։

144 *Տե՛ս* Ե. Մարտիկյան, *Թերլեմեզյան, Երևան, 1964, էջ 8*։

145 *Տե՛ս «Արևելք», 1889, № 1625*։

146 *Նույն տեղում*։

147 Րաֆֆի, *Հայդուկներ (տե՛ս «Արաքս», 1892, գ. Ա, էջ 91)*։

բռնությունները, կենտրոնական ու գավառական բանտերը լցնելով հազարավոր անմեղ մարդկանցով։

1886 թ. սկզբներին Վանում բանտից ազատվեց ինչ որ քարտեզների պատճառով կալանավորված Մկրտիչ Թերլեմեզյանը։ 1886 թ. դեկտեմբերի 15-ին Ալաշկերտում ձերբակալվեց «Միացյալ ընկերության» տեսուչ Մկրտիչ Սարըյանը, իսկ Մուշում՝ այցով այնտեղ գտնվող ընկերության անդամ և Վանի գավառական ժողովի ատենապետ Մարկոս Նաթանյանը։ Նույն օրերին Վանում բանտ նետվեցին կիրակնօրյա դպրոցի բոլոր աշակերտները։

1887 թ. Հեքյարիից շղթայակապ Վան տարվեց Արսեն Թոխմախյանը։ Թաքցրած զենք գտնելու հույսով թուրք ժանդարմները ներխուժեցին Վարագ և տակն ու վրա արեցին ողջ վանքը, ինչպես նաև Այգուր գյուղի եկեղեցին։ «Արարատ Հայաստանի» աշխատության համար աքսոր ուղարկվեց Պողոս Նաթանյանը, որտեղ էլ նա կնքեց իր մահկանացուն։

Ոստիկանական գաղտնի գործակալները վտանգավոր բովանդակությամբ թղթեր էին գցում այս կամ այն տունը, ապա հանկարծակի խուզարկությամբ, իբր հայտնաբերում և բանտարկում ու չարչարում անմեղ մարդկանց՝ ընդհուպ մինչև բանտում թույնով խաշելը (առանց սպանելու), որին ենթարկվեցին Ա. Թոխմախյանը և ուրիշները։ Քիչ ուշ, Կ. Պոլսի Համիդյան մի բանտախցից, «անդունդի վրա քաշող մարդու բայլվածքով», դուրս եկավ Արփիար Արփիարյանը։

Վանում կատարված խուզարկությունների ու ձերբակալությունների գործում խառն էր Վիմ քաշված տխրահռչակ Պողոս եպիսկոպոսը, որը Խրիմյանին վարկաբեկելու նպատակով կազմել և քանի նշանավոր անձանց կեղծ ստորագրությամբ Խրիմյանին էր հասցեագրել մի նամակ, ուր նրանից խնդրում էին շտապեցնել խոստացված զենքի առաքումը։ Նամակն այնպես էր ուղարկված, որ ընկավ ոստիկանության ձեռքը, կառավարության աչքե առավել վատթարացնելով Խրիմյանի առանց այն էլ խախուտ դիրքը[148]։

148 «Մշակ», 1888, № 15։

Ձերբակալությունները ուժեղացան հատկապես «Երկիր» անցնելու ճանապարհին Գոլոշյանի և Աղրիպասյանի զոհվելով, որով սկսվում էր «նահատակ հերոսների թափորը»՝ ինչպես նաև Տարոնի պատուհաս դարձած Մուսա բեյի կողմից գյուղապետ Օհանին այրելու և Գյուլիզարին առևանգելու հետ կապված ժողովրդական դժգոհությունների փոթորկման առնչությամբ, որպես հուզումները արյան մեջ խեղդելու նախապատ։

1889 թ. մայիսի 15-ին, մշեցի Հակոբ Սարկավագի հայդուկային խմբին միանալու մտադրությամբ, Սալմաստից դուրս գալով, Վանի ճանապարհը բռնեցին հիշյալ Վարդան Գոլոշյանը, Հովհաննես Աղրիպասյանը և Կարապետ Գուլազըղյանը[149]։

Աղբակն անցնելուց հետո, Չուխ-կետիկ կիրճում, որը Բաշկալեից (Հաղամակերտ) Վան տանող անցքն էր, Սպիտակ կոչված աղբյուրի մոտ, եռյակը հանկարծակիի է բերվում պատահականորեն այդ կողմերով անցնող թուրքական ոստիկանների մի ջոկատի կողմից և անհավասար մարտում, վիրավորելով երկու ոստիկանների, Գոլոշյանն ու Աղրիպասյանն ընկնում են, իսկ Գուլազըղյանին հաջողվում է փախչել և խույս տալ հետապնդումից։

Եվրոպայի թուրքական դեսպանատներում ունեցած դիվանագիտական անփառունակ կարիերայից հետո, 1887 թվականից Վանում կուսակալող Խալիլ փաշան իրեն փառաբանելու համար «Հայկական ապստամբությունը ճնշելու մասին» հաղթական մի զորք կազմեց, որը նրան արժանացրեց Մեջիդիեի առաջին կարգի շքանշանի։ Չափից դուրս փութաջանության համար սուլթանի բարի ողորմածությանն արժանացավ նաև հայազգի ոստիկան Ավետիս Պարթևյանը, իր հոգու գարշությունը ծածկելով Մեջիդիեի չորրորդ աստիճանով։

Ժողովրդի ազատագրման գաղափարին զինվորագրված այս հայրենասերները նրա լուսավոր գալիքի ճանա-

---

149 Ըստ Վանի կուսակալ Խալիլ փաշայի Բ. Դռանն ուղարկած հեռագրի՝ ութ մարդ (տե՛ս «Արևելք», 1889, № 1625)։

պարհին՝ նահատակության գնացող անխոնջ ու անձնազոհ հերոսներ հանդիսացան։

«Տասնիններորդ դարուս մեջ ապրող մարդկային ընկերության համար ազատությունեն զատ չկա ուրիշ մթնոլորտ մը որում նա կարենա շնչել։ Թող ես ալ տանջվիմ իմ ազգայնոցս հետ. թերևս ես ալ կարենամ օգնել իմ ազգակիցներուս...»,— գրել է Կարապետ Գուլազմըլյան իր հիշատակարանում[150]։

Հորն ուղղած վերջին նամակում Վարդան Գոլոշյանը գրում էր. «...Պատանեկության հասակում մեր հասարակական ասպարեզում փայլում էր Րաֆֆին, այդ համակրելի մարդու նշանավոր գործունեությունը ղեկավարում էր մեծ գաղափար՝ Հայաստանի ազատության գաղափարը։ «Մշակ»-ի մեջ և հետո առանձին տպված նրա վեպերը ես կարդացի։ Այդ հեղինակի ընթերցանությունը ներշնչեց մեջս մի վառ ու ազնիվ սեր դեպի ազգ ու հայրենիք, դեպի տառապյալ հայությունը։ Ես վճռեցի մինչև մահս գործել հայրենիքի փրկության համար, նրա բարօրությունը իմ երջանկությունը համարել։ Եվ այդ վճիռը չէր այն վաղանցուկ կրքերից մեկը, որ քամու պես ծնվում ու կորչում են. ոչ, նա ավելի խոր արմատ ուներ։ Եվ զգում եմ, որ առանց հայրենիքի ես ոչինչ եմ. առանց նրա բարօրության ես թշվառ եմ, վերջապես զգում եմ, որ անկարելի է ինձ մի այլ նպատակի ծառայել։ Ես տեսա մեր հայրենիքի թշվառ կացությունը, նրա ժողովրդի անտանելի դրությունը, ես այդ երկրի, այդ ժողովրդի մեջ ապրեցի և իմ վճիռս ավելի ևս հաստատուն և անքակտելի եղավ։ Այդ գաղափարն էր, որ փախցրեց ինձ տնից... Ես երկար ժամանակ եմ ապրել տնից դուրս, ես շատ քիչ եմ մնացել Ձեզ մոտ, որ ինձ ի մոտո ճանաչել կարողանայիք և իհարկե չեք կարող իմանալ, թե ինչ եմ արել և թե որքան վատ կամ լավ եմ ես։ Այնուամենայնիվ վստահ եղեք, որ ես կեղտոտությունից հեռու կկենամ, որ ոչ մի վատ բան անելու չեմ։ Որովհետև այնպիսի մի գաղափար, որպիսին է հայրենիքի ազատությունը, մի վահան, ապահով ապաստարան և բարոյական դաստիարակ է, որ մարդուն ամեն փորձանքներից կպահե, եթե մարդ հասկանա նրա վեհությունը։ Ես միշտ

---

150 Տե՛ս «Արևելք», 1889, № 1625։

ձգտել եմ այդ վեհությունը հասկանալ և հույս ունեմ, որ այդ գաղափարը պիտի իմ գործերով ազնվացնեմ սրտիս մեջ։ Ես չգիտեմ թե որքան կհաջողվի մեր նպատակը. գուցե մենք կընկնենք շուտով և շատ շուտով։ Բայց մեր անկումը պիտի այլոց գրգռե և մենք շատերին օրինակ կլինենք մեր գործունեությամբ...»[151]։

* * *

XIX դարի 70—80-ական թվականների հայ ազատագրական շարժումների գաղափարախոսության առանցքը զինված պայքարի, մեծ տերությունների նկատմամբ դիրքորոշման և ազատագրման շարժման սոցիալական բովանդակության ու նրանց առնչության հարցն էր։

Ազատության համար Միքայել Նալբանդյանի բարձրացած սուրը իր հետևից ցնծությամբ տարավ հայ ժողովրդի ու նրա մտավորականության լավագույն ուժերը։ Քիչ ուշ կամա թե ակամա շեղվելով պայքարի նալբանդյանական ուղուց, հայ ազատագրական շարժումը, սակայն, չկորցրեց իր ժողովրդական-ազատագրական բնույթը։ «Ես և գուցե իմ բոլոր համախոհներս կընկնենք, բայց մեր անկումը ճանապարհ կբաց անե մեր հետևողների առջև. նրանք կանցնեն մեր դիակների վրայով»[152]։ Այսպիսի ազդով էր Րաֆֆին ընդհանրացնում ազատագրական շարժման իր գործնական ու տեսական ուղին։ Րաֆֆու հերոսները գիտակցում էին, որ իրենք կարող են զոհվել, բայց մտածված գնում էին ողջակիզման՝ ուրիշների համար ճանապարհ հարթելու խանդով։ Իրավացի է ասված, որ կռվողը միայն այն դեպքում չի կռվում, երբ համոզված է, որ ինքը կհաղթի։ Նա կռվում է, որովհետև չի կարող չկռվել, նա կռվում է երբեմն մեռնելու համար։ Հայ ժողովրդի բազմադարյան տառապանքով ու նրա լավագույն ապագայի կարոտով վառած իր տաղանդի կախարդական ուժով, Րաֆֆին անցյալի մութից ու ապագայի անհայտությունից, դուրս էր

---

151 «Հորիզոն», 1913, № 101 (Նամակը թվագրված է 1889 թ. մարտի 19-ին Սալմաստ-Հաֆտվան (նաև «Նորք», 1924, № 4)։

152 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 198։

կոչում հերոսական դեմքեր, համարձակություն ու կռվով ներշնչելով տկարներին՝ հզորների դեմ նահատակության արյունով լվանալու ստրկության արտասուքը, տառապող ժողովրդին մղում դեպի ազատության լուսաշող ուղին[153]:

Զինված պայքարի անհրաժեշտությունը դարձել էր օրվա պահանջ, ուստի ժողովրդի զգացմունքների իսկական արտահայտիչները հանդես էին գալիս «ի զեն» աղաղակով:

Րաֆֆու գեղարվեստական ստեղծագործություններում ազատության համար պայքարող ժողովրդական հերոսների մոտ, Ն. Ադոնցի դիպուկ բնորոշմամբ, հանդես է բերված «զինյալ հայրենասիրություն»:

«Ով հայրեր,— իր բաժակաճառում ասում է այդ հերոսներից մեկը,— ով պապեր, այս գավաթը խմում եմ, բայց առանց նվիրելու ձեր ոսկորներին: Եթե դուք այս վանքերի տեղը... բերդեր շինեիք,— եթե դուք սուրբ խաչերի և անոթների փոխարեն... զենքեր գնեիք,— եթե դուք այն անուշահոտությունից տեղ, որ խնկարկում են մեր տաճարներում, վառոդ ծըխեիք,— այնժամ մեր երկիրը բախտավոր կլիներ»[154]:

Ազատության իր հրաշունչ երգերում հայ ժողովրդի ազատագրումը նրա բարձրացրած սրի ծայրին էր տեսնում Ռ. Պատկանյանը, իր զնգալից քնարով կաթ առ կաթ արյուն ոթելու փոխարեն, մեկ անգամ այն հեղեղելու և ազատագրվելու կոչ անելով ժողովրդին:

Հայ գեղջուկի խոփից սուսեր կռելով, նա դնում էր այն իր հերոսի ձեռքում, ուղարկում ռազմադաշտ, հաղթելու և ազատ վերադառնալու պատգամով:

*Սուրով գնա արյան դաշտը, վերադարձիր ազատված*[155]:

Ապա նա մատնացույց էր անում աշխարհի երեսից բնաջնջվելու այն ահավոր վտանգը, որն սպառնում է ամբողջ հայ ժողովրդին, եթե նա չպայքարի իր ազատության համար. չազատագրվի ստրկացված հայրենիքը, որն ազատություն ծնելու երկունքի մեջ է արդեն:

---

153 Տե՛ս Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 393:
154 Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 58—59:
155 Ռ. Պատկանյան, Երկեր, էջ 144—146:

Րաֆֆուն ու Պատկանյանին, այդ շրջանում, իրենց ստեղծագործությունների կերտմանն ավելի շատ մղում էր ոչ թե գեղարվեստական արժեք ստեղծելու ցանկությունը, այլ իրենց քաղաքական խնդիրը պրոպագանդելու միտումը։ Նրանց բարոյած մտքերը խթանում էին ժողովրդի կենսական կռիվը, հավատ ներշնչում նրան իր լավագույն ապագայի մասին, մղում՝ պայքարելու հանուն այդ ապագայի, իրենց ետևից մարտաշարքով, տանելով «Կայծեր»-ից ու «Մայր Արաքս»-ից ծնված հայ մտավորականության այն հսկա բանակը, որի երթուղով պիտի շարժվեր հետագա ամբողջ մի սերունդ[156]։

Անգամ պատմական վեպը «ես... պատմական փաստի համար չեմ գրում, այլ ինձ գրավող ժամանակակից շարժման»,—ասում էր Րաֆֆին[157]։ Իսկ Վարդան Մամիկոնյանի շուրթերով ասված երգը Ռ. Պատկանյանի առօրյա կոչն էր.

Թող լավ մունջը, անդամալուծը,
Կամ՝ որոնց քաղցր է թշնամու լուծը,
Բայց մենք, որ ունենք հոգի ու սիրտ քաջ,
Եվ անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնե մեր փառքը մահով ետ խլենք —
Ու այնպես լռենք[158]։

XIX դարի 70-ական թվականին հայ իրականության մեջ իրավացիորեն ամենաառաջադիմական· թերթն համարվող «Թատրոն»-ի էջերում մեծ երգիծաբանն աներգիծանք գրում էր, որ մարդկային իրավունքների ձեռք բերման ու պահպանման առաջին պայմանն անեղնավոր հրացանն է[159]։

Չնայած չափավոր-պահպանողական տրամադրություններին, իր պատմական վեպերում, Տավրոսի ու Սասունի հե-

---

156 Ի դեպ Րաֆֆին ազատագրական պայքարի ու թշնամուց վրեժ լուծելու կոչ էր անում ոչ ի սեր վրիժառության, առանց գործնական նպատակների ու հեռանկարների, ինչպես կարծում է Ա. Ոսկերչյանը (տե՛ս Ա. Ոսկերչյան, Հայ մարքսիստական հրապարակախոսության հիմնադիրները, Երևան, 1963, էջ 120), այլ հենց հանուն այդ հեռանկարների։

157 Տե՛ս Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 8, էջ 471։

158 Ռ. Պատկանյան, Երկեր, Երևան, 1955, էջ 109։

159 Տե՛ս «Թատրոն», 1876, № 198։

տոների բերանով, պայքարի փող էր հնչեցնում նաև «Երկունք»-ի ու «Թորոս Լևոնի»-ի ցասկոտ հեղինակը՝ բժիշկ-վիպագիր Սերենց-Շիշմանյանը։

Իսկ Թովմաս Բոզարխին գովերգող Վ. Փափազյանը, Հայաստանի վաղվա օրն էր մատնանշում, դրվատելով երկար տառապանքներից հետո թուրքական լուծը թոթափած Հունաստանի ներկան, որն արդեն «բարձրագլուխ վայելում է մի փառավոր ազատություն»[160]։

Արսեն Թոխմախյանը, զոհաբերությունն ընկալելով որպես «մարդկային կյանքի անբաժանելի ընկերը», բարեբախտ էր համարում միայն այն երկիրը, այն հայրենիքն ու ազգը, որի որդիները մեծ նպատակների համար գիտեն մեռնել, որոնց համար մահը կյանքի սկիզբն է, քանզի «մինչև ցորենի հատիկները չմեռնեն, ոչինչ արդյունք չեն կարող տալ»[161]։

«Ով որ պատրաստ չէ յուր կյանքի համար ամեն հարկավոր վայրկյանին յուր կյանքը զոհելու, նա արժանի չէ ապրելու։— գրում էր Ստ. Սպանդարյանը 1876 թ., այն ժամանակ, երբ դեռ ուղիղ էր քայլում և չէր կքել պահպանողական բեռի ծանրության տակ։— Ինչ որ մեկ անհատի է վերաբերում,— շարունակում է նա,— նույնը կարելի է և ասել մեկ հասարակության, ազգության վերաբերմամբ։ Թող չկարծեն հայերը Թուրքիայում, որ առանց զոհաբերության բան կարելի է աշխարհումս առաջացնել։ Մարդս ապրում է յուր ժառանգներում շարունակ։ Ինչպե՞ս են ուզում հայերը յուրանց թոռների համար Թուրքիայում մարդավայել կյանք պատրաստել, կատակեր, երբ չեն ուզում իրանց անձը որդիների համար զոհել...»[162]։

1880 թ. գրած իր «Հայոց աշխարհ» երգում զինված պայքարի ճանապարհ էր դուրս գալիս նաև նշանավոր աշուղբանաստեղծ Ջիվանին՝ հայ ժողովրդին ուղղելով իր մեղագրանքը.

---

160 Վ. Փափազյան, Երկերի ժողովածու, հատ. 2, էջ 188—207։

161 Ա. Թոխմախյան, Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, էջ 88—89։

162 «Մշակ», 1876, № 24։

Այլոց նման զենք չառար, գրավոր բան խնդրեցիր
Կարծում եմ անիրավունք, նորա համար մնացիր[163]։

Մի ձեռքում արոր, մյուսում հրացան բռնելու Արծրունու կոչը բորբոքել էր անգամ շատ թմրած կրքեր ու «Մշակ»-ը դարձրել ազատագրական պայքարի համազգային դրոշ։

Այդ շրջանում «Մշակ»-ին չսասանեց անգամ ռուս-թուրքական պատերազմից հետո նրա դեմ ուղղված քաղաքական հիասթափությունը։

1879 թ. հոկտեմբերին «Մեղու Հայաստանի»-ի խմբագիր Պետրոս Սիմոնյանին համոզելով հաշտվել «Մշակ»-ի հետ, Ռ. Պատկանյանը փաստարկում էր, որ այլապես նշանակում է հակադրվել հայ ժողովրդին, քանի որ «Մշակ»-ն արտահայտում է ժողովրդի զգացմունքները[164]։

Սրի դեմ սուր ճոճելու, իրեն ոչնչացնել ցանկացող թշնամուն՝ ոչնչացնելու մարտական հրահանգ էր տալիս «Մշակ»-ը արևմտահայ ժողովրդին։

«Հինգ հարյուր տարուց ավելի է, որ Թուրքիայի հայերը բնակվում են շրջապատված թափառական, հափշտակիչ, գազան քուրդ ցեղերով,— գրում էր Գր. Արծրունին,— և մինչև այժմ չենք հասկացել, որ ազգի կործանելու, ջնջվելու պատճառը այն է, որ հայը չի կռվում քրդի հետ իր գործածած զենքի նման զենքով։ Եթե հայը զենքը ձեռին պաշտպաներ իրան քրդի դեմ, երբ այդ վերջինը նրա վրա հարձակվում է, վիրավորեր քրդին, երբ քուրդը նրան վիրավորում է, սպաներ նրան, երբ քուրդը նրա եղբորը սպանել է, մաս մաս աներ քրդին, երբ քուրդը անարգել է նրա կնոջ և բռնաբարել նրա աղջկան,—այն ժամանակ քուրդը շուտով կդադարեր իր հափշտակիչ և ավերիչ արշավանքները հայոց բնակությունների վրա և հայը չէր կորչի իր մայրենի երկրի երեսից»[165]։

Դատապարտվում էր նաև սեփական երկիրը թողնելու, գաղթելու մտայնությունը, նշավակվում այն որպես պայքարի

---

163 «Փարոս Հայաստանի», 1881, № 1, էջ 11։

164 Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1879, № 84։

165 «Մշակ», 1878, № 82։

անընդունակություն, կասկածի տակ առնում գաղթելուն հակված ժողովուրդների, որպես ինքնուրույն ազգ գոյություն ունենալու իրավունքը։ «Մշակ»-ն համարձակորեն ու հրաշեկ լեզվով անարգանքի սյունին էր գամում բոլոր նրանց, ովքեր դիմադարձ էին դեպի հայ ազատագրական շարժումները կամ վերապահ նրանց նկատմամբ։ Չէին խնայվում և մխիթարյան հայրերը, որոնք միայն սրտառուչ երգեր ու աղոթքներ էին գեղգեղում հեռավոր հայրենիքի մասին, և Հռոմի ազդեցության տակ, «ժամանակներս չար է» ասելով, հայ ժողովրդի լինել թե չլինելու բուռն օրերին անգամ իրենց մամուլում շարձայանքեցին նրա հախուռն երթին[166]։

Ազատագրական գաղափարախոսության հորդառատ հոսքըն իր հետ բերեց նաև ազգայնական նեղմիտ, հայ ժողովրդի առանձնակիության մասին հոխորտացող տենդենցներ, որոնք իրենց սուր կողմերով ուղղված էին, հարկավ, հայ ժողովրդի հարստահարիչների դեմ։

Ուստի Գ. Արծրունու և նրա խմբագրած «Մշակ»-ի համար հիմնական ուղեգիծը ոչ թե այդ շեղումներն էին, այլ ժողովրդին մարտերի ու առաջադիմության մղող նրա հարատև պայքարի ու հաղթանակի հավատքն ու քարոզը։

Երիցս իրավացի է Բ. Կնունյանցը, երբ Գր. Արծրունու մահվան տասնամյակի առթիվ գրում է, որ վերջինիս խմբագիր եղած ժամանակ «Մշակ»-ի հետ էր կապվում «յուրաքանչյուր ազատ միտքը, յուրաքանչյուր բարի լիբերալ ձգտումը, յուրաքանչյուր առաջադիմական գործը», իսկ «Նոր Դար»-ի հետ «...հետամնացության պաշտպանությունը, եվրոպական կուլտուրայի վրա հարձակումները, ամենառեակցիոն իմաստով ազգային ինքնատիպության պաշտպանությունը...»[167]։

Արևմտահայ ժողովրդի ազատագրումը կապելով զինված ապստամբության կամ ցարիզմի նվաճողական քաղաքականության հետ, Գ. Արծրունին ողողում էր «Մշակ»-ի էջերը զինված պայքարի մարտակոչերով, որպես հակակշիռ «Նոր

---

166 «Մշակ», 1878, № 81։

167 «Бакинские известия», 1903, № 44.

Դար»-ի ինքնակատարելագործման ու կուլտուրական զարգացման պահպանողական աղոթքների:

«Մշակ»-ի ազատագրական դիրքորոշմանը և Մ. Խրիմյանի երկաթյա շերեփի ու եղջյուրների քարոզին հեռավոր Զմյուռնիայից ձայնակցում էր «Սև լեռան մարդը». «Հայաստան սիրողը չխոսի, շողքար, այլ անոր դարավոր վրեժը կլուծե... սուրը սրով վանել պետք է, երբ իրավանց ձայնն տկար և անսելի է...»[168]:

Այդ հանգը հնչում էր նաև «Հին կռիվ»-ը շարունակող Հ. Թումանյանի «Երկիր» անցնող երիտասարդների բերանում դրած երգի մեղեդիներից.

*Սև սարերի նաև նրանք*
*Տառապում են խավարում,*
*Լույս են ուզում ու ազատ կյանք*
*Աստծո ազատ աշխարհում...*

*Հեյ, գալիս ենք ով տանջվածներ*
*Գալիս ենք մենք զինավառ*
*Եվ ազատ օր և կյանք և սեր*
*Ողջ բերում ենք ձեզ համար*[169]:

Մոսկվայում դեգերող վաղարշապատցի երիտասարդ բանաստեղծը նույնպես շտապում էր բացատրել, որ հայրենիքի խոր խոցերը արտասուքի ծովերով չէ, որ պետք է լվանալ, և չկորանալով, չընկճվելով այդ խոցերի ցավից, հնչեցնում էր պայծառ գալիքի հավատի երգը.

*Բայց ով հավատում ենք դեռ մենք փրկության*
*Մեզ մի նոր երկնից նոր լույս կբացվի*
*Եվ տեսնում ենք ահա, արդեն ծիածան*
*Մեզ ազատ, լուսավոր մի նոր վիճակի*[170]:

Իրենց ստեղծագործություններով ազատագրական շարժման ուղեծիր էին ելնում Ա. Ծատուրյանը, Մուրացանը, Պ. Պռոշյանը և ուրիշները:

---

168 Մ. Մամուրյան, *Սև լեռան մարդը*, Աթենք, 1932, էջ 30 և 52:

169 Հ. Թումանյան, *Երկերի ժողովածու*, հատ. 6, էջ 42:

170 Հ. Հովհաննիսյան, *Երկեր*, Երևան, 1959, էջ 72 և 84:

*Ժողովրդին ազատագրական հերոսամարտերի մղող հայ գործիչներն, հարկավ, հողմաղացների դեմ անմիտ ընդվզման չէին կոչում նրան, ինչպես փորձում էին ներկայացնել պահպանողականները, այլ կազմակերպված ու հետևողական պայքարի։*

*Այդ առնչությամբ խիստ հետաքրքրական է հայ ժողովրդին լուսավորությամբ ազատագրելու կողմնակիցներին ծաղր ու ծանակի ենթարկող Գ. Աղայանի՝ «Բուլղար ավազակապետի» հայերեն թարգմանության առթիվ արված դիտողությունը. «Դոն-Քիշոտը չէր կարող անցած գնացած ասպետությունը վերակենդանացնել»*[171]*։*

*Ազատագրական շարժման առաջընթացի իր ճանապարհին հայ լիբերալ և դեմոկրատական ուղղության գործիչներն անհաշտ պայքարի մեջ էին ազգային-պահպանողականների հետ, որոնց հմայել էր գիտությամբ ու մշակութային նվաճումներով առաջադիմելու և այդ ճանապարհով ազատագրվելու սին կախարդանքը։ «Դուք մի շտապեք, գայթակղության առիթ մի տաք։ Ժամանակը ինքնիրան, կամաց-կամաց կանի ինչ որ հարկավոր է»,— այսպես էր դատում «Մեղու Հայաստանի»-ի սյուներից մեկը, Րաֆֆու ազատագրական գաղափարախոսությունը որպես հեքիաթ ընկալող Եղիշե քահանա Գեղամյանը*[172]*, մեծ վիպագրին հրապարակորեն մեղադրելով Ջերնիշևսկու գաղափարակիցը լինելու մեջ և փաստորեն ոստիկանությանը մատնելով նրան*[173]*.*

*«Կարնո մեջ հայ մանուկը ժողովրդի քահանան է,— դառնությամբ գրում էր Ա. Արփիարյանը,— Վանա մեջ հայ մանուկը եպիսկոպոսն է, առաջնորդն է, թաղական խորհուրդն է, երևելի վաճառականն է և կը հաղորդե տեղական իշխանության, թե հայերը վտանգավոր են պետական շահուց... Թիֆլիսի մեջ հայ մանուկը հրապարակախոս է, խմբագիր է, քննադատ է,* ապագա Քահանացու է և մատնանիշ կընե հայ

171 Գ. Աղայան, *Երկեր, Երևան, 1963, հատ. 3, էջ 143։*

172 Ե. Ք. Գեղամյան, *Իմ շնորհավորանքը, «Մշակ»-ի հոբելյանին, Բաքու, 1915, էջ 83։*

173 *Տե՛ս «Մեղու Հայաստանի», 1883, № 39։*

վիպասանն իւր աշակերտ ռուս վիպասաններու, որոնք աք-սորված են ի Սիբիր»[174]։

Ն. Գեղամյանը չարակուսից անգամ իր ազատության համար զենքի դիմող ժողովրդի վարմունքը որակելու «վայրագություն» ու «բարբարոսություն»[175]։ Իսկ հին աշխարհի գլխին շանթ ու հուր տեղացող բոհեմական անտառների նշանավոր «Ավազակ»-ի ու նրա հռչակավոր հեղինակի գաղափարախոսությունն համարելով անհեթեթություն, նա Շիլլերի մեղքերը քավված է համարում միայն այն ժամանակ, երբ Մոորը իրեն հանձնում է «օրենքի արդար դատաստանին»[176]։

«Մեղու Հայաստանի» «անճոռնի լրագիրը» հայոց ազգի թշվառ ու անօգնական վիճակին որպես սպեղանի առաջարկում էր լուսավորությամբ և գիտությամբ զինվել։ Մոլորեցնում էր «ամբոխին», դառնում բոլոր հին և փտած գաղափարների նեցուկ[177]։

Հարկավ մեղր չէր ծորում նրա ընդարմացած շուրթերից, երբ հեգում էր. «Գիրք և դպրոց — ահա տաճկահայերի զենքը։ Դպրոցը պետք է քան ամենատեսակ կատարյալ զենքը, դպրոցը ծնում է անհաղթելի, անընկճելի, անմահ գաղափարներ, որին ոչ հուր և ոչ սուր կարող են հաղթել և որ հաղթում է և ընկճում ամեն բուռն զորություն»[178]։

Պատահական չէ, որ արևմտահայերի համար լուսավորությունից առաջ հաց պահանջող Ա. Թոխմախյանը «Մեղու Հայաստանի»-ի կողմից դասվեց «ազգային ցեցեր»-ի շարքում[179]։

---

174 «Մասիս», 1887, № 3839 (ընդգծումը մերն է — Ռ. Հ.)։ Ի դեպ «Մասիս»-ն արդեն մեկ տասնամյակ առաջ էլ Զոհրապի բնորոշած «ազնվականներու ջոջերու թերթը» չէր և իր մարտական ընթացքի առթիվ Հարություն պատրիարքի ու Ազգային ժողովի ատենապետ Նուրյանի տված սպառնալիքին Ա. Արփիարյանի գրչով պատասխանում էր, թե կարող եք ոչ միայն սպառնալ, այլև իրագործել այն, միևնույն է մենք մեր ուղուց չենք շեղվի (տե՛ս «Մասիս», 1887, № 3873)։

175 Ն. ա. ք. Գեղամյան, Իմ շնորհավորանքը..., էջ 127։

176 «Մեղու Հայաստանի», 1884, № 48։

177 «Մշակ», 1882, № 241։

178 «Մեղու Հայաստանի», 1878, № 37։

179 Նույն տեղում, 1833, № 72։

«Մեղու Հայաստանի»-ի գետնատարած թռիչքին նայելով, ճանապարհը շեղած, իր խմբագրի հետ միասին դեգերում էր Արարատյան դաշտի «Պսակ»-ը՝ լուտանքներ թափելով Ասիացու (Գ. Արծրունու) վրա և «ցնորական խենթություն» համարելով «պարսկաստանցի դերվիշի» «Խենթ»-ի գաղափարախոսությունը[180]։ Գյուղացու ձեռքի չոմախը տեսնելով հանդերձ, որպես այն օգտագործելու համար նրա թուլացած բազուկները սնելու միակ պայման, «Պսակ»-ն առաջարկում էր երկրագործության, վաճառականության և կրթության կազմակերպումը[181]։

Կենտրոնի ուղղությունը, «Փորձ»-ի բերանով, արևմտահայ ժողովրդի հոշոտման պատասխանատվությունը գցում էր միայն տեղական իշխանությունների վրա և մի կողմից կոչ անելով՝ կռվով ձեռք բերել երազած ազատությունը, մյուս կողմից գրում էր. «Կռիվ ասելով չենք ուզում հասկանալ հեղափոխական միջոցառումներ», այլ խաղաղ միջոցներով պայքարել[182]։

Իսկ այդ ուղղության հաջորդ ձայնատարը՝ «Արձագանք»-ը, «... հավասարապես թշնամի էր թե «Նոր Դար»-ին, և թե «Մշակ»-ին։ Նա թեև պահպանողական էր, բայց ավելի դեպի ձախ. թեպետ ազատամիտ էր, բայց ավելի դեպի աջ։ Նա կենտրոնն էր և այդ պատճառով ատում էին նրան թե «Նոր Դար»-ը և թե «Մշակ»-ը[183]։

XIX դարի 80-ական թվականներին կարծես արդեն կատարվում էր Գ. Արծրունու կանխատեսումը և «մեղվական» խոսքն ստանում էր խավարասեր, հետադիմական իմաստ։

Հայ պահպանողականների սրտից էին խոսում նաև օտարազգի այն գործիչները, որոնք Կ. Պոլսի Հայոց Ազգային ժողովի բեմից Ջեյմս Բրայսի բերանով, հայ ժողովրդին խորհուրդ էին տալիս «... զարգանան, իրենց դպրոցները բարե-

---

180 «Պսակ», 1880, № 8, և այլուր։

181 Նույն տեղում, № 1։

182 «Փորձ», 1877—1878, № 4, երկրորդ տարի, «Ազգային տեսություն»։

183 Վ. Փափազյան, Պատմություն հայ գրականության, էջ 539։

կարգեն, վաճառականություններն առաջ տանեն, ուրիշ բան չունեին ընելիք»[184]

Այս տեսակետն ընդունող «խոհեմները» «... պաղ մարդկանց պես զանգաղկոտ, կասկածոտ և ոգևորվելու անընդունակ մարդիկ են,— գրում էր այն ժամանակի լրջամիտ մի հրապարակախոս,— Նոցա զգուշությունը վախկոտության է հասնում, քարոզած համբերությունը՝ անբարոյականացնող, մեռցնող ստրկահոգության»[185]: Իսկ Կարինի Սանասարյան վարժարանի այս ուղղությանը պատկանող ղեկավարները՝ 80-ական թվականների երկրորդ կեսին, հպարտությամբ հայտարարում էին, որ իրենց նպատակն է նախ և առաջ Թուրքիայի համար լավ քաղաքացիներ պատրաստել[186]:

Էլ ո՞ւմ, եթե ոչ մասսաների ըմբոստացումից, ժողովրդական համընդհանուր ապստամբությունից սարսափող հայ պահպանողականներին ու նրանց ուղեկիցներին նկատի ուներ դեռ Մ. Նալբանդյանը, երբ նետում էր.

> Նոցա համար անծանոթ է փոթորիկի օգուտը,
> Չգիտեն թե կայծակները միշտ մաքրում են մեր օդը[187]:

Պատասխանելով հայկական հարցի առաջ քաշման և նրա լուծումը զենքով պահանջելու առթիվ պահպանողականների հարուցած մեղադրանքին, թե դրանով ավելի եք վտանգում ժողովրդի գոյությունը և որ անհրաժեշտ է բարենորոգումների հասնել դիվանագիտական խաղաղ ճանապարհով, Ա. Արփիարյանն իրավացի նկատում է. «Թուրքերուն համար միևնույն է, թե նպատակին դիվանագիտությամբ պիտի հասնինք, հեղափոխությամբ կամ բարեկարգության սկզբնավորությամբ։ Թշնամին նպատակն է և ոչ թե միջոցը։ Ապստամբության քարոզիչ թերթ մը ունենալը Թուրքիո մեջ կենթարկվի միևնույն պատժին, ինչ որ կը վճարվի անոր, որուն քովեն կելնե 61-րդին իրագործումը եվրոպական պետություններուն

184 Տե՛ս «Անահիտ», 1899, № 3, էջ 94:

185 Լ. Սարգսյան, Այց Թուրքաց Հայաստանին, էջ 149:

186 Նույն տեղում, էջ 150:

187 Մ. Նալբանդյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1, էջ 36:

ու սուլթանին բարի կամեցողություններին սպասելու հորդոր կարդացող թերթ մը»[188]։

Պահպանողական հոսանքների դեմ մղած պայքարում, հայ դեմոկրատական և լիբերալ-դեմոկրատական միտքն իր հարվածի սլաքներն ուղղում էր նաև պահպանողական տարատեսակությունների հիմնական զարկերակի՝ հայ եկեղեցու և հոգևոր դասի՝ կղերականության դեմ, որն, առանձին բացառություններով, տրորում էր յուր ավանդական ճահիճը՝ զուր որոնելով այնտեղ ազգը միայն եկեղեցու շնորհիվ կենդանի մնացած լինելու մասին լեգենդներ։

Այն ժողովուրդները,— գտնում է Մ. Մամուրյանի հերոսը,— որոնք իրենց ամբողջ պայքարը սահմանափակում են պատրիարքի կատարած գործողությամբ «ազատասիրութենե զուրկ են և իրենց հաշմությունները փիլոնին ներքև վարագուրելու տրամադիր»[189]։

Վառոդը սիրով ընդունող «Արևելյան մամուլ»-ը ծանր և վտանգավոր էր գտնում խունկի հոտը, բանզի առաջինը ազատության ու կենաց պայքարի նշանաբանն է, երկրորդը՝ ստրկության թամբիրը[190]։

Ժխտելով եկեղեցին, «Մշակ»-ը հետևողականորեն մարտնչում էր նրա դոգմաների, կրոնական անհանդուրժողականության ու ծայրահեղորեն վերասերված հոգևորականության դեմ, արատների մաքրման ու կատարելագործման կոչելով նրան։ Այդ դիրքերում անսասան կանգնած էր «Մշակ»-ի սյուներից ամենաշքեղը՝ Րաֆֆին, որը ոչ միայն ազատագրական շարժման գաղափարախոսության իր հենարանը չէր որոնում եկեղեցու հիմքում, այլև խախուտ համարելով խարազանում էր այն, Մ. Նալբանդյանի նման հայ ազգության հարատևման գործում նրան չվերագրելով որևէ էական դեր[191]։

Պատահական չէ, որ սուլթանական կառավարության կողմից արևմտահայ թերթերի մուտքը Թուրքիա արգելելուց

188 «Նոր կյանք», 1898, № 10, էջ 146։

189 Մ. Մամուրյան, Անգլիական նամականի, էջ 374։

190 Տե՛ս «Արևելյան մամուլ», 1881, էջ 390 (հոկտեմբեր)։

191 Տե՛ս Րաֆֆի, Երկերի ժողովածու, հատ. 9, էջ 319 և 511։

դեռ տարիներ առաջ, Էջմիածինը խստորեն արգելել էր իր ճեմարանականներին «Մշակ» կարդալ[192]։

Ինչպես համընդհանուր ապստամբություն քարոզող արմատական թևի ներսում, այնպես էլ նրանից տարբեր պատնեշներով անջրպետված լիբերալ, ազգային-պահպանողական ու կղերա-հետադիմական հոսանքների պայքարի դեգերումներում առանձնակի բարձրանում էր մեծ տերությունների նկատմամբ կողմնորոշման համար մղվող պայքարի մոլեռանդ դրոշը։

Հայ ազատագրական շարժման մունետիկները, Իսրայել Օրուց սկսած և նրանից էլ առաջ, իրենց օգնություն խնդրող հայացքները նախ հառել էին Արևմտյան տերություններին, իսկ ավելի ուշ արդեն թեքվել դեպի Ռուսաստան։

Հայ ազատագրական շարժման վերելքի այս շրջանում, որպես աշխարհով մեկ ցրված հայ ժողովրդի փրկության պայման, հրեաների օրինակով «ընդհանուր հայկական դաշնակցություն» ստեղծելու Սերովբե Թաղավորյանի առաջարկի հետ միասին[193], լսվում էին նաև, մի կողմից արևմտաեվրոպական տերությունների, իսկ ավելի հաճախ՝ ռուսական ցարիզմի սվինների ուժով «Երկիրն» ազատելու հույսեր։ Երբեմն էլ մթնոլորտը լցվում էր թուրքական «բարեխնամ տերության» խղճին ապավինելու անբնական ճիչերով։

1879 թ. «Մշակ»-ին ուղարկած մի թղթակցության մեջ, ռուսական կողմնորոշման գործիչներից մեկը՝ Ա. Արփիարյանը, հետաքրքիր խորհրդածություն էր անում եվրոպական կողմնորոշման արևմտահայ կարկառուն մի ներկայացուցչի մասին։ «Օր մը,— գրում է նա,— Խրիմյանի պատրիարքության ատեն, Օտյան՝ ատենապետ ազգ. ժողովո կասեր յուր պաշտոնական աթոռեն. «Ոմանք կասեն, թե Բ. Դռան հայ պաշտոնյաներն կառավարական լրտեսներ են ազգ. ժողովո մեջ և հայ ազգը մատնելու կոչված են, բայց միթե հնար է այդպիսի տարաբախտ ազգի մը զավակներուն իրենց ազգի կործանման աշխատել, որ հայն որ այսպիսի վատ ոգի մը կրե և

192 Տե՛ս Արմենակ Սյունի, *Հայաստանի ավէ և Էջմիածինը*, էջ 40։
193 Տե՛ս «Մասիս», 1873, № 2171։

յուր շահը ազգի շահեն վեր կդասե անիծյալ լինի, երիցս անիծյալ». Խրիմյան «ամեն» գոչեց, և ժողովն այդ բանադրանքն կրկնեց... Մենք Օտյանի հայրենասիրության հավատացողներեն ենք. բայց ինչ որ մեզ երկյուղ կուտա, դա Օտյանի քաղաքական համոզումներն են. Օտյան ավելի արևմտյան կառավարության հարելու կողմնակից է. և տխրությամբ կը հարցնենք արդյոք երեսփոխանական ժողովն ինքն ա՞լ մասնակից է այդ համոզումի և այդ պատճառով է՞ որ զՕտյան իրեն ատենապետ կանե. դեռ նոր ազգային քաղաքականությունը սկսավ այն ուղղությունը ունենալ որ ամենեն ավելի շահավորն է հայ ազգի փրկության համար, պիտի վերադառնամք արդյոք այն սխալ ճանապարհին մեջ, որու ելքն այսքան դառնություն, այսքան աղետ պատճառեց մեր ազգի. նոքա որք ուրիշ գործ չարին, բացի միայն Ռուսիո դեմ որոտալ, միթե այսօր Հայաստանի վիճակը նկատելով չը պիտի հարցնեն ինքնին, թե ինչ շահեցանք։— Դեռ խրատվելու ժամանակը չը հասա՞վ մեզ համար»[194]։

Ի դեպ, Գ. Օտյանն այն գործիչներից չէր, որոնք ամբողջությամբ Եվրոպայի հետ էին կապում հայ ժողովրդի ազատագրումը։ Հարելով արևմտահայ շարժման խրիմյանական թևին, ավելի ճիշտ, լինելով այդ թևի գաղափարակիրներից մեկը, նա վախ էր հայտնում, որ հայ ժողովուրդը արյուն թափելու չափ արյուն չունի, սակայն, նրան չէր բավարարում դիվանագիտական խոհեմության իր ընտրած շավիղը և նա շարունակում էր իր միտքը՝ բացատրելով. «Ըսի թե արյուն թափելու համար արյուն և հոսցող արյուն չինելու է ամբողջ մարմնի մեջ և նույն ատեն գիտենալու է նաև երբ և ինչպես թափելու է այդ արյունը։ Կը փութամ ավելացնել թե այդ իսկ բավական չպիտի ըլլա մեր ազատագրության համար, եթե նախապես կռվան մը պատրաստած չըլլանք։ Մեր այդ կռվանը պիտի ըլլա եվրոպական տերություններու եթե ոչ ամենուն, գեթ մեկ մասին անկեղծ համակրությունն ու պաշտպանությունը։ Սխալ չհասկանաք, ըսել չեմ ուզեր թե մեր միակ

194 «Մշակ», 1879, № 80։

հույսը եվրոպական տերություններեն ակնկալելու ենք. կռվանն բառը ինքնին կը բացատրե թե առանց մեր կողմեն զորավոր ճիգի մը, այդ կռվանը բանի մը չի ծառայեր»[195]։

Այդ կռվանը «նեցուկ»-ի ձևով հանդես էր գալիս և Մ. Մամուրյանի մոտ[196]։

Եվրոպական դիրքորոշումն ուժգին հարված ստացավ հատկապես Բեռլինի կոնգրեսից հետո, երբ մեծ տերությունների երկդիմի խաղը պարզվեց հայ ժողովրդի մոլորյալ հայացքի առջև։

Առավել զանգվածային էր ռուսական կողմնորոշումը, որի ամենամոլեռանդ ու գործունյա ներկայացուցիչը Գր. Արծրունին էր։

Ապստամբության կոչելով հայ ժողովրդին ընդդեմ թուրքական բռնապետության, Արծրունին պայքարի իր նիզակներն ուղղում էր նաև Եվրոպայի դեմ, մարտահրավեր նետում «նենգավոր, եսական... ճնշող ու հարստահարող» Անգլիային, որը հնարավորության դեպքում կկողոպտի, կքամի հայ ժողովրդին այնպես, ինչպես կեղեքում է իր գաղութների բազմամիլիոն ազգաբնակչությանը[197]։

Նա խորհուրդ էր տալիս ցարական կառավարությանը, անգլիական ազդեցությանն հակազդելու նպատակով Թուրքիայում զինվորական ու դիվանագիտական գործակալներ նշանակել հատկապես հայերին։ Իսկ այն կարծիքը, թե Անգլիան պատրաստ է ինքնավարություն պահանջել Հայաստանի համար, դատարկ, կեղծավոր խոսքեր են միայն։ «Մենք նրանց չենք հավատում... Միակ պետության, որի վրա հայերը կարող են հույս դնել,— այդ Ռուսաստանն է»[198]։ Գր. Արծրունին համոզված էր, որ դիվանագիտությամբ հայկական հարցի լուծում հուսալը առնվազն մանկական միամտություն է, ուստի 1877 թ. ուրախությամբ ողջունեց ռուսական ցարիզմի կողմից այն «սրով ու արյունով» լուծելու համար կատարած

195 «Մուրճ», 1907, № 2, էջ 70։

196 Տե՛ս Անգլիական նամականի։

197 «Մշակ», 1877, № 35։

198 Նույն տեղում, 1876, № 44։

ձեռնարկը՝ պատերազմը[199]։ Միաժամանակ աղաղակելով, թե Եվրոպան իրավունք չունի խառնվելու Հայաստանի գործերին[200]։

Գր. Արծրունին այն կարծիքին էր, որ «Եթե Հայաստանը միանա Ռուսաստանին, մի քանի տարուց հետո երկիրը կլինի ծաղկած դրության մեջ»[201]։

Ռուսական դիրքորոշման բովում Արծրունու ցուցաբերած մոլեռանդությունը ի հարկե գնահատվեց անգամ ցարական իշխանությունների ու ռուսական սևհարյուրակային մամուլի կողմից։ 1890 թ. «Մշակ»-ի ու նրա խմբագրի հոբելյանական տոնահանդեսի պատվավոր հյուրերի թվում էր պալատական իշխան Շիրվաշիձեն, գրպանում Ռուսաստանի ներքին գործերի մինիստր Գ. Դուռնովոյի հեռագիրը՝ մեծապես նպաստել տոնակատարության կազմակերպմանը, քանի որ Գր. Արծրունին մարտնչում է հանուն ռուսական իդեալների կենսագործման[202]։

Երկու տարի անց, Գր. Արծրունու մահվան առթիվ, «Ռուսկիե վեդոմոստի» լիբերալ թերթը գրում էր. «Հանձին Արծրունու գերեզման իջավ հայ ինտելիգենցիայի լավագույն մասի ամենահեղինակավոր ներկայացուցիչը և հայ հասարակության առաջադեմ ձգտումների ամենատաղանդավոր արտահայտիչը»[203]։

Որ Գր. Արծրունին իրոք ժամանակի հայ հասարակության առաջադեմ ձգտումների տաղանդավոր արտահայտիչն էր, դա անվիճելի է, սակայն «առաջադեմ ձգտումներ» հասկացողությունը «Ռուսկիե վեդոմոստի»-ն ըմբռնում էր, հարկավ, վելիկոռուսական շովինիզմի, ցարիզմի նվաճողական քաղաքականության գովերգուի դիրքերից։

Հետաքրքիր է, որ ցարական գրաքննության և իշխանությունների կողմից «Երիտասարդ Հայաստանի» (կամ «Մա-

199 «Մշակ», 1877, № 26։

200 Նույն տեղում, № 30։

201 Նույն տեղում, № 83։

202 Տե՛ս ՀԿՊԴԱ (ЦГИАЛ), ֆ. 777, ցուցակ 4, գ. 2, թ. 18։

203 Տե՛ս Լեո, Գրիգոր Արծրունի, հատ. 3, էջ 474—475։

նուկ Հայաստանի») օրգան համարվում էր ոչ թե «Մշակ»-ը, այլ «Արձագանք»-ը, որին, ի դեպ, անխղճորեն որակում էին նաև «Ռուսաստանում հրատարակվող արտասահմանյան օրգան»[204]։

Նշենք, որ Րաֆֆու՝ Արծրունուց հեռանալու հիմնական պատճառներից մեկն էլ վերջինիս քաղաքական դիրքավորումն էր, արևմտահայ ժողովրդի ազատագրումը նախ և առաջ ցարիզմի նվաճողական քաղաքականության հետ կապելու միտումը։

Ազատագրական շարժման նրա կոնցեպցիայում տեղ չէր գտնում ռուսական ցարիզմի դեմ ըմբոստանալու որևէ հայեցակետ։ Նա նույնիսկ սարսափում էր այն մտքից, թե արևելահայերը երբևիցե կարող են ապստամբել Ռուսաստանի դեմ[205]։

Սակայն Արծրունուն չպետք է դասել իրենց շահերը սեփականական շահերի մեջ տեսնող ու նրա գործակալները դարձած Ալ. Անանովի, Հ. Խատիսովի, Գ. Այվազովսկու և նրանց համախոհների շարքում, որոնց մոտ պահպանողականներն անգամ վախենում էին ազատ խոսել։

Եղել են վայրկյաններ, երբ Րաֆֆին ևս որոշ ակնկալիքներ է կապել ռուսական բանակների առաջխաղացման, իսկ երբեմն էլ եվրոպական դիվանագիտության հետ։ Բայց նա շուտով սթափվեց, հուսախաբվելով հարստահարվող ազգերի պաշտպան հռչակված Ռուսաստանի բռնապետական քաղաքականությունից և Ռ. Պատկանյանի հետ համաքայլ, որը երբեք չէր մոլորվել ցարիզմի ազատագրական միսիայի հրապույրով, նորից հնչեցրեց զինավառ պայքարի իր փողը։

«Կայծեր»-ի երկրորդ հատորի հրատարակման առթիվ իր դժգոհությունը հայտնելով Սողոմոն խան Մելիք-Մեհրաբյանից, Րաֆֆին վրդովված բողոքում էր. «Նա ինձ ասում է. «Դուք պրոպագանդիստ եք, հեղափոխություն եք քարոզում»։ Եղբայր, ձեզ ինչ, ասում եմ, ես Թուրքիայի դեմ եմ և ոչ Ռու-

---

204 ԼԿՊՊԱ (ЦГИАЛ), ֆ. 776, ց. 11, գ. 75, 1883 թ., թ. 70—80։

205 Տե՛ս Շիրվանզադե. Երկերի ժողովածու, հատ. 6, էջ 174, տե՛ս նաև «Գործ», Բաքու, 1917, № 11—12, էջ 14 (Դ. Անանունի «Գր. Արծրունին» հոդվածը)։

սատանի։ Այդ ինչ կառավարություն է, ինչ օրենքներ են. նույնիսկ Պարսկաստանում չկան այդպիսի խստություններ»[206]։

Բայց ցարական իշխանությունն ու նրա գրաքննությունը հասկանում էին, որ Րաֆֆու հայրենաշունչ ստեղծագործությունները վտանգավոր են և իրենց համար։ «Խենթ»-ի վերահրատարակումն արգելելիս նույնիսկ ուղղակի նշվեց այդ հանգամանքը[207]։

«Սամվել»-ում Րաֆֆին քողարկված ձևով ըմբոստանում էր հայկական դպրոցները փակող ու հայ ժողովրդի դարավոր մշակույթը ոտնահարող ցարական բռնապետության դեմ, իսկ «Խամսայի մելիքությունները» ցասկոտ մեղադրանք էր, նետած Սյունիքի և Ղարաբաղի հայ ավատական իշխանությունների կործանման հիմնական պատճառ հանդիսացող ցարական Ռուսաստանի հասցեին։

Ցարիզմի ազատագրական միսիայի անանկությունն առավել ակնառու էր ռուսական միջավայրում գործող հայ «երևելիների» համար։ Սերտ ու հարատև շփումը ռուս բյուրոկրատիայի և նրա կողմից ղեկավարվող դիվանագիտության հետ, նրանց հնարավորություն էր ընձեռել ամբողջությամբ ընկալելու ցարիզմի կողմից նվաճված ժողովուրդների նկատմամբ վարվող քաղաքականության ողջ ողբերգականությունը։

Այդ երևելիներից մեկի՝ Կ. Եզյանի առջև Անդրեաս Արծրունին արտնջում էր մխիթարյան հայրերից, որոնք կամ չեն հետաքրքրվում ազգային-քաղաքական խնդիրներով, կամ էլ բաղդատելով Թուրքիան և Ռուսաստանը՝ գերադասելի են համարում վերջինս, քանի որ արևելահայերը կրթական զարգացման առավել հնարավորություններ ունեին, քան նրանց արևմտահայ եղբայրները։ «Ա. Արծրունին դժգոհ էր,— գրում է Աշոտ Հովհաննիսյանը,— որ Մխիթարյանները ջանք չեն գործ դնում խորհելու «երկրորդ ճանապարհի վրա», այսինքն՝ Հայաստանի ազատագրման ճանապարհի վրա, որ նախընտրելի էր համարում Եզյանը (ընդգծումը մերն է — Ռ. Հ.) և

206 Տե՛ս Շիրվանզադե, Երկերի ժողովածու, հատ. 8, էջ 115։

207 ՎԿՊՊԱ, ֆ. 114, գ. 976, թ. 472։

որը երկուսին լավագույնն է նաև իրա՝ Անդրեաս Արծրունու կարծիքով»[208]։

Օտարներին վստահել, ովքեր էլ նրանք լինեն, նշանակում է միայն մի շղթան փոխարինել մյուսով — այսպես էր դատում Մ. Մամուրյանի հերոսը[209]։

Անխնա պախարակելով ինչպես եվրոպական տերություններին, այնպես էլ «հյուսիսի հսկայի ոտը լզողներին», Մամուրյանը ցասումով նետահարում էր «Մեղու Հայաստանի»-ի Կ. Պոլսի թղթակից Սոսյունին, որը «կմիտի անդամալուծել հայ ժողովուրդը և վայն Ռուսիո գիրկը նետել»[210]։ Թեպետ Մ. Մամուրյանի հայացքն էլ երկար հառած մնաց Միջերկրականի հորիզոնում միրաժվող Սովադայլին։

Զուտ օսմանյան դիրքորոշում ունեին հատկապես թուրքական ծառայության մեջ գտնվող հայ պաշտոնյաները, որոնց մեծագույն մասի ցանկությունն էր արտահայտում Ստեփան Ասլանյանը, 1887 թ. ապրիլի 4/16-ին Ստ. Փափազյանին գրած իր նամակում հայ գործիչների ապագա իմաստությունն ու շրջահայեցությունը տեսնելով նրանում, որ «ռուսը միշտ թըշնամի նկատենք, զօսմանցին միշտ բարեկամ մեզ պահենք... և... աշխատինք ներքնապես զորանալ ուսմամբք, կրթությամբ և հարստությամբ և հուսալ իրավամբ՝ որ օր մը 78-ի, սերմանյալը պիտի հնձենք...»[211]։

Սակայն ինչպես բոլոր ողջախոհ հայ գործիչները, այնպես էլ ժողովրդական լայն զանգվածները երկու պետություններին համեմատելիս, հարկավ, գերապատվությունը միշտ էլ թողնում էին Ռուսաստանին, անգամ իրավացի նշելով, որ բարենորոգումները Թուրքիայում, միևնույն է, չեն իրագործվելու և արևմտահայ ժողովուրդը կամ պետք է հասնի Արևմտյան Հայաստանի՝ Ռուսաստանին անցնելուն, կամ երկնի հնարավորություններ անկախություն ձեռք բերելու համար

208 Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 2, էջ 196։

209 Մ. Մամուրյան, Սև լեռան մարդը, էջ 131։

210 «Արևելյան մամուլ», 1881, հունիս, էջ 227։

211 Տե՛ս «Անահիտ», 1907, № 6—9, էջ 144։

Հայ գործիչների Թուրքիան գերադասող չնչին մասը հետագայում ընկավ Հ. Թումանյանի հատու գրչի տակ. «Ով Ռուսաստանի դեմ պաշտպանել է Տաճկաստանին, նա մեղսակից է տաճկական գազանություններին ու հայկական սարսափներին»[212]։

Հայ առաջադեմ հոսանքների ռուսական դիրքորոշմանն էր հակվել դեռ մեծանուն Նալբանդյանը։

Նշավակելով ցարական Ռուսաստանին, որը «խաբկանոք ճանկել է Վրաստանը և Հայաստանի մի մասը և ճնշում է նրանց յուր ծանրության տակ»[213], նա միաժամանակ գերադասում, նախապատվությունը տալիս էր Ռուսաստանին։

Ցարիզմի նկատմամբ ունեցած բացասական վերաբերմունքը չէր խանգարում նրան նշմարելու այն ակնհայտ տարբերությունը, որը գոյություն ուներ Ռուսաստանի և Թուրքիայի տիրապետության տակ գտնվող ժողովուրդների տնտեսական ու քաղաքական կացության միջև։

Նա գիտակցում էր, որ հայ ժողովրդի մի հատվածը, ճնշվելով ցարիզմի տիրապետության տակ, միաժամանակ յուրացնում էր հումանիստական ու առաջավոր այն կուլտուրան, որն ստեղծել ու ստեղծում էր ռուս ժողովուրդը։

Նա որոշակի տեսնում էր ցարիզմի կողքին բարձրացող երկրորդ Ռուսաստանը և ցանկանում, որ արևմտահայ ժողովուրդը տնտեսական-քաղաքական կապերի մեջ մտնի մի երկրի հետ, որտեղ մարդկային թշվառությունները վերլուծող, քաղաքական միտքն արդեն հարց էր տալիս. «Ո՞վ է մեղավոր» և «Ի՞նչ անել», ու դրանց պատասխանն էր փնտրում։

Արևմտահայ ազատագրական շարժման առաջատար ուժը «երրորդ դասն» էր, որպես առաջնորդ ունենալով հայ դեմոկրատական մտավորականությունը։ Իսկ հայկական խոշոր բուրժուազիան սարսափում էր զինված պայքարի, հեղափոխության ուրվականից իսկ, ու խարազանելով անգամ ինքնապաշտպանության գաղափարը, որը «գրգռում է թուրքերին»,

---

212 Հ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4, էջ 230—231։

213 Մ. Նալբանդյան, Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, 1954, Երևան, էջ 94։

հանդես էր գալիս «բարեխնամ» տերության ծառայելու, իսկ լավագույն դեպքում գաղթելու կամ բարենորոգումների համար եվրոպական դիվանագիտության դիմելու պահանջով միայն։ Երբեմն էլ նրա առանձին ներկայացուցիչներ նույնիսկ դիմում էին բացահայտ մատնության։

Զուր չէր Մ. Նալբանդյանը կասկածի տակ առնում հայ մեծատունների հայրենասիրությունը, որոնք երկու կոպեկով ոչ միայն ազգասեր պատվանունը, այլև իրենց ամբողջ ազգի և հարազատ հոր ոսկորներն իսկ կհանեն գերեզմանից ու կվաճառեն[214]։

Երկրային բարիքներն աստված ստեղծել է բոլոր մարդկանց համար, գրում էր «Պսակ»-ը, բայց աղաներն այն հափշտակել են[215]։

Իսկ Գր. Արծրունին անգամ նախազգուշացնում էր արևմտահայերին, որ հսկա կալվածքներ ունեցող հայ բուրժուան նույնպես հարստահարող է, ինչպիսին քուրդ և թուրք որևէ բեյ, և որ Արևմտյան Հայաստանի հողերը պետք է բաժանվեն ոչ թե նրանց, այլ հարյուրհազարավոր մանր տնտեսությունների, որպեսզի կանխվի հայ աշխատավորի շահագործումը սեփական կեղեքիչների կողմից։ Որովհետև «... շատ անգամ հայը ավելի մեծ թշնամի է հային, քան թուրքը և քուրդը, նայելով, թե որ դասակարգին է պատկանում հայը»[216]։

Գ. Արծրունին երբեմն այնքան առաջ էր գնում, որ արևմտահայերից պահանջում էր թուրք, քուրդ և մյուս ազգությունների ներկայացուցիչների հետ թուրքական կառավարության և օտար ու սեփական հարստահարիչների դեմ միասնաբար հանդես գալ որպես Հայաստանցի կեղեքվողներ[217]։ Խիստ կերպով պախարակվում էր հատկապես պոլսահայ առևտրական բուրժուազիան։

«Արծրունու նիզակներն ուղղված էին,— իրավացիորեն նկատում է Վ. Ռշտունին,— Թուրքիայի մայրաքաղաքի առև-

214 Մ. Նալբանդյան, *Երկերի լիակատար ժողովածու*, հատ. 1, էջ 225։

215 «Պսակ», 1880, № 1։

216 «Մշակ», 1882, № 103։

217 Նույն տեղում, 1881, № 34։

տրա-վաշխառուական կապիտալի վերնաշենքի դեմ, որը ոչ միայն տնտեսական, այլև քաղաքական սերտ կապերով կապված էր ֆեոդալական բռնակալության հետ և Թուրքական օրինատացիայի մոլի կողմնակից էր, որի դեմ վճռական ու անհաշտ պայքար էր մղում «Մշակ»-ը...»[218]։

Քիչ ուշ Ե. Օտյանը շամփրում էր բարեբարի հովերով ապրող ազգային բուրժուազիայի պարարտ ասպետներին, ազգային եկամուտները գափելու մեջ մեղադրում նրանց, որոնք միլիոնատեր դառնալու համար տենչում էին նույնիսկ, որ պատերազմները երկար տևեն[219]։

Հիշենք, որ բուլղարական ազատագրական շարժումների շրջանում ժողովրդական կոմիտեները այնպես էին հեռու մնում հարուստ վաճառականներից ու վաշխառուներից, նույնիսկ դիպլոմավոր գիտնականներից, ինչպես Թուրքերից, որովհետև նրանք «ունեոր մարդիկ էին, ուրեմն առանձնապես չշահագրգռված Բուլղարիայի ճակատագրով»[220]։

Րաֆֆու՝ ժողովրդի մեջ գնացած հերոսը, իր մեջ համարձակություն էր գտնում հայ գյուղացու ականջին շշնջալու նաև սոցիալական անհավասարության ու այն շտկելու անհրաժեշտության մասին։

Նարոդնիկական գաղափարախոսության ազդեցությունը, հարկավ, դրոշմվել էր Դուդուկչյանի հավատամքերի վրա, բայց իրավացի չէ այն պնդումը, թե միայն «ռուս հեղափոխական նարոդնիկությունն էր, որ հայթայթում էր Րաֆֆուն ժողովրդի մեջ գնացած հեղափոխականի գեղարվեստորեն նկարած օրինակը»[221]։

Րաֆֆու, Ռ. Պատկանյանի և նրանց ժամանակակիցների ստեղծած ու մատնանշած ժողովրդական հայրենասերների կողքին հանդես էին գալիս և նոր սերնդի գրողների ուրվագծած կերպարները։

---

218 Վ. Ռշտունի, *Հայ հասարակական հոսանքների պատմությունից*, Երևան, 1956, էջ 360։

219 Ե. Օտյան, *Երկերի ժողովածու*, Երևան, 1960, հատ. 1, էջ 315։

220 З. Стоянов, Записки о болгарских восстаниях, էջ 87։

221 Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը*, հատ. 1, էջ 136։

*Նարոդնիկական հովերով շոյված Վրթանես Փափազյանի «Սոխակի որդին» նոր ժամանակների Ալասին էր՝ սուր մերկացրած ոչ միայն օտար, այլև հայրենի հարստահարիչների դեմ։ Փափազյանը կերտել է նաև կեղեքող քահանաների, Տեր-Սարգսի հետնորդների՝ Տեր-Մարտիրոսի, Տեր-Խորենի, Տեր-Գալուստի տիպականացված դիմապատկերները, որոնք այնքան բնորոշ էին հատկապես այն ժամանակի հայ իրականության համար։*

*Համարձակ ու դիպուկ է հնչում Ա. Արարատյանի սոցիալական բողոքը։ Թուրք-քրդական յաթաղանից Արևելյան Հայաստան փախած հայ մուրացկանն իր մաղախում եղած հացը բաժանում է վաշխառուի ու կալվածատիրոջ կեղեքումներից աղքատության վերջին ծայրին հասած արևելահայ մի ընտանիքի*[222]*։*

Հայ ազատագրական շարժման գաղափարախոսության ելևէջներում հստակորեն ուրվագծվում էր այն ճանապարհը, որը պայքարի պրոպագանդայի ուղին տանում էր դեպի ատելություն ու կռիվ ոչ թե թուրք ժողովրդի, այլ թուրքական ֆեոդալիզմի բարբարոսական ու ճնշող իրավակարգի և սուլթանական կառավարության, հայրենի երկիրն ավերող տիրապետող դասակարգերի ու նրանց բռնության դեմ:

*Ազատագրական շարժմանն հետամուտ կազմակերպություններն ու խմբակներն ունեին որոշակի տեսակետ՝ հիմնականում խարսխված հայ ժողովրդի սոցիալ-քաղաքական ազատագրման գաղափարին։*

*Այս առնչությամբ հատկանշական է իր երկարաձգված թելերով Թիֆլիսի, Երևանի ու Արևմտյան Հայաստանի կազմակերպությունների հետ կապված Մոսկվայի «Հայրենասերների միության» դիրքորոշումը։ «Մահառիթ պատերազմ» հայտարարելով հայ ժողովրդի անլուր շահագործման սկզբնապատճառ հանդիսացող թուրքական կառավարությանը, «Միության» օրգան «Ազատության ավետաբեր»-ը հայ ժողովրդի պարտքն էր համարում ու հաղթանակի հավատով կոչ*

222 *Տե՛ս* Ա. Արարատյան, *Փնջիկ, Թիֆլիս, 1885, էջ 27։*

անում նրան՝ վինված ուժով տապալել սուլթանական անարգ լուծը և «ապրել ազատասեր ժողովրդին վայել ինքնուրույն կյանքով»[223]։ Այս դայրալից նշավակելով քրդերի ու թուրքերի հետ միասին իրենց հայրենակիցներին կեղեքող հայ մեծատուններին, համարձակ պարզում էր իր դավանանքը, որ քաղաքական ազատությունը հայ ժողովրդի համար անամեջ խոսք կլինի միայն, եթե հայ երկրագործը, արհեստավորն ու մշակը պետք է նորից հարստահարվեն։

«Ազատության ավետաբեր»-ն անարգանքով է հիշում նաև այն ծայրահեղ ազգասերներին, որոնք «ատելով օտար ազգերին, երևակայում են, որ սիրում են իրենց հայրենիքը», ինչպես և նրանց, ովքեր, «համամարդկային կոսմոպոլիտիզմը քողով ծածկում են իրենց ոչնչությունը»։

«Հայրենասերների միության» գաղափարախոսության սոցիալական այս ելակետը տրամաբանորեն հասցնում էր նրան՝ իր քաղաքական ծրագրերում դեմոկրատական հիմնաշերտի վրա խարսխել ապագա Հայաստանի քաղաքական կառուցվածքը[224]։

Մի հարցադրում, որը թեպետ երբեմն խաթարվեց առանձին գործիչների կողմից (Ռ. Պատկանյանի «Վարդապետարան»-ում եղած շեղումները և այլն), բայց հետևողականորեն պաշտպանում էր ժամանակի հայ դեմոկրատական մտավորականությունը՝ հակառակ կղերա-ռեակցիոն բանակի մոլեգին հարձակումների, որոնց նահապետը՝ Գ. Այվազովսկին դեռ 1860 թ. շարունակում էր մրոտել «Մասյաց Աղավնու» գորշ էջերը, թե մարդկանց հավասար լինելու մասին մոլորությունը տարածված է հատկապես այն ժողովուրդների մոտ, որոնք «կամ հասարակապետական կառուցվածք ունեն, կամ ազգային սեփական կառավարություն չունեն»[225]։

Բայց ինչպես ազգային համերաշխության, այնպես էլ դեմոկրատական հիմունքներով ստեղծվելիք պետության դա-

---

223 «Ազատության Ավետաբեր», 1884, № 4։

224 Տե՛ս ՀԿՊԴԱ, ֆ. 51գ/115գ, ց. № 2, գործ 12, թ. 1—23։

225 «Մասյաց Աղավնի», 1860, № 92։

գաղափարը վաղուց էր ծառացել հայ գործիչների առջև ու մշակվել նրանց ստեղծագործ մտորումներում։

Դեռ Մադրասի խմբակի անդամներն էին դատապարտում հայ պետականության բռնապետական անցյալը և դեմոկրատական կարգեր առաջարկում հայկական ապագա պետության համար, համոզված, որ հայ ժողովուրդը, անկախություն ստանալով, այլևս երբեք չի ցանկանա վերականգնել այն «սարսափելի տերությունը, որի շահավետությունը բարձրացել էր միայն մինչև գարշապարն, իսկ վնասը հասել մինչև գլուխը...»[226]։

Հետագայում Գ. Աղայանը, ազատագրական շարժման հետ միասին, շեփորում էր հավասարության սկզբունքով կառուցվելիք ապագա հասարակարգի մասին[227]։ Իսկ Ե. Օտյանի հերոսը բարբառում՝ որ «ամեն մարդ հավասար է, ժողովուրդը պետք է իր ճակատագրին տեր ըլլա, ալ անցած են բռնակալության խավար դարերը, արևը ամենուն համար կփայլի»[228]։

Տակավին 1876 թ. Հարոն համակրանքով էր խոսում ֆրանսիական հասարակապետության մասին, որին «Նապոլեոն III-ի հանցավոր ձեռքը պետական հարվածով ոչնչացրեց»[229]։

Ի դեպ, XIX դարի 60—70-ական թվականներին, բուլղար հեղափոխականները, իրենց ազատագրական ծրագրերում, նույնպես առաջ էին քաշում ու պաշտպանում կառավարման ժողովրդական վարչության՝ հանրապետության գաղափարը[230]։

Հայ ազգային-ազատագրական շարժման գաղափարախոսության սոցիալական այս ելակետով ինքնին բնորոշվում է օտար լուծը թոթափելու հետամուտ հայ ազատամարտի ժողովրդական-դեմոկրատական բովանդակությունը։

---

226 Հ. Շահամիրյան, Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1913, էջ 35։

227 Գ. Աղայան, Երկերի ժողովածու, հատ. 3, էջ 97։

228 Ե. Օտյան, Երկերի ժողովածու, հատ. 1, էջ 315։

229 Հարո, Հայոց մամուլը, 1876, Թիֆլիս, էջ 24։

230 Տե՛ս «История Болгарии», հատ. 1, էջ 270։

## ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

# ԿԱՐԻՆԻ «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

*XIX դարի արևմտահայ ազգային-ազատագրական շարժումների պատմության մեջ իր առանձնահատուկ տեղն ունի Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը, որն իրենով սկզբնավորեց թուրքական բռնապետության դեմ հայ ժողովրդի՝ 80-ական թվականներին վերսկսած պայքարի ու մաքառումների նոր շրջանը։*

*«Պաշտպան հայրենյաց»-ի գործունեության գնահատման խնդրում կարևոր նշանակություն ունի անշուշտ այն իրողությունը, որ նրա ոգեկոչման ու հետագա պայքարի գրական ու քաղաքական բոլոր կողմերը հիմնականում բնորոշ են XIX դարի 60—80-ական թվականների հայ ժողովրդի ազգային վերածննդին ազդանշող ազատագրական շարժումներին ընդհանրապես։*

*1877—1878 թթ. ռուս-թուրքական պատերազմից և նրան հաջորդած Սան-Ստեֆանոյի համաձայնությունից ու Բեռլինի կոնգրեսից հետո հուզումնալի մի շրջան էր ապրում հայ ժողովուրդը։ Հորդացել էր պայքարի նրա կորովը և օրը թնդում էր «երկաթյա շերեփի» զնգոցով։ Երբ բարենորոգումների գործադրությունը հապաղելու հետ միասին «... հարստահարիչ ցեղին կներվեր զինված մնալ, և հարստահարեալ ցեղին զինվելը խստությամբ կարգիլվեր, իրողությանց բնական ընթացքով հարստահարյալները հորդորվեցան գաղտնապես զինվելու, զինյալ հարստահարիչներուն ընդդիմանալու...»*[1]։

---

[1] Մ. Օրմանյան, *Խոհ և խոսք*, էջ 119։

«Կեցցե Հայաստան» կը պոռայինք ու «Մեր հայրենիք թշվառ անտեր» կերգեինք, «Թող կործանի Թուրքիան» գոչելով։ «Ազատն աստված» կորոտայինք, բաժակներ քամելով Նալբանդյանի հիշատակին»[2]։

Ռուսական բանակների հաղթական մուտքը Կարին, իր հետ բերեց նրա շարքերում մարտնչող հայ ռազմիկների, սպաների ու գեներալների սերտ շփումը քաղաքի երիտասարդության հետ, որոնք ցարիզմի նվաճողական քաղաքականության մեջ տեսնելով արևմտահայ աշխատավորության ազատագրման որոշ երաշխիք, նոր շունչ ու ավյուն ստացան, հույսի նոր շող նշմարեցին թուրքական բռնակալության դեմ ըմբոստանալու իրենց հինավուրց ծրագրերի նորոգվող ուղիներում։

«... Բյուր շնորհակալություն ռուսական բանակին հետ Կարին մտած ազգասեր հայոց,— գրում էին «Մշակ»-ին Կարինից,— որոնց ջանիվք... մեկուսացյալ սրտերը իրարու մոտենալով, մտքերը ի մի կետ ուղղվելով՝ վերջապես կարելի եղավ խորհել կրցող գլխոց գաղափարները ի մի կաղապար ձուլելու...»[3]։

1877 թ. Կարինում ստեղծված «Թատերական ընկերությունը», որը գոյություն ունեցավ մինչև 1879 թ. հունիս ամիսը, Պ. Դուրյանի ու Մ. Պեշիկթաշլյանի պատմական պիեսների բեմադրությամբ հայրենասիրական ոգի էր ներշնչում ժողովրդին։ «Գայլ Վահանն յուր ամենի կատաղությամբ, Ս. Ներսեսն յուր անսանձ խանդերովն երևնալով թատերաբեմի վրա իրենց հուսաբեկ որդիները սրտապնդեցին»։

Թատերական ներկայացումներից ստացած եկամուտները հատկացվում էին պատերազմի օրերին և դրանից քիչ հետո

---

2 Հ. Մ. Նշկյան, *Առաջին կայծերը*, էջ 111—112։

3 «Մշակ», 1879, № 110։ Այս շրջանի և հետագա դեպքերը գեղարվեստորեն արտացոլվել են Ատրպետի «Ալմաստ» վեպում, ուր երբեմն կատարվել է նույնիսկ անունների նմանեցում. Կարապետ Նշկյանը դարձել է Նշան Կարապետյան և այլն։

ստեղծված հայրենասիրական ընկերություններին. «Սուրբ նպատակին գործադրության միջոցներ հայթայթելով»։

Իսկ այդ սուրբ նպատակը ժողովրդին իր ազատության համար պայքարի նախապատրաստելն էր։ Դեռ 1878 թ. նոյեմբերի 10-ին, Կ. Պոլսից Կարին Հ. Նշկյանին գրած պատասխան նամակում Մ. Խրիմյանը ոգեշնչում էր նրան. «Քաջալերե և զինե քեզ նման հայրենակիցներդ, լույս և երկաթ միասին լծորդելով վազեցեք դեպի... ապագան»[4]։

«...Այսօր ժամն եկած հասած է, ժամ փրկության... գործեցեք ուրեմն զգաստ և խոհեմ գործեցեք, դուք պիտի հաղթանակեք, ինչպես հաղթեցին ձեր նախնիքները... և ձեզ հետ Բարձր-Հայաստան պիտի բարձրանա և լինի ազատ, անկախ և փառավորյալ»։

Այսպես էր ազդարարում Կարինի հայությանը պատրիարքական պատվիրակ Վահան Մինասյանը 1879 թ. մայիսի 24-ին՝ Ազգային սահմանադրության 19-րդ տարեդարձի տոնակատարության օրը, Կարինից մեկ ժամվա հեռավորության վրա գտնվող Գ. Լուսավորչի վանքի բեմահարթակից[5]։

Ուրեմն արդեն ոչ թե լոկ բարենորոգումների, այլ ազատ, անկախ Հայաստանի ոգին էր թևածում արևմտահայ ժողովրդին խեղդող կապարե երկնակամարում, ուր բոլորն էլ հորիզոնում նշմարում էին ազատության երկնող լուսե ճառագայթներ։

1879 թ. Կարինում «Ղևոնդյան»[6] ու «Վարդանանց» ընկերությունների արանքում կռունկի թևեր առած թռչում-գործում էր բարենորոգումների նպատակով որպես Բ. Դռան պաշտոնական ներկայացուցիչ Կարինում գտնվող Վանի նախկին փոխկուսակալ Մարկոս Աղաբեգյանը։ Ինչպես անցյալը դառը հուշ՝ ետևում թողած Ազգային սահմանադրության գովերգուի անփառունակ իր տարիները, իսկ սրտում սուլթանի

4 Հ. Նշկյան, Առաջին կայծեր, էջ 64։

5 «Մշակ», 1879, № 105։

6 «Ղևոնդյան» ընկերությունը ենթադրում ենք՝ նույն «Դպրաց», ընկերությունն էր։

երկյուղը թաքցրած, նա իր ժողովրդի համար ազատության ուղիներ էր որոնում կարծես։

1880 թ. «գաղտնի պատճառով մը» միաժամանակ Կարին են այցելում Կոնստանդին Կամսարականը և Հովսեփ Շիշմանյանը (Ծերենց)։ Նրանց կատարած գործունեության մասին որոշակի ոչինչ հայտնի չէ, բայց ենթադրելի է այն գործուն դերը, որ նրանք հավանաբար խաղացին Կարինի եռացող մթնոլորտում։

1881 թ. հունիսի 25-ի զեկուցագրում Կարինի ռուսական գլխավոր հյուպատոս Ս. Դիննեսը գրում էր Կ. Պոլսի իր դեսպանին, որ Կարին մտնելիս հենց առաջին ակնթարթ աչքի է զարնում հայերի մոտ եղած արտակարգ հուզված տրամադրությունը, որոնք օր առ օր սպասելով բարենորոգումների, միաժամանակ երազում են հին Հայաստանի քաղաքական վերածնության մասին[7]։

Կարինի հայ ազգաբնակչությունը անտարբեր չմնաց նաև հին օրերի առաջնորդ Հարություն Վեհապետյանի նկատմամբ, և նոր օրերի շունչը ազգային գավառական ժողովում Պալյարյանի, Փաստրմաճյանի և Տեր-Ազարյանի բերանով պահանջեց նրա հրաժարականը։

Կարինի հայրենասիրական ուժերն իրենց այնքան կազմակերպված ու ամուր էին զգում, որ 1879 թ. Կ. Պոլիս ուղարկեցին Հայաստանի բարենորոգումների սեփական ծրագիր, թեպետ այն նկատելիորեն կրում էր Բեռլինի կոնգրեսին ներկայացված հայկական ինքնավարության ծրագրի ազդեցությունը[8]։

Թուրքական իշխանություններն արդեն կասկածներ ունեին հայերի մեջ կատարվող խմորումների մասին։ Մուստաֆա փաշան Կարինի իր կուսակալության առաջին շրջանում իսկ այդ զգաց և շտապեց արգելել թատերական ներկայացումները, որոնք գրգռում էին հայ երիտասարդության մտքերը։ Հ. Նշկյանի վկայությամբ, այդ շրջանում Կ. Պոլսից, Բ. Դռան

---

7 ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881—1884 թթ., գ. 1625, թ. 16։

8 Այդ ծրագիրը տե՛ս «Փորձ», 1879, № 9, էջ 181—197։

հանձնարարությամբ, հարկային կարևոր պաշտոնով Կարին է գալիս ոմն Գ. Ա., «Ազգային խնդիրներով մեծապես հետաքրքրվող... զարգացած, մի քանի լեզուների հմուտ, կարող, բանիբուն», Մ. Օրմանյանի հետ «կաթոլիկ եկեղեցիէն մայր եկեղեցու գիրկը վերադարձած» մեկը, որը 1878—1880 թթ. ընթացքում մի շարք փորձեր կատարեց, իբր գաղտնի հեղափոխական խմբեր ստեղծելու, բայց շատ ուշ պարզվեց, որ նրա նպատակն է եղել, ըստ Նշկյանի, ոչ թե նման խմբերի ստեղծումը, այլ նրանց հայտնաբերումն ու իշխանությանը մատնելը[9]։ Այդ օրերին էր, որ ավելի մեծ լիազորություններով և նույն գաղտնի հանձնարարությամբ Վան մեկնեց Սամի փաշան։

Սակայն ազատագրական շարժման գաղափարական ու գործնական վերելքը ակնհայտ էր, և առաջին պահ նրա տաբերային թափը իր հետ տարավ ու մոլեգնած հորձանքներում կարծես թե խեղդեց այդ վաղեմի ու թունոտ ախտը։

Նույն շունդալից օրերին, Կարինի հայրենասիրական գաղափարներով տոգորված երիտասարդության ջանքերով և Կարինի առաջնորդ Մ. Օրմանյանի խորհրդով, միավորվեցին նախկին չորս ընկերությունները («Վարդանանց», «Դպրաց», «Ուսումնասիրաց» և «Ընթերցասիրաց») և հիմնադրվեց «Բարձր Հայոց ընկերություն»-ը։

Թուրքական իշխանությունները «Բարձր» բառի մեջ իրենց համար ինչ որ ստորացուցիչ երևույթ տեսան և կասկածեցին նրա քաղաքական բնույթի մասին, ուստի այն շուտով խափանվեց։

Քիչ ավելի ուշ՝ 1881 թ. մայիսին[10] երիզագործ Խաչատուր Կերեքցյանի ղեկավարությամբ հիմնադրվեց «Պաշտ-

---

9 Հ. Նշկյան, Առաջին կայծերը, էջ 107։ «Մասիս»-ի 1879 թ. 2462-ում բերված է Օրմանյանի հետ լուսավորչական դարձած 35 անձանց ցուցակը, որտեղ Գ. Ա. տառերով սկսվող անուն ազգանունով միայն մեկը կա՝ Գևորգ Ազնաուր։ Կարծում ենք Հ. Նշկյանը հենց նրան էլ ի նկատի ունենի։

10 Մ. Օրմանյանի մոտ («Խոհ և խոսք», էջ 119) տրված է 1882 թ. առաջին կեսը, որով հավանաբար նա նշել է կազմակերպության մեջ իր մտնելու կամ այն իրեն հայտնի դառնալու ժամանակը։

պան Հայրենյաց» ազատագրական-հեղափոխական գաղտնի կազմակերպությունը, միշտ իր վրա կրելով «Երկրագործական ընկերություն» անմեղ անունը։ Սկզբում նախատեսվում էր կազմակերպությունն անվանել «Մասիս լեռների միություն», բայց հետո նպատակահարմար գտան հրաժարվել այդ մտադրությունից։

Կազմակերպության ղեկավարությունն իրականացվում էր հինգ հոգուց կազմված (ըստ Հ. Նշկյանի՝ վեց. Խաչատուր Կերեքցյան, Կարապետ Նշկյան, Հակոբ Իշղալացյան, Հովհաննես Աստուրյան, Եղիշե Տուրսունյան, Ալեքսան Էթալիկյան և որպես յոթերորդ՝ խորհրդակից անդամ Հակոբ Նշկյան) հեղափոխական շտաբի՝ Գլխավոր խորհրդի (Գերագույն խորհուրդ)[11] միջոցով, առանց որևէ գրավոր կանոնադրության։

Հավանական պետք է համարել, որ Գերագույն խորհուրդը կազմված էր Նշկյանի բերած ցուցակի առաջին հնգյակից։ Նրանցից Ե. Տուրսունյանը խուսափից ձերբակալությունից, որը և գուցե Սարուխանին հանգեցնում է խորհուրդը չորս հոգուց կազմված լինելու մասին ոչ ճիշտ եզրակացությանը[12]։

Կազմակերպության ծրագիր-մինիմումը եղել է հայ ժողովրդի ինքնապաշտպանության կազմակերպումը, որի մասին հետագայում, դատավարության ժամանակ, խոստովանում են կազմակերպության բանտարկված և թուրքական դատարանի առջև կանգնած անդամները, իսկ ծրագիր-մաքսիմումը՝ Հայաստանի անկախության վերականգնումը, որը հասկանալի պատճառներով չեն խոստովանում նրանք։

---

11 Լեոն ժխտում է, ենթադրելով, որ «Պաշտպան Հայրենյաց»-ը սկզբում կոչվել է «Գերագույն խորհուրդ» (տե՛ս «Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը», հտ. 1, էջ 139)։ Մինչդեռ այդպես կոչվել է կազմակերպության ղեկավար օրգանը։ Այդ հարցում իրավացիորեն քննադատելով Լեոյին, Ա. Գյուլխանդանյանը, սակայն, անգիտանում է, թե ինչու Լեոն ժխտել է այն։ Անկասկած Գյուլխանդանյանը տեղյակ չէ, որ «Պաշտպան Հայրենյաց»-ը ունեցել է «Գերագույն խորհուրդ» անունով ղեկավար կենտրոն։

12 Սարուխան, Առաջին ժողովրդական շարժումը Տաճկական Հայաստանում (տե՛ս «Գործ» (Բաքու), 1917, № 3)։

1882 թ. նոյեմբերին կազմակերպությունը, որի անդամների ու համակրողների թիվը արդեն հազարների էր հասնում, պատահականորեն հայտնաբերվում է և հիմնականում ջախջախվում, թեև նրա գոյությունը իր գործունեության դանդաղ ու խաթարված ընթացքով շարունակում է մինչև 90-ական թվականների սկզբները:

***

Վերջյալ ընկերության մասին եղել են հակասական, նույնիսկ անվանարկող կարծիքներ, մանավանդ այն առնչությամբ, որ թուրքական իշխանությունները թեթև էին հրեշավոր մի սուտ՝ օտարերկրյա գործակալների պատիր դավեր տեսնելով այնտեղ։

Ահա նրանք մեծադղորդ աղմուկով փութացին ներկայացնել այն որպես հայկական մի խոշոր ապստամբության ակիզբ, որն իրենք արյան մեջ պիտի խեղդեին, իսկ քիչ ուշ՝ վախենալով, որ այդ ցնցող լուրը կրքերն առավել հրահրելով, ավելի լուրջ հուզումներ կառաջացնի և միջամտության նոր առիթ կտա «քրիստոնյաների պաշտպան» Եվրոպային, հերհեիջեցրին կազմակերպության ու նրա գործունեության նշանակությունը մինչև քրեական ինչ որ ղանցանքների աստիճան։

Որոշակի պատճառներով այն տարբեր ձևերով է ներկայացվել նաև ժամանակի հայ և օտար մամուլի էջերում։

Բ. Դռանը և տեղերում մահմեդական ամբոխի գրգռմանը տեղիք չտալու մտայնությունը ստիպում էր Կ. Պոլսի հայկական լրագրերին համեմատաբար քիչ և երեսանց անդրադառնալ Կարինի և նրա հետ առնչվող դեպքերին։ Թերևս այդ նպատակով էր պատրիարքը հրավիրում բոլոր խմբագիրներին 1882 թ. դեկտեմբերի 22-ին «խառը ժողովը ներկայանալ անշուշտ կարևոր գործո մը պատճառով»[13]։ Իսկ ժողովը կարծես ուղղակի ցուցում էր տալիս խմբագիրներին զգուշավորությամբ արձանագրելով, թե «գործը չունի ծանր հանգամանք, որ ի

13 «Մամուլ», 1882, N: 973։

սկզբան շատ մը պրուսցններու նյութ եղած էր»[14]: Նույն օրը «Մամուլ»-ը մատ էր թափահարում «Մասիս»-ի խմբագրի վրա, որ տակավին պաշտոնապես չհաստատված լուրերը «կանուխեն առաջ նետվելով շատ չը խառնակշտե»՝ իզուր տեղը ազգի վրա կասկածն ու թշնամությունն ավելացնելով: «Օտար թերթերը,— շարունակում է «Մամուլ»-ը,— օտար շահերով ու նկատառումներով կրնան շատ մը բաներ գրել, իսկ հայ թերթի մը բնավ երբեք ներելի չէ, որ յուր կարծիքները կանխահաս լուրերու վրա հիմնելով խելքին փչածը հրատարակե»[15]:

Քիչ ուշ արդեն «Մասիս»-ն իր հերթին մեղադրում էր «Մշակ»-ին, նրա կողմից «Պաշտպան հայրենյաց»-ը հակասուլթանական քաղաքական կազմակերպություն ներկայացնելու համար[16]: Նույն ինքը, դեռ դրանից առաջ, Բյուզանդ Քեչյանի բերանով, ջանում էր համոզել թուրքական իշխանություններին, որ «մտաց հորիզոնն յուր արտեն անդին չանցնող հայ մշակին, որը արորեն զատ գործիք չէ տեսած և զենք բռնել չգիտե», զուր են մեղադրում «քաղաքական հեռանկար դիտումների» մեջ[17]: Իսկ ավելի ուշ փորձում էր հերքել Կարինի կուսակալի զեկուցագիրը՝ շարժման համընդհանուր լինելու մասին[18]:

Արևելահայ առաջադիմական մամուլը անզուսպ ոգևորությամբ թմբկահարում էր հայոց ազատագրական բանակների ապագա երթը և կարծես ինքն էլ հավատալով՝ արձագանքում ու ջանում դրանով նոր թափ հաղորդել շարժման ծավալմանը: Ուստի և կրելով քավության նոխազը, արժանանում իր արևմտյան համակիցների պարսավանքին, մեղադրվելով արևմտահայ ժողովրդի նկատմամբ նոր ճնշումների ու հալածանքների պատճառ դառնալու մեջ:

«Մշակ»-ը նույնիսկ տպագրեց Արևմտյան Հայաստանից ստացած այնպիսի թղթակցություններ, որոնց հեղինակների երևակայությունը Կարինի հայկական եկեղեցու ներքնահար-

14 «Մասիս», 1882, № 3370:

15 «Մամուլ», 1882, № 973:

16 «Մասիս», 1883, № 3479:

17 Նույնը, 1882, № 3368:

18 Նույնը, 1883, № 3432:

կում թուրքական իշխանությունների կողմից հայտնաբերված 6.000 հրացան և 6 հրանոթ էր ստեղծել[19]։

Շարժման նկատմամբ թշնամական դիրք էր բռնել պահպանողական «Մեղու Հայաստանի»-ն, որի Կ. Պոլսի թղթակիցը «Պաշտպան հայրենյաց»-ում ղեկավար դեր ունենալու մեջ մեղադրելով՝ լուտանքներ էր թափում Մ. Օրմանյանի գլխին, Կարինի բանտարկյալների դժբախտության պատճառ համարում նրան[20]։ Լռում էր միայն XIX դարի 80-ական թվականների արևմտահայ ամենախոհուն լրագրողը՝ Մատթեոս Մամուրյանը։

Թուրքական մամուլը սկզբում մոլեգնած աղաղակում էր հայկական համընդհանուր ապստամբության մասին, բայց ինչպես վերը տեսանք շուտով զգաց իրեն անձեռնտու նման գլխքորոշումն ու երկյուղելով եվրոպական միջամտության ուրվականից, «Վակըթ»-ի առաջնորդությամբ սկսեց «ամեն օր պոռալ», որ այդ ամենը խնամքով հորինված սին հեքիաթներ են միայն։

Ավստրո-Հունգարիայի թուրքական դեսպանությունը ըշտապեց դիմել Վիեննայի «Պոլիտիշե կորեսպոնդենց» թերթին, խնդրելով, որպես միջնորդ-վկայի, Եվրոպային հայտնել Հայաստանում կատարվող իրադարձությունների անճշմարտացիությունը, հատկապես Կարինի դեպքերի անստույգ ու չափազանցված լինելը, որտեղ իբր ձերբակալված են միայն մի քանի մարդ՝ սոսկ քրեական հանցագործության համար[21]։

Եվ եթե Եվրոպային միջամտելու առիթ չտալու համար Բ. Դուռը և նրա թելադրանքով թուրքական թերթերը փորձում էին թուլացնել տպավորությունը, ապա հենց հանուն այդ միջամտության Լոնդոնից 1882 թ. դեկտեմբերի 27-ի (հունվարի 8-ի) հեռագրով եվրոպական բոլոր թերթերն ազդարարում էին. «Այն շարժումը, որ սկսվել է տաճկական Հայաստանում, շատ ծանրակշիռ նշանակություն ունի և արդեն տարածվել է Կարնո, Վանի, Բիթլիսի և Տիգրանակերտի վիլայեթների վրա»[22]։

19 Տե՛ս «Մշակ», 1883, № 12։

20 «Մեղու Հայաստանի», 1883, № 40։

21 «Голос», 1883, № 2։

22 Տե՛ս «Մշակ», 1883, № 4։

Ձերբակալությունների առաջին իսկ օրերին, Կ. Պոլիս հասած ցնցող լուրերի տարափի տակ, սուլթանի ցուցումով, մեծ եպարքոս Սայիդ փաշան, որպես առաջնահերթ միջոցառումներից մեկը՝ նոյեմբերի 29-ին պալատ հրավիրեց տարուց ի վեր (13/11—1881 թ.—29/11—1882 թ.) «հրաժարական մը նետած» Ներսես Վարժապետյանին և նորից վերադարձրեց պատրիարքական աթոռ։ Իսկ դեկտեմբերի 6-ին պատրիարքին ընդունեց նաև սուլթանը և սիրալիր զրույցից հետո հազար ոսկի և ադամանդակուռ տուփ նվիրեց նրան։ Ավելի ուշ, փոխադարձ համաձայնությամբ Ներսեսը պարտավորվեց կանխել հետագա հուզումները, իսկ սուլթանը «հավլադյուա պատրիարքին» ամբողջ մի ապարանք նվիրելով Միջագյուղում, խոստացավ ներումն շնորհել բանտարկյալներին և անմիջապես ձեռնարկել բարենորոգումների իրագործմանը։ Նույն օրերին (1882 թ. դեկտեմբերին), հայ ազատագրական շարժումների տապալման գործում կառավարությանն հետագա ծառայություն մատուցելու համար թերևս, սուլթանի կողմից Մեջիդիե 2-րդ աստիճանի շքանշանով պարգևատրվեցին հայազգի Նուրյան և Ապրո էֆենդիները։

Վճռականորեն հերքելով ռազմական մինիստր Ղազի Օսման փաշայի հայտարարությունը, թե իրենց հայտնի է, որ 300 հազար հայեր պատկանում են հայտնաբերված գաղտնի ընկերությանը, Ներսես Վարժապետյանը, առաջին մինիստրի հետ ունեցած զրույցում, նույնիսկ փորձեց դիվանագիտորեն ազդել և զգուշացրեց, որ Հայաստանում թուրքական իշխանությունների կողմից նոր խստություններ ու արյունահեղություն սկսելու դեպքում ոչ թե կկանխվեն, այլ կբորբոքվեն հուզումները և ժողովուրդը այդ արհավիրքից փրկվելու հուսով ավելի կհակվի ռուսների օգնությամբ ազատագրվելու գաղափարին՝ դրանով իսկ անխուսափելի դարձնելով Ռուսաստանի անհաճո միջամտությունը[23]։

Ներսեսը միաժամանակ նպատակահարմար գտավ հրա-

---

23 «Московские ведомости», 1883, № 3, 7, 9:

ժարվել Կարինի դեպքերի մասին օտարերկրյա թղթակիցներին որևէ տեղեկություն տալուց։

Թուրքական կառավարությունը, Կարինում ձերբակալությունների սկսելուց երկու շաբաթ էլ չանցած, արդեն զգացել էր հարցը չափից դուրս մեծացնելու իր սխալի վնասակարությունը և, ինչպես տեսանք, փորձում էր ավելի մեղմ կերպարանք տալ դրան։

Իրականում այդ շարժումն ուներ լայն ժողովրդական բնույթ։ «Դա ապստամբություն է... բռնակալության և անիրավության դեմ, դա կենդանի ժողովրդի կենդանի բողոքն է, որով նա պահանջում է մարդավայել գոյության իրավունքներ,— ազդարարվում էր Մոսկվայի հայ ուսանողների «Հայրենասերների միության» 1883 թ. հրապարակած մի կոչում[24]։

«Պաշտպան հայրենյաց»-ն իր ճյուղավորումներով տարածվել էր Արևմտյան Հայաստանի մեծ մասում և կապեր էր ստեղծել արևելահայության հետ, փորձելով հանդես գալ որպես արևմտահայ աշխատավորության սոցիալական ու քաղաքական շահագործման դեմ ուղղված ժողովրդական ընդվզումների համահավաք կենտրոն։

* * *

«Պաշտպան հայրենյաց»-ը կառուցված էր տասնապետության կազմակերպական սկզբունքով։ Նրա տարբեր ջոկատներում ընդգրկված աշխարհազորայինները նախօրոք ոչ մի առնչություն չպետք է ունենային մեկը մյուսի հետ, չպետք ճանաչեին ընկերության հիմնադիրներին ու ղեկավար գործիչներին։

Գերագույն խորհրդի անդամներից որևէ մեկը առանձին անձանց նկատմամբ վստահություն ունենալու դեպքում, երաշխավորում էր նրանց խորհրդի առջև և ընդհանուր համաձայնությամբ նրանց թույլատրվում էր հիշյալ անձանց հայտնել կազմակերպության գոյության ու նպատակների մա-

---

24 Տե՛ս Վ. Պարսամյան, Հայ ազատագրական շարժումների պատմությունից, էջ 262։

սին։ Նրանց համաձայնությունն ու երդումը ստանալուց հետո հանձնարարվում էր վերջիններիս ձեռնամուխ լինել վստահելի նոր անձանց հավաքագրմանը, և այն հաջողությամբ իրագործողը դառնում էր իր հավաքած տասնյակի հրամանատարը, որի ստորադրյալները պետք է ճանաչեին միայն իրենց տասնապետին և բոլոր հարցերը լուծեին նրա հետ։ Իսկ վերջինս էլ գլխավոր խորհրդի ներկայացուցիչներից միայն մեկին՝ նրան ում տվել էր տասնապետի իր երդումը, որն հավանաբար, մեծ մասամբ, լինում էր տվյալ միավորման հարյուրապետը։

Տասնապետը իր տասնյակի անդամներից որևէ մեկին, եթե լավ ճանաչելով կերաշխավորեր խորհրդի իր ճանաչած անդամի կամ լիազոր-ներկայացուցչի՝ հարյուրապետի առջև ու կստանար նրա թույլտվությունը, իսկ վերջինս համաձայնեցնում էր այն խորհրդի բոլոր անդամների հետ (խորհրդի իր, ճանաչած անդամի միջոցով), ապա այդ նախկին զինվորին արտոնվում էր, իր հերթին, հավաքագրել նոր ջոկատ ու դառնալ նրա հրամանատարը։ Տասնապետների առաջին և հիմնական պարտականությունն էր զբաղվել իրենց ղեկավարած ջոկատները զինելու հարցով, որը, ինչ խոսք, նրանք խիստ դժվարությամբ էին կարողանում կատարել։

Կազմակերպության անդամները, առանց բացառության, երդում էին տալիս և այդ երդմնագրերը պահվում էին տասնապետների մոտ։ Ապա նրանք ստանում էին կազմակերպության անդամատոմսեր, որոնք «Պ. Հ.» («Պաշտպան հայրենյաց») դրոշմով թերթիկներ էին[25]։

Անդամության տոմսերը վերնագրում ունեին Հայկազյան, Արշակունի, Բագրատունի, Ռուբինյան հայկական գի-

25 Արևմտահայ արտասանության «պաշտպան»-ը երբեմն «բաշտաբան» կարդալով, առանձին դեպքերում «Պ. Հ.»-ի փոխարեն գրվում է «Բ. Հ.» (տե՛ս «Մշակ», 1883, № 78, Հայկակի թղթակցությունը)։ Գուցե նույն պատճառով էլ Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվում եղած վավերագրերում գրված է «B. H.», որը ենթադրում ենք, պետք է կարդալ որպես լատիներեն տառեր, այսինքն նույնը ինչ «Մշակ»-ում՝ «Բ. Հ.» (տե՛ս ՌԱՔԱ, ֆ. Քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625 թ. 113—119)։

նախարարների զինանշանները, որոնք վերցված էին վերջին շրջանում պատրիարքական գրությունների վրա դրոշմվող նկարներից։

Տասնապետների և հարյուրապետների վկայականների վրա պատկերված էին նաև մարտի պատրաստվող զինվորներ, իսկ նրանց դիմաց, որպես խորհրդանշան, բարձրանում էր մի բերդ՝ Թուրքական բռնապետության դժնի ամրոցը, որի վրա նրանք պատրաստվում էին գրոհել։

Երդմնագրերի վրա նկարված էին խաչաձևված թուր և դաշույն ու գրված էր «ազգային բարենպատակ ձեռնարկ», որը հետամուտ էր հայ ժողովրդին ազատագրել քրդերի, չերքեզների և Թուրքական պաշտոնյաների դաժան բռնությունից։ Այն վերջանում էր «Ազատություն կամ մահ» նշանաբանով[26]։

Հնարավոր է, որ երդմնագրերում բացահայտ ձևով չէր խոսվում հայկական թագավորության վերականգնման մասին, որի գաղափարը, որպես հաշտարգելու մորմոք, սևեռված էր շարժման առաջնորդների մտապատկերում։

Երդմնագրերն ու անդամության տոմսերը, անգամ հարյուրապետներին կամ տասնապետներին հանձնելիս, Գերագույն խորհրդի անդամները, իսկ նրանց օրինակով նաև առաջինները, գաղտնապահության նպատակով հորինում էին, թե դրանք փոստով ստացված են Թիֆլիսից։ Իսկ երբեմն էլ անմիջապես հանձնելու փոխարեն հայտնում էին այս կամ այն գաղտնարանի տեղը, որտեղից նրանք կարող էին վերցնել դրանք։

«Պաշտպան հայրենյաց»-ի անդամներն իրենց առանձին հայրենանվեր ծառայությունների համար խրախուսվում էին, իսկ սխալներ թույլ տալու դեպքում՝ անպայմանորեն պատժվում[27]։

Առաջինն ստորագրած լինելով երդմնագրերի օրինակը և իր վրա վերցնելով դեռ կազմակերպական խանձարուրում գտնվող ընկերության սեփական միջոցներով դրամական օժանդակություն ցույց տալու գործը, Ալեքսան Էթալիկյանը

26 Հ. Նշկյան, Առաջին կայծերը, էջ 122։

27 ՌԱՔՍ., ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., 1625, թ. 113—119։

Դերապույն խորհրդի համձնարարությամբ հետևողականորեն ձեռնամուխ է լինում կազմակերպության մեջ նոր անդամների անընդմեջ հավաքագրմանը և փայլում այդ ասպարեզում ձեռք բերած հաջողությամբ։

Կարինի դատաստանական ատյանի մեղադրական եզրակացության խառնափնթոր ակտում հետաքրքիր հատվածներ կան «Պաշտպան հայրենյաց»-ի մեջ ընդունելության կազմակերպման մասին։

«Ալեքսանը (Ալեքսան Էթալիկյան — Ռ. Հ.),— կարդում ենք այնտեղ,— դիմում է ընկերության մեջ ընդունվողներին հետևյալ խոսքերով. ես դրանցում եմ ձեզ ընկերության մեջ որպես զինվոր։ Հարկ եղած ժամանակ ձեզ կբաժանվի զենք և ամեն օր կստանաք մեկական մեջիդիե[28]։ Մենք կվերականգնենք (մեր — Ռ. Հ.) թագավորությունը։ Բացի այդ նրա կողմից տարածվում էին հեղափոխական այլ մտքեր։ Գալուստին նշանակված էր ամսը երեք լիրա[29] վարձ, որից 9 լիրան Ալեքսանի կողմից նրան տրված էր նախօրոք, համագործակիցներից (ընկերության անդամներից — Ռ. Հ.) նախկին զինվորականներին հավաքելու և նրանք նոր, համարակալված զինվորականներով փոխարինելու համար, որոնցից նա հաջողել էր բաժանել մոտ 80-ը»[30]։

Գեղախոռ գյուղացի հողագործ Սարգիս Գաբոյանը կարնեցի դերձակ Շավարշ Հովհաննիսյանի կողմից ընդունվելով կազմակերպության շարքերը, իր հերթին անդամագրել էր Գեղախոռի և Հարևան գյուղերի հարյուր գյուղացի։

Հովհաննես Ասատուրյանը դրանցել է Շավարշի կողմից երդվեցրած ձիթողցի վարժապետ Գալուստ Ժամկոչյանի տասնյակի անդամներին, «... որոնց տներից վնասակար հայտարարություններ պարունակող թղթեր երևան եկած են»[31]։

---

28 Մեկ մեջիդիեն (20 ղուրուշ) ռուսական այն ժամանակվա դրամով 1 ռ. 60 կոպ.։

29 Մեկ լիրան (5 մեջիդիե) հավասար էր ռուսական 8 ռուբլուն։

30 ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625, թ. 113—119։

31 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ադատյանի, ֆ., XII—11519։

Համետագործ-ատաղձագործ Հակոբ Պետրոսյանը կոշկակար Հակոբ Սերոբյանին ընտրության մեջ ընդունելիս ասել էր. «Ես գրանցում եմ քեզ աշխարհազորում, կտամ քեզ զենք, դու կստանաս օրական մեկ մեջիդիե և կմասնակցես քաղաքից դուրս զինվորական ուսուցումներին»[32]։

Դարբին Մինաս Էլմեկյանը Ալեքսան Էթալիկյանից ստացած 130 հավաքագրական վկայականները հանձնել էր ջրաղացպան Խաչատուր Ավագյանին, որը հավաքագրել էր հինգ հոգի, այդ թվում Հաջի Հովհաննեսին, որից երդում ընդունելով բաժանելու համար հանձնել էր անդամագրման 100 (այլ տեղում 110) վկայական։ Հայկական աշխարհազորի մեջ տարբեր ժամանակներում ընդգրկված մի շարք անունների թվարկումից հետո մեղադրական ակտում կարդում ենք. «Թաթոսը հայտնել է Ալեքսանին, որ իր կողմից զինվորներ են հավաքագրվում հայկական թագավորության առաջիկա կազմակերպման կապակցությամբ»[33]։

Առաջին քառասուն օրվա ընթացքում արդեն բաժանված էր 300 վկայագիր։

Պետք է մերժել երբեմնի ընդունված սխալ այն տեսակետը, թե «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության ջոկատների ու վաշտերի բաժանված լինելը իբր դյուրացրել է նրա անդամների մասսայական ձերբակալումը, որովհետև հարյուրապետները մատնել են տասնապետներին, իսկ տասնապետներն էլ խմբի անդամներին և հակառակը[34]։

Մինչդեռ տասնապետության սկզբունքը, որի շնորհիվ կազմակերպության անդամներից քչերն էին միմյանց ճանաչել, շատերին հնարավորություն տվեց հետագայում խուսափել ձերբակալություններից։ «Ձերբակալվածներ 72 հոգին անդին չանցան, զի տասնապետական դրության հետևությամբ ընկերակիցների ծանոթությունը անձուկ շրջանակի մեջ կը

---

32 ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625, տե՛ս նաև ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, թ. Աղասյանի ֆ., XII—11519։

33 ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625։

34 Տե՛ս «Մասիս», 1882, № 2267 և «Արձագանք», 1883, № 7։

պարփակվեր...»,— իր հուշերում պատմում է այդ դեպքերի լավատեղյակ ականատեսն ու մասնակիցը[35]։

Ձերբակալությունների ժամանակ Պալաս Տեր-Ղազարյանի մոտ գտնված անդամատոմսը կրել է 4374 համարը[36] և մեզ իրավունք է տալիս ենթադրելու, որ կազմակերպության անդամների թիվը հասել է շուրջ հինգ հազարի։ Իսկ կոշկակար Հարությունի մոտ եղած տոմսը վկայել է նրա հայկական ազատագրական բանակի ենթասպա լինելը։

«Պաշտպան հայրենյաց»-ի մեջ եղել են պրոֆեսիոնալ գործիչներ, որոնք վարձատրվել են ու թերևս զբաղվել միայն ընկերության աշխատանքներով, հարկավ, որևէ այլ զբաղմունքով քողարկելով իրենց գաղտնի գործունեությունը։

Երբ հայրենի հողի վրա ստեղծված այդ ազատագրական-հեղափոխական կազմակերպությունն ապրում էր դեռ իր գաղափարական ու գործնական աշխատանքների արբունքի շրջանը, ստացվում է Ներսես պատրիարքի անուղղակի խրախուսանքը. «Երանի թե գավառացիները ավելի կանուխեն ինքնագլուխ գործելու գիտակցությունն ունենային և ամեն բան Պոլսեն ու պոլսեցիներեն սպասելու ակնկալությամբ անգործ չմնային»[37]։

Նույն շրջանում Խ. Կերեքցյանը մեկնում է Վան և հանդիպում ունենում Մկրտիչ Խրիմյանի հետ։ Սխալ պետք է համարել հարցաքննությունների ժամանակ ձերբակալվածների,

---

35 Մ. Օրմանյան, Խոհ և խոսք, էջ 120։ Ձերբակալվածների թիվը 1883 թ. մարտի 5-ին պատրիարքարան գրած նամակում Օրմանյանը հասցնում է 76-ի։ «Նամակիս հետ գործոցն սկզբեն բոլոր բանտարկելոց ցուցակը կը ղրկեմ ընդամենն 76-են և սկզբեն և հետո թղվածները 23, իսկ մնացածներեն 53»։ Նույն տարվա հունվարի 29-ի նամակի հետ ուղարկված է 65 մարդու ցուցակ (տե՛ս ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Ազատյանի ֆոնդ)։

36 Տե՛ս ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625, նա. «Մասիս», 1883, № 3463։

Մեղադրական ակտի Կարինի առաջնորդարանից Կ. Պոլիս ուղարկված պատճենում՝ № 4274 (տե՛ս ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Ազատյանի ֆ., XII—11519)։

37 Հ. Նշկյան, Առաջին կայծերը, էջ 119։

հատկապես Խ. Կիրեքցյանի վկայությունների հիման վրա ստեղծված այն թյուր կարծիքը, թե Խրիմյանն իբր առաջարկել է դադարեցնել «Պաշտպան հայրենյաց»-ի գործունեությունը, հաշվի առնելով, որ հայերը փոքրաթիվ են և այդ ամենը մեր ժողովրդի համար կունենա ողբերգական վախճան, նույնիսկ սպառնացել մատնել նրանց Թուրքական իշխանություններին։ Այնինչ նա խրախուսում է և խորհուրդ տալիս լինել ավելի զգույշ ու համբերությամբ պատրաստվել, իսկ ընդհանուր ապստամբության դրոշը բարձրացնելու համար սպասել բարենպաստ պայմանների ու երիտասարդական ավելորդ տաքարյունությամբ չփչացնել դժվարությամբ սկսած սուրբ գործը[38]։

Վանից Խ. Կիրեքցյանը, Խրիմյանի խորհրդով, անցնում է Թիֆլիս, ապա Երևան։ Թիֆլիսում հանդիպումներ է ունենում արևելահայ մի շարք գործիչների, այդ թվում հայ «նիհիլիստների» հետ և համաձայնության գալիս, որ նրանցից մեկը, ապստամբության հարցը խորը և բազմակողմանի ուսումնասիրելու և կազմակերպության աշխատանքներին ավելի գործնական օգնություն ցույց տալու համար այցելի Կարին։ Հենց այդ և ոչ «հայ ժողովրդի կենցաղը ուսումնասիրելու և հիվանդությունների դեմ պայքարելու»[39] նպատակով էլ 1882 թ. հուլիսին Կարին են ժամանում Բագրատ Նավասարդյանը, Արսեն Թոխմախյանը, ինչպես նաև Հարոն։

«Պաշտպան հայրենյաց»-ի համար նոր, համարակալված տոմսեր ստեղծելու գաղափարը պատկանում է Բագրատ Նավասարդյանին, որը 1882 թ. ամռանը Եվրոպայից անցնելով Թուրքիա, Կ. Պոլսում հանդիպում է ունենում Ն. Վարժապետյանի հետ, ապա անցնում Կարին, Վան, կազմակերպության գործունեության հետ կապված տարբեր հարցերի շուրջը համաձայնության գալիս Մ. Օրմանյանի ու Մ. Խրիմյանի հետ։

---

38 Տե՛ս ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Ազատյանի ֆ., XII—11519, նաև Մ. Նշկյան, Ով փճացուց հայությանը, Ֆրեզնո, 1920, էջ 8։

39 Ռ. Փարսադանյան, Հայ բժշկության պատմությունից, Երևան, 1958, էջ 147։

Կարինում Նավասարդյանն օգնում է «Պաշտպան հայրենյաց»-ի կազմակերպման ամրապնդմանը[40]։

1881 թ. նոյեմբերի 1-ին առևտրական գործունեության պատրվակով Թիֆլիս է մեկնում կազմակերպության հիմնադիրներից մեկը՝ Գերագույն խորհրդի անդամ Կարապետ Նշկյանը, դրամ հայթայթելու և զենքի տեղափոխման նպատակով։ Առատ խոստումներով ծանրաբեռնված, մի քանի ամսից, նա Կ. Պոլսի վրայով, ուր որոշ ժամանակ տեղակայվում է՝ անտարակույս կազմակերպության հետ կապված առանձին հարցերի լուծմանն հետամուտ, վերադառնում է Կարին։

Անցնում էին օրեր, ամիսներ, սակայն խոստացված օգնությունն ուշանում էր։ Եվ ահա Գերագույն խորհրդի նիստերից մեկում Խ. Կերեքցյանը հանդես է գալիս մի հանդուգն ծրագրով՝ զենք ու զինամթերք ձեռք բերելու համար հարձակվել Կարինի կառավարական զինապահեստի վրա։ Նա անգամ հղացել էր պատրաստելու փորող մի գործիք, որը հնարավորություն պիտի տար ստորերկրյա մտնել զինապահեստին[41]։

Հապճեպ արված այս առաջարկությունը բուռն վիճաբանությունների տեղիք է տալիս և մեծամասնությամբ մերժվում, ուժերի փոխհարաբերակցության իրենց համար ոչ նպաստավոր իրավիճակի պատճառով։

---

40 Սխալվում են այն հեղինակները, որոնք դրանից եզրակացնում են որ կազմակերպությունը ղեկավարվել է Թիֆլիսից՝ Բ. Նավասարդյանի ձեռքով (Լեո), կամ 1878—1880-ական թվականների արևմտահայ շարժումները կազմակերպել է Բ. Նավասարդյանը (Կ. Նշկյան)։ Սխալ է նաև ծայրահեղ մյուս կարծիքը, որի հեղինակ Ա. Գյուլխանդանյանը «Պաշտպան հայրենյաց»-ի և Թիֆլիսի գործիչների կապը համարում է զուտ պատահական (տե՛ս «Հայրենիք», ամսագիր, Բոստոն, 1939, № 9, էջ 128)։

41 Եղբոր վկայությամբ, Խ. Կերեքցյանը բացի դրանից նախագծել էր պատրաստել զենքի մի տեսակ՝ հեծանիվի սիստեմով, վրան կրակափողեր տեղադրված, ընթացքում միաժամանակ կրակելու համար։ Բայց պատրաստվեցին դրանց նախատիպերը (մոդել) միայն։ (Տե՛ս ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Նավասարդյանի ֆ., 9—III)։

Ուստի որոշվում է չհապաղել և Կ. Նշկյանին նորից ուղարկել Թիֆլիս, խոստացված օգնությունն արագացնելու։ Նշկյանը Թիֆլիս պետք է մեկնած լինի Բ. Նավասարդյանից անմիջապես հետո, քանի որ Նավասարդյանն Արևմտյան Հայաստանում եղած պիտի լինի 1882 թ. հուլիս-օգոստոս ամիսներին, որովհետև մայիսին դեռ Ժնևում էր, հունիսին՝ Կ. Պոլսում, իսկ սեպտեմբերին, երբ Նշկյանն արդեն Թիֆլիսում էր, նրանք մի շարք հանդիպումներ են ունենում միմյանց և այլ գործիչների հետ։ Այդ թվում Նշկյանն այցելում է Գր. Արծրունուն (որից, ըստ երևույթին դոհ չի մնում) և Դ. Տեր-Աստատուրյանին։

Կ. Նշկյանի 1913 թ. Ցրեվնոյից Թիֆլիս՝ Բ. Նավասարդյանին գրած նամակում պարունակվում են կարևոր մանրամասնություններ այդ շարժման մի քանի չլուսաբանված խնդիրների և նրանց հետ կապված առանձին անհատների դիմագծերի ճշտման առումով։

Կրկին անգամ հաստատվում է, որ իրոք «Պաշտպան Հայրենյացը» կապված է եղել Թիֆլիսի հետ, որոշ հրահանգներ է ստացել այնտեղից, խրախուսվել, որտեղից երբեմն էլ անհեռատես աղայամտությամբ անժամանակ հոխորտանքի են մղել կազմակերպության անդամներին։ Գեներալ Դիմիտրի Տեր-Աստատուրյանը նույնիսկ ռուսական բանակների կողմից զինված օգնության հույսեր էր ներշնչում Թիֆլիսից Կարին վերադարձող Կ. Նշկյանին[42]։

Թիֆլիսում Կ. Նշկյանին առանձին անձանց կողմից խորհուրդ է տրվում նաև շուտափույթ կերպով ոչնչացնել բոլոր տեսակի երդմնագրերը, անդամատոմսերն ու մյուս վտանգավոր թղթերը, որոնք կարող են ընկնել թուրքական ոստիկանության ձեռքը և սպառնալ կազմակերպության հայտնաբերմանը։

Նույն շրջանում Կարինից Կ. Պոլիս էր ուղարկվել երդմնագրերի երկու օրինակ, որոնք տեսնելով Ն. Վարժապետյանը նույնպես պահանջում է շտապ այրել թե հին և թե նոր ատամ-

---

42 Տե՛ս ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Նավասարդյանի ֆոնդ, II—271։

ներն ու երդմնագրերը, քանի որ կազմակերպությունը դեռ շարունակում էր հին անդամատոմսերը հավաքելու և նրանք նոր, համարակալված տոմսերով փոխարինելու աշխատանքները։ Ինչպես իրավացիորեն գրում է Մ. Օրմանյանը «... ընկերակիցներու արձանագրության տոմսեր բաշխելու ձևը գաղտնության պահանջին չէր հարմարեր, և ձախող հետևանք ալ ունեցավ»[43]։

Ինքը՝ Օրմանյանը սկզբում տեղյակ չէր «Պաշտպան հայրենյաց»-ի գոյությանը, բայց հետո դարձավ նրա ակտիվ մասնակիցը՝ ապահովելով նաև Ներսես պատրիարքի աջակցությունը։

Հաջորդելով Կարինում Հարություն Վեհապետյանի «Թրթված» առաջնորդությանը (1853—1880), Մ. Օրմանյանի (առաջնորդ 1880—1887 թթ.) անդրանիկ գործն եղավ, աթոռների առաջնության հարցով դժտվել Կարինի կաթոլիկ համայնքի ղեկավար Ստ. Մելիքսեդեկյան եպիսկոպոսի հետ[44] ու չնայած իր դեմ եղած կաթոլիկ հոգևորականության դավերին, դրվատանքի արժանի այնպիսի աշխատանք ծավալեց Կարինում, հատկապես 1880 թ. սովի օրերին, որ հետագայում, մի ճանապարհորդի վկայությամբ, «Կարնեցիք... երանի տալով էին հիշում Օրմանյան վարդապետի հետ վայելած օրերը»[45]։

Մ. Օրմանյանի գործունեության հենց այդ շրջանն ի նկատի ուներ նահատակված տաղանդավոր նովելագիրը, երբ գրում էր. «... մեր եպիսկոպոսներեն երիտասարդն է, ինչ որ մեծ բան է հարկավ և՝ մեր երիտասարդներուն եպիսկոպոսը, ինչ որ ավելի մեծ բան մըն է... երբ ուրիշներ գավառներեն ու վանքերեն կու գան չեմ գիտեր ինչու համար հոս, ինքը հոսկե վանք ու գավառ կերթա օգտակար գործեր կատարելու համար։ Ամբողջ դաս մը կա ասոր մեջ»[46]։

---

43 Մ. Օրմանյան, *Խոհ և խոսք*, էջ 119։

44 *Օրմանյանի այդ պայքարը վերջացավ միայն 1886 թ., երբ նա հասավ այն բանին, որ նույն տարվա սեպտեմբերի 9-ին արդեն Մելիքսեդեկյանից վերև ստորագրեց նահանգական ժողովի որոշումների տակ։*

45 *«Մշակ», 1889, № 65։*

46 Գ. Զոհրապ, *Մանոթ դեմքեր ու պատմվածքներ, Փարիզ, 1932, էջ 74—75։*

«Պաշտպան հայրենյաց»-ի անդամների համար սահմանված էր անդամավճար՝ տարեկան մեկ քառորդ մեջիդիե, որը հույժ կարևոր էր կազմակերպության անդամներին զենքով ապահովելու տեսակետից։

Նախատեսվում էր զենքի հայթայթումը կազմակերպել հայ վաճառականների միջոցով և խիստ ցածր գներով, իսկ հարկ եղած դեպքում ձրի բաժանել միայն հայերին։ Այդ ուղիով զենք ձեռք բերելու գործում կարնեցիք հին փորձ ունեին։ Դեռ 1877 թ. սկսած վաճառականներ Հ. Եղանյանը և Հ. Նշկյանը Կ. Պոլսից զենք էին տեղափոխում Կարին և վաճառում հատապես հայերին։

Հ. Նշկյանն իր հուշերում պատմում է 1877 թ. սկզբներին, պատրիարքարանի վկայականով, դասագրքեր տեղափոխելու անվան տակ, Ս. Տեր-Սարգսենցի «Շահեն և Սիպիր» գրքի մոտ 200 օրինակ ու գրքերի երկհարկ արկղում զենք թաքցնելու և այն Կարին տեղափոխելու փորձի մասին, որն իրենց այդ անգամ չի հաջողվում[47]։

Զենք ձեռք բերելու համար կամավոր նվիրատվություններ էին կատարում կազմակերպության քիչ թե շատ ունևոր անդամները, որոնք բացառապես մի քանի անհատներ էին։

Տարբեր նպատակների անվան տակ ձեռնարկված էր նաև հանգանակություն։ Իսկ երբեմն էլ զգացվում էր հարուստների նկատմամբ ահաբեկում կիրառելու անհրաժեշտությունը։

Եվ որովհետև զենքի ձեռք բերման հարցը կազմակերպության առջև ծառացած կարևորագույն և դժվար լուծելի խնդիրներից մեկն էր, կապված մանավանդ դրամի սղության հետ, ուստի որոշ շրջանում, ուշադրությունն այդ հարցի վրա բևեռելու միտումով, ընդունելությունը կազմակերպության մեջ ժամանակավորապես սահմանափակվեց[48]։

«Պաշտպան հայրենյաց»-ի գործունեության շրջանում և նրան օգնելու նպատակով, Թիֆլիսից, Բ. Նավասարդյանի և

47 Հ. Նշկյան, Առաջին կայծեր, էջ 27—29։
48 Նույն տեղում, էջ 117—118։

մյուս ընկերների հանձնարարությամբ Կարին եկած Բարսեղ Մելիք-Գրիգորյանը (Ղարա-Մելիք) բերում է իր մասնակցությամբ գումարված ժողովներից մեկում Ավետիս Վեմյանի ելույթը, զենքի առաջնահերթ ձեռք բերման անհրաժեշտության մասին. «Մեր ժողովուրդը,— ասում է նա,— առավել սիրում է երևակայությամբ ապրել, քան գործնական կյանքով։ Քարոզները, երդումները չեն կարող նրան հանել յուր արդի վիճակից, ամեն մի գյուղացի ստորագրելով երդմնագրերը, համարում է իրեն զինվոր և սպասում է մեզանից հրահանգի ու օգնության, որը մեզանում բացակայում է, և հույսը դնելով մեր օգնության վրա, ինքն անդամալուծի պես ընկած սպասում է, որ իրեն ամեն բանով օգնեն, փոխանակ ինքը օգուտ տալու գործին, որի զինվորն է նա»։ Ապա նշելով, որ թուրքը, քուրդը և մյուսները, որպես անհրաժեշտություն, գնում են իրենց համար զենք, իսկ հայերը չեն մտածում, այն, թեկուզ գաղտնի, սեփական նախաձեռնությամբ ձեռք բերելու մասին, շարունակում է. «Մեր երկրում ապրելու, գլուխ պահելու համար ամենից առաջ զենք է հարկավոր. այն ինչ մենք, փոխանակ գործնական միջոցի դիմելու, զբաղված ենք զանազան երդմնագրեր տարածելով և ծրագիրներ կազմելով։ Մեր նպատակին հասնելու այն է՝ ազատություն ձեռք բերելու համար հարկավոր է 1) զենք, 2) զենք և 3) զենք։ Տվեք մեր ժողովրդին զենք, վարժեցրեք նրան արյուն թափել և նա կգտնի յուր ճանապարհը։ Մենք մեր ներկա դրությունից մեզ ազատելու և քաղաքական ազատություն ձեռք բերելու համար դեն ձգենք երդմնագրերը և ուղղակի դիմենք զենքի օգնության»[49]։

1895 թ. հայկական ջարդերի ժամանակ հերոսաբար ընկած զինագործ քահանայի[50] բերանում դրված այս խոսքերը, ցույց են տալիս հետագայում որոշ չափով պարզարվել են Մելիք-Գրի-

49 «Կարնո հիշատակին», Վիեննա, 1896, էջ 79—80։

50 Ավետիս Վեմյանը 1894 թ. ձեռնադրվում է քահանա Գարեգին անունով և գաղտնի շարունակում զինագործությունն ու թաղից թաղ տեղափոխում քահանայի լայն փեշերի տակ թաքցրած իր պատրաստած զենքերը։

վորյանի կողմից, բայց այն հարցի էությունը չի փոխում բնավ:

Կազմակերպությունն ուներ նաև, սահմանափակ հնարավորություններ ունեցող, զինագործական գաղտնի արհեստանոց Չայլարայի հեռավոր թաղամասում, Կարինի քան-յոթ հայ զինագործներից ամենահայտնի՝ հիշյալ Ավետիս Վեմյանի ղեկավարությամբ, որը բանտարկությունների նախօրյակին պատրաստվում էր մեկնել Ջեյթուն, որպես կազմակերպության ներկայացուցիչ և մնար այնտեղ՝ հավանաբար Ջեյթունում կենտրոնացված զինագործարան ստեղծելու միտումով: Այդ կապակցությամբ, «Կովկասից կանչված էին... երկու հմուտ երկաթագործ արհեստավորներ: Դժբախտաբար այդ մտադրությունները չիրականացան 1882 թվականի խառնակության պատճառով»[51]:

Որոշվում է «Պաշտպան հայրենյաց»-ի ղեկավարությունը տեղերում իրագործելու նպատակով, Արևմտյան Հայաստանի բոլոր քաղաքներում ստեղծել հինգ հոգուց կազմված հեղափոխական խորհուրդներ և այն մասնակիորեն իրագործվում է: Մշակված էր նաև կենտրոնների համար նշանաբանի ամիսը մեկ փոխելու սիստեմ:

Շարժման հզորացող ալիքը իր մեջ էր առել առաջին հերթին Արևմտյան Հայաստանի մեծ քաղաքները, ինչպես նաև Թուրքիայի հայաբնակ շատ այլ վայրեր: «Ամենուր պատրաստ են զենքի դիմելու, որպեսզի թոթափեն թուրքական լուծը»,— գրում էին ժամանակի մամուլի ռուսական ու եվրոպական բազմաթիվ օրգաններ[52]: Թեպետ, «Մասիս»-ին (№ 3361) Կարինից գրում էին, որ «Կարնո պատերուն վրա «գրգռիչ» հայտարարություն մը գտնվեր է», բայց Օրմանյանի ավելի լավատեղյակ վկայությամբ, քաղաքի փողոցներում փակցված կամ ցրված կոչեր չեն եղել[53]: Սակայն կազմակեր-

51 «Կարնո հիշատակին», էջ 77:

52 «Московский телеграф», 1883, № 2, և այլ թերթեր:

53 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Ազատյանի ֆոնդ, XII—11507:

ղությունը, վիմագրական գաղտնի մեքենայով, որը բերված էր Կ. Պոլսից, պատրաստել և տարածել էր հեղափոխական թռուցիկներ, որոնցից, խուզարկությունների ժամանակ, գտնվեցին Թաթոսի մոտ, ինչպես նաև ձերբակալվածներից շատերի տներում։ Ալեքսան Էթալիկյանի և ջորեկյան Կարապետի բնակարաններում հայտնաբերվեցին դրանց տպագրության վիմագրական քարերը։

Այդ կոչերը մերկացնում ու դատապարտում էին թուրքական բարբարոսական կարգերը և ոգեկոչում՝ համախմբվել ու պայքարել նրա տապալման համար, որի ժամը հնչել է արդեն։ Եվ որ պետք է պատրաստ լինել այդ պայքարում զոհելու ամեն ինչ, եթե հարկ լինի և սեփական կյանքը բերել տանջահար ժողովրդի ազատությանն ընծա։

Կերեքցյանների տանը, որտեղ սկզբում տեղավորված էր «Պաշտպան հայրենյաց»-ի վիմագրական գաղտնի մեքենան, տպագրվում է կազմակերպության անդամության տոմսերից 2400-ը։ Խ. Կերեքցյանի կողմից 300 անդամատոմս, քաղաքից դուրս, հանձնվում է ջորեկյան Հարությունին և ուղարկվում Վանի հեղափոխական խորհրդին, որի հետ, հավանաբար, Վանում եղած ժամանակ, Խ. Կերեքցյանը Խրիմյանի միջոցով համաձայնության էր եկել և այնուհետև ստեղծվել էր սերտ համագործակցություն։

Վանի հեղափոխական խորհուրդը, ամենայն հավանականությամբ, «Պաշտպան հայրենյաց»-ից շատ առաջ Վանում ստեղծված «Սև խաչ» կազմակերպության գործադիր օրգանն էր, որի գործունեությունը հեղափոխական որոշակի բնույթ ստացավ հատկապես «Պաշտպան հայրենյաց»-ի հետ կապվելուց հետո։ «Սև խաչ» կազմակերպությունն ավելի կորով առավ երբ գիտցավ, թե Կարնո մեջ զորավոր կազմակերպություն մը կա որ կանոնավոր կերպով կը գործե, և իսկույն սկսավ թղթակցիլ, բայց ափսոս, որ շատ երկար չանեց և մատնության գույժն Վան հասավ։ Կարնո կազմակերպությունը շատ ուշ սկսավ թղթակցություն, որովհետև Վանա կազմակերպությունն իրենց ծանոթ չէր»[54]։

54 Հ. Ճանկուլյան, Հիշատակներ հայկական ճգնաժամեն, էջ 93։

«Պաշտպան հայրենյաց»-ի Գերագույն խորհուրդը մտադիր էր նաև կապեր հաստատել քուրդ ցեղապետների հետ, որն այդպես էլ նրան չհաջողվեց։ Այդ ուղղությամբ կազմակերպության ձեռնարկած նվազ ջանքերը վերջացան անհաջողությամբ։

Նախատեսվում էր երեսուն տարում շարժման մեջ ընդգրկել 300.000 մարդ, հետևաբար որոշված էր հաջողության հասնելու համար պայքարել երկարատև ու համբերատար, թեպետ կազմակերպության Գերագույն խորհրդի հեղափոխական ոգով կազմված հրահանգներում կոչ էր արվում ամենուր բարձրացնել ապստամբության դրոշը։

Այս հանգամանքը վկայում է շարժման մեջ եղած «արմատական» ու «չափավոր» թևերի գոյության մասին, որոնց միջև եղած հակասությունն հետագայում անխուսափելիորեն սրվեց՝ բաժանելով պայքարի նրանց միասնական ճանապարհը արևմտահայ ժողովրդի ազգային երկունքի ալեկոծ ժամերին։

Ապստամբությունն սկսելիս, թուրքական ոստիկանությանը խուճապի մատնելու նպատակով, մի քանի ջոկատներ պետք է մարտադաշտում երևային ռուսական զինվորական նշանազգեստներով։ Այդ մտահղացումը նրանց մեջ հավանաբար ծնել էր 1876 թ. ապրիլին, բուլղարական ապստամբության ժամանակ, Գեորգի Բենկովսկու ջոկատների նույնանման փորձի հաջողությունը։

Համազգեստների համար կտոր ձեռք բերելու նպատակով էլ, անշուշտ, Կ. Պոլիս էր մեկնել Հակոբ Իշղալացյանը, գուցե նաև Տեր-Աբրահամյանը, որոնք հետագայում այնտեղ էլ ձերբակալվեցին (Հ. Իշղալացյանը տեղափոխվեց Կարինի բանտը)։

Կ. Պոլսի թուրքական թերթերը հետասպառ չափում էին իրենց իսկ հնարաստեղծած այն տասը հազար մետր կտորը, երբ «բռնված մի երիտասարդ հայ վաճառականի մոտ», որով պետք է համազգեստ կարվեր հայ հեղափոխականների համար[55]։

55 Տե՛ս «Մասիս», 1882, № 3360 և 3361։

Աշխարհազորի ջոկատները, պայմանավորված ազդանշանով, այն է բնակելի վայրերին մոտ լեռնագագաթների վրա մեծ խարույկներ վառելով, լեռները պետք է բարձրանային և փոքր խմբերի բաժանված, Հերցոգովինայի ապստամբների նման սկսեին լեռնային պատերազմ:

Այդ ազդանշանը պետք է տրվեր, այսինքն՝ ապստամբությունը սկսվեր հաշվի առնելով միջազգային իրադրությունը, առաջին հերթին Հայաստանում իրենց շահերը հետապնդող երկու երկրների՝ Ռուսաստանի և Անգլիայի, այդ շրջանում, հայերի նկատմամբ բռնած դիրքը[56]:

Կազմակերպության շարժիչ ուժը քաղաքի արհեստավորական դասն էր և շրջակա գյուղացիությունը: «...Գրեթե բոլոր կամ բոլորովին կարոտ են կամ օրը աշխատող և օրը ուտող»,— գրում էր Օրմանյանը «Պաշտպան հայրենյաց»-ի բանտարկված անդամների մասին[57], որոնց ընտանիքներին հանգանակությամբ կամ առաջնորդարանից այլուր ուղարկելով օգնում էին ապահովելու իրենց չարքաշ կյանքը:

Հիրավի, մեկ-երկու վաճառականի կամ ուսուցչի բացառությամբ, բոլորն էլ պատկանում էին հայ ռամիկ դասին: Դրանք կոշկակարներ էին, դարբիններ, անագողներ, կավագործներ, ասպանդակագործներ, հյուսներ, մաղագործներ, ջրաղացպաններ, մշակներ և մոտիկ գյուղերի հողի աշխատավորներ[58]:

Այս հանգամանքը շեշտում էր թուրքական բռնապետա-

---

56 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Նավասարդյանի ֆ., 9—III:

57 Նույն տեղում, Ռ. Ազատյանի ֆ., XII—11512: Տե՛ս նաև ՌԱՔԱ, ֆ. Քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625, թ. 83—85:

58 Թյուրիմացության արդյունք է, անշուշտ, երբ Արտ. Կարինյանը «Նորք»-ի 1926 թ. № 2-ում, «Պաշտպան հայրենյաց»-ի անդամների մասին անտեղյակորեն գրում է, որ «դրանք բացառապես «քաղաքացիք» էին — «արհեստավորներ» և «վաճառականներ», (էջ 156), իսկ քիչ անց էլ կազմակերպությունը համարում «...շատափույթ կերպով լիկվիդացիայի ենթարկված մի խումբ վաճառականների պատահական ձեռնարկություն» (էջ 166):

կան կարգերի դեմ բարձրացող հայ ազատագրական շարժման առաջամղիչ ուժերի սոցիալական որակը:

Այն գալիս էր նորից հաստատելու, որ Արևմտյան Հայաստանի ազատագրմամբ առաջին հերթին շահագրգռված էր երկակի ճնշման տակ գտնվող հայ աշխատավոր դասակարգը, քանզի ազատագրված ու անկախ հայրենիքից հույժ առաջնահերթ ու անհրաժեշտ սպասելիքներ նա ուներ:

Անշուշտ ուշադրության են արժանի այն տողերը, որ այս կապակցությամբ գրում էր Կ. Պոլսի ռուսական դեսպան Նելիդովը Ռուսաստանի արտաքին գործոց մինիստր Զինովևին 1883 թ. նոյեմբերի 13-ին. «Ազգային շարժման («Պաշտպան հայրենյաց»-ի — Ռ. Հ.) ղեկավարներ հանդես են գալիս ամենածայրահեղ գործիչները, որոնք ոչինչ չունեն կորցնելու և որոնք տարվելով նիհիլիզմի թեորիաներով, գոյություն ունեցող իրավակարգի վերափոխման հարցը դիտում են որպես գործունեության գլխավոր նպատակ»[59]:

«Պաշտպան հայրենյաց»-ի գործունեության մեջ քաղաքի արհեստավորության շեշտված մեծամասնությունն էլ հետագայում մղեց «Մշակ»-ին գրելու, որ Կարինի արհեստավորությունն այն տարրն է, որից կարող ենք «սպասել այն ինչ բոլորս սրտով ցանկանում ենք»[60]: Այսինքն՝ շարժման մեջ որոշիչ, առաջատար դերը, անվիճելիորեն պատկանում էր հենց այդ դասին: Դա անշուշտ չի բացառում նրանում հասարակական այլ խավերի մասնակցությունը, թեպետ ակնհայտ էր քաղաքային վերնախավերի անկամ մասնակցությունը, իսկ երբեմն էլ անբարյացկամ, այլադավ դերը շարժման նկատմամբ:

Գերագույն խորհուրդը աշխատում էր նույնիսկ գաղտնի պահել կազմակերպությունը հայ «հարուստներից ու երևելի վաճառականներից», վախենալով, որ նրանք կնպաստեն ոչ

---

59 Տե՛ս Մ. Ներսիսյան, Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, հավելված № 68:

60 «Մշակ», 1890, № 83:

թե ընկերության ամրապնդմանը, այլ հետամուտ կլինեն նրա կործանման[61]։

Բայց ինչ խոսք բացառություններ կային։ Իսկ քաղաքի և գյուղի հայ դեմոկրատական մտավորականությունը, համարյա ամբողջությամբ, շարժման կողմն էր։ Եթե համատարած չէր մասնակցում, ապա լիովին հարում էր նրան։

Չէր սխալվում թուրքական դատարանը ենթադրելով, որ շարժման ղեկավար կորիզը մեծ մասամբ խույս տվեց ձերբակալություններից ու պատժից։ Դրանց մեջ էին Ա. Վեմյանը, Գ. Ջիլինկիրյանը, Մ. Նշկյանը, ինչպես նաև Գերագույն խորհրդի անդամ Եղիշե Տուրսունյանը և շատ ուրիշներ։ Էլ չենք խոսում Մ. Խրիմյանի, Մ. Օրմանյանի, Ն. Վարժապետյանի, Բ. Նավասարդյանի և այլոց մասին, որոնց նկատմամբ թուրքական ոստիկանական հետաքննությունը և դատարանը բացահայտ մեղադրանքներ չկարողացան թխել։

«... Թուրքական դատական իշխանություններին հաջողվեց հայտնաբերել խնամքով պատրաստված հեղափոխական մեքենայի մասնիկը միայն, մինչդեռ գլխավոր մեքենագետները մնացին մի կողմ, չբացահայտված»,— զեկուցում էր Կարինի ռուսական գլխավոր հյուպատոսը Կ. Պոլսի իր դեսպանին[62]։

1882 թ. նոյեմբերին «Պաշտպան հայրենյաց»-ը պատահականորեն հայտնաբերվեց թուրքական իշխանությունների կողմից։

Կարինում, իսկ քիչ ուշ նաև այլ վայրերում, սկսվեցին մասսայական ձերբակալությունները։ Խուզարկությունները կատարվում էին հիմնականում գիշերը։ Մերկացվում էին կանայք, տղամարդիկ, երեխաներ՝ թռուցիկ կամ վկայական գտնելու հույսով։ Հայ ընտանիքներում թղթի և գրքի հետք անգամ չմնաց, կասկածելի համարելով բոլորը վերցնում էին։

Հատկապես այլանդակ էին խուզարկության նպատակով Ջիթող և Գեղախոռ մեկնած ոստիկանների սանձարձակու-

61 Տե՛ս «Արշալույս Արարատյան», 1883, № 1207։

62 ՌԱՔԱ., ֆ. Քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625, թ. 123—128։

թյունները։ Եվ այդ ամենն իրավունք էր տալիս Օրմանյանին եզրակացնելու, որ նման խուզարկությունների և խոշտանգումների «Հրամանը ստուգիվ բարձրեն է»[63]։

Կարինի ոստիկանությունը փորձեց խուզարկման ենթարկել նաև Սանասարյան վարժարանը, «բայց վարժարանը Ռուսիո պաշտպանության ներքև գտնվելուն համար ռուսական հյուպատոսն ընդդիմացավ»[64]։ Այս պատճառ դարձավ, որպեսզի կրկնապատկվեն թուրքական իշխանությունների՝ շարժման մեջ ռուսական գործակալների ձեռքը տեսնելու կասկածները։ Իսկ Կ. Պոլսի «անգլիական դեսպանատան բերան» «Լևանթն էքսպրես»-ը նույնիսկ բացահայտորեն գրեց այդ մասին[65]։ Հայերի հետ մտերմական հարաբերությունների մեջ գտնվող մահմեդականներն իսկ կասկածի ենթարկվեցին և «թուրքերը հայու մը հետ խոսիլ և բարև տալն զգուշանալ սկսան»[66]։

Բանտարկություններից խուսափելու նպատակով այդ օրերին շատերը գաղտնի հեռացան Կարինից կամ պատսպարվեցին թաքստոցներում։

Հավանաբար ձերբակալություններից խույս տված կարնեցի մի խումբ արհեստավորների մասին էր «Լա Թուրքի»-ն իր 1883 թ. հունվարի 22-ի համարում գրում, որ նրանք «... Սելանիկի մեջ ձերբակալվելով Կ. Պոլիս ղրկված էին, հինգշաբթի օրը Տրապիզոն ղրկվեցան, ուսկից ընդ հսկողությամբ Կարին պիտի երթան։

Արդեն ասինք թե այս գործավորք Կարնո դավադրության մասնակից լինելու կասկածանց ներքև են։ Ասոնցմե մին շա-

---

63 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ր. Աղաթյանի ֆ., XII—11515։

64 «Մասիս», 1882, № 3364, նաև «Московские ведомости», 1883 թ. № 7։ Թեպետ Կարինից «Ստամբուլ»-ին ուղարկում էին հակասական տեղեկություններ (տե՛ս «Մասիս», 1883, № 3369 և № 3388) և Օրմանյանն էլ գրում էր, որ Սանասարյան վարժարանի հետ կապված լուրերը ճիշտ չեն (ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ր. Աղաթյանի ֆ., XII—11507)։

65 Տե՛ս «Մասիս», 1882, № 3367։

66 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ր. Աղաթյանի ֆ., XII—11515։

գնավ նստած պահուն ինքզինք ծովը նետելով փախչիլ փորձեց, բայց բռնվելով շղթանավը դրվեցավ»[67]։

* * *

«Պաշտպան հայրենյաց»-ի հայտնաբերման մասին կան տարբեր վկայություններ, որոնք հիմնականում հանգում են երկու կարծիքի։ Առաջինը, որ կազմակերպությունն հայտնի է դարձել իշխանությանը Կարինի Մելիքսեդեկ քահանայի կամ նրա որդու մատնությամբ։ Իսկ երկրորդը, որ այն բացահայտվել է Մելիքսեդեկ քահանայի տան առջև աղմուկ բարձրացրած մի քանի անձանց ձերբակալման ժամանակ՝ նրանց մոտ պատահականորեն հայտնաբերված թղթերի պատճառով։ Ականատեսների վկայությունների մանրազնին ուսումնասիրությունն ու բաղդատումը հաստատում են երկրորդ կարծիքի իրավացիությունը[68]։

Մելիքսեդեկ քահանան շատ ապօրինությունների տեղիք էր տվել, և կարնեցիք չէին հավատում անգամ նրա քահանայական վկայականի իսկությանը, որը նա ստացել էր քաղաքից հեռու՝ Մակրայեցոց վանքի վանահայր ոմն Թադեոս եպիսկոպոսից։ Շատերը պահանջում էին տեր հորը փետրաթափ անել՝ խուզել մորուքը և աքսորել։ Եվ ահա Կարինի թեմական առաջնորդ Մ. Օրմանյանը 1882 թ. նոյեմբերի երկրորդ տասնօրյակի առաջին օրերին նրան վտարեց քաղաքից, ուղարկելով Կարինից չորս ժամվա հեռավորության վրա գտնվող նշանավոր Ս. Աստվածածնի՝ Կարմիր կոչված վանքում

67 Տե՛ս «Մասիս», 1883, № 3390։

68 Տե՛ս Օրմանյան, Ազգապատում, խոհ և խոսք, Հ. Նշկյան, Առաջին կայծերը, Հ. Երամյան. Հուշարձան, Հ. Ճանիկյան, Հիշատակներ հայկական ճգնաժամեն, Մ. Նշկյան, Ով փճացուց հայությանը, ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Աղասյանի և Բ. Նավասարդյանի ֆոնդերում եղած նյութերը, «Գործ», 1917, № 3, «Հայրենիք», շաբաթաթերթ (Բոստոն), 1905, 25/11 և ժամանակի արևմտահայ, արևելահայ և օտար մամուլը, ՌԱՔԱ, ֆ. Քաղ. արխիվ։

ապաշխարելու[69]։ Բայց շատ շուտով, հավանաբար մեկ շաբաթ անց, Մելիքսեդեկ քահանան հիվանդանում է և որդու՝ Կարինում պատվավոր անձ համարվող, գավառական ժողովի անդամ Հովհաննես Տեր-Մելիքսեդեկյանի խնդրանքով թույլտվություն ստանում վերադառնալ տուն՝ բուժվելու։

Նոյեմբերի 25-ին Մուսալլա թաղի զինետանը զինված մի խումբ երիտասարդներ, այդ թվում «Պաշտպան հայրենյաց»-ի Ա. Էթալիկյանի ղեկավարած հարյուրակի տասնապետ Պալաս Տեր-Ղազարյանը և ուրիշներ, որոնք սպառնական նամակով Մելիքսեդեկ քահանայի որդուց պահանջել էին «Պաշտպան հայրենյաց»-ի օգտին վճարել հիսուն ոսկի և մինչև այդ չէին ստացել, քահանայի տան մոտ, որը գտնվում էր Տաճար փողոցում, մեծ աղմուկ են բարձրացնում։ Նախ ներս խուժելով բնակարան պահանջում են ոսկին, ապա դուրս գալիս փողոց և լուտանքներ նետում նրա ու իրենց հետ վիճող նրա կնոջ հասցեին։ Վրա հասած ոստիկանները ձերբակալում են նրանց և տանում ոստիկանատուն, ուր Պալասի, Գալուստի, դարբին Մինասի և կոշկակար Հարությունի նկատմամբ կար նաև դրամափոխ Հովհաննեսի բողոքը իրեն անարգելու մասին։

Խուզարկության ժամանակ Պալաս Տեր-Ղազարյանի և Հարությունի մոտ հայտնաբերվում են ընկերության անդամատոմսեր և հավանաբար նաև այլ թղթեր։

Այդ նույն շրջանում ոստիկանական գաղտնի գործակալ Պողոս Սարաֆյանը, որոշ չափով ծանոթացել էր «Պաշտպան հայրենյաց»-ի գոյությունը վկայող մի շարք փաստերի։ Սրա պնդմամբ որոշվում է Պալասին ամենավատթար տանջանքների ենթարկելով խոստովանեցնել, որը և նրա կարծիքով կարձակեր գաղտնի կազմակերպության ողջ կծիկը[70]։

Նա միաժամանակ այցելում է բանտարկված Պալասին և անարգաբար համոզում խոստովանել գիտցածը և փրկվել,

---

69 Ի դեպ այդ վանքում են սովորել Ան. Շիրակացին, Գր. Նարեկացին, Ար. Լաստիվերտցին, Գր. Մագիստրոսը և հայ մշակույթի այլ նշանավոր գործիչներ։

70 Հ. Նշկյանի մոտ («Առաջին կայծերը») եղած հապավումները՝ Է. Պ. և Ս. Պ. կարդում ենք Էհրամճի Պալաս և Սարաֆյան Պողոս։ «Մշակ»-ում (1883, № 59), Սարաֆյանը սխալմամբ տպագրված է Սարաճյան։

այնպես սպառնալով խստագույն միջոցների այն դժոխային հնարանքով, որով կարող էին պարծենալ թերևս միայն թուրքական բանտերը, արվամոլության, ղաղուխի ու բանտարկյալների կազմակերպված թունավորման այդ զարհուրելի որջերը:

Պալասը հրաժարվում է, բայց խոշտանգումներին երկար չդիմանալով հանձնվում է և մատնում նկարիչ Միքայել Մանուկյանին, հավանաբար նաև իր հարյուրապետ Ալեքսան Էթալիկյանին, ինչպես նաև այն տասնյակի անդամներին, որի հրամանատարն էր ինքը[71]:

Նկարիչ Միքայելը լսելով, որ կազմակերպությունը հայտնաբերված է, ներկայանում է ոստիկանատուն և խոստանում ամեն ինչ ճշտությամբ ու մանրամասնորեն պատմել, եթե իրեն կընդունեն ոչ թե որպես շարժման մասնակից, այլ վկա, լրտես («մյուխպիր») և կվարձատրեն:

Կուսակալը երդումով խոստանում է երկուսն էլ: Սկսվում է մատնության ոճիրը:

Ճիշտ չպետք է համարել այն կարծիքը, որ իբր Միքայելը մատնությունը կատարել է խոշտանգումների ենթարկվելուց հետո, բարբարոսական հարցաքննությանը չդիմանալով[72]: Մինչդեռ հայտնի է, որ պետական մեղադրող Խամիթ բեյը իր մեղադրական եզրակացության մեջ գտնում էր, որ Միքայել Մանուկյանին պետք է ազատել «պատժական օրենսգրքի 65-րդ հոդվածին համեմատ»[73]: Այսինքն թուրքական դատական օրգանների կողմից նա իրոք ընդունվել է իբրև «լրտես»[74]:

Մատնությանը մասնակցեցին նաև հայ այն հարուստ-

---

71 Ըստ Տ. Կերեքցյանի Ա. Էթալիկյանն է մատնել Մ. Մանուկյանին (տե՛ս ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Նավասարդյանի ֆ., 9—III):

72 Տե՛ս «Մշակ», 1883, № 55 (Կարինից ստացած թղթակցությունը):

73 «Արշալույս Արարատյան», 1883, № 1207:

74 Մամուլում թյուրիմացաբար, թղթակիցների մեղքով, Միքայել Մանուկյանի անունը, առանձին դեպքերում, նույնացվեց Գարեգին Սրվանձտյանի եղբոր՝ Միքայել Սրվանձտյանի անվան հետ: Բայց մատնության հեղինակը ոչ թե Գ. Սրվանձտյանի, այլ կոշկակար Գևորգ Մանուկյանի եղբայրն էր (տե՛ս «Մշակ», 1883, № 55):

ները, որոնք կազմակերպությանը դումար տրամադրելու մասին սպառնական անստորագիր նամակներ էին ստացել, ուր պահանջվում էր այս կամ այն քանակությամբ դրամ բերել նշանակված տեղը, և այդ նամակները հանձնել էին թուրքական իշխանություններին ու բողոքել։ Ուստի կասկածներ Մուստաֆա փաշայի և նրա պաշտոնյաների մոտ արդեն կային[75]։

Անշուշտ ավելի որոշակին Մելիքսեդեկի անվան հետ առնչվող դեպքն էր, որը տեր հոր և նրա ընտանիքի անունը նորից մրոտեց և այն մաքրելու համար «Ճիզվիթ քահանան» ու նրա պատվարժան որդին ոչինչ չխնայեցին Կ. Պոլսի իրենց բարեկամների միջոցով ու հավաքած կեղծ ստորագրություններով լրագրերի էջերը կեղտոտելու[76]։

Միքայելի մատնությամբ, որն աշխատանքի բերումով կապված էր Գերագույն խորհրդի բոլոր անդամների հետ և համարյա բոլորին էլ ճանաչում էր անձամբ, ձերբակալվում են Գերագույն խորհրդի քաղաքում գտնվող անդամները, բացառությամբ Եղ. Տուրսունյանի, ապա և «Պաշտպան հայրենյաց»-ի բազմաթիվ շարքային անդամներ, որոնց թիվը, սակայն, 72-ից (կամ 76-ից) չի անցնում, ինչպես տեսանք, շնորհիվ կազմակերպության տասնապետական կառուցվածքի։

Ձերբակալվեցին նաև կազմակերպության հետ առնչություն չունեցող մարդիկ։ «Ընկերություն» բառը այնպիսի սարսափ էր առաջացրել, որ բանտ նետվեց անգամ Կարինում գործող փոխատուական ընկերության քսան տարի առաջ քարտուղար եղած Ղազարոս Վահանյան ծերունազարդ վարժապետը, որը, սակայն, շուտով ազատվեց։

Միքայելը որպես կազմակերպության ղեկավարներ է ներկայացնում նաև Ներսես պատրիարքին, Մկրտիչ Խրիմյանին, Մաղաքիա Օրմանյանին ու ռուսահայ մի քանի գործիչների, որոնց նկատմամբ թուրքական իշխանություններն առանց այն էլ կասկածներ ունեին։ Բայց հարցաքննության ժա-

75 Տրապիզոնից «Մշակ»-ին (1883, № 9), գրում էին, որ Մելիքսեդեկ քահանայի հետ միասին մատնությանը մասնակցել են նաև Պողոս քահանան և «երկու աշխարհական էֆենդիներ»։

76 Տե՛ս «Մշակ», 1883, № 12։

ժամանակ Խ. Կերեկցյանը և մյուսները հերքում են բոլորը: Խ. Կերեկցյանն հայտարարում է, թե Խրիմյանն իրեն ասել էր, որ եթե եկեղեցում, խոստովանության ժամանակ պատմած չլինեիր կազմակերպության գոյության մասին, ապա ինքը նրան կմատներ իշխանություններին: Իսկ Օրմանյանին, որը նոր էր կաթոլիկությունից լուսավորչական եկեղեցու գիրկը վերադարձել, իրենք չէին վստահում[77]:

Սխալ պետք է համարել Հայկակի (Ս. Արփիարյան) այն պնդումը, թե ձերբակալվածները մտածելով, որ իրենք սակավաթիվ են և ընկերներին մատնելով կարող են բազմաթիվ լինել ու դյուրացնել բոլորի փրկությունը, որովհետև կառավարությունը տեսնելով բանտերը լցված են, լավագույն միջոցը կհամարի իրենից ազատել, իբր իրագործում են այդ խորհուրդը[78]:

Մինչդեռ կատարվում էր ճիշտ հակառակը:

Բանտարկյալների մի մասը, հատկապես կազմակերպության շարքային անդամները, հայտարարում էին, որ իրենք չեն հասկացել, թե ինչ ընկերության են անդամագրվում, կամ ասում էին որ սկզբում կողմ էին, հետո զղջացել են և այլն: Իսկ մյուս մասը բացեիբաց հայտարարում էր, որ կեղեքվող ժողովրդի վիճակի բարելավման համար պայքարելը մեր պարտականությունն է և եթե ազատվենք, կշարունակենք մարտնչել հանուն նույն նպատակի իրագործման:

Ա. Էթալիկյանը ցանկանում էր իր վրա վերցնել ողջ ծանրությունը և քննության ժամանակ հայտնել, որ Պալասի մոտ գտնված թղթերը իրենն են ու այն իրեն տվել է Պողոս Սարաֆյանը (ոստիկանական գործակալը): Բայց խորհում են, որ դրան ոչ ոք չի հավատա և չեն փորձում: Խ. Կերեկցյանն առաջարկում է մեղադրանքն ամբողջությամբ բարդել իր ուսերին և Օրմանյանին տեղեկացնում է, որ ինքը այն թեթևությամբ կտանի, միայն թե ազատվողները և դրսում մնացածները չլքեն գործը:

---

77 Մաղաքիա Օրմանյանը (ծննդյան անունով Պողոս) կաթոլիկությունից լուսավորչական եկեղեցու գիրկն է դարձել 1879 թ. հոկտեմբերի 28-ին:

78 «Մշակ», 1883, № 6:

Իրեն ուղղած այն հարցին, թե ինչու էր Թիֆլիս գնացել և ով էր Թիֆլիսից նրա հետ եկել Կարին, Խ. Կերեքցյանը պատասխանում է, թե առևտրական նպատակներով իր Կովկաս մեկնելու մեջ ինքը անթույլատրելի ոչինչ չի տեսնում, իսկ այն անձնավորությունը, որը վերադարձին իր հետ Կարին էր եկել, պատահական ճանապարհային ընկեր էր, իրեն համարում էր «նիհիլիստ» և ամեն տեղ տարբեր անուններով էր հանդես գալիս, ուստի ճիշտ անունը ինքը չգիտի։ Եվ որ նա մեկ ամսի չափ միայն մնաց Կարինում ու գնաց Եվրոպա[79]։

Իսկ Պալ։ալը, որն առաջին հարցաքննության ժամանակ սարսափից թոթովել էր, թե ինքը մեկ անգամ Օրմանյանին ցույց տալով նրդմնագրերը ասել է. «Այս թղթերը տվեք մեզ, մեր ապրուստն ալ տվեք», դրանով էլ Կարինի թեմական առաջնորդին ներկայացնելով որպես շարժման ղեկավար կամ ղեկավարներից մեկը, հետագայում հրաժարվում է իր նախորդ ցուցմունքներից և հայտարարում, որ իր կողմից եղծված այդ պատմությունն իրենից կորզել են ոստիկանական գործակալները խոստանալով մարել իր ունեցած 35 ոսկի պարտքը և ներկայացնել կառավարական պարգևի։

Հովհաննես Ասատուրյանն ու Կ. Պոլսից Կարինի բանտ տեղափոխված Հակոբ Իշղալայյանը պնդում էին, որ այդ ամենն իրենց ու իրենց ընկերների դեմ ամբաստանության հեղինակների կողմից անձնական վրեժի նկատառումներով ամարդորեն հորինված հերյուրանքներ են[80]։

Հ. Նշկյանը բերում է մի երիտասարդի պատասխանը կազմակերպության ղեկավարներին մատնելու հարցապնդման ժամանակ.

«Հարցաքննիչ դատավորը կը հարցնե 18 տարեկան պատանիի մը.

— Տղաս, դու խելացի մեկը կերևիս և կարծեմ ամեն բանի ճշմարիտը պիտի խոսիս։

---

79 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Նավասարդյանի ֆ., 9—III։

80 Տե՛ս «Արշալույս Արարատյան», 1883, № 1207։

— Էվվեթ էֆենտիմ (այո, տեր իմ)։

— Ուրեմն ըսե ինձ թե դուք գլուխ մը ունի՞ք։

— Էվվեթ էֆենտիմ։

— Աֆերիմ (ապրես) տղաս, ես գիտեմ, որ դուն ճշմարիտը կը խոսիս, հիմա ըսե ո՞րն է և ո՞ւր է ձեր գլուխը։

— Իշթե էֆենտիմ (ահավասիկ տեր իմ) կըսե պատասխանին, գլուխ աջ ու ձախ շարժելով»[81]։

Չնայած բոլոր խոչընդոտներին, Խ. Կերեքցյանն ու նրա ընկերները չմատնեցին նաև Թիֆլիսի իրենց բարեկամներին, որոնց մասին դատաքննիչները փութաջանորեն հետաքրքրվում էին։ Այդ հարցով նվազ շահագրգռվածություն չէր ցուցաբերում ռուսական հյուպատոսությունը և իր թարգմանչի՝ հայազգի Արսեն Շապանյանի միջոցով, ցանկանում էր համոզել հատկապես Խ. Կերեքցյանին՝ մատնելու «Պաշտպան հայրենյաց»-ի ռուսահայ գործակիցներին։

Զուր չէին Կարինից 1883 թ. մայիսի 14-ին գրում Թիֆլիս, որ ռուսական գլխավոր հյուպատոս գեներալ Ա. Դեննետը «շատ գեշ հայացք ունի ռուսահայոց վրա, և որ նա մեկնել է Ռուսաստան թերևս «Պաշտպան հայրենյաց»-ի հետ կապված արևելահայ գործիչներին ցարիզմի հաշվեհարդարի առջև կանգնեցնելու նպատակով ու զգուշացնում. «Այս մասին հարկ եղածն մտածել և խորհել ձեզ անկ է»[82]։

Դեննետը ցանկանում էր Թիֆլիս ուղարկել և ցարական դատաստանին հանձնել այնտեղից հեղափոխական գործունեության նպատակով Կարին եկած Բ. Մելիք-Գրիգորյանին, բայց վերջինս պարսկահպատակ լինելով, պարսից դեսպանի միջամտությամբ հնարավորություն ստացավ խուսափել, իսկ հետո անցավ Անդրկովկաս։

Ձերբակալությունից խույս տվեց նաև Գերագույն խորհրդի անդամ Կ. Նշկյանը, որը գտնվում էր Թիֆլիսում և Կարինում կատարված ձերբակալությունների օրերին հազար ռուբլի հանգանակությամբ, որն հետագայում ծախսվեց բանտարկյալների ազատման համար, տուն էր վերադառնում

81 Հ. Նշկյան, Առաջին կայծերը, էջ 140։

82 Տե՛ս «Հայրենիք» շաբաթաթերթ, Բոստոն, 1905, 9/12։

եղելությանն անտեսյալ։ Տրապիզոնից Կարին տանող ճանապարհին՝ Գյումուշխանեի մոտ, նրան ընդառաջ են գնում Բ. Մելիք-Գրիգորյանը և Կ. Փենդեհերյանը, հանդիպում և կանխում նրա մուտքը քաղաք։ Մի քանի օր մնալով Ս. Աստվածածնի վանքում, Կ. Նշկյանը վերադառնում է Տրապիզոն, ապա անցնում Կ. Պոլիս, չմտածելով հարկավ, որ դա վերջին հրաժեշտն էր այնքան սիրած իր հայրենիքին, որի ազատությանն էր ինքը զինադրվել ու երդվել նրան զոհելու իր արյան վերջին կաթիլն անգամ։

Ավելի ուշ, անցնելով Ամերիկա և հանգրվանելով այնտեղ, նա բավարարվեց 1885 թ. Ֆրեզնոյում գրած մի ոտանավորով.

Ընկերներս ամեն շղթա կրեցին,
Անոնք գլխ միայն ազատ կարծեցին,
Թեև ազատ, ես այս դրոշին փարած,
Բայց ձեռքս ու ոտքս շղթայով կապված։

Եփրատ լուռ մնաց մեր լաց ու կոծին,
Թողուց տաճկի լուծը մեր վզին,
Տար երկինք մի օր մի սաբր լինեի,
Այս դրոշն ատողապարդ մեր լուծը փշրեի[83]։

Ապա խաչ քաշեց պայքարի նախորդ բոլոր ծրագրերին ու ամոքվելով մի քանի աղեկտուր նամակներով, իր կյանքն ավարտեց 1916 թ., 60 տարեկան հասակում, որպես ամերիկյան մայր ցամաքի հայության վաղահաս կորուստը ողբացող միշտ ազնիվ, բայց թևաթափ եղած հայրենասեր։

Կազմակերպության հայտնաբերումից անմիջապես հետո թուրքական իշխանությունները սարսափի մեջ ընկան և կուսակալի տենդագին հեռագրերն ազդարարեցին ողջ Արևմտյան Հայաստանը հեղափոխական շարժման մեջ լինելու և առաջիկայում ռուսահայերի ու նրանց միջոցով Ռուսաստանի օժանդակությամբ ապստամբություն բարձրացնելու մասին։ Այս օգնության խուճապային ազդակները լայնատարած արձագանքեցին Օսմանյան ամբողջ կայսրության մեջ և Երզնկա-

83 Տե՛ս Մ. Նշկյան, Ով փճացուց հայությունը։

յում տեղավորված Թուրքական չորրորդ բանակը «քալեց Կարինի վրա»։

Քաղաքի ամրոցների հրանոթներն ուղղվեցին դեպի հայկական թաղամասերը։ Տեղական զինվորներն ու ոստիկանությունը լրացուցիչ փամփուշտ ստացան և ամենուր պատերազմական ժամանակների պահակություն սահմանվեց։ Այնպիսի իրարանցում էր սկսվել, կարծես «ահեղ բանակ մը օսմանյան գահուն հաստատությանը սպառնա»[84]։

Բայց հետո, երբ պարզվեց, որ այդպիսի մեծ իրարանցման հարկ չկա, նրանք մի փոքր հանդարտվեցին և Կ. Պոլսից ստացած հրահանգների համաձայն, ձերբակալություններն ու հարցաքննությունները սկսեցին կատարել գաղտնի, միաժամանակ փորձելով օտարերկրյա դիտողներին շարժումը ներկայացնել որպես տեղական բնույթ ունեցող աննշան մի դեպք։

Թուրքական իշխանությունները մեծ նշանակություն էին տալիս իրադարձությանը, բայց ցանկանում էին այն ներկայացնել նվազագույն չափերով։ Եվ հենց այն փաստը, որ ձերբակալվածների թվի մասին կային իրարամերժ բազմաթիվ կարծիքներ՝ մի քանի հոգուց մինչև մի քանի հազար (ավելի տարածվածը 400-ն էր), վկայում է այն մասին, որ ձերբակալություններն ու հետաքննությունները շարունակվում էին արդեն խիստ քողարկված։

«Հսկողությունք, խստությունք, սահմանագլուխները և երկրի զանազան կողմերը,— գրում էր այդ օրերին «Մեղու Հայաստանի»-ի Կ. Պոլսի թղթակիցը,— կրկնապատիկ ավելացած են կառավարության գաղտնի լրտեսներ՝ վարձկան բայց ուշիմ, թեև արտաքուստ ողորմելի գյուղացվոց կերպարանքի տակ, ամենեն փոքր գյուղերը կայցելեն, բնակչաց կյանքը, այժմյան վիճակը դիտելով և նոցա տրամադրությանց տեղյակ լինելու, անցորդները քննելու և ըստ այնմ գավառագլուխ իշխանությանց տեղեկագրելու համար»[85]։

84 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII—11507։

85 «Մեղու Հայաստանի», 1883, № 44։

Իշխանությունները մի կողմից առանձին բանտարկյալների ազատելով և այդ մասին բարձրաձայն հայտարարելով, «մյուս կողմից լուռ ու մունջ, ծածուկ, շատերին նորից բանտ են նետում»,— Արևմտյան Հայաստանից գրված մասնավոր մի նամակով հայտնում էին Թիֆլիս[86]:

1883 թ. փետրվարի կեսերին Կ. Պոլսից հղված մի գաղտնի հեռագրի ստացումից հետո, նույն օրը ևեթ (բայց հավանաբար միայն նույն օրը), փոքր բարելավում մտցվեց բանտարկյալների կենցաղում: Նրանց ներքնակները փոխեցին, թույլատրեցին մաքուր օդ դուրս գալ և զարշահոտությունը վերացնելու համար բանտախցերում կրակ վառեցին: Կուսակալի մոտ այդ երեկո հրավիրված գաղտնի խորհրդակցության բնույթի մասին կողմնակի ոչ ոք չկարողացավ իմանալ[87]:

Այդ օրերին տեղական իշխանությունները միաժամանակ գաղտնի գրգռում էին մահմեդական ազգաբնակչության մոլեռանդությունը, ավելի լարում նրանց իրենց հայ դրացիների դեմ:

«Տաճկաց բերանը անարգական հնավանդ բառեր, որ դադարած էին, նորեն շատացան,— գրում է Օրմանյանը,— շուկաներու մեջ տաճկաց կողմե խրոխտանք մը սկսավ տիրել և ամեն շուկայի խնդիրներ և առևտրական կռիվներ քաղաքական ձևեր սկսան զգենուլ, գյուղերու մեջ երթևեկները երկյուղալի դարձան և շարունակ գանգատներ կը հասնին կերպկերպ նեղությանց վերա և տակավին կուսակալին բռնած ճամբան կհարատևե կասկածը շատացնելու անդորրությունը վրդովվելու և դրացիները իրարմե անվստահ ընելու դիտմամբ...»[88]:

Կանգ չէր առնվում ոչ մի տեսակ ստի ու կեղծիքի առջև: Լուրեր տարածեցին անգամ, թե հայերը Սըվազում հարձակվել են մզկիթների վրա, սպանել 200 տաճիկ[89] և այլն:

---

86 «Մշակ», 1883, № 10:

87 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Ազատյանի ֆոնդ, XII—11516:

88 Նույն տեղում, XII—11513:

89 «Մշակ», 1883, № 12:

Կազմակերպությունը հայտնաբերվելու հաջորդ օրը Խաչատուր Կերեքցյանի կրտսեր եղբայրը՝ Տիգրան Կերեքցյանը, «Պաշտպան հայրենյաց»-ի Գերագույն խորհրդի անդամ Հ. Ստուրյանի ցուցումով, առաջնորդարանի ծառա Մարուքեի հետ միասին այրում է հեղափոխական կոչերով և այլ փաստաթղթերով լի արկղը, դույն դրանով էլ շատերին փրկելով անխուսափելի պատժից։

Ձերբակալվածների ճնշող մեծամասնությունը երիտասարդներ էին, անգամ պատանիներ։ Նրանցից ամենատարեցը Խ. Կերեքցյանն էր՝ ընդամենը 36 տարեկան։

Սկսվեց ինկվիզիտորական հարցաքննությունը, որին ենթարկում էին իրենց տունը, պատիվն ու ընտանիքը պաշտպանելուն, իրենց հայրենիքի ազատությանը վիճվորագրված այդ երիտասարդությանը, որը երդվել էր «ազգին համար արյամբ չափ աշխատել» (Օրմանյան)։

«Խոշտանգանաց գլխավորը եղած է Բոլիս, որ ըստ օրինաց հաղորդակցությանն գանելով ձերբակալելոց առանձին թողլո տեղ մըն է, որպեսզի չխրատվի ուստիք (*) սակայն այդ առթին մեջ Բոլիսը ճշմարիտ տանջանքի փոխված է,— գրում էր Կարինի հոգևոր առաջնորդը,— Բոլիս բռված տեղերը անձուկ ծակեր են, տասը թզաչափ երկայն և հինգ թզաչափ լայն և մարդաչափ բարձր գետնահարկի մեջ հատակը թաց հող, ամեն կողմե խոնավ, սաստիկ ցուրտ, առանց և ոչ կտոր մի փսիաթի, որ կարի ծանր է Կարնո ցրտության խստությունը ի նկատի առնելով վառնգի արդեն ձյուն ու սառ բռնած էր և այդ ծակին մեջ փակած են ձերբակալյալները, արգելելով ըմպել և ծխել, և քանիցս ժամը անգամ մը միայն կարյաց համար դուրս ելնելու ներելով. պարտավորված են նույն ծակին մեջ այդ անախորժ մարմնական պետքը կատարել և այնպես մնալ...

Այդ Բոլիսի խոշտանգանաց ենթարկված է Ալեքսան Էթալիկյան, վեց օր շարունակ, և այնուհետև ալ երկար ատեն խիստ բանտի մեջ թողված առանց ծխելու։— Խաչատուր Կերեքցյան չորս օր, որո վերա սովորական հագուստ ալ հանած են և լոկ բաճկոնով թողուցած, անոթությունը մինչև քա-



21—196

ուսսուն և ութ ժամ երկարաձգած են, այնպես որ նվաղության վիճակի հասած և կիսամեռ դուրս հանած են: Խաչատուր Պապոյան երկու օր. սակայն ներս չդրած պաղ ջրի մեջ նստած են և երկու օր շարունակ անոթի պահած»[90]: Եվ այդպես բոլորին:

Ա. Եթալիկյանը հավանաբար չդիմացավ ահավոր տանջանքներին և արդեն 1883 թ. հունվարի 29-ին նրան տեսնում ենք զինվորական հիվանդանոց տեղափոխված[91]:

Բանտարկյալներին, որոնք պնդանված էին քաղաքի մահապարտների բանտում, ցորենի շտեմարանում և քաղաքից դուրս գտնվող Ազիզիե ամրոցի խցերում, չէր թույլատրվում առանձին տեսակցել պաշտպանների հետ: Արգելված էր նրանց հետ խոսել կամ բողոքներ գրել հայերեն լեզվով: Անհնարին էր դարձել նաև հարազատների հետ որևէ հարաբերություն ունենալ: Մուստաֆա փաշան նույնիսկ պատռեց բանտարկյալների ընտանիքներից ստացած հանրագիրը, ուր խնդրվում էր ազատել իրենց անմեղ որդիներին, եղբայրներին ու ամուսիններին:

Բայց այդ ամենը չէր վհատեցնում երդվյալ հայրենասերներին, որոնք դատավարության ժամանակ ողջ հայ ժողովրդի նախատինքը նետեցին դահիճներին. տարիներ շարունակ մեզ կեղեքում են քուրդը, չերքեզը, թուրք պաշտոնյան, այդ բոլորը կատարվում է կառավարության հատուկ ցուցումով, օրը ցերեկով, արևի լույսի տակ և մենք այժմ ընկերություն ենք ստեղծել պայքարելու այդ անմարդկային կեղեքման դեմ, պաշտպանելու մեր պատիվը, մեր ունեցվածքն ու կյանքը[92]:

«Ռուսսկի կուրյեր»-ի Կ. Պոլսի թղթակիցը հայտնում էր, որ Կարինի բանտարկյալները արժանապատվությամբ են տանում թուրքական իշխանությունների բարբարոսական հարցաքննությունը և ի լուր աշխարհի հայտարարում են, որ

---

90 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ի. Ազատյանի ֆոնդ, XII—11515:

91 Նույն տեղում, XII—11517:

92 Տե՛ս Մար, Թուրքական բանտերը, Ժնև, 1906, էջ 15:

իրենց կազմակերպության անդամները բազմաթիվ են, բյուր են, և որ իրենք թուրքական կառավարությանը, միևնույն է, հանգիստ չեն թողնի մինչև իրենց նվիրական նպատակին չհասնեն[93]։

Խ. Կերեկցյանը նույնիսկ ըմբոստանում է, հետագա հարցաքննությունների ժամանակ հրաժարվելով ցուցմունք տալ, պատճառաբանելով, թե իրեն այնպես են չարչարել, որ գիտակցությունը տեղը չէ, ուստի և չի ընդունում հարցաքննության օրինականությունը։

Կարինի հայ ազգաբնակչության որոշ շրջաններում, հատկապես ձերբակալվածների ընտանիքներում, խուլ դժգոհություն առաջացավ Խ. Կերեկցյանի և Մ. Օրմանյանի դեմ, բայց ժողովրդի զգալի մասը ավելի կայուն էր։ Այդ օրերին շատերը բավարարվում էին միայն խնկել եկեղեցում և աղերսական «ամեն»-ներով հայտնել իրենց սրտից բխած «երախտապարտ և հավատարիմ իղձերը...»[94]։

Ներսես Վարժապետյանը 1883 թ. փետրվարի 10-ի պաշտոնագրով հորդորում էր Օրմանյանին և Կարինի բնակչությանը, ինչով հնարավոր է օգնել բանտարկյալներին ու նրանց անտերունչ ընտանիքներին և համբերությամբ ու հավատով սպասել իր կողմից ներման համար ձեռնարկվող միջոցառումների արգասավոր արդյունքին։

Այդ օրերին Կարինի հույները մի փոքրիկ գումար են հավաքում և իրենց առաջնորդի միջոցով հանձնում Օրմանյանին՝ ձերբակալվածների ընտանիքներին օգնելու նպատակով։ Դա հույն ազգաբնակչության լուռ համերաշխությունն էր իրենց հայ բարեկամներին[95]։

Սակայն ինչպես Կարինի ռուսական գլխավոր հյուպատոսությունը, այնպես էլ մյուս երկրների ներկայացուցիչները ձեռնպահ մնացին հայերի մասսայական ձերբակալու-

---

93 Տե՛ս «Մշակ», 1883, № 62։

94 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Աղատյանի ֆոնդ, XII—11506։

95 Նույն տեղում, XII—11508։

թյունների նկատմամբ[96]։ Ինքնըստինքյան հերքվում ռուսական թերթերում հրապարակված ստահոդ այն լուրը, թե իբր «Էրզրումի ռուսական հյուպատոսը հայերին վերցրել է իր հովանավորության տակ, դրանով ցույց տալով, որ Ռուսաստանը նրանց բարին է ցանկանում»[97]։

Ավելին. Կարինի ռուսական գլխավոր հյուպատոս Ա. Դեննետը Կ. Պոլսի իր դեսպանին գրում էր, թե միայն այն հանգամանքը, որ «Պաշտպան հայրենյաց»-ը կապեր է հաստատել Կովկասի նարոդնիկական խմբակների՝ «ժամանակակից հասարակության ստորագույն տարրերի» հետ, «...բավական է, որպեսզի ըստ արժանվույն գնահատենք այսպես կոչված Երիտասարդ Հայաստանի (Jeune Armenie) վերաբերմունքը մեր նկատմամբ»[98]։

Սխալ պետք է համարել նաև «Մշակ»-ի Կարինի թղթակցի հաղորդումը, թե ռուսական հյուպատոսը «երկու տեղացի ռուսահպատակ բանտարկյալ հայերու ազատության համար ևս անտարբեր մնաց»[99]։

Իրականում բանտարկված էր ռուսահպատակ մեկ հայ, այն է վինագործ Իսրայել Հովհաննիսյանի (վավերագրում՝ Օգանեզով) Կարապետ անունով 18-ամյա (այլ տվյալներով 21 տարեկան) որդին[100], որին ձերբակալությունից ազատման համար Կարինի ռուսական հյուպատոսությունը միջամտեց, բայց ոչ մի արդյունքի չհասավ[101]։

1883 թ. ապրիլի 6-ին ավարտվեց մեղադրական եզրակացության կատարման արարողությունը և պետական մեղադրողը փութով հայտարարեց, թե մեղադրյալները ցանկացել են հեղափոխական ճանապարհով Թուրքիայից անջատել «օս-

96 ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625, թ. 83—85։

97 «Московские ведомости», 1883, № 3, «Русские ведомости», 1883, № 4.

98 ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ, 1881/1884 թթ., գ. 1625, էջ 83—85։

99 «Մշակ», 1883, № 33։

100 Դատաստանական փաստաթղթերում, Օրմանյանի նամակներում և ժամանակի մամուլում՝ Կարապետ Իսրայելյան (հավանաբար հայրանունը շփոթված է ազգանվան հետ)։

101 ՌԱՔԱ, ֆ. քաղ. արխիվ. 1881/1884 թթ., գ. 1625, թ. 83—85։

մանյան երկրների մի մասը, այսինքն Էրզրումը և շրջակայքը»[102]։

Այս ձևակերպումով, մեղմացուցիչ հանգամանքներ չլինելու դեպքում, Թուրքիայի պետական օրենսդրությամբ, բոլորին մահապատիժ էր սպառնում, իսկ նման հանգամանքներ լինելու պայմաններում՝ հինգ տարուց ոչ պակաս բանտարգելում։

* * *

1883 թ. ապրիլի 7-ին սկսվում է «Պաշտպան հայրենյաց»-ի անդամների դատավարությունը, որն արևմտահայերի առաջին քաղաքական դատն էր Թուրքիայում։

Դեռ 1882 թ. դեկտեմբերի վերջին Կարինում դատախազի օգնական նշանակված Ալեքսանդր Ներսիսյանը, կուսակալի պահանջով, տեղափոխվեց Տրապիզոն, որպես դատարանի նախագահ՝ փոխանակելով պաշտոնները Հաճի Հասանի հետ, որը նախկինում աշխատել էր Կարինում և հայտնի էր որպես մոլի մուսուլման։ Իսկ նախաքննության ժամանակ հայ պաշտոնյաներին չվստահելով անգամ թարգմանական աշխատանք և այն հանձնարարվեց հայ կաթոլիկ Կարապետ Գոնտաքճյանին և հույն Սթեֆանքի Հակոֆիտախսին[103]։

Դատավարության վերջում որպես մեղադրյալների պաշտպան հանդես եկող Համամճյանը, նախագահի «դատարանում քեզ այլևս չեն ընդունի, դուրս կորիր»[104] ազդով նույնպես զրկվեց գործելու հետագա հնարավորությունից։

102 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Ազատյանի ֆ., XII—11519։ Նաև «Մասիս», 1883, № 3463, 3464։ Նշենք, որ «Պաշտպան հայրենյաց»-ից հետո Թուրքիայում եղած բոլոր հայկական հուզումները, աննշան ցույցերն անգամ, նույնպես դատապարտվում էին որպես «Թուրքիայի մի մասը Օսմանյան կայսրությունից հանելու նպատակով ձեռնարկված շարժումներ» (տե՛ս Մ. Օրմանյան, Ազգապատում, հատ. 3, էջ 4641)։

103 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Ազատյանի ֆոնդ, XII—11507։

104 Տեքստում հայատառ թուրքերեն «Մահքեմեյե սենի հիչ պիր վաքըթ քաբուլ էթմեզ չիքըշարըը» (նույն տեղում, XII—11520)։

Պետական ամբաստանագրով մեղադրվում էին 57 մարդ (56 թուրքահպատակ և մեկ ռուսահպատակ)։ Նկարիչ Միքայել Մանուկյանը, որպես վկա, ազատ է արձակվում, ուստի դատապարտվում են 56 մեղադրյալ։ Սակայն Կ. Պոլսից դատապարտյալների բողոքարկների հիման վրա և պատրիարքարանի ջանքերով, գործը վերադարձվում է նոր քննության։ Այս անգամ 16-ը ազատվում են, իսկ 40-ը դատապարտվում տարբեր ժամանակների (5—15 տարի) բանտարկության։

Որպես ղեկավարներ դատվում են խաչատուր Կերեքցյանը՝ 15 տարվա, Կարապետ Նշկյանը (հետակա կարգով)՝ 13 տարվա, Հակոբ Իշխանյանը և Հովհաննես Աստուրյանը՝ 10-ական տարվա և Ալեքսան Էթմեքկյանը 7 տարվա բանտարկության։ Չորս գործիչներ դատապարտվում են 6, իսկ 31-ը՝ 5-ական տարվա ազատազրկման։

Դատապարտյալները բողոքագիր ուղարկեցին Կ. Պոլիս, ուր փորձում էին հերքել իրենց վրա բարդված մեղադրանքը՝ միաժամանակ բողոքելով հարցաքննության ու դատավարության կամայական ընթացքի մասին, խնդրում էին իրենց արդարացնել։ Կ. Պոլսում վճիռը բեկանվեց և հա ուղարկվեց նոր քննության, բայց Կարինի դատարանը 1883 թ. մայիսի 31-ին նույն Կ. Պոլսից ստացած ցուցումով, նորից հաստատեց իր նախորդ վճիռը։ Միայն ավելի ուշ, հայերին սիրաշահելու նպատակով, կատարվեց դատապարտյալների, ըստ հանցապարտության կարգի՝ բաժանում և Թուրքիայի արդարադատության մինիստրի 1884 թ. հունիսի 6-ի հրամանագրի համաձայն, հունիսի 22-ին (հուլիսի 4-ին, ուրբաթ) 5 տարվա ազատազրկման դատապարտվածները, որպես երրորդ կարգի հանցագործներ, ազատ արձակվեցին։ Իսկ 6 տարով դատապարտված չորս մեղադրյալների և 7 տարվա դատապարտված Ա. Էթմեքկյանի (երկրորդ կարգ) պատիժը կրելու ժամկետները երկու երրորդով կրճատվեցին։ Առաջին կարգով դատված համարվողների պատժաչափը մնաց նույնը։

Մի քանի ամիս անց՝ 1884 թ. նոյեմբերի 24/26-ից ազատ օդ շնչեցին նաև մյուսները, բացի խ. Կերեքցյանից, Հ. Աս-

ջուրյանից և Հ. Իշղալացյանից, որոնք ազատվեցին 1886 թ. սեպտեմբերին միայն։

Ինչպես տեսանք, Մ. Օրմանյանը նույնպես թուրքական իշխանությունների կողմից կասկածվում էր որպես «Պաշտպան հայրենյաց»-ի ղեկավարներից մեկը։ Չկարողանալով հաստատել նրա նկատմամբ ունեցած կասկածները, Կարինի կուսակալը անընդհատ պահանջում էր Օրմանյանի հեռացումը քաղաքից, ինչպես և Վանի կուսակալը, նույն շրջանում, պահանջում էր Խրիմյանի հեռացումը Վանից։

Ջհերքելով «կանոնէն ավելի համարձակ գաղափարներու ծառայած ըլլալը», Օրմանյանը գրում է, որ Կարինի կուսակալն իրեն էլ էր ցանկանում խառնել այդ գործի մեջ. «Թեպետ առաջնորդարանի փոքրավորը բանտարկելով[105] և Բրուտյան տունը լրտեսներով շրջապատելով ալ նշան մը չէր կրցած ձեռք անցնել»[106]։

Այսինքն ոչ թե չէր մասնակցել, այլ ոստիկանությունն իր մասնակցությունը վկայող ոչինչ չէր կարողացել հայտնաբերել։

Թուրքական իշխանությունները առաջնորդարանը պահում էին ոստիկանական հսկողության տակ ու փորձում դրաքննության ենթարկել բոլոր նամակները և ըստ ռուսական լրագրերի, Օրմանյանի փախուստը կանխելու նպատակով նույնիսկ թունավորել էին նրա ձին[107], որը, սակայն, չարգելեց որ նա հեռանա Կարինից։ Խորհելով, որ ինքն էլ Մուշի առաջնորդ Գրիգորիս Ալեաթճյան եպիսկոպոսի, Բուլանուխի փոխանորդ Հովսեփ Սարաճյան վարդապետի նման հրամանով Կ. Պոլիս կկանչվի, կամ Արաբկիրի առաջնորդ Եզնիկ Ապահունի եպիսկոպոսի նման հսկողությամբ կտարվի, Օրմանյանը 1883 թ. մարտի 24-ին (ապրիլի 5-ին) մեկնեց Կ. Պոլիս, ուր հասավ ապրիլի 5/17-ին։

---

105 Առաջնորդարանի փոքրավորը Մարուքե Հերհերյանն էր, որի միջոցով, հարկ եղած ժամանակ Օրմանյանը կապ էր պահպանում կազմակերպության հետ։

106 Մ. Օ ր մ ա ն յ ա ն, Խոհ և խոսք, էջ 18 և 21։

107 «Московские ведомости», 1883, № 7.

Կարինի դեպքերի մասին բացատրություններ տալով Ներսես պատրիարքին և մայիսի 5/17-ին արդարադատության և կրոնի մինիստրի հետ տեսակցելուց հետո, նա ընդունվեց մեծ եպարքոս Սայիդ փաշայի կողմից։ Հերքելով հեղափոխական կազմակերպության գոյությունը, նա պատրիարքի օգնությամբ, կարողացավ չքմեղ ձևանալ և նույնիսկ դիվանագիտորեն հայտարարեց, որ Կարինի կուսակալը օտարերկրյա հյուպատոսների խորհրդով մանկամիտ անհեռատեսությամբ չափազանցրել է այդ ամենը, չհասկանալով, որ նրանք այդ անում են իրենց պետությունների կողմից Թուրքիայի ներքին գործերին միջամտելու առիթ ստեղծելու նպատակով, իսկ ինքը փաստորեն օգնում է նրանց։

Իհարկե, այդ ժամանակ նա չէր մոռանում այն օրերը, երբ Կարինում ձերբակալվածներին մի կերպ հասցնում էր ասել թե ի սեր աստծո ինձ չմատնեք[108]։

Այս ու սրան հաջորդած մի շարք հանգամանքները և Օրմանյանի չափավորությունը, գուցե որոշ չափով և փառասիրությունը[109], պատճառ դարձան, որպեսզի նա հետագայում, հայկական շարժումների վերելքի շրջանում, վերապահ դիրք գրավի նրանց նկատմամբ։

Գնահատելով Օրմանյանի պատրիարքությունը, Բ. Քեչյանը «Բյուզանդիոն»-ում գրում էր. «Օրմանյան լավ գործեց իբրև գործի մարդ, բայց սիրտ պակսեցավ իրեն»[110]։

Գ. Զոհրապը որոշ չափով արդարացնելով Օրմանյանի պատրիարքական շրջանի գործունեությունը՝ կապված դաժան այն իրավիճակի հետ, որում նա ստիպված խուսանավում էր, և հայ ժողովրդին համեմատելով չխորտակվելու համար ճարահատյալ գլուխ թեքող եղեգների հետ (նա դեռ չէր ենթադրում, որ այդ եղեգները արմատով դուրս պիտի նետվեն),

108 ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ե. Նավասարդյանի ֆոնդ, 9—III։

109 Ի դեպ Տիգրան Չյոկյուրյանն իր «Վանքը» վիպակում, կարծում ենք Օրմանյանին ի նկատի ունի, երբ գրում է. «...իմ երախտավոր և բանիմաց ուսուցիչներես Օրմանյանը կկրկներ միշտ. «Փառասիրությունը մեղքերուն եններելին է» (տե՛ս «Վանքը», Երևան, 1962, էջ 12)։

110 Տե՛ս Հ. Ստամյան, Հուշարձան, հատ. 3, էջ 472։

միաժամանակ ավելացնում էր, որ «Աբդուլ Համիդի հանդեպ իր վարմունքը դժբախտ ազգի մը պատրիարքի վայելուչ ծանրությունը չունեցավ»[111]։

Հետագայում հայ ազատագրական շարժումներին հետամուտ կուսակցությունները «...զիս իրենց կողմնակից գիտնալով 1882-ի Կարնո դեպքերուն հետևանոք,— գրում է Մ. Օրմանյանը,— իմ պատրիարքական ընտրության չէին ընդդիմացած, մինչ իսկ ընտրությունս շնորհավորեցին իբր իրենց տեսության համակիր և գործակիր, բայց երբ տեսան, որ դեպքը փոխվելով՝ Մաղաքիա պատրիարքը իրենց սպասած Օրմանյանը չէ, և ազգային պաշտպանությունն ու խնամքը զինքըն նոր պատասխանատվության կենթարկեն, սկսան գիրերով և այցելություններով իրենց տեսության համակերպելու ստիպել, և երբ այդ ճամփուն մեջ ալ չհաջողեցան՝ սպառնալից գիրերով, և մինչև իսկ օտարազգի միջնորդներով հրաժարելու բռնադատել ձեռնարկեցին»[112]։

Իսկ ավելի ուշ՝ «երիտասարդ թուրքերի» պետական հեղաշրջումից հետո, «նախորդ վարչաձևին բոլոր մեղքերը բեռցուցին անոր»։

Սակայն անաչառ լինելու համար պետք է գիտել, որ այդ ամենը, իրոք, մեծ մասամբ կապված էր այն պայմանների հետ, որում Օրմանյանն ստիպված եղավ գործել։ «Ազգին ամենեն փոթորկալի վիճակին մեջ զիս պատրիարք կարգեցին»,— իրավացիորեն ասել էր նա Երուխանի հետ ունեցած զրույցում[113]։

Անշուշտ բաժանում ենք նաև Սիրունու խոհուն դիտողությունը. «Դեպքերուն հետ էր, որ փոխվեցան իր տրամադրությունները ալ։ Ամեն մեկ հարվածի հետ, զոր հայ ժողովուրդը կկրեր, իր ներսեն ալ բան մը փլած էր։ Խանդավառությունը ներսը մարեր էր տակավ, հետզհետե սկեպտիկ դարձեր... Օրմանյան հեռու է սակայն հայ ժողովուրդը մեղավոր կարծելե

---

111 Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1961, N ԺԲ, էջ 41։

112 Մ. Օրմանյան, Խոհ և խոսք, էջ 33։

113 Գ. Հովսեփյան, Մաղաքիա արք. Օրմանյան և կաթողիկոսական ընտրության, Թիֆլիս, 1911, էջ 17–18։

յին շարժումներուն մեջ, զորս այն փորձեր է հանուն իր ապագային, և որոնք պատրվակ պիտի ըլլային դահիճներուն համար իրենց նախճիրը արդարացնելու: Օրմանյան մեղավոր չէ գտներ հայ ժողովուրդը, ոչ այն պահուն, երբ կյանքի, ինչքի և պատվի ապահովություն կպահանջեր աշխարհեն, ոչ ալ այն ատեն, երբ իր դիմումներուն մեջ հուսահատ խաբված պիտի մղվեր հուսահատական ճիգերու»[114]:

Մ. Օրմանյանն ականատես եղավ հայ ժողովրդի ազգային ողբերգությանը և իր ժողովրդի հետ, ամբողջ հոգով կրելով այն, իմաստուն կանխատեսությամբ, երազատեսություն սեպելով Եվրոպայի վրա հույս դնելը, ուղիներ էր որոնում արյունոտ եղեռնից ազատվածների և ողջ հայ ժողովրդի փրկության համար[115]:

* * *

«Պաշտպան հայրենյաց»-ի, որպես արևմտահայ ազգային-ազատագրական շարժման քիչ թե շատ համասփյուռ կազմակերպության գործունեությունը նշանակալի երևույթ էր հայ իրականության մեջ և նոր ճանապարհ էր հարթում արևմտահայ ժողովրդի գալիք հերոսամարտերի համար:

Կազմակերպության ծայրուղիները վերջավորվում, երբեմն էլ սկզբնավորվում էին Կ. Պոլսում, Թիֆլիսում, Պետերբուրգում, ինչպես նաև Վանում և Արևմտյան Հայաստանի բազմաթիվ այլ քաղաքներում: «... Մենք միացած ենք տեսնում ռուսահայերին թուրքահայերի հետ», իսկ հայդուկային շարժումն առաջին անգամ մտնում էր «կազմակերպված շարժման շավիղ»[116]:

Հետաքրքրական է, որ արևմտահայ գործիչների կապը ցարական չինովնիկները մեծ մասամբ տեսնում էին առաջին հերթին Թիֆլիսի «նիհիլիստների» հետ: Իսկ այդ ածականով

---

114 «Էջմիածին» ամսագիր, 1962, № Գ., էջ 40, № Ե. էջ 58:

115 Տե՛ս «Էջմիածին» ամսագիր, 1962, № Ա. (Հ. Ճ. Սիրունի, «Օրմանյանը և իր ժամանակը»):

116 Լեո, Անցյալից, էջ 40:

նրանք հաճախ պխտակում էին ոչ միայն նարոդնիկներին ու հնչակյան-դեմոկրատներին, այլ երբեմն նույնիսկ լիբերալներին, առանց որոշակի տարանջատելու մեկը մյուսից։

Ինչ վերաբերում է «Պաշտպան հայրենյաց» կազմակերպության անկմանը, ապա պետք է նկատել, որ այդ կազմակերպությունն ապրեց միայն իր մանկության շրջանը և դադարեց գոյություն ունենալուց պատանեկության շեմին՝ իր փայփայած գաղափարների կենսագործման համար մղած պայքարի առաջին քայլերն անելիս։ Դադարեց, դեռ չճշտորոշած անգամ այն ուղին, որով նա ցանկանում էր տանել մի ամբողջ ժողովուրդ։

Վավագույն իդեալը առանձնահատուկ ուժով կերպարանավորվում է հատկապես տառապող մարդու, հարստահարվող ժողովրդի մտայնության մեջ, ուղենշելով նրան իր մեծագույն նպատակին հասնելու երբեմն ճիշտ, իսկ երբեմն էլ սխալ կամ անազորուչն մի ուղի։

«Պաշտպան հայրենյաց»-ը խարխափեց այդ ճանապարհներին։

«... Մեր գործունեությունք թյուր ուղղություն են ունեցեր, ուստի տարօրինակ չէր, որ մի այդպիսի ցավալի հետևվանքի պիտի հասնեինք... բայց մարմինն ու կենդանությունը առողջ է՝ օր մը ծնելու ակնկալությամբ... նպատակներս արդար է, ընդամին մեղ կմնա իմաստուն եղանակով միջոցներ հայթայթել այդ նպատակին տիրելու համար...»[117]։

Այսպես էին բարբառում «Պաշտպան հայրենյաց»-ի ձերբակալությունից ազատ մնացած անդամները Թիֆլիսի իրենց բարեկամներին՝ 1883 թ. մայիսի 14-ին։

Կարինի երիտասարդության քաղաքական պարթոնքը և հասունությունը վկայող այս փաստաթղթում (որոշ չափով ազդված Պոլսի «Միացյալ ընկերության» ծրագրից), որն ստորագրել էին Ա. Վեմյանը, Մ. Նշկյանը և Գ. Զիլինկիրյանը, կոչ էր արվում չվհատվել, տեղի չտալ պայքարի դժվարություններ-

117 «Հայրենիք» շաբաթաթերթ, Բոստոն, 1905, № 49 (335)։

րի աչքն ու առաջարկվում էր գործունեության հետագա մի նոր, սահմանափակ, բայց գործնական ծրագիր։ Այն հիմնականում հանգում էր գյուղատնտեսական արհեստանոցի անվան տակ խոշոր զինագործարան կազմակերպելուն, որտեղ աշխատելու պատրվակով պիտի հանգրվանեին դրսից, հեղափոխական գործունեության նպատակով Արևմտյան Հայաստան անցած գործիչները և ապահովվեր զենքի հայթայթումը, որպես ամենակարևոր երաշխիք գալիք փոթորիկների հողմապտույտում մարտնչելու համար։

Այդ հապճեպ արված դիտողություններում հետագա գործունեության առաջնահերթ գիծ էր մղվում նաև Կիլիկիայի (Զեյթուն) հետ միացյալ ճակատ կազմելու անհրաժեշտության բեղուն գաղափարը։

Ինչպես վերևում նշվեց, «Պաշտպան հայրենյաց»-ը 1882—1883 թթ. ձերբակալությունից ու դատից հետո էլ դեռ շարունակեց իր արդեն բռնված ու երերուն ուղին։

1880-ական թվականների երկրորդ կեսին, բանտից ազատված Խ. Կերեքցյանի ու Հ. Իշխանյանի ուժերով կազմակերպությունը փորձեց ոտքի կանգնել և որոշ աշխուժություն ապրեց, որը պսակվեց 1890 թ. Կարինում տարաժամ կատարված զինված ելույթով։ Ապա դանդաղ մարեց, չնչին դիմադրությամբ տեղը զիջելով առավել կազմակերպված ազգային կուսակցություններին։

Խ. Կերեքցյանը և նրա գաղափարական կողմնակիցներից շատերը համաձայն չլինելով նոր սաղմնավորված դաշնակցության տակտիկական գծին, ահաբեկումներին ու անժամանակ ընդվզումներին (թեպետ 1890 թ. իրենց էլ էր հրապուրել այդ խայծը), պայքար սկսեցին նրա դեմ, որն ավարտվեց ահավոր մի ողբերգությամբ։ Դաշնակցության տեղական կոմիտեի որոշմամբ, Խ. Կերեքցյանը տեռորի ենթարկվեց։ 1891 թ. օգոստոսին Արամ Արամյանը (Թաթուլ) ատրճանակի կրակոցով վերջ դրեց անխոնջ հայրենասերի կյանքին[118] և ինքը գնաց օրորվելու թուրքական կախաղանի վրա։

---

118 Արամյանը Խ. Կերեքցյանի վրա կրակում է օգոստոսի 26-ին, Կերեքցյանը վիրավորվում է և մահանում սեպտեմբերի 23-ին։

«Պաշտպան հայրենյաց»-ի գործունեությունն իրավացիորեն գնահատվում է, որպես Զեյթունի հերոսական ապստամբության նման մի իրադարձություն, որը համազգային արձագանք ստանալով, դարձավ մի մարտաշունչ այգանվագ, հուշելով արևմտահայ ժողովրդին, որ իր ազատությունը նա կարող է ձեռք բերել պայքարով, այն էլ կազմակերպված, հետևողական ու զինված պայքարով միայն։ Քանզի ստրկացված ժողովուրդներն իրենց հարստահարիչների դեմ մղած հերոսական, անընդհատ պայքարով են ապացուցում ազգային անկախության ու ինքնորոշման իրենց պատմական իրավունքը[119]։

«Պաշտպան հայրենյաց»-ով բացվում էր արևմտահայ ազգային-ազատագրական շարժման պատմության այն լուսավոր էջը, որի վրա խորագրված է. «Ձայնը հնչեց Էրզրումի հայոց լեռներին»։ Իսկ այդ ձայնը պայքարի և ազատության համընդհանուր մարտակոչն էր, սթափվող ժողովրդի արթնացումի ու նրան հերոսացման մղող դարեր լռած ազդաշեփորը։

---

119 Տե՛ս К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, հատ. 18, էջ 555։

# ՀԱՎԵԼՎԱԾ

(ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐ)

№ 1

## ДОНЕСЕНИЕ ВИЦЕ-КОНСУЛА В ВАНЕ К. КАМСАРАКАНА РУССКОМУ ПОСЛУ В КОНСТАНТИНОПОЛЕ О ПОДГОТОВКЕ ВОССТАНИЯ КУРДОВ ПРОТИВ ТУРЕЦКОГО ПРАВИТЕЛЬСТВА И ОБ ОТНОШЕНИИ К НЕМУ АЙСОРОВ

15 июня 1880 г.

В 20-х числах мая в Ван прибыл глава несторян Ванского вилайета патриарх Маршимун вместе с епископом Иосифом. Патриарх человек лет 40, по-видимому, мало развитой, лишенный всякой самостоятельности и вообще, по мнению И. Д. Вице-консула, личность, не могущая иметь влияния на несторян. Епископ весьма почтенный и смышленный старик. В своих беседах с надворным советником Камсараканом*, они высказали сожаление о том, что Россия не посылает агентов в Айсористан, тогда как англичане, часто появляясь там, выступают за христиан.

Что касается своих отношений к Шейху Ибадулла (Обейд-Улла), стремящемуся воспрещением платить подати и раздачею оружия склонить курдов к восстанию против Турецкого правительства, патриарх заявил, что несмотря на попытки Шейха склонить его на сторону

---

* Գրված է փոխհյուպատոսության քարտուղարի կողմից, ուստի հիշատակվում է Կամսարականի անունը։



22—196

своих замыслов, он отказывался от участия в них, питая надежду, что рано или поздно европейские державы облегчат участь турецких христиан.

Маршимун объяснил надворному советнику Камсаракану причину, побудившую его приехать так неожиданно в Ван, желанием обратить внимание России и Англии, и также и комиссара Порты на безотрадное положение турецких несторян.

Нашему же агенту известно, что патриарх был вызван в Ван капитаном Клейтоном, что за отъездом этого английского агента он пробыл в Ване более двух недель и только по возвращении Клейтона, вместе с английским Генеральным консулом Троттером, патриарх имел с ними переговоры и немедленно уехал из Вана.

АВПР, ф. Главного архива У-$А_2$, г. 1880, д. 280, л. 4—5.

Копия

## № 2

## ДОНЕСЕНИЕ ВИЦЕ-КОНСУЛА В ВАНЕ К. КАМСАРАКАНА РУССКОМУ ПОСЛУ В КОНСТАНТИНОПОЛЕ НОВИКОВУ О ПОДГОТОВКЕ ВОССТАНИЯ КУРДОВ И О ВОЛНЕНИЯХ СРЕДИ МЕСТНЫХ АРМЯН

23 февраля 1881 г.

Вчерашнего числа вернулся в Ван агент, посланный мною в Хеккарию, для проверки сведений о приготовлениях Шейха Обейд-Уллы к новому вторжению в Персию. Не будучи в состоянии пробраться в Шамдинан, названный агент направился из Башкала в Джуламерк. Судя по сведениям, добытым им в упомянутых пунктах, арабы, о которых говорится в донесении моем от 26 минувшего января месяца за № 27, находятся не в Хекка-

рии, а в округе Музури (близ Мусула). За исключением этого, не доставивши мне никаких более или менее интересных и точных данных о настоящем положении дел в Хеккарии,—означенный агент разведал подробности сношений Обеид-Уллы с Сиро-Халдейским патриархом Маршимуном. Названный шейх после продолжительной и безуспешной переписки с главою несторян по поводу союза с последними, послал в с. Кочанис (местопребывание Маршимуна) матрана (епископ) несторян, живущих близ Шамдинана. По прибытии последнего, с месяц тому назад, в с. Кочанис Маршимун созвал совет меликов (родоначальники) и выяснил им предложение Обеид-Уллы. Мелики наотрез отказались действовать сообща с упомянутым шейхом и предложили со своей стороны соединиться с армянами и немедленно вступить с последними в серьезные переговоры относительно будущего образа действий, ввиду грозящей здешним христианам опасности от курдов и турецкого правительства. Хотя Маршимун еще раньше и с той же целью обращался к почетным армянам Вана, но на этот раз он воспротивился желанию меликов. Вследствие этого последние пригрозили сместить его, Маршимуна, и призвать на его место племянника названного патриарха.

Тогда Маршимун вынужден был подписать письмо, составленное тотчас же меликами на имя (влиятельного) Ованес вардапета, настоятеля монастыря Птоломея (близ Башкалы). Письмо это, по всей вероятности, прислано будет упомянутым монахом Ванскому архиепископу, и тогда я не замедлю выслать Вашему Высокопревосходительству копию с него. Мне известно, однако, что несторяне предлагают ванским армянам выставить, в случае необходимости, до 15 тыс. милиции, требуя только от армян 1000 ружей, системы Г. Мартини. Считаю небесполезным добавить здесь, что Маршимун весь-

ма непопулярен в своей стране, и что вся власть и влияние в Айсористане принадлежат всецело меликам, крайне преданным России, ненавидящим Маршимуна главным образом за преданность последнего Англии.

В Ване как местная администрация, так и военные власти, видимо опасаются восстания армян. Вследствие этого, гарнизон крепости усилен 2 ротами, переведен склад оружия из города в крепость. Вместе с тем в городе усилены караулы, а по ночам посылаются патрули (исключительно в кварталы, населенные армянами). Сверх того, мусульманам раздают секретно оружие. Меры эти тем более непонятны, что бессилие здешних армян и полная неподготовленность их к производству каких-либо беспорядков—слишком очевидны. Опасения турецких властей можно объяснить только поведением влиятельной армянской молодежи в Ване, открыто проповедующей во всех общественных местах, при громадном стечении народа, вооруженное восстание против правительства.

Но власти должны были бы знать, что все эти воззвания—глас вопиющего в пустыне, ибо огромное большинство здешних армян решительно не сочувствует подобным проповедям, надеясь, что Порта вынуждена будет в близком будущем ввести тут, в пользу христиан, широкие преобразования. При этом я должен заметить, однако, что если армянский вопрос не будет разрешен в благоприятном для последних смысле, тогда частные восстания турецких армян—неизбежны.

С истинным почтением и преданностью имею честь остаться, милостивый государь, Вашим покорнейшим слугой **К. Камсаракан.**

АВПР, ф. Посольства Константинополя д, г. 1881, № 1567, л. 21—22.

К о п и я

№ 3

## ДОНЕСЕНИЕ СТАТСКОГО СОВЕТНИКА ОБЕРМИЛЛЕРА РУССКОМУ ПОСЛУ В КОНСТАНТИНОПОЛЕ О ПАТРИОТИЧЕСКОМ ДВИЖЕНИИ АРМЯН В ЭРЗРУМЕ И О МЕРОПРИЯТИЯХ ТУРЕЦКОГО ПРАВИТЕЛЬСТВА ПРСТИВ ЭТОГО ДВИЖЕНИЯ

7 марта 1881 г.

За последнее время по случаю зимы в Эрзруме обнаруживалось мало жизни. Я лично, ожидая со дня на день прибытия моего преемника, не считал себя вправе предрешать будущий взгляд полковника Деннета на здешнюю обстановку, а потому по мере возможности воздерживался доносить посольству о личном своем взгляде на политическое положение дел молодой Армении в самом Эрзруме. Ныне это положение изменилось. Телеграф доставил, на днях, на руки Вали вилайета четыре экстренные, шифрованные депеши Порты, о содержании которых я считаю своим непременным долгом довести до точного сведения Вашего Высокопревосходительства.

По получении этих телеграмм Вали-Мюшир-Мустафа Паша поспешил созвать совет, исключив из него членов-армян. Таким образом, политический чиновник вилайета, армяно-католик Мишель Эфенди Хекимян не удостоился ни чести, ни доверия присутствовать на этом секретном совещании, на котором при напряженном внимании чинов были прочитаны расшифрованные следующие указания Блистательной Порты:

1. Надлежит немедленно и самым бдительным образом следить за армянами, которые затевают нечто недоброе. Должно не дозволять армянам собираться в национальные собрания. Должно всеми мерами предупреждать всякого рода митинги. Всеми мерами, в случае крайности, оружием и строжайшими наказаниями должно

предупредить всякого рода попытку к бунту. Должно вырвать самый корень зла национального возбуждения. Надлежит отобрать, секвестровать и уничтожить все исторические портреты и картинные изображения умершего героя Вардана и плачущей на развалинах Армении женщины. Эти изображения только возбуждают и волнуют армян. Должно запретить в учебных заведениях преподавание армянской истории. Лучше уничтожить всякое учение, чем допустить соблазн. Должно ввести в действие строгую цензуру и уничтожить все книги, журналы и письмена, речи, вызывающие крамолу.

2. Его величество султан крайне раздражен вызывающею постановкою патриарха Нерсеса. Преследуемая армянами цель очевидна: они изыскивают средство погубить вековечную империю.

Затем.

3. Султан повелевает, чтобы впредь по мере возможности офицеры и чиновники из христиан были замещены мусульманами, и приказывает, чтобы чиновники и офицеры из мусульман изучали армянский язык для того, чтобы могли исправно следить за армянскими письменами и печатными произведениями ввиду предупреждения взрыва мятежа.

4. Остальные приказания Порты касаются немедленного устройства и приведения в действие телеграфных сообщений между Ваном, Хеккяри, Гевером, Мушом и Битлисом; а равно быстрого открытия почтовых трактов между Багдадом, Битлисом, Мушом и Ваном.

С глубоким почтением и пр. и пр.

АВПР, ф. Полит. архив, г. 1881/1884, д. 1625, л. 2—3.

## № 4

## ДОНЕСЕНИЕ РУССКОГО ГЕНЕРАЛЬНОГО КОНСУЛА В ЭРЗРУМЕ ДЕННЕТА РУССКОМУ ПОСЛУ В КОНСТАНТИНОПОЛЕ О ВОЛНЕНИЯХ СРЕДИ АРМЯН В СВЯЗИ С ОЖИДАЕМЫМИ РЕФОРМАМИ

1 августа 1881 г.

В среде армян господствует тревожное состояние. Волнуемые бесплодным ожиданием реформ и надеждами на возрождение древней Армении, они вступают в резкий антагонизм с турецкой властью. При этом английские представители бесполезно раздражают турок вмешательством во внутренние дела и, порождая в армянах преувеличенное понятие о силе английского влияния, еще более обостряют кризис.

Копия

АВПР, ф. Полит. архив, г. 1881/1884, д. 1625, л. 18.

## № 5

## ДОНЕСЕНИЕ РУССКОГО КОНСУЛА В ЭРЗРУМЕ ДЕННЕТА РУССКОМУ ПОСЛУ В КОНСТАНТИНОПОЛЕ О ПРОТЕСТАНТСКОЙ ПРОПАГАНДЕ СРЕДИ АРМЯН, ПРОВОДИМОЙ АНГЛИЙСКИМИ И АМЕРИКАНСКИМИ МИССИОНЕРАМИ

Эрзрум, 5 июня 1882 г.

Протестантская пропаганда среди армян действует довольно успешно, чему способствуют английские консулы, которые, не ограничиваясь наблюдательной ролью, постепенно служат посредниками между христианским

населением и турецкой администрацией, и в этом отношении находят полную поддержку Британского посольства в Константинополе. Принятый английским правительством почин в деле реформ для Армении установил еще более тесные отношения между армянским населением и английскими агентами. Главная роль в пропаганде лежит на американских миссионерах; но для христианского населения имеет значение официальное покровительство, оказываемое всем вообще протестантам английскими консулами: армяне-протестанты при всяком случае встречают поддержку в английских консульствах и кроме того пользуются и материальными выгодами: так, например, в протестантских общинах налог, заменяющий для христиан воинскую повинность, уплачивается миссионерами.

Генеральный консул нам сообщает, что в последнее время приезжал из Лондона по поручению Архиепископа Кентерберийского пастор Рудольф Валь с целью открыть сношения с несторянами Хеккярийского округа. Валь возвратился в Лондон за новыми инструкциями и за денежными средствами для деятельности между несторянами.

При отступлении армии нашей из Эрзрума, за ней последовало много армян, изъявивших желание поселиться в России. Теперь они возвращаются в Турцию за остальными членами семейств, равно и для продажи имущества. Местная администрация, по-видимому, поставила себе задачей под разными предлогами разорить окончательно этих переселенцев.

В Эрзрум прибыла военная комиссия из трех членов, которой поручено посетить нашу границу и выбрать на ней пункты для постройки укреплений.

АВПР, ф. Полит. архив, г. 1881/84, д. 1625, л. 39.

Копия

## № 6

## ИЗ ДОНЕСЕНИЯ К. КАМСАРАКАНА РУССКОМУ ПОСЛУ В КОНСТАНТИНОПОЛЕ О ПАТРИОТИЧЕСКОМ ДВИЖЕНИИ ВАНСКОЙ АРМЯНСКОЙ МОЛОДЕЖИ

Ван, 27 декабря 1882 г.

Донесением от 12-го ноября 1880 г. № 40 мною было указано посольству на образование тайных политических обществ (комитетов) во вверенном моему наблюдению районе. С течением времени комитеты эти за полным отсутствием денежных средств и под влиянием наиболее разумных и опытных армян сами собою уничтожились.

Ныне по поводу открытия политического армянского общества в Эрзруме и вследствие слухов о дурном будто бы обращении турок с арестованными там армянами—с одной, и из желания высказать сочувствие движению Эрзрумских соплеменников своих, с другой стороны,—в среде Ванской армянской молодежи происходит брожение, которое при первом случае может выразиться беспорядками более или менее серьезного характера...

**К. Камсаракан.**

АВПР, ф. Посольства в Константинополе, г. 1882, д. 1568, л. 49.

## № 7

## ДОНЕСЕНИЕ УПРАВЛЯЮЩЕГО ГЕНЕРАЛЬНЫМ КОНСУЛЬСТВОМ В ЭРЗРУМЕ ЧЕТВЕРТУХИНА В ИМПЕРАТОРСКОЕ ПОСОЛЬСТВО В КОНСТАНТИНОПОЛЕ ОБ ОРГАНИЗАЦИИ СОЮЗА «ЗАЩИТА РОДИНЫ»

26 февраля 1883 г.

В дополнение известиям, сообщенным донесением от 4 декабря 1882 года за № 408, считаю долгом довести до сведения Вашего Пр-ва следующие обстоятельства, слу-

жащие последствием сделанного открытия тайного общества. Заподозренные в подготовлении восстания против турецкого правительства и заключенные 27 ноября прошедшего года в тюрьму лица из армян, в числе 60 человек, были подвергнуты допросу в здешнем уголовном суде. Оказалось, что виновные все принадлежат к ремесленникам, пробивающимся изо дня в день за работою, едва доставляющею им насущный хлеб, и притом еще семейные. В числе виновных каким-то образом замешан Карапет Оганесов, 18-летний сын проживающего здесь русско-подданного Исраила Оганесова, ружейных дел мастера. При этом местная полиция вопреки...* трактатам, поставляющим ненарушимость жилища иностранных поданных в Турции, не предуведомив Генеральное консульство, самовольно зашла ночью в дом русского поданного и сделала обыск жилища Исраила Оганесова. В это время сына его не было дома, он находился у родных.

Из всех лиц виновными оказались 39 человек, которые до сей поры заброшены в турецкой тюрьме. Собственно говоря, все они были слепыми орудиями главных вожаков, имя коих турецкая полиция не могла еще открыть. По слухам, за достоверность коих трудно поручиться, вожаки подготовляемого восстания действуют из Константинополя, а некоторые из них живут в Петербурге и Тифлисе.

Несмотря на тщательные розыски и следствие, суд еще не нашел основательных доказательств обвинить заключенных в важном политическом преступлении. Жены заключенных, лишенные средств к существованию, на прошедшей неделе обратились к здешнему армянскому архимандриту Орманяну с просьбою освободить не виновных ни в чем мужей. Орманян отклонил их ходатай-

---

* Текст опущен.

ство по той причине, что местная власть и на него смотрит с видом подозрения, считая его также одним из руководителей заговора. Тогда они подали коллективное прошение об освобождении их мужей здешнему вали Мустафа паше; но последний, прочитав прошение, разорвал на куски и бросил.

Здешняя армянская Митрополия сообщила обо всем случившемся армянскому патриарху Нерсесу, который ходатайствует у Высокой Порты об освобождении заключенных здесь армян.

Султан, узнавши об этом, спешно спросил по телеграфу Мустафа пашу о важности преступления задержанных и, если они не обвиняются в серьезных политических преступлениях, приказал отпустить их и держать под надзором полиции.

Как императорское генеральное консульство, так и другие пребывающие здесь агенты воздерживаются от всякого вмешательства в это дело...

АВПР, ф. Полит. архив, г. 1881/1884, д. 1625, л. 83—85.

Копия

№ 8

## ДОНЕСЕНИЕ ГЕНЕРАЛЬНОГО КОНСУЛА В ЭРЗРУМЕ ГЕНЕРАЛ-МАЙОРА ДЕННЕТА РУССКОМУ ПОСЛУ В КОНСТАНТИНОПОЛЕ ОБ ОРГАНИЗАЦИИ ПОЛИТИЧЕСКОГО ОБЩЕСТВА «ЗАЩИТА РОДИНЫ»

30 июня 1883 г. за № 195.

Процесс об армянском заговоре в Эрзруме близится к концу. Имея в настоящее время под рукою некоторые данные касательно производившейся по сему делу судебной процедуры, считаю не лишним в дополнение моих

прежних донесений за № 408 и 427 изложить подробно, в чем собственно обвинялись лица, привлеченные к суду.

Всех подсудимых по окончании предварительного следствия и освобождения арестованных, невиновность которых выяснилась следствием, 58 человек. Обвинительный акт, составленный прокурором Эрзрумского уголовного суда Исметом Эфенди, был представлен им 5 апреля сего года. Содержание этого акта следующее.

Во время следствия по делу об угрозах и оскорблениях меняльщику Оганесу торговцами Баласом, Минасом, Арутюном и Калустом, был найден у Баласа документ, подписанный буквами В. И., под № 4374.

Следствием обнаружено, что документ этот выдан ему революционным комитетом, который поручил Баласа в распоряжение сержанта при следующих указаниях; завербованный должен с усердием и неотложно исполнять все приказания, передаваемые ему сержантом. Если пожелает объявить что-либо полезное обществу, то должен передать последнее через названного сержанта, за оказание им рвения и пользы обществу он будет награжден. За проступки же и неодобрительное поведение вербуемый подлежит наказанию.

По поводу вышеприведенного обстоятельства было назначено судебное расследование, которым выяснено следующее.

Несколько времени тому назад газеты заявляли, что вслед за оконченными вопросами о разграничении с Грецией и Черногорией будет приступлено к введению реформ в Армении. Возникшие события в Тунисе отодвинули вопрос о реформах и последние были отложены на неопределенное время до греческих календ. На основании подобных газетных суждений около года тому назад некие Курджи-оглы Хачатур, Оганес и Акоп, читая газеты в городской читальне, почувствовали необходимость поднять народное движение и вошли между собой в сноше-

ние насчет мер к достижению последнего. После взаимных совещаний они в первое время сообщили свои взгляды различным лицам, известным своими патриотическими чувствами, чтобы узнать, можно ли этим путем возбудить среди народа движение.

Получив неудовлетворительные ответы, они обратились к живописцу Михаилу с целью распространения их воззрений среди народа. Заручившись его содействием, они поручили ему налитографировать (камни, для сего послужившие, были впоследствии найдены в доме Караписта) особые воззвания, первый экземпляр которых был отправлен к ремесленнику Алексану и им подписан. На другом камне была напечатана форма присяги для поступивших в общество. В течение 40 дней было роздано около 300 свидетельств поступления. Общество приняло название «Общество Арарата», но вскоре, чтобы придать более силы патриотическому движению, название это было заменено другим, именно «Общество защиты отечества». По исполнении вышесказанного Курджи-оглы отправился в Ван к тамошнему епископу Хримяну, чтобы посоветоваться с ним. Епископ ему ответил, что армянский народ недостаточно многочислен, чтобы предпринять подобное восстание, и что может разразиться катастрофа вроде болгарской. В конце концов он посоветовал Курджи-оглы воздержаться от участия в подобных делах. Хачатур от Ванского епископа отправился в Тифлис, где он совещался с многими лицами. Там ему присоветовали войти в сношение с нигилистами, начать дело не ранее, как по возвращении в Эрзрум с одним из нигилистов и затем обсудить внимательно, следует ли организовать восстание, или же приостановить движение, согласно обстоятельствам времени, остерегаясь всячески, чтобы поднятое движение не привело к избиению населения, и избегая вступить на ложный путь в сем деле.

Показаниями живописца Михаила установлено, что

документы, выданные сообщникам, были по происшествии малого времени отобраны и заменены другими, уже пронумерованными. Из его же показаний обнаружилось кроме сего, что исполнительный комитет тайного общества положил учредить в каждом городе комитеты из 5 лиц способных, бдительных с целью приискания средств к приведению в исполнение обещанных реформ без кровопролития, путем лишь мер мирного свойства.

Для получения необходимых денег на покупку револьверов для раздачи будущим офицерам армянского войска и на другие расходы вышеназванный присяжный член Верховного совета был отправлен в Тифлис для открытия там подписки на 10000 рублей.

Революционный комитет, называющийся Верховным советом, состоит из 5 человек, которые поручили Калусту, за известное денежное вознаграждение, заведовать выдачей свидетельств о принятии в общество и отобрание от поступивших письменных клятвенных удостоверений.

Инструкции, данные названному агенту Верховным советом, изложены в выражениях в высшей степени поджигательного и революционного свойства. Верховный совет приглашает своих сообщников поднять повсюду знамя восстания.

Революционный комитет был организован также в Ване, и ему отправлено 300 экземпляров вербовочных свидетельств. 2 400 экземпляров было отпечатано в доме Хачатура. Согласно установленным революционным правилам, обществом предполагалось в течение 30 лет завербовать до 300 000 человек, из которых каждый должен был вносить ежегодно по $1/4$ меджедие; деньги эти должны были образовать особый капитал для войны против курдов. Александр обращался к поступившим в общество со следующими словами: «Я причисляю Вас к обществу в качестве солдат. В надлежащее время Вам

будет роздано оружие и ежедневно будете получать по меджедие. Мы восстановим царство». Кроме сего им распространялось множество других революционных толков. Калусту было назначено три лиры содержания в месяц, из которых 9 лир были ему выданы вперед Александром за отобрание у сообщников прежде им выданных свидетельств и замещение свидетельствами пронумерованными, каковых он успел раздать около 80-ти.

Оганес Геворк принял клятвенное обращение школьного учителя Калуста, который в свою очередь завербовал 10 человек в общество. В доме последнего было также найдено революционное воззвание. Вышеназванный Геворк раздал 67 вербовочных свидетельств поступившим в армянское ополчение. Акоп при принятии в общество Серапия выразился: «Я записываю тебя в ополчение, выдам оружие, ты будешь получать по 1 меджедие в день и будешь участвовать в военных учениях за городом».

Минас передал 130 вербовочных свидетельств Хачатуру, который завербовал 5 лиц, объявив одному из них, Хаджи Оганесу, что он побывал в Тифлисе, где записал его в списки нигилистов. Кроме сего он принял от него клятву в верности обществу и вручил для раздачи 100 вербовочных свидетельств, Оглу Саркис завербовал несколько лиц в качестве солдат.

Балас подписал присяжный лист, обратившись по сему случаю к Орманяну, которому им были сделаны некоторые заявления. У Арутюна было найдено свидетельство, утверждавшее его унтер-офицером армянского ополчения, выданное ему вместе с другими 10-тью экземплярами Алексаном. Передавши один из документов Мишо, остальные им были возвращены Алексану.

После ряда имен лиц, в разное время завербованных в армянское ополчение, в обвинительном акте говорится, что «Татос объявил Алексану, что им вербуются солдаты

ввиду скорого устройства армянского царства. В доме последнего найдены литографические камни, послужившие напечатанию революционных прокламаций. При обыске таковые же прокламации были найдены на Татосе. В следующий за открытием заговора день ящик, полный подобных революционных воззваний, был отнесен из дома Тиграна Оглу в квартиру Марука, который вместе с Михаилом сожгли заключавшиеся в нем бумаги. Все вышеизложенное подтверждается показаниями обвиняемых и взаимными оговорками».

Далее обвинительная власть упоминает о наружном виде напечатанных прокламаций и их содержании. Вербовочные свидетельства имели в заголовке гербы царствовавших в древности армянских династий: Хайгазян, Аршагуни, Пакрадуни и Рупинианц. Самое клятвенное обещание напечатано промеж двух скрещенных мечей. Обвинительный акт оканчивается специализацией совершений, заключающихся, по словам прокурора, в попытке путем революционного движения отторгнуть от Турецкой империи Эрзрумскую область с некоторыми подведомственными ей частями.

Несмотря на протест защитников подсудимых, отрицавших компетентность суда, ввиду нарушения правил в отношении состава его членов, недостаточность данного времени для изготовления защиты и некоторых других обстоятельств, суд тем не менее в семи последовательных заседаниях, рассмотрев дело, постановил решение, по которому обвиненные, разделенные на 5 категорий по степени участия в преступном замысле, приговорены к ссылке на разные сроки. 16 же человек из числа судившихся освобождены из-под ареста, как уже отбывшие наказание предварительным заключением. В настоящее время ожидается утверждение приговора в Константинополе. Между армянским населением господствует надежда, что Нерсес успеет склонить Султана к полному по-

милованию всех обвиненных. В числе обвиненных находится один из сыновей русского подданного, местный уроженец, признавший себя при первом допросе виновным, но относительно которого были нарушены капитуляционные права, так как он был арестован без участия и ведома консульства.

Прошу указаний, как поступить в данном случае, признать ли состоявшимся по отношению к нему решение суда, или же потребовать кассации и его выдачи нам.

С глубоким почтением и пр. и пр.

АВПР ф. Полит. архив, г. 1881/84, д. 1625, л. 113—119.

## № 9

## ДОНЕСЕНИЕ ПЕРЕВОДЧИКА РУССКОГО КОНСУЛЬСТВА В ВАНЕ ШАРИФОВА РУССКОМУ ПОСЛУ В КОНСТАНТИНОПОЛЕ О ПРИТЕСНЕНИЯХ ТУРКАМИ И КУРДАМИ ВАНСКИХ АРМЯН

15 декабря 1887 г

Имею честь донести Вашему Превосходительству, что после смерти бывшего вали Гамид паши несчастные армяне Ванского вилайета хотя вздохнули немного свободно, но новый вали как будто собирался в этот промежуток времени и приготовлялся, чтобы из большею [....] и жестокостью притеснять армян. После приезда вали около двух месяцев все было тихо и спокойно, но через два месяца начались грабежи армянских селений вилайета курдами, угон скота, ограбление караванов торговцев армян, и месяца полтора тому назад начались ночные нападения на дома армян города Вана, ограблено с поранениями до 20 домов и все виновные остались ненаказанными, дошло до того, что среди белого дня солдаты на

главной улице ограбили двух празднично одетых армянок и в 7 часов вечера солдаты же около ворот города отняли 80 меджидие у торговца армянина и ограбили его; все время вали никаких мер не принимал, и все виновные остались ненаказанными. Около месяца тому назад полиция отобрала одну запрещенную книгу на армянском языке, после этого начались аресты армян, арестовано около 20 человек, с арестованными обращались бесчеловечно: одного 17-летнего юношу Каракина Манукяна распяли в полиции в продолжении 48 часов и в продолжении трех суток не давали кушать и сняли с распятия полумертвым. Аресты продолжаются, на армян навели панику. Неделью тому назад солдаты в 7 часов вечера напали на склад ружей с целью унести ружья, связали часового и начали душить его, но подоспевшим заптиам и жителям удалось задержать несколько солдат на месте преступления; вали хотел и этот случай свалить на несчастных армян, но ему это не удалось, так как виновных солдат задержали на месте преступления.

Вообще новый вали окружил себя недальновидными и бездушными людьми, не знает предела в своих притеснениях к армянам.

Подписал **М. Шарифов** —переводчик вице-консульства.

АВПР ф. Посольства в Константинополе, № 1887, д. 1573, л. 127—128.

№ 10

## ՎԱՆԻ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱԳԻՐԸ Կ. ՊՈԼՍԻ ՌՈՒՍԱԿԱՆ ԴԵՍՊԱՆԻՆ ՎԱՆՈՒՄ ԲԱՐԵՆՈՐՈԳՈՒՄՆԵՐԻ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Վան, 24 հունիսի 1883*

**Առ վսեմաշուք դեսպան մեծազոր պետության Ռուսիոյ Վսեմաշուք տէր.**

*Վերջին լրագրաց մէջ կարդացինք Վանին տասներեք Հայոց ստորագրութեամբ Հրատարակեալ աղերսագիր մը, զոր ուղղուած էին առ վսեմ քար-*

սուլթան կայսերական պալատին և առ բարձրապատիվ եպարքոսն։ Հիշյալ տեղեկագիրն ստորագրողներն մասնավոր անձինք են, որոնց մեծ մասը կառավարության պաշտոնեայք, նույնպես և հարստահարեալք, իսկ սարսափելի ճնշման տակ պատրաստված տեղեկագրին բովանդակությունն մինչև ցարդ հաստատեալ ամեն խռովությանց և մեր արդի հուսահատական վիճակին խոսուն հավաստիք լինելով, ժողովուրդ վերջին աստիճան հուզեալ՝ արդարության կպահանջե։

Նախ կբողոքեմք այդ տասներեք անձանց դեմ, որ օսմանյան տերությունն Հայոց ազգին շնորհած օրենքն արհամարհելով, զիրենք իբրև հասարակաց ներկայացուցիչ անվանած են, մինչդեռ ժողովրդյան ներկայացուցիչն է ազգային երեսփոխանական, կրոնական և քաղաքական ժողովները, որք տերության առանձնաշնորհությամբ նվիրագործված են։

Երկրորդ՝ հիշյալ տեղեկագիրն ստորագրողք իրենց անձնական շահուն և փառաց համար հասարակության կրած ծանրածանր վերքերը, որ պահ մի ևս անդարմանելի կդառնան ծածկել ջանալով, ժողովրդյան հուսահատության պատճառ կլինեն և կհանդգնեն մինչև անգամ վեհափառ սուլթանի հաճոյման կամաց և հայասիրության դեմ մեղանչել, որ լավագույն կճանաչե զեղծմունք և բարենորոգման պետքը։ Ինչպես նաև տերության նախարարները միշտ խոստովանելով բարենորոգմանց անմիջական պետքերը անդադար կխորհեին դարման անել։

Արդ, այս սուտախոսող անձինք ծածկելով երկրին վերքերը և ուրանալով դեղ ու դարմանի պետքը, վեհափառ սուլթանի մարդասեր կամաց հակառակ ընթացք մը կունենան, ըսելով թե երկրին բան ամենայնի խաղաղ է, ընավ զրկանք չկա և թե բարենորոգության պետք չունինք։

Վասնզի ահա, թողունք յուրաքանչյուր տարվան հարստահարությանց արձանագրությունն, որ մեծամեծ հատորներ կկազմեն, հիշյալ տեղեկագիրն ստորագրելու թվականեն մինչև ցայժմ ահա քանի մը դեպքերու օրինակներ։

Խիզանու գաղթականություն լեցվեցավ ի Վան հարստահարությանց պատճառավ և հազիվ ետ դարձնել հաջողեցան։ Ալջավազու գյուղերեն շատերը գաղթեցին հողային դրոց և այլ զրկանքներու պատճառավ։

Վանա միսիոնար ամերիկացի Տոքտոր Ռեյնոլդ և յուր ընկերը կողոպտելով վիրավորեցին չարաչար։ Պարսից կարավանի վրա հարձակվելով մինն սպանեցին և շատերն վիրավորեցին։

Արճակ գյուղի գոմեշները տարան։

Շահպաղի մոտ ճանապարհորդաց վրա հարձակվելով իրենց էշերը տարան և մինն վիրավորեցին։ Տօնիկոյ ոչխարները տարած են նույն սահմաններու մոտ։ Լեշք, Գանձակ, Զարմենց, Շեմլեթիար և Ազպուլախայ ոչխար, ովլար, և ձիանները տարած են և այլն։

Ցավալի է սակայն, որ տեղվույս վսեմ կուսակալը, որ յոթն տարեն ի վեր պաշտոն կվարե և որ դժբախտաբար ամենափոքր հիշատակ մը չունի երկրին մեջ, փոխանակ զեղծմանց առաջքն առնելու, այս տեսակ անօգուտ և ավելին՝ վտանգավոր ձեռնարկությանց ույժ տալով կհաջողի։ Բարձրագույն

*Դրան իմաստությանը նախապաշարել, նորանոր պատվանշաններ ստանալ նույնպես զանազան պատվով և նշաններով վարձատրել յուր անհնատես քաղաքականության կույր գործիք քանի մը անձինք, և ի վնաս կայսերական հիմնական շահերուն՝ ժողովուրդը հուսահատության անդունդներուն մեջ գլորել։*

*Արդ, մեր այս խոր վերքերը Ձեր մեծազոր կայսրության գթության ներկայացնելով՝ օրեցօր դեղ-դարմանի հույսով կսպասենք։*

*Մնամք մեր բաղձանաց ակնկալու ամենախոնարհ ծառայք։*

*(Հետևում է ավելի քան 2000 կնիք և ստորագրություն)։*

№ 11

*Կարին, 11 դեկտեմբերի 1882*

Ամենապատիվ տիար Ներսես սրբազան արքեպիսկոպոս բարեխնամ պատրիարք Հայոց

*Ի. Կ. Պոլիս*

Սրբազան հայր.

*Նախընթաց մի նամակավ խառն ժողովո գլխանի հետ տեղեկագրեցի Ձեր բարձր սրբազնության քաղաքիս մեջ տեղի ունեցած տխուր դիպվածո մը պարագաները և բավական թվով՝ թեպետ աննշան անձանց տգեղ ամբաստանությամբ մը ձերբակալվիլը։ Ձեր հայրական սիրտը կսպասե անշուշտ իրողության լուծումը լսել, սակայն դժբախտաբար այդ յոթնեկիս մեջ և ոչ մի կողմեն լույս մը չփարատեց այդ խնդրույն վրա թողված վարագույրը։ Նոր ձերբակալություններ չեղին, սակայն ձերբակալյալներն ալ՝ երկուերեք միայն բաց թողվեցան ցարդ իսկ մնացյալներուն նկատմամբ կառավարությունը և դատարանը յուր խոսքը դեռ չարտասանեց...*

Մաղ. Վրդ. Օրմանյան

*ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII—11506։*

№ 12

*Կարին, 25 դեկտեմբերի 1882*

Ամենապատիվ և բարձրաշնորհ տիար Ներսես սրբազան արքեպիսկոպոս արժանընտիր պատրիարք Հայոց Թուրքիո

*Ի. Կ. Պոլիս*

Սրբազան հայր.

*Դեկտեմբեր 4 թվակիր նամակս կարծեմ թե ցարդ հասած կլինի Ձեր բարձր սրբազնության ձեռքը, որով քաղաքիս մեջ պատահած տխուր դեպք*

մը հաղորդած էի և հետևյալ թղթատարներով ալ ուրիշ պարագաներ հայտնած։ Այս անգամ հասնող լրագիրք շատ տողեր նվիրած են այդ դիպվածույն լուրերը հաղորդելու և շատ բան ալ այլայլալ և սխալ լինելով, հարկ կզգամ նորեն նույն խնդրույն վրա գրել, և ինչ որ կրցած եմք իմանալ, Ձեր բարձր սրբազնության ալ հաղորդել։

Նախ և առաջ կը կարդամ լրագրոց վրա, որ ոմանք գանգատելով և ոմանք զարմանալով կը նշանակեին, թե Կարինե դեռ չէ գրված ի պատրիարքարան այդ նյութույն վրա։ Ինչպես ծանուցած եմ, առաջին անգամ այդ գործը մեջտեղ ՝ելավ նոյ. 26-ին ուրբաթ օր և հաջորդ շաբաթ օր, որ էր թղթատարի օրը, ամենայն ինչ շփոթ լինելով և չգիտնալով ինչ գրել, խոհական կարծեցի ընդ վայր զրույցներ չհաղորդել. սակայն մյուս թղթատարին դեկտ. 4-ին գրեցի պաշտոնապես և հետզհետե շարունակեցի, և դեկտ. 4-ին նամակս պետք էր 13-ին ի պատրիարքարան հասած լինել։

Ձերբակալելոց թիվը մինչև 70-ի կը հասցնեն լրագիրք և արդյամբ ալ այդ չափի հասավ, իսկ թող տրվածները հազիվ թե հինգ-վեց հատ եղեն ցարդ, և թեպետ շարունակ կը լսեմք բերնե-բերան կրկնված, թե մեծագույն մասամբ ալ պիտի արձակվին, սակայն այդ խոսքը եղնելեն ի վեր 20 օր մը եղավ, բայց դեռ արձակյալներ չտեսանք և չգիտեմք, թե երբ ալ պիտի հաճին արձակել կամ թե որոշումը հրատարակել։ Երկու կնքված խանութ ալ կը հիշեն, և եղին Տեր-Միքայելյան եղբարց երկու խանութները, ուստի թուղթերը հանվելով, քանի մը ժամ ետքը կնիքները վերուցին։

Ձերբակալելոց մեջ նշանավոր անձինք չգտնվիլը արդեն գրած էի, ավելի խոսվածներն են Պողոս աղա Իջղալացյան*, որոյ է որդին գերձակ, ի Պոլիս բանտարկվող Հակոբ աղա Իջղալացյան,— Միքայել Մանուկյան՝ խեղճ նկարիչ մը.— Ալեքսան Էթելիկյան**, կոշկակար.— Հովհաննես Աստուրյան՝ ընթերցարանի վերակացու.— Խաչատուր Կերեքցյան՝ երկաթագործ որ է դագեչ՝ տունը բանող.— Պալաս Էհրամճյան՝*** ոստայնանք, ասկից սկսեր է կրավի քննությունը.— Մարուքե Հեքիյան՝ իմ փոքրավորս, իսկ մնացելոց անունները իսկ չգիտեմ, ընդհանրապես կոշկակարի և ուրիշ հասարակ արհեստավորի աշակերտներ, և մինչև իսկ 15—16 տարվան պատանիներ են։ 12—15 հատի չափ ալ գյուղացիներ կան։ Այսօր առնցմե մեծագույն մասը ցորենի շտեմարանին մեջ փակված են և չգիտցվիր, թե յուրաքանչյուրին վերա եղյալ ամբաստանությունը ինչ է, հանցապարտությունը որչափ է, և փաստերը ինչ են։ Եվ ոչ իսկ կը գիտցվի, թե ամենքը հավասար կերպով հանցավոր են, կամ թե ամենուն հանցավորությունը ստուգված է։ Մեր կողմե դուրս պտտող լուրերը, որոնց կը մտնեն իմ իսկ բարձր կուսակալ Մուսթաֆա փաշայի և վսեմ. կառավարիչ Ալի էֆենտիի լսածներս, գործը տղայական բան մըն է կըսեն, և թե շատեր պետք է թողվին. սակայն տակավին արդյունքը չկայ։

---

* Գրվում է նաև Իշղալացյան, Իշղալացյան։

** Ճիշտը՝ Էթալիկյան։

*** Պալաս Տեր-Ղազարյան (Էհրամճի)։

Գալով հանցանքի կետին, ամենայն ինչ կը հանգի եղեր երկու թուղթե-րուն վրա, որոց մին ուխտագիր մը և միւսն ընկերության անդամակցու-թյան վկայագիր մը եղեր, և այդ թուղթերու մեջ գրված է, եղեր ազգին հա-մար արեամբ չափ աշխատել։ Այդ տեղեկությունները ամի դատարանաց մեջ այդ թուղթերը տեսնողներեն, և աչքով տեսած չլինելուս, լսածս կը կրկնեմ։ Վիմագրական քար մը ալ գտնվեր է, որոյ վերա այն թուղթերուն տիպերն գծված են եղեր։ Փողոցները կպված և ցրված հայտագիրներ չտեսնվեցան երբեք։ Առաջին անգամ, երբ այդ բանին ձայնը տեսնվեր է, կուսակալը կարծեր է, թե Հայաստանէ ծայրե ծայր ապստամբության պատրաստ կը գտնվի, և ուստի եղեր է ռազմական ձեռքերու ձեռք զարնել, զինվորներ շա-տացնել և ամեն կողմ ցրվել, զինվորաց փամփուշտ բաժնել, ամեն տեղ, և մինչև առաջնորդարանի շուրջը լրտեսներով լեցնել, կես գիշերին մարդ ձեր-բակալել և տներ խուզարկել, իբր թե զինվորներ և վառօդարաններ պատ-րաստ լինեն, և ահեղ բանակ մը օսմանյան գահուն հաստատությանը սպառ-նա։ Այդ հանկարծական պատրաստությունները, զորս խաղաղ կարնեցիք քուներնին արթնալուն լսեցին տակն ու վրա բրին ամենքը և տաճիկք մեկ կերպ և քրիստոնեայք մեկ կերպ շփոթեցան, հալվեցան, իրարու սխտած և դրդություններ սիրտե ի բերան գալով գայթակղական դեպքերու ալ առիթ տվին և կուտան, ինչպես արդեն ծանուցած եմ։

Կարնո մեջ ալ, ինչպես Պոլիս և ուրիշ քաղաքներ, զանազան դպրոցա-կան ընկերություններ կան կիրակնօրյա դասերու և ուրիշ դաստիարակու-թյան նպատակներու համար։ Քաղաքիս մեջ կա նաև միացյալ.ընկերություն մը ուրիշ նախընթաց ընկերություններե կազմված, որ դրամ հավաքելով կը շահեցնե և այդ շահե մեծ մասը ընկերաց կը տրվի, մեկ մասն ալ դպրո-ցական օգնությանց։ Այդ ընկերության արդյամբ բացված է ես ընթերցա-րանը, որոյ վերակացու է ձերբակալյալ Հովհաննես Աստուրյանը։ Ընկե-րություն բառը գայթակղեցուց մտքերը և խեթիվ սկսան նայել այդ ան-վան, և ամենայն ինչ իրարու խառնելով ձերբակալեցին ես ասկե 20 տարի առաջ եղող և այժմ հիշատակն ալ կորսված Արհեստավորաց ընկերության երբեմն քարտուղար ծերունի Ղազարոս վարժապետ Վահանյանը, որ ար-ձակյալներեն մին էր։

Կուսակալի հրամանով զգուշություններ և խստություններ կը կատարվեն ես կուսակալության ուրիշ կողմերը, և մինչև իսկ դրացի կուսակալությանց ազդարարություններ տրվեր են, իսկ նոյ. 25-ի գիշերեն ի վեր շարունակ գաղտնի հեռագիրներ տեղացեր են ի Կ. Պոլիս, և ահագին (դավաճանություն) մը ծանուցվեր է, որուն իբրև թե անդամ եղած լինի ով որ Հայաստանի մեջ և դուրս հայ է, մինչև իսկ հայոց հետ լավ տեսնվող թուրքերն ալ կասկածի ենթարկվեցան և թուրքերը հայու մը հետ խոսիլ և բարև տալե զգուշանալ սկսան։

Այսպիսով կը պարզվի նաև, ինչ որ լրագիրք ոմանք գրեցին մարմնա-մարզական ընկերության մը վերա որ չկա, սակայն ուրիշներ կան։ Սանա-սարյան վարժարանի խուզարկության ենթարկվելը և Ռուսաց հյուպատոսա-

քանի միջամտությամբ խափանվիլը բոլորովին անհիմն է, ռուսահպատակ ըլլալով մեկ բանտարկյալ կա, որու ազատությունը չկարողացավ ընդունիլ Ռուսաց հյուպատոսը երկու անգամ, անձամբ կուսակալեն պահանջելե հետո։

Կառավարության պաշտոնակալներեն շատերը կը կասկածեն, թե ռուսական դրդում կա այդ գործոյն մեջ, ոմանք ալ անգլիական հյուպատոսներու ազդեցության կը վերագրեն, բայց չգիտեմ թե երկու կողմն ալ ինչ փաստեր ունին ձեռվընին։

Երկու կտոր թուղթերը ընկերության մը գոյությունը ցուցուցին, սակայն ձերբակալությանց թիվը և ձերբակալվելոց վիճակը, և ամենևին զենք կամ դրամ մեջտեղ չելնելը կը ցուցնեն, թե գրեթե անգո բան մըն է, որ ծանրակշռություն չկրնար ունենալ։ Այլ այսչափին ալ ո՞վ երևան հանեց կառավարության և ո՞վ կառավարությունը շփոթեց, պաշտոնապես չգիտեմ, սակայն ազգայնոց անուններ կը խոսվին։

Խնդրույն վերջաբանությունը իմանալու համար թեպետ շատ հետաքրքիր եմ, բայց ստույգ տեղեկություն մը չկրցի ստանալ։ Գրեթե շաբաթե ի վեր հանգստություն կա դատարանաց մեջ, երեքշաբթի գիշերային ժողով մը եղավ այդ գործոյն նկատմամբ, որոշում մը չլսվեցավ, ի լրո կը լսվի, թե ի Կ. Պոլիս հաղորդված են հարցաքննությունք կամ հարցաքննությանց եզրակացությունք և պատասխանի կսպասվի։

Առ հասարակ կը տեսնվի գործը մեծցնելու բաղձանք մը, և գործն այլտեղ տեսնելուն նոր շփոթ մը ծագել տալու համար գրգռություններ առեղծելու միտում մը, մանավանդ դատարանի պաշտոնյաներեն ոմանք կը կարծեին, թե ի շնորհս այդ բաջագործության նշաններու և պաշտոններու և աստիճաններու վարձատրությանց պիտի արժանանային, և կը ցավին ալ թերևս, որ ապարեզը նվազեցավ։

Ամիս մը է գործույն սկիզբեն, մինչ ցարդ պետք էր, որ վերջավորություն մը տրվեր, և գոնե այն ամենքը, որոց համար շարունակ կը կրկնվի, թե պիտի թողվին, ցարդ պետք էր արձակված լինեին և ասանկ առանց բանական պատճառի երկար բանտարկելություն չկրեին։ Բայց մեր միջամտությունը ուժ չունի, քանի որ գործույն ի Կ. Պոլիս ծանուցված լինելուն և հրահանգի սպասելուն պատասխանը մեր դիմացը կը դնեն հետուն։

Նշանակության արժանի է, որ և ոչ հայ մը մտնեցուցին այդ քննության։ Արդեն դատարանաց պաշտոնեից մեջ բնավ հայ չկայր, պատճառանոք հեռացուցին անմիջապես, և դատաքննիչ ատենի անդամներեն հռովմեական Կարապետ Գոնտարճյան և հույն Սթեֆանաքի Հակոֆիտիս՝ հայերեն գրելու թարգմանությանց համար գործի կանչվեցան, մինչև անոնցմե հաջագակագույն եղող հայ անդամներ հեռու բռնվեցան։ Այդ ընթացքը շատ վշտացուց հայ ժողովուրդը, որ բոլորովին անարգության ենթարկվեցավ այս կերպով, և այս բավական է Ձեր բարձր սրբազնության, գործույն ընթացքը իմանալու համար։

Մեծապատիվ Ալեքսանդր էֆ. Տեր-Ներսեսյան երկու օր առաջ պաշտոնին սկսավ. սակայն առաջին ընդհ. դատախազի գործը արդեն իրեն վերապահված կը լսվի։

Տոներն ալ մոտեցան, 60—70 խեղճ ընտանիք ցավաց և կարոտության մեջ են, անմխիթար կը հեծեն, և բոլոր ազգն ալ նախատանաց ենթարկված է, տեղական պաշտոնյայք չգիտեմ որպիսի կիրքերե կամ հույսերե մղյալ գործը կերկարեն կը ձգձգեն, շատերուն արդարությունը և բոլորին ալ աղայամտությունը կը վկայվի, չարություն և դավաճանություն հեռու են բոլորովին այդ ժողովրդեն, մեր հույսը սատ տկար է, Ձեր բարձր սրբազնության միջնորդությունը և հանուն Ձեր ազգին նորա հավատարիմ զգացմանց երաշխավորելնիդ կարող է բավականանալ մեր բարձրապատիվ և քաջահանճար մեծ եպարքոսին արդարության և խոհականության և նորա մի հրամանը մխիթարել բոլոր ժողովուրդը։ Արդեն գործոյն բնության և անհիմն լինելուն ի մոտո ալ տեղեկացայք ատուգիվ տեղդ ձերբակալյալ կարնեցվույն գործույն առթիվ։

Կը խնդրեմք և վստահ եմք, թե Ձեր զորավոր հովանավորությունը պիտի հասնի մեզ օգնություն և ի մխիթարություն։

Մնամ բարձրաշնորհ սրբազնությանդ խոնարհ որդի՝
Մաղաքիա վրդ. Օրմանյան առաջնորդ

*ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Ազատյանի ֆ., XII—11507*

## № 13

*Կարին, 1 հունվարի 1883*

Ամեն. և բարձր. պատրիարք հայր.

*Կ. Պոլիս*

*Կարնո ձերբակալության գործույն նկատմամբ հետևյալները կծանուցանեմ համառոտի։*

*Պողոս աղա Իշղալացյան Թերգիրաշը և որդին՝ Կարապետ աղան թողվեցան երաշխավորությամբ։ Ձիմք գիտեք, թե ինչ եղավ մյուս որդին՝ Հակոբ, որ ձերբակալվել էր ի Կ. Պոլիս։*

*Ուրիշներու համար ալ թողնելու աներոշ խոսքեր կը շպրտեին, սակայն չատուգվեցավ։ Տոներու առթիվ փորձեցինք շնորհ մը ընդունել երաշխավորություններով, այլ զրույցին ընդունեցինք, թե Պոլսո հրամանին կսպասվի։ Այժմ բոլոր մեր հույսը ի Ձեզ է ապաստան։*

Մնամ ի նորն աջահամբուրիվ խ. որդի Մաղաքիա վրդ. Օրմանյան

*ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Բ. Ազատյանի ֆ., XII—11511։*

№ 14

*Կարին, 8 հունվարի 1885*

Ամենապատիվ և բարձրաշնորհ Տ. Տ. Ներսես սրբազան արքեպիսկոպոս արժանընտիր և բարեխնամ պատրիարք Հայոց

*Ի. Կ. Պոլիս*

Սրբազան հայր.

*... Բավական գրած եմ արդեն նախընթացներովս, մանավանդ դեկտ. 18 և 25 թվակիր նամակներով, և որ ինչ վերջի օրերուն մեջ տեղի ունեցավ ներկայիվս կը հավելում,*

*Յորմե հետե տեղական կառավարության կողմե տեղեկագիր մը հղվեցավ ի Կ. Պոլիս սույն խռովության վրա, նոր գործողություն մը կատարվեցավ աստեն, այլ բանտարկյալք հետզհետե ի մի խմբվեցան, և այսօր քառասնի չափ մեկտեղ են, և միայն տասներկու ուրիշ տեղ, վերջիններս բոլոր գյուղացիք են։ Զատ մնացած է միայն Միքայել Մանուկյան նկարիչը։ Երեքանձ ալ ազատ թողվեցան, որք են Պողոս աղա Իջղալացյան և որդին Կարապետ, և Հակոբ Վահանյան ոսկերչի աշակերտ։ Իջղալացյան Պոլիս բանտարկված մյուս որդվույն՝ Հակոբի վրա տեղեկություն չունիմք և կարծեմք թե Ձեր հովանավորությունը կը վայելե։ Երեք արձակյալներն երաշխավորով թողվեցան։ Պողոս աղայի համար ամեն կերպով աշխատություն եղավ և զատեր հիվանդությունը առիթ եղավ իրեն օր մը տուն երթալու հրաման ընդունելու և կրկին չբանտարկեցին։ Իսկ Հակոբ Վահանյանը բանտի մեջ հիվանդացած լինելով գթության արժանի սեպվեցավ, շատ սախրմունքներե հետո։*

*Մնացյալներուն շատերուն համար ալ կը լալիք, թե պետք է թողվին կամ գոնե երաշխավորով ելնելու արտոնություն ստանան։ Ս. Ծննդյան տոներու առթիվ հատկապես շնորհք մը ընդունելու աշխատեցա։ Հույն և հասմեակյանց խոսներու ալ խոսել տալով և ուրիշ միջնորդներ ալ թողլով, սակայն անհնար եղև կուսակալի միտքը փոխել տալ, որ մեծամեծ կասկածներով լի է, և այդ տոն օրերուն մեջ ձերբակալյալներու թողլու երբեք մտադիր չերևար, վախնալով չեմ գիտեր որպիսի երևակայական խռովվյալներե կամ ազդվելով որ տեսակ վստահողի անձերե։ Կ. Պոլիս հղած տեղեկագրին եզրակացության վրա կատարյալ տեղեկություն չունիմք, սակայն գիտեմք, թե քննության թուղթերն եղած պատճենները չեն հղված, այլ միայն քաղվածո տեղեկագիր մը է, որ ճշտիվ չպատկերացներ քննության արդյունքը։ Ինչպես ըսի ծանրակշիռ բան մը մեջ տեղ չտեսնվեցավ և չլսվեցավ ալ տակավին՝ այն երկու կտոր թուղթերե զատ, որոց վրա չերևակայված շինություն մը կը բարձան կանգնել և երևակայությանց ստիպմամբ ծանր հետևություններ կը քաղեն։ Այդ ընթացքը կրնա հուզել Բ. Դրան միտքն ալ, ուստի Ձեր*

*բարձր սրբազնության կը դիմենք, որպեսզի Կայսր. կառավարությունը ոմանց կարծյաց արդյունքով չգործե, այլ նույնիսկ քննությանց թղթերը ինքնին քննե և այնպես վճիռ հատանե:*

*Վստահ ենք բարձր մեծ եպարքոսին արդարասիրության վերա, որ պիտի չզլանա այն կիսատ տեղեկագրով, զոր տեղական պաշտոնյայք հավետ իրենց սկզբնական հախուռն ընթացից պաշտպանության համար շինած են, բայց և այնպես այդ կետն ալ Ձեր ամեն. սրբազնությունն միայն կարող է, մենք մեր հավաքած տեղեկությունները կուտամք:*

*Հիշեցի քանիցս թե Վսեմ. կուսակալը իբր օտարական և անկարեկիր և ցավելու իսկ անարժան կետ մը ուզած է ցուցնել ինձ այդ գործը յուր խոսակցությանց մեջ: Այդ խոստովանությունը, որ ինձ ըրած է ատեն, կը տեսնեմ որ չպատասխաներ իր ուրիշ գործերուն: Մյուս քրիստոնյա ազգաց առաջնորդներուն բոլորովին տարբեր ճամբա բռնած է, ըստ օրինաց երաշխավորության ելնելու կարող ուրիշ պատճառներով բանտարկյալ հայերն իսկ ելնելու արգիլած է: Հայ ժողովականաց հետ մեծ պաղություն ցուցնել սկսած է, մեծ Աղեքսանդր էֆ-ի պաշտոնավարությունը իրեն ծանր գալով արդեն նրա դեմ ամբաստանություն և գանգատներ ըրած է ի Կ. Պոլիս և մինչև իսկ իր խրատով տաճիկ պաշտոնյաներ և գլխավորներ տոնախմբության շնորհավորության համար հայոց տուներն չեն գնացած: Արդարության պաշտոնյաներեն շատեր կուսակալին ազդեցության ներքո գործել լինելնին կը հայտնեն:*

*Այսօր առանձին խնդիրը պարզելու կամ խղճալյաց օգնելու եղանակ մը չկա, մինչ ամեն ինչ Բ. Դրան Կայսր. կառավարության առջևն է, և Դուք միայն կարող եք օգնել: Մնամ պատկառանոք:*

*Ամեն. սրբազնությանդ խոնարհ որդի՝* Մաղաքիա վրդ. Օրմանյան

*Հ. Գ. Հունաց եպիսկոպոսը իր կողմեն լիրա մը և յուր հասարակության կողմեն երեսուն մեճիտ օգնություն հանձնեց մեզ ծննդյան առթիվ աղքատ բանտարկելոց ընտանյաց բաշխելու համար, ինչպես և կատարեցինք թաղ. խորհրդի ձեռամբ ուրիշ սովորական օգնության հետ:*

*ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Ազատյանի ֆ., XII—11508*

**№ 15**

*Կարին, 15 հունվարի 1883*

Ամենապատիվ և բարձրաշնորհ Տ. Տ. Ներսես սրբազան արքեպիսկոպոս արժանընտիր պատրիարք Հայոց Թուրքիո

*Ի. Կ. Պոլիս*

Սրբազան հայր.

*...Եոթնեկիս մեջ առանձին պահված տասներկու գյուղացի ձերբակալյալքն ալ ցորենի շտեմարանին մեջ բերվեցան մյուս ձերբակալյալաց հետ,*

*ար կան ես իբր 40 տաճիկք զանազան պատճառներով կալանավորյալք։ Մասնավոր պատճառներով երեք անձ միայն ազատ թողվեցան այս շաբթուն մէջ, որք են Սիմոն անուն ծերունին դերձակ, Չիֆթլիկ գյուղացի Ղազար և Հակոբ անուն խեղճ կոշկակար մը, մնացելոց վերա ստույգ լուր մը չկա։ Ոմանք կըսեն, թե արձակելու հրաման եկած է ի Պոլսո թե ոչ ամենուն գոնե մեկ մասին համար, սակայն կուսակալը գաղտնի պահած է և չգործադրեր։ Այլք կը պատմեն, թե կուսակալը քանի մը խորհրդականներով առանց ատենական դատաստանի արդեն պատիժներ որոշած է և Բ. Դրնեն հաստատության կսպասե, որ գործադրե։*

*Երկու պատմությունն ալ ի լրս իմանալով չեմ կարող հաստատել, սակայն երկուքին համար ալ զանազան կողմերե լուրեր հասնելուն հիշատակել հարկ սեպեցի, Ձեր բարձր սրբազնության թողլով քննել և ստուգել։ Սակայն միշտ կը տեսնվի, որ որչափ Կեդրոնական կառավարությունը գթությամբ կը նայի, այնչափ կուսակալը չհամարիր նույն գթության ճանապարհին հետևել, և թերևս ալ գործը շփոթելու կը ճգնի։*

*Անպաշտոն կերպով լուր հասավ ի քաղաքս թե մեծ. Աղեքսանդր էֆ. Տ. Ներսեսյան, որ տասնհինգ օր յառաջ քաղքիս ընդհ. դատախազի օգնականի պաշտոնը ստացեր էր, փոխադրված է ի Տրապիզոն պատժական դատարանի նախագահությամբ, փոխանակելով պաշտոնները Հաճի Հասան էֆ. անուն անձի մը հետ, որ սաստիկ մոլի լինելու համբավ ունի ատեն կանխավ վարած պաշտոնովը։ Այդ փոփոխությունը եղած է կուսակալին առաջարկին վերա, որ պնդած է, թե հայ պաշտոնյա դնել չըլլար քաղաքիս մեջ։ Աղեքսանդր էֆ.-ի մնալը կամ փոխվիլը կառավարության ազատ կամաց կը վերաբերի և մեկը չկրնար խոսիլ. սակայն այդ երկիրներուն մեջ հայ պաշտոնյա չպահելու սկզբունքը պարզապես հայ ազգին ընդհանրության անարգանք լինելով, ես (...) չեմ կրնար ընդունիլ այդ աղտը մեր ազգին վերա, և կը ներկայեմ Բարձր սրբազնությանդ, որ խնդիրը ի նկատի առնելով, խոսիք և գործեք որպես և պատշաճ կը դատիք, կառավարությունը մեր գիտցածին համեմատ ամեն տեղ պաշտոնյաները և ժողովականները խառն կուզե, և չգիտեմք, թե ուստի առած է մեր կուսակալը հայերը հալածելու կանոնը։ Երկու-երեք տարի առաջ չորս-հինգ արդարության հայ պաշտոնյաներ կային այդ կողմերը. Աղեքսանդր էֆ. Տեր Ներսեսյան ի Կարին, Գալուստ էֆ. Տեր Մկրտչյան ի Պայազիտ, Աբքի էֆ. ի Վան, Հակոբ էֆ. Տիրացույան ի Մուշ, Փիլիպպոս էֆ. Նիկողոսյան ի Բաբերդ, այսօր ասոնց ամենուն տեղն ալ թուրք պաշտոնյաներ հաստատված են, իսկ հայերեն երկուքը տեղափոխյալ և երեքը պաշտոնազուրկ թողյալ։*

*Հայերու գործերե հեռացվելու մասին նշանավոր է ես, որ ամեն գավառներու մեջ հաստատված հասարակաց կրթության ժողովները (մեարիֆ մեջլիսի) տաճիկ և քրիստոնյա խառն են, և այսպես ալ հրամայված է գավառական կանոնագրության մեջ. սակայն մեր կուսակալը մեր քաղաքին համար յոկ տաճիկներե բաղկացյալ ժողով մը հաստատած է, և թեպետ*

*անգամ մը ուժգին խոսեցա, սակայն և ոչ իսկ մտադրության դարձնել արժան համարեցավ։*

*Վերջին դիպվածեն օգուտ քաղելով հրամայեց ես փակել քաղաքիս զինագործ արհեստավորաց խանութները և անգործության դատապարտել, հրամայելով նախաջրհեղեղյան ոճով «չարքմարքը»՝ զենքեր միայն շինել. և խեղճ արհեստավորաց իրենց գործածները արքունիս գրավեց, մինչ կառավարության վերաբերյալ զենքերը միայն գրավելու հրաման կա և զինագործությունը թույլտվյալ արհեստներուն մեջն է։ Բավական անձինք այդ երեսե խեղճության ենթարկվեցան...*

*Բանտարկելոց ծնողք և մերձավորք ինձմե մխիթարական լուր մը լսանելուն, երեկն հեռագրով դիմել են Ձեր Բ. սրբազնության և կը հուսամք, թե պատասխանելույն կարժանանամք։*

*Խոնարհ աջահամբուրիս հարգանաց և սիրո մնամ բարձրաշնորհ սրբազնությանդ խ. որդի* Մաղաքիա վրդ. Օրմանյան առաջնորդ

*ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Աղայանի ֆ., XII—11509։*

## № 16

*Կարին, 5 փետրվարի 1883*

Ամեն. և բարձրաշնորհ Տ. Տ. Ներսես սրբազան արքեպիսկոպոս արժանընտիր պատրիարք Հայոց Թուրքիո

*Ի. Կ. Պոլիս*

Ամենապատիվ հայր.

*...Ինչպես գիտեք բոլոր բանտարկյալք լեցված են ցուրտ համբարանոցին մի սենեկին մեջ, իրենց հետ ես իրենց համաթիվ Թուրքեր զանազան պատճառներով բանտարկված։ Այդ տեղը չունենալով բնակության հարմարպետքերը, ամենայն ինչ (նաև մարմնո կարիք) նույն սենեկի մեջ կը կատարվին բոլոր բազմության կողմանե։ Ասոր կրնայք մակաբերել, թե որպիսի տագնապ կը կրեն մեջը եղողներ, և թե ինչու հիվանդությունք սկսան շատնալ ձերբակալելոց մեջ, և երկուք ի նոցանե բավական վտանգավոր վիճակի հասնելով, կրկին և կրկին աղերսանաց և թախանձանաց վերա, նախ բանտի հիվանդանոցը և անտի զինվորական հիվանդանոցը փոխադրվեցան, և հնար չեղավ տուներնին տանելու հրաման ընդունել, թեպետ մեծ՝ միայն չորեք տասանամյա տղայ մի է։*

*Գրած եմ ես, թե գրեթե բոլորը կամ բոլորովին կարոտ են կամ օրը աշխատող և օրը ուտող, երբ աշխատողները պակսեցան, տները հաց տանող*

չմնաց, և կնիկ մարդիկ, մարք և ամուսինք և դստերք սկսան Առաջնորդարանը ձեռք առնուլ, և երբ մեք գոհացուցիչ ելք չկրցինք գտնել, հեռագրով Ձեր բարձր սրբազնության դիմեցին և Ձեր հայրական գթության պատասխանին կսպասեն անձկառույց։ Կը հուսամ մինչ՝ գրույս Ձեր բ. սրբազնության ձեռքը հասնիլը, մխիթարական պատասխանը ընդունած լինել և այնչափ տառապյալ խեղճեր մխիթարելու Քաղաքացվոց օգնությունն ալ թեպետ փոքր ի շատե կը լինի. սակայն հնար չէ այդչափ բազմաթիվ տուներ ողորմությամբ ապրեցնել։

Ցավով մեծավ կը լսեմք ստորադաս պաշտոնյաներեն, որ կուսակալի ազատ կամքը կկաշկանդե ևս դատական կանոնաց գործադրությունը, դատավորք և ատենակալք և պաշտոնեայք արդարության առանց նորա հավանության բան մը չեն ըներ, թեպետ օրինաց ներած և պահանջած մեկ կետը լինի. ուստի նաև անոնք, որ անկախաբար այդ խնդիրև բանտարկյալ կգտնվին, և որոց ազատությունը օրինաց համաձայն է, կուսակալի կամոք բանտարկյալ կմնան, լոկ քանզի հայ են. իսկ անոնք որ հայ չեն կամ թե կուսակալի հետ մասնավոր հարաբերություն ստացած են, թեպետ հանցավորք կազատվին։

Նախընթաց նամակներ ես միոյն մեջ պատմած էի քաղաքիս շուկայներուն միոյն մեջ հայ խանութպանի և քուրդ հաճախորդի մեջ վեճ մը հարուցանելուն առթիվ խանութպանին և յուր աշակերտին բանտարկվիլը. խանութպանը նորահաս երիտասարդ մըն է կրթյալ. իսկ աշակերտը 13—14 տարեկան տղա մը, ամբաստանությունը տաճկաց կողմեն էր, թե կուզեին քուրդը խեղդել. ցերեկ ատեն և տաճկական շուկայի մը մեջ, ինչպես է Թեվրիզի դուռի շուկան։ Ծանոթ տաճիկ մը ձեռքը դանակ մը կը գոչե, թե պետք է այդ հայերը սպանել. վասնզի ոտք ելեր են և այլն. սակայն այդ խոսքերը լսողը և գրգռողը չի պատժվիր։ Մյուսներու վերա քննություն կլինի և դատարանք գործը թեթև գտնելով, երաշխավորությամբ արձակվելնին կվճռե. կուսակալը կարգիլե և կմնան, և կհիվանդանան, և բժշկի տեղեկագրի վրա նորեն դատարանը արձակելու թույլ կուտա, նորեն կուսակալը կմիջամտե։ Տղայն ոստիկանաց մեջ բռնաբարության վտանգի կենթարկվի, հազիվ կշնորհվի հորը, որ զավկին հետ բանտարկությունը կրե, և վերջին մյուս հայ ձերբակալելոց քով կփոխադրվի։ Տղուն հիվանդությունը կծանրանա, հայրը և բոլոր ծանոթք աղիողորմ աղերսանոք կդիմեն, դատարանաց պաշտոնյայք իրենց տկարությունը խոստովանելով կուսակալը կցուցնեն, կուսակալին ալ աղերսագիր կտրվի, որ հազիվ թե կկարդա և վառարանը կձգե։ Այդպես վառարանը ձգած են շատ մը ուրիշ ձերբակալելոց ծնողաց և ազգակցաց կողմանե տրված աղերսագիրներ։

Երկու ամիս եղավ յորմե հետե այդչափ անձինք ձերբակալյալ կմնան առանց դատաստանի, առանց վճռո, առանց դատարանի որոշման։ Ամեն հանցավոր իրավունք ունի գոնե իրեն դեմ եղած ամբաստանությունը լսել և եթե կրնա զանձն ջատագովել, թե ոչ՝ վճիռը լսել։

Այդ բանտարկյալք հանցանքնին ալ գիտնալու բաղդը չունին և չեն գի-

*տեր իսկ, թե հանցավոր են, կամ թե ինչու համար բանտ կը կրեն: Երբ մասնավոր խոսակցությանց կմտնեմ, շատեր կըսեն, թե մեծավ մասամբ պետք է թողվին, և թե Պոլսո հրամանին կսպասվի, սակայն և ոչ այդ խոսքը կարող եմք ստուգել մեք, և Ձեր բ. սրբազնությենն կսպասեմ իմանալ, թե իրավցնե որոշումը Բ. Դրան վերապահյալ է, և թե ինչ է այդ որոշումը:*

*Մնամ ամեն. սրբազնությանդ Ձերոց խ. որդի՝*
Մաղաքիա վրդ. Օրմանյան

*(Այստեղ բերված է առ 29/I 1883 թ. բանտարկյալների (65 մարդ) ցուցակը):*

*ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII—11512:*

## № 17

### Ամենապատիվ և բարձրաշնորհ Տ. Տ. Ներսես սրբազան արքեպիսկոպոս արժանընտիր պատրիարք Հայոց Թուրքիո

*Ի. Կ. Պոլիս*

Ամենայն հայր սրբազան.

*Թիվը 124 և հունվար 19 պաշտոնագրերնիդ կավետեն մեզ, թե քաղաքիս ձերբակալելոց արձակման նկատմամբ Ձեր առ բարձր. մեծ եպարքոսն ըրած միջնորդության և Նորին բարձրության խոհական տրամադրության շնորհիվ, բարեհույս էիք, թե հաջող ելք մը պիտի ունենամք, և մյուս կողմեն ալ կը լսվեր, թե հիսուն ու հինգեն գրեթե հինից արձակման հրաման տրված է:*

*Այն օրեն ցարդ, յոթն օր է, որ նամակներ ընդունած եմք, տակավին մեր ակնկալությունք չկատարվեցան, և ձերբակալյալներեն և ոչ մին չէ արձակված: Մեր հարցմանց կը պատասխանեն, թե ցարդ Պոլսե հրաման մը եկած չէ. սակայն այդ օրերու մեջ Պոլսո և կուսակալին մեջ գաղտնի հեռագիրք կը շարունակվին: Մեք հույժ կասկածավոր եմք, որ կուսակալը ուզելով յուր առաջի խոսքերը արդարացնել, կը ջանա յուր սնոտի կասկածներուն ստուգության գոնե հավանականության ձևեր զգեցնել, և թերևս ալ նոր-նոր երկյուղներ ստեղծելով յուր պատվույն պաշտպան կանգնել:*

*Այն անձը, որ տասը-տասնըհինգ օր զինվորանոցներու մեջ զինուց ներքև պահեց բոլոր բանակը, որ ամեն անկյուն զինյալ պահանորդներ շատցուց, որ պատերազմ ունեցած քաղաքի մը պես փողոցները փամփուշտավոր զինվորներու շրջագայությամբ լեցուց, չպիտի կարենա անշուշտ այսօր խոստովանիլ, թե ինքն խաբված էր:*

*Այն անձը, որ յուր բնավորությամբը մխոյալ է, անողորմ սարսափիլ, ով գիտե ամեն օր որպիսի չնչին երևույթների պատճառներ կը գտնե, և նոր-*

նոր բաներ ստեղծելով Բ. Դրան մտադրութիւնը յար և յար գործոց վերա կը հրավիրէ, և գործոց գաղտնութեամբ վստահութիւն և ծանրակշռութիւն ստանալու կը ճգնի։

Այն անձը, որ առնված տեղեկութեանց համեմատ յուր խղճի խայթեն-դրդյալ կըզա, թէ ինքն այլ ևս այդ տեղվույն պաշտոնավարութեան համար չէ, հարկավ, այդ փորձանքը գլխեն հեռացնելու համար նորանոր գլուխներ պետք է ճարէ։

Այն անձը, որ դաս մը դատարկապորտ և ստախապաս անձանց լուրե-րով կը կառավարվի, հարկավ առանց յուր ուզելուն ալ պետք է հավլի և հուզյալ ազվով գործէ։

Այդ ամեն խորհրդածութիւնները մեր մտաց առջև կելնեն, տեսնելով, թէ Բ. Դրան տված ուշումը չգործադրեր։

Կը շարունակեն ևս ի բանտի մնալ ուրիշ պատճառներով բանտարկյալ և ըստ օրինաց հրաշխավորով ելնելու կարող անձինք։

Կը շարունակի ևս ամեն չնչին բաներու համար նորատեսակ կասկածա-նաց ձևը։ Արձակյալներեն մին քանի մի տեղ խոսած լինելով, թէ որք եղեն կուսակալութեան լրտեսները, ոստիկանութիւնը կը կոչէ զնա և խստիվ կար-գիլու չխոսել սպառնալյոք հանդերձ։

Անցյալները քանի մը գերմաներեն գրքացական նախնական դասերու գիրքեր կը հանեն Սանասարյան վարժարանին համար, և գիրքերը քննու-թեան կը հղվին։ Կառավարութեան մեջ եղա հայ-հռովմեական թարգմանը գերմաներեն չգիտենալով, ոչ Տեր-Աղարյան եղբարց, ոչ Սանասարյան դա-սատվաց և ոչ իմ ի մասին տալիք կամ տված ծանոթութիւնը և վկայու-թիւնը չընդունիր և գիրքերը ի Պոլիս հղել կը հրամայե, որ անդ քննվին, և կրնայք իմանալ, թէ տարված մը կորուստ կը պատճառե այդ դասագրոց հետ և հառաջ շրջելը։ Մյուս կողմեն ալ հաջ եղողին վերա անհավատարմու-թեան աղտ բսելու բաղձանքը զատ ինչ նպատակ կրնա ունենալ այդ գործը, որ հայ-գերմաներեն գիտցողներ չեն ընդունվիր։ Նախընթաց շաբաթ ծանու-ցեր էի, թէ բանտարկելոց մայրք և կանայք հեռագրով Ձեր ք. սրբազնութեան դիմեր էին, պատասխանին ուշանալը տեսնելով և ուստի օգուտ մը տեսնել-նուն վերա հուսահատելով, վերստին իրենց հեռագիրը կրկնեցին վճարյալ պատասխանով, այլ պատասխան մը չելավ, մի գուցե հեռագիրն ալ արգել-ված լինի։ Նույն կանայք առանձին աղերսագիր մը մատուցին կուսակալին, որ և ոչ աղերսարկուները տեսնել ուզելով մեկեն ցրվել հրամայեց։

Կը շարունակի տաճկաց և հայոց մեջ կասկածանաց վիճակը, և հին եղբայրաբար սերտ դրացիներ սկսան իրարու խորթ երևիլ, տաճկաց ըն-քանը անարգական հնավանդ բառեր, որ դադարած էին, նորեն շատցան, շուկաներու մեջ տաճկաց կողմե խրոխտանք մը սկսավ տիրել և ամեն շու-կայի խնդիրներ և առևտրական կռիվներ քաղաքական ձևեր սկսան զգենալ, գյուղերու մեջ երթևեկները երկյուղալի դարձան, և շարունակ զանգատներ կը հասնին կերպ-կերպ նեղութեանց վերա և տակավին կուսակալին բանած

ճամբան կը հարատևն կասկածը շատցնելու, անդորրությունը վրդովելու և գրացիները իրարմե անվստահ ընելու դիտմամբ...

...Այդ ընթացքը եթե այդպես հարատևե՝ մեծամեծ վնասներ առաջ կրնան գալ, իսկ մեր կուսակալը երբեք յուր ընթացքը փոխելու պատրաստություն չցուցներ։ Ջինվորական բարձրաստիճան պաշտոնեայք հայտնապես և քաղաքական և արդարության պաշտոնյաներեն խոհականագոյնք գաղտնապես կուսակալին ընթացից վնասակարությունը զգալնին կը հայտնեն։ Եթե Բ. Դրան խոհական հեռատեսությունը իմանայր այդ ամեն պարագայները, կրփութայր իհարկե այնպիսի տրամադրություն մը ընել, որ երկիրս իր նախնի անդորրության դառնայր և ոմանց երեսեն չվնասվեր։ Թերևս ինքն կուսակալն ալ սխալ ճամբա մտնելը տեսնելով և իւր դառնալը պղտիկություն կարծելով, ինքն էլ բաղձա տեղափոխությամբ մը ազատվել։

Դրույս հետ կընդունիք ևս ի Պոլիս բանտարկյալ պ. Հակոբ Իչղալացյանի հորը նամակը, և ես հատկապես կը խնդրեմ Ձեր պաշտպանությունը բանտարկելույն ազատության համար։ Հայրն և եղբայրն ալ աստ բանտարկյալ էին, և հազիվ կուսակալին կնոջ ձեռոք կատարված միջնորդությամբ առժամանակյա ազատություն ստացան։

Ձեր բարձր սրբազնության հայտնելով այդ բոլոր տեղեկությունները, մնամ ամեն. սրբազնությանդ խ. որդի՝ Մաղաքիա վրդ. Օրմանյան առաջնորդ

*ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության դրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Աղաայանի ֆ., XII—11513։*

№ 18

**19 փետրվարի 1883**

Ամենապատիվ և բարձրաշնորհ տեր պատրիարք հայր մեր.

**Ի. Կ. Պոլիս**

Այս անգամ ալ թղթատարը պակսելով երկուշաբթվա նամակե զրկվեցանք և մինչ ամենայն անհամբերությամբ կսպասեմք թղթատարներու, որ մեզ մխիթարար լուր մը բերեն. զրկվելով ցավերնիս շատ զգալի կը լինի։

Ահա չորս շաբաթ եղավ, որ կես ավետյաց հնչյուն մը լսեցինք Ձեր կողմանե, թե 4—5 է զատ մնացյալ բանտարկյալք թողվին, այլ ավելի լուր մը չառինք հետո։

Հուսահատյալ ամեն կողմե մարք և կանայք բանտարկելոց դիմեցին առ կուսակալն և ստիպելնուն վրա քանի մը հարյուր առջևը ելան, որու պատասխանած է (կես ծիծաղով), թե դուք ձեր պատրիարքին դիմեցիք, անոր համար ես բան մը չեմ կրնար ընել. անկե պետք է սպասեք։ Իրավ ալ մարք

և կանայք երկու անգամ հեռագիր տվին Ձեր բարձր սրբազնության, և երկրորդը վճարեալ պատասխանով, սակայն պատասխան չեկավ, և մեծ կասկած կա, թե կուսակալը խափանած է հեռագրին առաքումը։

Իսկ բանտարկելոց տուներու խեղճությունը շատ է, և հանգանակությամբ և տուները այլուր բաշխելով միայն կարող կը լինեմք օգնել անոնց խեղճության, սակայն այդ կերպով շատ դժվար է շարունակել։

Բանտարկելոց տեղին ալ պարագայները շատ դժվարին են, և հոտն և աղտոտությունն և ուրիշ կերպ անպայմանորեն գրեթե ամենքն ալ հիվանդացած են։

Չեմ գիտեր ինչ կերպով կարող կը լինին ձերբակալությունը երկարել, մինչ ոչ քննություն կը լինի. ոչ դատաստան, և ոչ դատապարտություն. օրենք չեն ներեր անորոշ կերպով բանտարկել զոք, պետք է որ (...) ատենի մեջ քննությունը լինի, հանցանքը որոշվի և դատաստանի կեսն զարնվի. առանց ոչ հանցանքը կը զրուցվի ամբաստանաց կը հաղորդվի. ոչ դատաստան կը լինի և ոչ դատապարտություն կա։

Կուսակալը այդ ճամբուն մեջ չգիտեմ ինչպես պիտի քալե, վասնզի եթե օրինակ իրեն դեմ ամբաստանություն լինի՝ չկրնար արդարանալ։

Խուլ լուր մը կը պտտի, թե կուսակալը կանչված լինի և Պոլիս, անստույգ լուրը ամենքը ուրախացուց և ավելի թուրքերը, որ շատ դժգոհ են կուսակալին այդ գործույն մեջ ցուցուցած անխոհեմություններն, որս երեսն երկու աչքեր իրարու գեշ և բարեկամներ իրարու ներհակ եղան, և հանդարտությունը և խաղաղությունը կորավ. Սա մարդը երթար և մեր կանոնավոր վիճակը գտնայինք բաղձողներ շատ կան։

Ինչ ճամբաներով բանտարկելոց խոստովանություն ընելը և ինչպես նեղություններ տալերնին ալ հատուկ պիտի գրեմ։

Այս օրեր երրորդ հեռագիր մըն ալ պիտի հղեին մարք. այլ հապաղեցին ակնկալությամբ նույն բարձր եպարքոսին ալ գթության դիմել որոշած են բանտարկելոց ծնողք և ազգակիցք։

Խոնարհ աջհամբուրիս մնամ՝ խ. որդի՝ Մաղաքիա վրդ. Օրմանյան

*ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII—11514։*

№ 19

*Կարին, 25 փետրվարի 1883*

**Ամենապատիվ և բարձրաշնորհ Տ. Տ. Ներսես սրբազան արքեպիսկոպոս արժանընտիր և ազգախնամ պատրիարք Հայոց Թուրքիո**

*Ի. Կ. Պոլիս*

Սրբազան հայր.

....Քանիցս անցողաբար նշանակեցի, թե ձերբակալելոց վերա խոշտանգանաց միջոցներ գործվեցան. այդ կետին վերա հետևյալ բացատրությունները կը հավելում։

խոշտանգանաց գլխավորը եղած է Բոլիսը, որ ըստ օրինաց հաղորդակցութենեն զատելով ձերբակալելոց առանձին թողլու տեղ մըն է... Բոլիս բռած տեղերը անձուկ ծակեր են, տասը թզաչափ երկայն և հինգ թզաչափ լայն և մարդաչափ բարձր գետնահարկի մեջ հատակը թաց հող, ամեն կողմե խոնավ, սաստիկ ցուրտ, առանց և ոչ կտոր մը փսիաթի, որ կարի ծանր է Կարնո ցրտության խորությունը ի նկատի առնելով. վասնզի արդեն ձյուն ու սառ բռնած էր, և այդ ծակին մեջ փակած են ձերբակալյալները, արգիլելով ըմպել և ծխել, և քսանչորս ժամը անգամ մը միայն կարյաց համար դուրս ելնելու ներելով. պարտավորված են նույն ծակին մեջ այդ անախորժ մարմնական պետքը կատարել և այնպես մնալ, իսկ կերակուրի համար քսանչորս ժամը անգամ մը սև նկանակ մը միայն տված են. իսկ պահապաններն ալ շարունակ հայհոյությամբ՝ նախատանոք և ամեն կերպ գեշ վարմունքով ծանրացուցած են հրամանաց գործադրությունը։

Այդ Բոլիսի խոշտանգանաց ենթարկված է Ալեքսան Էթալիկյան վեց օր շարունակ, և այնուհետև ալ երկար ատեն խիստ բանտի մեջ թողված առանց ծխելու— Խաչատուր Կնեբեջյան չորս օր, որու վերա սովորական հագուստն ալ հանած են և լոկ բաճկոնով թողուցած, անոթությունը մինչև քառասուն և ութ ժամ երկարաձգած են, այնպես որ նվաղության վիճակի հասած և կիսամեռ դուրս հանած են։— Խաչատուր Պապոյան երկու օր. սակայն ներս լցրած պաղ ջրի մեջ նստած են և երկու օր շարունակ անոթի պահած։— Հակոբ Կարոյան երեք օր, մուշտակն ալ վրայեն հանելով։ —Հարություն Խաչատուրյան չորս օր։ —Մինաս Էլպեկյան մեկ օր, սակայն ներս լցրած ջրի մեջ ձգած են։— Հարություն Խնկրճյան երեք օր։ Հովհաննես Ասատուրյան երեք օր և հետո երեսուն և հինգ օր ամեն հաղորդակցութենե կտրած են, ուրիշներեն ալ շատեր մեկ կամ երկու օր Բոլիս կրած են հառաջ քան զամենայն հարցափորձ, և տեղվո պակասության համար մեկ մասն ալ Արալըխ ըսված տեղը դրած են, որ նեղ անցք մըն է եղեր, մնացած պարագաներով Բոլիսեն քիչ տարբերության ունեցող։ Շատեր ծեծի ալ ենթարկված են ձերբակալության ատեն և ձերբակալութենե հետո։— Մարտիրոս Ներինյան երեք անգամ։— Հովհաննես Ասլանյան Արալըխ լցրած։— Հովհաննես Վարդանյան երկու անգամ։— Շավարշ Հովհաննիսյան ձերբակալության ատեն Սեդրակ Պապոյան և Տրդատ Դարբինյան գյուղին մեջ։ Հիշատակության իսկ չեմք առնուր մասնավոր հարվածներ, որ անմիջապես եղած են մեծ մասին վերա։

Անկարգությանց կողմանե շատ նշանավոր եղած են Ջիթող գյուղը գացող ոստիկանք, որք տուներու մեջ ուրիշ տաճիկներ ալ մեկտեղ տարած են և անառակությանց իսկ ձեռք զարկած են խուզարկությանց պատրվակով։ Մարտիրոս Ներինյանի տունը կանանց զգեստները վեր առած և ձեռքերնին ներս դրած են։ Մկրտիչ Արարյանի տունը կիները անկողնեն կհանեն և վարտիկնին հանել կը պարտավորեն, և նմանօրինակ գործեր ուրիշ տուներու մեջ ալ կընեն, խառնելով նաև ահարեկելու խոսքեր, իբր թե մահվան կը տանեին. ատոր շատ մայրեր կամ հարսներ մարած կամ հիվանդացած են։ Գեղա-

խոռ գյուղի մեջ եղած անկարգությունները ալ կը հիշատակեմք թե Մարտիրոս Մարտոյանի տունը այնպիսի ահապարանք մը կը դնեն կիները դուրս հանելու, որ չեն ներիր մորը իր երկամսյա մանկիկը դուրս առնուլ, և կարասիքը խառնելուն քանի մըն մանկիկի վերա կը նետեն, որ հետո այնպես գտնվելով, հազիվ մահվանե կազատի։ Իսկ Տրդատ Դարբինյանը հարսանյաց տնեն կը հանեն և ոչ իսկ տուն դառնալով մայրը ողջունելու ատեն կուտանւ Քաղաքին մեջ ալ անկարգությունք պակաս չէինւ Խաչատուր Ալագյանը ձերբակալելե հետո, տաճկի մը տուն կը դնեն և բոլոր գիշերը շղթայակապ սյան մը կաշկանդյալ կպահենւ Կարապետ Պերխլեօղլյանը տունը չգտնելով, տղայրը կը ծեծեն և հարյուր դրոշի չափ արժեքով մանր բաներ կը վերցնեն, և գինքը հարսանյաց մեջ գտնելով, բոլոր ժողվվածները կը վախցնենւ Հարություն Զամաշարյանի ամուսնույն վերա եղած սպառնալիքներեն խեղճ կինը կը վիժեւ Հովհաննես Սընդճյան պատանին ոստիկանաց սենյակը կը գրվի իրր բանտ և անոնց մեջ անցած խոսքերը լսելով, երեք գիշեր անքուն կը մնա, որպեսզի անոնց անասնական կրից զոհ չլինիւ

Այդ պատմությունները կը հայտնեն անշուշտ, թե ինչ ձևով և ինչ ոգվով կատարվեցան այն օրերը կարծեցյալ հասարակաց խաղաղության նպատակով եղած ձերբակալությունները։ Բոլսի խոշտանգանաց համար հրամանը սատուգիվ բարձրեն է....

Մնամ պատկառանոք ամեն. հայրությանդ
խ. որդի՝ Մաղաքիա Վրդ. Օրմանյան

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Ռ. Աղատյանի ֆ., XII—11515։

№ 20

Կարին, 9 ապրիլի 1883

Ամենապատիվ և բարձրաշնորհ Տ. Տ. Ներսես սրբազան արքեպիսկոպոս արժանընտիր պատրիարք Հայոց Թուրքիո

Ի. Կ. Պոլիս

Սրբազան հայր.

Հաստատելով մեր նախորդ շաբթվա 2 ապրիլ թվական գրությանը, կը գամք ներկայիվս ծանուցյալ ծանր խնդրույն սույն վերջին ավուրց մեջ ստացած հանգամանք և կերպարանք ներկայել, որպեսզի խելամուտ լինելով գարձվածոցն Ձեր հզոր օգնությունն ի գործ դնեք ոչ միայն ի օգնություն այս տառապելոց, այլ և ընդհանուր ազգին անարատ անվան արատ բերող այս բիծն մաքրելու համար գործել ինչ որ հարկն է։

Ծանուցած եմք նախորդիվ, թե ատլիսի օրինաց համաձայն դատվելու համար բանտարկելոց հարցաքննության թերին լրացնելու համար մի առ մի կը կոչեին բանտարկյալներն և հարցաքննությունն կը շարունակվեր։ Ամսույս 5-ին լսվեցավ, թե ընդհ. դատախազն յուր դիտողագիրն (իտրաանամե) մատուցած է Ամբաստանության ատենին (հեյեթը իթհամիյե), վեցին տեսնվեցավ, թե վերաքննության դատարանի տեղվույն անբավականության պատճառով մեծ դահլիճ կը պատրաստվեր ընդ հսկողությամբ արդարության քննչին, և այդ միջոցին ամբաստանության ատյանը կզբաղեր հարցաքննությանց ընթերցմամբ, և որ զարմանալին է, մինչդեռ ամբաստանության ատենին ամբաստանյալներն անպարտ հրատարակելու հավանականությունն ևս կար ի նկատի չառնելով, դատաստանի տեղեր կը պատրաստվեին, յորմե դյուրին է ենթադրել, թե ամբաստանության ատենին վճիռն արդեն պատրաստ էր։ Ինչ որ է վեցին երեկոյան գիշերույն ամբաստանության ատենի ամբաստանագիրս (իթհամնամե) ցրվեցավ բանտարկելոց, որո մի օրինակն ներփակյալ է, պայմանով, որ հաջորդ առավոտ անպատճառ հրապարակային դատաստանի ներկայանան։ Հաջորդ առավոտ ժամը 6 1/2 ատյանը բացվելով ավինավոր զինվորաց ուղեկցությամբ ամբաստանյալք ներկայացան դատարանին, որ օրինական նախնական գործողությունններն կատարելե հետո, հարցուց ամբաստանելոց, թե փոխանորդ ունեին թե ոչ, և նոցա բացասական պատասխանին վերա քաղաքիս մեջ գտնըված երեք փաստաբանաց հանձնեց դատավորությունն հետևյալ բաժանմամբ. 25 հանցավորներն հանձնվեցան մեծ. Յ. Համամճյան էֆ.-ի, 15 հանձնվեցան մեծ. Տիգրան էֆ. Թուղլաճյան, իսկ 17-ն օսման Յայիզ էֆ. փաստաբանաց։ Սույն 57-են 2-ը ի բացակայության, 55-ը ի ներկայության ամբաստանյալ են։ Գոհության և շնորհակալյաց արժանի էր այն պահուն անմիջապես երեք փաստաբանաց միաբանությունն և այն եռանդն, որով մինչև ցայսօր համակյալ են հիշյալ ազգասեր և մարդասեր փաստաբանք ի փրկության բանտարկելոց։

Բայց, սրբազան տեր, ինչպես դյուրավ կարելի է խելամտել ամբաստանության ատենի ամբաստանագրեն և նշանակյալ պատժական օրինաց տրամադրություններն, անյար և անասելի պատժո կը դատապարտեն մեծագույն մասն, իբրև տերության մեկ գավառն ապստամբեցնելու զինամբ կազմել մի գաղտնի ընկերության, և 3 կարգի կը բաժնեն ամենուն միանգամայն մի օրինակ պատիժ սահմանելով, և այս պատիժներն այսօր արևու պես հայտնի է թե պիտի հաստատվին վերաքննության ատենեն յուրում մենք մի հայ անդամ ունեինք, մի հույն պատվո (ֆախրի) անդամ կա։ Չէ թե միայն թուրք անդամք, այլ և այս ազգային և օտարազգի երկու անդամք կառավարության և ի մասնավորի կուսակալին կողմանե ճնշման ներքև ըլլալնին կը կարծվի, և որով պատրաստված կերևին վճիռն անմիջապես արձակելու, միանգամայն և մի արտաքո կարգի աճապարում կա փութով այս դատապարտությանը կրել տալու։

Որոշված է հառաջիկա երեքշաբթի 12 ամսոյ, հրապարակային դատաստանի որոշված օրն ներկայանալ և մեֆուխիյեի* խնդրագիր տալ, որպեսզի նախ աճապարման առաջքն առնելով, միջոց մնա Ձեզ և մեզ միանգամայն օգնության միջոց մը հայթայթել. քանզի ինչպես օրինագիտաց հայտնի է, սույն մեֆուխիյեի խնդրագիրն պիտի ներկայանա տեղվույն վճռաջինջ ատենին (թեմյիզի), որն որ ազատ լինելով ամեն ճնշումե թերևս օրինական կարևորությունն կտա այդ խնդրագրին, և բնականապես ոճիրն (Ճինայեթ) հանցանքի (Ճիունհայի) վերածվելով, կը թեթևնա մեծապես, թեև մինակ վճռաջինջ ատենի այս գործով զբաղելու միջոցն պիտի կորսնցնենք։

Ուստի ներվի մեզ խնդրել Ձեր սրբազնութենեն ուշադրության առնել սապարագայն, թե քանի որ խնդիրն օրինական շրջանին մեջ մտած է, օրինագիտաց կարծիք և խորհրդակցությունները մեծ կշիռ ունեն այս աղետն դարմանելու համար։ Ուստի խոնարհաբար կը խնդրեմ Ձեր բարձր սրբազնութենեն, որ հմուտ փաստաբաններու խորհրդով ձեռնարկի այն ամեն օգնության միջոցներուն, զորս հարմար կը դատեք...

Ավելորդ է կարծեմք հրավեր կարդալ Ձեր սրբազնության գթության զգացման այս տառապյալոց վերա, որք զուրկ ամեն օգնութենե, այն պահուն որ զինվորներով ներկայացան հրապարակային դատաստանին, ներկա եղող հայ և թուրք ունկնդրաց արտասուքը շարժելն մեր աչոք իսկ տեսած ենք։

Ասոր և մեծ ուշադրության արժանի այս խնդիրն, սրբազան տեր, զոր ամբողջովին Ձեր խնամոց հանձնելով օգնություն կը հայցեմք**։

Մնամք հարգանոք ամեն. սրբազնությանդ խ. որդիք ի դիմաց
Քաղ. ժողովո Ատենադպիր ԴԱ յուսա Տեր-Մկրտչյան Վ. ատենապետի
Ղուկաս վրդ. Ազարյան, Առաջն. տեղապահ Գրիգոր Ռն. Արծնյան։

ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII—11519։

№ 21

Բերա, 13 հունիսի 1883

Ամենապատիվ սրբազան պատրիարք հայր.

Կարինե հասած զանազան նամակներե ծաղկաքաղ կը հավաքեմ հետևյալ տեղեկությունները։

---

* Մեֆուխիյեի (վերանայման գանգատ — Հ.), օրինական երկու պատճառներն ներկա են այս դատավարության մեջ (ծանոթ. Օրմանյանի)։

** Տասնմեկ և կես էջի վրա, որպես նամակի հավելված, տրված է մեղադրական ակտի պատճենը հայատառ թուրքերենով, որը մեր կողմից կըհրապարակվի մի այլ առիթով։

Հիյեթը Իթհամիեն մայիս 31 օր գումարվելով բառ առ բառ յուր հին որոշման վրա պնդեց և նույն կերպով անմիջապես զզվելով Գրիգոր էֆ. Ծանըկյանն ալ ստորագրեց սույն ամբաստանագրին։

Ամեն ոք ապահով էր, թե Ցանըկյան էֆ. չպիտի համաձայներ ամբաստանող հանձնաժողովույն կամաց և կարծյաց և չպիտի ստորագրեր այն ամբաստանագիրը։ Շատ մը ականավոր ազգայիններ և լավ օրենսգետներ կը քաջալերեին զինքը տիվ և գիշեր այդ ամբաստանագիրը չստորագրելու, և ցույց կուտային իրեն զանազան ճամբաներ և միջոցներ, ըսելով թե պարտավոր ես պահանջել հարցաքննությանց և այլ թղթոց պատճեններն, իրողության անգետ լինելդ հայտնելով և թե քննությանց վերաբերյալ թուղթերը կարդալ և ըստ այնմ գիտողություն կամ կարծիք հայտնելու համար ժամանակ պահանջելու ես, և թե յանձամ մենք հարկ եղած ձեռնտվությունը պատրաստ ենք ընել։ Ցանըկյան էֆ. տաճկագետ չլինելուն, տաճկերեն հորինված «շեկի» տալու ձև մըն ալ ուզած և առած էր քովը, և ամեն իրեն խոսվածներուն պատրաստականություն ցույց կուտայր. սակայն, երբ հանձնաժողովո կը ներկայանա առանց որևէ գիտողության կստորագրե և կը կնքե։

Հունիս 1-ին բանտարկյալք դատարանի առջև հանվեցան և ամբաստանագիրը հաղորդվեցավ։ Առաջ փաստաբան Տիգրան Թուղլաճյան և Օսման էֆենտիները դատարանեն կոչվեցան և ըսվեց թե ի պաշտոնե միայն զայն փոխանորդ կարգել ուզելուն վրա եղեր է, որ բանտարկյալք միաբերան Հակոբ Համամճյան էֆ. փաստաբանը ուզեր են, և դատարանը պարտավորվեր է զայն ալ ներս կոչել։

Առաջինեն սկսելով երեսունի հասած էր, որ ամենքը կարգավ Համամճյանը փոխանորդ կարգած էին, և նախագահ Իսմայել էֆ. ազդարարեց, որ եթե ամենքը զնա փոխանորդ կարգեն, չէ կարող հավանել, որս վրա բանտարկյալներեն 15 հոգիի չափ ալ կը պարտավորվեն Թուղլաճյանը փոխանորդ կարգել, իսկ մնացյալ տասնի չափ երբեք փոխանորդ չուզելնուն դատարանն անոնց ալ Օսմանը անվանեց։ Այսպես անունները գրվելե հետո, երբ նախագահը օրինական բառերով սոցա ազդարարեց, որ հինգ օրվան մեջ ջնջման խնդրագիր կարող են տալ և ջնջման պատճառներն չորս են. բանտարկյալք գիտողություն ըրին, որ չեն կարող տաճկերեն օրինական լեզուն հասկնալ, նախագահը ըսավ, որ փոխանորդներն կարող են հասկնալ. ասոր վրա բանտարկյալք բուռն կերպով բողոքեցին, որ փաստաբանաց իրենց հետ հայերեն խոսել թույլ չէր տրվեր, թե փաստաբանք ալ իրենց տաճկերեն խոսելնուն չէին հասկնար, թե ճնշման ներքև էին և այլն. բայց դատարանն ստիպեց զանոնք լուռ կենալ։

Երբ ըստ օրենի նախագահն ազդարարեց փաստաբանաց, որ բացի «Ճյուրմին սյուպութը հակկընտա զապթ վարակալարը վե շուհուտըն իֆադեթի թահրիյելերի»*, որք ձրիաբար կրնայք ստանալ, երբ ուրիշ թուղթերու

* Հանցագործության հաստատման մասին եղած արձանագրությունները ու վկայի խոստովանության փաստաթղթերը։

պատճէն կուզեք 150 բառի 30 ղր. վճարելով կարող եք առնել, Համամճյան էֆ. ոտք ելնելով ըսավ թե «Այս գործին մեջ բանտարկյալք մեկ մեկու խոսքերով ամբաստանյալ ըլլալով ամենքին ալ իրարու համար վկայություն կը սեպվին, և արդեն բանտարկյալք աղքատ ըլլալով հարցաքննության պատճեններ ձրիապես կը պահանջեն, և թե առանց անոնց այսպես ծանր գործի մեջ 5 օրվա մեջ չեմ կարող փաստաբանել և դատը պաշտպանել»։

Նախագահը պնդեց, թե ծախքերն վճարելով միայն կարող եք առնել, իսկ Համամճյան կրկին առարկեց, որ անցյալ անգամ ալ այդպես ըսված էր, իսկ գրված չէր։ Նախագահը կրկին զրկեց փաստաբանը, ըսելով թե վերջը պետք է ըսե։ Ասոր վրա Համամճյան պնդեց, թե դատարանն այն թղթերն հանձնելիքը պետք է որոշե, որ կարենա դատը պաշտպանել, ապա թե ոչ անկարող է։

Այն ատեն նախագահը հետևյալ խոսքերը պոռաց. «Մահքեմեդը սենի հիչ պիր վաքըթ քաբուլ էթմեզ չըքտըշարը»* և Համամճյան վռնդվելով դուրս ելնել պարտավորվեցավ. արդեն այս էր ուզածը։

Բանտարկյալք բուռն կերպիվ բողոքեցին, իսկ դատարանն առանց ականջ կախելու Համամճյանի հանձնվածներուն ալ ի պաշտոնե զԹուղլաճյան փոխանորդ կարգեց, և հինգ օր վերջը դատը նայելիքը ազդարարելով նիստը գոցեց։

Հաջորդ օր, հունիս 2, հինգշաբթի, Թուղլաճյան էֆ. բանտ երթալով ջնջման խնդրագիր չտալ համոզած է, իսկ բանտարկյալները բոլորովին մերժեր են. Թուղլաճյան ըսելով թե «ընավ երբեք վստահություն չունենք ձեր վրա, քանի որ զՀամամճյան էֆ. մերժելով զՁեզ կը պահեն, անշուշտ իրենց նպաստավոր դեր մը խաղալու պատրաստված ըլլալուդ համար է»։ Եվ ապա ամենն ալ մեկտեղ խնդրագիր մը կը մատուցանեն կառավարության խապառ մերժելով Թուղլաճյանի փոխանորդությունը անվստահ ըլլալուն համար, և զՀամամճյան իրենց փոխանորդ խնդրելով։

Հայ անդամ Փիլիպպոս էֆ. Եկավյան հրաժարած ըլլալով եղեռնադատ դատարանեն, այս անգամ բանտարկելոց խնդրույն համար Եկավյանի տեղ հռովմեական Կարապետ էֆ. Դոնտաքճյան կը նստեր։

Կարնո նամակներ միաբերան կը վկայեն փաստաբան Հակոբ էֆ. Համամճյանի անկեղծ փույթը, նույնպես Անտոն էֆ. Մազարյանի անդուլ ջանքը այդ խնդրույն մեջ։

Կարնո թղթատարը հունիս 2-ին մեկնած է, և երբ վերջին լուր կը տրվի, թե բանտարկելոց խնդրագրույն վրա Համամճյան էֆ. նորեն կոչվեր է փաստաբանել. սկզբնական ստուգության սպասելու է։

Այսչափ ինչ հաղորդելով, կը համարձակիմ Ամեն. սրբազնության մըտադրության հրավիրել եղելության վերա։ Հունիսի 1-ին երեկոյին երից

* Դատարանում քեզ երբեք չեն ընդունի, կորի՛ր դուրս։

*մարդ կը ղրկվի ի բանտ կառավարության կողմեն և մեկ անգամ Ալապեյին կերթա ի բանտ հարցուրելու կամ բանադատելու, որ նոր մեվսուհիների խնդրավոր չտանի Բանտարկյալք չեն ընդունիր, սակայն մեծ է խեղճերուն հուսահատությունը, նույնպես անոնց ընտանեաց վիճակը անհնար է նկարագրել. անոնց ցավոց դարման տանելու հուսով նոր հանգամանակություն մըն ալ ձեռնարկված է. սակայն այդ քանի երորդը լինելով չէ (......) մեծ արդյունք ակնկալել։ Մաղթելով գթություն մնամ միշտ*

Ամեն. *սրբազնությանդ* Մաղաքիա վրդ. Օրմանյան

*ՀՍՍՌ կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, Թ. Ազատյանի ֆ., XII—11520։*

# ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ՑՈՒՑԱԿ

## 1. ՄԱՐՔՍԻԶՄԻ ԿԼԱՍԻԿՆԵՐ


К. Маркс и Ф. Энгельс, Сочинения, издание второе, т. 5, 6, 9, 17, 18, 22.

К. Маркс и Ф. Энгельс, Об Англии, Москва, 1952.

Архив К. Маркса и Ф. Энгельса, т. I, М., 1924 г.

Վ. Ի. ԼԵՆԻՆ, *Երկեր, չորրորդ հրատարակություն, հատ. 1, 2, 3, 6, 8, 19, 20, 21, 22, 25*


## 2. ԱՐԽԻՎԱՅԻՆ ՆՅՈՒԹԵՐ


*Հայաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (ՀԿՊՊԱ), ֆ., 53, 56, 114, 335, 51գ/115գ*

*ՀՍՍՌ Մ. Մաշտոցի անվան պետական ձեռագրատան (Մատենադարան) արխիվ, ֆ. կաթողիկոսական դիվան*

*ՀՍՍՌ Կուլտուրայի մինիստրության գրականության և արվեստի թանգարանի արխիվ, ֆ. Ռ. Ազատյանի, Բ. Նավասարդյանի, Ռ. Պատկանյանի*

*ՀՍՍՌ ԳԱ Պատմության ինստիտուտի արխիվ, ֆ. Լեոյի, Վ. Բյուրատի (գ. 289)։*

*Ռուսաստանի արտաքին քաղաքականության արխիվ (*АВПР*), ֆ. Կոստանդինուպոլսի դեսպանության, Քաղարխիվ, 30, Գլխավոր արխիվ։*

*Կենտրոնական ռազմապատմական արխիվ (*ЦГВИА*), ֆ. 51, 401, 455,*

*ՍՍՌՄ Հեղափոխության թանգարան, գործ 4, գ. 1239*

*Կենտրոնական պետական պատմական արխիվ (Լենինգրադ) (*ЦГИАЛ*), ֆ. 229, 776, 777, 1405։*

*Վրաստանի կենտրոնական պետական պատմական արխիվ (ՎԿՊՊԱ), ֆ. 114, 1219*

*և այլն։*

## 3. ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

### *ա) Հայերեն լեզվով*


Ադամյան Պ., *Նամակներ, Երևան, 1952 թ.*

Ա-Դո, *Մեծ դեպքերը Վասպուրականում, Երևան, 1917 թ.*

Ա-Դո, *Վանի, Բիթլիսի և Էրզրումի վիլայեթները, Երևան, 1912 թ.*

Ազնիվ Հրաչյա, *Իմ հիշողությունները, Փարիզ, 1909 թ.*

*«Ազգային սահմանադրություն Հայոց», Պոլիս, 1960 և 1962 թթ.*

Ալպոյաճյան Ա., *Պատմական Հայաստանի սահմանները, Կահիրե, 1950 թ.*

Ալպոյաճյան Ա., *Մ. Չերազ, Կահիրե, 1927 թ.*

Ալպոյաճյան Ա., *Պատմություն հայ գաղթականության, հատ. 1, 2, Կահիրե, 1941—1965*

Ալպոյաճյան Ա., *Պատմություն Եվդոկիո հայոց, Գահիրե, 1952 թ.*

Ալպոյաճյան Ա., *Պատմություն Մալաթիո հայոց, Պեյրութ, 1961 թ.*

Ակնունի Է., *Կովկասյան վերքեր, Ժնև, 1903 թ.*

Աղայան Ղ., *Երկեր, հատ. 4, Երևան, 1963 թ.*

Անեմյան Ա., *Պատմություն Արևելյան պատերազմի, հատ. Ա, Կ. Պոլիս, 1879 թ.։*

Անեմյան Հ., *Հայոց հայրիկ, Թավրիզ, 1927 թ.*

*«Ամբաստանություն Վանա Պողոս վարդապետին վրա», Կ. Պոլիս, 1874 թ.*

Ամֆիտեատրով, *Եվրոպա և Հայաստան, Թիֆլիս, 1906 թ.*

*«Ամենայն Հայոց Հայրիկ», Բոստոն, 1957 թ.*

Անանիկյան Մ., *Քննական ուսումնասիրություններ, Նյու-Յորք, 1932 թ.*

Անանուն Դ., *Ռուսահայերի հասարակական զարգացումը, հատ. 1, Բաքու, 1916 թ., հատ. 2, Էջմիածին, 1922 թ.*

Անասյան Հ., *17-րդ դարի ազատագրական շարժումներն Արևմտյան Հայաստանում, Երևան, 1962 թ.*

Անտոնյան Ա., *Ընդարձակ պատմություն Պալկանյան պատերազմի, Կ. Պոլիս, 1912 թ.*

Անտոնի Քրաֆթ-Բոնար, *Հայկական խնդիրը, Ժնև, 1927 թ.*

Անտրե Մանտելշտամ, *Օսմանյան կայսրության ճակատագիրը և հայկական հարցը, Ա մաս, Կ. Պոլիս, 1919 թ.*

Առաքելյան Հ., *Թուրքահայ ժողովրդի վիճակագրությունը (տեղը և թվականը չի նշված)*

Ասատուրյան Հ., *Պատմություն Հայոց, Բուենոս-Այրես, 1947 թ.*

Ասատուր Հ., *Դիմաստվերներ, Պոլիս, 1921 թ.*

Ավետյան Մ., *Հայ ազատագրական ազգային հիսնամյա (1870—1920) հուշամատյան, Փարիզ, 1954 թ.*

Ավդալբեկյան Թ., *Արսեն Թոխմախյան, Երևան, 1926 թ.*

*«Ատենագրութիւնք Ազգային ժողովո» (1870—1885 թթ.)։*

Ատոմ, *Ազգային սահմանադրությունը, Կ. Պոլիս, 1914 թ.*
Ս. Ատրպետյան (Ատրպետ), *Ալմաստ, Մոսկվա, 1891 թ.*
*«Արարատյան ընկերության Ա տեղեկագիր», Կ. Պոլիս, 1877 թ.*
*«Արարատյան ընկերության Բ տեղեկագիր», Կ. Պոլիս, 1878 թ.*
*«Արարատյան ընկերության Գ տեղեկագիր», Կ. Պոլիս, 1879 թ.*
Արարատյան Ա., *Փնջիկ, Թիֆլիս, 1885 թ.*
Արամյան Հ., *Պատմություն Հնչակյան կուսակցության, Կ. Պոլիս, 1918 թ.*
Արմենակ Սյունի, *Հայաստանի սովը և էջմիածինը, Տփխիս, 1881 թ.*
Արմեն-Գասպար /Գ. Խաժակյան/. *Հայկական շարժումը (տեղը չի նշված), 1904 թ.*
Արծրունի Գ., *Թուրքաց հայերի տնտեսական դրությունը, Թիֆլիս, 1894 թ.*
Արփիարյան Ա., *Պատմություն ԺԹ դարու թուրքիո հայոց գրականության, Գահիրե, 1944 թ.*
Բաղալյան Խ., *Հայկական հարցը Սան-Ստեֆանոյի պայմանագրում և Բեռլինի կոնգրեսում, 1878 թ., Երևան 1955 թ.*
Բաղալյան Խ., *Հայաստանը ռուս-թուրքական պատերազմում (1877—1878 թթ.), Երևան, 1959 թ.*
Բյուրատ Սմբատ, *Արյունին ճամբուն վրա, Կ. Պոլիս, 1911 թ.*
Գաբիկյան Խ., *Հայկական հարցը, Պեյրութ, 1962 թ.*
Գաբրիելյան Մ. Ս., *Ազգային քաղաքականություն հայոց, Նյու-Յորք, 1893 թ.*
Գաբրիելյան Մ. Ս., *Հայկական ճգնաժամը և վերածնությունը, Բոստոն, 1905 թ.*
Գազանճյան Լ., *Վերածնունդ Վան-Վասպուրականի, Պոսթոն, 1950 թ.*
Գալուստյան Գր. *Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նյու-Յորք, 1954 թ.*
Գասպարյան Մ. Գ. *(Ցարհատ), Հայերը Նիկոմեդիո գավառին մեջ, Պարտիզակ, 1913 թ.*
Գեղամյան Ե., *Հայ ազատագրական շարժումները 19-րդ դարում, Բաքու, 1915 թ.*
Գեղամյան Ե. *ա. ք., Իմ շնորհավորանքը «Մշակ»-ի հոբելյանին, Բաքու, 1915 թ.*
Գեղամյան Ե. *ա. ք., Պատմության դասերը, Բաքու, 1915 թ.*
Գուրգեն Ս., *Եղելություններ և խոհեր, հ. 1, Երևան, 1952 թ.*
Գյոզալյան Գ., *Հայ քաղաքական մտքի զարգացումը և Հ. Հ. դաշնակցությունը, Փարիզ, 1927 թ.*
Գյոզալյան Գ., *Խրիմյան հայրիկ, Պեյրութ, 1954 թ.*
Գյուլխանդարյան Ս., *Ազգային շարժումների դրդապատճառները ԺԹ դարում, Փարիզ, 1939 թ.*
Դանիելյան Լ., *«Մշակ»-ի քառասնամյակը, Թիֆլիս, 1912 թ.*
Դարբինյան Ս., *Հայ ազատագրական շարժման օրերեն, Փարիզ, 1947 թ.*
*«Դիվան հայոց պատմության» հատ. ԺԳ, Թիֆլիս, 1915 թ.*

«Դիվան Հ. Հ. Դաշնակցության», Բոստոն, հատ. 1, 1934 թ., հատ. 2, 1938 թ.

Դոլենս Ն. և Խաչ Ս., Պատմություն հին հայերի, Թիֆլիս, 1909 թ.

Երամյան Հ., Հուշարձան, հատ. 1, 2, Ալեքսանդրիա, 1929 թ.

Երիցյանց Ա., Գրիգոր Արծրունու և նրա քսանհինգ տարվա գրական գործունեության առթիվ, Թիֆլիս, 1890 թ.

Երևանյան Գ., Պատմություն Չարսանջակի հայոց, Բեյրութ, 1956 թ.

«Զեյթունի պատմագիրքը», Բուենոս-Այրես, 1960 թ.

Զեյթունցի, Զեյթունի անցյալն և ներկայն, Վիեննա, 1900 թ.

Զոհրապ Գ., Ծանոթ դեմքեր ու պատմվածքներ, Փարիզ, 1932 թ.

Զոհրապ Գ., Երկերի ժողովածու, հատ. 1—2, Երևան, 1962 թ.

Էլիզե Ռեկլյու, Լազիստան, Հայաստան և Քուրդիստան, Վաղարշապատ 1893 թ.

Էմիլ Պերգրան, Նուպար փաշա, Կ. Պոլիս, 1910 թ.

Էտուար Տոխ, Արևելյան խնդիրը և հայկական հարցը, Կ. Պոլիս 1913 թ.

«Ընդարձակ օրացույց Ս. Փրկչական հիվանդանոցի հայոց 1910», Կ. Պոլիս, 1910 թ.

Թոխմախյան Ա., Հայրենիքի պահանջները և հայ գյուղացին, Թիֆլիս, 1881 թ.

Թոխմախյան Ա., Մասիս լեռների հարավային ստորոտներ, Թիֆլիս, 1882 թ.

Թումանյան Կ., Պատմություն Արևելյան խնդրույն և առաջնորդ հայկական հարցի, Լոնդոն, 1905 թ.

Թումանյան Հ., Երկերի ժողովածու, հատ. 1—6, Երևան, 1940—1959 թթ

«Ժողովածու» (հօգուտ ռուս սովյալների), Մոսկվա, 1892 թ.

Իշխանյան Բ., Տաճկահայ խնդիրը և միջազգային դիպլոմատիան, Թիֆլիս, 1907 թ.

Իշխանյան Բ., Թուրքիայի ապագան, Թիֆլիս, 1907 թ.

Իշխանյան Բ., Հասարակական գաղափարները Ռ. Պատկանյանի և Ս. Շահազիզի բանաստեղծության մեջ, Թիֆլիս, 1910 թ.

Իզմիրլյան Ս., Դատումներ մեր հարյուրամյա հեղափոխության մասին, Բեյրութ, 1962 թ.

Լազյան Գ., Դեմքեր հայ ազատագրական շարժումեն, Գահիրե, 1949 թ.

Լազյան Գ., Հայաստան և հայ դատը, Կահիրե, 1957 թ.

Լեո, Գ. Արծրունի, հատ. 1—3, Թիֆլիս, 1902—1905 թթ.

Լեո, Գլադստոն, Թիֆլիս, 1899 թ.

Լեո, Հայոց հարցը, Թիֆլիս, 1906 թ.

Լեո, Երեսնամյակ Հայոց բարեգործական ընկերության Կովկասում, Թիֆլիս, 1911 թ.

Լեո, Պատմություն Երևանի հայոց թեմական դպրոցի, Թիֆլիս, 1914 թ.

Լեո, Հայոց հարցի վավերագրերը, Թիֆլիս, 1917 թ.

Լեո, Անցյալից, Թիֆլիս, 1925 թ.

Լեո, *Խոջայական կապիտալ, Երևան, 1934 թ.*

Լեո, *Թուրքահայ հեղափոխության գաղափարաբանությունը, հատ. 1 և 2, Փարիզ, 1934—1935 թթ.։*

Լեփսիուս Յոհաննես, *Հայաստանի ջարդերը, Կ. Պոլիս, 1919 թ.*

Լինչ, *Հայաստան, հատ. 1, 2, Կ. Պոլիս, 1914 թ.*

Խամակ, *Հարկերը Տաճկաստանում, Բաքու, 1904 թ.*

Խան-Ազատ Ռ., *Հիշողություններ Խրիմյանի մասին, Թիֆլիս, 1908 թ.*

*«Խրիմյան Հայրիկ», ժողովածու (տեղը չի նշված, անթվական)*

Խրիմյան Մ., *Ամբողջական երկեր, Նյու-Յորք, 1929 թ.*

*«Կարնո հիշատակին», Վիեննա, 1896 թ.*

Կոստանդյան Գ., *Մեթոդի վրա, Երևան, 1961 թ.*

Կալֆոլենցի Պետրոս Ծ. վ., *Ասիական ճանապարհորդություն ի հայրենիս. Կ. Պոլիս, 1881 թ.*

Կրիմսկի Ա., *Մահմեդական աշխարհն ու նրա ապագան, Վաղարշապատ, 1906 թ.*

Հակոբյան Հ., *Ուղեգրություններ, հատ. Ա և Զ, Երևան, 1932—1934 թթ.*

Հակոբյան Թ., *Երևանի պատմություն, 1 և 2 հատոր, Երևան, 1959—1963 թթ.*

*«Հայ նոր գրականության պատմություն», հատ. 2 և 3-րդ, Երևան, 1962—1964 թթ.*

*«Հայ ժողովրդի պանդխտության երգեր», Երևան, 1961 թ.*

Հարո, *Հայոց մամուլը, Թիֆլիս, 1878 թ.*

*«Հիշատակարան», Կ. Պոլիս, 1910 թ.*

Հիսարլյան Ա. Բ., *Պատմություն հայ ձայնագրության, Կ. Պոլիս, 1914 թ.*

Հովհաննիսյան Ա. Գ., *Հայ-ռուս օրիենտացիայի խնդիրը, Վաղարշապատ, 1921 թ.*

Հովհաննիսյան Ա. Գ., *Էնգելսը և Հայկական հարցը, Երևան, 1931 թ.*

Հովհաննիսյան Ա. Գ., *Նալբանդյանը և նրա ժամանակը, հատ. 1, 2, Երևան, 1955—56 թթ.*

Հովհաննիսյան Ա. Գ., *Դրվագներ հայ ազատագրական մտքի պատմության, հատոր 1, 2, Երևան, 1957—1959 թթ.*

Հովսեփյան Գ., *Մաղաքիա արքեպիսկոպոս Օրմանյան և կաթողիկոսական ընտրություն, Թիֆլիս, 1911 թ.*

*«Հովսեփ Էմինի կյանքն ու արկածները» Պեյրութ, 1958 թ.*

*«Հուշապատում Հ. Հ. Դաշնակցության», Բոստոն, 1950 թ.*

Ղարաջյան Գ., *Ռ. Խանազատի հեքիաթներ, Թիֆլիս, 1928 թ.*

Ղարաջյան Գ., *Անցյալի հիշողություններից, Թիֆլիս, 1918 թ.*

Ղարաջյան Գ., *Հայ անդրանիկ հեղափոխական խումբը Անդրկովկասում, Թիֆլիս, 1927 թ.*

Ճանկուլյան Հ., *Հիշատակներ հայկական ճգնաժամեն, Կ. Պոլիս, 1913 թ.*

Մալումյան Խ., *Խրիմյանի կենսագրությունը, Թիֆլիս, 1892 թ.*

Մամուրյան Մ., *Անգլիական նամականի կամ հայու մը ճակատագիրը, Զմյուռնիա, 1881 թ.*

Մամուրյան Մ., *Սև լեռան մարդը, Աթենք, 1932 թ.*
Մար, *Թուրքական բանտերը, Ժնև, 1906 թ.*
Մարտիկյան Ն., *Փանոս Թերլեմեզյան, Երևան, 1964 թ.*
Մյասնիկյան Ալ. *(Մարտունի Ալ.), Կուսակցությունները գաղթահայության մեջ, Թիֆլիս, 1914 թ.*
Մյասնիկյան Ալ., *Ընտիր երկեր, Երևան, 1957 թ.*
Մելիքսեթյան Վ., *Զեյթունի 1862 թ. ապստամբությունը, Երևան, 1950 թ.*
Միրախորյան Մ. Կ., *Նկարագրական ուղևորություն ի հայաբնակ գավառս Արևելյան Տաճկաստանի, հատ. Ա., Գ., Կ. Պոլիս, 1884—1885 թ.*
Մկունդ Տիգրան, *Ամիտայի արձագանքներ, Նյու-Յորք, 1950 թ.*
Մնացականյան Ա., *Լենինը և հայ ժողովրդի ազատագրական պայքարը, Երևան, 1963 թ.*
Մորգենթաու Հ., *Ամերիկյան դեսպան Մորգենթաուի հիշատակները և հայկական եղեռնի գաղտնիքները, Կ. Պոլիս, 1919 թ.*
Նալբանդյան Մ., *Անտիպ երկեր, խմբագրություն և կոմենտարներ Ա. Հովհաննիսյանի, Երևան—Մոսկվա, 1935 թ.*
Նալբանդյան Մ., *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 1—4, Երևան, 1940—1949 թթ.*
Նալբանդյան Մ., *Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ, Երևան, 1954 թ.*
Նարանյան Պ. Ծ. վ., *Արտասուք Հայաստանի կամ տեղեկագիր Բաղեշ, Խարբերդու, Չարսանճագի, Ճապաղ ջուրի և Երզնկայու, Կ. Պոլիս, 1879 թ.*
Նաշալյան Հ. Ս., *Զեյթունցի տեր Օհան, Պեյրութ, 1958 թ.*
Ներսիսյան Մ. Գ., *Հայ ժողովրդի պայքարը թուրքական բռնապետության դեմ, Երևան, 1955 թ.*
Ներսիսյան Մ. Գ., *Նարոդնիկական խմբակներն Անդրկովկասում, Երևան, 1940 թ.*
Ներսիսյան Ա., *Հայերի մասնակցությունը 1877—1878 թթ. ռուս թուրքական պատերազմին, Երևան, 1958 թ.*

*«Նոր տետրակ որ կոչի Յորդորակ», Մադրաս, 1772 թ.*
Նշկյան Հ., *Առաջին կայծերը, «Պայքարի» տպարան, 1930 թ.*
Նշկյան Միսաք Մ., *Ով փճացուց հայությանը, Զրեղնո, 1920 թ.*
Նուրիխան, *Ժամանակակից պատմություն, հատ. Բ—Գ, Վենետիկ, 1896—1907 թթ.*

Շահազիզ Ե. *Գաբրիել Սունդուկյանց, Երևան, 1927 թ.*
Շահազիզ Ե., *Դիվան Միքայել Նալբանդյանի, Երևան, 1932 թ.*
Շահազիզ Ս., *Երկեր, Երևան, 1947 թ.*
Շահամիրյան Հ., *Որոգայթ փառաց, Թիֆլիս, 1919 թ.*
Շահումյան Ստ., *Ընտիր երկեր, Երևան, 1948 թ.*
Շիրվանզադե, *Երկերի ժողովածու, հատ. 8, Երևան, 1961 թ.*

Ոսկերչյան Ա., *Հայ մարքսիստական քննադատության հիմնադիրները, Երևան, 1962 թ.*
Չարըգ Դ., *Կարինապատում, Պեյրութ, 1957 թ.*
Չերազ Մ., *Գրական փորձեր, Պոլիս, 1874 թ.*
Չերազ Մ., *Ինչ ինչ շահեցանք Պերլինի վեհաժողովեն, Կ. Պոլիս, 1878 թ.*
Չերազ Մ., *Հայաստան և Իտալիա, Կ. Պոլիս, 1878 թ.*
Չերմեզյան Ս., *Օրմանյանը գրպարտության ցանցերում, Թիֆլիս, 1911 թ.*
Չմշկյան Գ., *Իմ հիշատակարանը, Երևան, 1953 թ.*
Չյոկուրյան Տ., *Վանքը, Երևան, 1962 թ.*
Չոպանյան Ա., *Պեշիկթաշլյանի կյանքն ու գործը, Փարիզ, 1907 թ.*
Չոպանյան Ա., *Հայաստանը թուրք լուծին տակ, Պոստոն, 1918 թ.*
Չոպանյան Ա., *Հայ ազգը մեռավոր չէ, Փարիզ, 1926 թ.*
Չոպանյան Ա., *Դեմքեր, Փարիզ, 1929 թ.*
Չոպանյան Ա., *Հայ ազգն ու իր մշակույթին արժեքը, Փարիզ, 1946 թ.*
Պարզյանց Սուքիաս, եպ., *Ճանապարհորդական տպավորություններ և համառոտ նկարագիր դեպքերու վերջին կաթողիկոսական ընտրության ժամանակ, Երևան, 1885 թ.*
Պարոնյան Հ., *Երկերի լիակատար ժողովածու, հատ. 4, Երևան, 1934 թ.*
Պարոնյան Հ., *Երկեր, Երևան, 1958 թ.*
Պարոնյան Հ., *Երկերի ժողովածու, հատ. 1—3, Երևան 1963—64 թթ.*
Պարսամյան Վ., *Հայկական հարցի զարգացման պատմական ուղիները մինչև Բեռլինի կոնգրեսը, Երևան, 1946 թ.*
Պարսամյան Վ., *Հայ ազատագրական շարժումների պատմությունից, Երևան, 1958 թ.*
Պարտիզակցի Վահան Վ., *Խոսք զհայրենյաց, Կ. Պոլիս, 1879 թ.*
Պատկանյան Ռ., *Երկեր, Երևան, 1955 թ.*
Պատկանյան Ռ., *Երկերի ժողովածու, հատ. 1, Երևան, 1963 թ.*
*«Պատմություն ՍԴ Հնչակյան կուսակցության», հ. Ա., Պեյրութ, 1962 թ.*
Պեշիկթաշլյան Մ., *Տաղեր, Երևան, 1961 թ.*
Պողոսյան Հ., *Հաճնի ընդհանուր պատմությունը և շրջակա Գոզանտաղի հայ գյուղերը, Լոս-Անջելոս, 1942 թ.*
Պռոշյան Պ., *Երկերի ժողովածու, հ. 7, Երևան, 1964 թ.*
*«Ջիվանու քնարը», Երևան, 1959 թ.*
Ռշտունի Վ., *Հայ հասարակական հոսանքների պատմությունից, Երևան, 1956 թ.*
Սասունի Կ., *Պատմություն Տարոնի աշխարհի, Պեյրութ, 1957 թ.*
Սարուխան, *Հայկական խնդիրն և Ազգային սահմանադրությունը Թուրքիայում, Թիֆլիս, 1912 թ.*
Սարգսյան Ե., Սահակյան Ռ., *Հայ ժողովրդի նոր շրջանի պատմության նենգափոխումը թուրք պատմագրության մեջ, Երևան, 1963 թ.*
Սարգսյանց Լ., *Այց Թուրքաց Հայաստանին, Թիֆլիս, 1890 թ.*

Петросян Ю., «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, Москва, 1958 г.
Покровский М. Н., Дипломатия и войны царской России в 19-ом веке, Москва, 1924 г.
«Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», Москва, 1896 г.
Саркисян Е. К., Аграрная политика османского правительства в Западной Армении, Ереван, 1957 г.
Саркисян Е. К., Экспансионистская политика османской империи в Закавказье, Ереван, 1962 г.
«Сборник материалов русско-турецкой войны 1877—1878 гг.», выпуск первый.
Скальковский К., Внешняя политика России и положение иностранных держав, СПБ, 1897 г.
Стоянов З., Записки о болгарских восстаниях, Москва, 1953 г.
Татищев С. С., Из прошлого русской дипломатии, С.-Петербург 1890 г.
Фортунатов П. К., Война 1877—1878 гг. и освобождение Болгарии, Москва, 1950 г.
Халфин Н. А., Борьба за Курдистан, Москва, 1963 г.
Шарль Р., Мусульманское право, Москва, 1959 г.

### գ) Ֆրանսերեն լեզվով

Engelhardt Ed., La Turquie et le Tanzimat, Paris, 1882.
Lavallee Th., Histoire de l'Empire Ottoman, Paris, 1859.
Mandelstam A., Le sort de L'Empire Ottoman, Lausanne, 1917.
Nansen F., L'Armenie et le Proche Orient, Paris, 1928.
Noradounghian G., Recueil d'actes internationaux de L'Empire Ottoman (1856—1878), vol. III, Paris, 1902.
Thorossian H., Histoire de L'Armenie et du peuple armenien, Paris, 1957.

## 4. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

### ա) Հայերեն լեզվով

*«Արարատ» (Էջմիածին), «Արաքս», «Արևելյան մամուլ», «Արծվի Վասպուրականի», «Արծվիկ Տարոնո», «Արձագանք», «Անահիտ», «Արմենիա», (Մարսել), «Ազատության ավետաբեր», «Արևելք» (Կ. Պոլիս), «Բյուզանդիոն», «Գործ» (Շուշի-Թիֆլիս), «Գործ» (Բաքու), «Գրական թերթ», «Երկ-*

Ботев Христо, Публицистика, Москва, 1952 г.
Герцог Аргаильский, Ответственность Англии в Восточном вопросе, СПБ, 1908 г.
Голобородко И. И., Турция, Москва, 1912 г.
Гуч П. И., История современной Европы, Москва—Ленинград, 1925 г.
Дадян М., Современное армянское общество, Тифлис, 1878 г. (перевод с французского).
Данциг Б.— Турция, Москва, 1949 г.
Дебидур А,. Дипломатическая история Европы, т. II, Москва, 1947 г.
Диев А., Армянский вопрос в Турции, Москва, 1893 г.
«Дневник Д. А. Милютина», г. I—IV, Москва, 1947—1950 гг.
«История Болгарии», т. I, Москва, 1954 г.
«История дипломатии», т. II, Москва, 1963 г.
«История 19-го века», под ред. Лависа и Рамбо, тт. 7, 8; 1907 г. и второе издание, Москва, 1939 г.
Камсаракан К. П., Вторжение шейха Обейд-Уллы в Персию в 1880 г. («Сборник материалов по Азии», выпуск II, С.-Петербург, 1884 г.).
Карцов, Заметки о курдах, Тифлис, 1896 г.
Каутский К., Национальный вопрос, Тифлис, 1922 г.
Кишмишев С., Война в Турецкой Армении 1877—1878 гг., СПБ, 1884 г.
Ключников Ю. В. и Андрей Сабинин, Международная политика новейшего времени в договорах, нотах и декларациях, ч. I, Москва, 1925 г.
Кофаль И., Курс мусульманского права, СПБ, 1886 г.
Лазарев М. С., Курдистан и курдская проблема, Москва, 1964 г.
Ллойд Джордж, Правда о мирных договорах, т. I—II, М., 1957 г.
Магда Нейман, Армяне, С.-Петербург, 1899 г.
Мак Коан К., Наш новый протекторат, Москва, 1884 г.
Макгаан Е. Д., Зверства в Болгарии, СПБ, 1877 г.
Малькольм-Макколь, Султан и державы, С.-Петербург, 1897 г.
Манфред А. З., Внешняя политика Франции 1871—1891 гг., М., 1952 г.
Мегреладзе В., Грузия в русско-турецкой войне 1877—1878 гг.
Миллер А. Ф., Краткая история Турции, Москва, 1948 г.
Монтескье Ш., Избранные произведения, Москва, 1955 г.
Новичев А. Д., Очерки экономики Турции до мировой войны, Москва—Ленинград, 1937 г.
Новичев А. Д., Крестьянство Турции в новейшее время, М., 1959 г.

Петросян Ю., «Новые османы» и борьба за конституцию 1876 г. в Турции, Москва, 1958 г.
Покровский М. Н., Дипломатия и войны царской России в 19-ом веке, Москва, 1924 г.
«Положение армян в Турции до вмешательства держав в 1895 г.», Москва, 1896 г.
Саркисян Е. К., Аграрная политика османского правительства в Западной Армении, Ереван, 1957 г.
Саркисян Е. К., Экспансионистская политика османской империи в Закавказье, Ереван, 1962 г.
«Сборник материалов русско-турецкой войны 1877—1878 гг.», выпуск первый.
Скальковский К., Внешняя политика России и положение иностранных держав, СПБ, 1897 г.
Стоянов З., Записки о болгарских восстаниях, Москва, 1953 г.
Татищев С. С., Из прошлого русской дипломатии, С.-Петербург 1890 г.
Фортунатов П. К., Война 1877—1878 гг. и освобождение Болгарии, Москва, 1950 г.
Халфин Н. А., Борьба за Курдистан, Москва, 1963 г.
Шарль Р., Мусульманское право, Москва, 1959 г.

### *դ)* Ֆրանսերեն լեզվով

Engelhardt Ed., La Turquie et le Tanzimat, Paris, 1882.
Lavallee Th., Histoire de l'Empire Ottoman, Paris, 1859.
Mandelstam A., Le sort de L'Empire Ottoman, Lausanne, 1917.
Nansen F., L'Armenie et le Proche Orient, Paris, 1928.
Noradounghian G., Recueil d'actes internationaux de L'Empire Ottoman (1856—1878), vol. III, Paris, 1902.
Thorossian H., Histoire de L'Armenie et du peuple armenien, Paris, 1957.

## 4. ՊԱՐԲԵՐԱԿԱՆՆԵՐ

### *ա)* Հայերեն լեզվով

*«Արարատ» (Էջմիածին), «Արաքս», «Արևելյան մամուլ», «Արծվի Վասպուրական», «Արծվիկ Տարոնո», «Արձագանք», «Անահիտ», «Արմենիա», (Մարսել), «Ազատության ավետաբեր», «Արևելք» (Կ. Պոլիս), «Բյուզանդիոն», «Գործ» (Շուշի-Թիֆլիս), «Գործ» (Բաքու), «Գրական թերթ», «Երկ-*

*յրագունտ» (Կ. Պոլիս), «Էջմիածին», «Թատրոն» (Կ. Պոլիս), «Լումա», «Լրաբեր», «Մաղիկ» (Զմյուռնիա), «Մաղիկ» (Կ. Պոլիս), «Կռունկ Հայոց աշխարհի», «Հայկական Աշխարհ», «Հայրենիք» (շաբաթաթերթ, Բոստոն), «Հայրենիք» (ամսագիր, Բոստոն), «Հայրենիք» (Կ. Պոլիս), «Հայաստանի կոչնակ», «Համբավաբեր Ռուսիո», «Հառաջ», «Հյուսիսափայլ», «Հովիտ», «Հորիզոն» (Թիֆլիս), «Մամուլ», «Մանզումեի էֆքիար», «Մարմարա», «Մասիս», «Մասյաց Աղավնի», «Մեղու Հայաստանի», «Մշակ», «Մուրճ», «Նաիրի», «Նոր դար» (Թիֆլիս), «Նոր աշխարհ» (Երևան), «Նոր կյանք» (Լոնդոն), «Նորք», «Պատմա-բանասիրական հանդես», «Պսակ», «Սովետական գրականություն», «Փարոս Հայաստանի», «Փորձ», «Փունջ», «Տարազ», «Տեղեկագիր» (ՀՍՍՌ ԳԱ)։*

## բ) Ռուսերեն լեզվով

«Бакинские известия», «Вопросы истории», «Голос», «Историк-марксист», «Исторический вестник», «Московские ведомости», «Московский телеграф», «Московский листок», «Новое время», «Красный архив», «Русский курьер», «Русская старина», «Русские ведомости», «Русский вестник», «Православное обозрение», «С. Петербургские ведомости», «Современник», «Суд идет».

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


*Ներածություն* . . . . . . . . . . 5

*Առաջին գլուխ*

*Արևմտահայերի սոցիալ-տնտեսական և քաղաքական վիճակը XIX դարի 70—80-ական թվականներին* . . . . 19

*Երկրորդ գլուխ*

*Արևմտահայերի ազգային-ազատագրական շարժումները XIX դարի 70-ական թվականներին*

*1875—1877 թվականների արևելյան ճգնաժամը, ռուս-թուրքական պատերազմը և հայերի վերաբերմունքը* . . . 67

*Երրորդ գլուխ*

*Հայկական հարցը Սան-Ստեֆանոյից մինչև Բեռլին* . . 120

*Չորրորդ գլուխ*

*Արևմտահայ ազգային-ազատագրական շարժման վերելքը 1877—1878 թվականների ռուս-թուրքական պատերազմից հետո* . 207

*Հինգերորդ գլուխ*

*Կարինի «Պաշտպան հայրենյաց» կազմակերպությունը* . . 282

*Հավելված (Արխիվային փաստաթղթեր)* . . . . 337

*Օգտագործված գրականության և նյութերի ցուցակ* . . 377



ՌԱՖԻԿ ՓԱՌՆԱԿԻ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

РАФИК ПАРНАКОВИЧ ОГАНЕСЯН

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄՆԵՐԸ ԵՎ ԿԱՐԻՆԻ «ՊԱՇՏՊԱՆ ՀԱՅՐԵՆՅԱՑ» ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ

(XIX դ. 70—80-ական թթ.)



ԳՐԱԴԱՐԱՆ



*Հրատ. խմբագիր Ռ. Խ. ՄԱՆՈՅԱՆ*

*Տեխ. խմբագիր Մ. Ա. ԿԱՓԼԱՆՅԱՆ, սրբագրիչ Ս. Կ. ՋԱՔԱՐՅԱՆ*

---

*ՎՖ 10359, հրատ. 2549, Խ՚ՀՆ 963, պատվեր 196, տպաքանակ 1000*

---

*Հանձնված է արտադրության 20/III 1965 թ., ստորագրված է տպագրության 6/VIII 1965 թ., տպագր. 24,25 մամուլ, հրատ. 17,62 մամուլ*

*Թուղթ 84×108¹/₃₂: Գինը կազմով 1 ռ. 26 կ.:*

---

*Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի հրատ. տպարան, Երևան, Բարեկամության, 24.*

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220037632

II
A 37632

II
A 37632